ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ,
ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 94(479.25):930.2:911
ԳՄԴ 63.3(5Հ)+63.2+26.8
Մ 917

Երաշխավորվել է տպագրության ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից։

Գլխավոր խմբագիր՝
պ.գ.դ., պրոֆ. Արտակ Մովսիսյան

Գրախոսներ՝
պ.գ.դ., պրոֆ. Է. Մինասյան
պ.գ.թ. Գ. Բաղալյան

Մովսիսյան Ա., Մալխասյան Մ., Կարապետյան Լ.
Մ 917 Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների (արդի ուսումնասիրություններ և պատմական սկզբնաղբյուրների քրեստոմատիա)/ Ա. Մովսիսյան, Մ. Մալխասյան, Լ. Կարապետյան։ -Եր., ԵՊՀ հրատ., 2020, 388 էջ։

Կոլեկտիվ մենագրության մեջ ներկայացված են հեղինակային խմբի կողմից անտիկ հեղինակների՝ Հայաստանի վերաբերյալ պատմաաշխարհագրական տեղեկությունների հիման վրա կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև սկզբնաղբյուրային տեքստերի զգալի մասի քրեստոմատիան։ Ուսումնասիրությունների առանցքը Հերոդոտոսի, Կտեսիաս Կնիդացու, Քսենոփոնի, Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Կլավդիոս Պտղոմեոսի և մի քանի այլ հեղինակների աշխատություններում առկա պատմաաշխարհագրական հիշատակումներն են, որոնց շնորհիվ հնարավոր է դարձել երբեմն ամբողջությամբ, երբեմն էլ մասնակիորեն վերակազմել Հին Հայաստանի սահմանները, վարչատարածքային բաժանումը, նշանավոր բնակավայրերը և բնաշխարհը։ Դրանց շնորհիվ լուսաբանված են նաև Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Ծոփքի թագավորությունների պետական դերակատարության տարբեր հարցեր։ Քրեստոմատիայի հատվածում սկզբնաղբյուրների մեծ մասից դուրս են բերված Հին Հայաստանի վերաբերյալ այն հատվածները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատմաաշխարհագրական տեղեկություններ են պարունակում։ Գիրքը կարող է օգտակար լինել պատմաբանների, աշխարհագետների, պատմական աշխարհագրության ուսումնասիրողների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար։

ՀՏԴ 94(479.25):930.2:911
ԳՄԴ 63.3(5Հ)+63.2+26.8

ISBN 978-5-8084-2469-2

© ԵՊՀ հրատ., 2020
© Մովսիսյան Ա., Մալխասյան Մ., Կարապետյան Լ., 2020

ԱՌԱՋԱԲԱՆ

Ընթերցողի դատին են ներկայացվում մեր հեղինակային խմբի կողմից անտիկ հեղինակների՝ Հայաստանի վերաբերյալ պատմաաշխարհագրական տեղեկությունների հիման վրա կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև սկզբնաղբյուրային տեքստերի զգալի մասի քրեստոմատիան ներառող սույն կոլեկտիվ մենագրությունը։ Ուսումնասիրությունների առանցքը Հերոդոտոսի, Կտեսիաս Կնիդացու, Քսենոփոնի, Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Կլավդիոս Պտղոմեոսի և մի քանի այլ հեղինակների աշխատություններում առկա պատմաաշխարհագրական հիշատակումներն են, որոնց շնորհիվ հնարավոր է դարձել երբեմն ամբողջությամբ, երբեմն էլ մասնակիորեն վերակազմել Հին Հայաստանի սահմանները, վարչատարածքային բաժանումը, նշանավոր բնակավայրերը և բնաշխարհը։ Դրանց շնորհիվ լուսաբանել ենք նաև Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Ծոփքի թագավորությունների պետական դերակատարության տարբեր հարցեր։

Քրեստոմատիայի հատվածում սկզբնաղբյուրների մեծ մասից դուրս ենք բերել Հին Հայաստանի վերաբերյալ այն հատվածները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատմաաշխարհագրական տեղեկություններ են պարունակում։

Սույն կոլեկտիվ մենագրությունը ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի կողմից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող 18T-6A357 ծածկագրով «Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների (պատմական սկզբնաղբյուրների և արդի պատմակեղծարարության քննական վերլուծություն)» դրամաշնոր-

հի (հետազոտական խմբի գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Արտակ Մովսիսյան, կատարողներ՝ պ.գ.թ., դոց. Միքայել Մալխասյան, մագիստրոս Լիաննա Կարապետյան) շրջանակում կատարված աշխատանքների հանրագումարն է։ Ցավով պետք է նշենք, որ հետազոտական աշխատանքների վերջին փուլում կյանքից անժամանակ հեռացավ գործը համակարգող գիտական ղեկավար Արտակ Մովսիսյանը, և մենք ստիպված եղանք հնարավորինս արագ ի մի բերել կատարված աշխատանքները։ Ի վերջո, հաջողվեց ավարտուն տեսքի բերել այս աշխատությունը, սակայն պետք է նշել, որ ստիպված ենք եղել գրքում չներառել մի քանի անավարտ ուսումնասիրություններ և անտիկ որոշ հեղինակներից պատմաաշխարհագրական տեղեկությունների հատվածներ։ Ներկա պահին այդ ուղղությամբ շարունակում ենք ջանքեր գործադրել և կիրատարակենք ևս մի քանի հոդվածներ, որոնց մի մասը Արտակ Մովսիսյանի անավարտ անտիպ աշխատանքներն են։ Հավելյալ սկզբնաղբյուրների տեքստերը մշակելիս նախատեսել ենք աշխատել բնագրային լեզուների գիտակ մասնագետների հետ։

Հույս ունենք առաջիկայում շարունակել, ի մի բերել ու կատարելագործել մեր աշխատանքները, ամբողջացնել կատարված ուսումնասիրությունները՝ մեկ-երկու տարի անց հրատարակելով գրքի երկրորդ՝ լրամշակված տարբերակը։

ԵՊՀ հայոց պատմության
ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.
Մ. Մալխասյան

ՄԱՍ Ա

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆ ԸՍՏ ՀԵՐՈԴՈՏՈՍԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ք.ա. V դարի հույն ականավոր պատմագիր, համաշխարհային պատմագրության մեջ «Պատմահայր» պատվատիտղոսին արժանացած Հերոդոտոսի տեղեկությունները եղել և մնում են անգերագնահատելի սկզբնաղբյուր իր ժամանակաշրջանի աշխարհի մասին: Հայտնի է, որ Պատմահայրը շատ է ճանապարհորդել. Ք.ա. V դարի կեսերին (Ք.ա. 455-445 թթ.) նա եղել է բազմաթիվ երկրներում՝ Հունաստանում, Էգեյան ծովի կղզիներում, Փոքր Ասիայի պետություններում, Պարսկաստանում, Բաբելոնում, Պաղեստինում, Փյունիկիայում, Եգիպտոսում, Լիբիայում և այլ վայրերում: Այդ երկրներում Հերոդոտոսի հավաքած հսկայական քանակությամբ պատմական, ազգագրական, աշխարհագրական և այլ նյութերը տեղ են գտել նրա կոթողային «Պատմություն» աշխատության էջերում[1]:

Հերոդոտոսի երկում խիստ կարևոր տեղեկություններ են պահպանվել նաև Հայաստանի և հայերի մասին: Մասնավորապես, տեղեկանում ենք, որ Ք.ա. V դարի կեսերին Հայաս-

---

[1] Հերոդոտոսի կյանքի և գործունեության մասին կա մեծածավալ գրականություն, տե՛ս, օրինակ, **Лурье С. Я.,** Геродот, М.-Л., 1947; **Доватур А. И.,** Повествовательный и научный стиль Геродота, Л., 1957; **Дитмар А. Б.,** От Скифии до Элефантины. Жизнь и путешествия Геродота, М., 1961; **Hart J.,** Herodotus and Greek History, London, 1982; Herodotus and his World (ed. by P. Derow and R. Parker), Oxford, 2003; **Evans J. A. S.,** Herodotus, Boston, 1982; **Суриков И. Е.,** Геродот, М., 2009 և այլն: Հայերեն ամփոփ կերպով՝ **Սարգսյան Գ. Խ.,** Պատմահայր Հերոդոտոսը // Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1986 (այսուհետ՝ Հերոդոտոս, 1986) գրքում, էջ 553-578:

տանը գտնվում էր Աքեմենյան XIII սատրապության կազմում, ունենք վկայություններ Հայաստանից գանձվող հարկերի, երկրի տնտեսության ու առևտրի, սահմանների ու ճանապարհների, նաև զինված ուժերի մասին: Այդ տեղեկություններից մեկին և դրա վերլուծությամբ ստացվող արդյունքներին էլ կանդրադառնանք սույն հոդվածում:

Ուսումնասիրողները հատկապես ուշադրության կենտրոնում են պահել Հերոդոտոսի՝ Հայաստանի դիրքին ու սահմաններին, Աքեմենյան տերության «արքայական ճանապարհի» հայաստանյան հատվածին վերաբերող տեղեկությունները՝ դրանք օգտագործելով պատմաաշխարհագրական վերլուծություններում: Հատուկ ուշադրության է արժանացել նաև Հերոդոտոսի տեղեկությունը Հայաստանից Բաբելոն Եփրատ գետով կատարվող նավարկության մասին, որն էլ մեկնաբանվել է առևտրատնտեսական հարաբերությունների համատեքստում: Նշված տեղեկությունները կարելի էր լավագույնս զուգադրել և ստանալ ավելի ճշգրիտ արդյունքներ Հայաստանի հարավարևմտյան սահմանների մասին, ինչը զարմանալիորեն չի կատարվել նախորդ ուսումնասիրողների կողմից:

Նախ անդրադառնանք Հերոդոտոսի՝ Հայաստանին և հայերին վերաբերող տեղեկություններին, որոնք հանդիպում են նրա երկի յոթ դրվագներում:

Առաջինը վերաբերում է Հալիս գետի ակունքներին, որոնք գտնվում են Հայաստանում. *«Մեդական և Լյուդիական թագավորությունների մեջ սահմանն էր Հալիս գետը, որը հոսում էր Արմենների լեռներից Կիլիկիայի միջոցով»*[2]:

---

[2] **Հերոդոտոս**, I, 72, տե՛ս **Հերոդոտոս**, 1986, էջ 32:

Հերոդոտոսի՝ մեզ հետաքրքրող երկրորդ և երրորդ տեղեկությունները առնչվում են Եփրատ գետին: Երկրորդը նպատակ ուներ հույն ընթերցողին ծանոթացնելու հեռավոր և նշանավոր գետի ընթացքին, որը, սկիզբ առնելով Հայաստանից, հոսում էր Բաբելոնով[3]:

Հերոդոտոսի՝ Հայաստանին և հայերին վերաբերող երրորդ և ամենաընդարձակ տեղեկությունը ևս գտնում ենք «Պատմության» առաջին գրքում. *«Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից (Բաբելոնից) հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման: Նրանք ո՛չ նավի ետնամասում են լայնացնում, ո՛չ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար: Նրանք մեծ մասամբ փոխադրում են գինի կարմիր կարասներով: Նավերը վարում են երկու լայնաբերան թիակներով կանգնած երկու մարդ. նրանցից մեկը թիակը քաշում է դեպի իրեն, մյուսը՝ հրում իրենից: Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն: Յուրաքանչյուր նավի մեջ կա մեկ կենդանի գրաստ, իսկ խոշորների մեջ՝ մի քանիսը: Նավերով Բաբելոն հասնելուց և բեռը վաճառելուց հետո նրանք վաճառքի են հանում նաև նավի կմախքը և ամբողջ*

[3] **Հերոդոտոս**, I, 180, տե՛ս **Հերոդոտոս**, 1986, էջ 74:

ծղոտը, իսկ կաշիները բարձում են գրաստների վրա և վերադառնում արմենների մոտ: Քանզի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել գետի արագության պատճառով: Այդ է պատճառը, որ նրանք նավերը պատրաստում են ոչ թե փայտից, այլ կաշվից: Նրանք, գրաստները քշելով, ետ են դառնում արմենների մոտ, նույն ձևով պատրաստում են ուրիշ նավեր»[4]:

Տաղանդը՝ որպես չափուկշռի միավոր, տարբեր ժամանակներում և տարբեր ժողովուրդների մոտ ունեցել է զանազան կշռաչափ: Հերոդոտոսը տվյալ դեպքում կարող էր գործածել հունական (ատտիկյան) կամ բաբելոնյան տաղանդը: Մեկ հունական (ատտիկյան) տաղանդը հավասար է 26,2 կիլոգրամի[5], որով հաշվելով՝ Հայաստանից Բաբելոն նավարկած ամենամեծ նավերի համար կստանանք 131 տոննա տարողություն (բաբելոնյան տաղանդը կշռում էր 40 կիլոգրամ, որով հաշվելով՝ կստանանք շատ ավելի մեծ թիվ՝ 200 տոննա տարողություն): Եթե անգամ խիստ չափազանցված է այս թիվը, վկայությունը, այնուամենայնիվ, խոսում է հոգուտ Եփրատով Հայաստանից մեծածավալ նավարկություն կատարելու փաստի[6]:

---

[4] **Հերոդոտոս**, I, 194, տե՛ս **Հերոդոտոս**, 1986, էջ 79-80:

[5] Античные меры, տե՛ս **Геродот**, История в 9-и книгах, пер. и прим. Г. А. Стратановского, Л., 1972, էջ 546:

[6] Մեկ ուրիշ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Դիոդորոս Սիկիլիացին. *«Սեմիրամիսը (Շամիրամը) Հայկական լեռներից մի քար կտրեց, երկարությունը՝ 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ քսան և հինգ. նա ջորիների և եզների բազմաթիվ լծերով (այդ քարը) իջեցրեց դեպի գետը և այնտեղից բարձեց լաստի վրա և դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա՝ այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այն իր ձևի պատճառով անվանում էին կոթող, որը և համարում են, այսպես կոչված, յոթ հրաշալիքներից մեկը»* (**Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան (թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1985, էջ 27):

Հերոդոտոսի չորրորդ տեղեկությունը Հայաստանի մասին վերաբերում է Աքեմենյան տերության քարտեզում մեր երկրի զբաղեցրած տեղին, որից իմանում ենք, որ մեր երկիրը մտել է տերության XIII սատրապության կազմի մեջ[7]:

Հերոդոտոսի՝ Հայաստանին ու հայերին վերաբերող հինգերորդ տեղեկությունը կարելի է համարել աշխարհի հնագույն քարտեզներից մեկի յուրօրինակ նկարագիր-բացատրագիրը: Միլեթի տիրան Արիստագորասը, ցույց տալով պղնձե տախտակին փորագրված երկրի ուրվագիծը, հերթով թվարկում է հարևանությամբ ապրող ժողովուրդներին, որոնք ապրում են մինչև Աքեմենյան տերության մայրաքաղաք Սուսա ընկած տարածքում: *«Լյուդիացիներից հետո դեպի արևելք,– շարունակում է Արիստագորասն իր պատմելը,– բնակվում են փռյուգները, որոնք ինձ հայտնի բոլոր մարդկանցից առավել հարուստ են իրենց հոտերով և բարեբեր հողերով: Նրանց հաջորդում են կապադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սյուրիացիներ: Սրանց սահմանակից են կիլիկեցիները, որոնք տարածվում են մինչև այն ծովը, որտեղ գտնվում է Կիպրոս կղզին: Սրանք արքային տալիս են տարեկան հինգ հարյուր տաղանդ հարկ: Այստեղ կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր ունեն. արմեններից հետո ահա այստեղ բնակվում են մատիենները: Հաջորդը ահա*

Հայկական լեռնաշխարհից Եփրատով դեպի Միջագետք նավարկության մասին անտիկ հեղինակներից շատ ավելի վաղ տեղեկություններ են հաղորդում շումերական աղբյուրները: Դրանց համաձայն՝ Ք.ա. XXVIII-XXVII դարերում Արատտա երկրից Եփրատով Շումեր փոխադրվել են ապրանքներ, և իրականացվել է ռազմական արշավանք (**Մովսիսյան Ա.,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005, էջ 16-18, 58-59 և հղված գրականությունը):

[7] **Հերոդոտոս**, III, 93, տե՛ս **Հերոդոտոս**, 1986, էջ 197:

Կիսսիա երկիրն է, որտեղ Քոասպես գետի վրա գտնվում է ա-հա Սուսա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան, և որտեղ գտնվում են նրա գանձերը: Եթե նվաճեք այդ քաղաքը, ապա դուք հարստությամբ կարող եք համարձակորեն մրցել Զևսի հետ»[8]*:*

Հերոդոտոսի՝ մեզ հետաքրքրող հաջորդ հաղորդումը ևս պատմաաշխարհագրական բնույթի է՝ հագեցած ավելի հանգամանալի տեղեկություններով: Այն վերաբերում է Աքեմենյան տերության «արքայական ճանապարհին», որի նկարագրության մեջ ևս Հայաստանը ներկայացված է Կիլիկիայի և Մատիենեի միջև. *«Կապադովկիա մտնելով՝ ճանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը՝ քսանութ կայան՝ հարյուր չորս փարսախ: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրունք և կողանցել երկու պահակային ամրություն: Դրանք անցնելուց հետո Կիլիկիայի միջով ճանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարսախ: Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի գետն է՝ անունը Եփրատ: Արմենիայում հիսունվեց ու կես փարսախ տարածության վրա կա տասնհինգ կայան՝ իջևանատներով, այնտեղ կա նաև պահակային ամրություն: Արմենիայից ճանապարհը մտնում է Մատիենե, որտեղ կա երեսունչորս կայան՝ հարյուր երեսունյոթ փարսախ տարածության վրա: Այս երկրի միջով հոսում են չորս նավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է: Երկրորդը և երրորդը համանուն են՝ Զաբատ, բայց նույն գետերը չեն և նույն վայրից չեն բխում, քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է*

[8] **Հերոդոտոս,** V, 49, տե՛ս **Հերոդոտոս**, 1986, էջ 305:

Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատիենեից: Չորրորդ գետը կոչվում է Գյունդես, որը Կյուրոսը բաժանել էր երեք հարյուր վաթսուն ջրանցքների»[9]:

Հերոդոտոսի մեզ հասցրած յոթերորդ տեղեկությունը վերաբերում է Ք.ա. 480 թ., երբ Հունաստան արշավող աքեմենյան բանակի կազմում հիշատակվում են նաև հայերը[10]:

Հիշատակված յոթ վկայություններից կարելի է քաղել մի շարք պատմաաշխարհագրական ցուցումներ, որոնք վերաբերում եմ Ք.ա. V դարի Հայաստանին: Մասնավորապես՝

1. Հալիս գետի ակունքները գտնվում են Հայաստանում,

2. Եփրատ գետը սկզբնավորվում է Հայաստանից,

3. Հայաստանը գտնվում է Ասորեստանից «վերև», այսինքն՝ հյուսիս,

4. Հայաստանը գտնվում էր Կիլիկիայի և Մատիենեի միջև,

5. Կիլիկիայի և Հայաստանի սահմանը կազմում էր Եփրատ գետը,

6. Մեծ (Վերին) Զաբը սկզբնավորվում է Հայաստանից:

Եթե այս տեղեկությունները տեղադրենք քարտեզում, կստանանք Հայաստանի արևմտյան և հարավային սահմանների ընդհանուր ուրվագիծը Ք.ա. V դարում:

Իսկ ինչպիսի՞ն էր Հայաստանի հարավարևմտյան սահմանագիծը նշված ժամանակաշրջանում: Այս հարցը հաճախ է գրավել ուսումնասիրողներին, քանի որ Հայաստանի հարավարևմուտքը միջազգային անցուդարձին առնչվող ամենաբանուկ շրջանն էր, այդտեղով էր անցնում նաև ժամանակի

---

[9] **Հերոդոտոս**, V, 52, տե՛ս **Հերոդոտոս,** 1986, էջ 307:

[10] **Հերոդոտոս**, VII, 72-73, տե՛ս **Հերոդոտոս,** 1986, էջ 409:

գլխավոր միջազգային ճանապարհը, որն Աքեմենյան տերության մեջ ճանաչված էր իբրև «արքայական»:

Հերոդոտոսի վերը բերված տեղեկության մեջ ասվում է, որ «արքայական ճանապարհը» Հայաստան է մտնում Կիլիկիայից՝ Եփրատ գետի վրայով, և Հայաստանի տարածքով անցնում է հիսունվեց ու կես փարսախ, որտեղ կա տասնհինգ կայան՝ իջևանատներով և մեկ պահակային ամրոց, սակայն, ոչ մի անուն: Քանի որ չեն նշվում կայանների և ամրոցի անվանումները, քննարկման առարկա է դարձել Եփրատով անցման շրջանը: Առաջարկվել է երկու հնարավոր տարբերակ:

Առաջինի կողմնակիցները հավանական են համարում, որ «արքայական ճանապարհը» Եփրատի հետ խաչվել է Մալաթիա-Խարբերդ շրջանում[11], ինչի պարագայում Կիլիկիայի սահմանները պետք է հասնեին մինչև Մալաթիայի շրջան: Ուսումնասիրողների երկրորդ խումբը, ելնելով Հերոդոտոսի հաղորդումից, ըստ որի՝ Կիլիկիայի և Հայաստանի սահմանը «նավարկելի Եփրատ գետն» էր, այդ սահմանագիծն է համարում Եփրատի արևմտյան կեռմանը, իսկ ճանապարհի և գետի խաչման վայրը՝ Զևգմայի գետանցի շրջանը[12]:

---

[11] Տե՛ս, օրինակ, **Olmsted A. T.,** History of the Persian Empire, Chicago-London, 1948, էջ 300; **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 63-64 և այլն:

[12] Տե՛ս, օրինակ, **Սարգսյան Գ. Խ.,** Պատմահայր Հերոդոտոսը, Հերոդոտոս, 1986, էջ 570-573; **Հարությունյան Բ. Հ.,** Պարսից Աքեմենյան տերությունը և Հայաստանը (քարտեզ), Հայաստանի պատմության ատլաս, մաս Ա, Երևան, 2004, էջ 17; **Խորիկյան Հ. Գ.,** Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ.թ.ա. VI-IV դարերում, ՊԲՀ, 2005, N 3, էջ 178-179; **Խորիկյան Հ. Գ.,** Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում, Երևան, 2014, էջ 29-30 և այլն:

Հարկավոր է նշել, սակայն, որ Հերոդոտոսի վկայության մեջ «նավարկելի գետ» որակումը վերաբերում է Եփրատ գետին ընդհանրապես և ոչ թե միայն Կիլիկիա-Հայաստան սահմանագծին: Չմոռանանք, որ նույն վկայության մեջ՝ ընդամենը մի քանի տող ներքև, Հերոդոտոսը նույնպիսի բնորոշում է տալիս նաև Տիգրիս, Մեծ Զաբ, Փոքր Զաբ և Դիալա (Գյունդես) գետերին: Այսինքն՝ Հերոդոտոսի այս հաղորդումը թույլ է տալիս միայն արձանագրել Եփրատն իբրև սահմանային գետ Կիլիկիայի և Հայաստանի միջև, սակայն, ոչ ավելին: Իսկ թե Եփրատի ո՞ր գետանցով է «արքայական ճանապարհը» մտել Հայաստան՝ Զևգմայով, թե ավելի հյուսիս՝ Մալաթիայի շրջանով, հարցը մնում է չլուծված:

Նշենք, որ կա նաև այս երկու հնարավորությունները համատեղող մոտեցում: Ըստ այդմ՝ Աքեմենյան տերության գլխավոր ճանապարհը, որը ձգվում էր Սուզայից մինչև Սարդես, Արբելայի շրջանից դեպի արևմուտք, ունեցել է երկու հիմնական ճյուղավորում, որոնցից հյուսիսայինը անցել է Տիգրիսի հոսանքին զուգահեռ և Մալաթիայի շրջանով մտել Կապադովկիա, իսկ երկրորդը՝ հարավայինը, Զևգմայի գետանցով մուտք է գործել Կիլիկիա[13]:

Փաստորեն, «արքայական ճանապարհի» հայաստանյան հատվածի տեղորոշումը, որը վերջնականորեն պարզված չէ, չի տալիս նաև Հայաստանի հարավարևմտյան սահմանագծի պարզաբանման հնարավորություն: Ահա այստեղ է, որ խնդրի լուծմանն օգնության են գալիս Հերոդոտոսի վկայությունը Հա-

[13] Տե՛ս, օրինակ, **Briant P.,** From Cyrus to Alexander. A History of the Persian Empire (tr. by Petter T. Daniels), Winona Lake, 2002, էջ 366, քարտեզ 2:

յաստանից Բաբելոն նավարկության մասին և քննարկվող տարածքների ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը:

Պատմահայրը հստակորեն նշում է, որ ահռելի (հինգ հազար տաղանդ) տարողությամբ այդ նավերը պատրաստում և նավարկությունը սկսում էին Հայաստանից, ուր վերադառնում էին առևտրականները Բաբելոնում իրենց գործն ավարտելուց հետո: Այսինքն՝ Ք.ա. V դարի կեսերին Հայաստանի սահմանը հարավ-արևմուտքում պետք է ընդգրկեր Եփրատի ***նավարկելի շրջանը:***

Հայտնի է, որ Եփրատը Հայկական Տավրոսի լեռների անցման հատվածում առաջացնում է բազմաթիվ զառիվեր կիրճեր, շուրջ երեք հարյուր ջրվեժներ ու քարվազներ, որոնք անհնար են դարձնում նավարկությունն այդ շրջանում[14]: Եփրատը նավարկելի է դառնում միայն Հայկական Տավրոսի շրջանից դուրս գալուց՝ Կոմմագենեի ապագա մայրաքաղաք Սամոսատից հարավ: Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ նշված ժամանակաշրջանում Հայաստանի հարավարևմտյան սահմանագիծը պետք է ընկած լիներ Սամոսատից հարավ, այսինքն՝ ընդգրկեր Կոմմագենեն ամբողջությամբ, եթե ոչ ավելի հարավ ընկած տարածքները Եփրատի հովտում:

Այսպիսով՝ Հայաստանի պատմական աշխարհագրության մասին Հերոդոտոսի աշխատությունից ստացվող վերոնշյալ վեց հիմնական տեղեկություններին պետք է հավելել նաև յոթերորդը: Այն է՝ Եփրատը նավարկելի է Հայաստանի տարած-

---

[14] Տե՛ս **Հակոբյան Թ.,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984, էջ 39-41; **Գաբրիելյան Հ. Կ.,** Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000, էջ 195-196; **Շիրինյան Գ. Թ.,** Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2008, էջ 121-122, նկ. 23:

քում, ինչը նշանակում է, որ Հայաստանի հարավարևմտյան սահմանը Ք.ա. V դարում ընդգրկել է Կոմմագենեի տարածքն ամբողջությամբ, հնարավոր է՝ նաև ավելի հարավ ու արևելք ընկած որոշ շրջաններ:

ЮГО-ЗАПАДНАЯ ГРАНИЦА АРМЕНИИ СОГЛАСНО СВЕДЕНИЯМ ГЕРОДОТА

Среди данных Геродота про армян и Армении особенно важно свидетельство о речной торговле из Армении в Вавилон по Евфрату. Это свидетельство важно также с точки зрения исторической географии. Дело в том, что в районе Армянского Тавра Евфрат имеет около 300 водопадов. Следовательно, юго-западная граница Армении в V веке до р. Хр. находилась южнее Армянского Тавра, включая также территорию будущего Коммагенского царства.

THE SOUTH-WESTERN BOUNDARY OF ARMENIA ACCORDING TO THE INFORMATION OF HERODOTUS

Among the data of Herodotus about the Armenians and Armenia the evidence of the river trade from Armenia to Babylon through the Euphrates River is especially important. This evidence is also important from the point of view of historical geography. The fact is that in the area of the Armenian Taurus Euphrates have about 300 waterfalls. Consequently, the south-western border of Armenia in the V century BC was located to the south of the Armenian Taurus, including also the territory of the future Kingdom of Commagene.

ԿՏԵՍԻԱՍ ԿՆԻԴԱՑՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հունաստանի դասական ժամանակաշրջանի պատմագրության նշանակությունը դժվար է գերագնահատել ինչպես համաշխարհային պատմագրության, այնպես էլ հայագիտության դիտանկյուններից: Բավական է միայն հիշել, թե Հայաստանի վաղ շրջանի պատմության վերաբերյալ որքան բացառիկ ու անգնահատելի տեղեկություններ են հաղորդում Հերոդոտոսի և Քսենոփոնի երկերը: Նրանց կողքին կան հեղինակներ, որոնց աշխատությունները, դժբախտաբար, չեն պահպանվել, սակայն դրանցից առանձին հատվածներ հասել են մեր օրերն այլ հեղինակների աշխատանքների միջնորդությամբ: Այդպիսի հեղինակ է Կտեսիաս Կնիդացին (Ք.ա. V-IV դդ.), որի աշխատանքների հատվածները մեզ են հասել հիմնականում Դիոդորոս Սիկիլիացու և Փոտ պատրիարքի, նաև այլ հեղինակների երկերի միջոցով:

Կտեսիաս Կնիդացու՝ Հայաստանին վերաբերող տեղեկությունները հրատարակվել են տարբեր ուսումնասիրություններում, այդ հեղինակից պահպանված հատվածների ժողովածուներում, սակայն դրանք պատշաճ և ամբողջական քննարկման առարկա չեն դարձել հայագիտական տեսանկյունից, չեն արժևորվել իբրև հայագիտության սկզբնաղբյուր: Այս հրապարակմամբ կփորձենք մասամբ լրացնել այդ բացը:

Կտեսիաս Կնիդացին ծնվել է Ք.ա. մոտ 441 թվականին: Որպես ռազմագերի հայտնվելով Պարսկաստանում՝ նա Ք.ա. 415-398 թվականները անցկացրել է այնտեղ: Լինելով մասնագիտությամբ բժիշկ՝ արագ գնահատվել է պարսկական

միջավայրում՝ դառնալով աքեմենյան արքաներ Դարեհ Բ-ի (Ք.ա. 423-405 թթ.) և Արտաքսերքսես Բ-ի (Ք.ա. 405-359 թթ.) արքունի բժիշկը:

Կտեսիաս Կնիդացին հեղինակել է «Պարսկականք» («Persika»), «Հնդկականք» («Indika»), բժշկագիտական և այլ երկեր: Հայաստանի պատմության համար կարևոր տեղեկություններ է պարունակել «Պարսկականքը», որը դասական ժամանակաշրջանի մյուս հույն պատմագիրների համեմատությամբ ունեցել է կարևոր աղբյուրագիտական առավելություն: Հեղինակը, տասնյոթ տարի անցկացնելով Պարսկաստանում և աշխատելով արքունիքում, օգտագործել է պարսկական դիվաններում եղած վավերագրերը, նաև տեղի ժողովրդական զրույցները: Հայրենիք վերադառնալուց հետո գրած աշխատության էջերում Կտեսիաս Կնիդացին անդրադարձել է նաև մյուս հույն հեղինակների երկերին՝ հաճախ հակադրվելով նրանց, ճշգրտումներ կամ լրացումներ կատարելով, ինչից ակնհայտ է, որ նա կատարելապես տիրապետում էր նաև հունական պատմագրական աղբյուրներին[15]:

---

[15] Կտեսիաս Կնիդացու կյանքի, գործունեության և երկերի մասին հանգամանորեն տե՛ս **Marquart J.,** Die Assyriaka des Ktesias, “Philologus: Zeitschrift für das classische Altertum”, Sechster Supplementband, Göttingen, 1891-1893, էջ 501-658; **Goossens G.,** L’histoire d’Assyrie de Ctesias. «L’antiquité classique», t. IX, 1940, էջ 25-45; **König F. W.,** Die Persika des Ktesias von Knidos, “Archiv für Orientforschung”, Beiheft 18, Graz, 1972; **Пьянков И. В.,** Ктесий как историк, «Античная древность и средние века», № 11, Свердловск, 1975, էջ 52-57; **Eck B.,** Sur la vie de Ctésias, “*Revue des études grecques”, tome* 103, Paris, 1990, էջ 409-434; **Lenfant D.,** Greek Historians of Persia, Companion to Greek and Roman Historiography, Blackwell Publishing, 2007, էջ 183-191; **Abe T.,** Ctesias’ *Persica*: Persian Decadence in Greek Historiography, Memory of the Past and Its Utility: Nation, State, Society and Identity, Rome, 2014, էջ 35-53; նաև հաջորդ ծանոթագրության մեջ հղված գրականությունը:

Կտեսիաս Կնիդացու «Պարսկականք» աշխատությունը բաղկացած է եղել 23 գրքից: Առաջին վեցում ներկայացվել է Ասորեստանի և Մարաստանի պատմությունը: 7-13-րդ գրքերն ընդգրկել են Պարսկաստանի պատմությունը՝ հիմնադրումից մինչև Քսերքսես արքայի (Ք.ա. 486-465 թթ.) իշխանության ավարտը, իսկ 14-23-րդ գրքերը՝ Ք.ա. 465-398 թթ. Պարսկաստանի պատմությունը:

Ինչպես նշվեց, Կտեսիաս Կնիդացու «Պարսկականք» աշխատությունը չի պահպանվել: Առաջին վեց գրքերի մասին պատկերացում ենք կազմում Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան» աշխատության շնորհիվ, որի երկրորդ գիրքը գլխավորապես հիմնված է Կտեսիաս Կնիդացու երկի վրա: Իսկ «Պարսկականքի» 7-23-րդ գրքերի քաղվածքները կատարել է Բյուզանդիայի հայազգի Փոտ պատրիարքը (IX դ.)[16]:

Այժմ անդրադառնանք Կտեսիաս Կնիդացու՝ Հայաստանին վերաբերող տեղեկություններին՝ խմբավորելով դրանք ըստ բովանդակության:

Կտեսիաս Կնիդացին Ասորեստան-Հայաստան (Ուրարտու) հարաբերությունների մասին: Հայաստանի վերաբերյալ

---

[16] Կտեսիաս Կնիդացու աշխատանքներից պահպանված հատվածներն ունեցել են բազմաթիվ հրատարակություններ, տե՛ս, օրինակ, Ctesiae Cnidi Operum reliquae, Fragmenta collegit, textum e codd. recognovit, prolegomenis et perpetua annotatione instruxit indicesque adiecit J. Ch. F. Baehr, Francofurti ad Moenum, 1824; **Henry R.,** Ctésias. La Perse, l'Inde: Les sommaires de Photius, Brussels, 1947; **Auberger J.,** Ctésias. Histoires de l'Orient, Paris, 1991; Ctésias de Cnide. La Perse - L'Inde - Autres fragments, Texte établi, traduit et commenté par D. Lenfant, Paris, 2004; **Nichols A.,** The Complete Fragments of Ctesias of Cnidus, Translation and commentary with an introduction (PhD Dissertation), University of Florida, 2008; **Llewellyn-Jones L., Robson J.,** Ctesias' History of Persia. Tales of the Orient. Routledge, 2010; **Stronk J. P.,** Ctesias' Persian History. Part I: Introduction, Text, and Translation, Düsseldorf, 2010 և այլն:

Կտեսիաս Կնիդացու առաջին տեղեկությունը՝ քաղված «Պարսկականք» աշխատությունից, պահպանվել է Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան» երկում (գիրք II, գլ. I, 4-9): Այն Ասորեստանի և Հայաստանի հնագույն հարաբերությունների մասին է.

«(4) Առաջինը, ում պատմությունը և հիշատակումը ավանդվել է մեզ, մեծ գործեր կատարած Նինոսն է՝ ասորեստանցիների թագավորը: Նրա մասին էլ մենք կփորձենք պատմել մանրամասնությամբ: Քանզի նա, բնականից լինելով ռազմասեր և նախանձախնդիր առաքինության նկատմամբ, զինեց երիտասարդներից ուժեղագույններին և երկար ժամանակ մարզելով նրանց՝ վարժեցրեց դիմանալու ամեն տեսակի դժվարության և ռազմական վտանգների:

(Ապա պատմում է Նինոսի՝ Արաբիայի թագավոր Արիայոսի հետ դաշնակցելու, միացյալ ուժերով բաբելացիների երկիրը նվաճելու մասին – Ա. Մ.):

(8) Այնուհետև Նինոսը, մեծ զորքով ներխուժելով Արմենիա, մի շարք քաղաքներ ավերելուց հետո կոտորեց տեղի բնակիչներին, ուստի և նրանց թագավոր Բարզանեսը, տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ նրա դեմ կռվելու, առատ նվերներով դիմավորեց նրան և ասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները:

(9) Իսկ Նինոսը նրան վերաբերվեց մեծահոգաբար և համաձայնվեց, որ նա տիրի Արմենիային և, մնալով որպես իր բարեկամը, զորք ուղարկի և միջոցներ՝ իր բանակի համար: Եվ նա, առավել ևս հզորանալով, արշավեց Մեդիայի վրա»[17]:

---

[17] Դիոդորոս Սիկիլիացու այս և ստորև մեջբերված հատվածները տրվում են Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարվել է Diodori, Bibliotheca Historica (Vol. I-V, Lipsiae, 1866-1868) հրատարակությունից: Այս հատ-

Այդ դրվագը մասնագիտական գրականության մեջ առիթ է տվել իրարամերժ քննարկումների: Բոլորը միակարծիք են այն հանրահայտ փաստի վերաբերյալ, որ Նինոսն անտիկ պատմագրության մեջ Ասորեստանի հավաքական կերպարն է, պետության հիմնադիրն ու մայրաքաղաք Նինվեի անվանադիրը: Քննարկումների առարկա է եղել Հայաստանի արքա Բարզանեսի ինքնության պարզաբանումը:

Առաջարկվել է այդ անվան ներքո տեսնել Տուշպա-Վան մայրաքաղաքի հիմնադիր Սարդուրի (Իշթարդուրի) Ա արքային, իսկ պատերազմական իրադարձությունները համադրել սեպագիր աղբյուրներից հայտնի Ք.ա. 830-826 թթ. դեպքերի հետ[18]:

վածը տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան (հատվածներ), «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 14, Հին հունական աղբյուրներ, Բ (թարգմ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1985, էջ 15-16; հմմտ. **Nichols A.,** նշվ. աշխ., էջ 58; **Llewellyn-Jones L., Robson J.,** նշվ. աշխ., էջ 113-114:

[18] Տե՛ս **Դալալյան S.,** Օտար պատմագիրներից հիշատակված Հայաստանի ամենավաղ արքան, ՊԲՀ, 2007, թիվ 1, էջ 249-261: Հեղինակն առաջարկում է «Բարզանես» անունն իրանական հիմքով մեկնաբանել իբրև «հմայիչ», «սիրելի», «սիրեկան», որը համարում է Արա Գեղեցիկի «գեղեցիկ» մակդիրը, իսկ Արայի պատմական կերպարի նախատիպ է համարում Սարդուրի Ա-ին: Նրա անվան ասուրական տարբերակը՝ «Իշթարդուրի»՝ «Իշթարի հովանավորյալ» թարգմանությամբ, Տ. Դալալյանը նույնական է համարում «Շամիրամի սիրելի» մակդիրին, որը պատշաճում է Արա Գեղեցիկին: Հեղինակն իր տեսակետի լրացուցիչ հիմնավորում է համարում Արա Գեղեցիկի՝ Արամի որդի, իսկ Սարդուրի Ա-ի՝ Արամե Ուրարտացու հաջորդ լինելը:

Գրավիչ լինելով հանդերձ՝ տեսակետն ունի խոցելի կողմեր և քիչ հավանական է: Նախ անհավանական է, որ նոր մայրաքաղաքի հիմնադրման արձանագրության մեջ (որը նրա «կյանքի գործի» արձանագրումն էր) արքան ներկայանա ոչ թե իր անվամբ, այլ մակդիր-մականունով: Նույնը վերաբերում է նաև արքայի հայրանվանը, որն այս դեպքում ոչ թե Արամ է, այլ՝ Լութիպրի: Սարդուրի Ա-ն Հայաստանի հարավային Նաիրի երկրի արքան էր, իսկ Արամեն՝ կենտրոնական և հյուսիսարևելյան Ուրարտու-Արարատի.

Մեկ այլ կարծիքի համաձայն՝ Նինոս-Բարզանես հակամարտության մեջ պետք է տեսնել Ասորեստանի արքա Թիգլաթպալասար Գ-ի՝ Ք.ա. 735 թ. դեպի Ուրարտու կատարած արշավանքի արձագանքը[19]:

Առաջարկվել է, անունների ակնհայտ նմանությունից ելնելով, Բարզանեսին նույնացնել Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոն Արդինի-Մուսասիրի քրմապետ-արքա Ուրզանայի հետ: Ըստ այդմ՝ Նինոս-Բարզանես պատերազմը պետք է համարել Ք.ա. 714 թ. Ասորեստանի արքա Սարգոն Բ-ի՝ դեպի Հայկական լեռնաշխարհ արշավանքի հիշողությունը[20]:

Ինչ խոսք, կարելի է անել նման այլ ենթադրություններ ևս, որոնք այս կամ այն չափով կլինեն համոզիչ, բայց և կունենան խոցելի կողմեր: Սակայն մենք ձեռնպահ կմնանք նման փորձերից՝ կրկին արձանագրելով այն, ինչ ընդունում են բոլոր ու-

---

դրանք հստակորեն տարբերակվում են Ք.ա. IX դարի առաջին կեսի ասորեստանյան արձանագրություններում: Այս ամենից բացի՝ չունենք որևէ փաստ, որ Սարդուրի Ա-ն հպատակվել է Ասորեստանին: Ավելին՝ այն, որ նա կրում է ասորեստանյան արքաների տիտղոսաշարը, մղում է մտածելու, որ դա կարող էր լինել հակառակորդ երկրի նկատմամբ նրա տարած հաղթանակի արձագանքը:

[19] Տե՛ս **Nichols A.,** նշվ. աշխ., էջ 131: Հեղինակը սխալմամբ Թիգլաթպալասար Գ-ին կոչում է Թիգլաթպալասար Ա: Նա առաջարկում է Թիգլաթպալասար Գ-ի՝ Տուշպա-Վան հասնելը, այն պաշարելը, սակայն չգրավելը նույնացնել Նինոս-Բարզանես առճակատման հետ, ինչը համոզիչ չէ: Թիգլաթպալասար Գ-ն Ք.ա. 743 թ. կարողացավ կանգնեցնել Սարդուրի Բ-ի առաջխաղացումը ներկայիս Սիրիայի տարածքում (հակառակ դեպքում Ասորեստանը կարող էր կանգնել կործանման վտանգի առաջ), իսկ ութ տարի անց, միայն հասնելով Տուշպայի մատույցներին, ի զորու չեղավ նվաճել այն: Այս արշավանքից հետո Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորությունը ոչ միայն չհպատակվեց Ասորեստանին, այլև տասնամյակներ շարունակ վերջինիս գլխավոր մրցակիցն էր Առաջավոր Ասիայում:

[20] Տե՛ս **König F. W.,** նշվ. աշխ., էջ 36:

սումնասիրողները: Այն է՝ Նինոսն անտիկ պատմագրության մեջ Ասորեստանի հավաքական կերպարն է, պետության հիմնադիրն ու մայրաքաղաք Նինվեի անվանադիրը: Ասորեստանն այստեղ հակամարտում է Հայկական լեռնաշխարհի մեծ պետության դեմ, որն Արմենիա-Հայաստանն է և համապատասխանում է սեպագիր սկզբնաղբյուրների և Աստվածաշնչի Ուրարտու-Արարատ-Բիայնիլի թագավորությանը: Սա նշանակում է, որ Ուրարտու-Հայաստան նույնականությունը փաստվում է նաև Աքեմենյան Պարսկաստանի դիվանների վավերագրերի և դասական ժամանակաշրջանի հունական պատմագրության տվյալների համադրությամբ: Ավելացնենք, որ Աքեմենյան Պարսկաստանի սեպագիր դպրությունն ուղիղ ժառանգորդն է Հին Արևելքի ավելի վաղ գոյություն ունեցած դպրության կենտրոնների, այդ թվում՝ Ասորեստանի և Ուրարտուի սեպագրական ավանդույթների: Իսկ Աքեմենյան տերության պաշտոնական եռալեզու սեպագիր արձանագրություններում երեք դար շարունակ փաստվել է Ուրարտու-Արմինա/Արմենիա-Հայաստան նույնականության հանգամանքը[21]:

---

[21] Աքեմենյան եռալեզու սեպագիր արձանագրություններում Հայաստանի մշտական անվանումներն են՝ պարսկերեն բաժնում «Արմինա», բաբելերենում՝ «Ուրարտու», էլամերենում՝ «Հարմինույա» երկրանունները, ինչը փաստում է դրանց՝ միևնույն երկրի տարբեր անվանումներ լինելը: Այդպես է ոչ միայն Դարեհ Ա-ի (Ք.ա. 522-486 թթ.) հանրահայտ Բեհիստունյան արձանագրության մեջ, այլև նույն արքայի՝ Պերսեպոլսի, Սուզայի և Նախշի Ռուստամի տարեգրություններում, նաև Ք.ա. V-IV դարերում իշխած Քսերքսես (Ք.ա. 486-465 թթ.) և Արտաքսերքսես (Բ կամ Գ) արքաների արձանագրություններում (տե՛ս **Kent R. G.,** Old Persian. Grammar, Texts, Lexicon, Parts I-III, New Hawen, 1953, էջ 107-110, 112, 114, 116-138, 141-142, 150-152, 155-156; **Նալբանդյան Գ.,** Դարեհ Վշնասպի Բիսեթունյան արձանագրությունը, Երևան, 1964, §§ 26-30 և 49-52; **Lecoq P.,** Les inscriptions de la Perse achéménide,

Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարանի» երկրորդ գրքում, որը, ինչպես նշվեց, գրված է հիմնականում Կտեսիաս Կնիդացու տեղեկությունների հիմամբ, պահպանվել է Հայաստանին վերաբերող ևս երկու տեղեկություն: Երկուսն էլ տեղ են գտել Ասորեստանի թագուհի Սեմիրամիսի մասին պատմող բաժիններում, որոնցում հեղինակը քանիցս շեշտում է, որ այդ տեղեկությունները ևս քաղված են Կտեսիաս Կնիդացուց: Մեկը պատմաաշխարհագրական բնույթի է և վերաբերում է Եփրատի ու Տիգրիսի ակունքներին. դա կներկայացնենք ստորև՝ մեր հոդվածի երրորդ՝ Հայաստանի բնաշխարհին վերաբերող բաժնում: Երկրորդը պատմում է Հայաստանի լեռներից գետով մինչև Բաբելոնիա հսկա ժայռաբեկոր տեղափոխելուն. *«Սեմիրամիսը Հայաստանի լեռներից մի քար կտրեց, երկարությունը՝ 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ 25: Նա զորքերի և եզների բազմաթիվ լծերով այդ քարն իջեցրեց դեպի գետը և այնտեղ բարձրացրեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա՝ այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այն իր ձևի պատճառով անվանում են կոթող և համարում, այսպես կոչված, յոթ հրաշալիքներից մեկը»* (գիրք II, գլ. XI, 4)[22]:

Ուշագրավ այս տեղեկությունը միակը չէ իր տեսակի մեջ: Հիշենք Հերոդոտոսի՝ Հայաստանից Եփրատ գետով Բաբելոն

Gallimard, 1997, էջ 83-96, 187-217, 219-221, 228, 232-233, 256-258, 271-272; **Schmitt R.,** Die altpersischen Inschriften der Achaimeniden, Wiesbaden, 2009, էջ 9-10, 36-96, 101-102, 117-119, 123-127, 164-169, 198-199 և այլն):

[22] Տե՛ս **Դիոդորոս Սիկիլիացի,** Պատմական գրադարան, էջ 27: Ս. Մ. Կրկյաշարյանը «Հայաստանի լեռների» փոխարեն թարգմանում է «Հայկական լեռներ», ինչը վրիպակ է:

նավարկող նավերի մասին տեղեկությունը[23]: Նշենք նաև, որ Հայկական լեռնաշխարհից Եփրատով դեպի Միջագետք նավարկության մասին տեղեկություններ են հաղորդում դեռևս շումերական աղբյուրները: Դրանց համաձայն՝ Ք.ա. XXVIII-XXVII դարերում Արատտա երկրից Եփրատով Շումեր փոխադրվել են ապրանքներ, իրականացվել է ռազմական արշավանք[24]:

Կտեսիաս Կնիդացին Աքեմենյան դարաշրջանի Հայաստանի պատմության մասին: Կտեսիաս Կնիդացուց պահպանված հատվածներում Ասորեստանի և Հայաստանի հարաբերություններին հաջորդում են Աքեմենյան դարաշրջանի պատմությանը վերաբերող մի քանի դրվագներ: Դրանցից առաջինում Հայաստանի մասին չի խոսվում, սակայն դրա շնորհիվ կատարվում է կարևոր մի ճշգրտում: Խնդիրն այն է, որ Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկում ասվում է, որ մահվանից առաջ Կյուրոս Բ Մեծն իր կրտսեր որդի Տանառքսարեսին հռչակել է մարերի, հայերի և կադուսացիների փոխարքա[25]: Այս տեղե-

---

[23] *«Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից (Բաբելոնից) հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման… Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն»* (գիրք I, 192; տե՛ս **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից (թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1986, էջ 79-80):

[24] Տե՛ս **Մովսիսյան Ա.,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005, էջ 16-18, 58-59 և հղված գրականությունը:

[25] Տե՛ս **Քսենոփոն,** Կյուրոպեդիա (թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի), Երևան, 2000, էջ 362, 391-392:

կությունը մեծ տարակուսանք է առաջացնում, քանի որ այդ ժամանակ Տիգրան Երվանդյանը դեռ ողջ էր, որը Կյուրոսի գլխավոր դաշնակիցն էր և Հայաստանի արքան: Բարեբախտաբար, պահպանվել է այդ հարցում Քսենոփոնի սկզբնաղբյուր Կտեսիաս Կնիդացու երկի համապատասխան հատվածը, որում նշվում է, որ Կյուրոսը որդուն (Կնիդացու երկում՝ Տանիոքսարկես) տվել է տերության արևելյան մասը՝ բակտրիացիների, խորազմացիների, պարթևների և քարմանների երկիրը: Այդ վկայությունը պահպանվել է «Պարսկականքի» VII-IX գրքերի սեղմ շարադրանքում, որը կատարել է Փոտ պատրիարքը[26]: Դրա շնորհիվ պարզ է դառնում, որ Քսենոփոնի երկում տեղի է ունեցել խեղաթյուրում, և ճշտվում է Տանաոքսարեսի (Տանիոքսարկեսի) մասին տեղեկությունը:

Հայաստանին առնչվող հաջորդ վկայությունն առկա է «Պարսկականքի» XIV-XVIII գրքերի սեղմ շարադրանքում, որը նույնպես կատարել է Փոտ պատրիարքը: Այն վերաբերում է աքեմենյան արքունիքում շատ ազդեցիկ դիրք գրաված պափ-

---

[26] Փոտ պատրիարքը հեղինակել է մի շարք աշխատություններ, որոնցից ամենանշանավորը «Գրադարան» կամ «Միրիոբիբլիոն» (բառացի՝ «Հազար գիրք») երկն է, որին մեր նախնիները տվել են գրաբարյան գեղեցիկ «Բյուրամատյան» անվանումը: Այդ աշխատության մեջ Փոտ պատրիարքը քննական դիտողություններով ներկայացնում է անցյալի հեղինակների 386 աշխատություն՝ զետեղելով դրանք 280 գլուխներում, որոնք կոչվում են «կոդեքսներ»: Այդ աշխատության շնորհիվ լիակատար կորստից փրկվել են բազմաթիվ հեղինակների գործեր (վերաշարադրանքի տեսքով): Կտեսիաս Կնիդացու «Պարսկականքի» 14-18-րդ գրքերի և «Հնդկականք» աշխատության սեղմ շարադրանքը տեղ են գտել «Բյուրամատյանի» 72-րդ կոդեքսում: Վերոնշյալ տեղեկությունը տե՛ս **Փոտ պատրիարք**, Բյուրամատյան, կոդեքս 72, 8; հմմտ. **Ադոնց Ն.,** Քննական պատմություն Հայոց, Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 370; **König F. W.,** նշվ. աշխ., էջ 5; **Nichols A.,** նշվ. աշխ., էջ 90; **Llewellyn-Jones L., Robson J.,** նշվ. աշխ., էջ 173:

լագոնացի ներքինի Արտոքսարեսին: Վերջինս Արտաքսերքսես Ա-ի (Ք.ա. 464-424 թթ.) կողմից աքսորվեց Հայաստան, իսկ նրա մահվանից հետո, վերադառնալով հայաստանյան աքսորից, հեծելազորի հրամանատար Արբարիոսի և Եգիպտոսի սատրապ Արքսանոսի հետ գահ բարձրացրեց Օքոսին, որը թագավորեց Դարեհ Բ գահանունով (Ք.ա. 423-404 թթ.):

«Ներքինի Արտոքսարեսն աքսորվեց Հայաստան, քանի որ հաճախ և ավելորդ ազատությամբ էր խոսում արքայի մոտ ի պաշտպանություն Մեգաբյուզեսի» (XIV–XVII գրքերից)[27]:

«Նրան (Օքոսին) միացավ Արբարիոսը՝ հեծելազորի հրամանատար, և Արքսանոսը՝ Եգիպտոսի սատրապ: Ներքինի Արտոքսարեսը եկավ Հայաստանից և թագ դրեց Օքոսի գլխին՝ նրա կամքին հակառակ: Այդպես Օքոսը դարձավ թագավոր և ընդունեց Դարեհ անունը» (XVIII գրքից)[28]:

Կտեսիաս Կնիդացին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի սատրապ Օրոնտաս-Երվանդ Բ-ի հայր Արտասուրա-Արտաշիրի մասին, որն ուներ խիստ ազդեցիկ դիրք աքեմենյան արքունիքում և համարվում էր «արքայի աչքը»: Արտասուրա-Արտաշիրի մասին Կնիդացու տեղեկությունները, սակայն, վերաբերում են աքեմենյան արքունիքում նրա գործունեությանը և չեն առնչվում Հայաստանին[29]:

---

[27] **Փոտ պատրիարք**, Բյուրամատյան, կոդեքս 72, 40; **König F. W.,** նշվ. աշխ., էջ 16; **Nichols A.,** նշվ. աշխ., էջ 97; **Llewellyn-Jones L., Robson J.,** նշվ. աշխ., էջ 190:

[28] **Փոտ պատրիարք**, Բյուրամատյան, կոդեքս 72, 47; **König F. W.,** նշվ. աշխ., էջ 19; **Nichols A.,** նշվ. աշխ., էջ 98; **Llewellyn-Jones L., Robson J.,** նշվ. աշխ., էջ 193:

[29] Նրա մասին գրում են բազմաթիվ այլ հույն պատմիչներ (Քսենոփոն, Դիոդորոս Սիկիլիացի, Պլուտարքոս և այլք), նա վկայված է Պերգամոնի և Նեմ-

Կտեսիաս Կնիդացին Հայաստանի բնաշխարհի մասին: Այս բաժնում առաջինը պետք է նշել Եփրատի և Տիգրիսի ակունքների մասին տեղեկությունը, որի մասին հիշատակվում է Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարանի» երկրորդ գրքում, Սեմիրամիսի մասին պատմության ընթացքում: Տեղեկությունը հետևյալն է. *«Նեղոսից և Գանգեսից հետո Եփրատը և Տիգրիսը, կարելի է ասել, առավել նշանակալից գետերն են Ասիայում, որոնց ակունքները Հայաստանի լեռներում են և գտնվում են իրարից երկու հազար հինգ հարյուր ասպարեզ հեռավորության վրա»* (գիրք II, գլ. XI, 1)[30]:

Ուշագրավ է Կտեսիաս Կնիդացու տեղեկությունը Հայաստանում առկա մի ձկնատեսակի մասին, որը հայտնի էր իբրև «սև ձուկ» և անմիջապես մահվան պատճառ էր դառնում այն ուտողի համար: Հասկանալի է, որ արքունի բժշկին նման ձկան մասին տեղեկությունը պետք է բազմակողմանիորեն հետաքրքրեր:

Թե Կնիդացու որ աշխատանքում է տեղ գտել այս տեղեկությունը, հայտնի չէ: Այն մեզ է հասել երկու հեղինակի միջնորդությամբ: Առաջինը Ք.ա. III դարի հեղինակ Անտիգոնոս Կարիստացու «Հրաշապատումների ժողովածու» երկում է. *«Ըստ Կալլիմաքոսի՝ Կտեսիասն իր պատմության մեջ խոսում է Հայաստանում ժայռից բխող ջրի մասին, որն իր հետ բերում*

րութ լեռան արձանագրություններում: Այդ ամենին, սակայն, այստեղ չենք անդրադառնա, քանի որ դա դուրս է մեր քննարկման նյութի շրջանակից:

[30] Տե՛ս **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, էջ 27: Ասպարեզը հավասար է մոտ 190 մետրի:

է սև ձուկ, որը սպանում է ցանկացած մեկի, ով այն ուտում է»[31]:

Երկրորդ վկայությունը պահպանվել է Պլինիոս Ավագի «Բնական պատմություններ» աշխատության էջերում (գիրք XXXI, գլ. XIX, 25). *«Կտեսիասը գրում է, որ Հայաստանում կա մի աղբյուր, որում բազմանում է սև ձուկ. այն ուտելիս անմիջապես մահվան պատճառ է դառնում»*[32]:

* * *

Նշվածներից բացի՝ հայագիտության համար կարող է հետաքրքրություն ներկայացնել Զոստրիանոսի թոռ Արմենիոսի մասին տեղեկությունը, որը Զրադաշտի և այլոց հետ համարվել է մոգական գիտության մեծագույն հեղինակություններից մեկը: Տեղեկությունն առկա է եղել Կնիդացու I-III (Ասորեստանի մասին պատմող) գրքերում և պահպանվել է Արնոբիոսի «Ընդդեմ հեթանոսների» երկում[33]: Յ. Մարկվարտն առաջարկում է այս Արմենիոսին համադրել Պլատոնի «Պետություն» աշխատությունից հայտնի Արմենոսի հետ, որի որդի Էրը մարտադաշտում զոհվելուց տասներկու օր անց հարություն է առել[34]: Վերջինս հայագիտության մեջ նույնացվել է Արա Գեղեցիկի հետ[35]:

---

[31] **Անտիգոնոս Կարիստացի**, Հրաշապատումների ժողովածու, 165; հմմտ. **Nichols A.,** նշվ. աշխ., էջ 127:

[32] **Պլինիոս Ավագ**, Բնական պատմություններ, XXXI, XIX, 25; հմմտ. **Nichols A.,** նշվ. աշխ., էջ 127:

[33] Տե՛ս **Nichols A.,** նշվ. աշխ., էջ 72; Llewellyn-Jones L., Robson J., նշվ. աշխ., էջ 140:

[34] Տե՛ս **Marquart J.,** նշվ. աշխ., էջ 527-529:

[35] Տե՛ս, օրինակ, **Էմին Մ.,** Վէպք հնոյն Հայաստանի. Քննութիւն, Մոսկվա, 1850, էջ 85-88; **Ադոնց Ն.,** Հին հայոց աշխարհայացքը, Երկեր, հ. Ա, Երևան,

Ամփոփելով տեսնում ենք, որ Կտեսիաս Կնիդացու երկերից պահպանված, Հայաստանին առնչվող տեղեկությունները բաժանվում են երեք հիմնական ոլորտի: Դրանք վերաբերում են Ասորեստանի ու Հայաստան-Ուրարտուի հարաբերություններին, Աքեմենյան դարաշրջանի Հայաստանի պատմությանը, Հայաստանի բնաշխարհին, և բոլորն էլ ուշագրավ ու կարևոր վկայություններ են հայագիտության համար:

СВЕДЕНИЯ КТЕСИЯ КНИДСКОГО ОБ АРМЕНИИ

Одним из наиболее замечательных фигур классической греческой историографии является Ктесий Книдский (V-IV вв. до р. Хр.), который 17 лет провел во дворце Ахеменидской империи и использовал персидские письменные источники и народные предания. Поэтому его труд “Персика” является первостепенным историческим источником.

Данные Ктесия Книдского об Армении можно разделить на три основные группы. Они относятся к отношениям между Ассирией и Арменией-Урарту, истории Армении в эпоху Ахеменидов и природе Армении. Все они являются важными свидетельствами для арменоведения.

THE TESTIMONIES OF CTESIAS OF CNIDUS ABOUT ARMENIA

One of the most remarkable figures in classical Greek historiography is Ctesias of Cnidus (V-IV centuries BC), who spent 17 years in the palace of the Achaemenid empire and used Persian written sources and traditional histories. Therefore, his work “Persika” is the primary historical source.

The testimonies of Ctesias of Cnidus about Armenia can be divided into three main groups. They are about the relations between Assyria and Armenia-Urartu, about the history of Armenia in the Achaemenid epoch and the nature of Armenia. All of them are important testimonies for Armenology.

2006, էջ 43-48; **Մատիկյան Ա. Հ.,** Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 256-258; **Ղափանցյան Գ.,** Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944, էջ 70-72:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ Ք.Ա. V-III ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հայաստանի պատմության առավել ուշագրավ ժամանակամիջոցներից են, անշուշտ, Ք.ա. V-III դարերը: Այդ շրջանում է Հայաստանը հարաբերվում Հին աշխարհի հզորագույն երեք՝ Աքեմենյան, Մակեդոնական և Սելևկյան տերությունների հետ, թողնում իր զգալի հետքը ողջ տարածաշրջանի պատմության մեջ: Չնայած այդ հանգամանքին՝ նշված հարյուրամյակների պատմությունը բավարար չափով լուսաբանված չէ մեզանում, ինչը պայմանավորված է նաև սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների սակավությամբ:

Ներկայացվող աշխատանքով նպատակ ունենք գրավոր աղբյուրների ընձեռած հնարավորության սահմաններում ուրվագծելու Հայաստանի Ք.ա. V-III դարերի քաղաքական պատմության ընդհանուր պատկերը՝ անդրադառնալով ժամանակաշրջանի պատմության որոշ հարցերի հստակեցմանը: Անդրադարձը սկսենք նշված դարաշրջանին նախորդած իրադարձություններից:

Աքեմենյան տերությունը և Հայաստանը Ք.ա. 522-521 թվականներին (Բեհիստունյան արձանագրությունը Հայաստանի և հայերի մասին)

Ինչպես հայտնի է, Ք.ա. 522 թ. Աքեմենյան տերության մեջ սկսվեցին գահակալական կռիվներ, որոնք, ի վերջո, ավարտ-

վեցին Դարեհ Ա-ի հաղթանակով[36]: Դարեհը ստիպված էր իր իշխանության առաջին տարիներն անցկացնել ապստամբություններ ճնշելով և հակառակորդներին ոչնչացնելով: Այդ իրադարձությունների մասին է պատմում նրա թողած Բեհիստունյան (Բիսեթունյան, Բագաստանյան) եռալեզու արձանագրությունը, որը Հին Արևելքի հնագույն պատմության կարևոր սկզբնաղբյուրներից է[37]:

Դարեհը երեք լեզուներով (հին պարսկերեն, էլամերեն և բաբելերեն) արձանագրել է տվել Կյուրոս Մեծի մահից հետո Պարսկաստանում սկսված խառնաշփոթ վիճակի, գահակալական կռիվների և պարսից տիրակալության դեմ ոտքի ելած երկրների ու ժողովուրդների ապստամբությունների ճնշման պատմությունը: Արձանագրության պարսկերեն մասում Հայաստանը կոչվում է Արմինա, էլամերենում՝ Հարմինույա, բա-

---

[36] Աքեմենյան տերության մասին ամփոփ տե՛ս **Olmstead A. T.,** History of the Persian Empire, Chicago, 1948; **Cook J. M.,** The Persian Empire, London, 1983; **Frye R. N.,** The History of Ancient Iran, Berlin, 1984; Cambridge History of Iran, Vol. 2, The Median and Achaemenian Periods (ed. by I. Gerschevitch), L., 1985; **Дамдамаев М. А.,** Политическая история Ахеменидской державы, М., 1985; **Dandamaev M. A.,** A Political History of the Achaemenid Empire, Leiden, 1989; **Briant P.,** From Cyrus to Alexander: A History of the Persian Empire, Winona Lake, 2002 և այլն:

[37] Բեհիստունյան արձանագրությունն ամբողջությամբ տե՛ս **Kent R. G.,** Old Persian. Grammar, Texts, Lexicon, Parts I-III, New Hawen, 1953, էջ 116-135; **Նալբանդյան Գ.,** Դարեհ Վշնասպի Բիսեթունյան արձանագրությունը, Երևան, 1964: Հայաստանին և հայերին են վերաբերում արձանագրության 26-30-րդ և 49-52-րդ բաժինները (միայն Հայաստանի դեմ ուղղված հինգ արշավանքների հատվածները՝ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 153-156; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 236-240):

բելերենում՝ Ուրարտու, ինչը Հայաստան-Արմենիա-Ուրարտու նույնությունը վկայող փաստարկներից է[38]:

Ք.ա. 522-521 թթ. Դարեհը բազմաթիվ արշավանքներ ձեռնարկեց՝ հնազանդեցնելու իր իշխանությունը չընդունող երկրները: Բեհիստունյան արձանագրության սկզբում Հայաստանը չի հիշատակվում ապստամբած երկրների շարքում, ինչը ցույց է տալիս, որ վերջինս մինչ այդ լիովին անկախ էր: Հետագա իրադարձությունների մասին հաղորդումներից ակնհայտ է, որ Հայաստանն ուներ կարևոր դերակատարում տարածաշրջանում և բավական մեծ ռազմական ուժ:

Ամենամեծ փորձությունները Դարեհ Ա-ին սպասում էին Հայաստանում: Եթե մյուս երկրները նա կարողանում էր նվաճել յուրաքանչյուրը մեկ արշավանքով, ապա դեպի Հայաստան պահանջվեց կատարել հինգ արշավանք:

Նույն արձանագրության 49-52-րդ բաժինները հաղորդում են չափազանց հետաքրքիր մի իրադարձության մասին ևս: Դրա համաձայն՝ Դարեհի դեմ Բաբելոնում բարձրացած ապստամբությունը ղեկավարում էր «հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին»: Դա մի կողմից ցույց է տալիս, որ Ք.ա. 520-ական թթ. վերջին հայոց մեջ շարունակվում էր Խալդի աստծո պաշ-

---

[38] Հայաստանը շարունակում է «Ուրարտու» կոչվել նաև ավելի ուշ՝ Ք.ա. V-IV դարերում, Աքեմենյան տերության բաբելերեն արձանագրություններում (**Kent R. G.,** Old Persian…, էջ 121-124, 126-131, 171; **Նալբանդյան Գ.,** Դարեհ Վշնասպի Բիսեթունյան արձանագրությունը..., էջ 8, 14-15; **Дамдамаев М. А.,** Клинописные данные об армянах, «Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей», Е., 1990, էջ 102-106; **Wartke R. B.,** Das Reich am Ararat, Mainz, 1993, էջ 171-177), ինչը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ լիովին սխալ է ժամանակին տարածված այն կարծիքը, թե «Ուրարտուն» ոչ հայկական ինչ-որ պետության անվանում է:

տամունքը, մյուս կողմից՝ վկայում Բաբելոն-Հայաստան կապի մասին: Դա նաև մղում է մտածելու, որ Բաբելոնի ապստամբությունը կարող էր ուղղորդված լինել Հայաստանից, ինչը կարող է լինել վերջինիս տարածաշրջանային ազդեցության վկայություն:

Ք.ա. 522-521 թթ. հինգ արշավանքներից հետո Հայաստանը ճանաչեց Աքեմենյանների գերիշխանությունը: Դատելով փաստերից՝ Աքեմենյանները ևս իրենց հերթին զնացին զիջումների: Հայաստանում շարունակեցին իշխել Երվանդականները, որոնք վայելում էին լիակատար ներքին ինքնավարություն:

Աքեմենյան տերությունը և Հայաստանը Ք.ա. 520-331 թվականներին

Ք.ա. 520 թ. Աքեմենյան տերությունը բաժանվեց քսան մեծ վարչական միավորների՝ սատրապությունների: Հայաստանը կազմեց XIII սատրապությունը[39]: Հայաստանը՝ որպես սատրապություն, Աքեմենյան տերության կազմում մնաց մինչև Ք.ա. 331 թվականը:

---

[39] **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, գիրք III, 93: Տևական ժամանակ համընդհանուր ընդունելություն էր վայելում այն կարծիքը, որ Հայաստանը մտնում էր XIII և XVIII սատրապությունների մեջ, ինչի պատճառը XVIII սատրապության մեջ ալարոդների հիշատակությունն է (**Հերոդոտոս**, գիրք III, 94): «Ալարոդ» ցեղանվան մեջ առաջարկվում էր տեսնել «ուրարտացիներին»: Սակայն համոզիչ կերպով ցույց տրվեց, որ դա վերաբերում է հետագա Աղվանքի տարածքին (**Հարությունյան Բ. Հ.,** Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 1999, N 1-12, էջ 46-113):

Այս ժամանակաշրջանի մասին մեր տեղեկությունները խիստ կցկտուր են: Էպիզոդիկ մի հաղորդում է պահպանվել Դարեհ Բ-ի թագավորության վեցերորդ տարով (Ք.ա. 418 թ.) թվագրվող վարչատնտեսական մի բնագրում, որում հիշատակվում են «ուրարտացիները և մելիդցիները»: Նրանք զինվորական պարտավորություն էին կատարում Միջագետքի հարավում գտնվող (երբեմնի շումերական պաշտամունքային գլխավոր կենտրոն) Նիպպուր քաղաքի շրջանում[40]:

Հայաստանի Ք.ա. V դարավերջի պատմության մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հույն զորավար և պատմիչ Քսենոֆոնն «Անաբասիս» («Նահանջ բյուրոց») երկում[41], որը ներկայացնում է Ք.ա. 401 թ. Հայաստանի տարածքով նահանջած հունական բանակի ճանապարհը: Նույն դեպքերի մասին համառոտ տեղեկացնում է նաև Դիոդորոս Սիկիլիացին[42]:

Քսենոֆոնը հայտնում է, որ այդ ժամանակ Հայաստանի սատրապն էր Երվանդ (Օրոնտես) Բ-ն, որն ամուսնացած էր Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես Բ-ի դստեր հետ և բարձր դիրք էր գրավում տերության մեջ: Նույն տեղեկությունը

---

[40] **Дамдамаев М. А.,** Клинописные данные об армянах…, էջ 104-106, 115 (հնարավոր մեկնաբանությունը տե՛ս ստորև):

[41] Քսենոֆոնի «Անաբասիսի»՝ հայերին վերաբերող հատվածները տե՛ս **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 371-383; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 161-173; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 243-255 (երկն ամբողջական հայերեն թարգմանությամբ՝ **Քսենոֆոն**, Անաբասիս, Երևան, 1970):

[42] **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, Երևան, 1985, գիրք XIV, գլ. 27-30; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 174-177; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 255-258:

ստանում ենք նրա ժառանգներից Անտիոքոս Ա Կոմմագենացու (Ք.ա. 70-34 թթ.)՝ Նեմրութ լեռան սրբավայրում թողած արձանագրություններից, որոնցում նշվում է նաև Երվանդ Բ-ի (բնագրում՝ Արոանդես) հոր անունը՝ Արտասուրա (Արտաշիր)[43]: Նեմրութ լեռան արձանագրություններից մեկում Արտասուրան հիշատակվում է որպես Արոանդեսի (Երվանդի) որդի[44]: Ովքե՞ր էին այս Երվանդը և Արտասուրան՝ Երվանդ Բ-ի պապն ու հայրը. եղե՞լ են նրանք Հայաստանի կառավարիչներ, թե՞ ոչ, մենք ոչինչ չգիտենք[45]:

Երվանդ Բ-ն հատել է սեփական պատկերով ոսկյա, արծաթե և պղնձե դրամներ, որոնք հասել են մեզ[46]: Երվանդ Բ-ի՝ որպես Հայաստանի սատրապի մասին վերջին տեղեկությունները վերաբերում են Ք.ա. 360-ական թթ., որոնց համաձայն՝ նա գլխավորել էր Աքեմենյանների դեմ բարձրացած մի քանի սատրապների ապստամբությունը, բայց անհաջողություն կրելով՝ ապաստանել է Հունաստանում և մինչև Ք.ա. 344 թվականը այնտեղ անցկացրել կյանքի վերջին տարիները[47]:

---

[43] Տե՛ս **Hümann K.** und **Puschtein O.,** Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 283, 304-305; **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History, Washington, 1963, էջ 279:

[44] Տե՛ս **Hümann K.** und **Puschtein O.,** Reisen in Kleinasien und Nordsyrien…, էջ 304; **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History…, էջ 279:

[45] Եթե պարզվի, որ նրանք եղել են Հայաստանում իշխած կառավարիչներ, հարկ կլինի փոխել Ք.ա. V-III դարերում «Երվանդ» անունը կրած հայոց սատրապների ու արքաների համարակալումը՝ Երվանդ Բ-ին, Երվանդ Գ-ին և Երվանդ Դ-ին, համապատասխանաբար, համարելով Երվանդ Գ, Երվանդ Դ և Երվանդ Ե, իսկ Արտասուրայի հայր Երվանդին՝ Երվանդ Բ:

[46] Աքեմենյան շրջանի Հայաստանի սատրապներ Երվանդ Բ-ի և Տիրիբազոսի դրամների մասին տե՛ս **Մուշեղյան Խ. Ա.,** Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ.-մ.թ. XIV դ.), Երևան, 1983, էջ 16-25:

[47] **Պոմպեոս Տրոգոս**, նախաբան, X; Քսենոֆոն, Անաբասիս, գիրք III, գլ. V, 17, գիրք IV, գլ. III, 1-5, IV, 1-22; **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադա-

Ք.ա. V դարավերջին հույն պատմիչ Քսենոֆոնը սատրապական Հայաստանի կազմում հիշատակում է առանձին ուրվագծվող, սակայն կենտրոնական իշխանությանը ենթակա Արևմտյան Հայաստանը[48]: Չի բացառվում, որ միևնույն բաժանումն արտահայտվել է Ք.ա. 418 թ. վերոհիշյալ բնագրում, որում հիշատակվում են «ուրարտացիները և մելիդցիները»[49]: Մելիդը Մալաթիայի հնագույն անվանումն է, որն էլ հնարավոր է, որ եղած լինի Արևմտյան Հայաստանի վարչական կենտրոնն այդ շրջանում: Ամենայն հավանականությամբ, հենց Արևմտյան Հայաստանի հիմքի վրա էլ ստեղծվեց Փոքր Հայքը, որն առաջին անգամ հիշատակվում է Ք.ա. IV դարում Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ:

Երվանդ Բ-ից հետո մեր տեղեկությունները կրկին խիստ սակավաթիվ են դառնում: Հայտնի է, որ Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ Գ Կոդոմանոսը նախքան Աքեմենյան տիրակալ դառնալը եղել է Հայաստանի սատրապը[50] և հայոց գահի վրա կրել «Արտաշատ» անվանումը[51]: Ք.ա. 336 թ. նա դարձավ

րան, գիրք XV, գլ. 1-4, 8-11, 90-91; **Պլուտարքոս,** Երկեր, Երևան, 1987, Արտաքսերքսես, XXXII; **Տիրացյան Գ.,** Երվանդունիները Հայաստանում, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, 1958, N 6, էջ 61-65; **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History…, էջ 279; **Wilkinson R. D.,** Orontes, son of Artasura, «Revue des Etudes Armeniennes», 1970, N 7, էջ 445-450; **Osborne M. J.,** Orontes, «Historia», 1973, Vol. 22, էջ 515-551:

[48] Օրոնտասին (Երվանդ Բ), իսկ արևմտյան մասի հյուպարքոս՝ Տիրիբազին: Մինչդեռ Դիոդորոս Սիկիլիացու երկում Ք.ա. 401 թ. Հայաստանի սատրապ է նշվում Տիրիբազը (**Դիոդորոս Սիկիլիացի,** Պատմական գրադարան, գիրք XIV, գլ. 27-30):

[49] Տե՛ս **Дамдамаев М. А.,** Клинописные данные об армянах…, էջ 104-106, 115:

[50] Տե՛ս **Justin**, գիրք X, 3 (ըստ Պոմպեոս Տրոգոսի):

[51] Տե՛ս **Sachs J. A.,** Pinches T. G., Strassmaier J. N., Late Babylonian astronomical and related texts, Providence, 1965, N 193-194; **Дамдамаев М. А.,** Политическая история Ахеменидской державы, М., 1985, էջ 254, 275:

ողջ Աքեմենյան տերության տիրակալը, իսկ Հայաստանի սատրապ դարձավ, հավանաբար, Հայկազուն-Երվանականների տոհմի ներկայացուցիչ Երվանդ (Օրոնտաս) Գ-ն, որին էլ վիճակված էր վերականգնելու Հայաստանի անկախությունը Ք.ա. 331 թվականին: Չի բացառվում, որ Երվանդ Գ-ից առաջ՝ Ք.ա. 336-333 թթ., Հայաստանի կառավարիչ եղած լինի Վահե Հայկազունին, որը, ըստ Մովսես Խորենացու տեղեկության, զոհվել է Ալեքսանդր Մակեդոնացու դեմ պատերազմում (հնարավոր է, որ դա տեղի ունեցած լինի Իսսոսի ճակատամարտում, տե՛ս ստորև):

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախության վերականգնումը

Հունական անջատ պետությունները միավորելով՝ Մակեդոնիայի արքա Ֆիլիպ Բ-ն Ք.ա. 336 թ. պատրաստվում էր մեծ պատերազմ սկսել ընդդեմ Աքեմենյան աշխարհակալության: Սակայն նա դավադրաբար սպանվեց, որից հետո Մակեդոնիայում գահ բարձրացավ որդին՝ քսանամյա Ալեքսանդրը (Ալեքսանդր Ա Մեծ կամ Ալեքսանդր Մակեդոնացի, Ք.ա. 336-323 թթ.), որին վիճակված էր դառնալու համաշխարհային պատմության ամենանշանավոր և ամենաառեղծվածային դեմքերից մեկը[52]:

---

[52] Ալեքսանդր Մակեդոնացու և նրա արևելյան արշավանքի մասին կա հսկայածավալ գրականություն: Առավել ամբողջականներից տե՛ս **Tarn W. W.,** Alexander the Great, Vol. I-II, London, 1948; **Schachermeyr F.,** Alexander der Grosse, Wien, 1973; **Шофман А. С.,** Восточная политика Александра Македонского, Казань, 1976; **Гафуров Б. Г., Цибукидис Д. И.,** Александр Македонский и Восток, М., 1980; **Шахермайр Ф.,** Александр Македонский, М., 1986;

Ք.ա. 334 թ. մակեդոնահունական զորքերը Ալեքսանդրի գլխավորությամբ անցնում են Հելլեսպոնտոսը և սկսում նշանավոր արևելյան արշավանքը: Շուտով նրանք Գրանիկոս գետի ափին պարտության են մատնում պարսից փոքրասիական սատրապների միացյալ ուժերին:

Դարեհ Գ-ն բազմահազար զորքերով ընդառաջ է գնում Ալեքսանդրին: Ք.ա. 333 թ. գարնանը Կիլիկիայի Իսսոսի դաշտում տեղի է ունենում մեծ ճակատամարտ: Չնայած թվական գերակշռությանը՝ պարսից զորքը Իսսոսի մոտ ծանր պարտություն է կրում: Դատելով փաստերից՝ պարտության պատճառը մարերի առաջնորդությամբ կռվող ձախ թևի փախուստն էր, որին հաջորդած խուճապից հետո սկսում է նահանջել ամբողջ բանակը: Դարեհը փախչում է՝ գերի թողնելով մորը, կնոջը և զավակներին:

Պատմահայր Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ մարտնչել է Վահե Հայկազունին, որը զոհվել է «նրա ձեռքով»[53]: Անտիկ պատմագրությունից հայտնի է, որ հայերն աքեմենյան զորքի կազմում մասնակցել են Մակեդոնացու դեմ մղված երկու՝ Իսսոսի և Գավգամելայի ճակատամարտերին: Հայտնի է, որ Գավգամելայի ճակատամարտում հայկական զորքերը ղեկավարել են Օրոն-

---

Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987; Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ. Հայկական խմբագրություններ (աշխատասիրությամբ՝ Հ. Սիմոնյանի), Երևան, 1989; **Օհանյան Մ.,** Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003 և այլն:

[53] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան), Տփխիս, 1913 (նմանահանութիւն, լրացումները՝ Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991), գիրք Ա, գլ. ԼԱ:

տես-Երվանդ Գ-ն ու Միթրաուստեսը (Միհրվահիշտ)[54]: Մնում է եզրակացնել, որ Վահե Հայկազունին Իսսոսի ճակատամարտին մասնակցած 47 հազարանոց հայկական բանակն է առաջնորդել և զոհվել է այդ ճակատամարտում: Եթե այս ենթադրությունը հետագայում հաստատվի նորահայտ փաստերով, կարող ենք եզրակացնել, որ Դարեհ-Արտաշատից հետո՝ Ք.ա. 336-333 թթ., Հայաստանի սատրապ-կառավարիչն է եղել Վահե Հայկազունին, որին էլ Ք.ա. 333 թ. հաջորդել է Երվանդ Գ-ն:

Ալեքսանդրի և Դարեհ Գ-ի հիմնական ուժերի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ք.ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին Արբելայից ոչ հեռու՝ Գավգամելայի մոտ: Ինչպես Իսսոսում, այս ճակատամարտում ևս հայերը կազմում էին աջ թևի հիմնական ուժը:

Ճակատամարտում, չդիմանալով մակեդոնական զորքի ճնշմանը, աքեմենյան զորքերը սկսում են անկազմակերպ նահանջը, որը վերածվում է կենտրոնի և ձախ թևի խուճապահար փախուստի: Դարեհը կրկին փախչում է: Մակեդոնացին սկսում է հետապնդել Դարեհին, ինչը, սակայն, ձախողվում է աքեմենյան բանակի աջ թևի հերոսական գործողությունների հետևանքով (ինչպես նշվել է, աջ թևի հիմնական ուժը հայկական զորքն էր): Հունամակեդոնական զորքի ձախ թևի հրամա-

---

[54] Իսսոսի և Գավգամելայի ճակատամարտերին հայերի մասնակցության մասին տե՛ս Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը (տե՛ս **Ալեքսանդր Մակեդոնացի,** Երևան, 1987 գրքում), գիրք III, II, 4-6; XII, 10, 12-13; գիրք IV, XVI, 1-6; **Արրիանոս Փլավիոս,** Ալեքսանդրի արշավանքը (տե՛ս **Ալեքսանդր Մակեդոնացի,** Երևան, 1987 գրքում), գիրք III, III, 5-6; XI, 7; **Օհանյան Մ.,** Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը..., էջ 21-62:

նատար Պարմենիոնը, ընկրկելով աքեմենյան բանակի աջ թևի դիմաց, օգնություն է խնդրում Ալեքսանդրից, որը հարկադրված է լինում դադարեցնել Դարեհի հետապնդումը և թիկունքից հարձակվում հակառակորդի վրա: Այդ ժամանակ աջ թևի զորամասերին առաջնորդող հայոց այրուձին «արագ երթով նահանջի» հրաման է ստանում և դուրս գալով ճակատամարտից՝ վերադառնում է Հայաստան:

Հայկական զորքերի հերոսական մասնակցությունը Գավգամելայի ճակատամարտին, փաստորեն, ձախողում է Ալեքսանդրի ծրագրերը՝ այդ ճակատամարտով գերելու Դարեհ Գ-ին և վերջ դնելու Աքեմենյան տերությանը: Այն գոյատևում է ևս որոշ ժամանակ:

Հերոսաբար մարտնչած և արժանապատվորեն հայրենիք վերադարձած հայկական զորքերը Գավգամելայի ճակատամարտից հետո՝ Ք.ա. 331 թ., վերականգնում են Հայաստանի անկախությունը. Օրոնտաս-Երվանդ Գ-ն[55]՝ Մեծ Հայքում, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում: Հայերի օրինակին են հետևում և իրենց երկրներն անկախ հայտարարում Բակտրիայի կառավարիչ Բեսսոսը, Փոքր Մարաստանի սատրապ Ատրոպատեսը և ուրիշներ:

Գավգամելայի ճակատամարտից որոշ ժամանակ անց, մտնելով Բաբելոն, Ալեքսանդր Մակեդոնացին համարեց, որ

---

[55] Երվանդ Գ-ն «Արոանդես» անվանաձևով հիշատակվում է նաև Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրում և, ի տարբերություն Երվանդ Բ-ի, կրում է «արքա» տիտղոսը (**Hümann K.** und **Puschtein O.,** Reisen in Kleinasien und Nordsyrien..., էջ 286, 307; **Тирацян Г.,** Страна Коммагена и Армения, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, N 3, էջ 70-73; **Տիրացյան Գ.,** Երվանդունիները Հայաստանում..., էջ 65-67; **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History..., էջ 279-280):

արդեն հասել է հաջողության և կատարեց նշանակումներ, այդ թվում՝ Հայաստանի կառավարիչ կարգեց Սարդեսի բերդը դավաճանաբար իրեն հանձնած պարսիկ Միթրենեին (Միհրանին)[56]: Սակայն դատելով փաստերից՝ հայերը նրան անգամ թույլ չտվեցին ոտք դնել Հայաստան[57]:

Մակեդոնական և հայկական զորքերի հաջորդ բախումը տեղի ունեցավ Գավգամելայի ճակատամարտից 2-3 տարի անց, երբ Ալեքսանդրի զորաբանակներից մեկը՝ Մենոն զորավարի գլխավորությամբ, ուղարկվեց՝ գրավելու Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը, որը ոսկու արդյունահանմամբ հռչակավոր էր դեռևս Ք.ա. III հազարամյակից: Ինչպես վկայում է հույն մատենագիր Ստրաբոնը, հայերը ոչնչացրին նրա բանակը, իսկ զորավարին «խեղդամահ արեցին»[58]: Դրանից հետո Ալեքսանդրը փորձ անգամ չարեց Հայաստան զորք ուղարկելու, ինչը նշանակում էր, որ նա հաշվի էր նստում Գավգամելայում բացառիկ հերոսությամբ աչքի ընկած և Մենոնի զորաբանակը ոչնչացրած հայկական զինուժի հետ[59]:

---

[56] Տե՛ս **Արրիանոս Փլավիոս**, Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, 16, 5; Քվինտուս Կուրտիս Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, գիրք V, 1, 44; **Դիոդորոս Սիկիլիացի**, գիրք XVII, գլ. LXIV:

[57] Տե՛ս **Ադոնց Ն.,** Երկեր, հատոր Դ, Երևան, 2009, էջ 435-436; **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, Ե., 1977, էջ 96-100:

[58] **Ստրաբոն** (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան), Ոտար աղբյուրները հայերի մասին, N 1, Հունական աղբյուրներ, Յերևան, 1940, XI, 14, 9; **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 95-97; **Օհանյան Մ.,** Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը..., էջ 74-75:

[59] Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների և դրանց հաջորդած ժամանակաշրջանում Հայաստանի պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս **Ադոնց Ն.,** Երկեր, հատոր Դ, էջ 431-445; **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, էջ 90-103; **Օհանյան Մ.,** Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը...:

Թե մինչև երբ է իշխել Երվանդ Գ-ն, հայտնի չէ: Նեմրութի սրբավայրի արձանագրություններում պահպանվել է միայն նրան հաջորդած արքայի անվան երկրորդ հատվածը՝ «…անես», որի ինքնությունը մնում է չբացահայտված[60]:

Մակեդոնացու ժառանգորդները և Հայաստանը

Հույն պատմիչ Արիանոսը Փլավիոսը, որն առանց միջնորդի օգտվել է Մակեդոնացու օրագրերից և արշավի անմիջական մասնակիցների աշխատություններից, բազմիցս խոսելով Ալեքսանդրի նվաճումների մասին և մանրամասն թվարկելով հպատակեցված երկրները՝ Հայաստանի անունը չի հիշատակում դրանց շարքում: Հայաստանն աննվաճ մնաց նաև Մակեդոնացու մահվանից հետո, երբ նրա զորավարների միջև սկսեց ավելի քան երկու տասնամյակ տևած պատերազմների շղթան (դրանք հայտնի են որպես դիադոխների («ժառանգորդների») պատերազմներ), որն ավարտվեց Ք.ա. 301 թ. Մակեդոնացու աշխարհակալության մասնատմամբ: Տերությունը բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակցող Սելևկյան տերությունն էր:

---

[60] Տե՛ս **Hümann K.** und **Puschtein O.,** Reisen in Kleinasien und Nordsyrien..., էջ 307; **Тирацян Г.,** Страна Коммагена и Армения..., էջ 71; **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History..., էջ 280: Հայտնվել է կարծիք, թե «…անես» անունը պետք է վերականգնել «Միթրանես» և նրան նույնացնել Սարդեսի աքեմենյան կառավարչին, որը, Դարեհ Գ-ին դավաճանելով, անցավ Ալեքսանդր Մակեդոնացու կողմը և նրանից ձևականորեն ստացավ Հայաստանի կառավարչի պաշտոնը: Մեր կարծիքով նման մեկնությունը լիովին անհավանական է, քանի որ Միթրանեսը (Միթրենեն) պարսիկ էր, բացի այդ՝ նա Երվանդ Գ-ի որդին չէր և չէր կարող հաջորդել նրան (առավել ևս, որ նա չի հիշվել Հայաստանում):

Մեզ է հասել չափազանց ուշագրավ մի հաղորդում Դիոդորոս Սիկիլիացու (Սիցիլիացու) «Պատմական գրադարան» երկի էջերում, որի համաձայն՝ մակեդոնացիների կողմից գահընկեց արված Կապադովկիայի արքա Արիարաթեսը կարողացել է վերականգնվել հայրական գահին Մեծ Հայքի արքա Արդոատեսի տրամադրած զորքերի շնորհիվ. «Արիարաթեսը, պարտվելով ճակատամարտում, ընկավ, որից հետո թե՛ Կապադովկիան և թե՛ նրան սահմանակից երկրներն ընկան մակեդոնացիների տիրապետության տակ: Իսկ Արիարաթեսը՝ նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամանակ ստեղծված դրությունից, քչերի հետ ապաստանում է Հայաստանում: Ոչ շատ ժամանակ անց… Արիարաթեսը, հայերի թագավոր Արդոատեսից զորք ստանալով, սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերանվաճեց իր հայրենի իշխանությունը»[61]: Դա տեղի է ունեցել Ք.ա. 322 կամ 301-300 թվականներին[62]: Փաստն ինքնին շատ խոսուն է. նորանկախ Հայաստանն արդեն վճռորոշ ուժ էր տարածաշրջանում:

---

[61] **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, գիրք XXXI, գլ. XIX, 4-5; **Ադոնց Ն.,** Երկեր, հատոր Դ, էջ 441; **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, էջ 100-103:

[62] Իրադարձության թվականի հարցի քննարկումը տե՛ս **Ադոնց Ն.,** Երկեր, հատոր Դ, էջ 435-441; **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, էջ 97-103: Քննարկման առարկա է եղել նաև հարցը՝ արդյոք «Արդոատեսը» ճշգրիտ արքայանունն է, թե դա «Արտավազդ» կամ «Արոանդես» (այսինքն՝ «Երվանդ») անվան աղճատված ձևն է: Եթե ճիշտ է վերջին ենթադրությունը, կստանանք, որ Մեծ Հայքի անկախության հիմնադիր Երվանդ Գ-ն թագավորել է Ք.ա. 331 թվականից մինչև Ք.ա. IV դարի վերջը կամ III դարի սկիզբը: Սակայն, քանի որ այսօրվա մեր ունեցած փաստերը թույլ չեն տալիս որոշակի պատասխան տալԱրդոատեսի նույնացման հարցին, նախընտրում ենք մեր շարադրանքում պահպանել Դիոդորոս Սիկիլիացու բնագրային ձևը:

Նույն իրականության վկայությունն է Մեմնոն Հերակլեացու տեղեկությունը, որի համաձայն՝ Բյութանիայի Նիկոմեդես արքայի որդի Զիաելասը նախ ապաստան է գտնում Հայաստանի թագավորի մոտ (որի անունը չի նշվում), ապա արտաքին ուժերի օգնությամբ վերականգնում է թագավորությունը: Նա թագավորում է Ք.ա. 250-228 թվականներին[63]:

Մեծ Հայքի թագավորությունը Ք.ա. III դարում

Հայաստանի Ք.ա. III դարի պատմության վերականգնմանը մեծապես օգնում են Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրի արձանագրությունները, որոնք թողել է Երվանդական արքայատան շառավիղ Անտիոքոս Ա Կոմմագենացին: Հայրական գծով նրա նախնիների ոչ լրիվ պահպանված շարքում Արտասուրայի որդի Արոանդես-Երվանդ Բ-ից և Արոանդես-Երվանդ Գ արքայից հետո կարդում ենք Սամոս (Շամ) և Արսամես (Արշամ) արքաների անունները[64]:

Ք.ա. մոտ 260-240-ական թթ. իշխած հայոց արքա Սամոս (Շամ) Երվանդականը կառուցեց Կոմմագենեի կենտրոն Սամոսատ (Շամշատ) քաղաքը[65] և հատեց դրամներ, որոնք մեզ

---

[63] Տե՛ս **Memnonis,** 22-23; **Ադոնց Ն.,** Երկեր, հատոր Դ, էջ 442; «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 512; **Սանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, էջ 111:

[64] Տե՛ս **Hümann K.** und **Puschtein O.,** Reisen in Kleinasien und Nordsyrien..., էջ 286, 308-309; **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History…, էջ 280-283; **Тирацян Г.,** Страна Коммагена и Армения..., էջ 71-74:

[65] Կարծիքը, թե Սամոսատ մայրաքաղաքի կառուցողը եղել է ոչ թե այս Սամոսը, այլ Կոմմագենեի արքա Սամոս Դիկեյոս Թեոսեբիոսը (Ք.ա. մոտ 130-109 թթ.), անհավանական է, քանի որ Սամոսատը հիշատակվում է դեռևս Ք.ա. 245 թ. (**Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History, էջ 280-281; «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 512): Վաղբյուզան-

հասած առաջին հայկական արքայական դրամներն են[66] (մինչ այդ դրամներ հատել են Օրոնտաս-Երվանդ Բ-ն և Տիրիբազոսը, որոնք եղել են Աքեմենյան շրջանի Հայաստանի սատրապներ):

Ք.ա. մոտ 240 թ. Շամին հաջորդեց նրա որդի Արշամը, որը կառուցեց Արշամաշատ քաղաքը Ծոփքում և Արսամեա անունով երկու քաղաք Կոմմագենեում: Արշամի մասին տեղեկանում ենք, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր Ք.ա. 220-ական թթ. ապաստան տալ Սելևկյան տիրակալ Սելևկոս Բ Կալլինիկոսի դեմ ապստամբած նրա եղբորը՝ Անտիոքոս Հիերաքսին[67]:

Հայագիտության մեջ XX դարի երկրորդ կեսին տարածում գտավ մի տեսակետ, ըստ որի՝ Ք.ա. մոտ 260 թ. Մեծ Հայքից անջատվել են Ծոփք և Կոմմագենե երկրամասերը՝ կազմելով ինքնուրույն միացյալ թագավորություն՝ Շամ (Սամոս) Երվանդականի գլխավորությամբ[68]:

Հարկավոր է նշել, որ սկզբնաղբյուրներում Ք.ա. III դարում Մեծ Հայքից անջատված «Ծոփքի և Կոմմագենեի միացյալ թագավորության» մասին որևէ հիշատակություն չկա: Իսկ այն փաստը, որ «Հայաստանի արքա» տիտղոսով հիշատակվող

դական աղբյուրներում Ծոփքում հիշատակվում է Սամոկերտ բնակավայրը, որը ևս, ամենայն հավանականությամբ, հիմնել է Սամոսը Ք.ա. III դարում:

[66] Տե՛ս **Մուշեղյան Խ. Ա.,** Դրամական շրջանառությունը Հայաստանում..., էջ 38-43:

[67] Տե՛ս **Պոլիենոս,** IV, 17; **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, էջ 115-116; **Էլչիբեկյան Ժ. Գ.,** Հայաստանը և Սելևկյանները, Երևան, 1979, էջ 42; Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 512-513:

[68] Տե՛ս, օրինակ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 512-513: «Ծոփք» և «Կոմմագենե» հոդվածները Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, 1979, էջ 139-141, 543-544:

Արշամը ապաստան է տվել Անտիոքոս Հիերաքսին, թույլ է տալիս եզրակացնել, որ նրա իշխանության տակ միավորված է եղել ողջ Մեծ Հայքը՝ Ծոփքով ու Կոմմագենեով հանդերձ, այլապես հազիվ թե փոքրիկ մի թագավորություն հանդգներ ապաստան տալ հարևան հսկա տերության տիրակալի գլխավոր թշնամուն:

Այն, որ Մեծ Հայքը բաժանվել է միայն արքա Երվանդ Դ Վերջինից հետո, պարզորոշ վկայում է Ստրաբոնը՝ նշելով, որ Հայաստանը (իմա՝ Մեծ Հայքի) բաժանվել է Անտիոքոս Գ Մեծի ստրատեգոսներ Արտաշեսի և Զարեհի միջև. «Հայաստանի վերջին իշխողն էր Օրոնտեսը... Այնուհետև Արտաքսիասը և Զարիադրեսը՝ Անտիոքոս Մեծի զորավարները, երկիրը բաժանեցին երկու մասի: Նրանք կառավարում էին արքայի իշխանության ներքո»[69]:

Ք.ա. III դարի վերջին Սելևկյան արքա Անտիոքոս Գ-ն քայլեր ձեռնարկեց Մեծ Հայքի նվաճման ուղղությամբ, ինչում նրան օգնեց հայերի ներքին երկպառակտությունը: Նրա զորքերը՝ հայազգի զորավարներ Արտաշեսի և Զարեհի գլխավորությամբ, Ք.ա. 201 թ. արշավեցին Մեծ Հայքի դեմ: Մեծ Հայքի արքա Երվանդ Դ-ն զոհվեց մայրաքաղաք Երվանդաշատի պաշտպանության ժամանակ[70]: Այնուհետև գրավվեց Մեծ Հայ-

---

[69] **Ստրաբոն**, XI, 14, 15:

[70] Հակոբ Մանանդյանի կարծիքով այս դրվագն է ներկայացված Արմավիրից հայտնաբերված ողբերգությունների հատվածներից մեկում, որտեղ պատգամաբերը հայտնում է արքայի քրոջը, որ արքան զոհվեց մայրաքաղաքը պաշտպանելիս: Մեկ այլ հատվածում ընթերցվում են Օրոնտ և Միթրա անունները: Արմավիրի հունարեն արձանագրությունների մասին տե՛ս **Տեր-Հակոբյան Ս.,** Արմավիրի յերկրորդ նորագյուտ արձանագրությունը, Նյութեր Հին Հայաստանի պատմության մասին, ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ, հ. I, Յերևան, 1935, էջ 143-150; **Տեր-Աве-**

քի հոգևոր կենտրոն Բագարանը, որտեղ սպանվեց երկրի գերագույն քուրմ Երվազը, որը Երվանդ արքայի եղբայրն էր: Դրանով Ք.ա. 201 թ. Մեծ Հայքում անկում ապրեց Հայկազուն-Երվանդականների թագավորությունը[71]:

Հայագիտության մեջ տարածում գտած այն տեսակետը, թե նույն այդ ժամանակ Ծոփքում դավադրաբար սպանվեց Քսերքսես Երվանդականը, հիմնված է թյուրիմացության վրա (դա ևս մասն է կազմել Ք.ա. III դարում իբրև թե Մեծ Հայքից անջատված Ծոփքի և Կոմմագենեի թագավորությունների մասին շինծու տեսության): Ծոփքի արքա Քսերքսեսը թագավորել

тисян С. В., Археологическое обследование городища и крепости «Древний Армавир», «Գիտական ժողովածու Արմֆանի՝ նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին», Երևան, 1941, էջ 61-62; **Болтунова А. И.,** Греческие надписи Армавира, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1942, N 1-2, էջ 35-61; **Մանանդյան Հ. Ա.,** Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 6-30; **Гоян Г. И.,** 2000 лет армянского театра, т. I, Театр древней Армении, М., 1952, էջ 138-161; **Тревер К. В.,** Очерки по истории и культуры древней Армении (II в. До н. Э. – IV в. н. э.), М.-Л., 1953, էջ 104-156; **Саркисян Г. Х.,** Тигранакерт, М., 1960, էջ 33-41; **Կրկյաշարյան Ս. Գ.,** Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 134-139, 145-148; «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 912-913; **Մովսիսյան Ա.,** Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 124-138:

[71] Հայագիտության մեջ տարածում գտած մեկ այլ տեսակետ, թե նույն այդ ժամանակ Ծոփքում դավադրաբար սպանվեց Քսերքսես Երվանդականը, հիմնված է թյուրիմացության վրա: Ծոփքի արքա Քսերքսեսը եղել է ոչ թե Անտիոքոս Գ-ի, այլ Անտիոքոս Դ-ի ժամանակակիցը և դարձել է նրա ու նրա քույր Անտիոքիսի դավադրության զոհը Ք.ա. 164 թ. (տե՛ս **Ադոնց Ն.,** Երկեր, հատոր Դ, էջ 446-453): Այդ փաստի վրա ուշադրություն է հրավիրվել դեռևս 1890 թ. (**Babelon E.,** Les rois de Syrie, d'Armenie et de Commagène, Paris, 1890, էջ CXCIV-CXCVII): Դիոդորոս Սիկիլիացին պարզորոշ վկայում է, որ Անտիոքիսը Անտիոքոս Գ Մեծի դուստրն էր և Անտիոքոս Դ-ի քույրը (գիրք XXXI, գլ. XIX, 7):

է ոչ թե Ք.ա. III, այլ II դարում, և եղել է ոչ թե Անտիոքոս Գ-ի, այլ Անտիոքոս Դ-ի ժամանակակիցը, դարձել է վերջինիս ու նրա քրոջ՝ Անտիոքիսի դավադրության զոհը Ք.ա. 164 թվականին[72]: Այդ փաստի վրա ուշադրություն է հրավիրվել դեռևս 1890 թվականին[73]: Դիոդորոս Սիկիլիացին պարզորոշ վկայում է, որ Անտիոքիսը Անտիոքոս Գ Մեծի դուստրն էր և Անտիոքոս Դ-ի քույրը [74]:

Արտաշեսը Մեծ Հայքի մեծ մասում, իսկ Զարեհը Ծոփքում Ք.ա. 201 թ. նշանակվեցին սելևկյան կառավարիչներ (ստրատեգոսներ): Այդ վիճակը շարունակվեց մինչև Ք.ա. 190 թվականը, երբ Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Սելևկյանների և Հռոմի միջև: Այն ավարտվեց Անտիոքոս Գ-ի ծանր պարտությամբ: Օգտվելով ստեղծված իրադրությունից՝ հայերը վերականգնեցին անկախությունը:

Փոքր Հայքը Ք.ա. III դարում

Գավգամելայի ճակատամարտից հետո, ինչպես նշվեց, Միթրաուստեսի առաջնորդությամբ անկախացավ Փոքր Հայքի թագավորությունը: Դրանից հետո՝ մինչև Ք.ա. II դարի առաջին կեսը, Փոքր Հայքի մասին պահպանվել է միայն մեկ արձանագրություն:

---

[72] Մանրամասն տե՛ս **Ադոնց Ն.,** Երկեր, հատոր Դ, էջ 446-453:
[73] Տե՛ս **Babelon E.,** Les rois de Syrie, d'Armenie et de Commagène..., էջ CXCIV-CXCVII:
[74] Տե՛ս **Դիոդորոս Սիկիլիացի**, գիրք XXXI, գլ. XIX, 7:

Փոքր Հայքի Աղջակալե հնավայրից գտնվել է Ք.ա. III դարով թվագրվող երկլեզու (հունարեն և արամեերեն) մի արձանագրություն, որը պարունակում է չափազանց կարևոր տեղեկություններ: Արձանագրության արամեերեն բաժնում ասվում է. *«Այս պարիսպների մեջ հիմնվեց դամբարանը Օրոմանայի՝ Արիաուկայի որդու: Որպես [մնայուն հիշատակ] կառուցեց այն Արի[աուկան]՝ որդին Օրոմանայի, սատ[րապը Ար]մենիայի»:* Հունարեն բաժինն ունի որոշ տարբերություն. *«Օրինավոր սատրապների մեջ անմահ հիշատակ կլինի Օրոմանեսին՝ [որդուն] Արիակեսի, և Արիակեսին՝ [նրա] սիրելի որդուն, Արանդայի [Անդրոմոնի] համար, որ [նա] կառուցեց գեղեցիկ բնակավայրի շքեղ պարիսպներն ամայի տեղում»*[75]:

Արձանագրությունը վկայում է, որ Փոքր Հայքում իշխել են Արիակեսը (Արիաուկա), որը Գավգամելայի ճակատամարտում ղեկավարում էր հայերի կողքին մարտնչող կապադովկիացիների զորքը, ապա՝ նրա որդի Օրոմանեսը (Օրոմանա, թերևս՝ Արամանյակ), որին հաջորդել է նրա թոռ Արիակեսը: Ավագ Արիակեսը հավանաբար Փոքր Հայքում իշխել է Միթրաուստեսից հետո:

Ամփոփելով համառոտ այս քննությունը՝ տեսնում ենք, որ Հայաստանի Ք.ա. V-III դարերի քաղաքական պատմությունը ներկայանում է հետևյալ պատկերով: Հայաստանը Ք.ա. 520 թ. վերածվում է Աքեմենյան տերության XIII սատրապության և այդ կարգավիճակով մուտք է գործում Ք.ա. V դար: Հայաստա-

---

[75] Մանրամասն տե՛ս **Lipinski E.,** Studies in aramaic inscriptions and onomastics, Leuven, 1975, էջ 197-208; **Էլչիբեկյան Ժ. Գ.,** Հայաստանը և Սելևկյանները..., էջ 43-44; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 266:

նի սատրապության արևմտյան մասում Ք.ա. V դարի վերջին (հնարավոր է՝ վերջին քառորդում) ստեղծվում է հյուպարքություն, որի ղեկավարը ենթարկվում էր ողջ Հայաստանի սատրապին: Հավանաբար, այդ հիմքի վրա էլ Ք.ա. IV դարում ստեղծվում են Մեծ Հայք և Փոքր Հայք վարչական միավորները:

Ք.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտից հետո անկախ հռչակվեցին երկու հայկական թագավորություններ՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը: Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքից հետո հայկական աշխարհում ստեղծված վիճակը պահպանվեց մինչև Ք.ա. III դարի վերջը (Ք.ա. 201 թ.):

Հայագիտության մեջ XX դարի երկրորդ կեսին առաջ քաշված տեսակետը, որ Ք.ա. մոտ 260-220 թթ. Մեծ Հայքի թագավորությունից անջատ մեկ միասնական թագավորություն են կազմել Ծոփքն ու Կոմմագենեն, բավարար չափով հիմնավորված չէ սկզբնաղբյուրներով: Շամ (Սամոս) և Արշամ Երվանդունիներն եղել են Մեծ Հայքի արքաներ: Առկա փաստերը ցույց են տալիս, որ Ք.ա. III դարի վերջին կար երկու հայկական թագավորություն՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը:

Ք.ա. III դարի վերջին Սելևկյանները, օգտագործելով հայերի ներքին երկպառակությունը, կարողացան նվաճել Մեծ Հայքը: Դրանով Ք.ա. 201 թ. Մեծ Հայքում անկում ապրեց Հայկազուն-Երվանդականների թագավորությունը: Կարճ ժամանակ անց՝ Ք.ա. 190-163 թթ. ընթացքում, օգտվելով նպաստավոր քաղաքական պայմաններից, անկախացան հայկական չորս առանձին թագավորություններ՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Ծոփքն ու Կոմմագենեն:

Վերջում փորձենք տալ Հայաստանի՝ Ք.ա. V-III դարերի մեզ հայտնի գահակալների ժամանակագրական ցանկը, ինչպես որ այսօր հնարավոր է վերականգնել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ք.Ա. V-III ԴԱՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆ

Երվանդ (Արոանդես) – (՞),

Արտասուրա (Արտաշիր) – (՞),

Երվանդ (Արոանդես, Օրոնտես) Բ – Ք.ա. V դարի վերջ - 360-ական թթ.,

Դարեհ-Արտաշատ (հետագայում՝ Դարեհ Գ Կոդոմանոս) – (՞) - 336 թ.,

Վահե Հայկազունի – Ք.ա. 336-333 թթ. (՞),

Երվանդ (Արոանդես, Օրոնտաս) Գ – Ք.ա. 336 կամ 333 - 331 թթ.:

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Երվանդ (Արոանդես, Օրոնտաս) Գ –Ք.ա. 331 - (՞) թթ.,

Արդոատես – 322 կամ 301-300 թթ. (Արդոատես - Արոանդես նույնության պարագայում Երվանդ Գ-ի թագավորությունը պետք է թվագրել Ք.ա. 331 թ. - Ք.ա. IV դարավերջով կամ III դարասկզբով),

…անես – (՞),

Շամ (Սամոս) – Ք.ա. մոտ 260-240 թթ.,

Արշամ (Արսամես) – Ք.ա. մոտ 240-220 թթ.,

Երվանդ (Օրոնտես) Դ – Ք.ա. մոտ 220-201 թթ.:

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Միթրաուստես (Միհրվահիշտ) – Ք.ա. 331 թ. - (՞),

Արիակես (Արիաուկա) Ա – Ք.ա. IV վերջին տասնամյակներ,

Օրոմանես (Օրոմանա, Արամանյակ) – Ք.ա. IV դարավերջ և/կամ III դարի առաջին կես,

Արիակես (Արիաուկա) Բ – Ք.ա. III դար:

REMARKS ON THE HISTORY OF ARMENIA OF THE V-III CENTURIES BC

The author tries to give general characteristics of the history of Armenia of the V-III cc. BC according to written sources. It was the period when Armenia has relations with the tree great empires of the word – Achaemenid, Macedonian and Seleucid.

Armenia entered to this period as the Achaemenid satrapy (since the 521 BC). In 331 BC two Armenian kingdoms – Greater Armenia and Lesser Armenia – were proclaimed independents. In article is given the history of those two Armenian kingdoms till the 201 BC.

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՑԱՆԿԸ

Հայաստանի պատմության շարադրանքի ընթացքում գրեթե մշտապես գլխավոր տեղը հատկացվել է կենտրոնական, ամենամեծ թագավորությանը, իսկ կրտսեր, փոքր պետական կազմավորումները գրավել են երկրորդական տեղ, երբեմն՝ անգամ անտեսվել: Նման ոչ արդարացի մոտեցում է ցուցաբերվել նաև Փոքր Հայքի թագավորության նկատմամբ, որը ստեղծվել է Ք.ա. 331 թ. և վերացվել Ք. հ. 72 թվականին: Մինչ օրս չկա մի աշխատանք, որում համակարգված ներկայացված լինեն հելլենիստական ժամանակաշրջանի հայկական երկրորդ խոշոր պետության պատմությունը, պատմաաշխարհագրական բնութագիրը, տարածաշրջանում ունեցած աշխարհաքաղաքական դերակատարումը և հարակից այլ հարցեր: Անգամ չկա մի աշխատություն, որում ներկայացված լինի այս թագավորության ամբողջական գահացանկը: Այդ բացը մասամբ լրացնելու նպատակ ունի ներկայացվող հոդվածը:

Մինչև իրադարձությունների և գահակալների մասին տեղեկություններին անդրադառնալը նշենք, որ Փոքր Հայքի թագավորության գահացանկի պարզաբանման նպատակով քննության առարկա կդարձնենք գլխավորապես սկզբնաղբյուրների տեղեկությունները, իսկ նոր ժամանակների պատմագիտական ուսումնասիրություններին կանդրադառնանք միայն ըստ անհրաժեշտության՝ առանց քննարկելու այս կամ այն խնդրի առնչությամբ արտահայտված բոլոր կարծիքները:

Փոքր Հայքի թագավորությունն իր՝ շուրջ 400-ամյա պատմության ընթացքում ունեցել է քաղաքական տարբեր կարգավիճակներ: Ըստ այդմ՝ թագավորության պատմությունը կարելի է բաժանել երկու մեծ ժամանակաշրջանի.

ա) անկախ թագավորության ժամանակաշրջան, որն ընդգրկում է հիմնադրումից մինչև Միհրդատ Եվպատորի իշխանության տակ անցնելու շրջանը (Ք.ա. 331-112 թթ.),

բ) պոնտական և հռոմեական գերիշխանության շրջան (Ք.ա. 112 – Ք. հ. 72 թթ.):

Երկրորդ շրջանում Փոքր Հայքը, թեպետ գտնվել է նախ պոնտական, ապա՝ հռոմեական գերիշխանության ներքո, այնուամենայնիվ պահպանել է թագավորության կարգավիճակը: Ուստի ամբողջական գահացանկը վերականգնելու նպատակով հավասարապես կանդրադառնանք բոլոր գահակալներին:

Հայտնի է, որ Փոքր Հայքն առաջին անգամ հիշատակվում է Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ: Այդ ճակատամարտի մասին առավել հանգամանալի տեղեկություններ հաղորդող Քվինտուս Կուրտիուս Ռուֆուսի երկում կարդում ենք, որ Փոքր Հայքի զորքը տեղակայված էր աքեմենյան բանակի կենտրոնում, իսկ Մեծ Հայքինը՝ բանակի աջ թևի առաջին շարքում. «*Նրանց հետևում էին հայերը, այսպես կոչված, Փոքր Հայքից, հայերին հետևում էին բաբելացիները, նրանց և ուրիշներին՝ բելիտները՝ Քոսեյան լեռների բնակիչները… Աջ թևում կանգնած էին Մեծ Հայքի հայերը, կադուսիներն*[76] *ու կապադովկիացիները, ասորիներն ու մարաստանցիները. նրանք նույնպես ունեին մանգաղակիր մարտակառքեր*»[77]:

Գավգամելայի ճակատամարտի մասին վկայող մեկ այլ պատմիչ՝ Արիանոս Փլավիոսը, նշում է նաև հայոց բանակի ա-

---

[76] Կադուսիներ (կատիշներ) – ցեղախումբ, որը բնակվում էր Կասպից ծովի հարավային ափին:

[77] **Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս,** Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, գիրք IV, XII, 10, 12-13:

ռաջնորդների անունները. *«Հայերին ղեկավարում էին Օրոնտոսը և Միթրաուստեսը, կապադովկիացիներին՝ Արիակեսը... Աջ թևի առջևում շարված էին հայկական և կապադովկիական հեծելազորները և հիսուն մանգաղավոր մարտակառք»*[78]:

Ճակատամարտում հերոսաբար մարտնչած և արժանապատվորեն հայրենիք վերադարձած հայկական զորքերն այդ ճակատամարտից հետո վերականգնում են Հայաստանի անկախությունը. Օրոնտաս-Երվանդ Գ-ն՝ Մեծ Հայքում[79], իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում:

Գավգամելայի ճակատամարտից որոշ ժամանակ անց մտնելով Բաբելոն՝ Ալեքսանդր Մակեդոնացին համարեց, որ արդեն հասել է հաջողության և կատարեց նշանակումներ, այդ թվում՝ Հայաստանի կառավարիչ կարգեց Սարդեսի բերդը դավաճանաբար իրեն հանձնած պարսիկ Միթրենեին (Միհ-

---

[78] **Արիանոս Փլավիոս,** Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, 8, 3-6, 11, 7:

[79] Երվանդ Գ-ն «Արոանդես» անվանաձևով հիշատակվում է նաև Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրում և, ի տարբերություն Երվանդ Բ-ի, կրում է «արքա» տիտղոսը (**Hümann K., Puschtein O.,** Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 286, 307; **Тирацян Г.,** Страна Коммагена и Армения, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, N 3, էջ 70-73; **Տիրացյան Գ.,** Երվանդունիները Հայաստանում, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1958, թիվ 6, էջ 65-67; **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History, Washington, 1963, էջ 279-280):

բանին)[80]: Սակայն դատելով փաստերից՝ հայերը նրան անգամ թույլ չեն տվել ոտք դնել Հայաստան[81]:

Մակեդոնական և հայկական զորքերի հաջորդ բախումը տեղի ունեցավ 2-3 տարի անց, երբ Ալեքսանդրի զորաբանակներից մեկը՝ Մենոն զորավարի գլխավորությամբ, ուղարկվեց՝ գրավելու Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը, որը սահմանակցում էր Փոքր Հայքին: Ինչպես վկայում է հույն մատենագիր Ստրաբոնը, հայերը ոչնչացրին նրա բանակը, իսկ զորավարին մահապատժի ենթարկեցին[82]: Դրանից հետո Ալեքսանդրը փորձ անգամ չարեց Հայաստան զորք ուղարկելու, ինչը նշանակում էր, որ նա հաշվի էր նստում Գավգամելայում հերոսությամբ աչքի ընկած և Մենոնի զորաբանակը ոչնչացրած հայկական զինուժի հետ[83]:

Ք.ա. 331 թ. Փոքր Հայքի անկախացումից հետո Միթրաուստեսի մասին սկզբնաղբյուրներում այլ տեղեկություններ չեն պահպանվել: Թե քանի տարի է իշխել նա, հայտնի չէ: Ան-

---

[80] Տե՛ս **Արիանոս Փլավիոս**, Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, 16, 5; **Քվինտուս Կուրտիս Ռուփոս,** Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, գիրք V, 1, 44; **Դիոդորոս Սիկիլիացի,** Պատմական գրադարան, գիրք XVII, գլ. LXIV, 6:

[81] Տե՛ս **Ադոնց Ն.,** Քննական պատմություն Հայոց, Երկեր, հատոր Դ, Երևան, 2009, էջ 435-436; **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 96-100:

[82] *«Ոսկու հանքեր կան Միսպիրիտիսի մեջ, Կաբալայում, որտեղ Ալեքսանդրն ուղարկեց Մենոնին՝ զորքով. սա խեղդամահ արվեց տեղաբնիկների կողմից»* (**Ստրաբոն**, Աշխարհագրություն, գիրք XI, 14, 9; հմմտ. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 95-97; **Օհանյան Մ.,** Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003, էջ 74-75):

[83] Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների և դրանց հաջորդած ժամանակաշրջանում Հայաստանի պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 431-445; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 90-103; **Օհանյան Մ.,** նշվ. աշխ, էջ 14-80:

հայտ է մնում նաև, թե ով է անմիջապես հաջորդել Միթրաուս-տեսին:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո նրա զորավարների միջև սկսեցին ավելի քան երկու տասնամյակ տևած պատերազմներ [դրանք հայտնի են որպես դիադոքոսների (հուն.՝ «ժառանգորդների») պատերազմներ], որոնք ավարտվեցին Ք.ա. 301 թ. Մակեդոնացու աշխարհակալության մասնատմամբ: Նրա տերության առաջին բաժանումը տեղի ունեցավ մահվան տարում՝ Ք.ա. 323 թ.՝ Բաբելոնի խորհրդակցության ժամանակ: Թեպետ որոշվեց պահպանել տերության ամբողջականությունը և ընդհանուր խնամակալ դարձավ Պերդիկասը, սակայն երկրների իրական կառավարումն անցավ Մակեդոնացու զորավարներին, որոնք երբեմն հակադրվում էին նաև Պերդիկասին: Զորավարների միջև բաժանված երկրների ցանկում Ք.ա. 323 թ. Հայաստանը չի հիշատակվում, ինչը նշանակում է, որ այն լիովին անկախ էր:

Մակեդոնական աշխարհակալության ընդհանուր խնամակալը դարձած Պերդիկասը որոշեց տերությանը միացնել Փոքր Ասիայի այն տարածքները, որոնք չէր հասցրել գրավել Ալեքսանդրը: Առաջինը թիրախավորվեց Կապադովկիան: Պերդիկասն անձամբ առաջնորդեց արշավանքը Ք.ա. 322 թ. և պարտության մատնելով երկրի թագավոր Արիարաթեսին՝ մահապատժի ենթարկեց նրան: Կապադովկիայի արքայազնը ապաստան գտավ Հայաստանում, իսկ որոշ ժամանակ անց հայկական զորքերի օգնությամբ վերականգնվեց հայրական գահին: Այդ դեպքերի վերաբերյալ հանգմանորեն տեղեկացնում է Դիոդորոս Սիկիլիացին. «*Արիարաթեսը, պարտվելով ճակատամարտում, ընկավ, որից հետո թե՛ Կապադովկիան և*

թե՛ նրան սահմանակից երկրներն ընկան մակեդոնացիների տիրապետության տակ: Իսկ Արիարաթեսը՝ նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամանակ ստեղծված դրությունից, քչերի հետ ապաստանում է Հայաստանում: Ոչ շատ ժամանակ անց, երբ Եվմենեսը, Պերդիկասն ու նրանց համախոհներն արդեն մահացել էին, իսկ Անտիգոնոսն ու Սելևկոսը զբաղված էին այլ գործերով, (Արիարաթեսը), հայերի թագավոր Արդոատեսից զորք ստանալով, սպանեց մակեդոնացիների զորապետ Ամֆունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերանվաճեց իր հայրենի իշխանությունը»[84]:

Կապադովկիայում Ք.ա. 322 թ. սատրապ նշանակվեց Եվմենեսը: Կապադովկիայի գրավումից հետո վտանգվեցին սահմանակից երկրները, այդ թվում՝ Փոքր Հայքը, որը, դատելով անտիկ հեղինակների հաղորդումներից, Ք.ա. 322 թ. նվաճվեց մակեդոնական ուժերի կողմից: Եվմենեսը դարձավ նաև Փոքր Հայքի կառավարիչ, իսկ Նեոպտոլեմոսը՝ Կապադովկիայի և Փոքր Հայքի զորքերի հրամանատար, որի դեմ կարճ ժամանակ անց ապստամբեց Փոքր Հայքը[85]: Այդ մասին կա Պլուտարքոսի ուշագրավ վկայությունը. «*[Պերդիկասը] Կիլիկիայից ուղարկեց Եվմենեսին, երևութապես «նրա սատրապությունը», բայց իրապես, որպեսզի նա իր ձեռքում պահի սահմանակից*

---

[84] **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, գիրք XXXI, գլ. XIX, 4-5; հմմտ. **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 441; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 100-103:

[85] Անտիկ հեղինակներն «Արմենիա» են կոչում և՛ Մեծ Հայքը, և՛ Փոքր Հայքը: Այստեղ խոսքը վերաբերում է Փոքր Հայքին, քանի որ Մեծ Հայքը ոչ միայն չի նվաճվել մակեդոնական ուժերի կողմից, այլև ապաստան է տվել Կապադովկիայի արքայազնին և որոշ ժամանակ անց զորքով օգնել նրան՝ հայրենի գահը հետ գրավելու:

Արմենիան, որը Նեոպտոլեմոսը հասցրել էր ապստամբական դրության: Արդ՝ Եվմենեսը փորձում էր սրան [Նեոպտոլեմոսին], որը մեծամոլությամբ ու սնոտի հպարտությամբ էր տառապում, զսպել բարեկամական հորդորներով»[86]:

Ք.ա. 321 թ. գարնանը բռնկվեց դիադոքոսների առաջին պատերազմը, որի ժամանակ Պերդիկասի դեմ դաշինք ստեղծեցին Եգիպտոսում հաստատված Պտղոմայոսը և Մակեդոնական տերության եվրոպական մասերին տիրող Կրատերն ու Անտիպատրոսը: Այդ ժամանակ Պերդիկասը Եվմենեսին նշանակեց Փոքր Հայքում և Կապադովկիայում գտնվող զորքերի բարձրագույն հրամանատար[87]: Նեոպտոլեմոսը (որի դեմ ընդվզել էր Փոքր Հայքը) դավաճանաբար անցավ Կրատերի կողմը, սակայն ճակատամարտի ժամանակ սպանվեց Եվմենեսի կողմից: Որոշ ժամանակ անց, սակայն, սպանվեց Պերդիկասը, մահապատժի դատապարտվեցին նրա համախոհների մեծ մասը, այդ թվում՝ Եվմենեսը (վերջինս դիմեց փախուստի և սպանվեց հետագայում՝ Ք.ա. 315 թ.):

Ք.ա. 321 թ. Տրիպարադիսոսում տեղի ունեցավ Մակեդոնացու տերության երկրորդ բաժանումը: Այստեղ ևս հայկա-

---

[86] **Պլուտարքոս,** Համեմատական կենսագրություններ, Եվմենես, IV, 1-2:

[87] *«Երբ Կրատերը և Անտիպատրոսը հույներին հաղթելուց հետո անցել էին Ասիա, որպեսզի զրկեն Պերդիկասին իշխանությունից, և երբ արդեն լուր էր ստացել, որ նրանք մտադիր են ներխուժել Կապադովկիա, Պերդիկասը, որը ինքը ռազմերթի էր ելել Պտղոմայոսի դեմ, նշանակել էր Եվմենեսին բարձրագույն հրամանատար Արմենիայում և Կապադովկիայում գտնվող զորքերի և այդ մասին նամակներ էր գրել Ալկետասին և Նեոպտոլեմոսին ու հրամայել, որ նրանք հնազանդվեն Եվմենեսին, որին իրավունք էր տրված գործերը վարել ըստ իր հայեցողության»* (**Պլուտարքոս,** Համեմատական կենսագրություններ, Եվմենես, V, 1):

կան որևէ պետություն չի հիշատակվում: Կապադովկիայի սատրապ է դառնում Նիկանորը[88]:

Թեպետ Փոքր Հայքի մասին ստույգ տեղեկություններ չեն պահպանվել, սակայն այն փաստը, որ հայկական երկրամասը Ք.ա. 321 թ. ընդվզել էր մակեդոնական զորավարների դեմ, որոնք պարտվեցին ու ոչնչացան, իսկ նույն թվականին մակեդոնական տերությանը ենթակա երկրների ցանկում այն չի հիշատակվում, թույլ է տալիս եզրակացնել, որ Փոքր Հայքը վերականգնել էր անկախությունը: Այսինքն՝ Ք.ա. 331 թ.՝ անկախացումից հետո, Փոքր Հայքը կարճատև՝ Ք.ա. 322-321 թթ., ենթարկվել է մակեդոնական նվաճման, ապա՝ կրկին անկախացել:

Չի բացառվում, որ Փոքր Հայքի անկախության վերականգնումը եղած լինի Մեծ Հայքի աջակցությամբ, որն ապաստան տվեց Կապադովկիայի գահազրկված արքայազնին, իսկ տարիներ անց զորքով օգնեց նրան վերականգնվելու հայրական գահին: Դիոդորոս Սիկիլիացու վերը բերված տեղեկությունը մատնացույց է անում նաև այդ իրադարձության ժամանակը, *«երբ Եվմենեսը, Պերդիկասն ու նրանց համախոհներն արդեն մահացել էին, իսկ Անտիգոնոսն ու Սելևկոսը զբաղված էին այլ գործերով»*: Այսինքն՝ հայոց արքայի աջակցությամբ Կապադովկիայի արքայազն Արիարաթեսի գահ բարձրանալը պետք է տեղի ունեցած լինի Ք.ա. 315 թվականից հետո: Ուսումնասիրողները, իրավամբ, այդ իրադարձությունը

---

[88] Այս բաժանման մասին սկզբնաղբյուրներից տե՛ս, օրինակ, **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, գիրք XVIII, 39, 5-7:

թվագրում են Ք.ա. 301 թվականով[89], ընդ որում՝ կարելի է ճշգրտել՝ մինչև Ք.ա. 301 թ. ամառը, երբ Իփսոսի ճակատամարտում զոհվեց Անտիգոնոս Միակնանին:

Դիադոքոսների պատերազմները, ինչպես ասվեց, ավարտվեցին Ք.ա. 301 թ. Մակեդոնացու աշխարհակալության մասնատմամբ: Տերությունը վերջնականապես բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակցող Սելևկյան տերությունն էր: Ըստ Ապպիանոս Ալեքսանդրացու «Հռոմեական պատմության»՝ այդ տերության հիմնադիր Սելևկոս Նիկատորը *«տիրել էր Միջագետքին, Հայաստանին և Կապադովկիային, որն անվանում են Սելևկյան, Պարսկաստանին, Պարթևստանին և Բակտրիային, արաբական երկրներին, Տաբարիստանին, Սոգդիանային, Արախոսիային, Հիրկանիային և բոլոր այն հարակից երկրներին մինչև Հնդոս գետը, որ զենքի ուժով նվաճել էր Ալեքսանդրը...»*[90]: Այնուհետև, ներկայացնելով Սելևկոս Նիկատորի հիմնած մեծաթիվ քաղաքները, Ապպիանոսը գրում է. *«Իսկ ի պատիվ իր՝ Սելևկոսի հաղթանակների հիմնվեց Նիկեփորիոնը Միջագետքում և Նիկոպոլիսը Հայաստանում, այնտեղ, որն ամենամոտն է Կապադովկիային»*[91]: Այստեղից պարզ է դառնում, որ Կապադովկիայի հետ հիշատակվող «Արմենիան» ոչ թե Մեծ Հայքն է, այլ Փոքր Հայքը, քանի որ Ապպիանոս Ալեքսանդրացին միևնույն աշխատության հաջորդ բաժնում (գիրք XII, «Միհրդատյան պատերազմներ») նշում է Նիկոպոլիս քաղաքի

---

[89] Իրադարձության թվականի հարցի քննարկումը տե՛ս **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 435-441; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 97-103:

[90] **Ապպիանոս Ալեքսանդրացի,** Հռոմեական պատմություն, գիրք XI, 55:

[91] **Ապպիանոս Ալեքսանդրացի**, Հռոմեական պատմություն, գիրք XI, 57:

կառուցման վայրը՝ Փոքր Հայքը, սակայն քաղաքի հիմնադրումը վերագրում է Պոմպեոսին, որն այն կառուցվել է ի նշանավորումն Միհրդատ Եվպատորի դեմ տարած հաղթանակի. «*Պոմպեոսը, կարծելով, որ դրանով ավարտվեց ողջ պատերազմը, քաղաք հիմնեց այն տեղում, որտեղ հաղթել էր Միհրդատին, որը, ի նշանավորումն սխրանքի, անվանակոչվեց Նիկոպոլիս*[92]*. քաղաքը գտնվում է, այսպես կոչված, Փոքր Հայքում*»[93]:

Հարկ է նշել, Հայաստանում ողջ պատմության ընթացքում հիշատակվում է Նիկոպոլիս անվամբ միայն մեկ քաղաք, և այն գտնվել է Փոքր Հայքում: Թե ինչու է Ապպիանոս Ալեքսանդրացին քաղաքի հիմնադրման խնդրում հակասում ինքն իրեն, կամ որքան է իրական այդ քաղաքի կապը Սելևկոս Նիկատորի հետ, դժվար է ասել: Սակայն այն հանգամանքը, որ Ստրաբոնը ևս վկայում է ինչ-որ ժամանակ մակեդոնացիների և Սելևկյանների կողմից Հայաստանի նվաճման մասին, մղում է մտածելու, որ խոսքը վերաբերում է Փոքր Հայքի կարճատև նվաճումներին (Ք.ա. 322-321 թթ. և 301 թվականից):

Միհրդատ Զ Եվպատորի մի ճառ, որը մեզ է հասել Պոմպեոս Տրոգոսի և Հուստինոսի միջոցով, կարող է վկայել, որ Փոքր Հայքի թագավորության նվաճումը եղել է կարճատև ու մեծ հետք չի թողել. «*...Նրանք միշտ հնազանդվել են միայն իրենց տեղական թագավորներին: Եթե ուզում են՝ թող քննության առնեն Կապադովկիան կամ Պափլագոնիան, Պոնտոսը*

---

[92] Բառացի՝ «Հաղթության քաղաք»:

[93] **Ապպիանոս Ալեքսանդրացի**, գիրք XII, 105: Նիկոպոլիսի հիմնադրումը Պոմպեոսին է վերագրում նաև Դիոն Կասսիոսը (Հռոմեական պատմություն, գիրք XLIX, 39, 3):

կամ Բիթանիան, նմանապես Մեծ Հայքը կամ Փոքր Հայքը. այդ ժողովուրդներից և ոչ մեկին ձեռք չէին տվել ո՛չ ինքը Ալեքսանդրը, որ նվաճել էր ամբողջ Ասիան, ո՛չ էլ որևէ մեկը նրա հաջորդներից»[94]:

Ք.ա. 301 թվականից մինչև Ք.ա. 183 թվականը Փոքր Հայքի մասին պահպանվել է միայն մեկ արձանագրություն: Դա Փոքր Հայքի Աղջա-կալե (Աղաչա-կալե) հնավայրից գտնված երկլեզու (հունարեն և արամեերեն) արձանագրությունն է, որը պարունակում է չափազանց կարևոր տեղեկություններ: Արձանագրության արամեերեն բաժնում ասվում է. «*Այս պարիսպների մեջ հիմնվեց դամբարանը Օրոմանայի. Արիաուկայի որդու: Որպես [մնայուն հիշատակ] կառուցեց այն Արի[աուկան]՝ որդին Օրոմանայի, սատ[րապը Ար]մենիայի»:* Իսկ արձանագրության հունարեն բաժինն ունի տարբերվող բովանդակություն. «*Օրինավոր սատրապների մեջ անմահ հիշատակ կլինի Օրոմանեսին՝ [որդուն] Արիակեսի, և Արիակեսին՝ [նրա] սիրելի որդուն, Արանդայի [Անդոմոնի] համար, որ [նա] կառուցեց գեղեցիկ բնակավայրի շքեղ պարիսպներն ամայի տեղում»*[95]*:*

Արձանագրությունը վկայում է, որ Փոքր Հայքում իշխել է Արիակեսը (Արիաուկան), որին առաջարկվել է նույնացնել Գավգամելայի ճակատամարտում Մեծ Հայքի բանակի կողքին

---

[94] **Հուստինոս,** Համառոտումն Պոմպեոս Տրոգոսի «Փիլիպպոսյան պատմությունների», գիրք XXXVIII, 7:

[95] **Reinach Th.,** Villes méconnues. III. Aranda, “Revue des Études Grecques”, tome 18, fascicule 80, Paris, 1905, էջ 159-164; **Lipinski E.,** Studies in Aramaic Inscriptions and Onomastics, Leuven, 1975, էջ 197-208; **Էլչիբեկյան Ժ. Գ.,** Հայաստանը և Սելևկյանները, Երևան, 1979, էջ 43-44; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1 (կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան), Երևան, 2007 (այսուհետ՝ ՀԺՊՔ), էջ 266:

մարտնչող կապադովկիացիների հեծելազորի հրամանատար Արիակեսի հետ[96]: Չբացառելով նման նույնականության հնարավորությունը, որն ունի հավելյալ հիմնավորման կարիք, կարծում ենք՝ այստեղ կարող է լինել անունների պատահական համընկնում:

Արիակեսին (Արիակես Ա-ին) հաջորդել է նրա որդի Օրոմանեսը (Օրոմանա, թերևս՝ Արամանյակ), իսկ Օրոմանես-Արամանյակին՝ վերջինիս որդի Արիակես Բ-ն, որն էլ մեզ հասած վերոնշյալ երկլեզու արձանագրության հեղինակն է: Արձանագրության հունարեն բաժնում ասվում է, որ նա կառուցել է Արանդա գեղեցիկ բնակավայրի շքեղ պարիսպները («ամայի տեղում» կառուցումը նոր բնակավայրերի հիմնադրման հնուց հայտնի բանաձև է, հմմտ. Էրեբունու հիմնադրման մասին Արգիշտի Ա-ի արձանագրությունը): Իսկ արամեերեն բաժնում հաղորդվում է հոր՝ Օրոմանես-Արամանյակի դամբարանի կառուցման մասին:

Արձանագրությունն ուսումնասիրած հեղինակները համակարծիք են, որ այն պետք է թվագրել Ք.ա. III դարի կեսերով, որն էլ Արիակես Բ-ի կառավարման ժամանակն է:

Ք.ա. III դարի երկրորդ կեսի Փոքր Հայքի պատմությունն ու գահացանկը շարունակում են մնալ մեզ լիովին անհայտ:

Փոքր Հայքին վերաբերող սկզբնաղբյուրներում պահպանված հաջորդ տեղեկությունը վերաբերում է Ք.ա. 183 թվականին: Պոնտոսի թագավոր Փառնակը և Փոքր Հայքի «սատրապ» Միհրդատը դաշնակցած ներխուժում են Գալաթիա ու Կապադովկիա, սակայն պարտվում են և ստիպված լինում հաշտու-

[96] Տե՛ս, օրինակ, **Lipinski E.,** նշվ. աշխ, էջ 197-208; ՀԺՊՔ, էջ 266:

թյուն կնքել աննպաստ պայմաններով: Ահա այդ մասին պատմող Պոլիբիոսի վկայությունը. *«Հանկարծակի և դաժան հարձակման ենթարկված լինելով՝ Փառնակեսը պատրաստ էր ընդունելու ամեն մի առաջարկ, ուստի նա դեսպաններ ուղարկեց Եվմենեսի ու Արիարաթեսի մոտ: Եվմենեսն ու Արիարաթեսը, լսելով նրանց, իրենք ևս իսկույն իրենց դեսպաններին ուղարկեցին Փառնակեսի մոտ, և այս բանը, երկուստեք բազմիցս կրկնվելով, հաշտություն կնքվեց հետևյալ պայմաններով. թող մշտական խաղաղություն լինի մի կողմից՝ Եվմենեսի, Պրուսիասի և Արիարաթեսի, մյուս կողմից՝ Փառնակեսի և Միհրդատի միջև: Փառնակեսը և ոչ մի ձևով չպետք է արշավի Գալաթիայի վրա, և գալաթների հետ նախկինում նրա կնքած բոլոր պայմանագրերը պետք է համարվեն անվավեր: ...Որոշվեց նաև, որ Փառնակեսը պետք է առանց փրկագնի վերադարձնի ռազմագերիներին և փախստականներին: ...Որոշվեց նաև, որ Արմենիայի սատրապ Միհրդատը պետք է վճարի 300 տաղանդ, որովհետև սա, դրժելով Եվմենեսի հետ կնքած դաշինքը, պատերազմեց Արիարաթեսի դեմ: Այդ դաշինքին մասնակից դարձվեցին Ասիայի իշխաններից Արտաշեսը՝ Արմենիայի մեծագույն մասի տիրակալը, և Ակուսիլոքոսը»*[97]:

Մագնեսիայի ճակատամարտում (Ք. ա. 190 թ.) Սելևկյանների՝ Հռոմից կրած պարտությունից հետո՝ Ք.ա. 189 թ., Մեծ Հայքը և Ծոփքը հռչակվեցին անկախ թագավորություններ: Ենթադրվել է, որ նույն ժամանակ Փոքր Հայքը ևս վերականգնել է անկախությունը, սակայն չկա որևէ սկզբնաղբյուր, որում նշվի, թե Ք.ա. III-II դարերի սահմանագծին Փոքր Հայքը նվաճ-

[97] **Պոլիբիոս,** Պատմություն, գիրք VIII, 25, 1-12:

վել է որևէ պետության կողմից, ուստի չկա նաև անկախության վերականգնման մասին վկայող սկզբնաղբյուր: Նման ենթադրության առիթ է դարձել այն հանգամանքը, որ Փոքր Հայքի առաջնորդները կրել են ոչ թե «արքա», այլ «սատրապ» տիտղոսը, որը կրում էր նաև Միհրդատը: Քննարկման առարկա է եղել նաև այն հարցը, թե ոչ անկախ լինելու պարագայում ում գերիշխանության տակ էր գտնվում Փոքր Հայքը: Ենթադրվել է, որ Ք.ա. II դարի սկզբին Փոքր Հայքը ենթարկվել է Պոնտական թագավորությանը: Այս մասին Հակոբ Մանանդյանը գրում է. «Պոլիբիոսի մոտ Փոքր Հայքի այս Միհրդատը, ինչպես տեսնում ենք, անվանված է սատրապ, այսինքն՝ կուսակալ: Այս վկայությունից կարելի է թերևս հետևեցնել, որ Միհրդատը 180 թվի պատերազմի ժամանակ չի եղել անկախ թագավոր, այլ հպատակված է եղել, հավանորեն, Պոնտոսի կամ գուցե մի այլ հարևան թագավորի գերագույն իշխանությանը»[98]: Բաբկեն Հարությունյանը, համաձայնելով Հ. Մանանդյանի հետ, կարծում է, որ Փառնակի օրոք Փոքր Հայքը Պոնտոսի քաղաքական ազդեցության ոլորտում էր գտնվում[99]: Սակայն, ինչպես իրավամբ նշում է Գագիկ Սարգսյանը, Ք.ա. 180-ական թթ. իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Փոքր Հայքը լիովին անկախ թագավորություն էր այդ ժամանակաշրջանում: Միհրդատի անկախ գահակալ լինելու մասին հեղինակի գլխավոր փաստարկներն են.

«ա) հանդես է գալիս Փառնակի կողքին՝ որպես պայմանագրի կնքող իրավահավասար կողմ,

---

[98] Տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 127:

[99] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Պոնտոսի Միհրդատ VI Եվպատոր թագավորը նաև հայոց արքա, ՊԲՀ, 2003, № 3, էջ 136:

բ) նրա հետ մեկտեղ ռազմատուգանք է վճարում,

գ) նախօրոք Պերգամոնի թագավոր Եվմենեսի հետ կնքված է եղել երկկողմանի պայմանագիր, որի կետերից մեկն էլ այն էր, թե ինքը չի ասպատակի Կապադովկիան: Այս բոլորը առանձին-առանձին և ամբողջությամբ վերցրած՝ միայն ինքնուրույն իշխողին պատշաճող գործողություններ են»[100]:

Լիովին համաձայնելով Գ. Սարգսյանի հետ՝ նշենք, որ պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ տվյալ երկիրը լիովին անկախ է եղել՝ առանց թագավորության կարգավիճակ ունենալու: Թե ինչու են Փոքր Հայքի տիրակալները «սատրապ» (այլ ոչ «արքա») տիտղոսը կրել, առանձին ուսումնասիրության և քննարկման նյութ է: Իսկ Պոլիբիոսի վկայությունը ցույց է տալիս, որ Ք.ա. 180-170-ական թթ. Փոքր Հայքը հանդես է եկել որպես փոքրասիական տարածաշրջանի ինքնուրույն, ազդեցիկ պետություններից մեկը:

Հայագիտական գրականության մեջ տարակարծություն կա Միհրդատի ծագման և ինքնության հարցի շուրջ: Կարծիք է հայտնվել, որ այս Միհրդատը կարող էր լինել Անտիոքոս Դ-ի (երբեմն սխալմամբ համարում են Անտիոքոս Գ-ի) քրոջ որդի Միհրդատը, որին, ըստ Պոլիբիոսի[101], Արշամաշատի պաշարման ժամանակ Անտիոքոսի մերձավորներն առաջարկում էին դարձնել Ծոփքի թագավոր, սակայն նա նախընտրեց գահին թողնել Քսերքսեսին[102]: Նման նույնացումը, սակայն, հիմնա-

---

[100] **Սարգսյան Գ.,** նշվ. աշխ., էջ 52-53:

[101] Տե՛ս **Պոլիբիոս,** Պատմություն, գիրք VIII, 25, 1-5:

[102] Տե՛ս, օրինակ, **Reinach Th.,** Mithridate Eupator, roi de Pont, Paris, 1890, էջ 35; **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 450; **Սարգսյան Գ.,** նշվ. աշխ., էջ 53-55; Հայ ժողովրդի պատմություն, հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971 (այսուհետ՝ ՀԺՊ, հ. I), էջ 522 (բաժնի հեղինակ՝ Գ. Խ. Սարգսյան) և այլն: Սակայն այդ կար-

վոր չէ: Ենթադրությունն անհավանական է, քանի որ հայտնի է, որ Անտիոքոս Գ-ի դուստր և Անտիոքոս Դ-ի քույր Անտիոքիսի որդի Միհրդատը նախ ստացել էր երկու քաղաք Կիլիկիայում, որոնք ապստամբեցին նրա դեմ ու վտարեցին նրան: Որոշ ժամանակ անց՝ Ծոփքի դեմ արշավելիս, Սելևկյան արքա Անտիոքոսի մերձավորները առաջարկել են այս Միհրդատին թագավորեցնել Ծոփքում, սակայն արքան նախընտրել է գահին թողնել Քսերքսեսին: Իսկ Միհրդատին նա դարձրել է Կապադովկիայի արքա՝ Արիարաթես Ե գահանունով (Ք.ա. 163-130 թթ.), ընդ որում՝ նա հաջորդել է հորը՝ Արիարաթես Դ-ին (Ք.ա. 220-163 թթ.)[103]: Հետևաբար, պետք է լիովին հրաժարվել միայն անվան նույնության հիմամբ կատարված ենթադրությունից:

Ցավոք, աղբյուրների բացակայությունը թույլ չի տալիս պարզել Միհրդատի իշխանության ավարտը: Պահպանված սկզբնաղբյուրներում Փոքր Հայքի հաջորդ գահակալը Սիսիսն է, որի մասին հայտնի է միայն նրա անունը, և որ նրան հաջորդել է որդին՝ Անտիպատրոսը:

Ստրաբոնի տեղեկությունից պարզ է դառնում, որ Ք.ա. 112 թ. նախորդած տարիներին՝ Միհրդատ VI Եվպատորին անցնելուց առաջ, Փոքր Հայքի թագավորներն էին Սիսիսը և նրա որդի Անտիպատրոսը. *«Փառնակիայի ու Տրապիզոնի գավառներից վերև մինչև Փոքր Հայք գտնվում են տիբարենացիներն*

ծիքը դեռ ժամանակին քննադատվել և համարվել է անհիմն (**Holleaux M.,** Etudes d'epigraphie et d'histoire grecques, III, Lagides et Seleucides, Paris, 1942, էջ 192):

[103] Ուստի անհիմն է նաև Գ. Սարգսյանի՝ այս Միհրդատին Երվանդունյաց տոհմի մի հայ ազնվականի որդի համարելու մասին ենթադրությունը (տե՛ս **Սարգսյան Գ.,** նշվ. աշխ., էջ 53-55; նաև ՀԺՊ, հ. I, էջ 522):

ու խաղտեացիները: Փոքր Հայքը բավական բերրի երկիր է: Ծոփքի նման սա էլ ունեցել է միշտ իր բնիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայքի բարեկամ էին և մերթ ինքնագլուխ: Իրենց հնազանդ էին տիբարենացիները և խաղտեացիները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա: Երբ Միհրդատ Եվպատորը զորացավ, տիրեց Կողքիսին և այս բոլոր երկրներին, որոնց իշխանությունը Սիսիսի որդի Անտիպատրոսը հանձնեց նրան: Միհրդատը հոգ տարավ այս երկրների մասին և շինեց նրանց մեջ 75 ամրոց՝ պահելու համար իր գանձերի մեծագույն մասը: Սրանցից ամենից ավելի արժանի են հիշատակության՝ Հյուդարան, Բասգոյդարիզան և Սինորիան, որ գտնվում է Մեծ Հայաստանի սահմանին»[104]: Թե երբ են իշխել նշված արքաները, հնարավոր չէ պարզել սկզբնաղբյուրներից: Փաստորեն, Փոքր Հայքի արքայացանկում Ք.ա. 180-170-ական թթ. իշխած Միհրդատից հետո ունենք Սիսիսի և Անտիպատրոսի գահակալությունները: Առաջարկվել է այս ժամանակամիջոցում, մասնավորապես, Ք.ա. 133-129 թթ., Փոքր Հայքի արքա համարել Միհրդատ Էվերգետեսին, որը Պոնտոսի արքա Միհրդատ Ե-ն է (Ք.ա. 150-120 թթ.)՝ Միհրդատ Զ Եվպատորի հայրը[105]: Միհրդատ

---

[104] **Ստրաբոն**, Աշխարհագրություն, գիրք XII, 3, 28: Փոքր Հայքի՝ Միհրդատի իշխանության տակ անցման մասին Ստրաբոնի մոտ մեկ այլ տեղում կարդում ենք. *«Պոնտոսի վրա թագավորեց Միհրդատ Եվպատորը: Երկրի սահմաններն էին Ալիսից այն կողմ մինչև տիբարանացիները և Հայաստան, Ալիսից այս կողմ մինչև Ամաստրիս և նույնիսկ Պափլագոնիա: Միհրդատը գրավեց մինչև Հերակլեա՝ արևմտյան ծովափը, Հերակլիտոս Պլատոնականի հայրենիքը, իսկ արևելքից՝ մինչև Կողքիս և Փոքր Հայք, որ միացրեց Պոնտոսին»* (**Ստրաբոն,** Աշխարհագրություն, գիրք XII, 3, 1):

[105] **Schottky M.,** Klein-Armenien, *in:* Herrscherchronologien der antiken Welt: Namen, Daten, Dynastien (Hrsg. W. Eder, J. Renger), DND Suppl. I, Stuttgart-

Ե-ին նաև Փոքր Հայքի արքա համարելու տեսակետը կառուցված է Պաուլոս Օրոսիոսի (V դ.) «Պատմություն հեթանոսների դեմ» աշխատության մեջ տեղ գտած մի տեղեկության հիման վրա, որն ակնհայտ վրիպակ է: Հեղինակը հիշատակում է Միհրդատ Զ Եվպատորի «թագավոր Պոնտոսի և Հայոց» տիտղոսը (որին դեռ կանդրադառնանք), ինչը մեկ այլ տեղում, շփոթելով Միհրդատ Ե-ին և Միհրդատ Զ-ին, կիրառում է առաջինի նկատմամբ: Խոսքը վերաբերում է Պերգամոնի թագավորությունում Ք.ա. 133-130 թթ. բարձրացած Արիստոնիկի հակահռոմեական ապստամբությանը, որը ճնշելու գործին մասնակցում են Հռոմի մի քանի փոքրասիական դաշնակիցներ, այդ թվում՝ Միհրդատ Ե Էվերգետեսը: Այս դրվագը ներկայացնելիս և՛ Պաուլոս Օրոսիոսը, և՛ Եվտրոպիոսը (IV դ.) շփոթում են նույնանուն հորն ու որդուն, ինչը բացատրվում է նրանց ընդհանուր սկզբնաղբյուրում եղած վրիպակով[106]: Հետևաբար, որևէ իրական հիմք չկա Փոքր Հայքի գահին Ք.ա. 180-170-ական թթ. իշխած Միհրդատի և Սիսիսի միջև Պոնտոսի արքա Միհրդատ Ե Էվերգետեսին տեսնելու համար:

Անտիպատրոսի գահակալությունն ավարտվում է Փոքր Հայքի՝ Միհրդատ Եվպատորի իշխանության տակ անցնելով:

Weimar, 2004, էջ 95; **Marek Ch.,** Geschichte Klaeinasien in der Antike, München, 2010, էջ 815:

[106] **Պաուլոս Օրոսիոս**, Պատմություն հեթանոսների դեմ, գիրք V, 10, 2; **Փլավիոս Եվտրոպիոս**, Համառոտ պատմություն Քաղաքի հիմնադրումից ի վեր, գիրք IV, 20: Եթե Օրոսիոսը շփոթում է միայն տիտղոսը, Եվտրոպիոսը սխալմամբ նրան է վերագրում հռոմեացիների դեմ Միհրդատ Եվպատորի մղած մեծ պատերազմը այն դեպքում, երբ Միհրդատ Ե-ն եղել է Հռոմի հավատարիմ դաշնակիցը, պատերազմել հանուն Հռոմի, ինչի դիմաց իբրև վարձատրություն Ք.ա. 129 թ. վերջինից ստացել է Մեծ Փռյուգիան:

Ե՞րբ և ինչպե՞ս տեղի ունեցավ Փոքր Հայքի համար ճակատագրական այդ իրադարձությունը։

Միհրդատ Ե-ի դավադրական սպանությունից հետո Միհրդատ Եվպատորը, որը դեռևս 11 տարեկան էր, մոր՝ Լաոդիկե Զ թագուհու և կրտսեր եղբոր՝ Քրեստոսի հետ ժառանգեց թագավորությունը։ Քանի որ երեխաները մանկահասակ էին, թագուհին ստանձնեց երկրի խնամակալությունը։ Սակայն դա հղի էր Միհրդատի համար մեծ վտանգով, քանի որ մայրը ցանկանում էր գահին տեսնել կրտսեր որդուն։ Միհրդատը հեռացավ երկրից և տարիներ անց միայն վերադառնալով՝ հաստատվեց հայրական գահին։

Մի շարք ուսումնասիրողներ, քննարկելով, թե որ երկրում կարող էր ապաստանել այդ տարիներին Միհրդատը, և որ երկրի զինուժի օգնությամբ կկարողանար վերահաստատվել Պոնտոսում, միանգամայն տրամաբանորեն եզրակացրել են հօգուտ Փոքր Հայքի։ Դատելով փաստերից՝ Փոքր Հայքի արքա Անտիպատրոսը նախ ապաստան է տվել պոնտական արքայազնին, իսկ հետագայում, հավանաբար, անժառանգ լինելով և գնահատելով Միհրդատին, որդեգրել է նրան՝ այդպիսով ժառանգելով իր թագավորությունը[107]։ Այդ մասին կարող է վկայել

[107] Մեզ հասած սկզբնաղբյուրներում չկա որևէ հաղորդում Անտիպատրոսի ժառանգ(ներ)ի մասին, ինչը մեծ հավանականությամբ թույլ է տալիս ենթադրել, որ նա եղել է անժառանգ (հակառակ դեպքում կպահպանվեր որևէ հիշատակություն)։ Որդեգրման ինստիտուտը մեծ տարածում ուներ Առաջավոր Ասիայի երկրներում, ինչից ելնելով էլ՝ կարել է կարծել, որ Անտիպատրոսը, ժառանգ չունենալով, որդեգրել է Միհրդատին և որպես ժառանգություն Փոքր Հայքը հանձնել նրան (տե՛ս **Молев Е. А.,** Малая Армения и Митридат Евпатор, в сб. «Проблемы античной истории и культуры» (доклады XIV Международной конференции антиковедов социалистических стран «Эйрене»), Е., 1979, էջ 187-188; **Сапрыкин С. Ю.,** Понтийское царство: Го-

այն փաստը, որ Միհրդատ Եվպատորը հիշատակվում է իբրև «թագավոր Պոնտոսի և Հայոց»[108], որի տակ պետք է հասկանալ՝ «թագավոր Պոնտոսի և Փոքր Հայքի»:

Տիգրան Մեծի քաղաքականությունը անուղղակիորեն վկայում է, որ Փոքր Հայքն առանց բռնազավթման, օրինական ժառանգման ճանապարհով է անցել Միհրդատ Եվպատորին: Վերջինս, որը հայկական հողերի վերամիավորումն առաջնահերթություն էր համարում և որպես առաջին մեծ քայլ Ք.ա. 94 թ. վերամիավորեց Ծոփքի թագավորությունը Մեծ Հայքին, որևէ հավակնություն չցուցաբերեց Փոքր Հայքի նկատմամբ անգամ Ք.ա. 68-67 թթ., երբ այն Պոնտոսի հետ ազատագրվեց միայն իր ուժերի շնորհիվ:

Ժամանակին դեռևս Հակոբ Մանանդյանն ուշադրություն էր դարձրել փաստին, որ Միհրդատ Եվպատորի շատ գործեր Մովսես Խորենացու մատյանում վերագրվում են Արտաշես Աշխարհակալին[109]: Բաբկեն Հարությունյանը, ավելի հանգամանորեն կանգ առնելով խնդրի վրա, եզրակացրեց. «Միհրդատը որդեգրվել է, թերևս, արդեն Անտիպատրոսի կենդանության օրոք թագադրվել որպես հայոց թագավոր, և հայերը

сударство греков и варваров в Причерноморье, М., 1996, էջ 144; **Հարությունյան Բ. Հ.,** նշվ. աշխ., էջ 148-149; **Талах В. Н.,** Рожденный под знаком кометы: Митридат Эвпатор Дионис, Киев, 2012, էջ 44):

[108] Տե՛ս **Պաուլոս Օրոսիոս**, Պատմություն հեթանոսների դեմ, գիրք VI, 10, 2:

[109] Տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 148-151: Մովսես Խորենացու երկում Միհրդատ Եվպատորի գործերն Արտաշեսի անվան տակ ներկայանալու փաստին ավելի վաղ ուշադրություն էր դարձրել Թ. Մոմզենը, սակայն երևույթին տվել էր զարմանալիորեն սխալ մեկնաբանություն՝ այն համարելով «հայրենասիրական նպատակներով խեղաթյուրված և Հայաստան տեղափոխված զրույց» (**Моммзен Т.,** История Рима. т. 2, М., 1997, էջ 219, ծնթ. 12):

նրան գահ բարձրանալիս տվել են «Արտաշես» անունը: Այս դեպքում նաև լրիվ հասկանալի է դառնում, թե ինչու Եվտրոպիոս պատմիչը Միհրդատին համարում է Պոնտոսի և Հայաստանի թագավոր, իսկ թե ինչու նա էլ արտակարգ հոգատար է Փոքր Հայքի նկատմամբ»[110]:

Այսպիսով՝ դատելով առկա փաստերից՝ կարող ենք եզրակացնել, որ Փոքր Հայքը՝ որպես ժառանգություն, կտակել է Միհրդատ Եվպատորին Անտիպատրոս արքան, և դա տեղի է ունեցել Ք.ա. մոտ 112 թվականին[111]: Իսկ փաստը, որ նա սկզբնաղբյուրներում հիշվում է իբրև «թագավոր Պոնտոսի և Հայոց», թույլ է տալիս Միհրդատ Եվպատորին դիտարկել որպես նաև Փոքր Հայքի արքա՝ հավանաբար, «Արտաշես» պատվանուն-գահանունով:

Պոնտական թագավորությունում հայտնի են դեպքեր, երբ գրավյալ երկրներում թագավորն արքայորդիները նշանակել է գերագույն ղեկավարներ: Ենթադրվել է նույնպիսի իրավիճակ նաև Փոքր Հայքում, որտեղ Ք.ա. 80-ական թթ. կարող էր թա-

---

[110] **Հարությունյան Բ.,** նշվ. աշխ., էջ 146-150 (էջ 149-ում հեղինակի մոտ վրիպում կա. Միհրդատին «Պոնտոսի և Հայաստանի թագավոր» է կոչում ոչ թե Եվտրոպիոսը, այլ Օրոսիոսը):

[111] Տե՛ս **Meyer Ed.,** Geschichte des Konigreichs Pontos. Leipzig, 1879, էջ 87-88; **Молев Е. А.,** նշվ. աշխ., էջ 188: Միացման հարցի քննարկումների և հայտնված տեսակետների մասին տե՛ս **Талах В. Н.,** նշվ. աշխ., էջ 44, ծնթ. 205:

գավոր հռչակվել Արկաթիոսը՝ Միհրդատ Եվպատորի ավագ որդիներից մեկը[112]:

Ուշագրավ լինելով հանդերձ՝ նման ենթադրությունը չի դիմանում սկզբնաղբյուրների քննությանը: Բանն այն է, որ Արկաթիոսը հիշատակվում է իբրև Փոքր Հայքի տասհազարանոց հեծելազորի հրամանատար, որը, հիրավի, խաղացել է մեծ դեր[113], սակայն որևէ աղբյուրում ակնարկ անգամ չկա նրա թագավոր հռչակվելու կամ արքայական որևէ տիտղոս կրելու մասին: Հետևաբար, որևէ հիմք չկա Փոքր Հայքի գահին Միհրդատ Եվպատորի թագավորության Ք.ա. 112-66 թթ. գահաժամկետում (որն ընդհատվել է միայն Լուկուլլոսի նվաճմամբ Ք.ա. 71-68 թթ.) որևէ այլ գահակալ տեսնելու:

Պոնտոսի արքան իր գահակալման ողջ ընթացքում օգտագործեց Փոքր Հայքի ռազմական ուժերը: Ինչպես նշվեց, Միհրդատ Եվպատորի բանակում վճռորոշ դերակատարում է ունեցել Փոքր Հայքի տասհազարանոց հեծելազորը, որը մասնակցել է նրա արշավանքներին: Ավելին՝ Միհրդատը Փոքր Հայքի հայ զինվորներին վստահում էր իր պետության ծայրամասում գտնվող քաղաքների պաշտպանությունը: Այդ մասին

---

[112] Տե՛ս **Молев Е. А.,** նշվ. աշխ., էջ 186; **Сапрыкин С. Ю.,** նշվ. աշխ., էջ 164: Արկաթիոսին փորձել են նաև դիտարկել իբրև Ծոփքի արքա (**Kovacs F. L.,** Armenian Coinage in the Classical Period, «Classical Numismatic Studies», № 10, London, 2016, էջ 5-6; **Վարդանյան Ռ.,** Դրամաթողարկումը Հայաստանում հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջաններում, Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը, Երևան, 2018, էջ 35), ինչը հիմնավորված չէ գրավոր աղբյուրներով:

[113] Տե՛ս **Ապպիանոս Ալեքսանդրացի**, Հռոմեական պատմություն, գիրք XII, 17, 18, 35, 41; հմմտ. **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 147-148; **Молев Е. А.,** նշվ. աշխ., էջ 188-189:

են վկայում Օլիվիայից և Խերսոնեսից գտնված արձանագրությունները[114]:

Միհրդատ Զ Եվպատորը, Ք.ա. 71 թ. Լուկուլլոսի հռոմեական բանակից պարտվելով, դուրս մղվեց իր տիրույթներից (այդ թվում՝ կորցնելով նաև Փոքր Հայքը) և ապաստան գտավ Տիգրան Մեծի մոտ: Ք.ա. 68 թ. սեպտեմբերին՝ Արաձանիի ճակատամարտում Լուկուլլոսին ջախջախելուց հետո, Տիգրան Մեծը Միհրդատ Եվպատորին տրամադրեց չորսհազարանոց զորք: Դրան գումարելով նույն քանակի իր բանակը՝ Միհրդատն ազատագրեց Պոնտոսն ու Փոքր Հայքը հռոմեացիներից: Ավելին՝ նա, զարգացնելով հաջողությունը, ներխուժեց Բյութանիա, իսկ Տիգրան Մեծը գրավեց Կապադովկիան[115]:

Հռոմեական շահերն արևելքում խիստ վտանգված էին, և դրությունը փրկելու համար արտակարգ լիազորություններով ուղարկվեց Պոմպեոսը: Վերջինս Ք.ա. 66 թ. պարտության մատնեց Միհրդատ Եվպատորին, որը, այս անգամ չստանալով Տիգրան Մեծի աջակցությունը, հեռացավ Բոսպորի թագավորություն, իսկ Ք.ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ դրեց իր կյանքին:

---

[114] Տե՛ս **Максимова М.,** Античные города юго-восточного Причерноморья, М.-Л., 1956, էջ 226; **Молев Е. А.,** Митридат Евпатор. Создание Черноморской державы, Саратов, 1977, էջ 51-53; **Ломоури Н.,** К истории Понтийского царства, ч. 1, Тбилиси, 1979, էջ 91, 160; **Виноградов Ю. Г., Кадеев В. И.,** Армянские лучники на службе Митридата Евпатора, Второй всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке, Тезисы докладов, Е., 1984, էջ 12-13; **Виноградов Ю. Г.,** Политическая история Ольвийского полиса VII-I вв. до н. э. (историко-эпиграфическое исследование), М., 1989, էջ 250-256; **Сапрыкин С. Ю.,** նշվ. աշխ., էջ 138 և այլն:

[115] Այդ իրադարձությունների մասին մանրամասն տե՛ս **Մանասերյան Ռ. Լ.,** Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 189-198; **Հակոբյան Հ. Պ.,** Տիգրան Մեծ, Երևան, 2005, էջ 155-168:

Ք.ա. 66 թ. Փոքր Հայքի պատմության մեջ սկսվեց նոր՝ հռոմեական գերիշխանության ժամանակաշրջանը, որը տևեց մինչև Ք. հ. 72 թվականը: Այդ ընթացքում Փոքր Հայքը թեպետ պահպանեց թագավորության կարգավիճակը (բացառությամբ՝ 17-38 թթ.), սակայն երկում գահակալեցին հռոմեական դրածոներ: Դրանով էլ պայմանավորված՝ Հռոմեական տերության քաղաքական անցուդարձերն իրենց խորը հետքն էին թողնում Փոքր Հայքի վրա՝ պայմանավորելով երկրի գահին այս կամ այն գահակալի հայտնվելն ու գահազրկվելը:

Պոմպեոսը Ք.ա. 64 թ. կատարեց մի շարք փոփոխություններ՝ որպես արդյունք, նաև ի ամրապնդումն իր հաղթանակների: Միհրդատ Եվպատորի տերության հետ Պոմպեոսը վարվեց այս կերպ. *«Պոմպեոսը վերջ տվեց Միհրդատի պետությանը և երկիրն իր այն սահմանների մեջ գրավեց: Հայաստանի և Կողքիսի մոտ եղած մասը բաժանեց այն իշխաններին, որոնք օգնել էին իրեն պատերազմում, իսկ մնացյալը բաժանեց 11 պոլիտեայի և միացրեց Բիթանիային՝ այնպես, որ բոլորից ձևացրեց մեկ եպարխիա»*[116]:

Պոմպեոսի հաղթանակի արդյունքներից շահեկանորեն օգտվեցին նաև պատերազմում հռոմեացիներին զգալի աջակցություն ցուցաբերած փոքրասիական իշխանավորները, այդ թվում՝ Գալաթիայի իշխաններ Դեյոտարոս և նրա փեսա Բրոգիտարոսը (Ստրաբոնի մոտ՝ Բոգոդիատարոս): Դեյոտարոսը ստացավ արքայի տիտղոս, Պոնտոսի արևելյան ծովափնյա մասը՝ Փառնակիա և Տրապիզոն քաղաքներով: Ստրաբոնն այդ մասին տեղեկացնում է. *«Երկրի այս մասը պատկանում է*

---

[116] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, գիրք XII, 3, 1:

Ամիսոսին. մյուս մասը Պոմպեոսը տվեց Դեյոտարոսին, ինչպես և Փառնակիան ու Տրապիզոնը՝ մինչև Կողքիս և Փոքր Հայք. այս բոլորը կազմեց մի թագավորություն՝ իբր հայրենի ժառանգություն ունենալով նաև Գալաթիայի չորրորդապետությունը»[117]: Պոնտոսի թագավորության հարավային շրջանները, ըստ Ստրաբոնի հաղորդման, անցան Բրոգիտարոսին (Բոգոդիատարոսին)[118]: Վերջինիս տրվեց նաև Փոքր Հայքը, որը նրա մահվանից հետո՝ հավանաբար Ք.ա. 52 թ., անցավ Դեյոտարոսի իշխանության տակ: Ցիցերոնի նամակներից տեղեկանում ենք, որ Փոքր Հայքի թագավորությունը Դեյոտարոսը ստացել է Սենատի որոշմամբ[119]:

Հայագիտական գրականության մեջ տարածում է գտել մի կարծիք, ըստ որի՝ Փոքր Հայքի գահին Դեյոտարոսի իշխանության սկիզբը պետք է համարել Ք.ա. 64/3 թվականը[120]: Դրա համար հիմք է ծառայել Եվտրոպիոսի հաղորդումը, ըստ որի՝ Պոմպեոսն այդ շնորհումը կատարել է Աղվանքի և Իբերիայի

---

[117] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, գիրք XII, 3, 13:

[118] Տե՛ս **Ստրաբոն,** Աշխարհագրություն, գիրք XII, 5, 2:

[119] Տե՛ս Письма Марка Туллия Цицерона к Аттику, близким, брату Квинту, М. Бруту, т. II, годы 51-46 (перевод и комментарии В. О. Горенштейна), М.-Л., 1950, էջ 12-13 (նամակը գրված է Ք.ա. 51 թ. օգոստոսին):

[120] Տե՛ս, օրինակ, **Reinach Th.,** նշվ. աշխ., էջ 400; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 238-239; **Schottky M.,** նշվ. աշխ., էջ 95; **Chaumont M.-L.,** Traina G., Les Arméniens entre l'Iran et le monde Gréco-romain (Ve siècle av. J.-C. – vers 300 ap. J.-C.), *in:* Histoire du peuple arménien (dir. G. Dédéyan), Toulouse, 2007, էջ 133; **Marek Ch.,** նշվ. աշխ., էջ 815; **Талах В. Н.,** նշվ. աշխ., էջ 166; **Մութաֆյան Ա. Կ., Լով Է. Վ.,** Հայաստանի պատմական ատլաս. Մերձավոր Արևելքը և Հարավային Կովկասը մ.թ.ա. VII դարից մինչև XXI դար, Երևան, 2017, էջ 30 և այլն: Կա նաև կարծիք, որ Փոքր Հայքի հյուսիսային հատվածը, սկսած Ք.ա. 64 թվականից, գտնվել է Դեյոտարոսի իշխանության տակ (**Magie D.,** Roman rule in Asia Minor: To the end of the third century af ter Christ, Vol. I, Princeton, New Jersey, 1950, էջ 374, 389):

դեմ արշավանքից հետո ու Սելևկյան պետության տարածք մտնելուց առաջ[121]: Սակայն, ինչպես ցույց է տալիս մյուս մատենագիրների և դրամագիտական տվյալների համադրական ուսումնասիրությունը, V դարի պատմիչ Եվտրոպիոսի ներկայացրած համառոտ պատմության մեջ մանրամասները բաց են թողնվել. հռոմեական գերիշխանության շրջանում Փոքր Հայքի առաջին գահակալը դարձել է Բրոգիտարոսը, իսկ նրանից հետո՝ Ք.ա. 52 թ.՝ Դեյոտարոսը[122]:

Ք.ա. 49 թ. Հուլիոս Կեսարի և Գնեոս Պոմպեոսի միջև ծագեց քաղաքացիական պատերազմ, որի ընթացքում Արևելքի երկրների արքաները մեծ մասամբ կողմնակից էին Պոմպեոսին, ինչը նրա շրջահայաց դիվանագիտական գործունեության կարևոր պտուղներից մեկն էր: Ապպիանոսի վկայության համաձայն՝ Պոմպեոսի կողմնակիցների մեջ էին և նրան օժանդակող բանակներ էին ուղարկել Մեծ Հայքի արքա Արտավազդ Բ-ն ու Փոքր Հայքի թագավոր Դեյոտարոսը[123]: Հայկական երկու պետությունների արքաները ոչ միայն դաշնա-

---

[121] *«Շուտով Պոմպեոսը պատերազմ հայտարարեց աղվաններին և երեք հաղթանակ տարավ նրանց արքա Օրոդեսի նկատմամբ... Նա կռվում հաղթեց նաև Արտակին՝ Իբերիայի արքային: Փոքր Հայքը պարգևեց Դեյոտարոսին՝ գալաթների արքային, քանզի նա եղել էր իր դաշնակիցը Միհրդատի դեմ պատերազմում... Դրանից հետո Պոմպեոսը հաղթեց իտուրացիներին և արաբներին: Եվ երբ գնաց Սիրիա, Սելևկիա քաղաքին, որ գտնվում էր Անտիոքի հարևանությամբ, ազատություն շնորհեց...»* (**Փլավիոս Եվտրոպիոս,** Համառոտ պատմություն Քաղաքի հիմնադրումից ի վեր, գիրք VI, 14, 1):

[122] Հանգամանորեն տե՛ս **Adcock F. E.,** Lesser Armenia and Galatia after Pompey's Settlement of the East, “The Journal of Roman Studies”, Vol. 27, part 1 (Papers Presented to Sir Henry Stuart Jones), London, 1937, էջ 12-17; **Sullivan R. D.,** Near Eastern Royalty and Rome, 100-30 BC, Toronto, Buffalo, London, 1990, էջ 164-169; **Сапрыкин С. Ю.,** նշվ. աշխ., էջ 290 և այլն:

[123] **Ապպիանոս Ալեքսանդրացի,** Հռոմեական պատմություն, գիրք XIV, II, 71:

կիցներ էին, այլև ամրապնդել էին իրենց կապը խնամիական ամուսնությամբ. Արտավազդ Բ-ի դուստրն ամուսնացել էր Դեյոտարոս արքայի որդու հետ[124]:

Ք.ա. 48 թ. Պոմպեոսը պարտություն կրեց Փարսալուսի մոտ (Թեսսալիա) և փախավ Եգիպտոս, որտեղ էլ սպանվեց: Կեսարը, հետապնդելով Պոմպեոսին, նույնպես գտնվում էր Եգիպտոսում: Այս իրավիճակից որոշեց օգտվել Միհրդատ Եվպատորի որդի Փառնակեսը, որն իշխում էր Բոսպորի թագավորությունում և ցանկացավ վերականգնել հոր տիրույթները: Ք.ա. 47 թ. նա գրավեց Պոնտոսը և Փոքր Հայքը՝ հաղթելով Դեյոտարոսին, որից հետո հաղթանակ տոնեց նաև Կապադովկիայի նկատմամբ: Հուլիոս Կեսարը շտապեց կանխել դեպքերի ոչ ցանկալի զարգացումները և Ք.ա. 47 թ. Զելա քաղաքի մոտ տոնեց մեծ հաղթանակ, որի մասին Հռոմին տեղեկացրեց իր հայտնի արտահայտությամբ՝ «Եկա՛, տեսա՛, հաղթեցի՛»[125]: Պարտությունից հետո Փառնակը վերադարձավ Բոսպոր: Փոքր Հայքի արքա Դեյոտարոսը, որը Փարսալուսի մոտ Պոմպեոսի կողմում մարտնչել էր Կեսարի դեմ, կորցրեց իր իշխանության տակ գտնվող երկրների մի մասը: Նրան

---

[124] Այդ մասին իմանում ենք Ք.ա. 50 թ. փետրվարի 13-ին Ցիցերոնի գրած մի նամակից: Ցավոք, հայոց արքայադստեր անունը չի նշվում նամակում (Письма Марка Туллия Цицерона …, т. II, годы 51-46, էջ 82):

[125] Տե՛ս **Պլուտարքոս,** Համեմատական կենսագրություններ, Կեսար, 50: Նշենք նաև, որ Փառնակեսի կարճատև հաջողությունը և, ի թիվս այլոց, Փոքր Հայքի տարածքի ռազմակալումը բավարար հիմք չեն նրա անունը Փոքր Հայքի գահացանկ ներմուծելու համար:

պատկանող Փոքր Հայքը Ք.ա. 47 թ. Կեսարը տվեց Կապադովկիայի Արիոբարզանես Գ թագավորին (Ք.ա. 51-42)[126]:

Ք.ա. 44 թ. Սենատի նիստի ժամանակ դավադրության զոհ դարձավ Հուլիոս Կեսարը, որից հետո Մարկոս Անտոնիոսը բավականին մեծ դրամական պարգևի դիմաց հայտարարեց, որ, ըստ Կեսարի թողած հրահանգների, Դեյոտարոսի բոլոր նախկին տիրույթները պետք է վերականգնվեն[127]: Այդպիսով՝ նա կրկին վերականգնեց Փոքր Հայքի արքայի իր տիտղոսը, որը կորցրեց Ք.ա. 42 թ., քանի որ հարել էր Բրուտոսի գլխավորած քաղաքական հոսանքին: Դեյոտարոսը մահացավ Ք.ա. 40 թ. խոր ծերության հասակում: Նա Փոքր Հայքի արքա ճանաչվեց երկու անգամ. առաջինը՝ Ք.ա. 52-47, երկրորդը՝ 44-42 թվականներին[128]:

Միանգամայն անհիմն է Դեյոտարոսի որդուն և թոռանն իբրև Փոքր Հայքի արքաներ հիշատակելը: Ենթադրվել է, որ նրանից հետո Գալաթիայի կառավարիչներ դարձած որդին՝ Կաստորը (Ք.ա. 41-36 թթ.), և թոռ Դեյոտարոս Բ-ն (Ք.ա. 36-33 թթ.) պետք է ժառանգաբար իշխեին նաև Փոքր Հայքում[129], ինչը

---

126 *«Քանզի Հայաստանի մի մասը, որը պատկանել էր Դեյոտարոսին, (Կեսարը) տվեց Արիոբարզանեսին...»* (**Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, գիրք XLI, 63, 3:

127 Մարկոս Անտոնիոսն այդ մեծ կաշառքը ստացել է իր կնոջ միջոցով: Այս մասին տեղեկանում ենք Ցիցերոնի՝ ընդդեմ Մարկոս Անտոնիոսի գրած 2-րդ ճառից (**Марк Туллий Цицерон**, Речи в двух томах, том II: 62-43 гг. до н. э. (пер. В. О. Горенштейна), М., 1962, էջ 285-319), ինչպես նաև նրա այլ նամակներից (Письма Марка Туллия Цицерона …, т. III, годы 46-43 (перевод и комментарии В. О. Горенштейна), М.-Л., 1951, էջ 239, 255, 312, 592, 614-615):

128 Դեյոտարոսի կյանքի ու գործունեության մասին համապատասխան հղումներով տե՛ս **Sullivan R. D.,** նշվ. աշխ., էջ 165-169:

129 Դեյոտարոսի որդի Կաստորը և թոռ Դեյոտարոս Բ-ն, համապատասխանաբար, Ք.ա. 41-36 և 36-33 թթ. Փոքր Հայքի արքաներ են հիշատակվում

չի համապատասխանում իրականությանը, քանի որ նման կարգ գոյություն չուներ: Որևէ աղբյուրում չկա տեղեկություն կամ գոնե ակնարկ նրանց՝ Փոքր Հայքի գահին տիրելու մասին:

Ք.ա. 43 թ. Հռոմում ստեղծվեց երկրորդ եռապետությունը՝ Անտոնիոս, Լեպիդոս և Օկտավիանոս կազմով: Արևելքը բաժին ընկավ Անտոնիոսին, և նրա դերակատարումը վճռորոշ էր Հռոմից կախյալ երկրների գահակալական խնդիրներում: Դա վերաբերում էր նաև Փոքր Հայքին, որի գահն Անտոնիոսը հանձնեց Պոնտոսի արքա Պոլեմոն Ա-ին (Ք.ա. 37-8 թթ.) այն բանի դիմաց, որ նրա միջնորդությամբ կնքվեց իր և Ատրպատականի արքա Արտավազդ Ա-ի (որպես Ատրպատականի արքա՝ Ք.ա. 56-30 թթ.) դաշինքը[130]: Պոլեմոն Ա-ի՝ նաև Փոքր Հայքի արքա դառնալը տեղի ունեցավ Ք.ա. 34/33 թ.[131], սակայն այն երկարատև չեղավ:

էլեկտրոնային Վիքիպեդիա հանրագիտարանի «Փոքր Հայք» հայերեն և ֆրանսերեն հոդվածներում (https://hy.wikipedia.org/wiki/Փոքր_Հայք *և* https://fr.wikipedia.org/wiki/Arménie_Mineure):

[130] *«Այդ ժամանակ նա այդպես վարվեց, իսկ հաջորդ տարի, երբ կոնսուլներ էին Պոմպեոսը և Կոռնուփիկիոսը, (Անտոնիոսը) արշավանք ձեռնարկեց (Արտավազդ) Արմենի դեմ՝ մեծապես հույս դնելով Մեդացու վրա, որը զայրացած էր Փրաատեսի դեմ, որովհետև սա ավարից իրեն շատ բաժին չէր տվել և ոչ իսկ որևէ այլ ձևով պատվել, և միաժամանակ նա կամենում էր (Արտավազդ) Արմենին պատժել՝ հռոմեացիներին (իր երկրի դեմ) բերած լինելու համար, ուստի նա Պոլեմոնին ուղարկեց Անտոնիոսի մոտ՝ բարեկամություն և զինակցություն հայցելու: (Անտոնիոսը), իհարկե, այնպես ուրախացավ այս առիթից, որ ոչ միայն նրա հետ դաշինք կնքեց, այլև փոքր-ինչ ուշ Պոլեմոնին, որպես վարձատրություն նրա միջնորդության, տվեց Փոքր Հայքը»* (**Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, գիրք XLIX, 33, 1-2; հեղինակը նույն տեղեկությունը կրկնում է գիրք XLIX, 44, 3-ում):

[131] Մեզ անհայտ է մնում Ք.ա. 42-34 թթ. Փոքր Հայքի գահի ճակատագիրը: Ըստ Հ. Մանանդյանի՝ միանգամայն հնարավոր է, որ Ք.ա. 40-38 թթ.

Ք.ա. 31 թ. Ակցիումի ծովային ճակատամարտում, ջախջախելով Անտոնիոսի ուժերին և հասցնելով նրան ինքնասպանության, Օկտավիանոսը սկսեց տնօրինել նաև հռոմեական արևելքի գործերը: Նա ապաստան տվեց Ատրպատականի գահազրկված արքա Արտավազդ Ա-ին և գնահատելով անցյալում հռոմեացիներին կատարած նրա ծառայություններն ընդդեմ պարթևների՝ հռչակեց Փոքր Հայքի արքա[132], որտեղ նա իշխեց մեկ տասնամյակ (Ք.ա. 30-20 թթ.) և մահացավ գահին բնական մահով:

Հռոմեական գերիշխանության դարաշրջանի Փոքր Հայքի ամենաերկարակյաց արքան եղավ Արքեղայոսը, որը Ք.ա. 36 թ. թագավորում էր Կապադովկիայում: Արտավազդ Մեդացու մահից հետո՝ Ք.ա. 20 թ., Օգոստոս Օկտավիանոսը նրան ճանաչեց նաև Փոքր Հայքի թագավոր[133]: Այս կարգավիճակում նա մնաց 37 տարի՝ մինչև Ք. հ. 17 թվականը:

պարթևա-հայկական արշավանքների ժամանակ Փոքր Հայքը միացված լինի Մեծ Հայքին (**Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 274):

[132] Դիոն Կասսիոսի հաղորդումների համաձայն՝ Անտոնիոսն իր հետ Եգիպտոս էր տարել Արտավազդ Ա-ի դուստր Յոթապեին՝ իր և Կլեոպատրայի որդի Ալեքսանդրի հետ ամուսնացնելու նպատակով: Օկտավիանոսը վերադարձրեց Արտավազդին իր դստերը և դարձրեց նրան Փոքր Հայքի արքա (**Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, գիրք XLIX, 44, 2; գիրք LIV, 9, 2):

[133] *«(Հռոմ) քաղաքում այսպիսի գործեր էին կատարվում, և Օգոստոսը հպատակ երկրները կառավարում էր հռոմեական սովորույթի համաձայն, մինչդեռ դաշնակից (երկրներին) թույլ էր տալիս կառավարվել իրենց հայրենի ավանդույթների համաձայն: Եվ նա նպատակահարմար չէր գտնում ոչ այս մեկին որևէ բան ավելացնել, ոչ իսկ թույլ տալ որևէ նոր բանի տիրանալու, այլ ճշտորեն բավարարվել եղածով. իր այս կարծիքն էլ նա հաղորդեց սենատին: Այսպիսով, նա այդ ժամանակ ոչ մի պատերազմ չձեռնարկեց, բայց իրականում նա Յամբլիքոսի որդի Յամբլիքոսին տվեց նրա հայրենական իշխանությունը արաբների վրա և Տարկոնդիմոտոսի որդի Տարկոնդիմոտոսին հանձնեց Կիլիկիայի թագավորությունը, որը պատկանել էր նրա հորը, բացի*

Փոքր Հայքի այս արքայի և թագուհի Պյութոդորիսի մասին պահպանվել է Ստրաբոնի շատ կարևոր հետևյալ վկայությունը. *«Փոքր Հայքում տարբեր ժամանակ հռոմեացիների կամքով իշխել են տարբեր իշխողներ. վերջին ժամանակներս այն գտնվում էր Արքեղայոսի իշխանության ներքո: Իսկ տիբարենների և խաղտեացիների վրա մինչև Կողքիս, Փառնակիա և Տրապիզոն այժմ իշխում է Պյութոդորիսը, որն իմաստուն և վարչական կարողությամբ գերազանց մի կին է: Նա Պյութոդորոս Տրալլիացու դուստրն է, եղել է Պոլեմոնի կինը և մի ժամանակ թագավորել է նրա հետ, հետո ժառանգեց իշխանությունը, երբ Պոլեմոնը մեռավ Սինդիկե երկրի ասպուրգյան կոչված բարբարոսների մոտ: Պոլեմոնից նա ուներ երկու որդի և մի աղջիկ, որոնցից անդրանիկն իշխում է այժմ, Պյութոդորոսի երկու որդիներից մեկը սոսկական անհատ է, օգնում է մորը իշխանության մեջ, իսկ մյուսը վերջերս եղավ Մեծ Հայաստանի թագավոր: Ինքը [Պյութոդորիսը երկրորդ անգամ] ամուսնացավ Արքեղայոսի հետ, ապրեց նրա հետ մինչև նրա կյանքի վերջը, այժմ դարձյալ այրիացած, և իշխում է ոչ միայն հիշյալ երկրների, այլև ուրիշ լավագույն երկրների վրա...»*[134]:

Պոնտոսի արքա Պոլեմոն Ա-ն Ք.ա. մոտ 14 թ. կնության է վերցնում Պյութոդորիսին, որն ամուսնու մահվանից (Ք.ա. 8 թ.) հետո դառնում է Պոնտոսի միանձնյա թագուհի: Դրանից հինգ

ծովափնյա որոշ մասերից: Քանզի սրանք նա Փոքր Հայքի հետ միասին պարգևել էր Արքեղայոսին, քանի որ Մեդացին, որը նախապես տիրում էր այնտեղ, մահացել էր» (**Դիոն Կասսիոս,** Հռոմեական պատմություն, գիրք LIV, 9, 1-2):

[134] **Ստրաբոն**, Աշխարհագրություն, գիրք XII, 3, 29: Ստրաբոնը Պյութոդորիսին հիշատակում է ևս մի քանի անգամ (գիրք XI, 2, 18; գիրք XII, 3, 31 և 37; գիրք XIV, 1, 42), որոնք խնդրո առարկա նյութին նորություն չեն ավելացնում:

տարի անց քաղաքական իրադարձությունները Հռոմեական կայսրության արևելքում ունեցան նոր զարգացումներ: Հռոմին ցանկալի էր արևելքում ստեղծել հնարավորինս մեծ հռոմեամետ քաղաքական միավորներ: Ք.ա. 3 թ. Օգոստոս Օկտավիանոսը համաձայնեց թագ ուղարկել Պյութոդորիսին, եթե վերջինս ամուսնանա Կապադովկիայի արքա Արքեղայոսի հետ, որը Ք.ա. 20 թվականից նաև Փոքր Հայքի արքան էր, հայտնի էր նաև իբրև Հռոմի ամենահավատարիմ գործիչներից մեկն արևելքում: Արքեղայոսի և Պյութոդորիսի ամուսնությամբ վերջինս դարձավ մի մեծ քաղաքական միավորման թագուհի, այդ թվում՝ Փոքր Հայքի՝ այդ կարգավիճակում մնալով 20 տարի: Ստրաբոնի հիշատակած Պյութոդորիսի և Պոլեմոնի որդին, որը դարձավ Մեծ Հայքի արքա, Զենոն-Արտաշեսն է (18-34 թթ.):

17 թ. Հռոմը, վերացնելով Փոքր Հայքի, Կապադովկիայի, Կիլիկիայի և Կոմմագենեի թագավորությունները, դրանք վերածեց հռոմեական նահանգների: Արևելքում այս փոփոխությունը կատարվեց Օգոստոս կայսեր հաջորդ Տիբերիոս Կլավդիոս Ներոնի կամքով: Սակայն Տիբերիոսի մահից հետո Հռոմում որոշեցին վերադառնալ Օգոստոսի քաղաքականությանը: 38 թ. Կալիգուլայի հրամանով վերականգնվեցին 17 թ. լուծարված մի քանի թագավորություններ, այդ թվում՝ Փոքր Հայքը:

Փոքր Հայքի գահը ստացավ Կալիգուլայի մտերիմ անձնավորություններից մեկը՝ Կոտիսը[135], որը դրա համար ուներ ո-

[135] Կոտիսի՝ Փոքր Հայքի թագավոր լինելու մասին մասին վկայում են **Դիոն Կասսիոսը** (Հռոմեական պատմություն, գիրք LIX, 12, 2), **Հովսեպոս Փլավիո-**

ռոշակի ժառանգական իրավունքներ: Նա մայրական գծով Պոլեմոն Ա-ի և Պյութոդորիսի թոռն էր՝ նրանց դուստր Անտոնիա Տրիփոնայի որդին՝ Մեծ Հայքի արքա Զենոն-Արտաշեսի քրոջ որդին: Հայրական գծով նա Թրակիայի Կոտիս թագավորի որդին էր: Դատելով փաստերից՝ Կոտիսը 38-43 թթ. իշխել է նաև Մեծ Հայքի գահին, երբ հայոց ավագանին Գիսակ Դիմաքսյանի գլխավորությամբ ընդվզել էր և դուրս մղել օտար ուժերին: Սակայն 43 թ. Կոտիսը ստիպված էր տեղի տալ Կալիգուլային հաջորդած Կլավդիոս կայսեր պահանջին և թողնել Մեծ Հայքի գահը Միհրդատ Իբերացուն[136]:

Թե մինչև երբ է իշխել Կոտիսը, սկզբնաղբյուրներում ստույգ հաղորդում չկա: Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ նա կարող էր Փոքր Հայքի գահին գտնվել մինչև 54 թվականը, երբ Ներոն կայսրը կատարեց նոր նշանակում[137]: Հովսեպոս Փլավիոսի հաղորդման համաձայն՝ *«Ներոնի իշխանության առաջին տարում, երբ Եմեսայի դինաստ Ազիզոսը մահացավ, իշխանությունը ժառանգեց նրա եղբայր Սոեմոսը, իսկ Փոքր Հայքի իշխանությունը Ներոնը հանձնեց Քաղկիսի Հերովդես թագավորի որդի Արիստոբուլոսին»*[138]:

սը (Հրեական հնախոսություն, գիրք XIX, 338), Տակիտոսը (Տարեգրություններ, գիրք XI, 9):

[136] Տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ, էջ 311-315; ՀԺՊ, հ. I, էջ 721-726 (բաժնի հեղինակ՝ Ս. Տ. Երեմյան):

[137] Տե՛ս, օրինակ, **Magie D.,** նշվ. աշխ., էջ 554; ՀԺՊ, հ. I, էջ 735 (բաժնի հեղինակ՝ Ս. Տ. Երեմյան); **Schottky M.,** նշվ. աշխ., էջ 95; **Marek Ch.,** նշվ. աշխ., էջ 815 և այլն:

[138] **Հովսեպոս Փլավիոս,** Հրեական հնախոսություն, գիրք XX, 158: Արիստոբուլոսի մասին Հովսեպոս Փլավիոսը հիշատակում է մեկ այլ աշխատանքում ևս. *«Այսպիսով, Փոքր Հայքի թագավորությունը (Ներոնը) տալիս է Հերովդեսի որդի Արիստոբուլոսին, իսկ Ագրիպպասի թագավորությանը ավելացնում է ևս չորս քաղաք՝ Արբելան, Յուլիասը՝ Պերեայում, Տարիքեյան և*

Տակիտոսն ավելի հանգամանորեն է ներկայացնում այդ նշանակումը, ինչից պարզ է դառնում, որ դա արվել է Հռոմի կայսեր՝ Պարթևստանի դեմ արևելքում առկա ուժերի համախմբման և պատերազմի նախապատրաստման նպատակով. *«Ներոնը հրամայում է Արևելքի լեգեոնները լրացնելու համար մերձակա պրովինցիաներում ժողովված երիտասարդությունը մոտեցնել և տեղավորել Հայաստանի սահմանների մոտ, իսկ երկու հին թագավորների՝ Ագրիպպային ու Անտիոքոսին ռազմի համար զորքեր նախապատրաստել, որոնցով պիտի ներխուժեին պարթևական սահմանները: Միաժամանակ կարգադրում է Եփրատ գետի վրա կամուրջներ գցել: Եվ Փոքր Հայքը հանձնում է Արիստոբուլոսին, իսկ Սոֆենեի մարզը (Ծոփաց երկիրը)՝ Սոհեմոսին՝ երկուսին էլ տալով թագավորական նշաններ»*[139]:

Տակիտոսն Արիստոբուլոսին Փոքր Հայքի գահին հիշատակում է նաև տարիներ անց, երբ Ներոնը Մեծ Հայքի արքա է նշանակում Տիգրան Զ-ին (60-62 թթ.), որը Կապադովկիայի և Փոքր Հայքի արքա Արքեղայոսի ծոռն էր: Նույն հաղորդման մեջ նշվում է, որ այդ ժամանակ Մեծ Հայքի սահմանային շրջաններն անջատվել են ու կցվել սահմանակից երկրներին (Վիրքին, Պոնտոսին, Փոքր Հայքին և Կոմմագենեին), այդ թվում՝ Արիստոբուլոսի կառավարած Փոքր Հայքին[140]:

Գալիլեայի Տիբերիասը՝ իրենց շրջաններով, իսկ Փելիքսին նշանակում է մնացյալ Հրեաստանի պրոկուրատոր» (Հրեական պատերազմի մասին, գիրք II, 252):

[139] **Տակիտոս,** Տարեգրություններ, գիրք XIII, 7:

[140] *«...Եկավ Տիգրանը, որն ընտրված էր Ներոնի կողմից Հայաստանին տիրապետելու համար: Այդ Տիգրանը կապադովկիացիների ավագանուց էր, Արքելաոս թագավորի ծոռն էր... Որպեսզի ավելի հեշտ լինի նոր թագավո-*

Արիստոբուլոսը դարձավ հռոմեական գերիշխանության ներքո Փոքր Հայքում իշխած վերջին արքան: Այս դեպքում ևս սկզբնաղբյուրներից ստույգ հայտնի չէ, թե մինչև որ թվականն է իշխել նա, սակայն ուսումնասիրողները մեծ հավանականությամբ ենթադրում են, որ դա կարող էր լինել 72 թվականը[141]: Այդ թվականին էր, որ Հռոմի Վեսպասիանոս կայսեր որոշմամբ վերացան Կոմմագենեի, Փոքր Հայքի ու Պոլեմոնական Պոնտոսի թագավորությունները, իսկ դրանց տարածքները միացվեցին հռոմեական Կապադովկիա պրովինցիային: Ավարտվեց հելլենիստական դարաշրջանի հայկական կրտսեր թագավորություններից երկուսի՝ Փոքր Հայքի և Կոմմագենեի պատմությունը:

Ամփոփելով Փոքր Հայքի թագավորությանը վերաբերող սկզբնաղբյուրների համառոտ այս տեսությունը՝ կարող ենք արձանագրել, որ նոր ժամանակների պատմագիտական ուսումնասիրություններում առկա են երկու հակադիր ծայրահեղություններ: Մի կողմից թագավորության գահացանկում չեն ներառվել իրականում իշխած արքաները (Արիակես Ա, Օրոմանես (Արամանյակ), Արիակես Բ), մյուս կողմից՝ արհեստականորեն գահացանկ են մտցվել անձինք, որոնք իրականում չեն եղել Փոքր Հայքի գահակալներ (Արկաթիոս Պոտնացի

ությունը պահպանել, Հայաստանի որոշ մասերը, նայած թե ում էին սահմանակից, հրաման ստացան հնազանդվել Փարասմանին, Պոլեմոնին, Արիստոբուլոսին և Անտիոքոսին» (**Տակիտոս**, Տարեգրություններ, գիրք XIV, 26):

[141] Տե՛ս **Magie D.,** նշվ. աշխ., էջ 572-574, 1435, ծնթ. 21; **Schottky M.,** նշվ. աշխ., էջ 95; **Marek Ch.,** նշվ. աշխ., էջ 815: «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակի ամփոփիչ ժամանակագրության բաժնում ևս այս թվականն է համարվում Փոքր Հայքի թագավորության վերացման տարի (ՀԺՊ, հ. I, էջ 721-726):

(Միհրդատ Եվպատորի որդի), Արիոբարզանես Ա Կապադովկիացի, Փառնակես Բ Պոնտացի, Կաստոր Գալաթացի, Դեյոտարոս Բ Գալաթացի):

Ի մի բերելով սկզբնաղբյուրների քննության արդյունքները՝ այսօր կարելի է վերականգնել Փոքր Հայքի թագավորության հետևյալ գահացանկը.

Միթրաուստես (Միհրվահիշտ) – Ք.ա. 331 - 322(?) թթ.,

Արիակես (Արիաուկա) Ա – Ք.ա. IV վերջին տասնամյակներ (հնարավոր է՝ Ք.ա. 321 կամ 301 թվականից հետո),

Օրոմանես (Օրոմանա, Արամանյակ) – Ք.ա. IV դ. վերջ և/կամ III դ. առաջին տասնամյակներ,

Արիակես (Արիաուկա) Բ – Ք.ա. III դարի կեսեր,

Միհրդատ – Ք.ա. 180-170-ական թթ.,

Սիսիս – (?),

Անտիպատրոս –Ք.ա. ? -112 թթ.,

Միհրդատ Եվպատոր (Արտաշես) – Ք.ա. 112-71 և 68-66 թթ.,

Բրոգիտարոս Գալաթացի – Ք.ա. 64-52 թթ.,

Դեյոտարոս Գալաթացի – Ք.ա. 52-47 թթ.,

Արիոբարզանես Կապադովկիացի – Ք.ա. 47-44 թթ.,

Դեյոտարոս Գալաթացի – Ք.ա. 44-42 թթ. (երկրորդ անգամ),

Պոլեմոն Պոնտացի – Ք.ա. 33-30 թթ.,

Արտավազդ Ատրպատականցի – Ք.ա. 30-20 թթ.,

Արքեղայոս Կապադովկիացի – Ք.ա. 20 - Ք. հ. 17 թթ.,

Կոտիս Թրակիացի – 38-54(?) թթ.,

Արիստոբուլոս Քաղկիդիկացի (Քաղկիսացի) – 54-72 թթ.:

Որպես Փոքր Հայքի արքաներ՝ գահացանկում հանդիպող Միհրդատ» անունով երկու արքաներին թերևս իմաստ ունի նշել կարգահամարով. Ք.ա. 180-170-ական թթ. իշխածին՝ Միհրդատ Ա, իսկ Միհրդատ Եվպատորին՝ Միհրդատ Բ Արտաշես:

Այս և Փոքր Հայքի թագավորությանն առնչվող բազմաթիվ այլ հարցեր մնում են հետագա ուսումնասիրությունների առարկա: Մասնավորապես, համակարգված և նորովի ուսումնասիրության կարիք ունեն Փոքր Հայքի թագավորության հետ կապված դրամները[142], արձանագրությունները և բոլոր այն նյութերը, որոնք թույլ կտան նորովի և ամբողջական գնահատել հայկական այս պետության տեղն ու դերը Հայաստանի և Անտիկ աշխարհի պատմության ընթացքում:

ЦАРСКИЙ СПИСОК КОРОЛЕВСТВА МАЛОЙ АРМЕНИИ

В научных исследованиях до сих пор не был полностью восстановлен царский список королевства Малой Армении (331 г. до р. Хр.-72 г. после р. Хр.). На основе исследования первоисточников (Арриан, Руфус, Диодор Сицилийский, Страбон, Юстин, Аппиан Александрийский, Дион Кассий, Иосиф Флавий, Плутарх, Тацит и др.) становится возможным восстановить полный царский список, который выглядит следующим образом:

Митрауст – 331-322 (?) гг. до р. Хр.,

Ариак (Ariauka) I – последние десятилетия IV в. до р. Хр. (возможно, после 321 или 301 г. до р. Хр.),

Ороман (Оромана, Араманьяк) – конец IV в. и / или первые десятилетия III в. до р. Хр.,

Ариак (Ариаука) II – середина III в. до р. Хр.,

Митридат – 180-170 гг. до р. Хр.,

Сисис – (?),

---

[142] Այդ ուղղությամբ կատարված վերջին և առավել ամբողջական աշխատանքը տե՛ս **Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 49-52:

Антипатр – (?) –112 гг. до р. Хр.,
Митридат Евпатор (Арташес) – 112-71 и 68–66 гг. до р. Хр.,
Брогитар из Галатии – 64-52 гг. до р. Хр.,
Дейотар из Галатии – 52-47 гг. до р. Хр.,
Ариобарзан из Каппадокии – 47-44 гг. до р. Хр.,
Дейотар из Галатии – 44-42 гг. до р. Хр. (второй раз),
Полемон из Понта – 34-30 гг. до р. Хр.,
Артавазд из Атропатены – 30-20 гг. до р. Хр.,
Архелай из Каппадокии – 20 г. до р. Хр. - 17 после р. Хр.,
Котис из Фракии – 38-54(?) гг.,
Аристовул из Халкиды – 54-72 гг.

THE KING LIST OF THE KINGDOM OF ARMENIA MINOR

In scientific studies the king list of the Kingdom of Armenia Minor has not been fully restored until now (331 BC-72 AD). Based on the study of the primary sources (Arrian, Rufus, Diodorus of Sicily, Strabo, Justin, Appian of Alexandria, Dion Cassius, Josephus Flavius, Plutarch, Tacitus and others) it becomes possible to restore the complete king list, which is as follows:

Mithraustes – 331-322(?) BC,
Ariakes (Ariauka) I – last decades of the 4th century BC (possibly after 321 or 301 BC),
Oromanes (Oromana, Aramaniak) – end of the 4th century BC and/or first decades of the 3rd century BC,
Ariakes (Ariuka) II – middle of the 3rd century BC,
Mithridates – 180-170s BC,
Sisis – (?),
Antipater – (?)-112 BC,
Mithridates Eupator (Artashes) – 112-71 and 68-66 BC,
Brogitarus of Galatia – 64-52 BC,
Deiotarus of Galatia – 52-47 BC,
Ariobarzanes of Cappadocia – 47-44 BC,
Deiotarus of Galatia – 44-42 BC (second time),
Polemo of Pontus – 34-30 BC,
Artavasdes of Atrpatene – 30-20 BC,
Archelaus of Cappadocia – 20 BC-17 AD,
Cotys of Thracia – 38-54(?),
Aristobulus of Chalcis – 54-72.

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳՈՒՀԻՆԵՐԸ

Հայ իրականության մեջ կինը հարգված ու մեծարված է եղել ինչպես նախաքրիստոնեական ժամանակներում, այնպես էլ քրիստոնեական դարաշրջանում: Երկու դարաշրջաններում էլ հայ կինն ունեցել է իր դասական կերպարը՝ ազատ և առաքինի օրիորդ, հոգատար մայր և սիրելի ամուսին: Հասարակության մեջ ստրկացված, փակ դեմքով շրջող կնոջ կերպարը խորթ է եղել հայ իրականությանը: Դա մահմեդական տիրապետության ժամանակաշրջանում մեր ժողովրդին պարտադրված երևույթ էր, որի հետքերը, ցավոք, զգալի են անգամ մեր ժամանակներում:

Պատմության մեջ հայ կնոջ կերպարի ճիշտ գնահատման լավագույն ճանապարհներից մեկը երկրի բարձրագույն կին պետական գործիչների՝ թագուհիների մասին տեղեկությունների լուսաբանումն է: Բարեբախտաբար, մեր երկրի պատմությունը պահպանել է հիշատակություններ թագուհիների մասին, որոնք, հեզաբարո կանայք լինելով, եղել են իրենց երկրի բացառիկ տիրուհիներ, արքա-ամուսինների նվիրյալ կանայք, անմնացորդ նվիրումով մայրեր, նաև զարմանալի զորավարներ, բարձրաճաշակ կառուցողներ, իմաստուն մեկենասներ...

Հակառակ ունեցած կարևորությանը՝ հայոց թագուհիները մեզանում մնում են քիչ ճանաչված: Այդ կարևոր բացը լրացնելու նպատակն էր հետապնդում տարիներ առաջ լույս տեսած Հայաստանի թագուհիներին նվիրված մեր գիտահանրամատչելի պատկերազարդ մենագրությունը[143], որը նաև խնդիր ու-

[143] Տե՛ս **Մովսիսյան Ա.,** 10 հայ ականավոր թագուհիներ, Երևան, 2014:

ներ հիմնահարցի վրա հրավիրելու ուսումնասիրողների ուշադրությունը: Մենագրության հրատարակությունից անցել են տարիներ, կատարվել են նոր ուսումնասիրություններ, որոնք անվանապես հայտնի հայոց թագուհիների ցանկը[144] կարող են այսօր լրացնել: Մասնավորապես, դա վերաբերում է հելլենիստական ժամանակաշրջանի մեծությամբ երկրորդ հայկական թագավորությանը՝ Փոքր Հայքին (Ք.ա. 331 – Ք. հ. 72 թթ.), որի թագուհիներին անդրադառնալու անհրաժեշտությունն առաջացավ հատկապես այն բանից հետո, երբ լիովին ճշգրտվեց թագավորության արքայացանկը[145]:

Փոքր Հայքի արքայացանկը

Փոքր Հայքի թագավորությունն իր պատմության ընթացքում ունեցել է քաղաքական տարբեր կարգավիճակներ: Ըստ այդմ՝ թագավորության պատմությունը կարելի է բաժանել երկու մեծ ժամանակաշրջանի՝ անկախ թագավորության ժամանակաշրջան (Ք.ա. 331-112 թթ.) և պոնտական ու հռոմեական գերիշխանության շրջան (Ք.ա. 112 - Ք. հ. 72 թթ.): Երկրորդ ժամանակաշրջանում Փոքր Հայքը գտնվել է պոնտական, ապա՝ հռոմեական գերիշխանության ներքո, սակայն պահպանել է թագավորության կարգավիճակը: Ուստի պետության թագուհիների ամբողջական ցանկը վերականգնելու նպատակով հավասարապես պետք է անդրադառնալ երկու ժամանակա-

---

[144] Տե՛ս նշվ. աշխ., էջ 102-103:

[145] Տե՛ս **Մովսիսյան Ա., Կարապետյան Լ.,** Փոքր Հայքի թագավորության գահացանկը, «Պատմաբանասիրական հանդես», 2020, N 2, էջ 21-46, նաև՝ այս ժողովածուում:

շրջաններին, ինչպես դա արվել է արքաների գահացանկը վերականգնելիս։

Նախքան թագուհիներին անդրադառնալը ներկայացնենք Փոքր Հայքի թագավորության այսօր վերականգնվող ամբողջական արքայացանկը.

Միթրաուստես (Միհրվահիշտ) – Ք.ա. 331 - 322(?) թթ.,

Արիակես (Արիաուկա) Ա – Ք.ա. IV վերջին տասնամյակներ (հնարավոր է՝ Ք.ա. 321 կամ 301 թվականից հետո),

Օրոմանես (Օրոմանա, Արամանյակ) – Ք.ա. IV դ. վերջ և/կամ III դ. առաջին տասնամյակներ,

Արիակես (Արիաուկա) Բ – Ք.ա. III դարի կեսեր,

Միհրդատ – Ք.ա. 180-170-ական թթ.,

Սիսիս – (?) թթ.,

Անտիպատրոս – Ք.ա. ? - 112 թթ.,

Միհրդատ Եվպատոր (Արտաշես) – Ք.ա. 112-71 և 68-66 թթ.,

Բրոգիտարոս Գալաթացի – Ք.ա. 64-52 թթ.,

Դեյոտարոս Գալաթացի – Ք.ա. 52-47 թթ.,

Արիոբարզանես Կապադովկիացի – Ք.ա. 47-44 թթ.,

Դեյոտարոս Գալաթացի – Ք.ա. 44-42 թթ. (երկրորդ անգամ),

Պոլեմոն Պոնտացի – Ք.ա. 33-30 թթ.,

Արտավազդ Ատրպատականցի – Ք.ա. 30-20 թթ.,

Արքեղայոս Կապադովկիացի – Ք.ա. 20 - Ք. հ. 17 թթ.,

Կոտիս Թրակիացի – 38-54 (?) թթ.,

Արիստոբուլոս Քաղկիդիկացի – 54-72 թթ.[146]:

---

[146] Տե՛ս **Մովսիսյան Ա., Կարապետյան Լ.,** նշվ. աշխ., էջ 41-42:

Ցավով պետք է նշել, որ սկզբնաղբյուրներում չի պահպանվել թագավորության անկախության ժամանակաշրջանի (Ք.ա. 331-112 թթ.) արքաներից որևէ մեկի տիկնոջ անունը: Փոքր Հայքի գահին իշխած առաջին արքան, որի կողակից թագուհին հայտնի է պատմությանը, Միհրդատ Եվպատորն է, որը, դատելով ուսումնասիրություններից, ժառանգականության իրավունքով է ստացել Փոքր Հայքի գահն Անտիպատրոս արքայից[147]: Այդ մասին կարող է վկայել այն փաստը, որ Միհրդատ Եվպատորը հիշատակվում է իբրև «թագավոր Պոնտոսի և Հայոց»[148], որի տակ պետք է հասկանալ՝ «թագավոր Պոնտոսի և Փոքր Հայքի»: Մեծ հավանականությամբ նա թագավոր է հռչակվել «Արտաշես» պատվանունով[149]:

Լաոդիկե և Մոնիմե (Միհրդատ Եվպատորի թագուհիները)

Ի տարբերություն նախորդ դարաշրջանի Փոքր Հայքի արքաների, որոնցից ոչ մեկի տիկնոջ անունը հայտնի չէ, մեզ են հասել տեղեկություններ Միհրդատ Եվպատորի բազմաթիվ կանանց մասին, որոնցից հինգի անուններն են հասել մեզ:

---

[147] Տե՛ս, օրինակ, **Молев Е. А.,** Малая Армения и Митридат Евпатор, в сб. «Проблемы античной истории и культуры» (доклады XIV Международной конференции антиковедов социалистических стран «Эйрене»), Е., 1979, էջ 187-188; **Сапрыкин С. Ю.,** Понтийское царство: Государство греков и варваров в Причерноморье, М., 1996, էջ 144; **Հարությունյան Բ.,** Պոնտոսի Միհրդատ VI Եվպատոր թագավորը նաև հայոց արքա, ՊԲՀ, 2003, № 3, էջ 148-149; **Талах В. Н.,** Рожденный под знаком кометы: Митридат Эвпатор Дионис, Киев, 2012, էջ 44 և այլն:

[148] Այդպես է ներկայացվում Միհրդատ Եվպատորը V դարի հռոմեացի պատմիչ Պաուլոս Օրոսիոսի «Պատմություն ընդդեմ հեթանոսների» երկում (գիրք VI, 10, 2), ինչը գալիս է ավելի վաղ շրջանի սկզբնաղբյուրներից:

[149] Տե՛ս **Հարությունյան Բ. Հ.,** նշվ. աշխ., էջ 146-150:

Սակայն նրանցից միայն երկուսն են թագադրվել և պաշտոնապես կրել թագուհու տիտղոս, ուստի ստորև կանդրադառնանք միայն նրանց[150]:

Միհրդատ Եվպատորի առաջին կինը նրա հարազատ քույրն էր՝ Լաոդիկեն: Հայտնի է, որ հոր՝ Միհրդատ Ե-ի դավադրական սպանությունից հետո Միհրդատ Եվպատորը, որը դեռևս 11 տարեկան էր, մոր՝ Լաոդիկե Զ թագուհու և կրտսեր եղբոր՝ Քրեստոսի հետ ժառանգեց թագավորությունը: Երեխաները մանկահասակ էին, ուստի թագուհին ստանձնեց երկրի խնամակալությունը, ինչը, սակայն, հղի էր Միհրդատի համար մեծ վտանգով, քանի որ մայրը ցանկանում էր գահին տեսնել կրտսեր որդուն: Միհրդատը հեռացավ երկրից և տարիներ անց վերադառնալով՝ հաստատվեց հայրական գահին: Նա բանտարկեց մորն ու եղբորը, որոնք մահացան բանտում, կամ, հնարավոր է, սպանվեցին արքայի հրամանով: Ք.ա. 116-113 թթ. միջակայքում Միհրդատը կնության առավ քրոջը՝ Լաոդի-

---

150 Միհրդատ Եվպատորի կյանքի, նրա ընտանիքի և կանանց մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում հատկապես Դիոդորոս Սիկիլիացին, Ստրաբոնը, Պոմպեոս Տրոգոսը (որի գործը մեզ է հասել Հուստինոսի համառոտմամբ), Ապպիանոս Ալեքսանդրացին, Պլուտարքոսը և այլ պատմիչներ: Նոր ժամանակների ուսումնասիրություններից հատկապես հիշատակելի են՝ **Meyer Ed.,** Geschichte des Königreichs Pontos, Leipzig, 1879; **Reinach Th.,** Mithridate Eupator, roi de Pont, Paris, 1890; **Duggan A.,** He Died Old: Mithradates Eupator, King of Pontus, 1958; **Молев Е. А.,** Митридат Евпатор. Создание Черноморской державы, Саратов, 1977; **Молев Е. Л.,** Властитель Понта, Нижний Новгород, 1995; **Ballesteros Pastor L.,** Mitrídates Eupátor, rey del Ponto, Granada, 1996; **Сапрыкин С. Ю.,** Понтийское царство: Государство греков и варваров в Причерноморье, М., 1996; **Mayor A.,** The Poison King: The Life and Legend of Mithradates, Rome's Deadliest Enemy, Princeton, 2009; **Талах В. Н.,** Рожденный под знаком кометы: Митридат Эвпатор Дионис, Киев, 2012; **Чернявский С.,** Митридат Великий, "последний эллин", М., 2016 և այլն:

կեին, մի բան, որ սովորական էր հելլենիստական աշխարհում: Միհրդատի ու Լաոդիկեի միությունից ծնվեցին Միհրդատը, Արկաթիասը, Մաքարեսը և Կլեոպատրան՝ Տիգրան Մեծի ապագա կինը: Նրանց ամուսնությունը, սակայն, երկար չտևեց: Միհրդատը մի խումբ հավատարիմ անձանց հետ հետախուզական գաղտնի ճամփորդության մեկնեց այլ երկրներում, որն այնքան երկար տևեց, որ կարծում էին՝ արքան մահացել է: Միհրդատի բացակայության ժամանակ Լաոդիկեն սիրային հարաբերությունների մեջ էր մտել պոնտական վերնախավի ներկայացուցիչներից մեկի հետ: Ք.ա. մոտ 106 կամ 105 թ. վերադառնալով մայրաքաղաք և իմանալով այդ մասին՝ Միհրդատը դավաճանության համար մահապատժի ենթարկեց թագուհուն ու նրա հետ կապված անձանց[151]:

Լաոդիկեից հետո Միհրդատը կնության առավ բազմաթիվ կանանց[152], սակայն, թերևս զգուշանալով գահի նկատմամբ հնարավոր ոտնձգություններից, չհռչակեց նրանց թագուհի՝ բացառությամբ մեկի: Վերջինս Փոքր Ասիայի Եփեսոս կամ Ստրատոնիկեա քաղաքից հույն ազնվատոհմիկի դուստր էր՝ Մոնիմե (տարբերակ՝ Մոնիմա) անունով, որը խիստ հռչակ-

---

[151] Տե՛ս **Սալյուստիոս**, Պատմություն, գիրք II, 76; **Հուստինոս**, Համառոտումն Պոմպեոս Տրոգոսի «Փիլիպպոսյան պատմությունների», գիրք XXXVII, գլ. 3, 6-8 և գիրք XXXVIII, գլ. 1, 1: Հմմտ. **Reinach Th.,** նշվ. աշխ., էջ 50, 55, 95, 295; **Mayor A.,** նշվ. աշխ., էջ 45, 99-100, 114, 122-125; **Талах В. Н.,** նշվ. աշխ., էջ 34, 44 և այլն:

[152] Մեզ են հասել Միհրդատ Եվպատորի կանանցից միայն հինգի անունները, իսկ սկզբնաղբյուրներում կան հիշատակություններ նրա՝ տարբեր կանանցից ունեցած 23 երեխաների մասին (**Mayor A.,** նշվ. աշխ., էջ 114): Պլուտարքոսը գրում է, որ գրավելով Փոքր Հայքը՝ Պոմպեոսն իրենց ծնողների մոտ ուղարկեց Միհրդատ Եվպատորի հարեմի կանանց, որոնք մեծ մասամբ տարբեր իշխանների կամ զորավարների դուստրեր կամ կանայք էին (**Պլուտարքոս,** Համեմատական կենսագրություններ, Պոմպեոս, 36):

ված իր գեղեցկությամբ, ինչի առաջ էլ տեղի տվեց արքան: Մոնիմեն մերժում էր Միհրդատ Եվպատորի առաջարկը՝ առանց թագուհի հռչակվելու նախապայմանի: Անգամ այն բանից հետո, երբ *«արքան ձգտում էր նրա բարեհաճությանը և ուղարկեց նրան 15 հազար ոսկի, նա ամեն բանի պատասխանում էր մերժումով, մինչև որ արքան նրա հետ չկնքեց ամուսնության համաձայնագիր և ապարդյուն ուղարկելով՝ չհռչակեց թագուհի»*[153]: Մոնիմեն թագուհի դարձավ Ք.ա. 88 թ. և մնաց այդ կարգավիճակում մինչև Ք.ա. 71 թվականը, երբ Լուկուլլոսից պարտված ու Մեծ Հայք փախչող Միհրդատը կարգադրեց սպանել նրան, մյուս կանանց և իր երկու քույրերին, որպեսզի նրանք գերի չընկնեն թշնամի հռոմեացիներին[154]:

Այսպիսով՝ սկզբնաղբյուրները վկայում են, որ Միհրդատ Եվպատորի կանանցից միայն երկուսն են ունեցել թագուհու տիտղոս և կարգավիճակ՝ Լաոդիկեն և Մոնիմեն: Հետևաբար, միայն նրանք կարող են համարվել նաև Փոքր Հայքի թագուհիներ. Լաոդիկեն՝ Ք.ա. 112 - մոտ 105, Մոնիմեն՝ Ք.ա. 88-71 թվականներին:

Աղոբոգիոնա Գալաթացի

Ք.ա. 71 թ. Լուկուլլոսի հռոմեական բանակից պարտվելով՝ Միհրդատ Զ Եվպատորը դուրս մղվեց իր տիրույթներից (այդ թվում՝ Փոքր Հայքից) և ապաստան գտավ Տիգրան Մեծի մոտ:

---

153 **Պլուտարքոս**, Համեմատական կենսագրություններ, Լուկուլլոս, 18:

154 Տե՛ս **Պլուտարքոս**, Համեմատական կենսագրություններ, Լուկուլլոս, 18; **Ապպիանոս Ալեքսանդրացի,** գիրք XII, 21; Հմմտ. **Reinach Th.,** նշվ. աշխ., էջ 128, 147, 296, 341-342; **Mayor A.,** նշվ. աշխ., էջ 114, 163-165, 218-219, 285-287; **Талах В. Н.,** նշվ. աշխ., էջ 71, 129 և այլն:

Ք.ա. 68 թ. վերջին Տիգրան Մեծի օգնությամբ Միհրդատ Եվպատորն ազատագրեց Պոնտոսն ու Փոքր Հայքը հռոմեացիներից: Սակայն դա եղավ ժամանակավոր հաջողություն: Ք.ա. 66 թ. արտակարգ լիազորություններով արևելք ուղարկված Պոմպեոսը վերջնական պարտության մատնեց Միհրդատ Եվպատորին, որը, այս անգամ չստանալով Տիգրան Մեծի աջակցությունը, հեռացավ Բոսպորի թագավորություն, իսկ Ք.ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ դրեց իր կյանքին: Ք.ա. 64 թ. Պոմպեոսը կատարեց մի շարք փոփոխություններ՝ իր տիրապետության ներքո հայտնված նախկին պոնտական տիրույթների մի մասը բաժանելով այն իշխաններին, որոնք օգնել էին իրեն պատերազմում: Նրանց մեջ կարևոր դերակատարում ունեին գալաթացի իշխաններ Դեյոտարոսը և նրա փեսա Բրոգիտարոսը (Ստրաբոնի մոտ՝ Բոգոդիատարոս): Դեյոտարոսը ստացավ արքայի տիտղոս, Պոնտոսի արևելյան ծովափնյա մասը՝ Փառնակիա և Տրապիզոն քաղաքներով: Պոնտոսի թագավորության հարավային շրջանները (ներառյալ Փոքր Հայքը) անցան Բրոգիտարոսին[155]: Վերջինիս նրա մահվանից հետո՝ հավանաբար Ք.ա. 52 թ., Փոքր Հայքը ևս անցավ Դեյոտարոսի իշխանության տակ[156]:

Ք.ա. 64 թ. Փոքր Հայքի գահն անցավ Բրոգիտարոսին, որի կինը Ադոբոգիոնան էր՝ Դեյոտարոս Գալաթացու դուստրը: Ադոբոգիոնան Բրոգիտարուսի հետ ամուսնացել է Ք.ա. 80-ա-

---

[155] Տե՛ս **Ստրաբոն**, Աշխարհագրություն, գիրք XII, 3, 1; XII, 3, 13; XII, 5, 2:

[156] Հանգամանորեն տե՛ս **Adcock F. E.,** Lesser Armenia and Galatia after Pompey's Settlement of the East, “The Journal of Roman Studies”, Vol. 27, part 1 (Papers Presented to Sir Henry Stuart Jones), London, 1937, էջ 12-17; **Sullivan R. D.,** Near Eastern Royalty and Rome, 100-30 BC, Toronto-Buffalo-London, 1990, էջ 164-169; **Сапрыкин С. Ю.,** նշվ. աշխ., էջ 290 և այլն:

կան թթ. և եղել կողակիցը մինչև նրա մահը: Ուստի Փոքր Հայքի գահին Ադոբոգիոնայի և նրա արքա-ամուսնու ժամանակագրությունը ամբողջությամբ նույնական է (Ք.ա. 64-52 թթ.): Նրա գործունեության մասին մեզ գրեթե ոչինչ հայտնի չէ[157]:

Բերենիկե Պերգամոնցի

Ք.ա. 52 թ.՝ Բրոգիտարուսի մահվանից հետո, Փոքր Հայքի գահն անցավ նրա աներոջը՝ Դեյոտարոս Գալաթացուն (հայտնի է «Հռոմեասեր» մականունով), որը Փոքր Հայքի գահին իշխեց ընդհատումով՝ Ք.ա. 52-47 և 44-42 թվականներին: Նրա կինն էր Բերենիկե թագուհին, որը Պերգամոնի արքա Ատտալոս Գ-ի (Ք.ա. 138-133 թթ.) դուստրն էր: Դեյոտարոսի և Բերենիկեի միությունից ծնվեց Ադիոբոգիոնան, որը, ինչպես նշվեց, Գալաթիայի և Փոքր Հայքի արքա Բրոգիտարոսի թագուհին էր:

Ուշագրավ է, որ հայկական երկրորդ պետության արքայական ընտանիքը բարեկամական հարաբերություններ էր հաստատել Մեծ Հայքի տիրակալի հետ՝ այն ամրապնդելով խնամիական ամուսնությամբ. Արտավազդ Բ-ի դուստրն ա-

---

[157] Նրա հետ է կապվում Պերգամոնի պեղումներից հայտնաբերված կնոջ արձանը՝ իրենց ձոնված արձանագրությամբ, որը թվագրվում է Ք.ա. 63-58 թթ. միջակայքով (**Strobel K.,** The Galatians in the Roman Empire. Historical tradition and ethnic identity in Hellenistic and Roman Asia Minor, Ethnic Constructs in Antiquity. The Role of Power and Tradition (ed. Ton Derks & Nico Roymans), Amsterdam, 2009, էջ 137): Նշենք, սակայն, որ այդ շրջանում գալաթական միջավայրում տարածված էր «Ադոբոգիոնա» անունը, և կարծիք կա, որ այդ արձանը կապվում է նույնանուն մեկ այլ գալաթուհու, որն ապաստան է գտել Միհրդատ Եվպատորի մոտ, դարձել նրա կանանցից մեկը, և որից ծնված Միհրդատ անունով որդին հետագայում դարձել է Բոսպորի արքա (**Mayor A.,** նշվ. աշխ., էջ 114, 216):

մուսնացել էր Դեյոտարոս արքայի և Բերենիկե թագուհու որդու (հետագայում՝ Գալաթիայի արքա Դեյոտարոս Բ-ի) հետ[158]: Բերենիկե թագուհու մասին այլ տեղեկություններ սկզբնաղբյուրներում չկան:

* * *

Փոքր Հայքի թագավորության պատմությունը Ք.ա. 66 թվականից լիովին կապվում է Հռոմի հետ, ինչի արդյունքում վերջինիս քաղաքական անցուդարձերն ազդում էին երկրի ճակատագրի վրա՝ պայմանավորելով այս կամ այն արքայի գահ բարձրանալը կամ գահազրկվելը: Ք.ա. 49 թ. Հուլիոս Կեսարի և Գնեոս Պոմպեոսի միջև ծագեց քաղաքացիական պատերազմ, որի ընթացքում Արևելքի երկրների արքաները մեծ մասամբ կողմնակից էին Պոմպեոսին: Պոմպեոսի կողմնակիցների մեջ էին և նրան օժանդակող բանակներ էին ուղարկել Մեծ Հայքի արքա Արտավազդ Բ-ն ու Փոքր Հայքի թագավոր Դեյոտարոսը[159]: Ք.ա. 48 թ. Պոմպեոսը պարտություն կրեց, փախավ Եգիպտոս, որտեղ էլ սպանվեց: Կեսարը նույնպես գտնվում էր Եգիպտոսում, ուստի իրավիճակից օգտվելով՝ Միհրդատ Եվպատորի որդի Փառնակեսը, որը իշխում էր Բոսպորի թագավորությունում, ցանկացավ վերականգնել հոր տիրույթները: Ք.ա. 47 թ. նա գրավեց Պոնտոսը և Փոքր Հայքը՝

---

[158] Այդ մասին իմանում ենք Ք.ա. 50 թ. փետրվարի 13-ին Ցիցերոնի գրած մի նամակից: Ցավոք, հայոց արքայադստեր անունը չի նշվում նամակում (Письма Марка Туллия Цицерона к Аттику, близким, брату Квинту, М. Бруту, т. II, годы 51-46 (перевод и комментарии В. О. Горенштейна), М.-Л., 1950, էջ 82):

[159] Տե՛ս **Ապպիանոս Ալեքսանդրացի**, Հռոմեական պատմություն, գիրք XIV, II, 71:

հաղթելով Դեյոտարոսին, ապա՝ նաև Կապադովկիան: Հուլիոս Կեսարը շտապեց Փոքր Ասիա և Ք.ա. 47 թ. Զելա քաղաքի մոտ տոնեց մեծ հաղթանակ Փառնակեսի նկատմամբ, ինչի մասին Հռոմին տեղեկացրեց իր հայտնի արտահայտությամբ՝ «Եկա՛, տեսա՛, հաղթեցի՛»[160]:

Փոքր Հայքի արքա Դեյոտարոսը, որ Պոմպեոսի կողմում մարտնչել էր Կեսարի դեմ, կորցրեց իր իշխանության տակ գտնվող երկրների մի մասը: Նրան պատկանող Փոքր Հայքը Ք.ա. 47 թ. Կեսարը տվեց Կապադովկիայի Արիոբարզանես Գ թագավորին (Ք.ա. 51-42)[161]: Վերջինս Փոքր Հայքի գահին իշխեց Ք.ա. 47-44 թվականներին: Նրա տիկնոջ մասին սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել:

Հռոմում Ք.ա. 44 թ. դավադրության զոհ դարձավ Հուլիոս Կեսարը, որից հետո Մարկոս Անտոնիոսը մեծ դրամական պարգևի դիմաց հայտարարեց, որ ըստ Կեսարի թողած հրահանգների՝ Դեյոտարոսի բոլոր նախկին տիրույթները պետք է վերականգնվեն[162]: Այդպիսով՝ նա կրկին վերականգնեց Փոքր Հայքի արքայի կարգավիճակը, որը, սակայն, կորցրեց Ք.ա. 42

---

[160] Տե՛ս **Պլուտարքոս**, Համեմատական կենսագրություններ, Կեսար, 50:

[161] «Քանզի Հայաստանի մի մասը, որը պատկանել էր Դեյոտարոսին, (Կեսարը) տվեց Արիոբարզանեսին...» (**Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, գիրք XLI, 63, 3:

[162] Մարկոս Անտոնիոսն այդ մեծ կաշառքը ստացել է իր կնոջ միջոցով: Այս մասին տեղեկանում ենք Ցիցերոնի՝ ընդդեմ Մարկոս Անտոնիոսի գրած 2-րդ ճառից (**Марк Туллий Цицерон**, Речи в двух томах, том II: 62-43 гг. до н. э. (пер. В. О. Горенштейна), М., 1962, էջ 285-319), ինչպես նաև նրա այլ նամակներից (Письма Марка Туллия Цицерона к Аттику, близким, брату Квинту, М. Бруту, т. III, годы 46-43 (перевод и комментарии В. О. Горенштейна), М.-Л., 1951, էջ 239, 255, 312, 592, 614-615):

թ., քանի որ հարել էր Բրուտոսի գլխավորած քաղաքական հոսանքին[163]:

Ք.ա. 42-34 թթ. Փոքր Հայքի գահակալների մասին որևէ տեղեկություն չունենք սկզբնաղբյուրներում[164]: Ք.ա. 43 թ. Հռոմում ստեղծվեց երկրորդ եռապետությունը, և արևելքի կառավարումը ստանձնեց Անտոնիոսը: Վերջինս Փոքր Հայքի գահը հանձնեց Պոնտոսի արքա Պոլեմոն Ա-ին (Ք.ա. 37-8 թթ.), քանի որ նրա միջնորդությամբ էր կնքվել իր և Ատրպատականի արքա Արտավազդ Ա-ի (Արտավազդ Մեդացու, որպես Ատրպատականի արքա՝ Ք.ա. 56-30 թթ.) դաշինքը[165]: Պոլեմոն Ա-ն նաև Փոքր Հայքի արքա դարձավ Ք.ա. 34 թ., ինչը տևեց մինչև Ք.ա. 30 թվականը: Այդ տարիներին Պոլեմոն Ա-ի կնոջ մասին սկզբնաղբյուրներում չկա որևէ վկայություն: Ավելի ուշ նա ամուսնացավ նախ Դինամիսի, ապա՝ Պյութոդորիսի հետ: Վերջինիս մենք դեռ կանդրադառնանք առաջիկա շարադրանքում:

Աթենայիս Կոմմագենացի

Ք.ա. 31 թ., ջախջախելով Անտոնիոսի ուժերին (որն ինքնասպան եղավ), Օկտավիանոսը սկսեց տնօրինել նաև հռոմեական արևելքի գործերը: Նա ապաստան տվեց Ատրպատականի՝ պարթևների կողմից գահազրկված արքա Արտավազդ

---

[163] Դեյոտարոսի կյանքի ու գործունեության մասին համապատասխան հղումներով տե՛ս **Sullivan R. D.,** նշվ. աշխ., էջ 165-169:

[164] Ըստ Հ. Մանանդյանի՝ միանգամայն հնարավոր է, որ Ք.ա. 40-38 թթ. պարթևահայկական միացյալ արշավանքների ժամանակ Փոքր Հայքը միացված լինի Մեծ Հայքին (**Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 274):

[165] Տե՛ս **Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, գիրք XLIX, 33, 1-2 (հեղինակը նույն տեղեկությունը կրկնում է գիրք XLIX, 44, 3-ում):

Ա-ին և գնահատելով անցյալում հռոմեացիներին կատարած նրա ծառայությունները՝ հռչակեց Փոքր Հայքի արքա[166], որտեղ նա իշխեց մեկ տասնամյակ (Ք.ա. 30-20 թթ.) և մահացավ գահին բնական մահով: Նշենք, որ Արտավազդ Ատրպատականցին կիսով չափ հայկական արմատներ ուներ. Նա որդին էր Ատրպատականի արքա Արիոբարզանես Ա-ի, որն էլ նախորդ արքա Միհրդատ Ա-ի և Տիգրան Մեծի դուստրերից մեկի որդին էր, այսինքն՝ Արտավազդ Ատրպատականցին Տիգրան Մեծի ծոռն էր (դստեր թոռը)[167]:

Փոքր Հայքի արքա Արտավազդ Ատրպատականցու թագուհին մեկ այլ հայկական պետության՝ Կոմմագենեի թագավորության ամենանշանավոր տիրակալ Անտիոքոս Ա Կոմմագենացու դուստրն էր՝ Աթենայիսը[168]: Նա Անտիոքոս Ա-ի ամենակրտսեր՝ հինգերորդ զավակն էր, մեծացել և կրթվել էր Կոմմագենեում: Մեզ են հասել Ք.ա. մոտ 30 թվականով թվագրվող նրանց համատեղ դրամները, որոնց մի երեսին պատկերված է Արտավազդ արքան, մյուս երեսին՝ Աթենայիս թագուհին[169]:

---

[166] Դիոն Կասսիոսի հաղորդումների համաձայն՝ Անտոնիոսն իր հետ Եգիպտոս էր տարել Արտավազդ Ա-ի դուստր Յոթապեին՝ իր և Կլեոպատրայի որդի Ալեքսանդրի հետ ամուսնացնելու նպատակով: Օկտավիանոսը վերադարձրեց Արտավազդին իր դստերը և դարձրեց նրան Փոքր Հայքի արքա (**Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, գիրք XLIX, 44, 2; գիրք LIV, 9, 2):

[167] Միհրդատ Ա-ի և Տիգրան Մեծի դստեր ամուսնության մասին վկայում է **Դիոն Կասսիոսը** (Հռոմեական պատմություն, գիրք XXXVI, 14, 2):

[168] Հարկ է նշել, որ մեզ հասած գրավոր աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել այս Աթենայիսի մասին: Նրա մասին եղած պատկերացումները ձևավորվում են պահպանված դրամների և ժամանակաշրջանի արքայատների ծննդաբանական փոխառնչությունների ուսումնասիրության արդյունքում (տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Athenais_of_Media_ Atropatene, https://ru.wikipedia.org/wiki/Афинаида_Атропатенская (դիտվել է 10.09.2020):

[169] Տե՛ս https://www.cngcoins.com/Coin.aspx?CoinID=168968 և

Նրանք ունեցան մեկ դուստր և երկու որդի: Դուստրը՝ Յոթապեն, ամուսնացավ մայրական գծով իր զարմիկ Միհրդատ Գ Կոմմագենացու հետ և դարձավ Կոմմագենեի թագուհի: Որդիներից Արիոբարզանեսը դարձավ Ատրպատականի արքա (Արիոբարզանես Բ, որը 2-4 թթ. եղավ նաև Մեծ Հայքի արքա), իսկ Դարեհը, ամուսնանալով պարթև Արշակունի արքայադստեր հետ, ունեցավ երկու որդի, որոնք հետագայում դարձան Պարթևստանի արքաներ (Արտաբան Բ և Վոնոն Բ): Աթենայիս թագուհու մասին մեր տեղեկություններն այսքան են:

Արտաշեսյան արքայադուստրը՝ Փոքր Հայքի թագուհի

Արտավազդ Ատրպատականցու մահից հետո՝ Ք.ա. 20 թ., Օգոստոս Օկտավիանոսը Փոքր Հայքի թագավոր ճանաչեց Արքեղայոս Կապադովկիացուն, որը Ք.ա. 36 թվականից թագավորում էր Կապադովկիայում[170]: Այս կարգավիճակում նա մնաց 37 տարի՝ մինչև Ք. հ. 17 թվականը, և դարձավ հռոմեա-

---

https://www.cngcoins.com/Coin.aspx?CoinID=90906 (դիտվել է 10.09.2020):

[170] *«(Հռոմ) քաղաքում այսպիսի գործեր էին կատարվում, և Օգոստոսը հպատակ երկրները կառավարում էր հռոմեական սովորույթի համաձայն, մինչդեռ դաշնակից (երկրներին) թույլ էր տալիս կառավարվել իրենց հայրենի ավանդույթների համաձայն: Եվ նա նպատակահարմար չէր գտնում ոչ այս մեկին որևէ բան ավելացնել, ոչ իսկ թույլ տալ որևէ նոր բանի տիրանալու, այլ ճշտորեն բավարարվել եղածով. իր այս կարծիքն էլ նա հաղորդեց սենատին: Այսպիսով, նա այդ ժամանակ ոչ մի պատերազմ չձեռնարկեց, բայց իրականում նա Յամբլիքոսի որդի Յամբլիքոսին տվեց նրա հայրենական իշխանությունը արաբների վրա և Տարկոնդիմոտոսի որդի Տարկոնդիմոտոսին հանձնեց Կիլիկիայի թագավորությունը, որը պատկանել էր նրա հորը, բացի ծովափնյա որոշ մասերից: Քանզի սրանք նա Փոքր Հայքի հետ միասին պարգևել էր Արքեղայոսին, քանի որ Մեդացին, որը նախապես տիրում էր այնտեղ, մահացել էր»* (**Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, գիրք LIV, 9, 1-2):

կան գերիշխանության դարաշրջանի Փոքր Հայքի ամենաերկարակյաց արքան:

Փոքր Հայքի գահին նա ունեցել է երկու թագուհի՝ Արտաշեսյան արքայադուստրը, որի անունը, ցավոք, չի պահպանվել, և Պյութոդորիսը: Ք.ա. 8 թ. մահացած Արքեղայոսի առաջին տիկնոջ ինքնության մասին սկզբնաղբյուրներում ուղղակի վկայություններ չկան: Սակայն հայտնի է, որ Արքեղայոսի և նրա առաջին տիկնոջ դուստր Գլափյուրայի որդին էր Տիգրան Ե-ն, որին Օգոստոս Օկտավիանոսը Մեծ Հայքի գահ բարձրացրեց՝ շեշտելով նրա ծագումը «Հայոց արքունի տոհմից»: Քանի որ հայտնի է, որ նա հայրական գծով Հրեաստանի արքա Հերովդես Մեծի թոռն էր, ուսումնասիրողներն իրավացիորեն եզրակացրել են, որ Տիգրան Ե-ն մայրական գծով սերվում էր Մեծ Հայքի արքայատնից, որի ներկայացուցիչ արքայադուստրը Արքելայոսի առաջին կինն էր[171]:

Արտաշեսյան այս արքայադուստրը Փոքր Հայքում իշխեց Ք.ա. 20-8 թթ. ընթացքում:

Պյութոդորիս Պոնտացի

Փոքր Ասիայի նշանավոր կին առաջնորդներից Պյութոդորիսը մինչ օրս մեզ հայտնի գրականության մեջ չի ներկայացվել որպես Փոքր Հայքի թագուհի: Նա հայագիտությանը հայտնի է որպես Պոնտոսի արքա Պոլեմոն Ա-ի կինը, Մեծ Հայքի

---

[171] Այդ մասին վկայում են Օգոստոս Օկտովիանոսի գործերի մասին պատմող «Անկյուրայի կոթողը», **Հովսեպոս Փլավիոսի** «Հրեական հնախոսություն» երկը (գիրք XVIII, 139-140), տե՛ս ՀԺՊՔ, էջ 402-404; հմմտ. **Syme R.,** Anatolica: Studies in Strabo, Oxford, 1995, էջ 150:

արքա Զենոն-Արտաշեսի մայրը և Փոքր Հայքի արքա Կոտիսի տատը: Խնդիրն այն է, որ մեզ հասած որևէ սկզբնաղբյուրում նա չի կոչվում Փոքր Հայքի թագուհի, ինչը, սակայն, կարելի է պարզաբանել փաստերի պարզ համադրման պարագայում:

Պյութոդորիսի մասին մեր գլխավոր սկզբնաղբյուրը Ստրաբոնի «Աշխարհագրություն» կոթողային աշխատությունն է: Ստրաբոնը, անձամբ ճանաչելով Պյութոդորիսին, մեծ հիացմունքով է գրում նրա մասին: Մեջբերենք նրա մասին Ստրաբոնի պահպանած հիմնական տեղեկությունները. *«Փոքր Հայքում տարբեր ժամանակ հռոմեացիների կամքով իշխել են տարբեր իշխողներ. վերջին ժամանակներս այն գտնվում էր Արքեղայոսի իշխանության ներքո: Իսկ տիբարենների և խաղտեացիների վրա մինչև Կողքիս, Փառնակիա և Տրապիզոն այժմ իշխում է Պյութոդորիսը, որն իմաստուն և վարչական կարողությամբ գերազանց մի կին է: Նա Պյութոդորոս Տրալլիացու դուստրն է, եղել է Պոլեմոնի կինը և մի ժամանակ թագավորել է նրա հետ, հետո ժառանգեց իշխանությունը, երբ Պոլեմոնը մեռավ Սինդիկե երկրի ասպուրգյան կոչված բարբարոսների մոտ: Պոլեմոնից նա ուներ երկու որդի և մի աղջիկ, որոնցից անդրանիկն իշխում է այժմ, Պյութոդորոսի երկու որդիներից մեկը սոսկական անհատ է, օգնում է մորը իշխանության մեջ, իսկ մյուսը վերջերս եղավ Մեծ Հայաստանի թագավոր: Ինքը [Պյութոդորիսը երկրորդ անգամ] ամուսնացավ Արքեղայոսի հետ, ապրեց նրա հետ մինչև նրա կյանքի վերջը, այժմ դարձյալ այրիացած, և իշխում է ոչ միայն հիշյալ երկրնե-*

րի, այլ և ուրիշ լավագույն երկրների վրա, որոնց մասին պիտի խոսենք այժմ»[172]:

Պոնտոսի արքա Պոլեմոն Ա-ն նախ ամուսնանում է Դինամիսի հետ, որի մահվանից հետո՝ Ք.ա. մոտ 14 թ., նա կնության է վերցնում Պյութոդորիսին: Վերջինս դառնում է Պոնտոսի թագուհին՝ ամուսնու հետ իշխելով մինչև նրա մահը՝ Ք.ա. 8 թվականը, որից հետո դառնում է Պոնտոսի միանձնյա թագուհի: Դրանից հինգ տարի անց քաղաքական իրադարձությունները Հռոմեական կայսրության արևելքում ունեցան նոր զարգացումներ: Հռոմին ցանկալի էր արևելքում ստեղծել հնարավորինս մեծ քաղաքական միավորներ, որոնք կարտահայտեին հռոմեամետ շահեր: Եվ ահա Ք.ա. 3 թ. Օգոստոս Օկտավիանոսը համաձայնվում է թագ ուղարկել Պյութոդորիսին, եթե վերջինս ամուսնանա Կապադովկիայի արքա Արքեղայոսի հետ, որը Հռոմի ամենահավատարիմ գործիչներից էր:

Արքեղայոսը, ինչպես նշվել է, Ք.ա. 36 թ. Մարկոս Անտոնիոսի շնորհիվ գահ էր բարձրացել Կապադովկիայում և թագավորության առաջին տարիներին կնության առել Մեծ Հայքի արքայադստերը, որի անունը չի պահպանվել: Ք.ա. 20 թվականից Արքեղայոսը ստացավ նաև Փոքր Հայքի գահը, և Փոքր Հայքի թագուհի դարձավ Արտաշեսյան անանուն արքայադուստրը (որը, հավանաբար, եղել է Արտավազդ Բ-ի դուստրը և Տիգրան Մեծի թոռնուհին): Վերջինս մահացավ Ք.ա. 8 թվականին: Ք.ա. 3 թ. Պյութոդորիսը, ամուսնանալով Կապադով-

---

[172] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, գիրք XII, գլուխ III, 29: Ստրաբոնը Պյութոդորիսին հիշատակում է ևս մի քանի անգամ (գիրք XI, գլուխ II, 18; գիրք XII, գլուխ III, 31 և 37; գիրք XIV, գլուխ I, 42), որոնք մեզ հետաքրքրող նյութին նորություն չեն ավելացնում:

կիայի և Փոքր Հայքի արքա Արքեղայոսի հետ, դարձավ նաև այդ պետությունների թագուհին: Պյութոդորիսն Արքեղայոս արքայի հետ ապրեց 20 տարի՝ մինչև նրա կյանքի վերջը (Ք.ա. 3- Ք. հ. 17 թթ.): Արքեղայոսի մահից հետո (երկրորդ անգամ այրիանալով) նա վերադարձավ Պոնտոս և այնտեղ իշխեց մինչև իր մահը (38 թ.)[173]:

Պյութոդորիսի՝ Փոքր Հայքի թագուհի լինելու փաստի անուշադրության մատնվելը կարող է բացատրվել հետևյալ հանգամանքով: Բանն այն է, որ այդ ամուսնությամբ Հռոմեական կայսրության արևելքում ստեղծվեց մի բավականին մեծ քաղաքական միավոր, որի մեջ կենտրոնական դերակատարումը պատկանում էր Կապադովկիային ու Պոնտոսին, իսկ Փոքր Հայքը մնացել էր երկրորդ պլանում:

Սալոմե

17 թ. Հռոմը վերացրեց Փոքր Հայքի, Կապադովկիայի, Կիլիկիայի և Կոմմագենեի թագավորությունները՝ դրանք վերածելով հռոմեական նահանգների: Այդ իրավիճակը շարունակվեց մինչև 38 թվականը, երբ Կալիգուլա կայսեր հրամանով վերականգնվեցին 17 թ. լուծարված թագավորությունները: Փոքր Հայքի գահը ստացավ Կալիգուլայի մտերիմ անձնավորություններից մեկը՝ Կոտիսը, ինչի մասին վկայում են Դիոն

---

[173] Պյութոդորիսի կյանքի ու գործունեության մասին համապատասխան հղումներով տե՛ս **Орешников А. В.,** Об эре на монетах Пифодориды, царицы Понта, М., 1885, էջ 3-24; **Сапрыкин С. Ю.,** Женщины-правительницы Понтийского и Боспорского царств (Динамия, Пифодорида, Антония Трифена), Женщина в античном мире (Сб. статей), М., 1995, էջ 193-200:

Կասսիոսը[174], Հովսեպոս Փլավիոսը[175] և Տակիտոսը[176]: Կոտիսը մայրական գծով Պոլեմոն Ա-ի և Պյութոդորիսի թոռն էր, նրանց դուստր Անտոնիա Տրիփոնայի որդին, Մեծ Հայքի արքա Զենոն-Արտաշեսի քրոջ որդին: Կոտիսը Փոքր Հայքի գահին իշխեց հավանաբար մինչև 54 թվականը[177]: Սկզբնաղբյուրներում, ցավոք, չի պահպանվել նրա թագուհու անունը:

Փոքր Հայքի վերջին արքան եղավ Արիստոբուլոսը, որը 52 թվականից Քաղկիսի թագավորն էր: 54 թ. Ներոն կայսեր հրամանով նա դարձավ նաև Փոքր Հայքի արքա: Հովսեպոս Փլավիոսի հաղորդման համաձայն՝ *«Ներոնի իշխանության առաջին տարում, երբ Եմեսայի դինաստ Ազիզոսը մահացավ, իշխանությունը ժառանգեց նրա եղբայր Սոեմոսը, իսկ Փոքր Հայքի իշխանությունը Ներոնը հանձնեց Քաղկիսի Հերովդես թագավորի որդի Արիստոբուլոսին»*[178]: Արիստոբուլոսի մասին

---

[174] Տե՛ս **Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, գիրք LIX, 12, 2:

[175] Տե՛ս **Հովսեպոս Փլավիոս**, Հրեական հնախոսություն, գիրք XIX, 338:

[176] Տե՛ս **Տակիտոս,** Տարեգրություններ, գիրք XI, 9:

[177] Տե՛ս **Magie D.,** Roman rule in Asia Minor: To the end of the third century after Christ, Vol. I, Princeton, New Jersey, 1950, էջ 554; ՀԺՊ, հ. I, էջ 735 (բաժնի հեղինակ՝ Ս. Տ. Երեմյան); **Schottky M.,** Klein-Armenien, Herrscherchronologien der antiken Welt: Namen, Daten, Dynastien (Hrsg. W. Eder, J. Renger), DND Suppl. I, Stuttgart-Weimar, 2004, էջ 95; **Marek Ch.,** Geschichte Klaeinasien in der Antike, München, 2010, էջ 815 և այլն:

[178] **Հովսեպոս Փլավիոս**, Հրեական հնախոսություն, գիրք XX, 158: Արիստոբուլոսի մասին Հովսեպոս Փլավիոսը հիշատակում է մեկ այլ աշխատանքում ևս. «Այսպիսով, Փոքր Հայքի թագավորությունը (Ներոնը) տալիս է Հերովդեսի որդի Արիստոբուլոսին, իսկ Ագրիպպասի թագավորությանը ավելացնում է ևս չորս քաղաք՝ Արբելան, Յուլիասը՝ Պերեայում, Տարիքեյան և Գալիլեայի Տիբերիասը՝ իրենց շրջաններով, իսկ Փելիքսին նշանակում է մնացյալ Հրեաստանի պրոկուրատոր» (Հրեական պատերազմի մասին, գիրք II, 252):

կարևոր տեղեկություններ է հայտնում նաև Տակիտոսը[179]: Ուսումնասիրողները մեծ հավանականությամբ գտնում են, որ Արիստոբուլոսն իշխել է մինչև 72 թվականը[180], երբ Հռոմի Վեսպասիանոս կայսեր որոշմամբ վերացվեցին Կոմմագենեի, Փոքր Հայքի ու Պոլեմոնական Պոնտոսի թագավորությունները, իսկ դրանց տարածքները միացվեցին հռոմեական Կապադովկիա պրովինցիային:

Արիստոբուլոսը 34 թ. ամուսնացավ Սալոմեի հետ, որն Աստվածաշնչից հայտնի է՝ կապված Հովհաննես Մկրտչի գլխատման պատմության հետ: Նոր կտակարանի երկու գրքերի համաձայն՝ Հերովդեսի ծննդյան օրը Սալոմեի պարն այնքան է հիացնում արքային, որ նա խոստանում է կատարել աղջկա ցանկացած խնդրանք: Սալոմեի մայրը՝ Հերովդիան, ապօրինի հարաբերություններ ուներ իր ամուսնու եղբոր հետ, ինչի համար Հովհաննես Մկրտիչը հրապարակավ քննադատում և կշտամբում էր նրան: Եվ Սալոմեն մոր դրդումով Հերովդեսից խնդրում է Հովհաննես Մկրտչի գլուխը, և նա գլխատվում է[181]:

Նոր կտակարանում աղջկա անունը չի հիշատակվում: Այն մենք իմանում ենք Հովսեպոս Փլավիոսի «Հրեական հնախոսության» էջերից, որը Հովհաննես Մկրտչի սպանությունը կապում է ոչ թե Սալոմեի պարի հետ, այլ բացատրում է քա-

---

[179] Տե՛ս **Տակիտոս,** Տարեգրություններ, գիրք XIII, 7; գիրք XIV, 26:

[180] Տե՛ս **Magie D.,** նշվ. աշխ., էջ 572-574, 1435, ծնթ. 21; **Schottky M.,** նշվ. աշխ., էջ 95; **Marek Ch.,** նշվ. աշխ., էջ 815: «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակի ամփոփիչ ժամանակագրության բաժնում ևս այս թվականն է համարվում Փոքր Հայքի թագավորության վերացման տարի (ՀԺՊ, հ. I, էջ 721-726):

[181] Ավետարան ըստ Մատթեոսի, 14, 3-11; Ավետարան ըստ Մարկոսի, 6, 17-29:

ղաքական դրդապատճառներով: Նույն հեղինակից տեղեկանում ենք, որ Սալոմեն նախ ամուսնացած է եղել իր հորեղբոր՝ չորրորդապետ Հերովդես Փիլիպպոս Բ-ի հետ, որի մահվանից հետո ամուսնացել է Արիստոբուլոսի հետ և նրանից ունեցել երեք որդի (Հերովդես, Ագրիպաս և Արիստոբուլոս)[182]:

Սալոմեն, որ 34 թվականից Արիստոբուլոսի կինն էր, իսկ 52 թ.՝ Քաղկիսի (Քաղկիդիկայի) թագուհին, 54 թ. դարձավ նաև Փոքր Հայքի թագուհի: Ցավոք, մեզ հայտնի չէ, թե ինչ գործունեություն է ծավալել նա՝ որպես Փոքր Հայքի գերագույն տիրուհի: Մեզ են հասել Արիստոբուլոսի և Սալոմեի 56-57 թվականներով թվագրվող համատեղ դրամները, որոնց երկու կողմերում առկա են նրանց պատկերներն ու մակագրություններ՝ «Արիստոբուլոս արքայի» և «Սալոմե թագուհու»[183]:

Թե քանի տարի է ապրել և մինչև որ թվականն է իշխել Սալոմեն Փոքր Հայքի գահին, հայտնի չէ: Արիստոբուլոսը 72 թ. Փոքր Հայքի գահից զրկվելուց հետո շարունակեց իշխել Քաղկիսի գահին ևս 20 տարի՝ մինչև իր մահը:

* * *

Այսպիսին են այսօր առկա տեղեկությունները Փոքր Հայքի թագուհիների մասին: Ամփոփելով մեր համառոտ ուսումնասիրությունը՝ ցանկանում ենք հույս հայտնել, որ այն կնպաստի ինչպես հայոց թագուհիների, այնպես էլ հայկական կրտսեր թագավորությունների պատմության հետագա ու-

---

[182] Տե՛ս **Հովսեպոս Փլավիոս**, Հրեական հնախոսություն, գիրք XVIII, 5, 4:

[183] Տե՛ս **Wacks M.,** The Handbook of Biblical Numismatics, # 37 (http://www.amuseum.org/book/page11.html), տե՛ս նաև https://www.jewishvirtuallibrary.org/the-coins-of-herod-rsquo-s-grandchildren:

սումնասիրությանը: Իսկ այսօր հնարավոր է վերականգնել Փոքր Հայքի թագուհիների հետևյալ ցանկը.

Լաոդիկե – Ք.ա. 112 - մոտ 105 թթ. (Միհրդատ Եվպատորի կին),

Մոնիմե – Ք.ա. 88-71 թթ. (Միհրդատ Եվպատորի կին),

Ադոբոգիոնա Գալաթացի – Ք.ա. 64-52 թթ. (Բրոգիտարոս Գալաթացու կին),

Բերենիկե Պերգամոնցի – Ք.ա. 52-47 և 44-42 (Դեյոտարոս Գալաթացու կին),

Աթենայիս Կոմմագենացի – Ք.ա. 30-20 թթ. (Արտավազդ Ատրպատականցու կին),

Արտաշեսյան արքայադուստր – Ք.ա. 20-8 թթ. միջակայք (Արքեղայոս Կապադովկիացու կին),

Պյութոդորիս – Ք.ա. 3-Ք.հ. 17 թթ. (Արքեղայոս Կապադովկիացու կին),

Սալոմե – 54-(?) (Արիստոբուլոս Քաղկիդիկացու կին):

ЦАРИЦЫ МАЛОЙ АРМЕНИИ

Второе по величине армянское царство эллинистического периода - Малая Армения, просуществовало около 400 лет (331 г. до р. Хр. - 72 г. н.э.). На основе исследования первоисточников в статье восстановлен полный список известных на сегодняшний день цариц, который выглядит следующим образом:

Лаодике – 112 - около 105 гг. до р. Хр. (жена Митридата Евпатора),

Мониме – 88-71 гг. до р. Хр. (жена Митридата Евпатора),

Адобогиона из Галатии – 64-52 гг. до р. Хр. (жена Брогитара из Галатии),

Беренике из Пергама – 52-47 и 44-42 гг. до р. Хр. (жена Дейотара из Галатии),

Афинаида из Коммагены – 30-20 гг. до р. Хр. (жена Артавазда из Атропатены),

Арташесидская царевна – между 20-8 гг. до р. Хр. (жена Архелая),

Пифадорида – 3 г. до р. Хр. - 17 г. н.э. (жена Архелая из Каппадокии),

Саломея – 54 - (?) гг. н.э. (жена Аристовула из Халкиды).

QUEENS OF LESSER ARMENIA (ARMENIA MINOR)

The second largest Armenian kingdom of the Hellenistic period - Lesser Armenia (Armenia Minor), existed for about 400 years (331 BC - 72 AD). Based on the study of the primary sources, the article reconstructs a complete list of queens known up to date, which is as follows:

Laodice – 112 - c. 105 BC (wife of Mithridates Eupator),

Monime – 88-71 BC (wife of Mithridates Eupator),

Adobogiona of Galatia – 64-52 BC (the wife of Brogitarus of Galatia),

Berenice of Pergamon – 52-47 and 44-42 BC (wife of Deiotarus of Galatia),

Athenais of Commagene – 30-20 BC (wife of Artavasdes of Atropatene),

Artashesid princess – between 20-8 BC (wife of Archelaus of Cappadocia),

Pythodoris – 3 BC - 17 AD (wife of Archelaus of Cappadocia),

Salome – 54 - (?) AD (wife of Aristobulus of Chalcis).

ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հելլենիստական դարաշրջանի հայկական կրտսեր թագավորությունների հետազոտությունը հայագիտության քիչ ուսումնասիրված բնագավառներից է: Քիչ ուսումնասիրված և բազմաթիվ հարցերում բանավիճային են մնում Ծոփքի թագավորության պատմության բազմաթիվ խնդիրներ: Մասնագիտական գրականության մեջ անգամ հստակություն չկա թագավորության սկզբնավորման ու անկման թվականների, տարածքային ընդգրկման խնդիրներում: Ներկայացվող հրապարակմամբ կփորձենք որոշակի լուսաբանում մտցնել նշված հարցերում:

Ուսումնասիրողների շրջանում որպես Ծոփքի թագավորության սկզբնավորման ժամանակաշրջան կամ տարեթիվ կարելի է հանդիպել իրարից զգալիորեն տարբերվող մի քանի թվականներ՝

ա) Ք.ա. 331 թ.՝ Գավգամելայի ճակատամարտից անմիջապես հետո[184],

---

[184] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.,** Պատմական անցեալը Ծոփաց աշխարհին, տե՛ս Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը. Յուշամատեան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական (աշխատասիրեց եւ կազմեց Վահէ Հայկ), Նիւ Եորք, 1959, էջ 224-231; **Կրկյաշարյան Ս. Մ.,** Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 105-108; **Schottky M.,** Media Atropatena und Gross-Armenien in hellenistischer Zeit, Bonn, 1989, էջ 85-96, 241-242 (հեղինակը Ծոփքի թագավորությունն անվանում է Արևմտահայկական, իսկ Մեծ Հայքինը՝ Արևելահայկական): Այդ տեսակետը տեղ է գտել նաև հայերեն Վիքիպեդիայի «Ծոփքի թագավորություն» հոդվածում (https://hy.wikipedia.org/wiki/Ծոփքի_թագավորություն, դիտվել է 10.08.2020):

բ) Ք.ա. մոտ 270-250-ական թթ. կամ Ք.ա. III դարի առաջին կեսին՝ Սամոս (Շամ) արքայի գահակալությամբ[185], ընդ որում՝ այս խմբի մեջ են մտնում Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության տեսության բոլոր կողմնակիցները[186],

---

[185] Տե՛ս **Тирацян Г.,** Страна Коммагена и Армения, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, N 3, էջ 71-74; ՀԺՊ, հ. I, էջ 512-513 (բաժնի հեղինակ՝ Գ. Ա. Տիրացյան), 922; **Տիրացյան Գ. Ա.,** Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. վերջ - մ.թ.ա. III դ. վերջ), ՊԲՀ, 1981, N 2, էջ 83-84; **Սարգսյան Գ. Խ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 124-125; **Սարգսյան Գ.,** Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N 1, էջ 43; **Հարությունյան Բ.,** «Ծոփք» և «Ծոփքի թագավորություն» հոդվածները, տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 139-141; **Էլչիբեկյան Ժ. Գ.,** Հայաստանը և Սելևկյանները, Երևան, 1979, էջ 39-40; **Bedoukian P. Z.,** Coinage of the Armenian Kingdoms of Sophene and Commagene, Armenian Numismatic Society, Special Publ. No. 4, Los Angeles, 1985, էջ 8-10, 20-23; **Nersessian Y. T.,** Armenian Coins and Their Values, Armenian Numismatic Society, Special Publ. No. 8, Los Angeles, 1995, էջ 47; **Մուշեղյան Խ.,** Հայոց պատմության դրամագիտականը, Երևան, 1997, էջ 14; ՀԺՊՔ, էջ 521 (բաժնի հեղինակ՝ Պ. Հովհաննիսյան); **Մարգարյան Ե.,** Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմագենե, Հայաստան, Հռոմ, Երևան, 2014, էջ 33-35; **Kovacs F. L.,** Armenian Coinage in the Classical Period, Classical Numismatic Studies, No 10, London, 2016, էջ 1; **Marciak M.,** Sophene, Gordyene, and Adiabene: Three Regna Minora of Northern Mesopotamia Between East and West, Leiden-Boston, 2017, էջ 113-116, 154; **Վարդանյան Ռ.,** Դրամաթողարկումը Հայաստանում հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջաններում, տե՛ս Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը (ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, 2018) գրքում, էջ 32-33 և այլն:

[186] XX դարի երկրորդ կեսին խորհրդահայ պատմագրության մեջ (Գևորգ Տիրացյան, Գագիկ Սարգսյան, Բաբկեն Հարությունյան և ուրիշներ) առաջ քաշվեց և զարգացվեց մի տեսություն, ըստ որի՝ Ք.ա. III դարի առաջին կեսին Մեծ Հայքից անջատվել և առանձին թագավորություն են կազմել Ծոփքն ու Կոմմագենեն: Ըստ նույն տեսության՝ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորությունը Ք.ա. 220-210 թթ. ընթացքում պառակտվել է՝ բաժանվելով երկու անկախ թագավորությունների, որոնք շուտով նվաճվեցին Սելևկյանների կողմից (տե՛ս ստորև):

գ) Ք.ա. 240-230-ական թթ., ինչը, ըստ որոշ ուսումնասիրողների, Արշամ (Արսամես) արքայի գահակալության սկիզբն է[187],

դ) նախքան Ք.ա. 220 թվականը, երբ իշխում էր Քարասպեսը[188],

ե) Ք.ա. 220 թվականից մինչև 212 թվականը, երբ Քսերքսեսը, ըստ որոշ ուսումնասիրողների, Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության պառակտումից հետո դարձել է Ծոփքի առանձին պետության հիմնադիր-արքան[189],

զ) Ք.ա. 190 կամ 189 թ., երբ Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյանների պարտությունից հետո Զարեհը Ծոփքում

---

[187] Տե՛ս **Langlois V.,** Numismatique de l'Arménie dans l'antiquité, Paris, 1869, էջ 6-19; Աստուրեան Հ. Յ., Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն.Ք. մինչև 428 յ.Ք, Վենետիկ, 1912, էջ 12; **Ատրպետ,** Հայ թագաւորների դրամները. Յետ Աղէքսանդրեան շրջան, «Ազգագրական հանդէս», գիրք XXIII, 1913, N 2, էջ 29; **Sandalgian J.,** Histoire documentaire de l'Arménie des âges du Paganism (1410 av. -305 apr. J.-C.), t. II, Rome, 1917, էջ 414-418; **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 111-113; **Մուշեղյան Խ.,** Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983, էջ 38-43, 67-70:

[188] Տե՛ս **Բասմաջեան Կ.,** Հայկական ընդհանուր դրամագիտութիւն եւ Հայաստանի վերաբերեալ դրամներ, Վենետիկ, 1936, էջ 25-27, որտեղ պետության հիմնադիր համարվող Քարասպեսի գահաժամկետ են նշվում Ք.ա. 260-240(?) թվականները; **Babelon E.,** Les rois de Syrie, d'Armenie et de Commagène, Paris, 1890, էջ CXCII, CC, կատալոգի էջ 211, 229, աղ. XXIX, նկ. 1: Է. Բաբելոնի գահացանկը, որում Քարասպեսը ներկայացվում է որպես «անհայտ թագավոր», նախորդում է Արշամին, որը թվագրվում է Ք.ա. 230 թվականով: Է. Բաբելոնի գահացանկը հետագայում նույնությամբ իր աշխատանքում մեջբերում է Լեոն (**Լեո,** Երկեր, հ. 1, 1966, էջ 291-292. Քարասպեսի անունը Լեոյի մոտ Շարասպես է): Ատրպետը, հետևելով Է. Բաբելոնին, Արշամից առաջ Հայաստանի գահակալների ցանկում է դնում Հարասպեսին (Քարասպես)՝ թվագրելով վերջինիս Ք.ա. 316 թվականով (**Ատրպետ,** նշվ. աշխ., էջ 28):

[189] Տե՛ս **Սարգսյան Գ.,** Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N 1, էջ 43-44; **Հարությունյան Բ.,** Ծոփքի թագավորություն, էջ 140-141:

(իսկ Արտաշեսը՝ Մեծ Հայքում) հռչակեց անկախ թագավորություն[190]:

Տեսակետների բազմազանություն կա նաև Ծոփքի թագավորության պատմության ավարտի թվականի հարցում: Այստեղ ունենք ուսումնասիրողների կարծիքների հետևյալ պատկերը՝

ա) Ք.ա. 94 կամ 93 թ.[191],

բ) Ք.ա. 90 թ.[192],

գ) Ք.ա. 85 թ.[193],

---

[190] Տե՛ս **Blau O.,** Die Herren von Sophene und deren Münzen, "Numismatische Zeitschrift", Neunter Band, Wien, 1877, էջ 108-114; **Reinach Th.,** Mithridate Eupator, roi de Pont, Paris, 1890, էջ 103; **Գարագաշեան Ա. Մ.,** Քննական պատմութիւն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 130-132; **Ադոնց Ն.,** Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 445-446; **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History, Washington, 1963, էջ 282, 290-294; **Մութաֆյան Կ. Ա., Լով Է. Վ.,** Հայաստանի պատմական ատլաս. Մերձավոր Արևելքը և Հարավային Կովկասը մ.թ.ա. VII դարից մինչև XXI դար, Երևան, 2017, էջ 26-27:

[191] Այսինքն՝ այն ժամանակ, երբ Տիգրան Բ Մեծը, պարտության մատնելով Զարեհի ժառանգներից Արտանեսին, Ծոփքը վերամիավորեց Մեծ Հայքին (**Reinach Th.,** նշվ. աշխ., էջ 104-105: **Գարագաշեան Ա. Մ.,** նշվ. աշխ., էջ 130-132; **Բասմաջեան Կ.,** նշվ. աշխ., էջ 26; **Ալպոյաճեան Ա.,** նշվ. աշխ., էջ 230-231; **Կրկյաշարյան Ս. Մ.,** նշվ. աշխ., էջ 106; **Schottky M.,** նշվ. աշխ., էջ 241-243; **Մարգարյան Ե.,** նշվ. աշխ., էջ 44):

[192] Ստրաբոնի հիշատակած Ծոփքի արքա Արտանեսը Ստեփան Բյուզանդացու երկում կոչվում է «Արսակես», այսինքն՝ Արշակ (տե՛ս Stephani Byzantii, Ethnica, Vol. IV, Berlin, 2016, էջ 244-245): Օ. Բլաուն և Է. Բաբելոնը, կիրառելով XIX դարավերջին ընդունված խորենացիական ժամանակագրական համակարգը, այս Արշակին թվագրում են Ք.ա. 74-70 թվականներով (տե՛ս ստորև): Զարեհ Պտուկյանը առանձնացնում է Արտանեսին և Արշակին՝ Արտանեսին թվագրելով Ք.ա. 110, իսկ Արշակին՝ Ք.ա. մոտ 90 թվականով (**Bedoukian P. Z.,** նշվ. աշխ., էջ 15, 28; հմմտ. **Մուշեղյան Խ.,** Հայոց պատմության դրամագիտականը, էջ 14):

[193] Մինչև այդ թվականը, ըստ Ֆ. Կովաչի և Ռ. Վարդանյանի, տևել է պոնտական դրաձո արքաների իշխանությունը Ծոփքում (**Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 4-6; **Վարդանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 35-36): Անհասկանալի է Ռ. Վարդանյանի

դ) Ք.ա. 72 կամ 70 թ.[194],

ե) Ք.ա. 69 թ.[195],

զ) 54-60/63 թթ., երբ Ներոն կայսրը Եմեսիայի արքա Սոհեմոսին ճանաչեց նաև Ծոփքի արքա[196]:

* * *

Այժմ քննարկենք վերոհիշյալ տեսակետներն ու դրանց հիմք ծառայած փաստարկները: Նախ անդրադառնանք Ծոփքի թագավորության սկզբնավորման առթիվ եղած տեսակետներին:

ա) Սկզբնաղբյուրներում Ք.ա. 331 թ. կամ Ք.ա. IV դարին վերաբերող որևէ հիշատակություն չկա Ծոփքի առանձին կամ

կողմից ընդունվող Ֆ. Կովաչի տեսակետը մինչև Ք.ա. 85 թվականը Ծոփքի արքաների դրամահատության մասին այն դեպքում, երբ հենց ինքն է նշում, որ Տիգրան Մեծը Ք.ա. 94 կամ 93 թ. Արտանեսին «հեռացրեց գահից և տիրեց երկրին» (էջ 36):

[194] Տե՛ս **Blau O.,** նշվ. աշխ., էջ 112-114; Babelon E., նշվ. աշխ., էջ CXCIII (հմմտ. **Լեռ,** նշվ. աշխ., էջ 291-292): Ե. Ներսիսյանը Զարեհ Պտուկյանի նման առանձնացնում է Արտանեսին և Արշակին՝ Արտանեսին թվագրելով Ք.ա. 110 թվականով, իսկ Արշակին հասցնելով մինչև Ք.ա. 70 թվականը (**Nersessian Y. T.,** նշվ. աշխ., էջ 53): Երկու հեղինակների մոտ տեղ գտած միտքը, թե իբր Տիգրան Մեծը, գրավելով Ծոփքը, այնտեղ կառավարիչ է նշանակել Արշակին, չի համապատասխանում իրականությանը:

[195] Ըստ Կ. Թումանովի՝ Ծոփքի վերջին անկախ արքան էր Արտանեսը, որին նա համարում է «Օրոնտես Ե»: Ք.ա. 69 թ. հիշատակվող Մեհրուժանին (Միթրոբուզանեսին, որը Լուկուլլոսի դեմ երեքհազարանոց բանակով ճակատամարտ տվեց և զոհվեց), Կ. Թումանովը համարում է Ծոփքի փոխարքա (**Toumanoff C.,** նշվ. աշխ., էջ 282, 293-294): Մեհրուժանին Զարեհի ժառանգ և Արտանեսի հաջորդ է համարում նաև Ն. Ադոնցը (**Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 476):

[196] Տե՛ս **Աստուրեան Հ. Ց.,** նշվ. աշխ., էջ 169, 215; **Sandalgian J.,** նշվ. աշխ., էջ 517-518; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 321; **Հարությունյան Բ.,** Ծոփքի թագավորություն, էջ 140-141; **Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 7; **Marciak M.,** նշվ. աշխ., էջ 134-135, 156:

Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության մասին, ավելին՝ որևէ առիթով այդ երկրամասերը չեն հիշատակվում: Գավգամելայի ճակատամարտում հիշատակվում են հայկական երկու երկրամասերի՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի զորքերը՝ համապատասխանաբար Օրոնտես-Երվանդ Գ-ի ու Միթրաուստեսի (Միհրվահիշտ) առաջնորդությամբ[197], որոնք էլ որոշ ժամանակ անց անկախ հռչակեցին հիշյալ հայկական պետությունները: Հետևաբար, լիովին մերժելի են Ք.ա. IV դարում Ծոփքի առանձին կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության մասին տեսակետները:

բ) Նույնպիսի իրավիճակի հետ գործ ունենք այս պարագայում նս. Ք.ա. III դարի առաջին կեսին (ինչպես և ողջ հարյուրամյակում) որևէ սկզբնաղբյուրում չի հիշատակվում Ծոփքի առանձին կամ Ծոփքի և Կոմմագենեի միացյալ թագավորություն, որի հիմնադիրը եղած լինի Սամոս (Շամ) արքան: Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գաղափարը հայագիտության մեջ հայտնվել է միայն XX դարի կեսին Գևորգ Տիրացյանի շնորհիվ, և այն ընդունվել ու ամրապնդվել է խորհրդահայ պատմաբանների միջավայրում (Գագիկ Սարգսյան, Բաբկեն Հարությունյան և ուրիշներ)[198]: Սակայն

---

[197] Իսսոսի և Գավգամելայի ճակատամարտերին հայերի մասնակցության մասին տե՛ս **Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս**, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, գիրք III, II, 4-6; XII, 10, 12-13; գիրք IV, XVI, 1-6; **Արրիանոս Փլավիոս,** Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, III, 5-6; XI, 7; նաև՝ **Օհանյան Մ.,** Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003, էջ 21-62:

[198] Տե՛ս **Тирацян Г.,** նշվ. աշխ., էջ 69-74; **Սարգսյան Գ. Խ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 118-119, 123-125; Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N 1, էջ 41-69; ՀԺՊ, հ. I, էջ 512-516 (բաժնի

դա եղել է տեսական վարկած՝ նպատակ ունենալով վերականգնել սկզբնաղբյուրների տեղեկությունների սակավությունից առաջացած բացը: Սամոս (Շամ) արքան որևէ պատմիչի երկում չի հիշատակվում: Նա վկայված է Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրում Անտիոքոս Ա Կոմմագենացու հայրական նախնիների շարքում՝ Հայաստանի սատրապ Արոանդես-Երվանդ Բ-ից և Ք.ա. 331 թ. Մեծ Հայքն անկախացրած Արոանդես-Երվանդ Գ արքայից հետո և Արսամես (Արշամ) արքայից առաջ: Ընդ որում՝ նա ներկայացված է միայն «արքա» տիտղոսով՝ առանց երկրի մատնանշման (մյուսների պարագայում ևս այդպես է)[199]: Քանի որ Սամոսատ քաղաքը հիշատակվում է դեռևս Ք.ա. 245 թ., ուսումնասիրողները եզրակացրել են, որ այս քաղաքի կառուցողը պետք է եղած լինի Սամոս (Շամ) արքան[200]: Այսինքն՝ ակնհայտ է, որ չկա որևէ փաստարկ, ինչի հիմամբ կարելի է Սամոս (Շամ) արքային համա-

---

հեղինակ՝ Գ. Ա. Տիրացյան), 52 1-522 (բաժնի հեղինակ՝ Գ. Խ. Սարգսյան); «Ծոփք» և «Կոմմագենե» հոդվածները՝ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 139-141 (հեղինակ՝ Բ. Հարությունյան), 543-544 (հեղինակ՝ Գ. Տիրացյան); **Տիրացյան Գ. Ա.,** Երվանդյան Հայաստանի տարածքը, էջ 83-84 և այլն:

[199] Տե՛ս **Hümann K., Puschtein O.,** Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 286, 308-309; **Тирацян Г.,** նշվ. աշխ., էջ 71-74; **Toumanoff C.,** նշվ. աշխ., էջ 280-283:

[200] Տե՛ս, օրինակ, **Toumanoff C.,** նշվ. աշխ., էջ 280-281; ՀԺՊ, հ. I, էջ 512 (բաժնի հեղինակ՝ Գ. Ա. Տիրացյան); **Մութաֆյան Կ. Ա., Լով Է. Վ.,** էջ 24 և այլն: Վաղբյուզանդական աղբյուրներում Ծոփքում հիշատակվում է Սամոկերտ բնակավայրը, որը ևս հավանաբար հիմնել է Սամոսը Ք.ա. III դարում: Մեզ են հասել Սամոսի անունը կրող արքայական դրամներ, սակայն ուսումնասիրողների շրջանում կա բանավեճ՝ արդյոք դրանք պետք է համարել Ք.ա. III դարում իշխած արքայինը, թե Ք.ա. II դարի երկրորդ կեսին հիշվող Սամոս Բ Թեոսեբեոսինը (քննարկումը տե՛ս **Մուշեղյան Խ. Ա.,** Դրամական շրջանառությունը Հայաստանում, էջ 38-43; **Վարդանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 33 և այլն):

րել Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության հիմնադիր կամ այդ երկրամաս(եր)ը Մեծ Հայքից անջատող: Փաստերի տրամաբանությունը հուշում է, որ նա պետք է լիներ Մեծ Հայքի արքան, քանի որ նրա նախորդներից Երվանդ Բ-ն ողջ Հայաստանի սատրապն էր, Երվանդ Գ-ն՝ Մեծ Հայքի արքան, դատելով առկա փաստերից՝ նույնպիսի կարգավիճակ է ունեցել նաև Արշամը:

գ) Արսամես (Արշամ) արքայի դեպքում մեր տեղեկությունները բավականին հարուստ են՝ մատենագրական և վիմագիր վկայություններ, ինչպես նաև նրա հատած դրամները, սակայն նա ևս որևէ սկզբնաղբյուրում չի ներկայանում որպես Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի արքա: Կոմմագենեի արձանագրություններում և իր դրամների մակագրություններում նա ներկայանում է միայն «արքա» տիտղոսով՝ առանց երկրի մատնանշման[201]: Իսկ միակ մատենագրական վկայությունը՝ մեզ հասած Պոլիենոսի երկում, խոսում է հօգուտ Արշամի՝ Մեծ Հայքի արքան լինելու: Ըստ այդ վկայության՝ Ք.ա. 220-ական թթ. սկզբին Արշամը ապաստան է տվել Սելևկյան տիրակալ Սելևկոս Բ Կալլինիկոսի դեմ ապստամբած նրա եղբորը՝ Անտիոքոս Հիերաքսին, որը իշխում էր Փոքր Ասիայի սելևկյան տիրույթներին և գահընկեց անելով եղբորը՝ ձգտում էր տիրել ամբողջ Սելևկյան աշխարհակալությանը: Անհաջողություն

[201] Տե՛ս **Hümann K.,** Puschtein O., Reisen in Kleinasien und Nordsyrien, էջ 308-309; **Dorner F. K.,** Goell Th., Arsameia am Nymphaios. Die Ausgrabunge n im Hierothesion der Mithradates Kallinikos, Berlin, 1963, էջ 40; **Тирацян Г.,** նշվ. աշխ., էջ 71-74; **Toumanoff C.,** նշվ. աշխ., էջ 280-283: Արշամ (Արսամես) արքայից մեզ հասած բոլոր դրամները հունագիր են և կրում են «Արսամես արքայի» մակագրությունը (**Bedoukian Z.,** նշվ. աշխ., էջ 10-12, 23-24, աղ. I; **Nercessian Y. T.,** նշվ. աշխ, էջ 48-49, աղ. I; **Վարդանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 33-34):

կրելով Միջագետքում և հետապնդվելով Սելևկոս Բ-ի մեծ ուժերից՝ նա մտնում է Հայաստան, որտեղ նրան ապաստան է տալիս Արշամ արքան[202]: Բնականաբար, Արշամը պետք է լիներ այնքան հզոր գահակալ, որ կարողանար ապաստան տալ Սելևկյան տիրակալի գլխավոր թշնամուն: Այս փաստը ևս խոսում է հօգուտ Արշամի՝ Մեծ Հայքի թագավորը լինելու, քանի որ ո՛չ Ծոփքը, ո՛չ Կոմմագենեն ի վիճակի չէի լինի նման ուժի դիմակայել (մանավանդ, որ իբրև թագավորություններ դրանք Ք.ա. III դարում չեն էլ հիշատակվում): Անտիոքոս Հիերաքսին աջակցած պետության համար Փոքր Հայքի թեկնածությունը ևս անհավանական է, քանի որ նա Միջագետքից անմիջապես մտել է իր բարեկամ Արշամի տարածք, մինչդեռ Փոքր Հայքը Միջագետքի հետ չուներ ընդհանուր սահման:

դ) Դեռևս XIX դարավերջին, ելնելով թագի նմանությունից, առաջարկվել էր Քարասպեսին դիտարկել իբրև Ծոփքի արքա և թվագրել Ք.ա. 220 թ. նախորդող շրջանով[203], իսկ Ատրպետը Քարասպեսին (Հարասպէս անվամբ) առաջարկում էր թվագրել Ք.ա. 316 թվականով[204]: Սակայն վերջին տարիներին Քարասպեսի անվամբ նոր դրամների հայտնաբերումից և ուսումնասիրությունից պարզվեց, որ նա սկութական արքա է, որի

---

[202] Տե՛ս **Պոլիենոս,** Ստրատեգեմներ, գիրք IV, գլ. 17; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 111-116; **Էլչիբեկյան Ժ. Գ.,** Հայաստանը և Սելևկյանները, Երևան, 1979, էջ 42; ՀԺՊ, հ. I, էջ 512-513 (բաժնի հեղինակ՝ Գ. Ա. Տիրացյան):

[203] Տե՛ս **Babelon E.,** Les rois de Syrie, d'Armenie et de Commagène, Paris, 1890, էջ CXCI-CC, կատալոգի էջ 211-212, 229-230, աղ. XXIX, նկ. 1-7: **Բասմաջեան Կ.,** նշվ. աշխ., էջ 27:

[204] Տե՛ս **Ատրպետ**, նշվ. աշխ., էջ 28:

դրամները հատվել են Փոյուգիայում և որևէ կապ չունեն ո՛չ Ծոփքի, ո՛չ էլ ընդհանրապես հայ իրականության հետ[205]:

ե) Որոշ ուսումնասիրողների կողմից Ք.ա. մոտ 220-201 թվականներով թվագրվող Քսերքսեսը համարվել է Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության պառակտումից հետո Ծոփքի առանձին պետության հիմնադիր-արքան: Դա մասն է կազմել Ք.ա. III դարում իբրև թե Մեծ Հայքից անջատված Ծոփքի-Կոմմագենեի թագավորության մասին տեսության, որի մասին, ինչպես նշվեց, գոյություն չունի որևէ աղբյուրագիտական փաստարկ: Հայագիտության մեջ տարածում գտած տեսակետը, թե Ք.ա. 201 թ. Ծոփքում դավադրաբար սպանվեց Քսերքսես արքան, հիմնված է թյուրիմացության վրա: Ծոփքի արքա Քսերքսեսը թագավորել է ոչ թե Ք.ա. III, այլ II դարում, և եղել է ոչ թե Անտիոքոս Գ-ի, այլ Անտիոքոս Դ-ի ժամանակակիցը, դարձել է վերջինիս ու նրա քրոջ՝ Անտիոքիսի դավադրության զոհը Ք.ա. 164 թվականին[206]:

Ըստ Պոլիբիոսի՝ Քսերքսեսի հայրը ևս եղել է թագավոր և հրաժարվել է Սելևկյաններին հարկեր վճարել: Այս տեղեկության լույսի ներքո ևս քիչ հավանական է Քսերքսեսին Արշամի որդի համարելը, քանի որ Արշամը ոչ միայն ենթակա և հարկատու չի եղել Սելևկյան տերությանը, այլև հակադրվել է վերջինիս և ապաստան տվել Սելևկոս Բ-ի ոխերիմ թշնամուն՝ Ան-

---

[205] Տե՛ս **Sayles W. G.,** Ancient Coin Collecting VI: Non-Classical Cultures, Iowa, 1999, էջ 27; հմմտ. **Marciak M.,** նշվ. աշխ., էջ 68-69:

[206] Մանրամասն տե՛ս **Աղոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 446-453: Այս փաստին ուշադրություն է հրավիրվել դեռևս XIX դարում (**Langlois V.,** նշվ. աշխ., 1869, էջ 6-19; **Babelon E.,** նշվ. աշխ., էջ CXCIV-CXCVII): Դիոդորոս Սիկիլիացին պարզորոշ վկայում է, որ Անտիոքիսը Անտիոքոս Գ Մեծի դուստրն էր և Անտիոքոս Դ-ի քույրը (Պատմական գրադարան, գիրք XXXI, գլ. XIX, 7):

տիոքոս Հիերաքսին: Պոլիբիոսի հաղորդած տեղեկությունը համապատասխանում է Ք.ա 160-ական թթ. Ծոփքում իշխող Քսերքսես արքային, որի նախորդ Զարեհը, իրոք, եղել է Սելևկյան տերության ենթակա՝ ստրատեգոս, վճարել է հարկեր, ապա անկախանալով՝ հրաժարվել հարկեր վճարելուց:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Ծոփքի թագավորության սկզբնավորման մասին առաջ քաշված վեց տեսակետներից հինգը չեն դիմանում փաստերի քննադատությանը: Հիմնավոր է միայն վեցերորդը, այն է՝ Ծոփքի թագավորությունը հիմնվել է Ք.ա. 189 թ.[207], երբ Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյանների պարտությունից հետո Զարեհը Ծոփքում (իսկ Արտաշեսը՝ Մեծ Հայքում) հռչակեց անկախ թագավորություն:

* * *

Ծոփքի թագավորության պատմության ավարտի թվականի հարցում ևս ունենք ուսումնասիրողների կարծիքների բազմազանություն, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դրանցից մեկը կապված է շփոթությունների, այդ թվում՝ ժամանակագրական տարբեր համակարգերի տվյալների ոչ ճիշտ համատեղման հետ: Ինչպես արդեն նշվել է, Ստրաբոնի հիշատակած Ծոփքի արքա Արտանեսը, որին հաղթելով՝ Տիգրան Մեծը Ծոփքը միացրել է իր թագավորությանը, Ստեփան Բյուզանդացու երկում կոչվում է «Արսակես»

[207] Մեծ Հայքը և Ծոփքն անկախ հռչակվեցին Մագնեսիայի ճակատամարտից հետո, որը տեղի է ունեցել Ք.ա. 190 թ. դեկտեմբերին: Ըստ անտիկ պատմիչների՝ Արտաշեսն ու Զարեհը ճակատամարտից հետո դաշինք ստեղծեցին հռոմեացիների հետ (ինչը պետք է պահանջեր որոշակի ժամանակ), ուստի առավել հավանական է թագավորության ստեղծումը թվագրել ոչ թե Ք.ա. 190 թ. վերջով, այլ Ք.ա. 189 թվականով:

(Արշակ): XIX դարավերջին Օ. Բլաուն և Է. Բաբելոնը, կիրառելով այդ ժամանակ ընդունված Խորենացու ժամանակագրական համակարգը, Արտանես-Արշակին թվագրում են Ք.ա. 74-70 թվականներով: Անտիկ հեղինակների տեղեկությունների հիմամբ վերականգնվող ժամանակագրական համակարգով (որն այսօր ստացել է համընդհանուր ճանաչում), Արտանես-Արշակի իշխանության վերջը թվագրվում է Ք.ա. 94 թվականով: Զ. Պտուկյանը (նրան հետևելով՝ նաև Խ. Մուշեղյանը) առանց որևէ հիմնավորման առանձին արքաներ է համարում Արտանեսին և Արշակին՝ Արտանեսին թվագրելով Ք.ա. 110, իսկ Արշակին՝ Ք.ա. մոտ 90 թվականով[208]: Ե. Ներսիսյանը նույնպես առանձնացնում է Արտանեսին և Արշակին՝ Արտանեսին թվագրելով Ք.ա. 110 թվականով, իսկ Արշակին (ըստ Խորենացու ժամանակագրական համակարգի) հասցնելով մինչև Ք.ա. 70 թվականը[209]: Այսինքն՝ եթե բացառենք նույն արքային երկու անուններով հայտնի լինելու պատճառով երկու առանձին թագավոր համարելը և տարբեր ժամանակագրական համակարգերի տվյալների ոչ ճշգրիտ համատեղումը, պետք է հրաժարվենք Ծոփքի թագավորության անկման մասին վերոհիշյալ հինգ տեսակետներից երկուսից (Ք.ա. 90 և Ք.ա. 72/70 թվականներից):

Մինչև Ք.ա. 85 թվականը Ծոփքի թագավորության պատմությունը հասցնելու գաղափարը պատկանում է դրամագետ Ֆ. Կովաչին, որն ընդունում է նաև Ռ. Վարդանյանը: Ըստ այդմ՝ Ծոփքի թագավորությունը Ք.ա. 150-85 թթ. գտնվել է

---

[208] Տե՛ս **Bedoukian P. Z.,** նշվ. աշխ., էջ 15, 28; **Մուշեղյան Խ.,** Հայոց պատմության դրամագիտականը, էջ 14:
[209] Տե՛ս **Nersessian Y. T.,** նշվ. աշխ., էջ 53:

Պոնտոսի ենթակայության ներքո, ընդ որում՝ այդ շրջանում իշխած Ծոփքի չորս արքաները (երկու Արկաթիաս և երկու Միթրադատես) իբրև թե եղել են պոնտացիներ[210]: Նշված տեսակետը լիովին շինծու է և գրավոր աղբյուրներով չհիմնավորված: Բացի այդ՝ անհասկանալի է, թե ինչպես պետք է պոնտական դրածո արքան իշխեր Ծոփքում մինչև Ք.ա. 85 թվականը, երբ այն Ք.ա. 94 թվականից մասն էր կազմում Տիգրան Մեծի թագավորության:

Բավարար փաստարկված չէ նաև Կ. Թումանովի՝ Ծոփքի թագավորության պատմությունը մինչև Ք.ա. 69 թվականը հասցնելու կարծիքը[211]: Միանգամայն հավանական է, որ Լուկուլլոսի դեմ երեքհազարանոց բանակով ճակատամարտ տված և զոհված Մերուժան զորավարը կարող էր լինել Ծոփքի կառավարիչը՝ վերջին արքա Արտանեսի որդին և Մեհրուժան (Միթրոբուզանես) արքայի թոռը (ի պատիվ որի էլ, ըստ Ն. Ադոնցի[212], կարող էր անվանակոչված լինել): Սակայն չկա որևէ փաստ կամ գոնե տրամաբանական փաստարկում, որ Ք.ա. 69 թ. Ծոփքի կառավարիչն ունեցել է փոխարքայի կամ կախյալ արքայի կարգավիճակ:

Հայտնի են Ծոփքի թագավորության «վերակենդանացման» երկու փորձեր, որոնցից երկրորդը ևս որոշ ուսումնասիրողներ համարել են այդ պետության անկման թվական: Առաջինը Արտաշատի պայմանագրով Տիգրան Կրտսերին Ծոփքի թագավոր ճանաչելու հայտնի ծրագիրն էր, որը չիրականացավ արքայազն Տիգրանի ձերբակալության պատճառով: Իսկ

---

[210] Տե՛ս **Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 4-6; **Վարդանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 35-36:
[211] Տե՛ս **Toumanoff C.,** նշվ. աշխ., էջ 282, 293-294:
[212] Տե՛ս **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 476:

երկրորդը 54 թ. Ներոն կայսեր կողմից Եմեսիայի Սոհեմոս արքայի ճանաչվելն է նաև Ծոփքի արքա, որի մասին Տակիտոսն ունի հետևյալ հաղորդումը. *«Տարվա վերջում անհանգիստ լուրեր են տարածվում, որ պարթևները նորից ներխուժել և հափշտակում են Հայաստանը՝ դուրս քշելով Ռադամիստին... Այս ու նման լուրեր էին տարածում ժողովրդի մեջ. Ներոնը հրամայում է Արևելքի լեգեոնները լրացնելու համար մերձակա պրովինցիաներում ժողովված երիտասարդությունը մոտեցնել և տեղավորել Հայաստանի սահմանների մոտ, իսկ երկու հին թագավորների՝ Ագրիպպային ու Անտիոքոսին ռազմի համար զորքեր նախապատրաստել, որոնցով պիտի ներխուժեին պարթևական սահմանները: Միաժամանակ կարգադրում է Եփրատ գետի վրա կամուրջներ գցել: Եվ Փոքր Հայքը հանձնում է Արիստոբուլոսին, իսկ Սոֆենեի մարզը՝ Սոհեմին՝ երկուսին էլ տալով թագավորական նշաններ»*[213]: Ելնելով Տակիտոսի այս հաղորդումից՝ որոշ ուսումնասիրողներ մինչև 60 թվականը (Տիգրան Զ-ի կառավարումը) կամ 63 թվականը (Հռանդեայի ճակատամարտը) հաշվում են Սոհեմոս Եմեսացու կառավարումը: Սակայն այստեղ ևս պետք է հավատարիմ մնալ սկզբնաղբյուրների հաղորդումներին: Տակիտոսի հաղորդումը վերաբերում է միայն 54 թ. վերջին, ընդ որում՝ Սոհեմոսի՝ Ծոփքի արքա ճանաչումը տեղի է ունեցել հեռակա, առանց Սոհեմոսի Ծոփք այցելության: Եթե Փոքր Հայքի և Արիստոբուլոսի կապի մասին կան տեղեկություններ նաև հետագա տարիների դեպքերի առնչությամբ, ապա Սոհեմոսի և Ծոփքի

---

[213] **Տակիտոս,** Տարեգրություններ, XIII, 6-7 (հայերեն թարգմանության մեջ նշված է «Սոֆենեի թագավորությունը», մինչդեռ բնագրում Ծոփքը կոչվում է «մարզ»):

կապի մասին ոչ Տակիտոսի երկում, ոչ էլ որևէ այլ աղբյուրում որևէ տեղեկություն չկա: Այսինքն՝ այստեղ գործ ունենք Հայաստանի համար Պարթևստանի դեմ պատերազմում Եմեսիայի թագավորության շահագրգիռ մասնակցությունն ապահովելու Ներոնի խորամանկ մտադրության հետ, որը, սակայն, որևէ կերպ չի վերածվել Ծոփքի թագավորության վերականգնման: Հետևաբար, այս տեղեկության հետ ևս չի կարելի կապել Ծոփքի թագավորության անկումը:

Մնում է փաստերին համապատասխանող միայն մեկ տեսակետ. այն է՝ Ծոփքի թագավորության պատմության ավարտը համարել Արտանեսի պարտվելը Տիգրան Մեծին և Ծոփքի վերամիավորումը Մեծ Հայքին Ք.ա. 94 թ., որին համաձայն են մի շարք գտնականներ[214]:

Այսպիսով՝ արձանագրում ենք, որ հրապարակում եղած բոլոր տեսակետների քննական վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ Ծոփքի թագավորությունը գոյություն է ունեցել շուրջ մեկ հարյուրամյակ՝ Ք.ա. 189-94 թվականները:

* * *

Ծոփքի թագավորության ժամանակագրական սահմանների ճշգրտումից հետո կարևոր է պետության տարածքային ընդգրկման խնդրին անդրադառնալը: Հասկանալիորեն պետք է հրաժարվել Ք.ա. III դարում Ծոփքի առանձին կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության աշխարհագրական

---

[214] Տե՛ս **Reinach Th.,** նշվ. աշխ., էջ 103-105: **Գարագաշեան Ա. Մ.,** նշվ. աշխ., էջ 130-132; **Բասմաջեան Կ.,** նշվ. աշխ., էջ 26; **Ալպոյաճեան Ա.,** նշվ. աշխ., էջ 230-231; **Կրկյաշարյան Ս. Մ.,** նշվ. աշխ., էջ 106; **Schottky M.,** նշվ. աշխ., էջ 241-243; **Մարգարյան Ե.,** նշվ. աշխ., էջ 44 և այլն:

ճշգրտման փորձերից[215], քանի որ նման թագավորություն, ինչպես նշվեց, գոյություն չի ունեցել:

Ք.ա. 190 թ. Մագնեզիայի ճակատամարտից հետո հռչակված Ծոփքի թագավորության տարածքային ընդգրկման մասին անգնահատելի տեղեկություններ է հաղորդում Ստրաբոնը: Ըստ նրա՝ *«պատմում են, թե Հայաստանը, նախապես փոքր լինելով, աճել է Արտաքսիասի և Զարիադրիսի միջոցով, որոնք նախկինում եղել են Անտիոքոս Մեծի ստատեգոսները, իսկ հետագայում՝ նրա պարտությունից հետո, թագավորել է սա՝ Սոփեների, Ակիսենեի և Օդոմանտիսի ու մի քանի այլ գավառների վրա, նա էլ՝ Արտաշատի շրջակայքում: Երկուսն էլ աճեցին՝ շրջակա ազգերից հողեր գրավելով. մարերից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրես լեռան ստորոտները, և Խորզենեն ու Գոգարենեն, որը գտնվում է Կուրի մյուս կողմը, խալյուբներից և մոսյունոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք Փոքր Հայքին սահմանակից են և կամ նրա մասն են կազմում, կատառոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի շրջանը, ասորիներից՝ Տամոնիտիսը, ուստի և բոլորը միալեզու են»*[216]:

Փաստորեն, Ստրաբոնի հաղորդումից ակնհայտ է դառնում, որ Զարեհն իշխել է երեք հիմնական շրջանների՝ Սոփե-

---

[215] Տե՛ս, օրինակ, **Հարությունյան Բ. Հ.,** Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորություն (քարտեզ), Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 140; **Տիրացյան Գ. Ա.,** Երվանդյան Հայաստանի տարածքը, էջ 82-83; **Հարությունյան Բ. Հ.,** Հայաստանի պատմության ատլաս, մաս Ա, Երևան, 2004, էջ 21 և այլն:

[216] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XI, 14, 5:

նեին, Ակիսենեին[217], Օդոմանտիսին[218] և մի քանի այլ գավառների, բացի այդ՝ դաշնակցելով Մեծ Հայքի Արտաշես արքային՝ նրա հետ միասին հայկական պետություններին են միացրել մի շարք շրջաններ: Ստրաբոնի հաղորդումից լիովին հստակ չէ, թե որ շրջանը որ արքայի իշխանության տակ անցավ: Ուսումնասիրողները, որպես օրինաչափություն, հետևում են պարզ տրամաբանությանը՝ ըստ սահմանակցության կամ գոնե սահմանային մերձավորության: Ըստ այդմ՝ եզրակացվել է, որ Ծոփքի թագավորությանն են միացվել անդրեփրատյան Կատառնիայից Ակիլիսենեն (Եկեղիքը) և Անտիտավրոսի լեռնաշղթայից հարավ ընկած գավառները[219]: Ստրաբոնը մեկ այլ

---

[217] Ակիսենեի տեղորոշման հետ կապված՝ ուսումնասիրողների շրջանում առկա են տարակարծություններ: Հ. Աճառյանը հակված է այն համարելու գրչագրական վրիպակ և սրբագրելու Անթիսենե (տե՛ս **Ստրաբոն**, Աշխարհագրություն (թարգմ. բնագրից՝ Հ. Աճառյանի), Երևան, 1940, էջ 57), որը կարող է լինել Անձիտի հունականացված Անզիտենե ձևի աղավաղումը (**Երեմյան Ս. Տ.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 43): Այս մեկնաբանությունը հնարավոր է համարում Ռ. Հյուսենը՝ չբացառելով նաև Բ. Հարությունյանի առաջարկը (տեղ գտած Հայկական սովետական հանրագիտարանի 5-րդ հատորի էջ 140-ում զետեղված վերոնշյալ քարտեզում) Ակիսենեի ընթերցումը իբրև Արկիսենե և համապատասխանեցումը Մալաթիայից 35 կմ արևմուտք գտնվող Արկա բնակավայրի հետ (**Hewsen R. H.,** Introduction to Armenian Historical Geography III: The Boundaries of Orontid Armenia, Revue des études Arméniennes, tome XVIII, Paris, 1984, էջ 349):

[218] Հ. Աճառյանն առաջարկում է սրբագրել Օդոմանդիտիդոս: Ս. Երեմյանը, Բ. Հարությունյանը, Ռ. Հյուսենը գտնում են, որ տեղանունը պետք է սրբագրել Օրոմանդիս և նույնացնել Պտղոմեոսի հիշատակած Օրոմանդոսի հետ, որը գտնվել է Եփրատից արևմուտք, Փոքր Հայքի տարածքում, Պլաստայից (Էլբիստան) շուրջ 50 կմ հյուսիս-արևմուտք (**Երեմյան Ս. Տ.,** նշվ. աշխ., 75; **Հարությունյան Բ. Հ.,** Հայաստանի պատմության ատլաս, էջ 22-23; **Hewsen R. H.,** նշվ. աշխ., էջ 349-350):

[219] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, 2001, էջ 133: Ռ. Հյուսենն ընդունում է Բ. Հարությունյանի մոտեցումները՝ նրա քարտեզը զետե-

տեղում նշում է, որ Ծոփքի բուն տարածքը գտնվել է Մասիոս և Անտիտավրոս լեռների միջև[220]: Համոզիչ են Բ. Հարությունյանի փաստարկները, որոնց համաձայն՝ Ծոփքի թագավորության սահմանները հարավ-արևելքում հասել են մինչև Քաղիրթ գետը՝ ներառելով դեպի Մասիուս լեռներն ու դրանցից հարավ ընկած մերձեփրատյան շրջանները, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Մելիտինեի շրջակայքը[221]:

Ակիլիսենեի՝ Ծոփքի թագավորության մեջ ընդգրկվելու մասին տեղեկությունը Ստրաբոնը հաղորդում է նաև Արմենոս Թեսալացու մասին զրույցի վկայակոչման ընթացքում. *«Նաև (պատմում են) թե Արմենոսի հետ եղողները բնակեցրին Ակիլիսենեն, որ նախապես Ծոփքի իշխանության ներքո էր, մյուսները՝ Միսպիրիտիսում՝ մինչև Կալաքեն և Ադիաբեն, Հայաստանի սահմաններից դուրս»*[222]:

Ստրաբոնը հայտնում է մի կարևոր տեղեկություն ևս, որի վերլուծությունը ուսումնասիրողներին թույլ է տվել անել Ծոփքի թագավորության մասին պատմաաշխարհագրական բնույթի ուշագրավ եզրահանգումներ: Տեղեկությունը հետևյալն է. *«Կա նաև նշանավոր մի բերդ, որը պատկանում է Կապադովկիային և գտնվում Եփրատի մյուս կողմում՝ Տոմիսա անունով: Այն վաճառվեց Ծոփքի կառավարչին հարյուր տաղանդով, իսկ հետագայում Լուկուլլոսն այն նվիրեց Կապադովկիայի կառա-*

ղելով իր ատլասում, տե՛ս **Hewsen R. H.,** Armenia. A Historical Atlas, Chicago-London, 2001, էջ 36-37):

[220] Տե՛ս **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XI, 14, 2:

[221] Տե՛ս **Հարությունյան Բ.,** նշվ. աշխ., էջ 133-134: Հեղինակը Մելիտինեի շրջակայքին հավելում է նաև Կոմմագենեն, քանի որ կողմ է Ք.ա. 3-րդ դարում Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության մասին տեսակետին, որին անդրադարձանք վերևում:

[222] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XI, 14, 12:

վարչին՝ իբր վարձ այն օգնության, որ ցույց տվեց նրան Միհրդատի դեմ պատերազմում»[223]:

Տոմիսա ամրոցը գտնվել է Եփրատի ձախ ափին՝ Ծոփքի կողմում, ընդ որում՝ պահպանվել է ամրոցի ավերակը, որն այսօր հայտնի է «Տոմիսա կալե» անվամբ[224]:

Հայտնի է, որ Ծոփքի և Կապադովկիայի սահմանը կազմել է Եփրատ գետը, իսկ Զարեհի թագավորության օրոք Ծոփքը տարածքային նվաճումներ է ունեցել նաև Եփրատից արևմուտք ընկած շրջաններում: Իսկ ի՞նչ պայմաններում և ինչո՞ւ է Եփրատի արևելյան ափին գտնվող ամրոցն անցել Կապադովկիային, որն էլ հետագայում Ծոփքը հետ է գնել հարյուր տաղանդի դիմաց: Ուսումնասիրողները մեծ հավանականությամբ այդ իրադարձությունը կապում են Զարեհի մահվանը հաջորդած ժամանակաշրջանի հետ, որը պետք է տեղի ունեցած լինի Ք.ա. 160-ական թթ. վերջերին, քանի որ այդ դեպքերի ժամանակ Կապադովկիայի արքան էր Ք.ա. 163 թ. գահ բարձրացած Արիարաթես Ե-ն: Արտաշես Ա-ն փորձեց Մեծ Հայքին միացնել Ծոփքը (կամ դրա մի մասը), ինչը, սակայն, ձախողվեց Կապադովկիայի հիշյալ արքայի միջամտության հետևանքով: Այդ մասին պահպանվել է Դիոդորոս Սիկիլիացու բավականին մանրամասն հաղորդումը. *«Այն բանից հետո, երբ Արիարաթեսը Միթրոբուզանեսին վերականգնեց հայրենի տերության վրա, Արտաքսիասը՝ Հայաստանի թագավորը, չհրաժարվելով իշխանության նկատմամբ իր ունեցած ընչաքաղցությունից, դեսպաններ ուղարկեց Արիարաթեսի մոտ՝ առաջար-*

---

[223] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XII, 2, 1 (Հ. Աճառյանը «Ծոփքի կառավարչի» փոխարեն թարգմանում է «Ծոփացիք», ինչը բնագրային շեղում է):
[224] Տե՛ս **Marciak M.,** նշվ. աշխ., էջ 33:

կելով նրան համաձայնել իր հետ և, յուրաքանչյուրն իր մոտ եղած երիտասարդին մահվան ենթարկելով, իրար միջև բաժանել Սոփենեն: Իսկ Արիարաթեսը, որին խիստ օտար էր այդպիսի անազնվությունը, հանդիմանեց դեսպաններին և (նամակ) գրեց Արտաքսիասին՝ առաջարկելով նրան հեռու մնալ նման գործերից: Հետևաբար, Արիարաթեսն ահա այս գործից հետո իր անձի շուրջը եղած համբավը մեծ չափով բարձրացրեց: Իսկ Միթրոբուզանեսը իրեն իշխանության վրա վերականգնողի հանդեպ հիացության արժանի հավատարմության և ազնվության շնորհիվ տիրացավ իր հայրենի իշխանության»[225]:

Դատելով Դիոդորոս Սիկիլիացու հաղորդումից՝ կարելի է եզրակացնել, որ Արիարաթես Ե-ի մոտ գտնվող Մեհրուժանը եղբայրներից ավագն էր, քանի որ նրան էր պատկանում ժառանգության իրավունքը[226]: Արիարաթես Ե-ն ձգտում էր ապահովել Մեհրուժանի շահերը՝ Ծոփքը Կապադովկիայի ազգեցության ոլորտում պահելու նպատակով, քանի որ Ծոփքի անմիջական հարևանը լինելով՝ նա պակաս շահագրգռված չէր, քան Արտաշես Ա-ն: Սակայն Արտաշես Ա-ն չդիմեց ռազմական ուժով Արիարաթես Ե-ի դիմադրությունը կոտրելուն՝ հավանաբար խուսափելով Հռոմի հնարավոր միջամտությունից: Կապադովկիայի արքայի շնորհիվ Ծոփքի գահին բազմեց Մեհրուժանը (Միթրոբուզանեսը):

Ուսումնասիրողները ենթադրել են, որ այս միջամտության դիմաց էլ կարող էր Կապադովկիան ստանալ Եփրատի վրա գտնվող Տոմիսա ամրոցը, մի բացատրություն, որ շատ

---

[225] **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, XXXI, 22:
[226] Հմմտ. ՀԺՊ, հ. I, էջ 549 (բաժնի հեղինակ՝ Գ. Խ. Սարգսյան):

հավանական է թվում: Ավելի ուշ Կապադովկիան մեզ անհայտ ինչ-որ պատճառով որոշում է հարյուր տաղանդի դիմաց վերադարձնել Տոմիսա ամրոցը: Թե երբ է տեղի ունեցել վերջին իրադարձությունը, մեզ մնում է անհայտ:

Հայտնի է, որ Տիգրան Մեծը, շարունակելով իր պապ Արտաշես Ա-ի քաղաքական ծրագրերը, առաջին խնդիրը համարեց Մեծ Հայքի վերամիավորումը: Եվ արդեն Ք.ա. 94 թ. Տիգրան Մեծի զորքը ներխուժեց Ծոփքի թագավորություն և միավորեց այն Մեծ Հայքին: Այս դեպքերի առթիվ կրկին Ստրաբոնի երկում կա թեպետ ոչ որոշակի, սակայն ուշագրավ հաղորդում Ծոփքի թագավորություն տարածքային ընդգրկման մասին. *«Արտաքսիասի շառավիղն էր Տիգրանը, որն ուներ, այսպես կոչված, բուն Հայաստանը. այն հարակից էր Մեդիային, Աղվաններին և Իբերներին, մինչև Կոլխիս ու Եվքսինյան Կապադովկիա. իսկ Զարիադրեսի (շառավիղն էր) Արտանես Սոփենացին, որն ուներ հարավային և, առավելապես, արևմտյան մասերը: Տիգրանը հաղթեց նրան, և ինքը դարձավ այդ բոլոր երկրների տերը»*[227]: Այսինքն՝ Արտանես արքայի օրոք Ծոփքի թագավորությունն ընդգրկում էր Հայաստանի հարավարևմտյան զգալի մասը[228]:

---

[227] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XI, 14, 15:

[228] Ստրաբոնի այս դրվագը նկատի ունենալով է Ստեփան Բյուզանդացին գրում Ծոփքի մասին՝ հիշատակելով Արտանեսին Արսակես անվամբ. *«Սոփենե – մեկն է Հայաստանի մարզերից, ինչպես նշում է Ստրաբոնը տասնմեկերորդ գրքում: Արիանոսը, մյուս կողմից, այն կոչում է Սոփանենե՝ չորս վանկով: Բնակիչներին կոչում են «սոփենացիներ»: Դրա համար էլ Ստրաբոնը հիշյալ գրքում ասում է՝ «Արսակես Սոփենացին տիրում էր հարավային մասերին»: Դրա դիմաց գտնվում էր Կոմմագենեն, որն իր հերթին սահմանակից էր Մելիտենեին»* (**Stephani Byzantii,** Ethnica, Vol. IV, Berlin, 2016, էջ 244-245):

Ծոփքի թագավորության մասին պատմաաշխարհագրական մեր տեղեկություններն այսքանով սպառվում են:

Ծոփքի պետության հաջորդ հիշատակությունը սկզբնաղբյուրներում առնչվում է Տիգրան Կրտսերի անվանը, որում ևս չունենք տեղեկություն թագավորություն սահմանային ընդգրկման մասին: Ինչպես հայտնի է, Արտաշատի պայմանագրով նախատեսվում էր, որ Տիգրան Կրտսերը դառնա Ծոփքի արքա: Սակայն այդ ծրագիրը չիրականացավ:

Եվ, վերջապես, Ծոփքի թագավորության վերջին հիշատակությունը վերաբերում է մեր թվարկության առաջին դարի կեսերին: Ներոն կայսեր կողմից 54 թ. Ծոփքը Եմեսիայի արքա Սոհեմոսին հանձնելու մասին, ինչպես նշվեց, հաղորդում է Տակիտոսը[229]: Համառոտ այդ հաղորդումը, սակայն, թույլ չի տալիս հասկանալ, թե այդ շրջանում Մեծ Հայքից անջատված Ծոփքն ինչպիսի տարածքային ընդգրկում է ունեցել:

Ի մի բերելով Ծոփքի թագավորության տարածքային ընդգրկման մասին տեղեկությունները՝ կարող ենք արձանագրել հետևյալը: Զարեհի ժամանակ թագավորությունն ընդգրկում էր Սոփենեն, Ակիսենեն, Օդոմանտիսը և մի քանի այլ գավառներ, բացի այդ՝ դաշնակցելով Մեծ Հայքի հետ՝ Ծոփքի թագավորությունը տիրել էր նաև Ակիլիսենեին (Եկեղիքին) և Անտիտավրոսի լեռնաշղթայից հարավ ընկած գավառներին՝ հարավ-արևելքում տարածվելով մինչև Քաղիրթ գետը և ներառելով դեպի Մասիուս լեռներն ու դրանցից հարավ ընկած մերձեփրատյան շրջանները, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Մելիտինեի շրջակայքը: Այնուհետև՝ հավանաբար Ք.ա. 160-ական թթ.

---

[229] Տե՛ս **Տակիտոս,** Տարեգրություններ, XIII, 7:

վերջերին, Տոմիսա ամրոցը Ծոփքից անցել էր Կապադովկիային, իսկ որոշ ժամանակ անց՝ հարյուր տաղանդի դիմաց հետ վերադարձվել: Իր պատմության վերջում՝ Արտանես արքայի օրոք, Ծոփքի թագավորությունն ընդգրկում էր Մեծ Հայքի «հարավային և, առավելապես, արևմտյան մասերը»:

* * *

Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ կարող ենք արձանագրել հետևյալը.

ա) Ք.ա. IV-III դարերում գոյություն չի ունեցել ո՛չ Ծոփքի առանձին, ո՛չ էլ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորություն: Դրանց մասին տեսությունները ծնունդ են առել XIX և XX դարերի ուսումնասիրողների աշխատություններում, սակայն չեն հիմնավորվում սկզբնաղբյուրների տվյալներով: Ք.ա. 331-201 թթ. գոյություն են ունեցել միայն երկու հայկական թագավորություններ՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը:

բ) Ծոփքի անջատումը Մեծ Հայքից տեղի է ունեցել Ք.ա. 201 թ., երբ այն վերածվել է սելևկյան ստրատեգության, իսկ Ծոփքի թագավորությունը (Զարեհի գլխավորությամբ) հռչակվել է Մագնեսիայի ճակատամարտից հետո՝ Ք.ա. 189 թվականին:

գ) Ծոփքի թագավորությունը գոյություն է ունեցել շուրջ մեկ հարյուրամյակ՝ մինչև Ք.ա. 94 թվականը, երբ Տիգրան Մեծը, հաղթելով Արտանես արքային, Ծոփքը վերամիավորեց Մեծ Հայքին:

դ) Ծոփքի թագավորությունը սկզբնական շրջանում ընդգրկել է Սոֆենեն (բուն Ծոփքը), Ակիսենեն, Օդոմանտիսը և մի քանի այլ գավառներ, ապա տիրել է Ակիլիսենեին (Եկեղիքին)

և Անտիտավրոսի շրջանին: Հավանաբար, Ք.ա. 160-ական թթ. վերջերին Տոմիսա ամրոցը Ծոփքից անցել էր Կապադովկիային, իսկ որոշ ժամանակ անց՝ հարյուր տաղանդի դիմաց՝ հետ վերադարձվել: Ք.ա. 90-ական թթ.՝ վերջին արքա Արտանեսի օրոք, Ծոփքի թագավորությունն ընդգրկում էր Հայաստանի հարավարևմտյան շրջանները:

О ПРОБЛЕМАХ ХРОНОЛОГИЧЕСКИХ И ТЕРРИТОРИАЛЬНЫХ ГРАНИЦ ЦАРСТВА СОФЕНЫ

История эллинистического армянского царства Софены до сих пор мало изучена. В статье авторы пытаются выяснить несколько вопросов, касающихся Софенского царства. Особо отмечается, что в IV-III вв. до р. Хр. не существовало ни царства Софены, ни единого царства Софены и Коммагены (Сам и Арсамес были королями Великой Армении). Царство Софена датируется 189-94 гг. до р. Хр. Авторы также обсуждают вопросы границ царства Софены.

ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE

The history of the Hellenistic Armenian kingdom of Sophene is still few studied. In the article, the authors try to find out several questions regarding the kingdom of Sophene. It is noted that in the IV-III centuries BC neither the kingdom of Sophene nor the united kingdom of Sophene and Commagene existed (Samos and Arsames were kings of Great Armenia). The kingdom of Sophene dates from 189 to 94 BC. The authors also discuss the boundaries of the kingdom of Sophene.

ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՑԱՆԿԸ

Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան Ծոփաց աշխարհի երկրամասում, սկսած Ք.ա. II հազարամյակի մեկնարկից, հիշատակվում են պետական կազմավորումներ, որոնք հնագույն գրավոր սկզբնաղբյուրներում հայտնի են Ծուփանա, Իսուվա, Սոպահ, Սուբա, Ծուփանի, Սոֆենե և այլ անվանումներով: Բուն շարադրանքին անցնելուց առաջ ցանկանում ենք որոշակիացնել, որ ներկայացվող հոդվածը վերաբերում է հելլենիստական դարաշրջանի Ծոփքի թագավորությանը, որը գոյություն է ունեցել Ք.ա. 189-94 թվականներին:

Հելլենիստական ժամանակաշրջանի հայկական փոքր թագավորությունների, այդ թվում՝ նաև Ծոփքի թագավորության պատմությունը բավարար չափով ուսումնասիրված չէ: Ընդ որում՝ դա բացատրվում է ինչպես փաստերի սակավությամբ, այնպես էլ եղածների ոչ ճիշտ (երբեմն՝ մտացածին) մեկնաբանություններով:

Ծոփքի թագավորության ուսումնասիրության, մասնավորապես պետության գահացանկի առնչությամբ թերևս տեղին կլինի օգտագործել «որքան գիտնական, նույնքան տեսակետ» բնորոշումը: Մինչև վերջերս հստակեցված չէին անգամ թագավորության ժամանակագրական սահմանները՝ սկզբնավորման և անկման թվականները[230]: Մի շարք դեպքերում ուսումնասիրողները պետության արքայացանկում են ընդգրկվել այլ

---

[230] Ծոփքի թագավորության սկզբնավորման և անկման թվականների մասին հայտնված տեսակետները և դրանց ճշգրտումները տե՛ս **Մովսիսյան Ա., Կարապետյան Լ.,** Ծոփքի թագավորության ժամանակագրական և տարածքային ընդգրկման խնդիրների շուրջ, «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, Երևան, 2019, թիվ 2, էջ 14-23, նաև՝ այս ժողովածուում:

պետությունների գահակալներ, որոնք, սակայն, անգամ փաստերի պարզաբանումից հետո իներցիայի ուժով շարունակել են մնալ թագավորության գահացանկում:

Ամբողջական պատկերացում կազմելու նպատակով նախ ժամանակագրական հերթականությամբ ներկայացնենք Ծոփքի թագավորության արքայացանկի ուսումնասիրության պատմությունը:

Ծոփքի թագավորության գահացանկի ուսումնասիրության պատմությունը: Հայկական ավանդական պատմագրության մեջ Ծոփքը որպես առանձին թագավորություն չի հիշատակվում: Նման պետական միավորի մասին հիշատակություն չկա ոչ միայն Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում, այլև միջնադարյան հայ պատմիչների երկերում:

Հայ նոր պատմագրության հիմնադիր Միքայել Չամչյանցը, որի «Հայոց պատմություն» կոթողային եռահատորյակը դարձավ միջնադարի հայ պատմագրության յուրօրինակ հանրագիտարանը, հավատարիմ է մնում Պատմահոր հիմնած ավանդույթին՝ նշելով միայն հին հայկական երկու թագավորություն՝ Հայկազունիների և Արշակունիների[231]: Ավանդական պատմագրության ազդեցությունն այնքան հզոր էր, որ Մ. Չամչյանցը մի շարք դեպքերում հունահռոմեական պատմագրության տեղեկությունները ձգտում է հարմարեցնել հայկականին՝ թույլ տալով խմբագրումներ ու անգամ խեղաթյուրումներ:

---

[231] Միքայել Չամչյանցի «Հայոց պատմության» առաջին հատորն ամբողջությամբ նվիրված է նախապատմական ժամանակների և այս երկու թագավորության պատմության շարադրմանը (**Չամչեանց Մ.,** Պատմութիւն Հայոց, Վենէտիկ, 1785):

Օրինակ, քանի որ Մովսես Խորենացին նշում է, որ Վահե Հայկազունու զոհվելուց հետո Հայաստանը կորցրեց թագավորությունը, և այն վերականգնվեց միայն պարթև Արշակ Մեծ արքայի եղբայր Վաղարշակի ջանքերով, այդ ընթացքում անտիկ սկզբնաղբյուրներում հիշատակված Հայաստանի արքաներին Մ. Չամչյանցն անվանում է «նախարար», «իշխան», «մեծ իշխան», «կուսակալ» և այլն: Այդպես է նա վարվում Մեծ Հայքի արքաներ Արդոատեսի և Օրոնտասի (որն այսօր հայտնի է որպես Երվանդ Դ) հետ՝ նրանց անունները համապատասխանաբար խմբագրելով Արդուարդ և Հրանտ (կամ Հորոնտ), և համարում նրանց Սելևկյանների հարկատուներ[232]: Այդ միտքը լիովին հակասում է անտիկ պատմիչների տվյալներին, որոնցում նշված հայ արքաները ոչ միայն երբևէ հարկատու չեն եղել որևէ պետության, այլև հակադրվել ու տարածաշրջանում հակակշիռ են եղել հունամակեդոնական ուժերին[233]:

Սելևկյաններից անկախացած Արտաշեսին և Զարեհին Մ. Չամչյանցը նույնպես կոչում է «կուսակալներ», ընդ որում՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի. *«...Մին 'ի վերայ աշխարհի Մեծին Հայոց՝ Արտաշաս կամ Արտաշիաս անուն, և միւսն 'ի վերայ Փոքրուն Հայոց՝ Դարեհ կամ Զահրատ անուն: Արտաշաս եդ զաթոռ իւր յաշխարհին Արարատայ առ Երասխ գետով. և Դարեհ յաշխարհին Ծոփաց առ Եփրատ գետով»*[234]:

---

[232] Տե՛ս **Չամչեանց Մ.,** նշվ. աշխ., էջ 127-130:

[233] Օրինակ, ըստ Դիոդորոս Սիկիլիացու հաղորդման, Կապադովկիայի արքա Արիարաթեսը կարողացել է իր երկրից դուրս քշել հունամակեդոնական ուժերին և Ք.ա. 301 թ. վերականգնվել հայրական գահին Մեծ Հայքի արքա Արդոատեսի տրամադրած զորքերի շնորհիվ (տե՛ս **Դիոդորոս Սիկիլիացի,** Պատմական գրադարան, գիրք XXXI, գլ. XIX, 4-5):

[234] Տե՛ս **Չամչեանց Մ.,** նշվ. աշխ., էջ 204:

Մ. Չամչյանցը թույլ է տալիս մի մեծ վրիպում ևս՝ Զարեհի որդի Միթրոբուզանեսին (Մեհրուժանին) նույնացնելով Մովսես Խորենացու հիշատակած Մորփյուղիկեսի հետ[235]: Անունների խիստ հեռավոր նմանությունից բացի՝ որևէ հիմք չկա այդ գործիչներին նույնացնելու: Ըստ Մովսես Խորենացու՝ Մորփյուղիկեսը մակեդոնացիների ժառանգներից էր, որը գրավել էր Լազիկան, Պոնտոսը, Փոյուգիան, Կապադովկիան և այլ տարածքներ, իսկ նրան հաղթեց ու նրա տիրույթները նվաճեց Արշակունյաց հայկական ճյուղի հիմնադիր Վաղարշ արքան[236]: Մինչդեռ Միթրոբուզանես-Մեհրուժանը Ծոփքի արքան էր, որին ցանկանում էր գահազրկել Արտաշես Ա-ն, սակայն նա գահին մնաց շնորհիվ Կապադովկիայի արքա Արիարաթես Ե-ի (Ք.ա. 163-130 թթ.) աջակցության: Ո՛չ վերջինիս օրոք, ո՛չ էլ նրանից հետո Ծոփքը չի նվաճել Կապադովկիան կամ Մորփյուղիկեսի տիրած վերոհիշյալ երկրներից որևէ մեկը:

Հայկական ավանդական պատմագրությանը հավատարիմ մնալու սկզբունքը Հայաստանի պատմական աշխարհագրությանը նվիրված իր աշխատություններում պահպանում է նաև Մխիթարյան խոշորագույն գործիչներից Ղուկաս Ինճիճյանը[237]: Ծոփքը ներկայանում է իբրև Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհի մի գավառ, որն այնքան էր հզոր, որ Ստրաբոնն ու այլ անտիկ պատմիչներ այն կոչել են փոքր թագավո-

---

[235] Տե՛ս **Չամչեանց Մ.,** նշվ. աշխ., էջ 204-207:

[236] Տե՛ս **Մովսես Խորենացի,** գիրք Բ, գլ. Դ-Ե:

[237] Տե՛ս **Ինճիճեան Ղ.,** Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 4-33: Հեղինակը Ծոփքին չի անդրադառնում նաև դրամներին նվիրված բաժնում (**Ինճիճեան Ղ.,** նշվ. աշխ., հ. Ա, Վենետիկ, 1835, էջ 241-242):

րություն. *«Այնչափ էր իշխանութիւն սորա, մինչև Սդրավոնի կոչել Փոքր թագաւորութիւն»*[238]:

Նոր ժամանակների պատմագիտության ոչ հայազգի ներկայացուցիչները հրատարակեցին ուսումնասիրություններ, որոնցում ավելի շատ տեղ հատկացնելով ոչ հայկական գրավոր սկզբնաղբյուրներին, դրամագիտությանը, հնագիտական պեղումների շնորհիվ ի հայտ եկած նոր նյութերին՝ փորձեցին ճշգրտել ու լրացնել հայկական ավանդական պատմագրության տվյալները: Այս ժամանակաշրջանում է սկսվում Ծոփքի թագավորության ուսումնասիրությունը, ընդ որում՝ սկզբնական շրջանում Ծոփքի առանձին արքաներ դիտարկվում են իբրև հայոց թագավորներ՝ առանց որոշակիացնելու պետական կազմավորումը:

Ծոփքի թագավորության ուսումնասիրության մեկնարկ կարելի է համարել 1754 թ. լույս տեսած Էրազմուս Ֆրյոլիհի աշխատասիրությունը, որը հատուկ քննարկման առարկա է դարձնում Արսամեսի, Քսերքսեսի և Սամոս Թեոսեբեոսի դրամները: Նա երեքին էլ համարում է հայոց արքաներ՝ առանց որոշակիացնելու նրանց ղեկավարած պետական միավորները (ինչն այդ ժամանակաշրջանում հնարավոր չէր), սակայն միանգամայն իրավացիորեն մատնանշում է նրանց կառավարման ժամանակները[239]:

---

[238] Տե՛ս **Ինճիճեան Ղ.,** Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վէնէտիկ, 1822, էջ 47-51:

[239] Մասնավորապես, հեղինակն Արսամեսին իրավացիորեն նույնացնում է Անտիոքոս Հիերաքսին ապաստան տված հայոց Արշամ արքայի հետ, իսկ Քսերքսեսին թվագրում Անտիոքոս Դ Եպիփանեսի ժամանակով (**Froelich E.,** Duba de minnisari a liorumque Armeniae Regum numis et Arsacidarum Epocha, Viennae, M DCC LIV (1754), էջ 88-104):

1809 թ. լույս տեսած Թեոդոր Միոննեի դրամագիտական բազմահատոր ուսումնասիրության մեջ Հայաստանի արքաների բաժնում կողք կողքի տեղ են գտել Արսամեսի, Սամեսի, Քսերքսեսի, Աբդիսարի, Միհրդատ Կալլինիկոսի, Արտավազդ Բ-ի և Տիգրան Դ-ի ու Էրատոյի դրամները[240]:

Էննիո Վիսկոնտիի՝ 1811 թ. հրատարակած արվեստաբանական բազմահատոր ուսումնասիրության էջերում հատուկ բաժին է նվիրված Հայաստանի արքաներին, որում ներկայացվում են Արսամեսը, Սամեսը, Քսերքսեսը, Աբդիսարը, ապա՝ Փոքր Հայքի իշխան Միհրդատը, Մեծ Հայքի արքաներ Տիգրան Մեծը, Արտավազդ Բ-ն, Կոմմագենեի արքա Անտիոքոս Բ-ն և Մեծ Հայքի արքա Պարթամասիրը (վերջինս գահընկեց արվեց 114 թ. Հռոմի Տրայանոս կայսեր կողմից և պատկերված է նրա հաղթաքանդակին): Համադրելով Քսերքսես արքայի և Աբդիսարի դրամների առանձնահատկությունները՝ հեղինակը եզրակացնում է, որ Աբդիսարը կարող էր լինել Քսերքսեսի որդին և թվագրվել Ք.ա II դարի կեսերով[241]:

1840 թ. Գուիդո Սանդբերգերը հրատարակեց դրամ, որի դիմերեսին Հայկական կամ Տիգրանյան թագ կրող արքայի պատկերն էր՝ երկու կողմում ΖΑΔΡΙ-ΑΔΟΥ մակագրությամբ, իսկ դարձերեսին՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ տիտղոսը: Հեղինակն «արքայից արքա Զադրիադեսի» մակագրությամբ այդ դրամը վերագրեց Ծոփքի թագավորության հիմնադիր Զարե-

---

[240] Տե՛ս **Mionnet T. E.,** Description de médailles antiques, grecques et romaines, t. IV, Paris, M DCCC IX (1809), էջ 454-458:

[241] Տե՛ս **Visconti E. Q.,** Iconographie ancienne. Iconographie grecque, Vol. 2, Paris, 1811, էջ 243-269 (աղ. XLV):

հին[242]: Հետագա տարիներին այս դրամը (որի պատկերը Գ. Սանդբերգերը զետեղել էր իր գրքի տիտղոսաթերթին) երկար ժամանակ համարվում էր Ծոփքի Զարեհ արքայի թողարկածը կամ կեղծ, քանի որ վերջինս չէր կարող կրել «արքայից արքա» տիտղոսը[243]: Հարցի հանգուցալուծումը տեղի ունեցավ միայն մեկուկես դար անց, երբ ցույց տրվեց, որ դա ոչ թե Ծոփքի Զարեհի, այլ Տիգրան Մեծի որդի Զարեհի դրամն է, որը, ապստամբելով հոր դեմ, նրա տիտղոսը յուրացնելով, հատել է իր անունով դրամ[244]:

Ֆելիսիեն դե Սոլսին 1855 թ. շրջանառության մեջ դրեց Աբդիսար արքայի մի նոր և լավ պահպանված դրամ՝ լիովին կիսելով Էննիո Վիսկոնտիի տեսակետներն այդ արքայի վերաբերյալ[245]: Երկու ուսումնասիրողներն ընդգծում են, որ հայոց արքայի մայրաքաղաքն Արշամաշատն էր, որը գտնվում էր Ծոփքում:

---

242 Տե՛ս **Sandberger G., De Zadriade,** Armenie minore rege primo ejusque de stirpe ad numi inediti et scriptorum antiquorum fidem, Francofurti A. M., 1840, էջ 1-34 (աշխատանքում վկայակոչվում են նաև Զարեհին և նրա հաջորդներին վերաբերող անտիկ հեղինակների տեղեկությունները):

243 Դրամի ուսումնասիրության պատմությունը տե՛ս **Ատրպետ,** Հայ թագավորների դրամները. Յետ Աղէքսանդրեան շրջան, «Ազգագրական հանդէս», գիրք XXIII, 1913, թիւ 2, էջ 33-34; **Bedoukian P. Z.,** Coinage of the Artaxiads of Armenia, London, 1978, էջ 46; **Պտուկեան Զ.,** Արտաշէսեան հարստութեան դրամները, Վիեննա, 1983, էջ 7, 41; **Մուշեղյան Խ.,** Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983, էջ 69; **Nersessian Y. T.,** Armenian Coins and their Values, Los Angeles, 1995, էջ 54 և այլն:

244 Տե՛ս **Համբարձումյան Ա.,** Արքայից արքա Զարեհի ինքնության և հարակից որոշ հարցերի մասին, Երիտասարդ արևելագետների հանրապետական 19-րդ գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1998, էջ 18-20:

245 Տե՛ս **De Saulcy F.,** Le roi Abdissar, «Bulletin archéologique de l'Athenaeum français», Paris, 1855, № 12, էջ 101:

1859 թ. լույս տեսավ ֆրանսացի ականավոր հայագետ Վիկտոր Լանգլուայի՝ հայկական դրամագիտությանը նվիրված աշխատությունը, որտեղ նա մինչ այդ հայտնի Արսամեսին, Սամեսին, Քսերքսեսին և Աբդիսարին համարեց ոչ միայն հայոց արքաներ, այլև փորձեց որոշակիացնել նրանց կառավարած պետությունները: Նա ներկայացրեց երկու կրտսեր հայկական պետություններ՝ «Սամոսատի հայոց թագավորությունը»՝ Սամոս արքայով (Ք.ա. մոտ 150 թ.), և «Արշամաշատի հայոց թագավորությունը»՝ Արշամ (Արսամես, Ք.ա. 245 թ.), Քսերքսես (Ք.ա. 174-164 թթ.) և Աբդիսար (Ք.ա. II դարի կես) արքաներով[246]: Թագավորություններից առաջինը մենք այսօր կոչում ենք *Կոմմագենեի*, իսկ երկրորդը՝ *Ծոփքի:* Որոշակիության համար նշենք, որ Վ. Լանգլուայի նշած Սամոս արքան ժամանակակից ընկալմամբ Կոմմագենեի արքա Սամոս Բ-ն է, Արշամը՝ Պոլիենոսի հիշատակած հայոց արքան, որն ապաստան է տվել Սելևկոս Բ-ի ապստամբ եղբայր Անտիոքոս Հիերաքսին, իսկ Քսերքսեսը Սելևկյան Անտիոքոս Դ արքայի քրոջ հետ ամուսնացած և նրա ձեռքով սպանված արքան է (հետագայում մի շարք ուսումնասիրողներ նրան կապեցին Անտիոքոս Գ-ի հետ): Փաստորեն, Վ. Լանգլուայի դրամագիտական հետազոտությամբ սկսվում է Ծոփքի թագավորության՝ որպես առանձին պետության ուսումնասիրությունը, որը հեղինակը կոչում է «Արշամաշատի հայոց թագավորություն»՝ նշելով միայն երեք գահակալի անունները՝ իրենց դրամներով:

1877 թ. Ջուլիուս Ֆրիդլենդերը, հրատարակելով մի քանի «սատրապական դրամներ», ենթադրեց, որ դրանցից մի քանի-

---

[246] Տե՛ս **Langlois V.,** Numismatique de l'Arménie dans l'antiquité, Paris, 1869, էջ 6-19:

սը կարող են պատկանել հայ գահակալներին: Մասնավորապես, նա մատնանշեց իրար նման երկու դրամներ, որոնք ունեին ΔΣΑΡΙ ΑΝΙΣΑΔΩ և ΜΟΡΙ ΣΑΡΙ մակագրությունները[247]:

Նույն թվականին Օտտո Բլաուն հրատարակեց «Ծոփքի տիրակալները և նրանց դրամները» ուշագրավ հոդվածը՝ կատարելով մի շարք կարևոր դիտարկումներ: Նա Ծոփքի թագավորության սկիզբ համարեց Ք.ա. 190 թվականը, երբ Զարեհը Մագնեսիայի ճակատամարտից հետո հռչակվեց անկախ թագավոր: Իսկ մինչ այդ իշխած Արդոատեսին, Ք.ա. մոտ 260 թ. առանց անվան հիշվող հայոց արքային, Արսաբեսին (Արսամես, Ք.ա. մոտ 230 թ.), Աբդիսարեսին, Քսերքսեսին (Ք.ա. մոտ 215 թ.) և Զարեհին (Ք.ա. մոտ 200 թ.) համարեց Արևմտյան Հայաստանի ստրատեգներ և արքաներ (Արևելյան Հայաստանը նրա մոտ համապատասխանում է Մեծ Հայքին)[248]:

Օ. Բլաուն Ջ. Ֆրիդլենդերի հրատարակած վերոնշյալ դրամները վերագրեց Ծոփքի արքաներին: Մասնավորապես, ΔΣΑΡΙ ΑΝΙΣΑΔΩ մակագրության առաջին հատվածն առաջարկեց վերականգնել «Զարի[ադրիս]»՝ Զարեհ, իսկ երկրորդը՝ հայրանուն՝ «Անիսադես»: Երկրորդ դրամի ΜΟΡΙ ΣΑΡΙ մակագրությունը նա առաջարկեց վերծանել՝ «Մորի[ֆիլիգ որդի] Զարի[ադրեսի]»[249]:

---

[247] Տե՛ս **Friedlander J.,** Satrapenmünzen, «Zeitschrift für Numismatik», Vierter Band, Berlin, 1877, էջ 266-272:

[248] Տե՛ս **Blau O.,** Die Herren von Sophene und deren Münzen, «Numismatische Zeitschrift», Neunter Band, Wien, 1877, էջ 90-114:

[249] Մորֆիլիգին Օ. Բլաուն նույնացրեց Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերից հայտնի Մորփյուղիկեսի հետ, որը, ինչպես նշվեց, մակեդոնացիների ժառանգներից էր և միավորել էր Լազիկան, Պոնտոսը, Փոյուգիան, Կապադովկիան ու այլ տարածքներ, սակայն ի վերջո պարտվեց Արշակունյաց հայկական ճյուղի հիմնադիր Վաղարշ արքային (Մովսես Խորե-

Դեռևս 1870 թ. Մխիթարյան հայրերից Կլեմենս Սիբիլյանը, որը հրատարակել էր Հայաստանին վերաբերող երեք մետաղադրամներ, որոնցից մեկը կրում էր «Արշակ արքայի» մակագրությունը, հակված էր համարելու (ըստ Մովսես Խորենացու) Արշակունյաց հայկական ճյուղի հիմնադիր Վաղարշակի որդի, Մեծ Հայքի արքա Արշակ Ա-ի դրամը[250]: Օ. Բլաուն, սակայն, առաջարկեց Կ. Սիբիլյանի հրատարակած Արշակ արքայի դրամը վերագրել Ծոփքի արքա Արշակին (Արսակես, Արտանես)[251]:

Ի մի բերելով բոլոր դիտարկումները՝ Օ. Բլաուն ստացավ բուն Ծոփքի թագավորության արքայացանկի հետևյալ պատկերը.

Զարեհ – (Ք.ա. 190-165 թթ.),

նացի, գիրք Բ, գլ. Դ-Ե): Օ. Բլաուն դրամի մակագրության իր մեկնաբանությամբ Մորֆիլիգ-Մորփյուղիկեսին դարձրեց Ծոփքի թագավորության հիմնադիր Զարիադրես-Զարեհի որդին և հաջորդը (Blau O., նշվ. աշխ., էջ 107-110): Այս առաջին իսկ հայացքից տարօրինակ նույնացմանն ու մեկնաբանությանը հետագայում հետևեցին մի շարք ուսումնասիրողներ:

[250] Տե՛ս **Sibillian Cl.,** Drei sehr seltene Münzen armenischer Dynasten, «Numismatische Zeitschrift», Zweiter Band, Wien, 1870, էջ 343-345: Կ. Սիբիլյանին հղելով՝ Ալֆրեդ ֆոն Սալլեթը ևս գտնում էր, որ կան «Արշակ արքայի» մակագրությունը կրող ոչ պարթևական դրամներ, որոնք կարող էին լինել հայկական (**Von Sallet A.,** Die ältesten Tetradrachmen der Arsaciden, «Zeitschrift für Numismatik», Erster Band, Berlin, 1874, էջ 312):

[251] Ստրաբոնի հիշատակած Ծոփքի արքա Արտանեսը, որին հաղթեց Տիգրան Մեծը, Ստեփան Բյուզանդացու երկում կոչվում է «Արսակես» (տե՛ս **Stephani Byzantii,** Ethnica (Recensuit germanice vertit adnotationibus indicibusque instruxit M. Billerbeck), Vol. IV, Berlin, 2016, էջ 244-245): Օ. Բլաուն գտնում էր, որ հենց այս Արսակես-Արտանեսին է պատկանում հիշյալ դրամը: Հեղինակը հոդվածում կիրառում է XIX դարավերջին ընդունված խորենացիական ժամանակագրական համակարգը, որը շատ հարցերում չի ընդունվում այսօր: Ըստ այդմ՝ Արսակեսն իշխել է մինչև Ք.ա. 72 թվականը (**Blau O.,** նշվ. աշխ., էջ 111-113):

Մորֆիլիգ – (մինչև Ք.ա. 148 թ.),

Շարաշան[252] – (Ք.ա. 148 - ?),

Արսակես – (? - Ք.ա. 72 թ.):

1890 թ. հրատարակվեց գերմանացի ուսումնասիրողներ Կառլ Հյումանի և Օտտո Փուխշթայնի «Ճանապարհորդություն Փոքր Ասիայում և Հյուսիսային Սիրիայում» գիրքը, որով Կոմմագենեի Նեմրութի սրբավայրը լայնորեն հայտնի դարձավ գիտական աշխարհին: Երկհատոր կոթողային ուսումնասիրության էջերում հրատարակվեցին Նեմրութի հուշարձանախմբի այն ժամանակ հայտնի արձանագրությունները, որոնց մեջ էին սրբավայրը կառուցող Անտիոքոս Ա-ի՝ հայրական գծով Երվանդական նախնիների արձաններն ու դրանց գրությունները: Մասնավորապես հիշատակվում էին Հայաստանի Արոանդես (Օրոնտաս-Երվանդ Բ) սատրապը, որին Քսենոֆոնը հիշատակում է Ք.ա. 401 թ., այնուհետև՝ Արոանդես արքան (որը Գավգամելայի ճակատամարտից հետո Մեծ Հայքն անկախ հռչակած Օրոնտաս-Երվանդ Գ-ն է), Սամոս և Արսամես արքաները (վերջինս Ք.ա. III դարում Սելևկյան տիրակալ Սելևկոս Բ-ի դեմ ապստամբած Անտիոքոս Հիերաքսին ապաստան տված Հայոց արքան է): Գերմանացի հետազոտողները մատնանշեցին նրանց՝ իբրև ամբողջ Հայաստանի գահակալների՝ ընդգծելով նրանց՝ սրբավայրը կառուցող Անտիոքոս

---

[252] Շարաշանի՝ որպես Ծոփքի արքայի զետեղումը գահացանկում Օ. Բլաուն կատարում է նույն տրամաբանությամբ: Նա վկայակոչում է Մովսես Խորենացու գրքից Մար Աբաս Կատինայի տեղեկությունը, ըստ որի՝ Վաղարշակը Տիգրիս գետի ափին գտնվող Ասորեստանին սահմանակից գավառների մեծ բդեշխ և կուսակալ է նշանակում Շարաշանին (գիրք Բ, գլ. Ը): Այնուհետև, նման մի դրամի վրա կարդալով ΣΑΡΑ մակագրությունը, այն մեկնաբանում է իբրև Շարաշան անվան սկզբնամաս (**Blau O.,** նշվ. աշխ., էջ 110-111):

Ա-ի և Տիգրան Մեծի կապը (թագի, հանդերձանքի և այլ խորհրդանիշերի միջոցով)[253]:

Թեոդոր Ռեյնաքը Կոմմագենեի արքայատոհմին նվիրված աշխատանքում հանգամանորեն ցույց է տալիս, որ կոմմագենյան արքաներն ուղիղ գծով շառավիղն են Ք.ա. VI դարից հիշատակվող Երվանդունյաց տոհմի ներկայացուցիչների (այդ թվում՝ Արտասուրայի, Արոանդես կամ Օրոնտաս Բ-ի, Արոանդես Գ-ի, Արսամեսի), որոնք եղել են Հայաստանի սատրապներ ու արքաներ: Նա անդրադառնում է նաև Ծոփքի մայրաքաղաք Արշամաշատում իշխող Քսերքսեսին և Աբդիասարին՝ գտնելով, որ նրանք Երվանդական արքայատոհմի ուղիղ գծով ժառանգները չեն[254]:

Միհրդատ Եվպատորին նվիրված աշխատության մեջ Թ. Ռեյնաքը հիշատակում է Սելևկյաններին առնչված Հայաստանի արքաներին՝ Արդոատեսին (Ք.ա. 301 թ.), Ք.ա. 260 թ. առանց անվան վկայված հայոց արքային, Արշամին (Ք.ա. մոտ 240 թ.) և Քսերքսեսին (Ք.ա. մոտ 215 թ.), անդրադառնում նաև Ծոփքի թագավորությանը՝ Զարեհից մինչև Արտանես, որին Տիգրան Մեծը հաղթելով՝ Ծոփքը վերամիավորեց Մեծ Հայքին: Անդրադարձ է կատարվում նաև Ծոփքի գործերին Արիարաթ Ե-ի միջամտության, աջակցության դիմաց Տոմիսա ամրոցը ստանալու, ապա՝ Ծոփքի կողմից այն հետ գնելու պատմությանը[255]:

---

[253] Տե՛ս **Hümann K., Puschtein O.,** Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 283-287, 304-309:

[254] Տե՛ս **Reinach Th.,** La dynastie de Commagene, «Revue des études grecques», Paris, 1890, V. III, էջ 362-380:

[255] Տե՛ս **Reinach Th.,** Mithridate Eupator, roi de Pont, Paris, 1890, էջ 103-105. Նշենք, որ Թ. Ռեյնաքի այս աշխատության մեզ հետաքրքրող հատվածը գրե-

1890 թ. Էռնեստ Բաբելոնը լույս ընծայեց Հայաստանի, Կոմմագենեի և Սիրիայի դրամագիտությանը նվիրված հիմնարար մի ուսումնասիրություն: Ելնելով դրամագիտական և զուգահեռ գիտակարգերի տվյալներից՝ նա վերականգնեց Ծոփքի հայկական թագավորների հետևյալ գահացանկը[256].

Արսամես[257] – Ք.ա. 230 թ.,

Աբդիսարես – Ք.ա. 200 թ.,

Զարիադրես – Ք.ա. 190 թ.,

Քսերքսես (Շավարշ ?) – Ք.ա. 170 թ.,

Մորֆիլիգ – (Ք.ա. 150-148 թթ.),

Շարաշան – (Քսերքսես ?, Ք.ա. 148 - ?),

Արտանես – (Արսակես, Ք.ա. 74-70 թթ.):

1895 թ. Յոզեֆ Մարկվարտն անդրադառնում է Ծոփքի թագավորության պատմության որոշ հարցերի՝ մասնավորապես մերժելով ΔΣΑΡΙ ΑΝΙΣΑΔΩ և ΜΟΡΙ ΣΑΡΙ մակագրություններով դրամները Ծոփքի արքա Զարեհի հետ կապելու տեսակետը: Նա շեշտում է, որ դրամները կապադովկիական են, իսկ «Զարին» մեկնաբանում է որպես խաթերենից եկող «Զիրաս»

թե ամբողջությամբ Անտոն Գարագաշյանը թարգմանաբար մեջբերում է իր «Քննական պատմություն Հայոց» բազմահատոր աշխատության երկրորդ մասում (**Գարագաշեան Ա. Մ.,** Քննական պատմութիւն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 130-132):

[256] Տե՛ս **Babelon E.,** Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890, էջ CXCI-CC, նաև կատալոգի էջ 211-212, 229-230, աղ. XXIX, նկ. 1-7: Է. Բաբելոնի այս արքայացանկը տարիներ անց իր աշխատությունում նույնությամբ մեջբերում է Լեոն (**Լեո,** Երկեր, հ. 1, 1966, էջ 291-292: Քարասպեսի անունը Լեոյի մոտ Շարասպես է):

[257] Արսամեսից առաջ հեղինակը Հայաստանի գահակալների ցանկում նշում է Քարասպեսին՝ համարելով նրան «անհայտ թագավոր»: Հետագայում որոշ ուսումնասիրողներ Քարասպեսին ևս ընդգրկեցին Ծոփքի գահացանկում:

տիտղոս, որը, ըստ Պ. Յենսենի, կապվում է հայերեն «ծեր» բառի հետ և նշանակում է «ծեր, ավագ»[258]:

Նորահայտ տեղեկությունները, որոնք առավելապես դրամագիտական բնույթի էին, անմիջապես քաղաքացիություն չէին ստանում ավանդական պատկերացումների կողքին կամ դրանց փոխարեն: Օրինակ՝ Ղևոնդ Ալիշանը, հիշատակելով հանդերձ, անհավանական է համարում եվրոպական դրամագետների տեղեկությունները Զարեհի և Մորփյուղիկեսի (Մորֆիլիգի) վերաբերյալ. *«Եւրոպացի գիտնական դրամագէտք ոմանք՝ փոքրիկ պղնձէ դրամի մի վրայ այդ անուան նմանութիւն տեսնելով՝ իրեն կ՚ընծայեն, զոր և կարծեն ոմանք որդի Զահրատայ (կամ Զարեհատրայ) Ծոփաց թագաւորի. երկուքն ալ անհաւանականք»*[259]:

Հայաստանի մի մեծ ժամանակաշրջանի (Ք.ա. 190-Ք. հ. 428 թթ.) պատմությանը նվիրված աշխատության մեջ Հարություն Աստուրյանը անդրադարձներ է կատարում Ծոփքի թագավորությանը՝ հաճախ հարցական նշաններով հիշատակով հետևյալ արքաներին[260].

Արշամ – (Ք.ա. 235 ?),

Քսերքսես – (Ք.ա. 217 ?),

Զարեհ – (Ք.ա. 190-163 թթ.),

Մերուժան – (Ք.ա. 163-ից),

---

[258] Տե՛ս **Marquart J.,** Untersuchungen zur Geschichte von Eran, «Philologus: Zeitschrift für das classische Altertum», Vierundfünfzigster Band, Göttingen, 1895, էջ 504-506, 521-526.

[259] **Ալիշան Ղ.,** Հայապատում. Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1901, էջ 74-75:

[260] Տե՛ս **Աստուրեան Հ. Յ.,** Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն. Ք. մինչեւ 428 յ. Ք, Վենետիկ, 1912, էջ 12, 18-22, 33-34, 169, 215:

Արտանես – (մինչև Ք.ա. 94 թ.),

Սոհեմոս – (54 թ.):

Ատրպետը հայոց արքաների դրամներին նվիրված հոդվածաշարում Ծոփքի կամ Արևմտյան Արմենիայի գահացանկը, ըստ գրավոր աղբյուրների և հատկապես դրամագիտական նյութի, ներկայացնում է հետևյալ կերպ.

Արշամես[261] – (Ք.ա. 230 թ.),

Աբդիսարես – (Ք.ա. 200 թ.),

Քսերքսես – (Ք.ա. 170 թ.),

Զարեհ – (Ք.ա. 190 թ.),

Մոր-փիլիք – (Ք.ա. 150-148 թթ.)[262]:

Հին Հայաստանի պատմության լուսաբանման գործում մեծ նշանակություն ունեցան Մխիթարյան միաբան Հովսեփ Սանտալճյանի աշխատությունները, մասնավորապես Հայաստանի նախաքրիստոնեական ժամանակաշրջանի պատմությանը նվիրված երկհատորյակը: Նրա մոտ Ծոփքի թագավորության արքայացանկն ունի հետևյալ պատկերը.

Արշամ – (Ք.ա. մոտ 230-210 թթ.),

Քսերքսես – (Ք.ա. մոտ 210-200 թթ.),

Զարեհ – (Ք.ա. 200-/189/-160 թթ.),

Մերուժան – (Միթրոբուզանես, Ք.ա. 163 թվականից),

Արտանես – (մինչև Ք.ա. 94 թ.),

Տիգրան Կրտսեր – (Ք.ա. 66 թ.),

Սոհեմոս – (54 թ.)[263]:

---

[261] Արշամից առաջ հեղինակը, հետևելով Է. Բաբելոնին, Հայաստանի գահակալների ցանկում է ընդգրկում Հարասպեսին (Քարասպես, Ք.ա. 316 թ.)՝ նշելով նրա մասին տեղեկությունների բացակայությունը գրավոր աղբյուրներում:

[262] Տե՛ս **Ատրպետ,** նշվ., աշխ., էջ 28-35:

Հայաստանի դրամագիտությանը նվիրված ընդհանրացնող աշխատության էջերում Կարապետ Բասմաջյանը Ծոփքը և նրա գահակալներին ներկայացնում է երկու հայկական կրտսեր թագավորություններում, որոնք, ըստ նրա, գոյություն են ունեցել Մեծ Հայքի կողքին[264].

Փոքր Հայքի և Փոքր Ծոփքի թագավորություն

Քարասպես (Ք.ա. 260-240? թթ.),

Արսամես կամ Արշամ (Ք.ա. 240-210? թթ.),

Աբդիսարես (Ք.ա. 210?-190? թթ.),

Քսերքսես (Ք.ա. 190?-170 թթ.):

Մեծ Ծոփքի և Փոքր Հայքի թագավորություն

Զարիադրես կամ Զարեհ կամ Զահրադ (Ք.ա. 190-165 թթ.),

Միթրոբուզանես (Ք.ա. 165-150? թթ.),

Մորփիլիզոս (Ք.ա. 150?-148 թթ.),

(անհայտ)

Արտանես (Ք.ա. 100?-93 թթ.):

Ներկայացված արքաներին մենք դեռ կանդրադառնանք, սակայն նշենք, որ երբեք որևէ սկզբնաղբյուրում չեն հիշատակվել «*Փոքր Հայքի և Փոքր Ծոփքի*», «*Մեծ Ծոփքի և Փոքր Հայքի*» միացյալ հայկական թագավորություններ:

Նիկողայոս Ադոնցը 1930-ական թթ. երկրորդ կեսին գրած, սակայն անտիպ մնացած և միայն վերջերս հրատարակված աշխատությունում Սամոսին և Արշամին համարում է ընդհա-

---

[263] Տե՛ս **Sandalgian J.,** Histoire documentaire de l'Arménie des âges du Paganism (1410 av.-305 apr. J.-C.), t. II, Rome, 1917, էջ 414-418, 425-426, 444-445, 474-475, 517-518:

[264] Տե՛ս **Բասմաջեան Կ.,** Հայկական ընդհանուր դրամագիտութիւն եւ Հայաստանի վերաբերեալ դրամներ, Վենետիկ, 1936, էջ 25-33:

նուր հայոց արքաներ, իսկ Ծոփքի թագավորությունը սկսում է Զարեհով.

Զարեհ – Ք.ա. 190 թվականից հետո,

Քսերքսես – մինչև Ք.ա. 166/165 թվականը,

Մերուժան (Քսերքսեսի եղբայրը) – Ք.ա. 164 թվականից,

Արտանես – մինչև Ք.ա. 94 թվականը,

Տիգրան Կրտսեր – Ք.ա. 66 թ.[265]:

1945 թ. լույս տեսած «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» ուսումնասիրության առաջին հատորում Հակոբ Մանանդյանը ներկայացնում է Ծոփքի թագավորության հետևյալ գահակալներին.

Արշամ – Ք.ա. մոտ 230 թ.,

Քսերքսես – Ք.ա. մոտ 212 թ.

Զարեհ – Ք.ա. 189 թվականից,

Արկաթիոս (Զարեհի որդի),

Մերուժան (Զարեհի որդի),

Արտանես – մինչև Ք.ա. 94 թվականը,

Տիգրան Կրտսեր – Ք.ա. 66 թ.,

Սոհեմոս – 54-63 թթ.[266]:

1950-ական թթ. խորհրդահայ պատմագիտության մեջ ձևավորվում է մի տեսակետ, ըստ որի՝ Ք.ա. 270-260-ական թթ. Մեծ Հայքից անջատվել են Ծոփքն ու Կոմմագենեն՝ կազմելով միացյալ թագավորություն: Ք.ա. 220-ական թթ. Սելևկյանների միջամտության հետևանքով այդ միացյալ թագավորությունը պառակտվել է՝ վերածվելով Ծոփքի ու Կոմմագենեի երկու ան-

---

[265] Տե՛ս **Ադոնց Ն.,** Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 442-454, 459, 476, 503-504:

[266] Տե՛ս **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 111-116, 124, 141, 233, 321, 423, 428:

կախ թագավորությունների: Ք.ա. 201 թ. դրանք նվաճել են Սելևկյանները, իսկ Ք.ա. II դարի առաջին կեսին՝ կրկին դարձել անկախ թագավորություններ (Ծոփքը՝ 189 թ., Կոմմագենեն՝ 163 թ.): Այս տեսակետն ամրագրվեց «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակում[267], «Հայկական սովետական հանրագիտարանում»[268], տեղ գտավ բուհական և դպրոցական դասագրքերում՝ ստանալով համընդհանուր ճանաչում խորհրդահայ պատմագիտության մեջ:

Նշված տեսության գլխավոր հեղինակը Գևորգ Տիրացյանն էր, որի աշխատություններում[269] հանդիպում է գահացանկի հետևյալ պատկերը՝

Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորություն

Սամոս – Ք.ա. 270-ական թվականներից մինչև III դարի կես,

Արշամ – Ք.ա. 240-230-ական թթ.,

Ծոփքի թագավորություն

Քսերքսես – Ք.ա. մոտ 220 թ. - Ք.ա. III դ. վերջ,

Զարեհ – Ք.ա. 189 թվականից:

---

[267] Տե՛ս **Տիրացյան Գ. Ա.,** Հայաստանը մ.թ.ա. III դարում, ՀԺՊ, հ. I, էջ 512-516; **Սարգսյան Գ. Խ.,** Հայկական պետությունների ազատագրումը Սելևկյանների գերիշխանությունից, տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 521-522, տե՛ս նաև Ժամանակագրություն, ՀԺՊ, հ. I, էջ 922:

[268] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Ծոփք, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 139-141; **Տիրացյան Գ.,** Կոմմագենե, նույն տեղում, էջ 543-544:

[269] Տե՛ս **Тирацян Г.,** Страна Коммагена и Армения, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, թիվ 3, էջ 73-74; *նույնի՝* Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. վերջ-մ.թ.ա. III դ. վերջ), «Պատմա-բանասիրական հանդես», 1981, թիվ 2, էջ 83-84:

Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը, բոլոր հիմնական կետերում ընդունելով Գ. Տիրացյանի մոտեցումները, դարձավ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության տեսության գլխավոր ամրապնդողներից մեկը խորհրդահայ պատմագրության մեջ[270]:

1959 թ. Ժորժ լե Ռիդերը հրատարակեց Քսերքսես արքայի դրամին բոլոր չափանիշներով շատ նման մի նմուշ, որին կիսատ պահպանված ...ABANO[Y] արքայանունն առաջարկում է վերականգնել [ART]ABANO[Y]՝ Արտաբանոս (Արտավան), և ըստ այդմ՝ Ծոփքի գահացանկում ավելացնել նոր արքայանուն[271]:

Նույն թվականին լույս տեսավ «Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը» մեծածավալ հուշամատյանը, որի նյութերից երկուսում հատուկ անդրադարձ կա Ծոփքի թագավորությանը: Նախ համառոտ ակնարկով անդրադառնալով Ծոփքի հնագիտական պատկերին՝ Հայկ Արամյանը Ծոփքի թագավորության առաջին ներկայացուցիչ է համարում Արսամեսին Ք.ա. III դարում (առանց գահաժամկետի որոշակիացման), թագավորության լիակատար անկախության հիմնադիր՝ Զարիադրեսին (Ք.ա. 189-ից), իսկ վերջին արքա՝ Արտանեսին[272]: Նույն հուշա-

---

[270] Տե՛ս **Սարգսյան Գ. Խ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 118-119, 123-125; *նույնի*՝ Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 1, էջ 41-69; *նույնի*՝Հայկական պետությունների ազատագրումը Սելևկյանների գերիշխանությունից, ՀԺՊ, հ. I, էջ 521-522 և այլն:

[271] Տե՛ս **Le Rider G.,** Monnaies grecques acquises par le Cabinet des Médailles en 1959, «Revue numismatique», 1959, t. 2, էջ 21-22:

[272] Տե՛ս **Արամեան Հ. Ա.,** Մամուրէթ-իւլ-Ազիզի եւ Խարբերդի շրջանը. հնագիտական պեղումներ, տե՛ս Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը. Յուշամատեան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական (աշխատա-

մատյան-ժողովածուի էջերում տեղ է գտել Արշակ Ալպոյաճյանի «Պատմական անցեալը Ծոփաց աշխարհին» ծավալուն բաժինը, որում Ծոփքի թագավորությունը թվագրվում է Ք.ա. 331-94 թվականներով՝ բաժանվելով երեք փուլերի[273].

ա. Ք.ա. 331-301 – բոլորովին անկախ,

բ. Ք.ա. 301-190 – կիսանկախ (Սելևկյան գերիշխանության ներքո),

գ. Ք.ա. 190-94 – կրկին անկախ:

Հեղինակը նշում է, որ առաջին շրջանի մասին ոչ մի փաստ չունի, իսկ երկրորդ և երրորդ շրջանների համար առաջարկում է պատմագիրների տվյալների ու դրամների մակագրությունների հիմամբ վերականգնվող «Ծոփքի ենթադրեալ վեհապետներու» հետևյալ ցանկը՝ նշելով, սակայն, որ նրանց բոլորի մասին «կարելի չէ վստահօրեն ըսել, թե անոնք Ծոփքի թագաւորներ են».

Քարասպէս կամ Հարասպէս

Արշամ,

Աբտիսարէս,

Քսերքսէս (= Շաւարշ) – 212 թ.,

Զարեհ,

Միհրոբուղանէս (= Մեհրուժան),

Մորփիլիգոս,

սիրեց եւ կազմեց Վահէ Հայկ), Նիւ Եորք, 1959, էջ 169 (տեքստում Արտանես անունը տպված է վրիպակով՝ Արտամես):

[273] **Ալպոյաճեան Ա.,** Պատմական անցեալը Ծոփաց աշխարհին, տե՛ս Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Յուշամատեան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական (աշխատասիրեց եւ կազմեց Վահէ Հայկ), Նիւ Եորք, 1959, էջ 224-231:

Արտանէս[274]:

Կիրիլ Թումանովը Երվանդունիներին նվիրված ուսումնասիրության մեջ Շամին, Արշամին, Քսերքսեսին և Աբդիսարեսին համարում է Ք.ա. III դարում իշխած Մեծ Հայքի արքաներ, որոնք հաջորդել են Օրոնտես (Երվանդ) Գ-ին և նախորդել Օրոնտես (Երվանդ) Դ-ին: Իսկ Ծոփքի թագավորությունը նա սկսում է Զարեհով և ավարտում Արտանեսով, որին համարում է Օրոնտես Ե: Ք.ա. 69 թ. հիշատակվող Մեհրուժանին (Միթրոբուզանեսին) Կ. Թումանովը համարում է Ծոփքի փոխարքա[275]: Նրա վերականգնած Ծոփքի թագավորության արքայացանկն ունի հետևյալ պատկերը՝

Զարիադրես (Զարեհ) – Ք.ա. 190 թ.,

Միթրոբուզանես (Մեհրուժան) Ա,

Օրոնտես Ե (Արտանես) – Ք.ա. 95 թ.,

Միթրոբուզանես (Մեհրուժան) Բ, Ծոփքի փոխարքա – Ք.ա. 69 թ.:

Համբարձում Գասպարյանը «Չմշկածագ եւ իր գիւղերը» աշխատության մեջ բերում է Ծոփքի թագավորության մի չափազանց վիճահարույց գահացանկ՝ «1. Սամէս, 2. Արշամ (240 թ.), 3. Աբդիսարես (200 թ.), 4. Քսերքսես, 5. Միթրոբուզանէս, 6. Մեհրուժան (165 թ.), 7. Զարեհ (123 թ.), 8. Որդանէս (93 թ.)»[276]:

---

[274] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.,** նշվ. աշխ., էջ 230-231:

[275] Տե՛ս **Toumanoff C.,** Studies in Christian Caucasian History, Washington, 1963, էջ 279-282, 290-294:

[276] **Գասպարյան Հ. Յ.,** Չմշկածագ եւ իր գիւղերը, (հրատ. տեղը չի նշված), 1969, էջ 12-13: Հեղինակն էջ 12-ում Ծոփքի առաջին արքա է համարում Արշամին, իսկ 13-ում՝ Սամեսին, զարմանալիորեն առանձին արքաներ են համարվում Միթրոբուզանէսը և Մեհրուժանը, մինչդեռ դրանք նույն արքայան-

Սիմոն Կրկյաշարյանը զարմանալիորեն Ծոփքը համարում է մեկն այն հայկական թագավորություններից, որոնք ստեղծվել էին «այն բանից հետո, երբ Աքեմենյանների թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց», ապա՝ կարծիք հայտնում, որ Մեծ Հայքի և Փոքր Հայքի նման Ծոփքը ևս վերջնականապես չի նվաճվել Մակեդոնացու կամ Սելևկյանների կողմից՝ պահպանելով ներքին ինքնուրույնությունը[277]: Ըստ նրա՝ Ծոփքն անկախ է հռչակել Արշամը մոտ Ք.ա. 240 թ.: Նրան հաջորդել է Քսերքսեսը, որին Սելևկյան արքա Անտիոքոս Գ-ն Ք.ա. 212 թ. ամուսնացրել է իր քրոջ հետ, իսկ հետագայում՝ սպանել տվել վերջինիս միջոցով: Այնուհետև՝ Ք.ա. 189 թվականից մինչև Տիգրան Մեծի կողմից Ծոփքի գրավումը, Ս. Կրկյաշարյանը հիշատակում է թագավորության երեք արքաների՝ Զարեհին, նրա որդի Մերուժանին (որը գահ է բարձրացել Կապադովկիայի Արիարաթես 5-րդ արքայի (Ք.ա. 163-130 թթ.) օգնությամբ) և վերջում՝ Արտանեսին[278]:

Ծոփքի թագավորության պատմությանն ու աշխարհագրական ընդգրկմանը մի քանի աշխատանքներում անդրադարձել է Բ. Հարությունյանը: Նա Ծոփքի արքայացանկն առավել ամփոփ ներկայացրել է «Հայկական սովետական հանրագիտարանի» «Ծոփք» հոդվածում[279].

Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորություն

վան հունական և հայկական տարբերակներն են: Անհասկանալի է նաև, թե հեղինակն ինչ հիմնավորմամբ է Ք.ա. 189 թ. Ծոփքն անկախ հռչակած Զարեհին թվագրում Ք.ա. 123 թվականով, նաև ինչու է Արտանեսի անունը խմբագրում և դարձնում «Որդանէս»:

[277] Տե՛ս **Կրկյաշարյան Ս. Մ.,** Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970, էջ 105-106:

[278] Տե՛ս նույն տեղում, էջ 105-111:

[279] Տե՛ս **Հարությունյան Բ.,** նշվ. աշխ., էջ 139-141:

Սամոս – Ք.ա. III դ. կես,

Արշամ – Ք.ա. մոտ 240-220 թթ.,

Ծոփքի թագավորություն

Քսերքսես – Ք.ա. մոտ 220 թ. - Ք.ա. III դ. վերջ,

Զարեհ – Ք.ա. 190 թ. հետո,

Արկաթիոս – սպանվել է Ք.ա. 164 թ.,

Մերուժան (Արկաթիոսի եղբայրը) – Ք.ա. 164 թվականից,

Արտանես – մինչև Ք.ա. 94 թ.,

Տիգրան Կրտսեր – Ք.ա. 66-65 թթ.,

Սոհեմոս – 55-63 թթ.:

Ժասմեն Էլչիբեկյանը քննարկվող խնդիրներում լիովին ընդունում է Գ. Տիրացյանի և Գ. Սարգսյանի մոտեցումները: Նա ևս գտնում է, որ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորությունը Սամոսի գլխավորությամբ Մեծ Հայքից անջատվել է Ք.ա. III դարի կեսերին, իսկ Ք.ա. 230-210 թթ. ընթացքում տեղի է ունեցել միացյալ պետության տրոհումը Ծոփքի և Կոմմագենեի առանձին թագավորությունների, որոնք նվաճվել են Սելևկյանների կողմից Ք.ա. 201 թ., ապա՝ անկախացել Ք.ա. II դարի առաջին կեսին[280]:

Դրամագետ Խաչիկ Մուշեղյանը Հայաստանի դրամաշրջանառությանը նվիրված մեծածավալ ուսումնասիրության մեջ դրամներ թողարկած Ծոփքի արքաներ է համարում միայն Արշամին (Ք.ա. 240-228 (՞) թթ.), Քսերքսեսին (Ք.ա. 228-212 թթ.), Աբդիսարեսին (Ք.ա. 217-212 թթ.), իսկ նախորդ ուսումնասիրողների աշխատանքներում տեղ գտած որոշ ենթադրյալ արքաների (Միթրանես, Մորփիլիգոս, Արտաբան) համար առ-

[280] Տե՛ս **Էլչիբեկյան Ժ. Գ.,** Հայաստանը և Սելևկյանները, Երևան, 1979, էջ 39-67:

կա փաստարկները համարում է անբավարար[281]: Տարիներ անց՝ 1990-ական թթ. սկզբին պատրաստած և 1997 թ. հետմահու լույս տեսած աշխատությունում Խ. Մուշեղյանը Ծոփքի թագավորության համար լիովին ընդունում է դրամագետ Զարեհ Պտուկյանի 1985 թ. հրատարակած գահացանկը, որը սկսվում է Սամես արքայով (տե՛ս ստորև)[282]:

Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության տեսությունն ընդունելություն չի գտնում արտերկրում, այդ թվում՝ ամերիկահայ դրամագետների շրջանում: Մասնավորապես, Զարեհ Պտուկյանը ներկայացնում է Ծոփքի թագավորության հետևյալ արքայացանկը.

Սամես – Ք.ա. մոտ 260 թ.,

Արշամ (Արսամես) Ա – Ք.ա. մոտ 240 թ.,

Արշամ (Արսամես) Բ – Ք.ա. մոտ 230 թ.,

Քսերքսես – Ք.ա. մոտ 220 թ.,

Աբդիսարես – Ք.ա. մոտ 210 թ.,

Զարեհ – Ք.ա. մոտ 190 թ.,

Մորֆիլիգ – Ք.ա. մոտ 150 թ.,

Արտանես – Ք.ա. մոտ 110 թ.,

Արշակ – Ք.ա. մոտ 90 թ.[283]:

---

[281] Տե՛ս **Մուշեղյան Խ.,** նշվ. աշխ., էջ 38-43, 67-70:

[282] Տե՛ս **Մուշեղյան Խ.,** Հայոց պատմության դրամագիտականը, Երևան, 1997, էջ 14:

[283] Տե՛ս **Bedoukian P. Z.,** Coinage of the Armenian Kingdoms of Sophene and Commagene, Los Angeles, 1985, էջ 9-15, 22-28, 32-36, աղ. I-II: Զ. Պտուկյանի այս արքայացանկը նույնությամբ կրկնվում է Խ. Մուշեղյանի մոտ (**Մուշեղյան Խ.,** նշվ. աշխ., էջ 14):

Ամերիկահայ մեկ այլ դրամագետի՝ Ե. Թ. Ներսեսյանի ներկայացրած Ծոփքի թագավորության գահացանկը նախորդի համեմատությամբ ունի որոշ տարբերություններ[284].

Սամես – Ք.ա. մոտ 260 թ.,

Արսամես Ա – Ք.ա. մոտ 240 թ.,

Քարասպես – մինչև Ք.ա. 230 թ.,

Արսամես Բ – Ք.ա. մոտ 230 թ.,

Քսերքսես– Ք.ա. մոտ 220 թ.,

Աբդիսարես – Ք.ա. մոտ 210 թ.,

Զարիադրես (Զարեհ) – Ք.ա. մոտ 190 թ.,

Մորֆիլիգ – Ք.ա. մոտ 150 թ.,

Արտանես – Ք.ա. մոտ 110 թ.,

Արշակ – Ք.ա. մոտ 70 թ.:

Մարտին Շոտկին հակված է Ծոփքի թագավորությունը համարելու Արևմտահայկական պետություն՝ ի տարբերություն Մեծ Հայքի, որը բնորոշում է իբրև Արևելահայկական: Ընդ որում՝ նա գտնում է, որ Ծոփքի կամ Արևմտահայկական թագավորությունը Հայկական սատրապության շարունակությունն է, որի հիմնադիրը համարում է Գավգամելայի ճակատամարտից հետո անկախություն հռչակած Օրոնտես-Երվանդ արքային (մինչ այդ՝ սատրապ): Մ. Շոտկին ներկայացնում է Ծոփքի կամ Արևմտահայկական թագավորության հետևյալ գահացանկը՝

Օրոնտես Բ – Ք.ա. 331-330 թթ.,

(Բար)դանես – Ք.ա. մոտ 330-317 թթ.,

Օրոնտես Գ – Ք.ա. 317-275 թթ.,

---

[284] Տե՛ս **Nersessian Y. T.,** նշվ. աշխ., էջ 47-53, աղ. 1-2:

Սամոս – Ք.ա. մոտ 275-255 թթ.,

Արսամես – Ք.ա. մոտ 255-225 թթ.,

Աբդիսարես – Ք.ա. մոտ 225-215 թթ.,

Քսերքսես– Ք.ա. մոտ 215-202 թթ.,

Զարիադրես – Ք.ա. մոտ 202-163 թթ. (արքա՝ Ք.ա. 189 թվականից),

Միթրոբուզանես – Ք.ա. մոտ 163 - ? թթ.,

Օրոնտես Դ (Արտանես) – Ք.ա. ? - 93 թթ.[285]:

Ծոփքի կամ Արևմտահայկական թագավորության սկզբնավորումը Գավգամելայի ճակատամարտից հետո չի կարող համարվել հիմնավոր, քանի որ հակասում է սկզբնաղբյուրների հստակ հաղորդումներին, ըստ որոնց՝ այդ ճակատամարտին մասնակցել են Մեծ Հայքի և Փոքր Հայքի զորքերը՝ իրենց առաջնորդներով. Ծոփքը՝ որպես առանձին միավոր, ընդհանրապես չի հիշատակվում այդ իրադարձությունների կապակցությամբ:

Ուշագրավ է Կլոդ Արմեն Մութաֆյանի և Էրիկ Վան Լովի մոտեցումն այս հարցում՝ շարադրված Հայաստանի պատմության ատլասի էջերում: Նրանք, հետևելով Ստրաբոնի հաղորդմանը, որ Հայաստանի բաժանումը Մեծ Հայքի և Ծոփքի տեղի է ունեցել Երվանդ Վերջինից հետո, Գավգամելայի ճակատա-

---

[285] Տե՛ս **Schottky M.,** Media Atropatena und Gross-Armenien in hellenistischer Zeit, Bonn, 1989, էջ 76-138 (գահացանկերը՝ էջ 241-243): Հեղինակն Արևմտահայկական (Ծոփքի) թագավորության գահակալներին համարում է Երվանդական դինաստիայի, իսկ Արևելահայկական (Մեծ Հայքի) արքաներին՝ Երվանդական-Արտաշեսյան հարստության ներկայացուցիչներ: Ընդ որում, ըստ հեղինակի՝ դինաստիայի առաջին ներկայացուցիչներն են Օրոնտեսը (Երվանդ, Ք.ա. 220-190 թթ.), Արտաշես Ա-ն (Ք.ա. 190-160 թթ.), Արտավազդ Ա-ն (Ք.ա. 160-120 թթ.), Տիգրան Ա-ն (Ք.ա. 120-95 թթ), Տիգրան Բ-ն (Ք.ա. 95-55 թթ.):

մարտից հետո հիշատակված Երվանդին (Օրոնտես, Արուանդես, նաև՝ Արդոատես), Սամոսին (Շամ), Արսամեսին (Արշամ), Քսերքսեսին (Ք.ա. 212 թ.), Աբդիսարեսին և Երվանդ Վերջինին համարում են Մեծ Հայքի գահակալներ: Հեղինակներն անդրադառնում են Ծոփքի թագավորության հիմնադիր Զարեհի գործունեությանը, ապա՝ Տիգրան Մեծի կողմից Ծոփքը Մեծ Հայքին վերամիավորելուն[286]:

Խորհրդահայ և դրան հաջորդած անկախ Հայաստանի պատմագիտության մեջ շարունակում էր պահպանվել ու զարգանալ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության մասին տեսությունը: Դա ընդունում էր նաև Պետրոս Հովհաննիսյանը: Ըստ նրա՝ նշված պետության արքայացանկն ուներ հետևյալ տեսքը.

Սամոս – (Ք.ա. III դ. առաջին կես),

Արշամ – (Ք.ա. 240-220 թթ.),

Աբդիսարես – (Ք.ա. մոտ 220-215 թթ.),

Քսերքսես – (Ք.ա. 215-201 թթ.)[287]:

Շարունակելով ձևավորված մոտեցումը՝ Երվանդ Մարգարյանը նույնպես գտնում է, որ Մեծ Հայքից անջատվելով՝ Ծոփքն ու Կոմմագենեն Ք.ա. 270-260-ական թթ. կազմեցին միացյալ թագավորություն: Ք.ա. 220-ական թթ. այդ երկու երկրամասերն անջատվում են՝ վերածվելով անկախ թագավորու-

---

[286] Տե՛ս **Մութաֆյան Կ. Ա., Վան Լով Է.,** Հայաստանի պատմական ատլաս. Մերձավոր Արևելքը և Հարավային Կովկասը մ.թ.ա. VII դարից մինչև XXI դար, Երևան, 2017, էջ 22-29 (ֆրանսերեն բնագիրը լույս է տեսել 2001 թ.): Համաձայնելով հեղինակների ընդհանուր տրամաբանությանը՝ դժվար է Քսերքսեսին և Աբդիսարեսին տեսնել Մեծ Հայքի արքայացանկում, այն էլ՝ Ք.ա. III դարում (տե՛ս ստորև):

[287] Տե՛ս ՀԺՊՔ, էջ 521 («Ժամանակագրություն հայոց թագավորների», բաժնի հեղինակ՝ Պ. Հովհաննիսյան):

թյունների, որից կարճ ժամանակ անց նվաճվում են Սելևկյան-ների կողմից, իսկ Ք.ա. II դարի առաջին կեսին կրկին դառնում անկախ թագավորություններ: Ե. Մարգարյանը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորություն

Սամոս (Շամ կամ Շամս) – Ք.ա. մոտ 260-243 թթ.,

Արսամես (Արշամ) – Ք .ա. մոտ 243-226 թթ.,

Ծոփքի թագավորություն

Քսերքսես – Ք.ա. մոտ 226-201 թթ.,

Զարեհ (Զարիադրես) – Ք.ա. 201 թվականից ստրատեգես, 189 թվականից՝ արքա[288]:

Դրամագետ Ֆրանկ Լ. Կովաչը ներկայացնում է Ծոփքի թագավորության ամենամեծ՝ 18 ներկայացուցչից բաղկացած գահացանկը[289].

Սամոս – Ք.ա. մոտ 275-255 թթ.,

Արսամես – Ք.ա. մոտ 255-225 թթ.,

Աբդիսարես – Ք.ա. III- II դդ.,

Քսերքսես – Ք.ա. մոտ 215-202 թթ.,

Արտաբանոս – Ք.ա. մոտ 202 թ.,

Զարիադրես – Ք.ա. մոտ 190-163 թթ.,

Միթրոբուզանես – Ք.ա. մոտ 163-? թթ.,

Արկաթիաս Ա – Ք.ա. 150 թվականից հետո,

Միթրադատես Ա – Ք.ա. II դարի 2-րդ կես,

---

[288] Տե՛ս **Մարգարյան Ե.,** Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմագենե, Հայաստան, Հռոմ, Երևան, 2014, էջ 33-39, 44: Ե. Մարգարյանը Զարեհից հետո անդրադառնում է միայն Ծոփքի թագավորությունը Տիգրան Մեծի տերությանը միացնելու դրվագին:

[289] Տե՛ս **Kovacs F. L.,** Armenian Coinage in the Classical Period, «Classical Numismatic Studies», London, 2016, № 10, էջ 1-7:

Օրոնտես Դ – Ք.ա. մոտ 119-93 թթ.,
Արկաթիաս Բ – Ք.ա. 93/90 – 90/89 թթ.,
Միթրադատես Բ Ֆիլոպատոր – Ք.ա. 89 – 85 թթ.,
Տիգրան Մեծ – Ք.ա. 85 – 69 թթ.,
Տիգրան Կրտսեր – Ք.ա. 66–65 թթ.,
Արիոբարզանես Ա – Ք.ա. 66/5–63 թթ.,
Տիգրան Ե – մոտ 6-36 թթ.,
Տիգրան Զ – մոտ 36-62 թթ.,
Սոհեմոս (Էմեսացի) – 54-60 թթ.:

Ավանդաբար ընդունվածների կողքին այստեղ տեսնում ենք անուններ, որոնք բավարար չափով հիմնավորված չեն: Օրինակ՝ Արտաբանոսի համար միակ հիմք է ծառայել Քսերքսեսի դրամին նման մի նմուշ, որի վնասված մակագրությունը, ինչպես նշվեց վերը, Ժ. լե Ռիդերն առաջարկել էր վերականգնել [ART]ABANO[Y], իսկ Ֆ. Լ. Կովաչը տեղադրում է նրան Քսերքսեսից հետո՝ Ք.ա. մոտ 202 թ.՝ ըստ իր ժամակագրության[290], որը ևս խիստ վիճարկելի է:

Որևէ լուրջ հիմնավորում չի բերվում Ծոփքի գահացանկում «Միհրդատ Ա» արքայի առկայության մասին: Համոզիչ չէ Արտանեսի անունը որպես «Օրոնտես», այսինքն՝ «Երվանդ» մեկնաբանելը և արքայացանկում նրան «Օրոնտես Դ» ներկայացնելը: Մտացածին են նաև Միհրդատ Զ Եվպատորի երկու որդիներին որպես Արկաթիաս Բ և Միթրադատես Բ արքաներ ներկայացնելը Ծոփքի գահացանկում, առավել ևս՝ Ք.ա. 93-85 թթ. ընթացքում, երբ Ծոփքը Մեծ Հայքի մասն էր կազմում և ա-

[290] Տե՛ս **Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 4:

ռանձին թագավորություն չէր[291]: Լիովին շինծու է և գրավոր սկզբնաղբյուրներով չհիմնավորված Ք.ա. 150-85 թթ. Ծոփքն իբրև Պոնտոսի ենթակայության ներքո գտնվող երկիր ներկայացնելը, որի չորս արքաները (երկու Արկաթիաս և երկու Միթրադատես) իբրև թե եղել են պոնտացիներ[292]: Դա լիովին հակասում է Ստրաբոնի հաղորդմանը, ըստ որի՝ Փոքր Հայքը *«Ծոփքի նման միշտ ունեցել է իր բնիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայքի բարեկամներն էին, մերթ՝ ինքնագլուխ»*[293]: Դա հակասում է նաև Միհրդատ Եվպատորի ճառի տեղեկությանը (պահպանված Հուստինոսի մոտ), ըստ որի՝ Փոքր Հայքը Կապադովկիայի, Պոնտոսի, Պափլագոնիայի, Բյութանիայի և Մեծ Հայքի հետ նույն շարքում հիշվում է այն երկրների շարքում, որոնք «*միշտ հնազանդվել են միայն իրենց տեղական արքաներին*», և նրանցից ոչ մեկին «*ձեռք չէին տվել ոչ ինքը՝ Ալեքսանդրը, որ նվաճել էր ամբողջ Ասիան, ոչ էլ որևէ մեկը նրա հաջորդներից կամ հետնորդներից*»[294]:

---

[291] Տե՛ս **Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 5-6: Միհրդատ Եվպատորն իր որդիներից Արկաթիասին Ք.ա. 101 թ. գահ է բարձրացրել Կապադովկիայում «Արիարաթես IX» գահանունով, երբ նա ընդամենը ութ տարեկան էր: Այդ գահակալությունը երկար չի տևել և ընդհատվել է կապադովկիացիների ու հռոմեացիների ջանքերով: Միհրդատյան առաջին պատերազմի ժամանակ Արկաթիասին Ապպիանոսը հիշատակում է իբրև Փոքր Հայքի տասհազարանոց հեծելազորի առաջնորդ (**Ապպիանոս,** Հռոմեական պատմություն, XII, 17-18), ինչից եզրակացվել է, որ նա կարող էր լինել նաև այդ երկրամասի փոխարքա-կառավարիչը: Միհրդատ Եվպատորի մյուս որդին՝ Միհրդատ Կրտսերը, կառավարել է Բոսպորում, Կոլխիդայում և Պոնտոսում, սակայն, ոչ որևէ հայկական երկրամասում:

[292] Տե՛ս **Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 4-6:

[293] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XII, 3, 28:

[294] **Հուստինոս,** Համառոտումն Պոմպեոս Տրոգոսի «Փիլիպպոսյան պատմությունների», գիրք XXXVIII, 7:

Տիգրան Մեծին Ծոփքի արքայացանկում ներառելը ևս բավարար հիմնավորված չէ. դա իրավացի կլիներ, եթե նա իրեն թագավոր հռչակած լիներ արքա Ծոփքի գահին, մինչդեռ Ստրաբոնի վկայությամբ Տիգրանը հաղթեց Արտանեսին և միացրեց նրա տիրույթներն իր թագավորությանը[295]: Ընդ որում՝ բոլորովին պատճառաբանված չէ Տիգրան Մեծին Ծոփքի գահին նշելը Ք.ա. 85 թվականից այն դեպքում, որ Ծոփքի անցումը Տիգրան Մեծի իշխանության ներքո տեղի է ունեցել նրա գահակալության սկզբում:

Տրամաբանական չէ նաև Արիոբարզանեսին Ծոփքի գահացանկում ներառելն այն պատճառաբանությամբ, որ Ծոփքի տարածքը ժամանակավորապես միացվել է Կապադովկիային: Իսկ ինչ վերաբերում է Տիգրան Ե-ին և Տիգրան Զ-ին, ապա նրանք Հռոմի շնորհիվ գահ են բարձրացվել և իշխել որպես Մեծ Հայքի արքաներ, որի կազմում էր գտնվում նաև Ծոփքը: Հետևելով նման տրամաբանության՝ Մեծ Հայքի բոլոր արքաներին հարկ է ընդգրկել նաև Ծոփքի գահացանկում: Փաստորեն, եթե Ֆ. Կովաչի արքայացանկից հեռացնենք Ծոփքի մտացածին գահակալներին, կունենանք նախորդների կողմից արդեն շրջանառված մեկ տասնյակ անուններ:

Միշաղ Մարսիակը Ծոփքի, Կորդուքի և Ադիաբենեի թագավորությունների ուսումնասիրությանը նվիրված մենագրությունում ներկայացնում է հետևյալ գահացանկը՝

Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորություն

Սամոս – Ք.ա. III դարի կես,

Արսամես – վկայված Ք.ա. 227 թ.,

---

[295] Տե՛ս **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XI, 14, 15:

Քսերքսես – վկայված Ք.ա. մոտ 212 թ.,

Ծոփքի թագավորություն

Զարիադրես – սելևկյան սատրապ, 188 թվականից՝ արքա,

Միթրոբուզանես – Ք.ա. մոտ 188-163 թթ. միջակայքում,

Արկաթիաս – Ք.ա. II դարի երկրորդ կեսին,

Արսակես կամ Արտանես – Ք.ա. 95 թ.,

Տիգրան Կրտսեր – Ք.ա. 66 թ.,

Սոհեմոս – 54 թ.[296]:

Դրամագետ Ռուբեն Վարդանյանը, անդրադառնալով Ծոփքի դրամաթողարկումներին, հետևում է Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության խորհրդահայ պատմագրության ավանդույթին, սակայն այդ պետության պատմությունը սկսելով Ք.ա. III դարի երկրորդ քառորդից՝ հասցնում է մինչև Ք.ա. 163 թվականը, երբ, ըստ հեղինակի, «միացյալ թագավորությունը բաժանվում է Ծոփքի և Կոմմագենեի թագավորությունների»[297], մի բան, որ չի համապատասխանում ցայսօր հայտնի սկզբնաղբյուրներին: Պոնտական ծագումով Ծոփքի չորս արքաների (երկու Արկաթիաս և երկու Միհրդատ) մասին տվյալները Ռ. Վարդանյանը համարում է հետաքրքիր, սակայն հավելյալ փաստագրման կարիք ունեցող: Ծոփքի արքայացանկը նա ներկայացնում է հետևյալ կերպ.

---

[296] Տե՛ս **Marciak M.,** Sophene, Gordyene, and Adiabene: Three Regna Minora of Northern Mesopotamia Between East and West, Leiden-Boston, 2017, էջ 113-157:

[297] **Վարդանյան Ռ.,** Դրամաթողարկումը Հայաստանում հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջաններում, Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը, Երևան, 2018, էջ 32-36: Անհասկանալի է նաև հեղինակի կողմից ընդունվող Ֆ. Կովաչի տեսակետը մինչև Ք.ա. 85 թվականը Ծոփքի արքաների դրամահատության մասին այն դեպքում, երբ հենց ինքն է նշում, որ Տիգրան Մեծը Ք.ա. 94 կամ 93 թ. Արտանեսին *«հեռացրեց գահից և տիրեց երկրին»* (նույն տեղում, էջ 36):

Սամոս – Ք.ա. III դարի երկրորդ քառորդ,
Արսամես – Ք.ա. III դարի երրորդ քառորդ,
Աբդիսարես – Ք.ա. III-II դարեր
Քսերքսես – Ք.ա. III-II դարեր (Ք.ա. 212 թ. մոտ)[298],
Արտաբանոս – Ք.ա. III-II դարեր,
Զարիադրես – Ք.ա. 190 թվականից,
Մեհրուժան,
Արկաթիաս Ա – Ք.ա. 150 թվականից հետո,
Միհրդատ Ա,
Արտանես – մինչև Ք.ա. 94 կամ 93 թ.,
Արկաթիաս Բ – Ք.ա. 93/90 – 90/89 թթ.,
Միհրդատ Բ Ֆիլոպատոր – Ք.ա. 89-85 թթ.:

Նշվածներից բացի՝ կան ուսումնասիրողներ, որոնք Ծոփքի թագավորությանն անդրադարձել են այլ հարցերի քննության առնչությամբ՝ հատուկ հետազոտության առարկա չդարձնելով մեզ հետաքրքրող նյութը: Օրինակ՝ Հայկ Հակոբյանը նշում է Ք.ա. III դարում Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության մասին, որը, նրա կարծիքով, Սելևկյանների միջամտության հետևանքով կիսվեց Ք.ա. 220 թվականից հետո: Բաժանումից հետո արդեն առանձին Ծոփքի թագավորությունում իշխել են Քսերքսեսը, ապա՝ Զարեհը (նախ՝ ստրատեգ, իսկ Մագնեսիայի ճակատամարտից հետո՝ արքա), որին հաջորդած Արկաթիասը սպանվել է Սելևկյաննե-

[298] Անհասկանալի հակասություն կա նաև տեքստում և նկարների բացատրագրերում: Քսերքսեսի միակ ստույգ հիշատակությունը Ք.ա. 212 թ. նշելուց հետո Ռ. Վարդանյանը նրա, Աբդիսարեսի և Արտաբանոսի գահակալման համար նշում է Ք.ա. III դարի վերջը և II դարի սկիզբը, սակայն ըստ բացատրագրերի՝ Քսերքսեսը և Աբդիսարեսը իշխել են Ք.ա. III դարի երրորդ քառորդում (նույն տեղում, էջ 34-35, նկ. 7-8):

րի դեմ պատերազմում Ք.ա. 165 թվականին: Ըստ Հ. Հակոբյանի՝ Ք.ա. 163 թվականից Ծոփքում թագավորել է Մեհրուժանը, որին հաջորդել է Արտանեսը՝ իշխելով մինչև Տիգրան Մեծի ժամանակը՝ Ք.ա. 94 թվականը[299]:

Մարգարիտա Ֆասելլան Սամոսին համարում է Կոմմագենեի արքա, Արշամին՝ Ծոփք-Կոմմագենեի, իսկ նրա հաջորդ Քսերքսեսին՝ Ծոփքի՝ գտնելով, որ Արշամից հետո Ծոփքի և Կոմմագենեի միացյալ թագավորությունը պառակտվել էր[300]:

Խորհրդային պատմագրության արդյունքներն ամփոփող Հին աշխարհի պատմության բազմահատորյակներից մեկում Ք.ա. III դարում իշխած Սամոսը և Արշամը համարվում են Ծոփքի (ոչ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության) արքաներ, որոնց իշխանության ներքո է այդ շրջանում գտնվել նաև Կոմմագենեն[301]: Նույնպիսի մոտեցում ունի նաև Սերգեյ Օբուխովը[302]:

Ի մի բերելով գիտական և գիտահանրամատչելի գրականության մեջ որպես Ծոփքի արքաներ ներկայացվող գահակալների ցանկը, ապա դուրս թողնելով վերոնշյալ անհավանական թեկնածուներին՝ ստանում ենք ընդհանուր առմամբ մեկ տասնյակից քիչ ավելի գահակալներ: Դրանք են՝ Սամոսը (Շամ), Արշամը (Արսամես), Քարասպեսը, Աբդիսարեսը, Քսերքսեսը, Արտաբանոսը, Զարեհը, Մեհրուժանը (Միթրոբու-

---

[299] Տե՛ս **Հակոբյան Հ. Պ.,** Տիգրան Մեծ, Երևան, 2005, էջ 47, 57-58, 63-65:

[300] Տե՛ս **Facella M.,** La dinastia degli Orontidi nella Commagene Ellenistico-Romana, Pisa, 2006, էջ 169-190:

[301] Տե՛ս История древнего мира, кн. 2, Расцвет древних обществ (отв. ред. И. С. Свенцицкая), М., 1989, էջ 403-405:

[302] Տե՛ս **Обухов С. В.,** Градостроительная политика царей Софены в Коммагене в III в. до н.э., «Историческій вѣстникъ», Эллинизм: личность, власть, общество, т. XVI, М., 2018, էջ 234-251:

զանես), Արկաթիո/ասը, Մորֆիլիգը, Արտանեսը, Տիգրան Կրտսերը և Սոհեմոսը: Սակայն, ինչպես կտեսնենք, նշվածների զգալի մասն իրականում կապ չի ունեցել Ծոփքի թագավորության հետ:

Ք.ա. IV-III դարերում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության խնդիրը[303]: Ինչպես վերը նշվեց, մի շարք հեղինակներ Ծոփքի թագավորության սկզբնավորումը թվագրում են Ք.ա. IV դարով՝ այն կապելով Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանի անկախացման հետ: Ուստի նախ կանգ առնենք Ք.ա. IV դարում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության հնարավորության խնդրին:

Անհրաժեշտ է արձանագրել, որ Ք.ա. IV դարում որևէ հիշատակություն չկա Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության մասին, ավելին՝ որևէ առիթով այդ երկրամասերն ընդհանրապես չեն հիշատակվում: Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ հիշատակվում են հայկական երկու երկրամասերի՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի զորքերը՝ համապատասխանաբար, Օրոնտես-Երվանդ Գ-ի ու Միթրաուստեսի (Միհրվահիշտ) առաջնորդությամբ[304]: Նրանք

---

[303] Այս խնդրի մասին արդեն հրատարակված մեր դիտարկումները տե՛ս **Մովսիսյան Ա.,** Դիտարկումներ Հայաստանի Ք.ա. V-III դարերի պատմության շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIX, Երևան, 2014, էջ 90-95; **Մովսիսյան Ա., Կարապետյան Լ.,** նշվ. աշխ., էջ 14-18:

[304] Իսսոսի և Գավգամելայի ճակատամարտերին հայերի մասնակցության մասին տե՛ս **Քվինտուս Կուրտիուս Ռուֆուս,** Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, գիրք III, II, 4-6, XII, 10, 12-13, գիրք IV, XVI, 1-6; **Արրիանոս Փլավիոս,** Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, III, 5-6, XI, 7; հմմտ. **Օհանյան Մ.,**

որոշ ժամանակ անց անկախ հռչակեցին երկու հայկական պետություններ՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունները[305]:

Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանին վերաբերող հաջորդ հիշատակությունը պահպանվել է Ստրաբոնի մոտ, ըստ որի՝ այդ ճակատամարտից որոշ ժամանակ անց Ալեքսանդրի զորաբանակներից մեկը՝ Մենոն զորավարի գլխավորությամբ, ուղարկվեց՝ գրավելու Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը, սակայն հայերը ոչնչացրին նրա բանակը[306]:

Ք.ա. IV դարի վերաբերյալ հաջորդ վկայությունը պահպանել է Դիոդորոս Սիկիլիացին (Սիցիլիացին), ըստ որի՝ Ալեքսանդրի ժառանգորդների (*դիադոքոսների*) պատերազմների ժամանակ Եվմենեսը իբրև հաղթաթուղթ իր մրցակիցների նկատմամբ վկայակոչել է Օրոնտեսի նամակը, «որը տիրում էր Արմենիայի սատրապությանը»[307]: Տեղեկությունը վերաբերում է Մեծ Հայքի արքա Երվանդ Գ-ին և թվագրվում է Ք.ա. 317 թվականով: Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան» երկի էջերում պահպանվել է այդ ժամանակաշրջանին վերաբերող մեկ այլ ուշագրավ հաղորդում ևս, ըստ որի՝ մակեդոնա-

---

Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Եր., 2003, էջ 21-62:

[305] Երվանդ Գ-ն «Արոանդես» անվանաձևով հիշատակվում է նաև Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրում և, ի տարբերություն Երվանդ Բ-ի, կրում է «արքա» տիտղոսը (**Hümann K., Puschtein O.,** նշվ. աշխ., էջ 286, 307; **Тирацян Г.,** նշվ. աշխ., էջ 70-73; **Տիրացյան Գ.,** Երվանդունիները Հայաստանում, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1958, թիվ 6, էջ 65-67; **Toumanoff C.,** նշվ. աշխ., էջ 279-280):

[306] Տե՛ս **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XI, 14, 9; հմմտ. **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 95-97; **Օհանյան Մ.,** նշվ. աշխ., էջ 74-75:

[307] **Դիոդորոս Սիկիլիացի,** Պատմական գրադարան, գիրք XIX, գլ. XXIII, 1-3:

ցիների կողմից գահընկեց արված Կապադովկիայի արքա Արիարաթեսը կարողացել է վերականգնվել հայրական գահին Մեծ Հայքի արքա Արդոատեսի տրամադրած զորքերի շնորհիվ[308]: Դա տեղի է ունեցել Ք.ա. 301 թվականին[309]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի Ք.ա. IV դարի պատմության մասին պահպանված վկայությունները վերաբերում են Մեծ Հայքին և Փոքր Հայքին: Հետևաբար, Ք.ա. IV դարում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության պատմությունը սկսելը որևէ կերպ չի կարող հիմնավոր լինել:

Այժմ անդրադառնանք Ք.ա. III դարում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գոյության խնդրին, որից հետո մեկ առ մեկ կքննարկենք սկզբնաղբյուրներում վկայված և ուսումնասիրություններում քննարկված բոլոր արքաների մասին տեղեկությունները:

Այստեղ նույնպես պետք է արձանագրել, որ այս հարյուրամյակում ևս որևէ սկզբնաղբյուրում չի հիշատակվում Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորությունը: Ինչպես արդեն նշել ենք, Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության գաղափարը հայագիտության մեջ հայտնվել է միայն XX

---

308 Տե՛ս **Դիոդորոս Սիկիլիացի,** Պատմական գրադարան, գիրք XXXI, գլ. XIX, 4-5: Հմմտ. **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 441; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 100-103:

309 Իրադարձության թվականի հարցի քննարկումը տե՛ս **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 435-441; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 97-103: Քննարկման առարկա է եղել նաև հարցը՝ արդյոք «Արդոատեսը» ճշգրիտ արքայանունն է, թե դա «Արտավազդ» կամ «Արոանդես» (այսինքն՝ «Երվանդ») անվան աղճատված ձևն է: Եթե ճիշտ է վերջին ենթադրությունը, մեծ հավանականությամբ կարելի է ընդունել, որ նա Մեծ Հայքի անկախության հիմնադիր Երվանդ Գ-ն է և թագավորել է Ք.ա. 331 թվականից մինչև Ք.ա. IV դարի վերջը կամ III դարի սկիզբը:

դարի կեսին Գ. Տիրացյանի շնորհիվ: Այն ընդունվել ու ամրապնդվել է խորհրդահայ պատմաբանների միջավայրում (Գ. Սարգսյան, Բ. Հարությունյան և այլք): Սակայն դա եղել է տեսական վերականգնում՝ նպատակ ունենալով վերականգնել սկզբնաղբյուրների տեղեկությունների սակավությունից առաջացած բացը: Ասվածը հիմնավորելու համար համառոտակի հիշատակենք այն բոլոր փաստերը, որոնք պահպանվել են սկզբնաղբյուրներում Հայաստանի Ք.ա. III դարի պատմության վերաբերյալ:

Արդոատեսի մասին Դիոդորոս Սիկիլիացու տեղեկությունից հետո ժամանակագրորեն հաջորդ վկայությունը վերաբերում է Ք.ա. 255 թ., երբ Բյութանիայի Նիկոմեդես արքայի որդի Զիելասը (Զիաելասը), ըստ Մեմնոն Հերակլեացու, նախ ապաստան է գտնում «հայոց արքայի» մոտ, ապա արտաքին ուժերի օգնությամբ վերականգնում է թագավորությունը[310]: Հայոց արքայի անունը, դժբախտաբար, սկզբնաղբյուրում չի նշվում, սակայն, հասկանալի է, որ զգալի հեռավորության վրա գտնվող, ոչ սահմանակից երկրի ներքին գործերին կարող էր միջամտել միայն լուրջ ուժ և տարածաշրջանային հեղինակություն ունեցող պետությունը, որի համար առավել հավանական թեկնածուն, իհարկե, Մեծ Հայքն է: Ենթադրվել է, որ հայոց այդ արքան կարող էր լինել Սամոս (Շամ) Երվանդունին, քանի որ վերջինիս իշխանության շրջանը կարող է համապատասխանել հիշյալ դեպքերի ժամանակին:

---

[310] Տե՛ս **Мемнон,** О Гераклее (пер. В. П. Дзагуровой), «Вестник древней истории», 1951, № 1, էջ 298-299; հմմտ. **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 442; **Տիրացյան Գ. Ա.,** Հայաստանը մ.թ.ա. III դարում, էջ 512; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 111; **Габелко О. Л.,** История Вифинского царства, СПб., 2005, էջ 198-200:

Ի՞նչ է մեզ հայտնի Սամոս (Շամ) արքայի մասին:

Հայաստանի Ք.ա. III դարի պատմության վերականգնմանը մեծապես օգնում են Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրի արձանագրությունները, որոնք թողել է Երվանդական արքայատան շառավիղ Անտիոքոս Ա Կոմմագենացին: Հայրական գծով նրա նախնիների շարքում հիշատակվում են Արոանդես-Երվանդ Բ-ն, որին Քսենոփոնը հիշատակում է Ք.ա. 401 թ. որպես ամբողջ Հայաստանի սատրապ-կառավարիչ, Արոանդես-Երվանդ Գ արքան (որը Գավգամելայի ճակատամարտից հետո հռչակեց Մեծ Հայքի անկախ թագավորությունը), ապա հաջորդում է մի գահակալ, որի անունից պահպանվել է «…անես» վերջավորությունը, որից հետո վկայված են Սամոս (Շամ) և Արսամես (Արշամ) արքաները[311]:

Սամոս (Շամ) արքան որևէ պատմիչի երկում չի հիշատակվում: Փաստը, որ Կոմմագենեի Սամոսատ քաղաքը հիշատակվում է դեռևս Ք.ա. 245 թ., թույլ է տվել ուսումնասիրողներին եզրակացնել, որ այդ քաղաքի հիմնադիրը (որի համար, Սամոսից բացի, այլ թեկնածու չկա) գահակալել է մինչ այդ՝ Ք.ա. մոտ 270/260-240-ական թվականներին[312]:

---

[311] Տե՛ս **Hümann K., Puschtein O.,** նշվ. աշխ., էջ 286, 308-309; **Тирацян Г.,** նշվ. աշխ., էջ 71-74; **Toumanoff C.,** նշվ. աշխ., էջ 280-283:

[312] Տե՛ս, օրինակ, **Toumanoff C.,** նշվ. աշխ., էջ 280-281; ՀԺՊ, հ. I, էջ 512; **Մութաֆյան Կ. Ա., Վան Լով Է.,** նշվ. աշխ., էջ 24 և այլն): Վաղբյուզանդական աղբյուրներում Ծոփքում հիշատակվում է Սամոկերտ բնակավայրը, որը ևս հավանաբար հիմնել է Սամոսը Ք.ա. III դարում: Մեզ են հասել «Սամոս» անունը կրող արքայական դրամներ, սակայն ուսումնասիրողների շրջանում կա բանավեճ, ըստ որի՝ դրանք պետք է համարել Ք.ա. III դարում իշխած արքայինը, թե Ք.ա. II դարի երկրորդ կեսին հիշվող Սամոս Բ Թեոսեբեոսինը (տե՛ս **Bedoukian P. Z.,** նշվ. աշխ., էջ 9-10, 22-23, 32, աղ. I, 1; **Nersessian Y. T.,** նշվ. աշխ., էջ 47-48, աղ. I, 1; **Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 1, 39; **Վարդանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 33):

Այսքան են Սամոս (Շամ) արքայի մասին եղած փաստերը: Ակնհայտ է, որ չկա որևէ փաստարկ, ինչի հիմամբ կարելի է այս արքային համարել Ծոփքի կամ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության հիմնադիր կամ այդ երկրամաս(եր)ը Մեծ Հայքից անջատող: Փաստերի տրամաբանությունը հուշում է, որ նա պետք է լիներ Մեծ Հայքի արքա, քանի որ նրա նախորդներ Երվանդ Բ-ն ամբողջ Հայաստանի սատրապն էր, Երվանդ Գ-ն՝ Մեծ Հայքի արքան, իսկ նրա հաջորդ Արշամը, ինչպես կտեսնենք ստորև, ունեցել է նույնպիսի կարգավիճակ:

Ք.ա. III դարում իշխած հայ գահակալների մեջ ամենահարուստ տեղեկություններն ունենք Արսամես (Արշամ) արքայի մասին: Դրանք արքայի հատած դրամներն են և նրա մասին մատենագրական ու վիմագիր վկայությունները:

Արշամ (Արսամես) արքայից մեզ հասած բոլոր դրամները հունագիր են և կրում են «Արսամես արքայի» մակագրությունը[313], ինչից հնարավոր չէ պարզել, թե նա որ պետության արքան էր:

Արշամ արքայի մասին վիմագիր վկայությունները մեզ են հասել Կոմմագենեի արքա Անտիոքոս Ա-ից, որը, Արշամին իր հայրական նախնիների ցանկում հիշատակելուց բացի, տեղեկացնում է, որ նա է հիմնել Արսամեա անվամբ երկու քաղաք՝

[313] Տե՛ս **Bedoukian P. Z.,** նշվ. աշխ., էջ 10-12, 23-24, 32-33, աղ. I, 2-8; **Nersessian Y. T.,** նշվ. աշխ, էջ 48-50, աղ. I, 2-4, 6-9; **Kovacs F. L.,** նշվ. աշխ., էջ 1-2, աղ. I, 1-10; **Վարդանյան Ռ.,** նշվ. աշխ, էջ 33-34: Ելնելով դրամների տարատեսակությունից՝ դրամագետներն առաջարկում են Ք.ա. 240-230 թթ. տեսնել Արշամ անունով երկու գահակալների, ինչը, սակայն, չի հաստատվում մատենագրական տվյալներով: Ե. Ներսիսյանն առաջարկում է ենթադրյալ Արսամես Ա-ի և Արսամես Բ-ի միջև տեղադրել Քարասպեսին (**Nersessian Y. T.,** նշվ. աշխ, էջ 48-49):

Եփրատ և Նիմֆայոս գետերի վրա[314]: Թեպետ Ծոփքի Արշամաշատ քաղաքի հիմնադրման մասին մեզ որևէ արձանագրություն կամ մատենագրական վկայություն չի հասել, ուսումնասիրողները հակված են այդ քաղաքի հիմնադրումը ևս վերագրել Արշամ արքային[315]:

Արշամի մասին միակ և բացառիկ մատենագրական տեղեկություն է մեզ հասցրել Պոլիենոսը ռազմական խորամանկությունների մասին պատմող «Ստրատեգեմներ» աշխատության էջերում[316]: Նրա չափազանց արժեքավոր վկայությունից տեղեկանում ենք, որ Ք.ա. 220-ական թթ. սկզբին Արշամ արքան ապաստան է տվել Սելևկյան տիրակալ Սելևկոս Բ Կալլինիկոսի դեմ ապստամբած նրա եղբորը՝ Անտիոքոս Հիերաքսին: Վերջինս իշխում էր Փոքր Ասիայի սելևկյան տիրույթներին և գահընկեց անելով եղբորը՝ ձգտում էր տիրել ամբողջ Սելևկյան աշխարհակալությանը: Անհաջողություն կրելով Միջագետքում և հետապնդվելով Սելևկոս Բ-ի երկու զորավարների մեծաթիվ ուժերի կողմից՝ նա մտնում է Հայաստան, որտեղ նրան ապաստան է տալիս Արշամ արքան:

Հասկանալիորեն Արշամը պետք է լիներ այնքան հզոր գահակալ, որ կարողանար ապաստան տալ Սելևկյան տիրա-

---

[314] **Dorner F. K., Goell Th.,** Arsameia am Nymphaios. Die Ausgrabungen im Hierothesion der Mithradates Kallinikos, Berlin, 1963, էջ 40; **Обухов С. В.,** նշվ. աշխ., էջ 234-251:

[315] Տե՛ս, օրինակ, **Սարգսյան Գ. Խ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, էջ 124; **Տիրացյան Գ. Ա.,** Հայաստանը մ.թ.ա. III դարում, էջ 512; **Հակոբյան Թ. Խ.,** Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 71-73:

[316] Տե՛ս **Պոլիենոս,** Ստրատեգեմներ, գիրք IV, գլ. 17; **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 111-113, 115-116; **Էլչիբեկյան Ժ. Գ.,** նշվ. աշխ., էջ 42; **Տիրացյան Գ. Ա.,** Հայաստանը մ.թ.ա. III դարում, էջ 512-513:

կալի գլխավոր թշնամուն: Այս փաստը վկայում է հօգուտ Արշամի՝ Մեծ Հայքի թագավորը լինելու, քանի որ ո՛չ Ծոփքը, ո՛չ Կոմմագենեն ի վիճակի չէին լինի նման ուժի դիմակայել (մանավանդ, որ իբրև թագավորություններ դրանք Ք.ա. III դարում չեն էլ հիշատակվում): Անտիոքոս Հիերաքսին աջակցած պետության համար Փոքր Հայքի թեկնածությունը ևս անհավանական է, քանի որ ապստամբ արքայազնի բանակը Միջագետքից անմիջապես մտել է Արշամ արքայի տարածք, իսկ Փոքր Հայքը Միջագետքի հետ չուներ ընդհանուր սահման: Հետևաբար, Արշամը կարող էր լինել միայն Մեծ Հայքի թագավորը:

Արձանագրենք, որ Սամոս (Շամ) և Արշամ (Արսամես) արքաների մասին սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկություններից և ոչ մեկը հիմք չեն կարող լինել ենթադրելու, որ գոյություն է ունեցել Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորություն: Եթե նրանք ստրատեգիական նկատառումներով ուշադրություն են դարձրել Հայաստանի, հատկապես հարավարևմտյան շրջանների ամրապնդմանը և այնտեղ կառուցել են մի քանի ամրոց, ապա դա չի կարող նշանակել, որ նրանց իշխանությունը տարածվել է միայն այդ տարածքում[317]: Ի վերջո, թե՛ Սոֆենե-Ծոփքը, թե՛ Կոմմագենեն հրաշալի հայտնի էին հունահռոմեական պատմագրության ներկայացուցիչնե-

[317] Նման տրամաբանությամբ առաջնորդվելով՝ պետք է եզրակացնեինք, որ Տիգրան Երվանդյանի իշխանությունը տարածվել է միայն Արցախի վրա, քանի որ այնտեղ է գտնվել նրա հիմնած միակ Տիգրանակերտը (Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Լ), իսկ Երվանդ Դ-ի իշխանությունը՝ միայն Արաքս և Ախուրյան գետերի միախառնման վայրում, քանի որ այդ շրջանում են կառուցվել նրա հիմնած երեք քաղաքները՝ Երվանդաշատը, Բագարանը և Երվանդակերտը (**Մովսես Խորենացի,** գիրք Բ, գլ. ԺԲ, Խ, ԽԲ):

րին, և հարկ եղած դեպքում նրանք Ք.ա. III դարի իրադարձությունները հիշատակելիս կնշեին այդ երկրանունները, ինչպես դա անում են հետագա դարերի դեպքերի առնչությամբ:

Մի շարք ուսումնասիրողներ Ք.ա. 220-201 թթ. միջակայքով են թվագրում Քսերքսես արքային, որին Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության կողմնակիցները համարել են այդ պետության պառակտումից հետո Ծոփքի առանձին թագավորության հիմնադիրը: Ինչպես նշվեց, Ք.ա. III դարում Մեծ Հայքից անջատված Ծոփքի-Կոմմագենեի թագավորության մասին տեսությունը չունի որևէ աղբյուրագիտական հիմնավորում: Չկա նաև որևէ փաստ, ըստ որի՝ Քսերքսես արքան եղել է Ծոփքի թագավորության հիմնադիրը (ո՛չ Ք.ա. III դարում, ո՛չ էլ որևէ այլ ժամանակ): Իսկ հայագիտության մեջ տարածում գտած տեսակետը, թե Ծոփքում իշխող Քսերքսես արքան դավադրաբար սպանվել է Ք.ա. 201 թ., հիմնված է թյուրիմացության վրա: Ծոփքի արքա Քսերքսեսը թագավորել է ոչ թե Ք.ա. III, այլ II դարում, և եղել է ոչ թե Անտիոքոս Գ-ի, այլ Անտիոքոս Դ-ի ժամանակակիցը, ամուսնացել է վերջինիս քույր Անտիոքիսի հետ և դարձել նրանց համատեղ դավադրության զոհը Ք.ա. 164 թվին[318]:

Ըստ Պոլիբիոսի՝ Քսերքսեսի հայրը ևս եղել է թագավոր և հրաժարվել է Սելևկյաններին հարկեր վճարելուց[319]: Այս տե-

---

[318] Մանրամասն տե՛ս **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 446-453: Այս փաստի վրա ուշադրություն է հրավիրվել դեռևս XIX դարում (**Langlois V.,** նշվ. աշխ., 1869, էջ 6-19; **Babelon E.,** նշվ. աշխ., էջ CXCIV-CXCVII): Այն, որ Անտիոքիսը Անտիոքոս Գ Մեծի դուստրն էր և Անտիոքոս Դ-ի քույրը, պարզորոշ վկայում է Դիոդորոս Սիկիլիացին (Պատմական գրադարան, գիրք XXXI, գլ. XIX, 7):

[319] «*Քսերքսեսի թագավորության ժամանակ Արմոսատա քաղաքում, որը գտնվում է, այսպես կոչված, Գեղեցիկ դաշտում, Եփրատի և Տիգրիսի միջև,*

ղեկության լույսի ներքո ևս քիչ հավանական է Քսերքսեսին Արշամի որդի համարելը, քանի որ Արշամը ոչ միայն ենթակա և հարկատու չի եղել Սելևկյան տերությանը, այլև հակադրվել է վերջինիս և ապաստան տվել Սելևկոս Բ-ի ոխերիմ թշնամուն՝ Անտիոքոս Հիերաքսին: Պոլիբիոսի հաղորդած տեղեկությունը լիովին համապատասխանում է Ք.ա. 160-ական թթ. Ծոփքում իշխող Քսերքսես արքային, որի նախորդ Զարեհը, իրոք, եղել է Սելևկյան տերության ենթակա՝ ստրատեգոս, վճարել է հարկեր, ապա անկախանալով՝ հրաժարվել հարկեր վճարելուց:

Ինչպես տեսնում ենք, սկզբնաղբյուրները միանշանակ վկայում են, որ Ք.ա. III դարում Մեծ Հայքից չեն անջատվել ո՛չ Ծոփքը, ո՛չ Կոմմագենեն, ո՛չ էլ դրանք միասին՝ իբրև մեկ պետություն: Մեծ Հայքը բաժանվել է միայն Երվանդ Դ-ի զոհվելուց հետո, երբ Ք.ա. 201 թ. անկում ապրեց Հայկազունի-Եր-

---

Անտիոքոս թագավորը, քաղաքը պաշարելով վերցնելու մտադրությամբ, բանակել էր նրա մոտ: Տեսնելով (Անտիոքոս) թագավորի պատրաստությունները՝ Քսերքսեսը նախ փորձեց փախուստի միջոցով փրկվել, բայց քիչ ժամանակ անց նա զղջաց՝ վախենալով, որ մայրաքաղաքը թշնամու ձեռքն ընկնելու դեպքում ինքը կարող է կորցնել ամբողջ թագավորությունը: Ուստի դեսպաններ ուղարկելով Անտիոքոսի մոտ՝ հայտնեց, որ ցանկանում է բանակցություն սկսել նրա հետ: Անտիոքոսի հավատարիմ ընկերները խորհուրդ չէին տալիս թագավորին ձեռքից բաց թողնել պատանուն, այլ համոզում էին, որ քաղաքը գրավելով՝ իշխանությունը հանձնի Միհրդատին, որը նրա քրոջ որդին էր: Բայց թագավորը չլսեց նրանցից ոչ մեկին, իր մոտ հրավիրեց պատանուն, հաշտվեց նրա հետ և նույնիսկ զիջեց նրան հարկի մեծագույն մասը, որը պարտավոր էր իրեն վճարել (Քսերքսեսի) հայրը: Այնուհետև, ստանալով Քսերքսեսից 300 տաղանդ և հազար ձի ու հազար ջորի լծասարքով, նա վերադարձրեց նրան ամբողջ իշխանությունը և նրան ամուսնացրեց իր Անտիոքիս քրոջ հետ: Այսպիսով, Անտիոքոսն իր արքայական վեհանձնությամբ, որ ցուցաբերել էր ներկա դեպքում, ձեռք բերեց երկրի բնակիչների բարեկամությունն ու երախտիքը» (**Պոլիբիոս,** Պատմություն, VIII, 25, 1-5):

վանդականների թագավորությունը Մեծ Հայքում: Այդ մասին պարզորոշ վկայում է Ստրաբոնը՝ նշելով, որ Հայաստանը (իմա՝ Մեծ Հայքը) բաժանվել է Անտիոքոս Գ Մեծի ստրատեգոսներ Արտաշեսի և Զարեհի միջև. «*Հայաստանի վերջին իշխողն էր Օրոնտեսը... Այնուհետև Արտաքսիասը և Զարիադրեսը՝ Անտիոքոս Մեծի զորավարները, երկիրը բաժանեցին երկու մասի: Նրանք կառավարում էին արքայի իշխանության ներքո*»[320]:

Սելևկյանների տիրապետությունը, բարեբախտաբար, շատ կարճ տևեց: Մագնեսիայի ճամատամարտից (Ք.ա. 190 թ. դեկտեմբեր) հետո Արտաշեսն ու Զարեհը դաշնակցեցին Սելևկյաններին պարտության մատնած Հռոմի հետ և հռչակեցին երկու հայկական անկախ թագավորություններ՝ Մեծ Հայքի և Ծոփքի: Վերջինս գոյություն ունեցավ շուրջ մեկ դար՝ Ք.ա. 94 թ. Տիգրան Բ Մեծի կողմից նվաճվելով և վերամիավորվելով Մեծ Հայքին:

Ճշգրտումներ Ծոփքի թագավորության գահակալների ցանկում: Այժմ Ծոփքի թագավորության գահացանկի լիակատար ճշգրտման նպատակով քննարկենք գիտական գրականության մեջ որպես Ծոփքի արքաներ ներկայացված բոլոր գահակալներին: Նրանցից դուրս թողնելով լիովին անհավանական թեկնածուներին (որոնց մասին արդեն նշվեց)՝ ստանում ենք գահակալների հետևյալ ցանկը՝ Սամոս (Շամ), Արշամ (Արսամես), Աբդիսարես, Քսերքսես, Արտաբանոս, Զարեհ, Մեհրուժան (Միթրոբուզանես), Արկաթիո/աս, Մորֆիլիգ, Արտանես, Տիգրան Կրտսեր և Սոհեմոս:

---

[320] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, XI, 14, 15:

Սամոս (Շամ) – Ինչպես նշվեց, եղել է ամբողջ Մեծ Հայքի արքան, կապ չունի Ծոփքի արքայացանկի հետ:

Արշամ (Արսամես) – Նույնպես եղել է ամբողջ Մեծ Հայքի արքան և կապ չունի Ծոփքի գահացանկի հետ:

Քարասպես – Դեռևս XIX դարավերջին, ելնելով թագի նմանությունից, առաջարկվել էր Քարասպեսին դիտարկել ի-բրև Ծոփքի արքա և թվագրել Ք.ա. III դարի տարբեր ժամանակահատվածներով[321], իսկ Ատրպետը Քարասպեսին (Հարասպէս անվամբ) առաջարկում էր թվագրել Ք.ա. 316 թվականով[322]: Սակայն վերջին տարիներին Քարասպեսի անվամբ նոր դրամների հայտնաբերումից և ուսումնասիրությունից պարզվեց, որ նա սկութական արքա է, որի դրամները հատվել են Թրակիայում և կապ չունեն ո՛չ Ծոփքի, ո՛չ էլ հայ իրականության հետ ընդհանրապես[323]:

Աբդիսարես – Որպես օրինաչափություն, Աբդիսարեսը թվագրվել է Ք.ա. III դարի վերջին քառորդով կամ III-II դարերի սահմանային շրջանով: Նրա մասին մատենագրական որևէ տեղեկություն չի պահպանվել: Ուսումնասիրության սկզբնաղբյուրը միայն դրամագիտական է, իսկ Ծոփքի թագավորության գահակալ նա համարվել է արքայի թագի վերլուծության հիմքով: 1982 թ. կասկած հայտնվեց Աբդիսարեսի՝ Ծոփքի թագավորության հետ կապ ունենալու խնդրում, քանի որ արքա-

---

321 Տե՛ս **Babelon E.,** նշվ. աշխ., էջ CXCI-CC, կատալոգի էջ 211-212, 229-230, աղ. XXIX, նկ. 1-7; **Բասմաջեան Կ.,** նշվ. աշխ., էջ 27:

322 Տե՛ս **Ատրպետ,** նշվ. աշխ., էջ 28:

323 Տե՛ս **Sayles W. G.,** Ancient Coin Collecting VI: Non-Classical Cultures, Iowa, 1999, էջ 27; հմմտ. **Marciak M.,** նշվ. աշխ., էջ 68-69:

յանունն ուներ սեմական ստուգաբանություն[324]: Քիչ ավելի ուշ՝ 1996 թ., հրատարակվեց Աբդիսարեսի նորահայտ դրամը, որի վրա նշված էր նաև նրա երկրանունը՝ Ադիաբենե: Արքայի թագի համադրումը Ադիաբենեի տարածքից հայտնաբերված ժայռափոր քանդակի հետ (Իրաքի հյուսիսում գտնվող Բաթաս-Հերիր հնավայրում) վերջնականապես հաստատեց Աբդիսարեսի՝ Ադիաբենեի արքա լինելը և բացառեց կապը Ծոփքի թագավորության հետ[325]: Այսինքն՝ պետք է հրաժարվել նաև Աբդիսարեսին Ծոփքի թագավորության արքայացանկում տեսնելու մտքից:

Արտաբանոս – Ծոփքի գահացանկում այս անվան հայտնվելու միակ հիմքը եղել է Քսերքսեսի դրամին նման մի դրամ, որի վնասված ...ABANO[Y] մակագրությունը, ինչպես նշվեց վերը, առաջարկվել էր վերականգնել [ART]ABANO[Y] («Արտաբանոսի»): Ինչպես տեսանք, դրամների ոճային նմանությունները դեռևս բավարար պայման չեն դրանք թողարկած արքաներին միևնույն դինաստիայի ներկայացուցիչներ համարելու համար (ինչպես Քարասպեսի, Աբդիսարեսի, կտեսնենք նաև Մորֆիլիգի պարագաներում): Քանի որ Ծոփքի այդ անվամբ արքա չունենք վկայված գրավոր որևէ սկզբնաղբյու-

---

[324] Տե՛ս **Lipiński E.,** Le culte d'Ištar en Mésopotamie du Nord à l'époque parthe, «Orientalia Lovaniensia Periodica», 1982, № 13, էջ 117-120: Այս անվան սեմական բնույթը մատնանշվել էր դեռևս XIX դարում (տե՛ս, օրինակ, **Visconti E. Q.,** նշվ. աշխ., էջ 252-254; **De Saulcy F.,** նշվ. աշխ., էջ 101):

[325] Տե՛ս **de Callataÿ F.,** Abdissarès l'Adiabénien, «Iraq», 1996, Vol. 58, էջ 135-145; **Grabowski M.,** Abdissares of Adiabene and the Batas-Herir Relief, «Światowit. Annual of the Institute of Archaeology of the University of Warsaw», 2011, 9, էջ 117-140; **Marciak M.,** Wójcikowski R. S., Images of Kings of Adiabene: Numismatic and Sculptural Evidence, «Iraq», 2016, Vol. 78, էջ 79-101; **Marciak M.,** նշվ. աշխ., էջ 69, 293:

րում, պետք է հրաժարվենք Արտաբանոս անունը Ծոփքի թագավորության արքայացանկում տեղադրելու մտքից:

Զարեհ – Ծոփքի թագավորության հիմնադիր Զարեհի գահակալման սկիզբն ընդունված է համարել Ք.ա. 189 թվականը, քանի որ նա Ծոփքը (իսկ Արտաշեսը՝ Մեծ Հայքը) անկախ թագավորություն հռչակեց Մագնեսիայի ճակատամարտից և հռոմեացիների հետ դաշնակցելուց հետո[326]: Թե մինչև երբ է իշխել Զարեհ արքան, հայտնի չէ: Ք.ա. 165 թ. Ծոփքի գահին հիշատակվում է նրա որդի Քսերքսեսը:

Քսերքսես – Ինչպես նշվեց վերը, սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Քսերքսեսը եղել է Անտիոքոս Դ-ի (Ք.ա. 175-164 թթ.) ժամանակակիցը, ամուսնացել է վերջինիս քույր Անտիոքիսի հետ և դարձել նրանց համատեղ դավադրության զոհը Ք.ա. 165 թ.: Եղել է Զարեհի որդին, հավանաբար նրա անմիջական հաջորդը (քանի որ Անտիոքոս Դ-ն նրան ներում է իր հոր՝ Սելևկյան տերությանը չվճարած հարկերի մեծ մասը, իսկ Սելևկյաններին ենթակա և հարկատու է եղել Զարեհը Ք.ա. 201-189 թթ.): Թե երբ է ավարտվել Զարեհի իշխանությունը, և սկսվել Քսերքսեսինը, հայտնի չէ: Անհայտ է նաև պատճառը, թե ինչու է Հովհաննես Անտիոքցու երկում Քսերքսեսը կոչվում «Հայաստանի բռնակալ»[327]:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Պոլիբիոսի վերը բերված տեղեկության մեջ Քսերքսեսը երկու անգամ կոչվում է «պատանի», ինչը մատնանշում է, որ դեպքերի կա-

---

[326] Ճակատամարտը տեղի է ունեցել Ք.ա. 190 թ. դեկտեմբերին, իսկ հռոմեացիների հետ դաշինքի բանակցությունները պետք է պահանջեին որոշակի ժամանակ, ուստի ուսումնասիրողները Ծոփքի և Մեծ Հայքի թագավորությունների հռչակումը թվագրում են Ք.ա. 189 թվականով:

[327] Տե՛ս **Հովհաննես Անտիոքցի,** Ժամանակագրություն, գիրք II, 53:

տարման ժամանակ նա չափազանց երիտասարդ էր և պետք է գահ բարձրացած լիներ ոչ վաղ անցյալում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Անտիոքոս Դ Եպիփանեսը Հայաստան է արշավել Ք.ա. 165 թ. (ի պատասխան Ք.ա. 168 թ. Արտաշես Ա-ի Միջագետք արշավելու, ինչի արդյունքում Տմորիքը միացվեց Մեծ Հայքին), ընդ որում՝ Մեծ Հայքի արքա Արտաշես Ա-ին հաղթելուց հետո հարձակվել է նաև Ծոփքի վրա[328]: Եթե նկատի ունենանք, որ Ք.ա. 201 թ. Զարեհն արդեն վաստակ ունեցող զորավար էր և Արտաշեսի հետ միասին Անտիոքոս Գ-ի կողմից նշանակվել էր ստրատեգոս, ապա այդ ժամանակ առնվազն պետք է լիներ 20-25 տարեկան, իսկ Ք.ա. 165-ին՝ 55-60: Այդ տարիքի գործչի առաջնեկը հազիվ թե լիներ պատանի, ուստի կարելի է ենթադրել, որ նա Զարեհի ավագ որդին չէր, այլ կրտսերներից մեկը և իշխանության էր հասել ոչ օրինական, բռնի ճանապարհով, ինչի համար ստացել է «բռնակալ» որակումը: Իսկ այդ դեպքերից կարճ ժամանակ անց (հավանաբար Ք.ա. 163-160 թթ. ընթացքում) հիշատակված Մեհրուժանը կարող էր լինել Զարեհի ավագ որդին, ինչն էլ ապահովեց նրա գահակալումը:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Քսերքսեսն իշխել է Զարեհից հետո, նրա իշխանությունը երկարատև չի եղել՝ մինչև Ք.ա. 165 թվականը[329]: Ք.ա. 165 թ. Քսերքսեսի՝ պատանի լինելու հանգամանքից ելնելով՝ նրա իշխանության սկիզբը կարելի է

---

[328] Մանրամասն տե՛ս **Սարգսյան Գ. Խ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, էջ 242-247; **Էլչիբեկյան Ժ. Գ.,** նշվ. աշխ., էջ 64-67:

[329] Քսերքսեսի թունավորումը կնոջ՝ Անտիոքիսի ձեռքով տեղի է ունեցել Ք.ա. 165 թ. Անտիոքոս Դ-ի արևելյան արշավանքի ժամանակ, քանի որ հաջորդ տարի մահացավ նաև ինքը՝ Անտիոքոս Դ-ն:

թվագրել Ք.ա. 160-ական թթ. սկզբով կամ, առավելագույնը, Ք.ա. 170-ական թթ. վերջով (կարծում ենք՝ այս պարագայում նախընտրելի է Ք.ա. մոտ 170 թ. նշումը):

Մեհրուժան (Միթրոբուզանես) – Թե ով է գահ բարձրացել Ծոփքում Ք.ա. 165 թ.՝ Քսերքսեսի դավադիր սպանությունից անմիջապես հետո, սկզբնաղբյուրներում ստույգ չի նշվում: Տեղեկանում ենք, որ Ծոփքի գահի խնդրին միջամտել են Մեծ Հայքն ու Կապադովկիան, երբ առաջինում դեռ իշխում էր Արտաշես Ա-ն (Ք.ա. 189-մոտ 160 թթ.), իսկ երկրորդում արդեն գահ էր բարձրացել Արիարաթես Ե-ն (Ք.ա. 163-130 թթ.): Ընդ որում՝ նշվում է, որ այդ միջամտությամբ Արիարաթես Ե-ն Մեհրուժանին (Միթրոբուզանես) ոչ թե հաստատել, այլ վերականգնել է գահին. «*Այն բանից հետո, երբ Արիարաթեսը Միթրոբուզանեսին վերականգնեց հայրենի տերության վրա, Արտաքսիասը՝ Հայաստանի թագավորը, չհրաժարվելով իշխանության նկատմամբ իր ունեցած ընչաքաղցությունից, դեսպաններ ուղարկեց Արիարաթեսի մոտ՝ առաջարկելով նրան համաձայնել իր հետ և, յուրաքանչյուրը, իր մոտ եղած երիտասարդին մահվան ենթարկելով, իրար միջև բաժանել Սոփենեն: Իսկ Արիարաթեսը, որին խիստ օտար էր այդպիսի անազնվությունը, հանդիմանեց դեսպաններին և (նամակ) գրեց Արտաքսիասին՝ առաջարկելով նրան հեռու մնալ նման գործերից: Հետևաբար, Արիարաթեսն ահա այս գործից հետո իր անձի շուրջը եղած համբավը մեծ չափով բարձրացրեց: Իսկ Միթրոբուզանեսը իրեն իշխանության վրա վերականգնողի հանդեպ*

հիացության արժանի հավատարմության և ազնվության շնորհիվ տիրացավ իր հայրենի իշխանության»[330]:

Վկայությունից հասկանալի է դառնում, որ Մեհրուժանը եղել է Ծոփքի արքա, գահընկեց է արվել (հավանաբար, Արտաշես Ա-ի կողմից, որը հետո էլ չէր հրաժարվել այդ մտադրությունից), ապա՝ վերականգնվել հայրենի գահին Արիարաթես Ե-ի օգնությամբ Ք.ա. 163-160 թթ. ընթացքում[331]: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ հենց Մեհրուժանն է եղել Ք.ա. 165 թ. Քսերքսեսին հաջորդած Ծոփքի արքան: Թե մինչև երբ է իշխել Մեհրուժանը, հայտնի չէ:

Արկաթիո/աս – Այս արքայանունը որևէ սկզբնաղբյուրում վկայված չէ և ուսումնասիրողների վերականգնման արդյունք է: Վերականգնվել է այն Կարկաթիոկերտ քաղաքանունից,

---

330 **Դիոդորոս Սիկիլիացի,** Պատմական գրադարան, գիրք XXXI, գլ. 22:

331 Այս ժամանակամիջոցը նշում ենք՝ նկատի ունենալով Արիարաթես Ե-ի գահ բարձրանալու և Արտաշես Ա-ի մահվան ընդունված թվականները: Սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ Արտաշես Ա-ի մահվան ընդունված թվականը պայմանական է: Այն ընդունված է համարել Ք.ա. 160 թվականը՝ ելնելով երկու փաստից: Առաջին՝ Արտաշեսը սկզբնաղբյուրներում վերջին անգամ հիշվում է Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբության առնչությամբ (Ք.ա. 162-160 թթ.), երկրորդ՝ ըստ Մովսես Խորենացու (գիրք Բ, գլ. Կ)՝ նա գահակալել է 41 տարի: Հաշվարկելով Ք.ա. 201 թվականից՝ Արտաշեսի գահակալության վերջը ստացվել է Ք.ա. 160 թվականը: Սակայն նկատենք, որ Մովսես Խորենացու խոսքը վերաբերում է Արտաշեսի թագավորությանը, ուստի ճիշտ չէ սելևկյան ստրատեգության շրջանը (ինչի մասին Պատմահայրը չի էլ հիշատակում), որի ընթացքում Արտաշեսը Անտիոքոս Գ-ին ենթակա մի պաշտոնյա էր, հաշվարկել որպես թագավորության տարիներ: Եթե թագավորության 41 տարին հաշվենք Ք.ա. 189 թվականից, Արտաշես Ա-ի մահվան համար կստանանք Ք.ա. 148 թվականը (նման սրբագրումն իր հետ կարող է բերել այլ հարցերի պատասխաններ ևս, ինչն առանձին հրապարակման նյութ է): Այսինքն՝ Մեհրուժանի գահին վերահաստատվելը կարող էր տեղի ունեցած լինել Ք.ա. 163-148 թթ. ընթացքում:

որը, ըստ Ստրաբոնի, Ծոփքի մայրաքաղաքն էր իր ապրած ժամանակ[332]: Բոլոր ուսումնասիրողները գտնում են, որ «Կարկաթիոկերտ» քաղաքանունը (որն այլ սկզբնաղբյուրից հայտնի չէ) մեզ է հասել խեղաթյուրված վիճակում: Առաջարկվել է այն վերականգնել «Արկաթիոկերտ» տարբերակով՝ հիմքում տեսնելով Արկաթիո/աս արքայի անունը, որն իր հերթին կապվել է այդ անունը կրող դրամի հետ: Ենթադրվել է նաև, որ նա կարող էր լինել Զարեհի որդին, որը եղել է մյուս որդու՝ Մեհրուժանի (Միթրոբուզանեսի) մրցակիցը, որի անունը սկզբնաղբյուրներում չի պահպանվել[333]:

Ավելի հեռուն գնալով՝ Ֆ. Լ. Կովաչն այս ենթադրյալ անունով երկու պոնտացի արքա է տեսնում Ծոփքի գահին, ընդ որում՝ երկրորդ Արկաթիասին նույնացնում է Միհրդատ Զ Եվպատորի նույնանուն որդու հետ, մի բան, որ, ինչպես նշվեց վերը, միանգամայն անհիմն է:

Հարկավոր է նշել, որ «Արկաթիոկերտը» «Կարկաթիոկերտի» վերականգնման միակ տարբերակը չէ: Դեռևս Յ. Մարկվարտը, իսկ հետագայում Ս. Երեմյանը, Ռ. Հյուսնը, Բ. Հարությունյանը հավանական են համարել, որ այդ տեղանունն աղավաղումն է Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ հիշատակված Արտագիգարտա քաղաքանվան[334]: Վերջինիս հայե-

---

332 *«Ոտիենեի արքայանիստը Կարկաթիոկերտն է»* (**Ստրաբոն,** Աշխարհագրություն, XI, 14, 2):

333 Մ. Չամչյանցը նշում է Զարեհի այդ որդու անունը՝ Դորոն, սակայն չի վկայակոչում իր սկզբնաղբյուրը (**Չամչյանց Մ.,** նշվ. աշխ., էջ 206-207), ինչը շատ արժանահավատ չի թվում:

334 Տե՛ս **Marquart J.,** Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 34-38 (մինչ այդ նշված աշխատությունը հատվածաբար լույս է տեսել «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում, տե՛ս 1913, թիվ 9, էջ 530-533); **Hewsen R. H.,** Armenia. A Historical Atlas, Chicago-London, 2001,

րեն տարբերակն ակնհայտորեն «Արտակակերտն» է, որի հիմքում «Արտակ» անձնանունն է: Այս անվան հավանականությունը Ծոփքի գահացանկում բավականին մեծ է, եթե նկատի ունենանք, որ Ք.ա. 90-ական թթ. Ծոփքի արքան կրում էր «Արտանես» անունը, իսկ հայոց մեջ առավել սիրված Վահագն-Հերակլես աստվածն այդ ժամանակաշրջանում Նեմրութի սրբավայրում վկայված է «Արտագն(ես)» տարբերակով[335]: Այսպիսի վերականգնման պարագայում մեծ է գայթակղությունը կապ տեսնելու տվյալ անվան և Չմշկածագի Արտակա (Արդական, Արտըկա, Արտըկան, Արդըգան) բնակավայրի միջև, որը գտնվել է Ծոփաց աշխարհի Ծոփք Շահունի գավառում[336]:

Նկատի ունենալով ամբողջ ասվածը՝ կարծում ենք՝ մինչև նոր ու ավելի ծանրակշիռ փաստերի ի հայտ գալը Ծոփքի թագավորության արքայացանկում «Արկաթիոս» անվան կողքին նույնչափ (գուցեն՝ ավելի) հավանականությամբ պետք է հնարավոր համարենք «Արտակ» արքայանվան թեկնածությունը:

Մորֆիլիգ – Ինչպես նշվել է, Մորֆիլիգի կամ Մորփյուղիկեսի մասին մեզ տեղեկացնում է Մովսես Խորենացին, ըստ որի՝ նա մակեդոնացիների ժառանգներից էր և միավորել էր Լազիկան, Պոնտոսը, Փռյուգիան, Կապադովկիան և այլ տա-

---

էջ 37, քարտեզներ № 22-23 (ըստ Բ. Հ. Հարությունյանի), 40, 48, 56 (ըստ Ս. Տ. Երեմյանի), 57; **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, 2001, էջ 188-191:

[335] Քաղաքանվան հիմքում քիչ հավանական է «Արտագն(ես)» դիցանունը տեսնելը, քանի որ Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորության անկումից հետո Հայաստանում չի արձանագրվել որևէ աստծո անունով նոր հիմնված քաղաքի անվանակոչություն:

[336] Տե՛ս **Գասպարյան Հ. Ց.,** նշվ. աշխ., էջ 294-295; **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 409, 490:

բածքներ: Արշակունյաց հայկական ճյուղի հիմնադիր Վաղարշ արքան, հաղթելով նրան, նվաճեց նրա իշխանության տակ եղած երկրները, որով մակեդոնական սպառնալիքը վերացավ[337]: Օ. Բլաուն մի դրամի վրա (որը նման էր Զարեհին ենթադրաբար վերագրվող մեկ այլ դրամի) կարդալով հունարեն MOPI և ΣARI մակագրությունները՝ առաջարկեց դրանք վերծանել իբրև «Մորի[ֆիլիգ որդի] Զարի[ադրեսի]», իսկ Մորֆիլիգին համարել Ծոփքի արքա Զարեհի որդին և հաջորդը: Օ. Բլաուից հետո բազմաթիվ ուսումնասիրողներ Մորֆիլիգին համարել են Ծոփքի արքա (տե՛ս վերը):

Լիովին անհասկանալի է տրամաբանությունը, թե ինչու պետք է Լազիկայի, Պոնտոսի, Փոյուգիայի, Կապադովկիայի և այլ տարածքների մակեդոնական ծագումով տիրակալը համարվի Ծոփքի արքա, որի տիրույթների ցանկում անգամ չի հիշվում Ծոփքը: Ինչ վերաբերում է նշված և մյուս դրամներին, որոնք Ջ. Ֆրիդլենդերն ենթադրել էր, որ կարող են պատկանել հայ արքաներին[338], իսկ Օ. Բլաուն վերագրել էր Ծոփքի արքաներին, իրականում կապ չունեն Ծոփքի հետ և պատկանել են Կապադովկիայի արքաներին[339]: MOPI մակագրությունը ոչ թե արքայանվան մաս է, այլ դրամահատման վայրը. Կապադովկիայի արքայական երեք նշանավոր դրամահատարանները գտնվում էին Մորիմա, Անիսա և Տիանա քաղաքնե-

---

[337] Տե՛ս **Մովսես Խորենացի,** գիրք Բ, գլ. Դ-Ե:

[338] Տե՛ս **Friedlander J.,** նշվ. աշխ., էջ 266-272:

[339] Այդ փաստի վրա ուշադրություն էին հրավիրել Յ. Մարկվարտը դեռևս 1895 թ. (**Marquart J.,** նշվ. աշխ., էջ 521-526), Կուրտ Ռեգլինգը (**Regling K.,** Dynastenmünzen von Tyana, Morima und Anisa in Kappadokien, «Zeitschrift für Numismatik», Zweiundvierzigster Band, Berlin, 1935, էջ 9-16) և ուրիշներ:

ռում, որոնց անունները նշվում էին կապադովկիական դրամների վրա[340]:

Ի մի բերելով Մորֆիլիգի կամ Մորփյուղիկեսի մասին քննարկված տվյալները՝ արձանագրենք, որ այս արքան ևս կապ չունի Ծոփքի թագավորության գահացանկի հետ:

Արտանեսը – Տիգրան Մեծը, շարունակելով իր պապ Արտաշես Ա-ի քաղաքական ծրագրերը, առաջին խնդիրը համարեց Մեծ Հայքի վերամիավորումը: Եվ արդեն Ք.ա. 94 թ. Տիգրան Մեծի զորքը ներխուժեց Ծոփքի թագավորություն և միավորեց այն Մեծ Հայքին[341]: Այս դեպքերի առիթով կրկին Ստրաբոնի երկում կա թեպետ ոչ որոշակի, սակայն ուշագրավ հաղորդում Ծոփքի թագավորություն տարածքային ընդգրկման մասին. «*Արտաքսիասի շառավիղն էր Տիգրանը, որն ուներ, այսպես կոչված, բուն Հայաստանը. այն հարակից էր Մեդիային, Աղվաններին և Իբերներին, մինչև Կոլխիս ու Եվքսինյան Կապադովկիա. իսկ Զարիադրեսի (շառավիղն էր) Արտանես Սոփենացին, որն ուներ հարավային և, առավելապես,*

---

[340] **Marciak M.,** նշվ. աշխ., էջ 74-75: Նույնպիսին է վիճակը նաև Զարեհին վերագրված դրամի պարագայում (**Blau O.,** նշվ. աշխ., էջ 107-110), որի ΑΝΙΣΑ մակագրությունը ոչ թե հայրանուն է, այլ թողարկման քաղաքի՝ Անիսայի արձանագրումը, որը կապադովկիական դրամահատարաններից էր: Այդ դրամը ևս վերագրվում է Արի[ամնես] կամ Արի[արաթես] անվամբ արքաներից որևէ մեկին:

[341] Մասնագիտական գրականության մեջ այս իրադարձությունը տարբեր հեղինակներ թվագրել են Ք.ա. 95-93 թվականներով, սակայն դատելով փաստերից և ժամանակի քաղաքական իրողություններից՝ առավել հավանական է Ք.ա. 94 թվականը (տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 140-141; **Սարգսյան Գ. Խ.,** Հայկական աշխարհակալ տերությունը: Տիգրան Բ, տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 558-559; **Մանասերյան Ռ. Լ.,** Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 31-32; **Հակոբյան Հ. Պ.,** նշվ. աշխ, էջ 63-65 և այլն):

արևմտյան մասերը: Տիգրանը հաղթեց նրան, և ինքը դարձավ այդ բոլոր երկրների տերը»[342]:

Ինչպես նշվել է, Ստրաբոնի հիշատակած Ծոփքի արքա Արտանեսը Ստեփան Բյուզանդացու երկում ներկայացվում է «Արսակես» (Արշակ) անվամբ[343]: Արտանես-Արսակեսը Ծոփքի թագավորությունում իշխած վերջին գահակալն էր:

Տիգրան Կրտսեր – Տիգրան Մեծի ջանքերով Ծոփքը Մեծ Հայքին վերամիավորելուց հետո հայտնի են Ծոփքի թագավորության «վերակենդանացման» երկու փորձեր, որոնցից առաջինն Արտաշատի պայմանագրով Տիգրան Կրտսերին Ծոփքի (և Կորդուքի) թագավոր ճանաչելու Պոմպեոսի ծրագիրն էր, որը չիրականացավ արքայազն Տիգրանի ձերբակալության պատճառով[344]:

---

[342] **Ստրաբոն**, Աշխարհագրություն, XI, 14, 15:

[343] Տե՛ս **Stephani Byzantii,** նշվ. աշխ., էջ 244-245:

[344] «*Պոմպեոսը… որոշեց, որ որդին (=Տիգրան Կրտսերը) իշխի Ծոփքի և Կորդուքի վրա, որոնք այժմ կազմում են Փոքրագույն Հայաստանը, իսկ հայրը՝ մյուս Հայաստանի վրա, և որ տղան պետք է լինի ժառանգորդը... Բայց քանի որ նա (=Տիգրան Կրտսերը) մինչև այդ փորձել էր պարթևներին ոտքի հանել Պոմպեոսի դեմ, ձերբակալվեց, շղթայակապ արվեց, տարվեց նրա հաղթահանդեսին ու (հետագայում) սպանվեց*» (Ապպիանոս Ալեքսանդրացի, Հռոմեական պատմություն, գիրք XII, 105): Ըստ Պլուտարքոսի՝ Արտաշատի պայմանագրի կնքման ժամանակ Պոմպեոսը Տիգրան Մեծին, ի թիվս այլ պայմանների, հայտնեց, որ *«Ծոփքում կթագավորի նրա որդին: Տիգրանն այս պայմանները սիրով ընդունեց, և այնժամ հռոմայեցիները նրան արքայավայել ողջունեցին... Որդին, ընդհակառակը, խիստ դժգոհեց, և երբ նրան հրավիրեցին հյուրասիրության, հայտարարեց, թե ինքը Պոմպեոսի կողմից նման պատիվների կարիքը չունի, քանի որ կարող էր իր համար այլ հռոմայեցու ճարել: Այնժամ Պոմպեոսը հրամայեց շղթայել նրան և պահել բանտում հաղթահանդեսի համար»* (Զուգակշիռք, Պոմպեոս, 33): Նման բովանդակությամբ հաղորդում ունի նաև Դիոն Կասսիոսը (**Դիոն Կասսիոս,** Հռոմեական պատմություն, գիրք XL, 53, 2-4):

Որևէ սկզբնաղբյուրում չի նշվում Ծոփքում Տիգրան Կրտսերին թագավոր հռչակելու մասին: Ունենք միմյանցից անկախ երկու հաղորդում. առաջինը՝ Տիգրան Կրտսերի՝ հոր ձեռքով թագադրվելու մասին, երկրորդը՝ Պոմպեոսի արշավանքից առաջ Տիգրան Կրտսերի՝ Ծոփքի կառավարիչ լինելու հնարավորության մասին: Առաջին հաղորդումը Ապպիանոսինն է, որը, Տիգրան Մեծի որդիներին ներկայացնելով, Տիգրան Կրտսերի մասին գրում է. «*Իսկ երրորդը՝ Տիգրանը, որը որսի ժամանակ շատ էր անհանգստացել իր հոր համար, թագ էր ստացել նրանից, այսուհանդերձ, քիչ ժամանակ անց սա ևս ապստամբելով՝ հեռացավ, պատերազմեց հոր դեմ և պարտվելով ապաստանեց պարթևների թագավոր Հրահատի մոտ*»[345]: Այս տեղեկությունից ելնելով՝ Հ. Աստուրյանը եզրակացնում է, որ ծերունի Տիգրան Մեծը որդուն հռչակել է գահակից՝ նրան հանձնելով նաև Ծոփքի ու Կորդուքի կառավարումը[346]: Ինչ խոսք, հնարավոր է, որ Լուկուլլոսին երկրից վռնդելուց հետո՝ Ք.ա. 67 թ., Հռոմի հետ դեռևս չավարտված պատերազմի պայմաններում 73-ամյա Տիգրան Մեծը գահաժառանգ որդուն հռչակեր գահակից՝ նրան հանձնարարելով երկրի հարավային և արևմտյան երկու կարևոր նահանգների կառավարումը: Սակայն ուսումնասիրողների մեծ մասը Տիգրան Կրտսերին թագադրելը և գահակից հռչակելը հավանական չի համարում, քանի որ նման փաստը կհիշատակեին մյուս պատմիչնե-

---

[345] **Ապպիանոս Ալեքսանդրացի**, Հռոմեական պատմություն, գիրք XII, 104:

[346] Տե՛ս **Աստուրեան Հ. Յ.,** նշվ. աշխ., էջ 77: Հ. Աստուրյանի տեսակետի պաշտպանությամբ վերջերս հանդես եկավ Ս. Դ. Լիտովչենկոն (**Литовченко С. Д.,** Царство Софена в восточной политике Помпея, «Древности», Харьковский историко-археологический ежегодник, вып. 10, Харьков, 2011, էջ 36-37):

ը ևս, իսկ Ապպիանոսի տեղեկությունը, ըստ Հ. Մանանդյանի բնորոշման՝ «անորոշ մի վկայություն» է[347]: Ինչ վերաբերում է Պոմպեոսի արշավանքից առաջ Տիգրան Կրտսերին Ծոփքի կառավարիչ նշանակելուն, ապա դա միանգամայն հավանական է և կարելի է հիմնավորել Դիոն Կասսիոսի ուշագրավ տեղեկությամբ[348]: Սակայն հարկ է նշել, որ Տիգրան Կրտսերին Ծոփքի կառավարիչ նշանակելը որևէ կապ չունի Ծոփքի թագավորության հետ: Հայտնի է, որ Տիգրան Մեծն իր նվաճած Սելևկյան պետության կառավարիչ էր նշանակել Բագադատեսին, Հյուսիսային Միջագետքում՝ իր եղբայր Գուրասին: Նույն կերպ էլ Լուկուլլոսին պարտության մատնելուց և վտարելուց

---

[347] Տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 233:

[348] Ըստ այդ տեղեկության՝ Ծոփքի գանձապահ բերդերը հրաժարվում էին ենթարկվել որևէ մեկի՝ բացի Տիգրան Կրտսերից: Չքննարկելով տեղեկության բոլոր հնարավոր մեկնաբանությունները՝ այն մեջբերում ենք ամբողջությամբ. *«(Պոմպեոսը) կրտսեր Տիգրանին պարգևեց միայն Ծոփքը: Եվ քանի որ պատահմամբ Ծոփքում էին գտնվում գանձատները, ուստի և երիտասարդը սրանց պատճառով վիճեց և հաջողություն չունենալով, քանի որ Պոմպեոսը ոչ մի այլ տեղից չէր կարող ստանալ պայմանավորված գումարը, դժգոհեց և մտադրվեց փախչել: Սակայն Պոմպեոսը, տեղեկանալով այդ մասին, նրան հսկողության տակ վերցրեց՝ առանց կալանքի, և սուրհանդակներ ուղարկելով գանձերի պահապանների մոտ՝ հրամայեց նրանց, որ այդ բոլորը հանձնեն նրա հորը: Եվ որովհետև նրանք չհնազանդվեցին՝ ասելով, թե երիտասարդ (Տիգրանը), որին այժմ պատկանում է այդ երկիրը, պետք է այդ բանը հրամայի իրենց, ապա (Պոմպեոսը) նրան ուղարկեց դեպի բերդերը: Եվ սա, բերդերը փակ գտնելով, մոտիկ գնաց և դժկամությամբ հրամայեց բաց անել դրանք: Եվ երբ նրանք այլևս չէին հնազանդվում՝ առարկելով, որ նա այդ հրամանը տվել է ոչ թե կամովին, այլ հարկադրված, Պոմպեոսը զայրացավ և շղթայեց (երիտասարդ) Տիգրանին: Եվ այսպիսով, ծերունի (արքան) ստացավ գանձարանները. իսկ նա, զորքը երեք մասի բաժանելով, ձմեռեց Անահտական երկրում և Կյուռնոս գետի մոտ ու Տիգրանից էլ մեծ քանակությամբ այլ բաներ ևս ստացավ, ինչպես նաև պայմանավորվածից ավելի շատ գանձեր»* (**Դիոն Կասսիոս,** Հռոմեական պատմություն, գիրք XL, 53, 2-5):

հետո Տիգրան Մեծն արևմտյան կարևոր սահմանային նահանգի կառավարիչ կարող էր նշանակել իր թագաժառանգ որդուն: Դա, բնականաբար, որևէ կապ չունի Ծոփքի թագավորությունը վերականգնելու գաղափարի հետ, մի բան, որը կհակասեր հայկական հողերը միավորելու Տիգրան Մեծի քաղաքականությանը, ինչը գերակա էր մեծ տիրակալի իշխանության հենց սկզբից:

Ինչպես տեսնում ենք, Տիգրան Կրտսերը ևս չի կարող տեղ գտնել Ծոփքի թագավորության գահացանկում:

Սոհեմոս – Ծոփքի թագավորության «վերակենդանացման» երկրորդ փորձը վերաբերում է մեր թվարկության I դարի կեսերին: Ներոն կայսրը 54 թ. Եմեսիայի Սոհեմոս արքային ճանաչում է նաև Ծոփքի արքա, ինչի մասին Տակիտոսն ունի հետևյալ հաղորդումը. *«Տարվա վերջում անհանգիստ լուրեր են տարածվում, որ պարթևները նորից ներխուժել և հափշտակում են Հայաստանը՝ դուրս քշելով Ռադամիստին... Այս ու նման լուրեր էին տարածում ժողովրդի մեջ. Ներոնը հրամայում է Արևելքի լեգեոնները լրացնելու համար մերձակա պրովինցիաներում ժողովված երիտասարդությունը մոտեցնել և տեղավորել Հայաստանի սահմանների մոտ, իսկ երկու հին թագավորների՝ Ագրիպպային ու Անտիոքոսին՝ ռազմի համար զորքեր նախապատրաստել, որոնցով պիտի ներխուժեին պարթևական սահմանները: Միաժամանակ կարգադրում է Եփրատ գետի վրա կամուրջներ գցել: Եվ Փոքր Հայքը հանձնում է Արիստոբուլոսին, իսկ Սոֆենեի մարզը՝ Սոհեմին, եր-*

կուսին էլ տալով թագավորական նշաններ»[349]: Ելնելով Տակիտոսի այս հաղորդումից՝ որոշ ուսումնասիրողներ մինչև 60 թվականը (Տիգրան Զ-ի կառավարումը) կամ 63 թվականը (Հռանդեայի ճակատամարտը) հաշվում են Սոհեմոս Եմեսացու թագավորությունը Ծոփքում: Սակայն այստեղ ևս պետք է հավատարիմ մնալ սկզբնաղբյուրների հաղորդումներին: Տակիտոսի հաղորդումը վերաբերում է միայն 54 թ. վերջին, ընդ որում՝ Սոհեմոսին տրվել է *«Սոֆենեի մարզը»*, *ոչ թե* Ծոփքի թագավորությունը, ընդ որում՝ այդ շնորհումը կատարվել է հեռակա, առանց Սոհեմոսի Ծոփք այցելության: Եթե Փոքր Հայքի և Արիստոբուլոսի կապի մասին կան տեղեկություններ նաև հետագա տարիների դեպքերի առնչությամբ, ապա Սոհեմոսի և Ծոփքի կապի մասին ո՛չ Տակիտոսի երկում, ո՛չ էլ այլ սկզբնաղբյուրում որևէ տեղեկություն այլևս չկա: Այսինքն՝ այստեղ գործ ունենք Պարթևստանի դեմ պատերազմում Եմեսիայի թագավորության շահագրգիռ մասնակցությունն ապահովելու Ներոնի խորամանկ մտադրության հետ, որը, սակայն, չի վերածվել Ծոփքի թագավորության վերականգնման: Հետևաբար, Սոհեմոսին ևս որևէ հիմք չունենք ընդգրկելու Ծոփքի թագավորության արքայացանկում:

Ի մի բերելով սկզբնաղբյուրների տեղեկություններն ու նոր ժամանակների հետազոտողների ուսումնասիրությունների քննությունը՝ տեսնում ենք, որ, թեպետ գրականության մեջ շրջանառվել է երկու տասնյակ անուն, իրականում Ծոփքի 95-ամյա թագավորությունն ունեցել է հինգ գահակալ: Այսօր կարող ենք արձանագրել, որ այդ հինգից չորսի մասին ունենք

---

[349] **Տակիտոս,** Տարեգրություններ, XIII, 6-7 (ՀԺՊՔ-ի հայերեն թարգմանության մեջ նշված է «Սոֆենեի թագավորությունը», մինչդեռ բնագրում Ծոփքը կոչվում է «մարզ»):

որոշակի տեղեկություններ, իսկ մեկը (չորրորդ գահակալը) շարունակում է մեզ ներկայանալ տեսական վերականգնումների ճանապարհով: Այսպիսով՝ Ծոփքի թագավորության գահացանկն ունեցել է հետևյալ պատկերը.

Զարեհ – Ք.ա.189 - մոտ 170 թթ.,

Քսերքսես – Ք.ա. մոտ 170-165 թթ.,

Մեհրուժան (Միթրոբուզանես) – Ք.ա. 165- ?,

Արկաթիոս / Արտակ / Դորոն – անհայտ,

Արտանես (Արսակես) – ? - Ք.ա. 94 թթ.:

Այս արքայացանկին առնչվող մի շարք հարցեր իրենց պատասխանները կստանան հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

ЦАРСКИЙ СПИСОК СОФЕНСКОГО ЦАРСТВА

Начиная с XVIII века исследователи в качестве правителей Софенского царства предлогали около двух десяток кандидатов, которые рассматриваются в статье. В результате уточняется, что в течении своей 95-летней истории Софенское царство имело пять правителей:

Зариадр (Зарех) – 189 – ок. 170 гг. до р. Хр.,

Ксеркс – ок. 170 – 165 гг. до р. Хр.,

Митробузанес (Мехружан) – 165 г. до р. Хр. - ?,

Аркатий / Артак / Дорон – ?,

Артанес (Арсакес) – ? - 94 г. до р. Христова.

THE KING-LIST OF THE KINGDOM OF SOPHENE

Since the XVIII century researchers have proposed about two dozen candidates as rulers of the Kingdom of Sophene, which are considered in the article. As a result, it is clarified that during its 95-year history the Kingdom of Sophene had five kings:

Zariadres (Zareh) – 189 - c. 170 BC,

Xerxes – c. 170 - 165 BC,

Mitrobuzanes (Mehruzhan) – 165 BC - ?,

Arkatios / Artak / Doron – ?,

Artanes (Arsakes) – ? - 94 BC.

ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

Յուրաքանչյուր ժողովրդի անցյալի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն պատմաժողովրդագրության տվյալները, որոնք մեծապես նպաստում են բազմաթիվ հարցերի լուսաբանմանն ու ճշգրիտ ընկալմանը: Դա վերաբերում է ոչ միայն տվյալ էթնոսի՝ իր բնօրրանում և պետության սահմաններում, այլև դրանցից դուրս ունեցած բնակչության քանակին ու բաշխվածությանը:

Հայոց պատմության երկարատև պատմության տարբեր հանգրվաններում ժողովրդագրական հարցերի ուսումնասիրությունն ունի ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ քաղաքական նշանակություն: Վերջինս հատկապես կարևորվում է թուրք-ադրբեջանական պատմակեղծարարության շարունակվող անհեթեթ հրապարակումների պարագայում:

Եթե մաշտոցյան դարաշրջանում հայ մատենագիրների երկերում բավականին շատ են հանդիպում պատմաժողովրդագրական տվյալները հայության մասին, ապա նույնը չի կարելի ասել նախամաշտոցյան դարաշրջանի մասին: Այս ժամանակաշրջանի վերաբերյալ տեղեկությունները ստանում ենք հիմնականում այլազգի պատմիչների երկերից, որոնցում հայ էթնոսի վերաբերյալ ժողովրդագրական տվյալները խիստ հազվադեպ են: Այդ առումով եզակի բացառություն պետք է համարել հույն ականավոր պատմիչ և աշխարհագրագետ Ստրաբոնին (Ք.ա. I - I դդ.):

Ստրաբոնը ծնունդով Պոնտոսի Ամասիա քաղաքից էր, կրթությունը ստացել էր Նյուսայում և Հռոմում: Նա բավականին շատ էր ճանապարհորդել, այդ թվում՝ եղել էր Հայաստանում, ինչի շնորհիվ նրա հաղորդած պատմաաշխարհագրական վկայությունները դարձել են առավել վստահելի ու հարուստ:

Ստրաբոնի հեղինակած երկերից մեզ է հասել միայն նրա կոթողային «Աշխարհագրություն» աշխատությունը՝ բաղկացած 17 գրքից, որն իր ժամանակաշրջանի յուրօրինակ աշխարհագրական հանրագիտարան է[350]:

Ստրաբոնի «Աշխարհագրությունը» բացառիկ կարևորության սկզբնաղբյուր է հայագիտության համար: Հեղինակի տեղեկությունները Հայաստանի աշխարհագրության, պատմության, մշակույթի ու այլ հարցերի ուսումնասիրության համար հաճախ եզակի են և այլ աղբյուրներում չեն հանդիպում: Ստրաբոնն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է ինչպես Մեծ Հայքի սահմանները բոլոր ուղղություններով, այնպես էլ հայկական փոքր թագավորությունները (Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե, Կորդուք): Չափազանց կարևոր են նրա տեղեկությունները Հայաստանի քաղաքների, գետերի, լեռների, ճանապարհների, անցյալի և իր ապրած ժամանակի

---

[350] Ստրաբոնի կյանքի ու գործի մասին կա մեծածավալ գրականություն, տե՛ս, օրինակ, **Арский Ф. Н.,** Страбон, М., 1974; **Diller A.,** The Textual Tradition of Strabo's Geography, Amsterdam, 1975; **Грацианская Л. И.,** «География» Страбона. Проблемы источниковедения, «Древнейшие государства на территории СССР», М., 1988, с. 6-175; **Engels J.,** Augusteische Oikumenegeographie und Universalhistorie im Werk Strabons von Amaseia, Stuttgart, 1999; **Dueck D.,** Strabo of Amasia. A Greek Man of Letters in Augustan Rome, London - New York, 2000; Strabo's Cultural Geography. The Making of a Kolossourgia (eds. D. Dueck, H. Lindsay, S. Pothecary), Cambridge, 2005 և այլն:

պատմաքաղաքական զանազան իրադարձությունների մասին: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ստրաբոնը ներկայացնում է նաև տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած պատմաաշխարհագրական փոփոխություններն ու վերաձևումները[351]:

Այս ամենի մասին գրվել են և դեռ կգրվեն մեծ թվով ուսումնասիրություններ: Ստորև ցանկանում ենք ուշադրություն հրավիրել Ստրաբոնի հաղորդած տեղեկությունների մի խմբի վրա, որը, հանիրավի, քիչ ուշադրության է արժանացել: Խոսքը վերաբերում է մեր թվականության սկզբին (Ստրաբոնը մահացել է 23 թ.) Հայաստանից դուրս հայ բնակչության առկայության մասին վկայություններին:

Հայերը Միջագետքում

Ստրաբոնի «Աշխարհագրության» երկու դրվագում նշվում է Միջագետքում զգալի հայ բնակչության առկայության մասին: Դրանցում շեշտվում է, որ հայերը ասորիների և արաբների հետ միասին եղել են Միջագետքի երեք հիմնական ժողովուրդները. *«Հայերի, ասորիների և արաբների մեծ ցեղակցությունը երևում է լեզվի, կենցաղի և մարմնի նկարագրությունից, անշուշտ, որովհետև իրար հարևան են: Հայտնապես, Մի-*

---

[351] Ստրաբոնի՝ Հայաստանին և հայերին վերաբերող հատվածները տե՛ս Ստրաբոն (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան), Յերևան, 1940: Ստրաբոնի աշխատության առանձին հատվածներ Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ հրատարակվել են «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» առաջին հատորում (Երևան, 2007): Հայերեն թարգմանությունները կատարվել են Ստրաբոնի «Աշխարհագրության» 1925 հրատարակությունից (տե՛ս Strabonis Geographica, recognovit A. Meineke, Vol. I-III, Lipsiae, 1925):

ջագետքում, որ այս երեք ժողովուրդներից է բաղկացած, նմանությունը ավելի շատ է երևում նրանց մեջ... Այդ ժողովուրդների անվանակոչությունը ենթադրել է տալիս նաև իրար հետ մեծ նմանություն: Այն ժողովուրդները, որ մենք «ասորի» ենք կոչում, իրենք՝ ասորիները, կոչում են «արամեացի». սրան նման է արմենների (=հայերի), արաբների և երեմբների անունը: «Երեմբ» էին կոչում հույներն արաբներին, ինչպես որ բառի ստուգաբանությունից էլ իմացվում է»[352]*:*

Նման անվանում ունեցող այս երեք ժողովուրդների ազգակցության մասին Ստրաբոնը խոսում է նաև այլ տեղում. *«Այս երեք մոտիկ հարևան ցեղակից ազգերը, որոնք դրա համար էլ կոչվել են նման անուններով՝ «արմեն», «արամեացի» և «արաբ», ինչպես որ հասկանալի է, թե մի ցեղ կլիմայի տարբերության պատճառով հետզհետե ավելի փոփոխվելով՝ երեքի է բաժանվել, նույնպես և գործածվել են մեկի փոխարեն զանազան անուններ»*[353]*:*

Միջագետքում և հարակից շրջաններում հայ էթնոսի բնակության մասին Ստրաբոնը հիշատակում է նաև Ադիաբենե երկրի նկարագրության առնչությամբ. *«Ահա այն ժողովուրդները, որոնք գտնվում են արևելքում՝ Բաբելոնից վերև. հյուսիսից, ինչպես ասացինք, Մարաստանն ու Հայաստանն է. իսկ արևմուտքում՝ Ադիաբենեի Միջագետքը: Ադիաբենեն մեծ մա-*

---

[352] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, գիրք I, գլուխ 2, 34:

[353] Նույն տեղում, գիրք XVI, գլուխ 4, 27: Հին աշխարհում նմանահունչ ցեղանուններ ունենալը, հարևանությամբ բնակվելը և այդ ընթացքում կենցաղի ու լեզվական առնչությունները բավարար պայման էին ժողովուրդներին ազգակից համարելու համար: Հասկանալիորեն հնդեվրոպական ծագում ունեցող հայերն ազգակից չեն սեմական ծագման արամեացիների (ասորիների) և արաբների հետ:

սամբ դաշտավայր է և Բաբելոնի մաս է համարվում, թեև ունի սեփական իշխանը և կցվել է Հայաստանին: Մարերը, հայերը և երրորդը՝ բաբելացիները, այս կողմերի ազգերից մեծագույնները, սկզբից հարաբերության մեջ էին իրար հետ, պատեհ առթիվ հարձակվում էին իրար վրա, հետո բանակցում և նորից հաշտվում»[354]:

Ինչ խոսք, Հայաստանի և Միջագետքի փոխհարաբերություններն ունեին արդեն հազարամյակների պատմություն, և հայկական էթնիկ տարրի ներկայությունը Միջագետքում կարելի է համարել միանգամայն օրինաչափ: Փորձենք դիտարկել, թե երբ և ինչպես կարող էր հայ էթնոսը դառնալ Միջագետքը բնակեցնող երեք հիմնական տարրերից մեկը:

Ամենավաղ գրավոր վկայությունները Հայաստանի և Միջագետքի հարաբերությունների մասին վերաբերում են դեռևս Ք. ա. III հազարամյակի առաջին կեսին, երբ, ըստ շումերական աղբյուրների, Արատտա երկրից վարպետներ էին գնում Շումեր՝ այնտեղ տաճարներ կառուցելու նպատակով[355]: Այս վկայությունը վերաբերում է Ք. ա. XXVIII-XXVII դարերին, իսկ քիչ ավելի ուշ՝ Ք. ա. XXVI-XXVI դարերում, միջագետքյան աղբյուրները հայտնում են, որ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան Սուբուր-Արմանի թագավորությունից Միջագետք

---

[354] Նույն տեղում, գիրք XVI, գլուխ 1, 18-19:

[355] Տե՛ս **Kramer S. N.,** Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia, 1952, էջ 8-9, 14-15, 28-29; **Канева И. Т.,** Шумерский героический эпос как исторический источник, “Вестник древней истории”, М., 1964, N 3-4, էջ 205, 208, 214; **Cohen S.,** Enmerkar and the Lord of Aratta, Ann Arbor, 1973, էջ 113, 118; The Electronic Text Corpus of Sumerian Literature: Composite Text, Translation, Bibliography (www-etcsl.orient.ox.ac.uk, դիտվել է 10.08.2020), տող 31-32, 130-133, 374-377:

էին գնում դպիրներ, հացթուխներ, դարբիններ, և այգեպան-ներ[356]:

Հաջորդ ժամանակաշրջանը, երբ Հայկական լեռնաշխարհից կարող էր տեղի ունենալ բնակչության որոշ զանգվածների տեղաշարժ դեպի Միջագետք, Բաբելոնիայում քասեցիների (կասիտների) դինաստիայի իշխանության ժամանակն է (Ք.ա. 1595-1155 թթ.)։ Այդ դինաստիան ծագում էր Հայկական լեռնաշխարհից: Քասեցիների արշավանքը մեկնարկել է Եփրատի վերին հովտի երկրներից՝ Թեգարամայից, Խիմուվայից և Իսուվայից (Ծոփքից), որոնք սեպագիր արձանագրություններում կոչվում են «քասիական»[357], իսկ Մասիուս-Մասիոն (այժմ՝ Տուր-Աբդին) լեռներն ասորեստանյան աղբյուրներում կոչվում են Քաշիարի (Քասիարի)[358]: Ք.ա 1595 թ. քասեցիները նվաճվեցին Բաբելոնը, և նրանց արքայատոհմն իշխեց Բաբելոնիայում մինչև Ք.ա. 1155 թվականը: Քասեցի արքաները Բաբելոնիային տիրելուց հետո այն կոչեցին Քարդունիաշ (անջատելով վերջավորությունները՝ կստանանք բուն տեղանունը՝ Քարդու), որը Հայաստանի անվանումներից մեկն է. այդ անվամբ է Հայաստանը կոչվում նաև Աստվածաշնչի հին ասորական Պեշիտտա թարգմանության մեջ[359]: Հատկանշական է նաև, որ Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի հնագիտա-

---

[356] Տե՛ս **Gelb I. J.,** Hurrians and Subarians, Chicago, 1944, էջ 31-32:

[357] Տե՛ս **Otten H.,** Kaššija, “Reallexikon der Assyriology und vorderasiatischen Archäologie”, V Bd., V-VI Lieferung, Berlin - New York, 1980, էջ 464:

[358] Տե՛ս **Postgate J. N.,** Kašiaru, “Reallexikon der Assyriology und vorderasiatischen Archäologie”, V Bd., V-VI Lieferung, Berlin - New York, 1980, էջ 460:

[359] Տե՛ս **Ինգլիզեան Վ.,** Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947, էջ 5-8:

կան առնչություններում իր առատությամբ առանձնանում է քասեցիական Բաբելոնի դարաշրջանը[360]:

Հայ բնակչության՝ Միջագետքում հայտնվելու հնարավորության տևական ժամանակամիջոց էին Միջին և Նոր Ասորեստանի ժամանակաշրջանները (Ք.ա. XIII-VII դդ.): Այս հսկա ժամանակամիջոցում ասորեստանյան բանակները տասնյակ արշավանքներ են ձեռնարկել դեպի Հայկական լեռնաշխարհ, որոնց արդյունքում գերեվարված հայ բնակչության որոշ զանգվածներ կարող էին հայտնվել Միջագետքում[361]:

---

[360] Տե՛ս **Փիլիպոսյան Ա.,** Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Երևան, 1998, էջ 102:

[361] Ք.ա. XIII-IX դարերում Ասորեստանի՝ դեպի Նաիրյան երկրներ կատարած արշավանքների և այդ ընթացքում տեղի ունեցած գերեվարությունների մասին տե՛ս **Ադոնց Ն.,** 1972, էջ 52-66; Пиотровский, 1959, էջ 43-60; Salvini, 1967: Ք.ա. I հազ. առաջին կեսին Ասորեստանի և Վանի թագավորության վարած տեղահանությունների և էթնիկ տեղաշարժերի քաղաքականության մասին տե՛ս **Ցականյան Ռ.,** Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ., Երևան, 2018, էջ 10-59 (նաև հղված գրականությունը):



Հայ էթնոսի տարածման աշխարհագրությունն ըստ Ստրաբոնի

Հաջորդն Աքեմենյան աշխարհակալության ժամանակաշրջանն է, որից ունենք ուշագրավ վկայություններ հայ-միջագետքյան փոխառնչությունների մասին։ Դրանցից մեկը Դարեհ Ա-ի Բեհիստունյան արձանագրության հայտնի փաստն է, որում նշվում է, որ բացի Հայաստանում պարսից տիրակալին ցույց տված հուժկու դիմադրությունից՝ Բաբելոնում ապստամբության գլուխ էր կանգնել հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին[362]։ Սա թույլ է տալիս ենթադրել Բաբելոնում հայ համայնքի գոյության մասին։

[362] Այդ մասին պատմվում է արձանագրության §§ 49-52-ում (Բեհիստունյան արձանագրությունն ամբողջությամբ տե՛ս **Kent R. G.,** Old Persian. Grammar, Texts, Lexicon, Parts I-III, New Haven, 1953, էջ 107-108, 116-135; **Նալբանդյան Գ.,** Դարեհ Վշնասպի Բիսեթունյան արձանագրությունը, Երևան, 1964; **Lecoq P.,** Les inscriptions de la Perse achéménide, Gallimard, 1997, էջ 83-96, 187-217; **Schmitt R.,** Die altpersischen Inschriften der Achaimeniden, Wiesbaden, 2009, էջ 9-10, 36-96)։

Ք.ա. 418 թվականով թվագրվող սեպագիր մի սալիկում տեղեկություն կա «ուրարտացիների և մելիդցիների» մասին, որոնք զինվորական ծառայություն էին կատարում Հարավային Միջագետքի Նիպպուր՝ շումերների երբեմնի սրբազնագույն քաղաքի շրջանում[363]: Հայկական բանակային միավորումները տարբեր առաքելություններ են կատարել Աքեմենյան տերության տարբեր շրջաններում: Հայտնի է, որ, օրինակ, Արտաքսերքսես II-ի դեմ ապստամբած Կապադովկիայի սատրապ Դատամեսի դեմ ուղարկված պատժիչ զորքի կազմում կար նաև տասհազարանոց հայկական զորագունդ[364]:

Եվ, ի վերջո, հայ բնակչության որոշ զանգվածների տեղաշարժ դեպի հարավային հարևան Միջագետք կարող էր տեղի ունենալ Տիգրան Մեծի աշխարհակալության տարիներին: Հանրահայտ է նրա՝ էթնիկական տեղաշարժերի քաղաքականությունը[365]: Ուշագրավ է, որ Հյուսիսային Միջագետքի կենտ-

---

363 Տե՛ս **Clay A. T.,** Business Documents of Murashu Sons of Nippur Dated in the Reign of Darius II, 1904, էջ 62, 107; **Дандамаев М. А.,** Клинописные данные об армянах, էջ 102-106, 115; **Khorikyan H. G.,** The Administrative Division of the 13th Satrapy of Achaemenid Persia in the Reign of Darius II, "Метаморфозы истории", Научный альманах, выпуск 10, Псков, 2017, էջ 174-180:

364 Այդ մասին տեղեկացնում է Կորնելիոս Նեպոտը (Ք.ա. I դ.) «Օտարերկրացի նշանավոր զորավարների մասին» աշխատության էջերում (Cornelius Nepos (with an English trans. by J. C. Rolfe), London, 1960, էջ 514):

365 Որպես խոսուն վկայություն կարելի է մեջբերել Պլուտարքոսի մի հաղորդումը Տիգրան Մեծի մասին. *«Երբ Տիգրանը նոր միայն սկսում էր, նրա ծրագրերն ու հնարավորությունները խիստ համեստ էին, իսկ այժմ նա հպատակեցրել է բազում ժողովուրդների, խորտակել է, ինչպես դեռևս չէր հաջողվել ուրիշ մեկին, պարթևների հզորությունը, իսկ Միջագետքը հեղեղել է հելլեններով, որոնց նա ամբողջ բազմություններով բռնագաղթեցրել էր Կիլիկիայից ու Կապադովկիայից: Այլ ժողովուրդներից նա արաբական քոչվոր ցեղերին քշեց իրենց նախկին վայրերից և բնակեցրեց իր մայրաքաղաքի*

րոն Ուռհայի (Եդեսիայի) մասին հայկական ավանդությունը քաղաքի հիմնադրումը կապում է Տիգրան Մեծի եղբորորդի Աբգարի հետ[366]: Ուռհայի՝ հայերի հիմնած քաղաք լինելու մասին պատկերացումը վկայված է նաև IV դարում: Հիշենք Բյուզանդիայի (Արևելյան Հռոմեական կայսրության) կայսրին Պապ թագավորի (370-374 թթ.) գրած նամակը, որի մասին հիշատակում է Փավստոս Բուզանդը. «Հետո պատգամավորներ էր ուղարկում Հունաց թագավորի մոտ, թե Կեսարիայի հետ ուրիշ տասը քաղաքները մերն են եղել, ետ տուր. Ուռհա քաղաքն էլ մեր նախնիք են շինել, ուստի եթե չես ուզում, որ խռովություն ծագի, ետ տուր, հակառակ դեպքում մեծ պատերազմով կպատերազմենք»[367]…

Ահա այսպիսի մեծ ճանապարհ է անցել հայ-միջագետքյան փոխառնչությունների պատմությունը, որը թույլ է տալիս բազմաթիվ ժամանակաշրջաններում տեսնել դեպի Միջագետք հայ բնակչության որոշ հատվածների տեղափոխման հնարավորությունը, ինչի շնորհիվ էլ հայերը դարձել են Միջագետքը բնակեցնող երեք հիմնական ժողովուրդներից մեկը:

Հայերը Կողքիսում (Կոլխիդա)

Բուն Հայաստանից դուրս մյուս երկրամասը, որում առկա էր հայ բնակչություն, գտնվում էր հյուսիսում՝ Սև ծովի առափնյա շրջանում: Դա Կողքիս (Կոլխիդա) երկիրն էր, որի Մոսքի-

---

մոտ, որպեսզի նրանց օգտագործի առևտրական կարիքների համար» (**Պլուտարքոս,** Համեմատական կենսագրություններ, Լուկուլլոս, 21):

[366] Տե՛ս **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, գիրք Բ, գլ. ԻԴ, ԻԷ:

[367] **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, դպր. Ե, գլ. ԼԲ:

կե գավառը (մոսխերի երկիրը) բնակեցնող երեք ազգերից մեկը հայերն էին. *«Մոսքիկեն, ուր կա նշանավոր մի տաճար, երեք մաս ունի. առաջինը զբաղեցում են կողքիսցիները, երկրորդը՝ վրացիները, իսկ երրորդը՝ հայերը»*[368]:

Հյուսիսային սահմանակից երկրում հայերի հայտնվելն անսպասելի չէ, առավել ևս, եթե նկատի ունենանք, որ անցյալում այդ տարածքն ինչ-որ ժամանակ ընդգրկվել է Հայաստանի կազմի մեջ: Խոսքը, մասնավորապես, Վանի թագավորության ժամանակաշրջանում Սարդուրի Բ-ի կողմից Կուլխա երկրի (Կոլխիդա, Կողքիս) նվաճման մասին է: Ք.ա. 740-ական թթ. տեղի են ունենում Սարդուրի Բ-ի երկու արշավանքները դեպի հյուսիս, որոնցից առաջինի ժամանակ նա նվաճում է Կուլխա երկիրը: Երկու տարի անց Սարդուրի Բ-ն Կուլխայի դեմ ձեռնարկվում է երկրորդ արշավանքը: Նվաճվում են Կուլխայի բազմաթիվ քաղաքներ, այդ թվում՝ մայրաքաղաք Իլդամուշան, որի կայազորն ու բնակչությունը ոչնչացվում է: Իր հաջողությունը հավերժացնելու նպատակով Սարդուրին հրամայում է նվաճված մայրաքաղաքում կանգնեցնել իր գործերը փառաբանող արձանագրություն-կոթող: Դրանով Սարդուրին վերջնականապես ամրապնդում է Վանի թագավորության տիրապետությունը նաև Սև ծովի ափին[369]:

Մի նկատառում ևս. արգոնավորդների մասին զրույցների վաղ շրջանի գրառումներում Յասոնը և նրա ընկերները ոսկե գեղմը ձեռք բերելու նպատակով Արգո նավով նավարկում են

---

[368] **Ստրաբոն,** Աշխարհագրություն, գիրք XI, գլուխ 2, 18:

[369] Մանրամասն տե՛ս արքայի գործերի մասին պատմող Սարդուրյան տարեգրությունը (**Арутюнян Н. В.,** Корпус урартских клинообразных надписей, Е., 2001, էջ 234-235, 238-239; ՀԺՊՔ, էջ 177-178, թարգմ.՝ Հ. Հ. Կարագյոզյանի):

դեպի Սև ծովի հարավարևելյան ափին գտնվող Այա երկիր: Ավելի ուշ շրջանի գրառումներում, թերևս, հունական գաղութացման ժամանակաշրջանում, Այա երկիրը փոխարինվեց Կոլխիդա (Կողքիս) երկրով: Այա երկիրը մի շարք գիտնականներ նույնացնում են Հայա-Հայասա երկրի հետ[370]: Այսինքն՝ հայկական էթնիկ տարրի ներկայությունը Կոլխիդա-Կողքիսի տարածքում կարելի է ենթադրել դեռևս Ք.ա. II հազարամյակում և I հազարամյակի առաջին կեսին:

Հայերը Վրկանաց Աշխարհում

Ըստ Ստրաբոնի՝ հայ բնակչություն կար նաև Հայաստանից արևելք ընկած տարածքում՝ Կասպից ծովի հարավային (նաև՝ հարավարևելյան), ափամերձ շրջաններում, որտեղ գտնվում է Վրկանաց աշխարհը. *«…Այնուհետև Վրկանաց աշխարհն է, որից սկսած՝ Կասպից ծովը ընդարձակվում է, մինչև հասնում է Մարաստանի և Հայաստանի լեռները: Սրանք ներքևում ունեն մահիկաձև կերպարանք և վերջավորվում են ծովի մոտ՝ ձևացնելով ծոցի խորքը: Լեռների երկարությամբ՝ ծովից սկսած մինչև բարձունքը, բնակվում են քիչ քանակությամբ աղվաններ ու հայեր. և ավելի շատ գեղեր, կարուսիններ, ամարդներ, կյուրտիներ, անարիակները և ուրիշ զանա-*

---

[370] Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.,** Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 285; **Պետրոսյան Ա.,** Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997, էջ 86-89; **Մարտիրոսյան Հ.,** Արգոնավորդների արշավանքը և Հայաստանը, «Հայոց պատմության և մշակույթի հարցեր» գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 24 և այլն:

զան ցեղեր, որոնք ավելի ավազակ ու պատերազմիկ են, քան երկրագործ...»[371]:

Եթե Կողքիսում հայ բնակչության առկայությունը կարելի է բացատրել Հայաստանի հետ հարևանությամբ և մշտական աշխույժ առնչություններով (ինչպես Միջագետքի պարագայում), ապա նույնը դժվար է պնդել այս պարագայում: Թե երբ և ինչ հանգամանքներում են հայերը հայտնվել Վրկանաց աշխարհում, մեզ մնում է լիովին անհայտ: Այդուհանդերձ, ցանկանում ենք երկու փաստի վրա հրավիրել ընթերցողների և ոլորտի մասնագետների ուշադրությունը, որոնք կարող են այս կամ այն կերպ կապ ունենալ հիշյալ վկայության հետ: Առաջինը վերաբերում է Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորության ժամանակաշրջանին, մասնավորապես Արգիշտի Բ արքայի իշխանության տարիներին (Ք.ա. մոտ 710-680 թթ.): Այս արքան գործուն արտաքին քաղաքականություն էր իրականացնում ապագա Ատրպատականի տարածքում՝ հասնելով, թերևս, մինչև Կասպից ծով: Այդ մասին են վկայում Ռազլիկ և Նաշտեբան հնավայրերից գտնված նրա սեպագիր արձանագրությունները[372]: Վերջիններիս լրացնելու եկավ Գիլանից հայտնաբերված «Արգիշտի» արքայանունը կրող սեպագիր մակագրությամբ ապարանջանը[373]: Գիլանի և Արարատ-Ուրարտուի առնչությունների մասին կան հնագիտական այլ

---

371 **Ստրաբոն,** Աշխարհագրություն, գիրք XI, գլուխ 7, 1:

372 Տե՛ս **Арутюнян Н. В.,** Корпус урартских клинообразных надписей, էջ 409-411:

373 Տե՛ս **Grekian Y., Dalalian T.,** An Urartian Bracelet from Gilan, “Iran and the Caucasus”, 2004, Vol. 8, Issue 1, էջ 1-6:

վկայություններ ևս[374], ինչը որոշակի կարևորություն կարող է ստանալ մեր խնդրի տեսանկյունից: Իհարկե, այս դեպքում էլ բաց են մնում մի շարք հարցեր, որոնց պատասխանները ևս չունենք:

Երկրորդ փաստը վերաբերում է հայ իրականության և Կասպից ծովից արևելք ընկած տարածքների կապին: Ստրաբոնի ապրած ժամանակին նախորդող շրջանից մեզ հայտնի այդպիսի միակ փաստը վերաբերում է Տիգրան Մեծի և միջինասիական սակարաուկների միջև կապին: Վերջիններիս զորագնդերը Տիգրան Մեծի զորքի կազմում մասնակցել են ռազմական գործողությունների[375]: Հասկանալիորեն այդ կապը պետք է իրականացած լինի Կասպից ծովի հարավային և արևելյան տարածքներով: Սակայն այս դեպքում ևս չունենք որևէ կռվան՝ ցույց տալու, թե ինչպես կարող է այդ փաստը բացատրել հայ բնակչության որոշ զանգվածների առկայությունը Վրկանաց աշխարհում:

* * *

Այսպիսով՝ ցանկանում ենք ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրել Ստրաբոնի տեղեկությունների կարևոր այս խմբի վրա: Դրանք վկայում են մեր թվականության սկզբին Հայաստանից դուրս զգալի թվով հայ բնակչության առկայության մասին: Ստրաբոնի վկայություններից պարզ է դառնում, որ այդ ժամանակ հայկական էթնիկ տարրը բուն Հայաստա-

---

[374] Տե՛ս նույն տեղում, էջ 2-3 (տե՛ս նաև հղված պարսկալեզու գրականությունը):

[375] Մանրամասն տե՛ս **Манасерян Р. Л.,** Международные отношения на Переднем Востоке в 80-70-х годах до н. э. (Тигран II и войска с берегов Аракса), “Вестник древней истории”, 1992, N 1, էջ 152-160:

նից դուրս տարածվել էր առնվազն երեք ուղղությամբ՝ դեպի հարավ (Միջագետք, Ադիաբենե), հյուսիս (Կողքիս) և արևելք (Վրկանաց աշխարհ):

Ներկայացված փաստերը կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև հայ գաղթաշխարհի ուսումնասիրության դիտանկյունից: Հայոց գաղթաշխարհի պատմության սկզբնավորումն այսօրվա գիտության մեջ թվագրվում է IV դարով, երբ բազմահազար հայեր, բռնի գաղթեցվելով, ցրվեցին Սասանյան տերության տարբեր շրջաններում[376]: Ստրաբոնի այս վկայությունները ցույց են տալիս, որ նրա ապրած ժամանակաշրջանում արդեն առկա էր հայ էթնոսի սփռվածություն իր հայրենիքի սահմաններից դուրս, ընդ որում՝ երեք ուղղությամբ: Իսկ դա լիովին իրավունք է տալիս մեզ հայոց գաղթաշխարհի պատմությունը սկսել մեր թվականության առաջին դարի սկզբից:

ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)

Одним из важнейших источников по истории древней Армении является “География” Страбона (I век до р. Хр. - I в.). Сведения Страбона указывают, что накануне нашей эры армяне обитали не только в Армении (на территориии армянских царст), но и за ее пределами. В частности, армяне проживали на территориях Месопотамии, Колхиды и Гиркании. Автор указывает на важность этих сведений с точки зрения изучения исторической демографии армянского народа.

---

[376] Հիմնախնդրի շուրջ հիմնական մոտեցումների և փաստարկների քննարկումը տե՛ս **Եղիազարյան Ա.,** Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ, «Սփյուռքագիտություն», Տարեգիրք, Երևան, 2013, էջ 3-28:

THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)

One of the most important sources of the history of ancient Armenia is the "Geography" of Strabo (1st cent. BC - 1st cent. AD). The information of Strabo indicates that on the eve of our era the Armenians lived not only in Armenia (on the territory of the Armenian kingdoms), but also beyond its borders. In particular, the Armenians lived in the territories of Mesopotamia, Colchis and Hyrcania. The author points out the importance of this information from the point of view of studying the historical demography of the Armenian people.

ՄԵԾ ՀԱՅՔԸ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արշակունյաց հարստության իշխանության ժամանակաշրջանում Մեծ Հայքի թագավորության վարչաքաղաքական բաժանման համակարգի մասին ուսումնասիրություններ կատարելիս անչափ կարևոր սկզբնաղբյուր է Բ դարում ստեղծագործած հույն նշանավոր մաթեմատիկոս, աստղագետ, ֆիզիկոս, աշխարհագետ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկը:

Ի՞նչ տեղ ունի Մեծ Հայքը «Աշխարհագրություն» երկի համաշխարհային համակարգում: Որո՞նք են Մեծ Հայքի սահմանները, ինչպիսի՞ն է Մեծ Հայքի թագավորության վարչատարածքային բաժանումը: Սույն աշխատանքը նպատակ ունի՝ մանրամասն քննության առնելու Մեծ Հայքի թագավորության տեղը (սահմանները, վարչատարածքային բաժանումը) պտղոմեոսյան «Աշխարհագրության» համակարգում:

Հարկ ենք համարում նշել, որ խնդրո առարկա թեման աչքի չի ընկնում ուսումնասիրությունների առատությամբ, ուստի մեր խնդիրն է առավել մանրամասն և ամբողջական պատկերացում կազմելու համար դիմել սկզբնաղբյուրներում և սակավաթիվ ուսումնասիրություններում առկա փաստերի մանրամասն համադրմանը և վերլուծությանը:

Աղբյուրագիտական տեսանկյունից մեր աշխատանքի համար անկյունաքարային նշանակություն ունի հենց «Աշխարհագրություն» երկը, որի ամբողջական բնագիրը հայերեն երբեք չի հրատարակվել: Անգլերեն թարգմանություններից ա-

ռանձնանում է Է. Սթիվենսոնի հրատարակությունը[377]: Մեծ Հայքին վերաբերող հատվածը (գիրք 5-րդ, գլուխ 13-րդ) հայերեն թարգմանվել և մասնակիորեն հրատարակվել է 2011 թ. «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» Բ հատորում[378]: Պատմահամեմատական վերլուծություններ կատարելու համար օգտվել ենք գրեթե զուգահեռ ժամանակաշրջաննե-

---

[377] Անգլերեն միակ ամբողջական հրատարակությունը տե՛ս Geography of **Claudius Ptolemy,** translation by Ed. L. Stevenson, translator introduction by J. Fischer, New York, first published in 1932, current edition published by Cosimo Classics in 2011: Քանի որ անգլերեն այս թարգմանությունը լատիներենից է արվել, տեղանունները զգալիորեն ռոմանականացված են (այս մասին առավել մանրամասն տե՛ս **Diller A.,** Review of E. L. Stevenson's translation of Geography of Claudius Ptolemy, "Isis", University of Chicago Press, 1935, Vol. 22, No. 2, DOI:10.1086/346925, pp. 533-539), հետևաբար դրանք ճշգրտելու համար զուգահեռաբար օգտվել ենք հունարեն բնագրերի՝ անգլերեն համեմատական թարգմանությունից [**Ptolemaeus,** Geography, translated by J. Kiesling from the Greek texts of K. Nobbe (1843-1845) and K. Muller (1883), the ToposText classics], ինչպես նաև գերմաներեն հրատարակությունից [**Ptolemaios** Handbuch der Geographie (Griechisch-Deutsch), Vol. 2, bear. von Al. Stückelberger, G. Grasshoff, F. Mittenhuber, Schwabe Verlag, 2006]: Աշխատանքում տրվելու են համեմատական ճշտումները, սակայն հղումներում նշվելու են միայն Է. Սթիվենսոնի հրատարակության տվյալները (այսուհետ՝ **Claudius Ptolemy**): Տեղանունների հունարեն և լատիներեն ձևերի հիշատակությունները ճիշտ տառադարձելու նպատակով օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում Ֆորդհեմի համալսարանի (ԱՄՆ) ծիսագիտության դոկտոր Տ. Աբրահամ (Մանուկ) քհն. Մալխասյանին:

[378] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 2, կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, 2011, էջ 10-12: Հընթացս մեր աշխատանքների ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ., պրոֆ. Բաբկեն Հարությունյանից 2013 թ. հունվարին ստացել ենք հայերեն թարգմանության՝ Մեծ Հայքին և Փոքր Հայքին վերաբերող հատվածների չհրատարակված տարբերակը, որ թարգմանվել է Գ. Մուրադյանի ջանքերով «Claudii Ptolemaei Geographia, ed. Coralus Fridericus, Augustus Nobbe, Lipsiae, 1843-1845» հրատարակությունից: Միայն սույն գլխի շրջանակում դա ևս օգտագործել և համեմատել ենք Պտողմեոսի հիշատակությունները օտարալեզու հրատարակություններից թարգմանաբար ներկայացնելիս:

րի հունահռոմեական պատմագրության հուշարձաններից, որոնց մեջ մեր աշխատանքի համար առանձնակի կարևորություն ունի Պլինիոս Ավագի «Բնական պատմությունը»[379]:

Հայկական սկզբնաղբյուրներից իր բովանդակությամբ առավել օգտակար է շատերի կողմից Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց» երկը[380], որը նաև աղբյուրագիտական աղերսներ ունի Պտղոմեոսի «Աշխարհագրության» հետ:

Սկզբնաղբյուրներից զատ մեր ուշադրության կենտրոնում են եղել թեմային առնչվող ուսումնասիրությունները: Քանի որ «Աշխարհագրություն» երկում Հայաստանին առնչվող տեղեկությունները առանձին ամբողջական հետազոտության նյութ առայժմ չեն եղել, ուստի քննության ենք առել Ս. Երեմյանի[381] և Բ. Հարությունյանի[382]՝ «Աշխարհացոյց»-ին նվիրված աշխատանքներում առկա, «Աշխարհագրությանն» առնչվող հատվածական ուսումնասիրությունները: Ս. Երեմյանը և Բ. Հարությունյանը իրենց ուսումնասիրությունները նյութականացրել են՝ կազմելով Մեծ Հայքի քարտեզը՝ ըստ «Աշխարհագրու-

---

379 Տե՛ս “The Natural History of Pliny”, translated by J. Bostock and H. Riley, Vol. I, London, 1855, Book V, Chapter 20, p. 441-443: Հմմտ. “Pliny’s Natural History” in thirty-seven books, a translation on the basis of that by Dr. Ph. Holland, ed. 1601, Vol. I, London, 1847-48, Book VI, Chapter IX, p. 108-109. Տե՛ս նաև “The Natural History of Pliny”, translated by J. Bostock and H. Riley, Vol. II, London, 1855, Book VI, Chapter 9-10, pp. 17-20 (այսուհետ՝ **Pliny the Elder**):

380 Տե՛ս «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց» [հրատ.՝ Ա. Սուքրյան, ընդարձակ խմբագրություն], Վենետիկ, 1881. **Աբրահամյան Ա.,** Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 336-354 (համառոտ խմբագրություն):

381 Տե՛ս **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ Է դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963:

382 Տե՛ս **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան, 2001:

թյան»[383]: Անհրաժեշտ է նշել, որ Պտղոմեոսի՝ Փոքր Հայքին առչվող տեղեկությունները քննության են առնվել Ն. Ադոնցի կողմից: Նրա մի քանի ուսումնասիրություններում[384] երբեմն տեղ են գտել նաև Մեծ Հայքի արևմտյան հատվածներին վերաբերող վերլուծություններ, որոնք էլ մեզ համար անչափ կարևոր նշանակություն ունեն: Խնդրո առարկա թեմայի շուրջ անդրադարձներ են կատարվել նաև Գ. Սարգսյանի[385], Հ. Հարությունյանի[386] և այլոց կողմից:

Որպես Մեծ Հայքի թագավորության՝ Պտղոմեոսի պատկերած Երկրի համակարգի բաղադրատարրի քննության առաջին քայլ՝ պետք է նախնառաջ հայացք գցել երկի գրառման ժամանակաշրջանի (շուրջ 150 թ.)[387] Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին՝ վարչատարածքային վերաբաժանումների էությունն ընկալելու համար:

Դեռևս 66 թ. Մեծ Հայքի թագավորության գահին էր բազմել Պարթևստանի Արշակունյաց հարստության կրտսեր ճյուղը՝

---

383 Հմմ. նաև **Hewsen R. H.**, Armenia: A Historical Atlas, Chicago-London, 2001, p. 67 ("Ptolemy's Map According to Modern Cartography"):

384 Տե՛ս **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987; *նույնի* ՝ Քննական պատմություն հայոց, տե՛ս «Երկեր», հ. Դ., խմբ. Պ. Հովհաննիսյանի, Երևան, 2009:

385 Տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 679:

386 Տե՛ս **Арутюнян А.,** Административно-территориальное деление Аршакидской Армении согласно “Географии” Клавдия Птолемея (северные губерни). “Каспийский регион. Политика, экономика, культура”, Астрахань, 2014, N 2, с. 14-21: *Նույնի*՝ О неизвестных армянских городах в “Географии” Птолемея, “Научные Ведомости Белгородского гос. университета. История. Политология. Экономика. Информатика”, Белгород, 2014, N 3, (вып. 31), с. 36-40: *Նույնի*՝ Административно-территориальное деление Аршакидской Армении согласно “Географии” Клавдия Птолемея (южные губерни), “Каспийский регион. Политика, экономика, культура”, Астрахань, 2014, N 3, с. 15-23:

387 Տե՛ս **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 10:

հանձին Տրդատ Ա Արշակունու (52/61/66-76[88] թթ.): Արշակունիների հարստության ժամանակաշրջանում բնական է, որ Մեծ Հայք պետք է ներմուծվեին Պարթևական թագավորությունում գործող վարչաքաղաքական համակարգի հիմնական տարրերը: Այսպես, Մեծ Հայքի թագավորությունում հաստատվեց աշխարհների, այսինքն՝ նահանգների համակարգը: Փաստորեն, տեղի ունեցավ վարչամիավորների խոշորացում, քանի որ նախկին 120 վարչամիավորների փոխարեն ի հայտ եկան առնվազն 20 նոր վարչամիավորներ, որոնք էլ նկարագրված են Պտղոմեոսի երկում:

Ինչո՞վ կարող ենք հիմնավորել այն հանգամանքը, որ իսկապես տեղի է ունեցել նմանօրինակ փոփոխություն: Հարկ է նշել, որ Ք.ա. Բ - Ք.հ. Ա դարերի անտիկ հեղինակների երկերում Մեծ Հայքում հիշատակվում են մի քանի տասնյակ փոքր վարչամիավորներ: Ի մասնավորի՝ պետք է առանձնացնել Պլինիոս Ավագի հաղորդած տեղեկությունները 120 վարչամիավորների («ստրատեգիաներ», «պրեֆեկտուրաներ») առնչությամբ: Ակադ. Ս. Երեմյանի կարծիքով Պլինիոս Ավագը, որ իր «Բնական պատմություն» երկի շարադրումն ավարտել է 77 թ., Մեծ Հայքին վերաբերող հատվածները գրառել է մինչև Պարթևստանի Արշակունյաց պետության վարչաքաղաքական համակարգի ներմուծումը, քանի որ այդ ուսումնասիրությունը և քարտեզի կազմումն իսկ կատարել է Հռոմի Կլավդիոս կայսեր (41-54 թթ.) կարգադրությամբ[388]: Պլինիոսն իր երկում հստակորեն նշում է. *«Այն (Մեծ Հայքի թագավորությունը – Մ. Մ.) բաժանված է, ինչպես հայտնի է, 120 պրեֆեկտուրանե-*

[388] Տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 837, 840:

րի, որոնք կոչվում են ստրատեգիաներ, որոնց մի մասը երբեմ-նի առանձին թագավորություններ էին տեղական անվանում-ներով»[389]*:*

Ս. Երեմյանն իրավացիորեն նկատում է, որ Մեծ Հայքի 120 ստրատեգիաները ռազմավարչական միավորներ էին և հանդիսանում էին աշխարհացույցյան Մեծ Հայքի 15 աշխարհների շուրջ 190 գավառների նախահիմքը՝ հիմքում ունենալով երբեմն ցեղային, իսկ երբեմն էլ՝ աստիճանաբար ժառանգական դարձող գործակալությունների հետ կապված տիրույթները: Միևնույն ժամանակ նա նկատում է, որ Մեծ Հայքի թագավորությունում Արտաշեսյանների շրջանից մնացած և միևնույն ժամանակ դրածո թագավորների գահակալության ժամանակաշրջանում զգալիորեն խարխլված վարչաքաղաքական համակարգը Արշակունիների օրոք պետք է ենթարկվեր որոշակի փոփոխությունների, որոնք պետք է բխեին պարթևական տերության համակարգից[390]: Ս. Երեմյանը չի բացառում նաև այն, որ 120 ստրատեգիաները կարելի է դասակարգել ըստ տարբեր կարգավիճակների, ինչը, իհարկե, անընդունելի հանգամանք պետք է դիտվեր կենտրոնացված հզոր իշխանության ձգտող Արշակունի արքաների համար: Նման պարագայում միանգամայն տրամաբանական է, որ Ա դարի երկրորդ կեսին Մեծ Հայքի թագավորությունում կատարվեր վարչատարածքային բաժանման համակարգի փոփոխություն:

Մեծ Հայքի թագավորության վարչատարածքային նոր բաժանումն առաջին անգամ նկարագրված է Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում: Հենց այս հանգամանքն է

---

[389] **Pliny the Elder**, գիրք 6-րդ, 10.27:
[390] ՀԺՊ, հ. 1, էջ 837-843:

հայագիտության տեսանկյունից բացառիկ նշանակություն տալիս տվյալ աշխատանքին:

Ուսումնասիրողի աչքից չի կարող վրիպել այն փաստը, որ 77 թ. ավարտված աշխատանքից 73 տարի հետո՝ մոտ 150 թ. գրառված երկում վարչամիավորների թիվը միանգամից 100-ով նվազում է: Ճիշտ է, Ս. Երեմյանը փորձում է ենթադրել, որ կարող է տարընթերցում տեղ գտած լինել, և մենք երկու սկզբնաղբյուրների պարագայում էլ գործ ունենք 20 վարչամիավորների հետ: Նման կասկած նրա մոտ առաջացել է՝ հիմք ընդունելով այն փաստը, որ հելլենիստական պետություններում ստրատեգիաները շատ ավելի մեծ տարածք էին ընդգրկում, քան կարող էին ընդգրկել Պլինիոսի հիշատակած վարչամիավորները Մեծ Հայքում:

Գ. Սարգսյանի կարծիքով Պտղոմեոսի հիշատակած 20 վարչամիավորներն իրենց բնույթով պետք է համապատասխանեին ոչ թե հարևան Կապադովկիայում գոյություն ունեցած 10 ստրատեգիաներին, որոնք շատ ավելի մեծ տարածք էին զբաղեցնում, այլ Սելևկյան տերությունում ժամանակին գոյություն ունեցած սատրապիաների համակարգին, որն ընդգրկում էր շուրջ 30 սատրապություն՝ 72 հյուպարքոսություններով: Նա նաև ներկայացնում է Պլինիոսի «Բնական պատմության» քննական բնագրի հրատարակչի՝ Կ. Մայհոֆի կարծիքն առ այն, որ Մեծ Հայքի պարագայում 120 ստրատեգիաներ մատնանշելն իբրև թե հարյուրավորի նիշի հետագա աղավաղման արդյունք է և պետք է 20 կարդալ: Գ. Սարգսյանը գտնում է, որ նման եզրահանգումը ներդաշնակություն է մտցնում Կապադովկիայի և Մեծ Հայքի վարչատարածքային

բաժանումների միջև[391]: Իհարկե, բացառված չէ, որ նախկին 120 ստրատեգիաները միավորվեին նոր 20 վարչամիավորնե-րի մեջ:

Ս. Երեմյանը, ի վերջո, նաև հակված է կարծելու, որ 120 թիվը ճիշտ է ընթերցված, և Պլինիոսը, կատարելով կայսեր հրամանը, առաջնորդվել է ռազմավարչական ցանկացած մի-ավոր հաշվառելու սկզբունքով[392]: Այստեղ հարկ է հաշվի առ-նել նաև այն հանգամանքը, որ Մեծ Հայքի թագավորության տարածքը ֆիզիկաաշխարհագրական տեսանկյունից խիստ կտրտված ռելիեֆ ունի, մի գործոն, որը բնականորեն կասեց-նում է վարչամիավորների՝ խոշոր լինելու հնարավորությու-նը՝ ի տարբերություն հարևան հելլենիստական պետություն-ների:

Փաստորեն, Ա դարի վերջին քառորդից մինչև Բ դարի կեսն ընկած ժամանակահատվածում Մեծ Հայքի թագավորու-թյունում վարչաքաղաքական լուրջ վերափոխություն է կա-տարվել: Այստեղ պետք է հստակեցնել կատարման ժամանա-կը՝ հաշվի առնելով երկու կարևոր հանգամանք.

1. Պտղոմեոսի երկի շարադրման ժամանակ Մեծ Հայքում գահակալող արքան Պարթևստանի կողմից առաջարկված և Հռոմի կողմից հաստատված անհատ պետք է լիներ, որպեսզի հաստատված պարթևական վարչահամակարգը տևական, այ-սինքն՝ քարտեզագրական նկարագրության արժանի լիներ: Պտղոմեոսի կենսագրության հետ ժամանակային առումով համադրելի նմանօրինակ արքաներ են եղել Տրդատ Ա-ն

[391] Տե՛ս նույն տեղում, էջ 679:
[392] Տե՛ս նույն տեղում:

(52/61/66-76[88] թթ.), Սանատրուկը (76[88]-110 թթ.) և Վաղարշ Ա-ն (117-140 թթ.):

2. Երկը պետք է գրառված լիներ Պտղոմեոսի աստղագիտական դիտարկումների (127-141 թթ.) կամ դրանց հաջորդող ժամանակաշրջանում, քանի որ Պտղոմեոսի նկարագրություններում հսկայական կարևորություն ունեին աստղագիտական հաշվարկները: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ նմանօրինակ հաշվարկներ կատարելիս նա մշտապես նկատի է ունեցել Մարինոս Տյուրոսցու հաղորդած տվյալները, որոնք թվագրվում են մոտ 100/114 թվականով:

Ն. Ադոնցը հակված է Մեծ Հայքի բաժանումը 120 ստրատեգիաների վերագրել Տրդատ Ա-ին, քանի որ մինչև Պլինիոսը որևէ հեղինակ, մասնավորապես Ստրաբոնը, չի հիշատակում Մեծ Հայքում գոյություն ունեցող 120 վարչամիավորների՝ պրեֆեկտուրաների կամ ստրատեգիաների մասին[393]: Նա գտնում է, որ Տրդատը պետք է վավերացներ այն վիճակը, որ գտել է երկրում[394]:

Անշուշտ, Տրդատ Ա.-ի և Սանատրուկի օրոք արդեն պետք է հաստատված լիներ աշխարհների համակարգը, սակայն հնարավոր է, որ Պտղոմեոսի մոտ ներկայացված է Վաղարշ Ա.-ի օրոք առկա վարչատարածքային բաժանման համակարգը, քանի որ Պտղոմեոսը չէր կարող մինչ իր ուսումնասիրությունը ներկայացնել աշխատանքի արդյունքը: Պատահական չէ, որ արևմտյան ուսումնասիրողները և ակադեմիկոս Ս. Երեմյանը երկի հրապարակումը տեղադրում են մոտ 150 թվականը: Սակայն այստեղ հրապարակ է գալիս այն հարցը, որ «Աշ-

---

[393] **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 482-484:
[394] Տե՛ս նույն տեղում, էջ 484:

խարհագրության» մեջ բացակայում է Վաղարշապատ քաղաքը, ինչը նշանակում է, որ Մեծ Հայքին վերաբերող հատվածը կարող էր գրառված լինել Վաղարշ Ա-ի գահակալման առաջին շրջանում, այն է՝ մինչև 130 թվականը: Այսպիսով՝ երկու կարևոր փաստ մեզ կարող է ստիպել կարծելու, որ գործ ունենք Վաղարշ Ա. արքայի օրոք գոյություն ունեցած համակարգի հետ, քանի որ այստեղ առաջ են գալիս Մարինոս Տյուրոսցու աշխարհագրական երկի գրառման թվականի և Պտղոմեոսի մոտ Վաղարշապատի մասին հիշատակության բացակայության հանգամանքները: Ամեն պարագայում, ակներև է, որ մենք գործ ունենք Արշակունյաց Հայաստանի Բ դարի առաջին կեսի վարչաքաղաքական համակարգի հետ:

Չպետք է, սակայն, աչքաթող անել մի շատ կարևոր փաստ. Մեծ Հայքի հարավային սահմանը նկարագրելիս Հյուսիսային Միջագետքի հետ սահմանագիծը ցույց տալիս նշվում է, որ այն անցնում էր Հայկական Տավրոսի լեռներով, Եփրատի արմունկով (որով սահմանազատվում էր Կիլիկյան Տավրոսից), Եփրատ և Տիգրիս գետերով ու Նիփատես (Նպատ, Նպատական) լեռներով: Վերջիններս սահմանազատում էին Հայաստանը «Ասորեստանից»[395]: Քանի որ վերջին սահմանագծում իրականում գործ ունենք Ադիաբենեի հետ, ուստի, ըստ Ս. Երեմյանի, այստեղ հանդիպում ենք Տրայանոս կայսեր կողմից 116 թ. նվաճումից հետո հռոմեացիների կողմից «Ասորեստան» պրովինցիայի մեջ մտցված Ադիաբենեի հետ[396]: Չնայած որ 117 թ. Հադրիանոս կայսրը հանձնեց Ադիաբենեն Պարթևա-

[395] Տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.13.4:

[396] Տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 839; **Scarre Ch.,** The Penguin Historical Atlas of Ancient Rome, Cambridge (ed.) – Italy (print.), pp. 0-61.

կան թագավորությանը, այնուհանդերձ պետք է նկատել, որ Պտղոմեոսը, փաստորեն, գրել է հաստատապես 117 թվականից հետո գոյություն ունեցած վարչաքաղաքական բաժանման մասին, այլապես դժվար է պատկերացնել, որ նա գրում է Մեծ Հայքի անկախ թագավորության մասին և Նպատական լեռներին սահմանակից է նշում Ասորեստան պրովինցիան: Փաստորեն, մենք նորից գալիս ենք մեր այն եզրակացությանը, որ Պտղոմեոսը նկարագրում է Վաղարշ Ա-ի գահակալության առաջին շրջանում գոյություն ունեցած վարչաքաղաքական բաժանման համակարգը:

Պտղոմեոսը «Աշխարհագրության» Ասիայի 3-րդ քարտեզի նկարագրության մեջ ներկայացնում է Մեծ Հայքի թագավորության սահմանները՝ շուրջ 120 աշխարհագրական օբյեկտ, այդ թվում՝ 20 աշխարհ և 84 բնակավայր: Մինչ Բ. Հարությունյանի կատարած ուսումնասիրությունները հետազոտողների մոտ գերիշխում էր այն տեսակետը, որ Պտղոմեոսը Մեծ Հայքի աշխարհները թվարկում է անկանոն կերպով՝ առանց որևէ օրինաչափության կամ շեշտված հերթականության: Բ. Հարությունյանի կարծիքով երկն իրականում տալիս է Մեծ Հայքի աշխարհների թվարկման որոշակի մեխանիզմ, որը հետագայում մեծավ մասամբ գործում է նաև «Աշխարհացոյց»-ի պարագայում: Աշխարհները Պտղոմեոսը թվարկում է 4 շարքով՝ հյուսիս-արևմուտքից սկսելով և ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ շարժվելով: Հենց այս տրամաբանությունն էլ օգնում է ուսումնասիրողին շտկել Մեծ Հայքի պտղոմեոսյան քարտեզի վերակազմությունը:

Փաստորեն, Պտղոմեոսի երկում ներկայացված է աշխարհների նկարագրման հերթականության որոշակի տրա-

մաբանություն, որին հետագայում հետևել է հայ աշխարհագրական միտքը: Այս կարծիքին է, օրինակ, Ա. Սուքրին (Ա. Սուքրյան), որը «Աշխարհացոյց»-ի, այսպես կոչված, ընդարձակ խմբագրության հրատարակության նախաբանում նշում է, թե «Աշխարհացոյց»-ի հեղինակը երկի շարադրման հաջորդականության մեջ քայլ առ քայլ հետևել է Պտղոմեոսին[397]: Ակադ. Ս. Երեմյանը հակված է կարծելու, որ «Աշխարհացոյց»-ի և Պտղոմեոսի «Աշխարհագրության» միջև նույնիսկ եղել է «անմիջական կապ», այսինքն՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ոչ թե պարզապես միջնորդավորված ձևով (Պապոս Ալեքսանդրացու «Քորոգրաֆիա» երկի միջոցով) է ծանոթացել Պտղոմեոսի աշխատանքին, այլ իր ձեռքի տակ է ունեցել Պտղոմեոսի թե՛ երկը, թե՛ քարտեզները[398]: Թ. Հակոբյանը, հակառակ Ս. Երեմյանի կարծիքի, գտնում էր, որ երկի շարադրման օրինաչափությունները բխում են լոկ նրանից, որ Պապոս Ալեքսանդրացին օգտվել է Պտղոմեոսից, իսկ «Աշխարհացոյց»-ի հեղինակը՝ Պապոսից, սակայն «Աշխարհացոյց»-ի հեղինակը անմիջականորեն ծանոթ չի եղել Պտղոմեոսի գործին[399]: Նույն կարծիքին էր նաև Մ. Խաչատրյանը, որը ներկայացնում է, թե Պտղոմեոսը նախ քարտեզներն է կազմել, ապա միայն տվել նկարագրությունը, ինչը չի ներկայացնում «Աշխարհացոյց»-ի տրամաբանությունը[400]:

---

397 Տե՛ս «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», էջ III:

398 Տե՛ս **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 11:

399 Տե՛ս **Հակոբյան Թ.,** Պրոֆ. Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության մասին, «Երևանի համալսարանի գիտական տեղեկագիր (հաս. գիտ.)», հ. 96, պր. 8, Երևան, 1965, էջ 86-87:

400 Տե՛ս **Խաչատրյան, Մ.** VII դարի «Աշխարհացույցի» մասին, «ՊԲՀ», 1968, թ. 4, էջ 81:

Բ. Հարությունյանն իրավացիորեն նկատում է, որ հնարավոր չէ հաստատապես պնդել՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակն օգտվե՞լ է «Աշխարհագրությունից», թե՞ ոչ, սակայն պետք է նկատել աշխարհների նկարագրության համակարգի տրամաբանության որոշակի նմանությունը երկու երկերի միջև: Ըստ նրա՝ Դիոկղետիանոս կայսեր (284-305 թթ.) օրոք ստեղծագործած Պապոս Ալեքսանդրացին համառոտագրել է Պտղոմեոսի «Աշխարհագրությունը»՝ վերածելով այն երկրագրության, և, քանի որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն անվերապահորեն օգտվել է Պապոս Ալեքսանդրացու աշխատանքից, ուստի Պտղոմեոսի «Աշխարհագրության» շատ իրողություններ բառացի տեղ են գտել «Աշխարհացոյց»-ում[401]: Ք. Պատկանյանն իր հրատարակության մեջ նույնիսկ բառացիորեն նշում է, որ Պապոս Ալեքսանդրացին նկարագրել է երկիրը՝ ըստ Պտղոմեոսի տիեզերագիտական չափումների[402]:

«Աշխարհացոյց»-ում Պապոս Ալեքսանդրացուց և Պտղոմեոսից կատարված մեջբերումների առատությունը, ինչպես նշում է Ս. Երեմյանը, շփոթության մեջ է գցել որոշ ուսումնասիրողների (Ա. Սուքրյան, Յ. Ֆիշեր)՝ հիմք տալով նրանց ենթադրելու, թե իբր «Աշխարհացոյց»-ը Պտղոմեոսի երկի մի ընդօրինակություն է[403]: Այս անընդունելի տեսակետը հեշտությամբ մերժվում է նրանով, որ «Աշխարհագրության» և «Աշխարհացոյց»-ի փաստական տեղեկությունները մեծ մասամբ համընկնում են միայն Եվրոպայի և Աֆրիկայի պարագայում,

---

401 Տե՛ս **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 43-45:

402 Տե՛ս **Патканов К.,** Армянская география VII века, СПб., 1877, с. 5: Ի դեպ, Ք. Պատկանյանն իր հրատարակության մեջ անգամ քարտեզ է կազմել:

403 Տե՛ս **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 13:

և անգամ Հարավարևելյան Եվրոպայից սկսվում է «Աշխարհացոյց»-ի որոշակի ինքնուրույնությունը: Միանգամայն առանձնահատուկ և ինքնուրույն են ստացվել «Աշխարհացոյց»-ի՝ Ասիային, մասնավորապես Մեծ Հայքին, Վիրքին, Աղվանքին, Ասիական Սարմատիային և Սասանյան Իրանին նվիրված հատվածները, որտեղ հեղինակն առանձնապես չի հետևում Պտղոմեոսի աստիճանացանցին՝ ներկայացնելով իրական, այլ ոչ թե հաշվարկային տվյալներ[404]:

Առաջ քաշելով և հիմնավորելով այն տեսակետը, թե «Աշխարհացոյց»-ում արտացոլված է Գ դարի կեսերի դրությամբ Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգը, Բ. Հարությունյանը գտնում է, որ եթե մեզ չհասներ Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկը, ապա գուցե «Աշխարհացոյց»-ն ընկալվեր որպես Է դարի իրողություններն արտացոլող աշխատանք: Միևնույն ժամանակ եթե մեզ չհասներ «Աշխարհացոյց»-ը, ապա միանգամայն անընկալելի կլինեին պտղոմեոսյան նկարագրության վարչաքաղաքական իրողությունները[405]:

Որոշակի հայացք գցելով նաև երկի տեսական խնդիրներին՝ Բ. Հարությունյանը նկատում է, որ Պտղոմեոսի կողմից Մեծ Հայքում ներկայացված բնակավայրերի որոշ խմբեր քարտեզի վրա տեղադրելու փորձ կատարելիս հայտնվում են գրեթե ուղիղ գծի վրա, ինչը ցույց է տալիս, որ պտղոմեոսյան տե-

---

[404] **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 13-19:

[405] **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 52-53:

ղադրությունների հիմքում ընկած են ոչ թե մաթեմատիկական սկզբունքները, այլ զանազան ուղեցույցների տվյալները[406]:

Հարկ է նշել այն հանգամանքը, որ ԺԵ-ԺԸ դարերի եվրոպացի բազմաթիվ քարտեզագիրներ պատկերել են Պտղոմեոսյան աշխարհի քարտեզը՝ նրանում ուրույն տեղ հատկացնելով Ասիայի 3-րդ քարտեզին («Asiae Tabula Tertia»), որտեղ առկա է Մեծ Հայքի նկարագրությունը: Բանն այն է, որ Մեծ Հայքում գտնվող Արարատ լեռը դիտվում էր որպես Նոյի տապանի հանգրվանատեղի, ուստիև քրիստոնյա եվրոպացիների համար կարևոր էր դառնում աստվածաշնչյան երկրի պատկերումը: Սա է նաև պատճառը, որ ԺԵ-ԺԸ դարերում կատարվել են պտղոմեոսյան քարտեզի բազմաթիվ վերակազմություններ՝ հիմքում ունենալով աշխարհագրական չճշգրտված կոորդինատներ[407]: Ուշագրավ է այն փաստը, որ Մեծ Հայքի նկարագրությունը տեղ է գտել Կողքիսի, Իբերիայի և Աղվանքի նկարագրությունից հետո, որոնք նույնպես ներառված են Ասիայի 3-րդ քարտեզում[408]: Այսպիսով՝ Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում Մեծ Հայքն իր ուրույն տեղն է գրավում՝ ընդգրկվելով Ասիայի 3-րդ քարտեզի մեջ:

Մեծ Հայքի 20 աշխարհները որոշակի քաղաքական տրամաբանությամբ և աշխարհագրական տեղադրությամբ Պտղոմեոսի կողմից դասակարգվել են 4 խմբերի: Ստորև աղյուսակով ներկայացնում ենք պտղոմեոսյան աշխարհների համապատասխանությունը աշխարհացույցյան աշխարհներին՝

---

[406] Տե՛ս նույն տեղում, էջ 43-45:
[407] Տե՛ս **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 18:
[408] Տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.10-13.

հիմնականում առաջնորդվելով Բ. Հարությունյանի առաջ քաշած համապատասխանությամբ.

	Մեծ Հայքի աշխարհները	
	ըստ Պտղոմեոսի	***ըստ «Աշխարհացույց»-ի***
1	Կատարզենե	Գուգարք
2	Գոսարենե	
3	Օտենե	Ուտիք
4	Սակասենե	
5	Կոլբենե	Փայտակարան [՞]
6	Սոդուկենե	Արցախ (Սյունիքի Սոդք գավառով)
7	Սիսակենե	Սյունիք (առանց Սոդք գավառի, Վասպուրականի Նախճավան և Գողթն գավառներով [՞])
8	Բասիլիկենե	Այրարատ
9	Բագրավանդենե	
10	Բոլբենե	Տայք (առանց Արսյաց փոր գավառի)
11	Արսեսա	Բարձր Հայքի Սպեր և Տայքի Արսյաց փոր գավառները
12	Ակիլիսենե	Բարձր Հայք (առանց Սպեր և Մուզուր գավառների)
13	Աստաունիտիս	Տուրուբերան (Ծոփքի Հաշտյանք գավառով)
14	Սոփենե	Ծոփք (առանց Հաշտյանք և Անձիտ գավառների, Բարձր Հայքի Մուզուր գավառով)
15	Անզիտենե	Աղձնիք (Ծոփքի Անձիտ գավառով և Մոկք աշխարհով)
16	Թոսպիտիս	Վասպուրական
17	Մարդեր	
18	Կորիայա	Կորճայք (առանց Կորդուք գավառի)
19	Գորդյուենե	Կորճայքի Կորդուք գավառը և Կորդվաց նախկին թագավորության տարածքը
20	Կո(ր)տայա	Պարսկահայք

Մի կողմ թողնելով աշխարհներից յուրաքանչյուր մանրամասն քննությունը, որը մեկ այլ ուսումնասիրության խնդիր է, այժմ անդրադառնանք Մեծ Հայքի թագավորության սահմանների խնդրին: Ուշագրավ է այն, որ Պտղոմեոսը ջանում է մանրամասնորեն նշել Մեծ Հայքի սահմանները: Ստորև մեջբերում ենք նրա երկի՝ Մեծ Հայքի սահմանները ներկայացնող հատվածը. *«Մեծ Հայքը հյուսիսում սահմանակցում է Կողքիսի (իմա՝ Եգերաց աշխարհի – Մ. Մ.) մի մասին, Իբերիային, Աղվանքին՝ Կյուրոս (իմա՝ Կուր – Մ. Մ.) գետով ձգվող գծով: Արևմուտքում Եփրատ գետի մի մասի գծած գծով՝ Կապադովկիային և Կապադովկիական Պոնտոսի մի մասին՝ մինչև Կողքիս՝ Մոսքական լեռների գծով: Արևելքում Հյուրկանյան (իմա՝ Կասպից – Մ. Մ.) ծովի մի մասին՝ Կյուրոս գետի գետաբերանից հասնում է մինչև 79°45´ և 43°20´ սահմանակետը, որի և Կյուրոսի գետաբերանի միջև 79°45´ և 43°50´ գտնվում է Արաքսի գետաբերանն է և Կասպիոն (իմա՝ Կասպիական – Մ. Մ.) լեռան երկայնքի գծով՝ Մեդիային (իմա՝ Մարաստանին – Մ. Մ.), որի սահմանային կետերն են 79°, 42°30´ և 80°30´, 39°40´: Հարավում Տավրոսյան լեռների գծի երկայնքով, որ կապվում է Եփրատ գետին 71°30´ և 38°30´ և Տիգրիս գետին՝ 75°30´ և 38°30´ [կետերում], սահմանազատված է Միջագետքից, այնուհետև՝ Ասորեստանին՝ Նիփատես լեռան երկայնքով ուղիղ մինչև նշված Կասպիոն լեռան եզրակետը՝ սահմանագիծ, որը Նիփատես լեռամբ է շարունակվում»*[409]:

Ս. Երեմյանը, հենվելով Պտղոմեոսի ներկայացրած տվյալների վրա, հետևյալ կերպ է վերակազմել Մեծ Հայքի սահման-

[409] **Claudius Ptolemy,** § 5.13.1-4:

ները: Այսպես, Մեծ Հայքի սահմանը հյուսիսից կազմում էր Կողքիսի մի մասը, այսինքն՝ Ճորոխ գետի ստորին հոսանքում գտնվող Եգր «փոքր աշխարհը», ապա՝ Վիրքը և Աղվանքը՝ Կուր գետով: Արևմուտքից սահմանագիծն անցնում էր Եփրատ գետով, որը բաժանում էր Մեծ Հայքը Կապադովկիայի կազմում գտնվող Փոքր Հայքից, ապա Եփրատից հյուսիս-արևելք տարածվող[410] Մոսխական լեռներով մինչև Կողքիս: Արևելքից Մեծ Հայքի սահմանն էր Կասպից ծովը՝ Կուրի գետաբերանից մինչև ներկայիս Աստարայի մերձակայքը, որտեղից սահմանը Մեդիայից բաժանող Կասպիական լեռներով թեքվում էր դեպի արևմուտք: Հարավում Հյուսիսային Միջագետքի հետ սահմանագիծն անցնում էր Հայկական Տավրոսի լեռներով, Եփրատի արմունկով (որով սահմանազատվում էր Կիլիկյան Տավրոսից), Եփրատ և Տիգրիս գետերով ու Նիփատես (Նպատ) լեռներով: Վերջիններս սահմանազատում էին Հայաստանը «Ասորեստանից»[411]: Քանի որ վերջին սահմանազծում իրականում գործ ունենք Ադիաբենեի հետ, ուստի, ինչպես արդեն նշել ենք, ըստ Ս. Երեմյանի՝ այստեղ հանդիպում ենք Տրայանոս կայսեր կողմից 116 թ. նվաճումից հետո հռոմեացիների կողմից «Ասորեստան» պրովինցիայի մեջ մտցված Ադիաբենեի հետ: Ս. Երեմյանը միաժամանակ գտնում է, որ Պտղոմեոսի «Ասիայի երրորդ քարտեզում» Մեծ Հայքը ներկայացված է ըստ մինչև 37 թվականն ունեցած սահմանների[412]: Նա իր այդ եզրահանգումը հիմնավորում է նրանով, որ իր համոզմամբ Պտղոմեոսի մոտ հիշատակվող Գոսարենեն ներկայացնող «Գոդերձական» ենթադրյալ կուսակալու-

---

[410] Տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 839:
[411] Տե՛ս նույն տեղում, էջ 839:
[412] Տե՛ս նույն տեղում, էջ 721, ծան. 51:

թյունը 37 թ. պայմանագրով տրվել է Իբերիային, այսինքն՝ Վրաց թագավորությանը, ուստի կուսակալության հիշատակումը Մեծ Հայքի սահմաններում նշանակում է, որ գործ ունենք մինչև 37 թվականը գոյություն ունեցած սահմանների հետ[413]: Նման եզրահանգման ճշմարտացիությունն ստուգելու համար անհրաժեշտ է քննության առնել 37 թվականից հետո Մեծ Հայքի սահմանները ներկայացրած որևէ այլ հեղինակի երկ: Ժամանակագրական առումով ամենահամապատասխան հեղինակը Պլինիոս Ավագն է, որը գրեթե նույն սահմաններն է ներկայացնում: Ստորև ներկայացնում ենք նրա մատնանշած սահմանները. *«Մեծ Հայքը, որ սկսվում է Պարիադրես (իմա՝ Պարխարյան կամ Պոնտական – Մ. Մ.) լեռներից, ինչպես ասացինք, Կապադովկիայից բաժանված է Եփրատով, և Եփրատից հետո Միջագետքից բաժանված է Տիգրիսով, որը նվազ հայտնի գետ չէ: Մեծ Հայքը ծնունդ է տալիս թե՛ մեկին, թե՛ մյուսին և կազմում է սկիզբը Միջագետքի… Այսպիսով՝ այն ձգում է իր սահմանը մինչև Ադիաբենե՝ նրանից բաժանված լինելով լայնակի մի լեռնաշղթայով, իսկ ձախ կողմում լայնությամբ տարածվում է մինչև Կյուրոս գետը՝ անցնելով Արաքս գետից այն կողմ, իսկ իր երկարությամբ տարածվում է մինչև Փոքր Հայքը, որից բաժանված է Եւքսինյան Պոնտոսի (իմա՝ Սև ծով – Մ. Մ.) մեջ թափվող Ապսարոս (իմա՝ Ճորոխ – Մ. Մ.) գետով և Ապսարոսին ծնունդ տվող Պարիադրես լեռներով»*[414]:

Հատկանշական է, որ Պլինիոս Ավագի մոտ հիշատակվում է Ադիաբենեն նույն այն տեղում, որտեղ հետագայում Պտղոմեոսը հիշատակում է Ասորեստանը: Այս փաստը ևս մեկ ան-

---

[413] Տե՛ս նույն տեղում, էջ 725:

[414] ՀԺՊՔ, հ. 2, էջ 288-289:

գամ ամրագրում է մեր այն եզրահանգումը, որ Պտղոմեոսը ներկայացնում է 117 թ. հաջորդող աշխարհաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» առաջին հատորում Պլինիոսի աշխատանքը հայերեն հրատարկելիս Պ. Հովհաննիսյանը և Ա. Մովսիսյանը իրավացիորեն նկատում են, որ Ադիաբենեի և Մեծ Հայքի սահմանով ձգվող «լայնակի մի լեռնաշղթան» Նիփատես լեռներն են, որոնք գտնվում են Փոքր Խաբուր գետից դեպի արևելք: Այսպիսով՝ Մեծ Հայքի՝ Պլինիոսի և Պտղոմեոսի երկերում հիշատակվող սահմանները գրեթե նույնությամբ կրկնում են միմյանց[415]:

Գրեթե նույն պատկերն ենք հանդիպում նաև «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ. *«Քսան եւ եւթներորդ՝ Մեծ Հայք են, յելից կալով Կապադոկիոյ եւ Փոքր Հայոց, առ Եփրատ գետով, մերձ Տաւրոս լեառն, որ բաժանէ զնա ի Միջագետաց: Եւ ի հարաւոյ սահմանի Ասորեստանիւ եւ դառնայ առ Ատրպատականիւ ընդ Մարս մինչեւ ի մուտս Երասխայ եւ Կասբից ծով. իսկ ըստ հարաւոյ առ երի կալով Աղուանից եւ Վրաց եւ Եգեր մինչեւ ցնոյն դարձուածք Եփրատայ ի հարաւակոյս»*[416]: Նշենք, որ այս հատվածը բացակայում է «ընդարձակ խմբագրության» մեջ[417]:

---

[415] Տե՛ս նույն տեղում, էջ 290, ծան. 14:

[416] **Աբրահամյան Ա.**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 348: Հմմ. **Անանուն (Է. դար)**, Աշխարհացոյց, գիտաքննական բնագիրը՝ **Յակոբեանի Ա.**, «Հանդէս ամսօրեայ», ՃԻԷ. տարի, Վիեննա-Երեւան, 2013, սն. 122-123:

[417] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», էջ 29: Հմմ. **Յակոբեան Ա.**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 217-218:

Սկզբնաղբյուրներում շուրջ երեք դար շարունակաբար հանդիպող սահմանային նույնականությունը ցույց է տալիս, որ գործ ունենք հզոր պետության և ամուր վարչաքաղաքական համակարգի հետ՝ ամենևին էլ չփաստելով, թե հնարավոր է՝ Պտղոմեոսի երկում արտացոլված լինեն մինչև 37 թ. սահմանները: Հետաքրքրական են Պտղոմեոսի կողմից ներկայացվող տեղեկությունները Մեծ Հայքի լեռնաշղթաների, գետերի և լճերի մասին: Պտղոմեոսը Մեծ Հայքի լեռնաշղթաների թվում նշում է Մոսխական և Պարիադրեսյան լեռները, Ուդակեսպես լեռը, Անտիտավրոսի՝ «Եփրատից ներս ընկած մասը…», Աբոս լեռը և Գորդյուական լեռները[418]: Պ. Հովհաննիսյանը և Ա. Մովսիսյանը «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» երկրորդ հատորում Պտղոմեոսի՝ Մեծ Հայքին առնչվող հիշատակությունների հայերեն թարգմանության հետ տվել են ծանոթագրություններ, որտեղ Ուդակեսպես լեռը ներկայացրել են որպես ներկայիս Քոշաթաղի լեռները, Աբոս լեռը՝ Սրմանց լեռները, իսկ Գորդյուական լեռները՝ Կորդվաց լեռնաշղթան[419]:

Պտղոմեոսը որպես Մեծ Հայքի կարևոր գետեր թվում է Արաքսը (որը մի բազուկով թափվում էր Կուր գետը, իսկ մյուս բազուկով՝ Կասպից ծով), Եփրատը և Տիգրիսը[420]: Ընդ որում՝ հարկ է նշել, որ Պտղոմեոսը Տիգրիսի ակունքը սխալմամբ տանում է Թոսպիտիս (իմա՝ Վանա) լիճ[421]:

---

[418] Տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.13.5.
[419] Տե՛ս ՀԺՊՔ, հ. 2, էջ 12, ծան. 7-9:
[420] Տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.13.6-7.
[421] Տե՛ս նույն տեղում, 7:

Պտղոմեոսը Մեծ Հայքում հիշատակում է ոչ միայն Թոսպիտիս, այսինքն՝ Վանա լիճը, այլ նաև Լյուքնիտիս և Արսեսա լճերը[422]: Ս. Երեմյանի կարծիքով Լյուքնիտիս (Լիխնիտիս) լիճը համապատասխանում է Գեղարքունյաց, այսինքն՝ Սևանա լճին[423]:

Խնդիրն ավելի բարդ է Արսեսայի կապակցությամբ: Ստրաբոնը Վանա լճի պարագայում գործածում է նաև Արսենե անվանումը[424], ինչը կարող էր և շփոթ առաջացնել Պտղոմեոսի մոտ: Անվանումը առավել մոտ է հնչում Արճակ լճի անվանը, սակայն այստեղ պարզունակ հնչունաբանական ենթադրություն անելու փոխարեն անհրաժեշտ է քննության առնել ներկայացվող աշխարհագրական կոորդինատները, մասնավորապես՝ միջօրեականները: Պտղոմեոսի հաղորդած կոորդինատային տվյալների տարբերությունը հաշվարկելիս ստանում ենք, որ Սևանա և Արսեսա լճերի կենտրոնով անցնող միջօրեականների միջև տարբերությունը կազմում է կես աստիճան, իսկ զուգահեռականների միջև տարբերությունը՝ երկու և կես աստիճան, ինչը գրեթե ճշգրտությամբ ներկայացնում է Սևանա և Ուրմիո (Կապուտան) լճերի միջև եղած աշխարհագրական երկայնությունների և լայնությունների տարբերությունը: Պատահական չէ, որ թե՛ Ս. Երեմյանը և թե՛ Բ. Հարությունյանը Պտղոմեոսյան Մեծ Հայքի՝ իրենց վերակազմություններում Արսեսան տեղադրել են Ուրմիո լճի տե-

---

422 Տե՛ս նույն տեղում, 8:
423 Տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 32:
424 Տե՛ս **Ստրաբոն,** Աշխարհագրություն, թարգմ.՝ Հ. Ամառյանի, Երևան, 1940, էջ 59:

ղում[425], ընդ որում՝ Բ. Հարությունյանը լճի անվանումը նշում է «(Պ)արսեսա» ձևով[426]: Մեր կարծիքով այստեղ գործ ունենք միջնադարյան հայ մատենագրության մեջ Ուրմիո լճի բավականին տարածված անվանումներից մեկի՝ Աղիի հունականացված ձևի հետ:

Այսպիսով՝ Կլավդիոս Պտղոմեոսի երկում հետաքրքրական կերպով ներկայացված են Մեծ Հայքի թագավորության նշանավոր լեռները, լճերն ու գետերը, որոնք իր իսկ նշած սահմանագծերի հետ միասին փայլուն հնարավորություն են ընձեռում՝ պատկերացում կազմելու թագավորության ընդգրկած տարածքի և սահմանների վերաբերյալ: Ընդ որում՝ Պտղոմեոսի մոտ նկարագրվող Մեծ Հայքի սահմանները հետաքրքրական ձևով տարբերվում են հարավ-արևելքում Պլինիոս Ավագի նշած սահմաններից: Այստեղ Պտղոմեոսը հիշատակում է Տիգրանոամա քաղաքը: Գ. Սարգսյանի կարծիքով Պտղոմեոսի հիշատակած Տիգրանոամա քաղաքը համապատասխանում է Գողթնում Տիգրան Բ. Մեծի կողմից հիմնած Տիգրանավանին[427]: Ս. Երեմյանի և Բ. Հարությունյանի ուշադրությունից չի վրիպել այն հանգամանքը, որ Պտղոմեոսի հիշատակած Տիգրանավանի աշխարհագրական կոորդինատները չեն համընկնում Արցախի և Ուտիքի սահմանին Սեբեոսի կողմից հիշատակվող Տիգրանակերտ ավանի կամ էլ Գողթ-

---

[425] Տե՛ս «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ՝ Պտղոմեոսի (պտղոմեոսյան քարտեզագրական հիմքի վրա), կազմող՝ Ս. Երեմյան, տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երևան, 2003, էջ 237:

[426] Տե՛ս Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության», կազմող՝ Բ. Հարությունյան, մասշտաբ՝ 1:7 200 000, տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008, էջ 26:

[427] Տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 574:

նում Մովսես Խորենացու հիշատակած Տիգրանավանին[428]: Բացի այդ՝ պետք է նկատել այն հանգամանքը, որ այս Տիգրանոաման հիշատակվում է աշխարհների՝ Պտղոմեոսի առանձնացրած 4-րդ, այլ ոչ թե 1-ին խմբում (որտեղ էլ տեղ էին գտել Մեծ Հայքի հյուսիսարևելյան աշխարհները), ինչը ևս ցույց է տալիս, որ սա չի կարող Գողթնի կամ Արցախի Տիգրանակերտ ավաններից որևէ մեկը լինել: Ս. Երեմյանը և Բ. Հարությունյանը իրավացիորեն իրենց վերակազմություններում Տիգրանոաման տեղադրել են Ատրպատականի Տիգրանավանի տեղում: Նման պայմաններում առաջ է գալիս այն հարցը, որ Ուրմիո լճի արևելյան ափին գտնվող ատրպատականյան հողերի մի մասը, ներառյալ Տիգրանավանը, պետք է ներառված լինեին Մեծ Հայքի թագավորության սահմաններում, մի իրավիճակ, որը Արտաշեյաններից միայն Տիգրան Բ Մեծի օրոք է եղել: Փաստորեն, այստեղ իսկապես գործ ունենք Մեծ Հայքի Արշակունիների թագավորության սահմանների հետ՝ նոր, Պարթևստանից ներմուծված համակարգով: Բանն այն է, որ դեռևս Տրդատ Ա-ի կառավարման տարիներից հայ Արշակունի արքաները իրենց պարթև ավագ Արշակունիներից ստացել էին ձեռական իշխանություն, այսինքն՝ արքայական անհատական ժառանգական տիրույթ, որն սկզբնաղբյուրներում հանդիպում է հայոց թագավորի ձեռական իշխանություն, Հայկական

[428] Տե՛ս «Ասիայի երրորդ քարտեզը»՝ ըստ Պտղոմեոսի (պտղոմեոսյան քարտեզագրական հիմքի վրա), կազմող՝ Ս. Երեմյան, Բ. Հարությունյան, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 181:

Ատրպատական, Ատրպատիճք և «Զեռին իշխանության տունն թագավորի Հայոց» անվանումներով[429]:

Ատրպատականի արևելյան մասում Հայոց թագավորի ձեռական իշխանությունը կարելի՞ է համարել Մեծ Հայքի աշխարհների համակարգի մի մասնիկը, թե՞ ոչ: Սա բավականին բարդ հարցադրում է, որն ունի պատասխանին հասնելու երկընտրանք. փաստորեն, սա մի կողմից Մեծ Հայքի թագավորության անբաժան մասն է, իսկ մյուս կողմից՝ առանձին կերպով չի թվարկվում աշխարհների շարքում: Նման պարագայում մենք հակված ենք կարծելու, որ սա իր կարգավիճակով սկզբունքային տեսանկյունից լիովին տարբերվող վարչամիավոր է եղել, որը կարող ենք պայմանականորեն «աշխարհ» անվանել: Սակայն պետք է ընկալել այն հանգամանքը, որ սա հայոց թագավորների անհատական սեփականությունն էր, այսինքն՝ սա ոչ թե թագավորության մի վարչամիավոր է, որը թագավորը ղեկավարում էր որևէ կուսակալի (ընդ որում՝ աստիճանաբար ժառանգական իշխանություն և հող ձեռք բերող) միջոցով, այլ բուն արքունի տիրույթ: Այն շարունակեց Մեծ Հայքի թագավորության կազմի մեջ գտնվել ընդհուպ մինչև 387 թվականը, երբ Մեծ Հայքի հռոմեա-պարսկական առաջին բաժանումից հետո դրանք հանվեցին Մեծ Հայքի կազմից և մտցվեցին Սասանյան Պարսկաստանի սահմանների մեջ:

Այսպիսով՝ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում Մեծ Հայքի թագավորության վարչատարածքային բաժանման համակարգը ներկայանում է աշխարհային ինստի-

---

429 Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, թարգմ.՝ Ս. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 175, 186-187, 207, 231, 250: **Ագաթանգեղոս,** Պատմութիւն Հայոց, թարգմ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 468:

տուտով՝ բաղկացած 20 աշխարհներից և առանձնահատուկ կարգավիճակ ունեցող թագավորական ձեռական տիրույթներից: Փաստորեն, աշխարհները Մեծ Հայքում Արշակունիների գահակալմամբ ի հայտ եկած խոշոր վարչամիավորներ էին, որոնք էլ ներառում էին Պլինիոս Ավագի կողմից հիշատակվող 120 ստրատեգիաները: Ըստ էության, սա Բ դարի կեսերի դրությամբ Մեծ Հայքի վարչաքաղաքական դրությունը ներկայացնող պատկեր է, որը, ամենայն հավանականությամբ, արտացոլում է Վաղարշ Ա. Արշակունու գահակալման առաջին շրջանում առկա իրավիճակը: Ցավոք, «Աշխարհագրություն» երկում բացակայում է թագավորության ժողովրդագրության վերաբերյալ որևէ տեղեկություն, ինչը կարող էր անչափ հետաքրքիր լինել, սակայն երկի բնույթով պայմանավորված՝ օբյեկտիվորեն բացակայում է:

ВЕЛИКАЯ АРМЕНИЯ В СИСТЕМЕ “ГЕОГРАФИИ” КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ” – “География” Клавдия Птолемея является очень важным источником для исследования административно-территориальной системы Великой Армении в середине II в. н. э.. Согласно этому источнику (т. 2, кн. 5, гл. 13), Великая Армения имела 21 административно-территориальную единицу – 20 областей и 1 единицу с особым статусом (личная собственность царя Великой Армении). Исследуя границы Великой Армении, мы пришли к тому выводу, что государство занимало примерно ту площадь, которую занимала Армения согласно раннесредневековому армянскому источнику “Ашхарацуйц”. Используя историко-сравнительный метод, мы выяснили, что в “Географии” Клавдия Птолемея отрожены границы и административно-территориальное деление Великой Армении во время правления царя Вагарша I Аршакида (117-140).

Третья карта Азии Птолемея (“Asiae Tabula Tertia”), где особым образом отмечена Великая Армения, в XV-XVIII вв. была всячески опубликована европейскими картографами, так как в пределах ее “птолемейских” границ находилась священная для христиан гора Арарат.

GREATER ARMENIA IN THE SYSTEM OF CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY", - Claudius Ptolemy's "Geography" is an important source for the research on the administrative-territorial system of Greater Armenia in the middle of the 2nd century A.D.. According to the source (vol. 2, book 5, chapter 13), Greater Armenia had 21 administrative units – 20 states and 1 unit with a unique status (personal holding of the King of Greater Armenia). Analysing the borders of the kingdom, we concluded that Greater Armenia covered approximately the same territory mentioned in the early-medieval Armenian source "Ashkharhatsuyts". Using the historical-comparative method we came to conclusion that in Claudius Ptolemy's "Geography" there are reflected the borders and administrative-territorial division of Greater Armenia in the period of King Vagharsh (Vologases) I Arsacid rule (117-140).

Ptolemy's third map of Asia ("Asiae Tabula Tertia"), where Greater Armenia has an important role, was published lots of times by European cartographers in the 15-18th centuries as Mount Ararat, a holy mountain for Christians, was within "the Ptolemaic" borders of the country.

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ»

Անտիկ աշխարհի նշանավոր աշխարհագետ, աստղագետ և մաթեմատիկոս Կլավդիոս Պտղոմեոսի (մոտ 100 - 170 թթ.) գիտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Աշխարհագրություն» երկը: Այստեղ նա ներկայացնում է իր ժամանակներում հունահռոմեական հանրությանը հայտնի աշխարհը՝ Օյկումենը (Եվրոպայի և Ասիայի մեծ մասը, Աֆրիկայի հյուսիսը): Թվարկվում են բնաշխարհագրական օբյեկտները (ծովեր, լճեր, գետեր, լեռներ և այլն), պետությունները (Հռոմեական կայսրություն, Պարթևստան, Եթովպիա և այլն), պետության վերաճող ցեղային կազմավորումները (սարմատներ, սկյութներ և այլն): Պետությունների մասին տեղեկություններում օրինաչափ է սահմանների, վարչատարածքային բաժանման և նշանավոր բնակավայրերի հիշատակումը՝ համապատասխան աշխարհագրական կոորդինատների նշմամբ:

Պտղոմեոսի կողմից ներկայացված աշխարհի քաղաքական քարտեզում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Մեծ Հայքի թագավորությունը, որը նկարագրված է Ասիայի երրորդ քարտեզում («Asiae Tabula Tertia»)՝ երկի երկրորդ հատորի հինգերորդ գրքում:

Սույն հոդվածի շրջանակում նպատակ ենք դրել ուսումնասիրելու և ներկայացնելու Մեծ Հայքի «պտղոմեոսյան» սահմանների արևմտյան հատվածը, որը կարևոր է ոչ միայն պետական սահմանազատումների մասին պատկերացում կազմելու համար, այլև ուշագրավ է Մեծ Հայք - Փոքր Հայք փո-

խառնչությունների պատմաաշխարհագրական խնդիրների ուսումնասիրման տեսանկյունից:

Սկզբնաղբյուրի ուսումնասիրվածության աստիճանը հայագիտության մեջ

Թեպետ հայագիտության մեջ «Աշխարհագրություն» երկը հաճախ է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը, սակայն նրա ամբողջական բնագիրը հայերեն երբեք չի հրատարակվել: Մեծ Հայքին առնչվող XIII գլուխը հայերեն է թարգմանվել Գ. Մուրադյանի կողմից և մասնակի (տեղանունների մի մասով ու առանց նրանց կոորդինատների ամբողջական ցանկի) հրատարակվել Պ. Հովհաննիսյանի և Ա. Մովսիսյանի կողմից միայն 2011 թ. ԵՊՀ հրատարակչության «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» երկրորդ հատորում[430]: Այդուհանդերձ, երկի բնագրի՝ տարբեր լեզուներով հրատարակությունները հնարավորություն են ընձեռել հայագետներին՝ քննելու Մեծ Հայքի մասին պտղոմեոսյան տեղեկությունները: Նմանօրինակ առաջին քայլերը նկատելի են դեռևս XIX դարում Ա. Սեն-Մարտենի[431], Ք. Պատկանյանի[432] և Ա. Սուքրյանի[433] աշխատասիրությամբ «Աշխարհացոյց»-ի բնագրային հրատարակությունների առաջաբաններում և ծանոթագրու-

---

[430] Տե՛ս ՀԺՊՔ, հ. 2, կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, 2011, էջ 10-12:

[431] Տե՛ս **Saint-Martin J.,** Mémoires historiques et géographiques sur l'Arménie, II, Paris, 1819.

[432] Տե՛ս «Армянская география VII века», изд. К. Патканов, СПб., 1877.

[433] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց» (ընդարձակ խմբագրություն, հայերեն և ֆրանսերեն), հրատ.՝ Ա. Սուքրյան, Վենետիկ, 1881 (ֆրանս.՝ **Soukry A.,** Géographie de Moïse de Coréne d'après Ptolémée, Venise, 1881):

թյուններում: Այնուհետև XX դարի առաջին կեսին Ն. Ադոնցի մի քանի ուսումնասիրություններում[434] տեղ են գտել Մեծ Հայքի արևմտյան հատվածներին և հատկապես Փոքր Հայքին վերաբերող վերլուծություններ: Բնագրային-համեմատական և տեղանվանական տեսանկյունից երկի առանձին տեղեկությունների ուշադրություն է դարձրել Հ. Մանանդյանը[435]:

XX դարի երկրորդ կեսին աշխատությունն ավելի հաճախ է արժանացել ուսումնասիրողների քննությանը: Նախ «Աշխարհացոյց»-ին նվիրված իր մենագրության մեջ «Աշխարհագրության» հետ պատմահամեմատական վերլուծություններ է կատարել Ս. Երեմյանը[436], իսկ այնուհետև ՀԽՍՀ ԳԱ կողմից

---

[434] Տե՛ս **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, թարգմ.՝ Ա. Խոնդկարյանի և Է. Խոնդկարյանի, խմբ.՝ Շ. Սմբատյանի, Երևան, 1987 (թարգմ. 1908 թ. ռուսերեն հրատարակությունից); *նույնի՝* Քննական պատմություն հայոց, [տե՛ս «Երկեր», հ. Դ., թարգմ.՝ Վ. Սեղբոսյանի, խմբ.՝ Պ. Հովհաննիսյանի, Երևան, 2009 (հատվածական թարգմ. 1946 թ. ֆրանսերեն հրատարակությունից)]:

[435] Տե՛ս **Մանանդյան Հ.,** Հին Հայաստանի ճանապարհները, «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», Յերևան, 1930, № 5, էջ 85; *նույնի՝* Խորենացու առեղծվածի լուծումը (զեկուցում ՀՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտում, 1933 թ.), «Երկեր», հ. Է. բանասիրական ուսումնասիրություններ, հրատ. պատրաստեց Պ. Հովհաննիսյանը, Երևան, 2010, էջ 279, 282-284, 294, 296, 297 և այլն; *նույնի՝* Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Յերևան, 1936, էջ 77-78; *նույնի՝* Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1945, էջ 117; *նույնի՝* Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանմամբ (զեկուցում ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովի հոբելյանական նիստում, 1945 թ.), «Երկեր», հ. Է, էջ 451:

[436] Տե՛ս **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963; *նույնի՝* «Ашхарацуйц» (Армянская география VII века) – выдающийся памятник географии и картографии древнего мира, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 5, էջ 43-60; *նույնի՝* Մեծ

հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի առաջին հատորում հին Հայաստանի վարչատարածքային բաժանումների մասին գրելիս Պտղոմեոսի տեղեկություններին անդրադարձել է Գ. Սարգսյանը[437]: Նրանից հետո Մեծ Հայքի բնաշխարհագրական նկարագրության հետաքրքիր քննություն է իրագործել Մ. Խաչատրյանը[438], իսկ XX դարավերջին և XXI դարասկզբին պտղոմեոսյան հիշատակությունները «Աշխարհացոյց»-ի հետ է համադրել Բ. Հարությունյանը[439]: Վերջին տարիներին խնդրո առարկա թեմային անդրադարձել են նաև Ռ. Գալիչյանը[440] և Հ. Հարությունյանը[441]:

Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում, ՀԺՊ, հ. I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1971, էջ 678-689:

[437] Տե՛ս **Սարգսյան Գ.,** Պետական կառուցվածքի տարրեր, ՀԺՊ, հ. I, էջ 678-689:

[438] Տե՛ս **Խաչատրյան Մ.,** Հայկական լեռնաշխարհն ըստ Պտղոմեոսի քարտեզագրական տվյալների, ՊԲՀ, 1980, № 2, էջ 199-211:

[439] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Ե., 2001; *նույնի՝* Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, մաս Ա, ՊԲՀ, 1994, № 1-2, էջ 256-266; մաս Բ, ՊԲՀ, 1995, № 1, էջ 191-208; *նույնի՝* Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, «Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 20-43:

[440] Տե՛ս **Galichian R.,** Historic Maps of Armenia: The Cartographic Heritage, London, IB Tauris, 2004, pp. 13-14, 85-104:

[441] Տե՛ս **Арутюнян А.,** Административно-территориальное деление Аршакидской Армении согласно “Географии” Клавдия Птолемея (северные губерни). «Каспийский регион. Политика, экономика, культура», Астрахань, 2014, № 2, с. 14-21; *նույնի՝* О неизвестных армянских городах в “Географии” Птолемея, «Научные Ведомости Белгородского гос. университета. История. Политология. Экономика. Информатика», Белгород, 2014, № 3, с. 36-40; *նույնի՝* Административно-территориальное деление Аршакидской Армении согласно “Географии” Клавдия Птолемея (южные губерни), «Каспийский регион. Политика, экономика, культура», Астрахань, 2014, № 3, с. 15-23:

Ուշագրավ և հաջողված են Ս. Երեմյանի, Ռ. Հյուսենի և Բ. Հարությունյանի կողմից իրենց պատմաաշխարհագրական ուսումնասիրություններում Պտղոմեոսի «Աշխարհագրության» համաձայն Մեծ Հայքի քարտեզի վերակազմությունները[442]:

Լուսահոգի պրոֆ. Բ. Հարությունյանի հորդորով 2011 թվականից Պտղոմեոսի երկի պատմաաշխարհագրական քննությունը նախ մագիստրոսական թեզի[443], իսկ այնուհետև հոդվածների[444] տեսքով դարձել է նաև մեր ուսումնասիրության առարկան:

---

442 Տե՛ս **Երեմյան Ս.,** «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի (պտղոմեոսյան քարտեզագրական հիմքի վրա). քարտեզագրական վերակազմություն, Երևան, 1982; *նույնի* ՝«Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983, էջ 416-417 (ներդիրում); **Hewsen R.,** "Ptolemy's Map According to Modern Cartography", in “Armenia: A Historical Atlas”, Chicago-London, University of Chicago Press, 2001, էջ 67; **Հարությունյան Բ.,** Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» (II դար). քարտեզ, մասշտաբ՝ 1:4 300 000, տե՛ս Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Երևան, 2005, էջ 34; *նույնի* ՝Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության». քարտեզ, մասշտաբ՝ 1:7 200 000, տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008, էջ 26:

443 Տե՛ս **Մալխասյան Մ.,** Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգը՝ ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության», Երևան, 2013 (անտիպ):

444 Տե՛ս **Մալխասյան Մ.,** Աշխարհագրական կոորդինատների հիմնախնդիրը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում, «Պատմություն և մշակույթ», Երևան, 2014, էջ 148-160; *նույնի* ՝Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» համակարգում, «Էջմիածին», 2015, № Բ, էջ 29-45; *նույնի* ՝Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում, «Քրիստոնյա Հայաստան», 2015, № 22, էջ 5-6, № 23, էջ 7, № 24, էջ 5-6; 2016, № 1, էջ 6, № 2, էջ 6-7, № 3, էջ 7, № 4, էջ 6, № 5, էջ 3-5; *նույնի* ՝Մեծ Հայքի թագավորության սահմաններն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկի, «ՀՀ և Մերձավոր արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները (գիտ. վաստ.

Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Հայագիտության մեջ ընդունված է համարել, որ Պտղոմեոսի կոորդինատները մտացածին են կամ սխալ են հաշվարկված[445], սակայն, ինչպես նկատել են ժամանակակից մի շարք ուսումնասիրողներ (Դ. Ռոուլինս, Ք. Ըրլ, Ա. Ստյուկելբերգեր, Գ. Գրասսհոֆ, Ջ. Հաննամ, Լ. Ռուսսո, Ջ. Բրոթթոն, Դ. Շչեգլով, Դ. Գուսև և այլք), ինչպես նաև Մ. Խաչատրյանը[446] և մենք[447], դրանք իրենց որոշակի անճշտություններով վերահաշվարկման դեպքում կարող են օգտակար լինել ներկա ուսումնասիրությունների համար: Այդ իսկ պատճառով մեթոդական տեսանկյունից պատմահամեմատական և պատմաքննական մեթոդները կիրառելիս առաջնորդվել ենք ոչ միայն բնագրական քննությամբ և այլ սկզբնաղբյուրների [օրինակ՝ Պլինիոս Ավագի «Բնական պատմության» («Բնապատմության»)[448] կամ Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի[449]] հետ համեմատությամբ, այլև կոորդինատների դիտարկմամբ և վերահաշվարկմամբ:

գործիչ, պրոֆ. Թ. Հակոբյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր)», Երևան, 2017, էջ 37-44:

[445] Տե՛ս, օրինակ, **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 18:

[446] Տե՛ս **Խաչատրյան Մ.,** նշվ. աշխ., էջ 201-202:

[447] Տե՛ս **Մալխասյան Մ.,** Աշխարհագրական կոորդինատների հիմնախնդիրը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում, Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ, Երևան, 2015, էջ 226-241:

[448] Տե՛ս "The Natural History of Pliny", translated by J. Bostock and H. Riley, Vol. I, London, 1855, Book V, Chapter 20, p. 441-443: Հմմտ. "Pliny's Natural History" in thirty-seven books, a translation on the basis of that by Dr. Ph. Holland, ed. 1601, Vol. I, London, 1847-48, Book VI, Chapter IX, p. 108-109. Տե՛ս նաև "The Natural History of Pliny", translated by J. Bostock and H. Riley, Vol. II, London, 1855, Book VI, Chapter 9-10, pp. 17-20 (այսուհետ՝ **Pliny the Elder**):

[449] Տե՛ս «Անանիա Շիրակացու մատենագրությունը» (համառոտ խմբագրություն), կազմեց՝ Ա. Աբրահամյանը, Երևան, 1944, էջ 336-354: Հմմտ. **Անանուն**

Նախընթաց հետազոտություններում մենք օգտվել ենք երկում Մեծ Հայքին վերաբերող գլխի՝ Բ. Հարությունյանի կողմից մեզ տրված անտիպ թարգմանությունից, որը կատարել է Գ. Մուրադյանը, սակայն այսուհետ առաջնորդվելու ենք նաև բնագրի անգլերեն հրատարակությունների՝ մեր կողմից արված համեմատական թարգմանությամբ[450]:

Քննարկում և արդյունքներ

Պտղոմեոսը «Աշխարհագրություն» երկում մանրամասնորեն ներկայացրել է Մեծ Հայքի սահմանները՝ առաջնորդվելով ջրագրական, լեռնագրական և պետական-քաղաքական տեղորոշումներով: Արևմտյան սահմանի պարագայում անտիկ հե-

---

(Է. դար), Աշխարհացույց, գիտաքննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի, «Հանդէս ամսօրեայ», ՃԻԷ. տարի, Վիեննա-Երեւան, 2013, սն. 35-194:

[450] Անգլերեն միակ ամբողջական հրատարակությունը տե՛ս Geography of **Claudius Ptolemy,** translation by Ed. L. Stevenson, translator introduction by J. Fischer, New York, first published in 1932, current edition published by Cosimo Classics in 2011: Քանի որ անգլերեն այս թարգմանությունը լատիներենից է արվել, տեղանունները զգալիորեն ռոմանականացված են (այս մասին առավել մանրամասն տե՛ս **Diller A.,** Review of E. L. Stevenson's translation of Geography of Claudius Ptolemy, "Isis", University of Chicago Press, 1935, Vol. 22, No. 2, DOI:10.1086/346925, pp. 533-539), հետևաբար դրանք ճշգրտելու համար զուգահեռաբար օգտվել ենք հունարեն բնագրերի՝ անգլերեն համեմատական թարգմանությունից [**Ptolemaeus,** Geography, translated by J. Kiesling from the Greek texts of K. Nobbe (1843-1845) and K. Muller (1883), the ToposText classics], ինչպես նաև գերմաներեն հրատարակությունից [**Ptolemaios** Handbuch der Geographie (Griechisch-Deutsch), Vol. 2, bear. von Al. Stückelberger, G. Grasshoff, F. Mittenhuber, Schwabe Verlag, 2006]: Աշխատանքում տրվելու են համեմատական ճշտումները, սակայն հղումներում նշվելու են միայն Է. Սթիվենսոնի հրատարակության տվյալները (այսուհետ՝ **Claudius Ptolemy**): Տեղանունների հունարեն և լատիներեն ձևերի հիշատակությունները ճիշտ տառադարձելու նպատակով օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում Ֆորդհեմի համալսարանի (ԱՄՆ) ծիսագիտության դոկտոր Տ. Աբրահամ (Մանուկ) քհն. Մալխասյանին:

ղինակների համար սովորաբար ուղենիշ էին քաղաքական դարձած բնական՝ ֆիզիկաաշխարհագրական սահմանը՝ Մոսխական լեռները և Արևմտյան Եփրատը[451]: Այդ միտումը նկատելի է նաև Պտղոմեոսի մոտ: Ստորև մեջբերում ենք նրա երկում Մեծ Հայքի արևմտյան սահմանները ներկայացնող հատվածը. «[Մեծ Հայքը սահմանակից է – Մ. Մ.] արևմուտքում Եփրատի նշված հատվածով Կապադովկիային և Կապադովկիական Պոնտոսի մի մասին՝ մինչև Կոլխիս՝ Մոսխական լեռների գծով»[452]:

Մեջբերված հատվածում Մեծ Հայքին արևմուտքից սահմանակից տարածքները, փաստորեն, Կապադովկիան և Կապադովկիական Պոնտոսն են, մինչդեռ Եփրատի «նշված հատվածից», այսինքն՝ Արևմտյան Եփրատից արևմուտք պետք է ներկայացված լիներ Փոքր Հայքը: Այս բացը լրացվում է «Աշխարհագրության»՝ Փոքր Հայքի մասին հատվածում Արևմտյան Եփրատի հովտում գտնվող քաղաքների հիշատակությամբ[453]:

Ստրաբոնը (Ք.ա. 64/63 - Ք. հ. 24 թթ.) հետևյալ կերպ է ներկայացնում Արևմտյան Եփրատով անցնող սահմանը. «...Յեփրատը, վոր անցնում ե յերկրի մեծ մասով՝ վոլորապտույտ հոսանքով, սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային մասում, հոսելով դեպի արևմուտք՝ Մեծ կոչված Հայաստանի միջով՝ մինչև

---

451 Տե՛ս, օրինակ, **Ստրաբոն,** Աշխարհագրություն, քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան, «Օտար աղբյուրներ հայերի մասին. հունական աղբյուրներ», № 1, Յերևան, 1940, 39, էջ 41-45: Ուշագրավ է, որ Հ. Աճառյանը Մեծ Հայքի արևմտյան սահմանը և Եփրատ գետի ընթացքը նկարագրող հատվածը թարգմանել է բնագրական մի քանի հրատարակությունների քննական համեմատությամբ:

452 **Claudius Ptolemy,** § 5.13.2.

453 Տե՛ս նույն տեղում, § 5.7.2:

Փոքր Հայք, աջում ունենալով այս յերկիրը, իսկ ձախում Եկեղիքը: Այստեղից դառնում ե դեպի հարավ, և այս պտույտի ժամանակ հասնում ե Կապադովկիայի սահմանները. աջում թողնելով Կապադովկիայի և Կոմմագենի սահմանները, ձախում՝ Մեծ Հայաստանի Եկեղիքը, Ծոփքը, առաջանում ե դեպի Ասորիք…»[454]: Ստրաբոնի տեղեկությունները փաստացի կրկնում են վերը նշված սահմանները, սակայն եթե Պտղոմեոսի համար այդտեղ ընդհանրական «Կապադովկիա» երկրանունն է կիրառելի, ապա այստեղ շատ հստակ տարանջատում կա սահմանի՝ Փոքր Հայքի և Կապադովկիայի հատվածների միջև. առաջինը ավելի հյուսիս է, երկրորդը՝ նրանից հարավ:

Ուշագրավ է, որ Ստրաբոնի կողմից Անտիտավրոսի նկարագրության մեջ ևս տեղեկություն կա, որ կամրջում է նրա և Պտղոմեոսի տվյալները՝ լրացուցիչ լույս սփռելով քննարկվող խնդրի վրա. «Յեփրատից այն կողմ, Փոքր Հայքի մոտ, իբր շարունակություն Անտիտավրոսի, դեպի հյուսիս ձգվում ե մի մեծ և բազմաճյուղ լեռնաշղթա: Սրանցից մին կոչվում ե Պարիադրես, մյուսը Մոսքիկյան և մյուսն ել ուրիշ անուններով: Սրանք բռնում են ամբողջ Հայաստանը մինչև Վրաստան և Աղվանք»[455]: Այսպիսով՝ ոչ միայն հստակ առանձնացված է Փոքր Հայքը, այլև կրկնվում է մինչև հյուսիս ձգվող սահմանագիծը՝ Պարիադրեսյան[456] (Պարյուադրեսյան, Պարխարյան, Պոնտական) և Մոսքական (Մոսխական, Մոսքիկյան, Աճարա-Մես-

---

[454] Տե՛ս **Ստրաբոն,** էջ 43:

[455] Տե՛ս նույն տեղում:

[456] Պտղոմեոսը Պարիադրեսյան լեռները հիշատակում է ոչ թե հենց արևմտյան սահմանները նկարագրելիս, այլև Եփրատ, Կյուրոս (Կուր) և Երասխ գետերի միջև ընդգրկված տարածքում Հայաստանի վարչատարածքային բաժանման մասին գրելիս (տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.13.9):

խական) լեռների երկայնքով: Այս պարագայում ինչո՞ւ Փոքր Հայքը հստակ առանձնացված չէ Պտղոմեոսի երկում:

Մեծ Հայքի «պտղոմեոյան» սահմանների վերակազմության ուղղությամբ մեծ է Ս. Երեմյանի ներդրումը: Նա Պտղոմեոսի ներկայացրած տվյալների հիման վրա հետևյալ կերպ է վերակազմել Մեծ Հայքի արևմտյան սահմանները. սահմանագիծն անցնում էր Եփրատ գետով, որը բաժանում էր Մեծ Հայքը Կապադովկիայի կազմում գտնվող Փոքր Հայքից, ապա Եփրատից հյուսիս-արևելք տարածվող Մոսխական լեռներով՝ մինչև Կողքիս[457]: Ինչպես տեսնում ենք, Ս. Երեմյանը նշում է, որ Փոքր Հայքը գտնվում էր Կապադովկիայի կազմում, հետևաբար տրամաբանական է դառնում Պտղոմեոսի կողմից Փոքր Հայքի ուղղակի հիշատակության բացակայությունը Մեծ Հայքի արևմտյան սահմանին: Բանն այն է, որ Հռոմի Վեսպասիանոս կայսեր (69-79 թթ.) օրոք՝ 72 թ., Փոքր Հայքը կորցնում է թագավորության կարգավիճակը և վերածվում Հռոմեական կայսրության սովորական երկրամասի՝ ընդգրկվելով Կապադովկիա պրովինցիայի կազմում[458]:

---

[457] Տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 839:

[458] Տե՛ս **Երեմյան Ս.,** Տրայանոսի արշավանքը և Հայաստանը, ՀԺՊ, հ. I, էջ 768-769; **Բաղալյան Գ.,** Հայկական լեռնաշխարհը, «Հայոց պատմություն. դասագիրք բուհերի համար, խմբ.՝ Հ. Սիմոնյանի, Երևան, 2012, էջ 13: Ուշագրավ է, որ Փոքր Հայքի ուսումնասիրությամբ հիմնովին զբաղված Ն. Ադոնցը թագավորության լուծարումը չի թվագրել՝ բավարարվելով միայն Վեսպասիանոսի ժամանակաշրջանը նշելով (տե՛ս **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 81): Նույն կերպ են վարվել նաև Ա. Բոլտունովան և Գ. Սարգսյանը (տե՛ս **Болтунова А., Саркисян Г.,** Армения Малая, в “Большая советская энциклопедия”, т. 2, М., 1970, с. 212): Մեծ Հայք-Փոքր Հայք սահմանային խնդրին լրացուցիչ կանդրադառնանք մեր առաջիկա հոդվածներից մեկում:

Հարկ է նշել, որ Պտղոմեոսի երկում Մեծ Հայքի արևմտյան սահմանի առնչությամբ տեղեկության ենք հանդիպում նաև Կապադովկիայի մասին հատվածում. «Արևելքում՝ Մեծ Հայքի՝ Եփրատ գետի երկայնքով մատնանշված հատվածով դեպի այն կետը, որտեղ, գալով հյուսիսից, այն այնուհետև արտացոլվում (իմա՝ թեքվում – Մ. Մ.) է արևելքից, որի տեղադրությունն է 71°00' 42°30', այնուհետև՝ Մոսքիկոս լեռների գծի երկայնքով դեպի 73°00' 44°30' եզրակետը, որտեղից շարժվում է դեպի մատնանշված առափնյա վերջնակետը»[459]: Որպես առափնյա վերջնակետ այստեղ նկատի է առնված Ճորոխի գետաբերանը:

Նշված կոորդինատների առնչությամբ անհրաժեշտ է կատարել որոշակի հաշվարկներ: Պտղոմեոսի աշխարհագրական երկի արդի հետազոտող Դ. Շչեգլովը մաթեմատիկական մոդելավորման ժամանակակից մեթոդներով վերահաշվարկել է Հայաստանի հարևանությամբ գտնվող մի քանի քաղաքների աշխարհագրական երկայնությունները[460], և դրանց շնորհիվ հնարավոր է հաշվարկել նաև Հայաստանում գտնվող աշխարհագրական օբյեկտների երկայնությունները: Այսպես՝ Փասիս (Ռիոն) գետի գետաբերանի երկայնությունը Պտղոմեոսի մոտ 72,5° է, իսկ իրականում՝ 41,636°, այսինքն՝ շեղումը 1,7413 անգամ է[461]: Նրանից զգալիորեն հարավ-արևմուտք գտնվող Մծբինի (ռուս հեղինակի աշխատանքում՝ Նիսիբիս) երկայնությունը Պտղոմեոսի մոտ 75,17° է, իսկ իրականում՝ 41,217°, այ-

---

[459] **Claudius Ptolemy,** § 5.6.1.

[460] Տե՛ս **Shcheglov D.,** The Error in Longitude in Ptolemy's *Geography* Revisited, "The Cartographic Journal". Published by The British Cartographic Society, March 2014, DOI: 10.1179/1743277414Y.0000000098, pp. 10-12:

[461] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

սինքն՝ շեղումը 1,8238 անգամ է[462]: Արևելք-արևմուտք աշխարհագրական հարաբերակցության տեսանկյունից նրանց միջև գտնվող Տրապիզոնի դեպքում շեղումը 1,7806 անգամ է[463]: Բերված օրինակներից ակներև է, որ արևմուտքից արևելք ուղղությամբ շեղումը նվազում է: Օգտագործելով մոդելավորման ներկայացված մոտեցումները և Պտղոմեոսի կոորդինատների տվյալները՝ 1,75 շեղման գործակցով ստացվում է, որ հյուսիս-սարևմտյան սահմանը Մոսքական լեռների երկայնքով արևմուտքում հասել է մինչև մոտավորապես 41,71°, այսինքն՝ ներկայիս Բաթում քաղաքից (41,781°) մի քանի (8-10) կիլոմետր հեռավորության վրա՝ Ճորոխի ստորին հոսանքի շրջանը:

Չնայած Պլինիոս Ավագի (23/24-79 թթ.) և Պտղոմեոսի աշխատությունների միջև ժամանակագրական որոշակի տարբերությանը և Պտղոմեոսի հիշատակություններում Մեծ Հայքի վարչատարածքային բաժանման համակարգի կտրուկ փոփոխությանը՝ երկու հեղինակների ներկայացրած սահմանները գրեթե համընկնում են: Պլինիոսը հետևյալ կերպ է նկարագրում. «Մեծ Հայքը, որ սկսվում է լեռներից, որ հայտնի են որպես Պարիադրես (իմա՛ Պարխարյան կամ Պոնտական – Մ. Մ.), ինչպես արդեն նշել ենք[464], Կապադովկիայից բաժանված է Եփրատ գետով, և այնտեղից, որտեղից այդ գետի հոսանքը սպառվում է[465], Միջագետքից բաժանված է ոչ պակաս

[462] Տե՛ս նույն տեղում, էջ 12:
[463] Տե՛ս նույն տեղում, էջ 10:
[464] Պլինիոսի կողմից նշված հատվածը տե՛ս **Pliny the Elder,** h. II, V, 20:
[465] Պլինիոսի աշխատության անգլերեն թարգմանության հրատարակիչներ Ջ. Բոսթոքը և Հ. Ռայլին այս բառակապակցությունը ծանոթագրությամբ բացատրում են որպես Եփրատի հունի արևմտյան ծայրակետի նկարագրությունը (տե՛ս նույն տեղում):

հայտնի Տիգրիս գետով»[466]: Այնուհետև ներկայացնելով Մեծ Հայքի հարավային, արևելյան և հյուսիսային սահմանները՝ Պլինիոսը վերստին անդրադառնում է արևմտյան սահմանին. «...Իր երկարությամբ [Մեծ Հայքը – Մ. Մ.] տարածվում է մինչև Փոքր Հայք, որից բաժանված է Եւքսինյան Պոնտոսի (իմա՛ Սև ծով – Մ.Մ.) մեջ թափվող Ապսարոս (իմա՛ Ճորոխ – Մ.Մ.) գետով և Պարիադրես լեռներով, որտեղից սկիզբ է առնում Ապսարոսը»[467]: Ինչպես նկատելի է, Պլինիոսը Մեծ Հայքի և Փոքր Հայքի միջև սահմանը նշում է Ճորոխ գետով և Պարիադրեսյան լեռներով, իսկ Արևմտյան Եփրատը ներկայացնում որպես Մեծ Հայքի և Կապադովկիայի սահման:

Պտղոմեոսի երկում Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանի վերաբերյալ տեղեկություն ենք հանդիպում նաև Կողքիսի մասին հատվածում. «Այն սահմանակցում է հարավում Կապադովկիական Պոնտոսին մինչև այն գիծը, որ մենք նշել ենք, և Մեծ Հայքի մի մասին՝ սահմանագծի երկայնքով՝ մինչև 74°00' 47°00' գտնվող եզրակետը»[468]: Կապադովկիական Պոնտոսի հետ սահմանագիծը, ելնելով Կապադովկիա պրովինցիայի հյուսիսարևմտյան սահմանագծի և տարածքների վերաբերյալ նկարագրությունից, անցնում էր Ապսարոսի (Ճորոխի) գետաբերանից մինչև Մոսքիկյան լեռներ՝ մինչև 73° 44°30' տեղադրությամբ եզրակետը, այնուհետև՝ Սկոդիսես լեռներով

---

[466] Տե՛ս **Pliny the Elder,** Vol. II, VI, 9, pp. 17-18. Հմմտ. **Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոս,** Բնական պատմություն, հատվածական թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, տե՛ս ՀԺՊՔ, կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, հ. 1, Երևան, 2007, էջ 288-289:

[467] **Pliny the Elder,** Vol. II, VI, 9, pp. 17-18. Հմմտ. **Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոս,** էջ 288-289:

[468] **Claudius Ptolemy,** § 5.10.3.

մինչև Եփրատի հուն այն հատվածից, որտեղից դեպի արևմուտք ճյուղավորվում է Անտիտավրոսի լեռնաշղթան:

Սահմանի այս հատվածի նկարագրության մեջ տեղագրական հետաքրքիր ճշգրտում կա Ստրաբոնի և Պլինիոսի երկերում. խոսքը Մոսքիկյան և Պարիադրեսյան լեռնաշղթաների միջև գտնվող Սկյուդիսես (Սկոդիսես, Սկիդիսես) լեռների մասին է, որոնք հանդիպում են նաև Պտղոմեոսի՝ Կապադովկիա պրովինցիայի արևելապոնտական մասի նկարագրության մեջ[469]: Այս հետաքրքիր նրբությունը դեռ մեկուկես դար առաջ նկատել ու անտիկ ժամանակաշրջանի համար ընդհանրական բնութագրման ձևով է ներկայացրել դասականության տարբեր ոլորտների բառարանագիր Վ. Սմիթը[470]: Ուսումնասիրողներն այս լեռները նույնացնում են ներկայումս Թուրքիայում գտնվող Քաջքար դաղ կոչվող լեռնաշղթայի հետ[471], որը հայերեն ստուգաբանվում է որպես Խաչքարի լեռների տառադարձում: Սրանք այժմ կոչվում են Արևելապոնտական (նախկինում՝ երբեմն նաև Լազիստանի) լեռներ և, ըստ էության, Պարիադրեսյան (Պոնտական) լեռների ամենաբարձր բազուկն են՝ մի կողմից բաժանելով իրենից հարավ-արևելք և արևելք գտնվող Ճորոխի ավազանը հյուսիս ծավալվող պոնտական մերձսևծովյան տարածքներից, մյուս կողմից՝ լեռնագրական

---

469 Տե՛ս **Ստրաբոն,** XI, 14, 1: **Pliny the Elder,** h. II, VI, 9, ծանոթ. 69; էջ 18: Հմմտ. **Claudius Ptolemy,** § 5.6.

470 Տե՛ս "Dictionary of Greek and Roman Geography", Vol. I, edited by W. Smith, Boston, Little Brown & Company, 1870, էջ 215:

471 Տե՛ս "Map-by-Map Directory to Accompany Barrington Atlas of the Greek and Roman World", edited by R. Talbert, Princeton University Press, 2000, էջ 1236: Ռ. Թալբերթը համապատասխանեցման համար հղում է Թ. Սինքլերի թուրքագիտական հնաճարտարագիտական քառահատոր աշխատությունը՝ **Sinclair T.,** Eastern Turkey: An Architectural and Archaeological Survey, in 4 Vol., London, 1987-1990:

կապ ստեղծելով հարավում Պոնտական լեռների և Անտի-տավրոսի միջև:

Այսպիսով՝ Մեծ Հայքի՝ Ստրաբոնի, Պլինիոսի և Պտղոմեոսի երկերում հիշատակվող արևմտյան սահմանները գրեթե նույնությամբ կրկնում են միմյանց: Փաստացի նույն սահմանագիծն ենք հանդիպում նաև նրանցից հետո՝ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ. «Քսան եւ եւթներորդ՝ Մեծ Հայք են, յելից կալով Կապադոկիոյ եւ Փոքր Հայոց, առ Եփրատ գետով, մերձ Տաւրոս լեառն, որ բաժանէ զնա ի Միջագետաց»[472]:

Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմանը, որ ներկայացված է Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում, հյուսիսից սկսվում է Մոսքական լեռներից, այնուհետև՝ հասնում Ճորոխի ստորին հոսանք (գետաբերանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա), ապա՝ նրա միջին հոսանքի ձախափնյա ավազանով, Սկյուդիսես և Պարիադրես լեռներով ծավալվում դեպի հարավ-արևմուտք: Այդտեղից դեպի Անտի-տավրոս շարունակվելով՝ սահմանագիծը Արևմտյան Եփրատի հունով իջնում էր դեպի հարավ: Թագավորության արևմտյան հարևանը Հռոմեական կայսրության Կապադովկիա

---

[472] «Անանիա Շիրակացու մատենագրությունը» (համառոտ խմբագրություն), էջ 348, հմմտ. **Անանուն (Է դար),** Աշխարհացոյց, 21, սն. 122-123: Ի դեպ, այս հատվածը բացակայում է «ընդարձակ խմբագրության» մեջ (տե՛ս «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց» (ընդարձակ խմբագրություն), էջ 29, հմմտ. **Յակոբեան Ա.,** Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 217-218):

պրովինցիան էր, որի կազմում էին գտնվում Պոնտոսը և Փոքր Հայքը[473]:

Պտղոմեոսի ներկայացրած սահմանագիծը փաստացիորեն կրկնվում է նրանից մի քանի տասնամյակ առաջ ստեղծագործած Ստրաբոնի և Պլինիոս Ավագի երկերում, ինչպես նաև նրանից հարյուրամյակներ անց շարադրված «Աշխարհացոյց»-ում:

Սկզբնաղբյուրներում մի քանի դար շարունակաբար հանդիպող սահմանային նույնականությունը արևմտյան կողմում ցույց է տալիս, որ գործ ունենք կայուն պետական սահմաններ և ռազմապաշտպանական կուռ համակարգ ունեցող հզոր պետության հետ:

ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО “ГЕОГРАФИИ” КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ

“География” Клавдия Птолемея (т. II, кн. V, гл. XIII) является очень важным источником для исследования границ Великой Армении. Результаты нашего исследования показали, что, согласно данным Птолемея, западные границы Великой Армении на севере начинались с Мосхикских (Месхетинских) гор, затем достигали нижнему течению реки Чорох (в нескольких километрах от устьи реки), и дальше, вдоль левого бассейна среднего течения реки, по горным цепям Скюдисес (Восточно-Понтийские горы) и Парюадрес (Париадрес, Понтийские горы), расширяясь к юго-западу. Оттуда снижаясь к Антитавру, граничная линия продолжалась на юг – по среднему и нижнему течению Западного Ефрата.

Каппадокийская провинция Римской империи, включая в себе Малую Армению и Понт, была западным соседом Великой Армении.

Контуры границ, представленные у Птолемяя, фактически повторяются у других античных авторов (Страбон, Плиний Старший), а также в раннесредневековом армянском географическом сборнике “Ашхарацуйц”.

---

[473] Մեծ Հայքի և Փոքր Հայքի սահմանագծի առանձնահատկություններն այնքան հետաքրքրական են, որ մեր հաջորդ ուսումնասիրության առարկան են լինելու:

Повторяющиеся в источниках за несколько столетий идентичные границы на западе показывают, что имеем дело с сильным государством со стабильными государственными границами и со стойкой воинско-оборонительной системой.

THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY"

Claudius Ptolemy's "Geography" (Vol. II, book V, chapter XIII) is a very important source for the research on the borders of Greater Armenia. The results of our investigation show, that, according to Ptolemy's data, the western borders of Greater Armenia started on the north from the Moschikian (Moschian, Meskhetian) mountain range, then reached the downstream of River Chorokh (Chorukh; in a few kilometres from the river flow), and thereafter, along the left basin of the river midstream, with the Skydises (Eastern-Pontic) and Paryadres (Pontic) mountain chains, enlarging to the south-west. Then, the borderline went down to the Anti-Taurus Mountains, and continued to the south – along the midstream and downstream of Western Euphrates.

The Roman province of Cappadocia, which included Lesser Armenia and Pontus, was the western neighbour of Greater Armenia.

The borders presented by Ptolemy, in fact, are repeated by other ancient authors (Strabo, Pliny the Elder), as well as in the early-medieval Armenian geographical source "Ashkharhatsuyts".

The repeating identical western borders through several centuries show that we have a deal with a powerful country with its stable state borders and persistent military-defensive system.

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ՝ ՄՈՍՔԻԿՅԱՆ ԼԵՌՆԵՐՈՎ ՁԳՎՈՂ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ԽՆԴԻՐԸ (ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ»)

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում նկարագրված Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևմտյան սահմանների այն հատվածը, որտեղ հիշատակվում են Մոսքիկյան կամ Մոսքական լեռները: Սա կարևոր է ոչ միայն պետական սահմանազատումների մասին պատկերացում կազմելու, այլև Մեծ Հայք–Կողքիս–Վիրք փոխառնչությունների պատմաաշխարհագրական խնդիրներն ուսումնասիրելու տեսանկյունից:

Նշված նպատակին հասնելու համար խնդիր ենք դրել վերհանելու Մոսքական լեռներով ձգվող սահմանագծի «պտղոմեոսյան» առանձնահատկությունները, համադրելու դրանք Ստրաբոնի և Պլինիոս Ավագի տեղեկությունների հետ, քննելու նախընթաց ուսումնասիրություններում սահմանագծի վերաբերյալ արված դիտարկումները և հանգելու սեփական եզրակացություններին:

Առաջնորդվելով պատմահամեմատական և պատմաքննական մեթոդներով՝ չենք բավարարվել բնագրական քննությամբ ու այլ սկզբնաղբյուրների (Ստրաբոնի «Աշխարհագրության» և Պլինիոս Ավագի «Բնապատմության») հետ համեմատությամբ, դիտարկել ու վերահաշվարկել ենք Մոսքական լեռների արևմտյան եզրակետի և Կոտարգենե վարչամիավորում հիշատակվող Ասկուրա բնակավայրի աշխարհագրական կոորդինատների տվյալները:

Ի վերջո, հանգել ենք եզրակացության, որ Պտղոմեոսի ներկայացրած քարտեզագրական համակարգում Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանագիծը, իսկապես, անցնում է Մոսքական լեռներով՝ Մեծ Հայքի մեջ ներառելով դրանցից հարավ ընկած տարածքները՝ Կոտարզենեի հյուսիսային մասը, ներառյալ Ասկուրան: Հետևաբար հայագիտության մեջ գերիշխող տեսակետը, թե այդ տարածքները 37 թվականից հետո չեն եղել Մեծ Հայքի կազմում, ճիշտ չէ և այսուհետ պետք է արմատապես վերանայվի:

Ուշ անտիկ շրջանի քարտեզագրական մտքի առանցքային դեմքը նշանավոր աշխարհագետ, աստղագետ և մաթեմատիկոս Կլավդիոս Պտղոմեոսն (մոտ 100–170 թթ.) է: Նրա գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ ունի «Աշխարհագրություն» երկը, որտեղ նա ներկայացնում է այդ ժամանակաշրջանում հունահռոմեական գիտական մտքին հայտնի աշխարհը՝ Օյկումենը, որն ընդգրկում էր Եվրոպայի և Ասիայի մեծ մասը, ինչպես նաև Աֆրիկայի հյուսիսը՝ ֆիզիկաաշխարհագրական և տարածաքաղաքական նկարագրությամբ: Նա աշխարհագրական մտքի պատմության մեջ առաջին մարդն է, որը պետությունների սահմանները և նշանավոր բնակավայրերը հիշատակելիս նշում է նրանց աշխարհագրական կոորդինատները, որոնք, բնականաբար, տարբերվում են ներկայիս ճշգրիտ հաշվարկների արդյունքներից:

Պտղոմեոսն Ասիայի երրորդ քարտեզում («Asiae Tabula Tertia»)՝ երկի երկրորդ հատորի հինգերորդ գրքի տասներեքերորդ գլխում, ներկայացնում է Մեծ Հայքի թագավորության նկարագրությունը: Այստեղ ուշագրավ է ոչ միայն վարչամիա-

վորների և նրանց բնակավայրերի թվարկումը, այլև սահմանների մատնանշումը:

Սույն հոդվածի շրջանակում նպատակ ենք դրել ուսումնասիրելու և ներկայացնելու Մեծ Հայքի «պտղոմեոսյան» հյուսիսարևմտյան սահմանների այն հատվածը, որտեղ հիշատակվում են Մոսքական լեռները: Սա կարևոր է ոչ միայն պետական սահմանազատումների մասին պատկերացում կազմելու համար, այլև ուշագրավ է Մեծ Հայք– Կողքիս ու Մեծ Հայք–Վիրք փոխառնչությունների պատմաաշխարհագրական խնդիրների ուսումնասիրման տեսանկյունից: Բանն այն է, որ հայագիտության մեջ արմատացել է այն տեսակետը, թե նշված լեռնաշղթայի հարավային ստորոտները հյուսիսային հարևանին են անցել 37 թ., մինչդեռ դա հաստատող ուղղակի հիշատակություն չկա:

Սկզբնաղբյուրի ուսումնասիրվածության աստիճանը Մոսքական լեռներով անցնող սահմանագծի ճշգրտման տեսանկյունից

Երկի բնագրի հունարեն, լատիներեն և այլ լեզուներով հրատարակությունները հայագետներին հնարավորություն են ընձեռել՝ ուսումնասիրելու Մեծ Հայքի մասին պտղոմեոսյան տեղեկությունները դեռևս XIX դարում, երբ Ա. Սեն-Մարտենը[474], Ք. Պատկանյանը[475] և Ա. Սուքրյանը[476] «Աշխարհացոյց»-ի

---

[474] Տե՛ս **Saint-Martin J.,** Mémoires historiques et géographiques sur l'Arménie, II, Paris, 1819:

[475] Տե՛ս «Армянская география VII века», изд. К. Патканов, СПб., 1877:

[476] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց» (ընդարձակ խմբագրություն, հայերեն և ֆրանսերեն), հրատ.՝ Ա. Սուքրյան, Վենետիկ, 1881 (ֆր.՝ **Soukry A.,** Géographie de Moïse de Coréne d'après Ptolémée, Venise, 1881):

բնագրային հրատարակությունների առաջաբաններում և ծանոթագրություններում համեմատել են երկու սկզբնաղբյուրների ընդհանրություններն ու տարբերությունները: Թեպետ XX դարի երևելի հայագետներից շատերն են անդրադարձել Պտղոմեոսի տեղեկություններին, սակայն նրանցից միայն մի քանիսն են ուսումնասիրել Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանի նկարագրությունը՝ փորձելով ճշգրտել պետական սահմանագիծը:

Խնդրին հանգամանալիորեն անդրադարձել է Ս. Երեմյանը[477], որը, «Աշխարհացոյց»-ին նվիրված իր մենագրության մեջ «Աշխարհագրության» հետ պատմահամեմատական վերլուծություններ կատարելով, վերակազմել է Մեծ Հայք–Կողիքս և Մեծ Հայք–Վիրք սահմանները: Ավելի ուշ պտղոմեոսյան նշված սահմանները քարտեզագրել է Բ. Հարությունյանը[478]: Այնուհետև տարածքը նկարագրել է Հ. Հարությունյանը[479], խնդրին անդրադարձել ենք նաև մենք[480]:

---

[477] Տե՛ս **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963: *Նույնի՝* Մեծ Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում, ՀԺՊ, հ. I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1971, էջ 678-689: *Նույնի՝* Մեծ Հայքի պայքարը անկախության համար Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո, ՀԺՊ, հ. I, էջ 703-733: *Նույնի՝* «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի՝ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983, էջ 416-417 (ներդիրում):

[478] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» (II դար). քարտեզ, մասշտաբ՝ 1:4 300 000, տե՛ս Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Երևան, 2005, էջ 34: *Նույնի՝* Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության». քարտեզ, մասշտաբ՝ 1:7 200 000, տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, Երևան, 2008, հ. Բ, էջ 26:

[479] Տե՛ս **Арутюнян А.,** Административно-территориальное деление Аршакидской Армении согласно “Географии” Клавдия Птолемея (северные губерни).

Զարմանալի է, որ ուսումնասիրողների աչքից վրիպել է անտիկ հեղինակ Տակիտոսի (մոտ 56-120 թթ.) «Տարեգրություններ» երկը մեկնաբանելիս Հ. Մանանդյանի՝ խնդրին անուղղակիորեն առչվող կարևոր մի դիտարկում[481]: Հենց վերջինս էլ հիմք է դարձել մեր այս հոդվածի մտահղացման համար, հետևաբար նրան առավել մանրամասն կանդրադառնանք քննարկման մեջ:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Կիրառելով պատմահամեմատական և պատմաքննական մեթոդները՝ մենք քննել ենք ժամանակագրորեն մոտ գրված սկզբնաղբյուրների (Ստրաբոնի «Աշխարհագրության»[482] և

«Каспийский регион. Политика, экономика, культура», Астрахань, 2014, № 2, с. 14-21:

[480] Տե՛ս **Մալխասյան Մ.,** Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում, «Քրիստոնյա Հայաստան», 2016, թիվ 2, էջ 6-7: *Նույնի*՝ Մեծ Հայքի թագավորության սահմաններն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկի, ՀՀ և Մերձավոր արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները (Թ. Հակոբյանին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2017, էջ 37-44: *Նույնի*՝ Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմանները՝ ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության», «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2020, թիվ 1, էջ 41-48:

[481] Տե՛ս **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1945, էջ 117:

[482] Տե՛ս **Ստրաբոն,** Աշխարհագրություն, քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան, «Օտար աղբյուրներ հայերի մասին. հունական աղբյուրներ», № 1, Յերևան, 1940: Հմմտ. **Strabo,** Geography, Vol. 5, Greek text based on Meineke 1852-53, English translation by J. R. S. Sterrett and H. L. Jones, Harvard University Press, 1928:

Պլինիոս Ավագի «Բնապատմության»[483]) հետ դիտարկվող սահմանագծում ընդհանրությունները և տարբերությունները:

Տասնամյակներ շարունակ հայագիտության մեջ գերիշխող է եղել այն տեսակետը, որ Պտղոմեոսի կոորդինատները մտացածին են[484], սակայն, ինչպես նկատել են ժամանակակից ուսումնասիրողներ Դ. Ռոուլինսը, Լ. Ռուսսոն, Ջ. Բրոթթոնը, Դ. Շչեգլովը, Դ. Գուսևը և այլք, ինչպես նաև Մ. Խաչատրյանը[485] և մենք[486], վերահաշվարկման դեպքում դրանք օգտակար են ներկա ուսումնասիրողների համար:

Սույն ուսումնասիրության մեջ առաջնորդվելու ենք բնագրի անգլերեն հրատարակությունների՝ մեր կողմից արված համեմատական թարգմանությամբ[487]:

---

[483] Տե՛ս "The Natural History of Pliny", translated by J. Bostock and H. Riley, Vol. I, London, 1855, Book V, Chapter 20, pp. 441-443; Vol. II, London, 1855, Book VI, Chapter 9-10, p. 17-20 (այսուհետ՝ **Pliny the Elder**):

[484] Տե՛ս, օրինակ, **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 18:

[485] Տե՛ս **Խաչատրյան Մ.,** Հայկական լեռնաշխարհն ըստ Պտղոմեոսի քարտեզագրական տվյալների, ՊԲՀ, 1980, թիվ 2, էջ 201-202:

[486] Տե՛ս **Մալխասյան Մ.,** Աշխարհագրական կոորդինատների հիմնախնդիրը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում, Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ, Երևան, 2015, էջ 226-241:

[487] «Աշխարհագրության» ամբողջական բնագիրը հայերեն չի հրատարակվել: Մեծ Հայքին առնչվող XIII գլուխը հայերեն է թարգմանվել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Գ. Մուրադյանի կողմից և տեղանունների մի մասով ու առանց նրանց կոորդինատների ամբողջական ցանկի հրատարակվել է Պ. Հովհաննիսյանի և Ա. Մովսիսյանի կողմից (տե՛ս ՀԺՊՔ, հ. 2, կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, 2011, էջ 10-12): Անգլերեն միակ ամբողջական հրատարակությունը հետևյալն է՝ Geography of **Claudius Ptolemy,** translation by Ed. L. Stevenson, translator introduction by J. Fischer, New York, first published in 1932, current edition published by Cosimo Classics in 2011: Քանի որ այս թարգմանությունը լատիներենից է, տեղանունները ռոմանականացված են (տե՛ս **Diller A.,** Review of E. L. Stevenson's translation of Geography of Claudius Ptolemy, "Isis", University of Chicago Press, 1935, Vol. 22, No. 2, էջ 533-539), հետևաբար դրանք

Քննարկում և արդյունքներ

Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանը նկարագրելիս անտիկ հեղինակները սովորաբար հիշատակում են քաղաքական դարձած ֆիզիկաաշխարհագրական այն սահմանը, որն անցնում էր Մոսքիկյան կամ Մոսքական (Մոսխական, Մոսխիկյան, Մոսքիկե, Մոսխիկե, այժմ՝ Աճարա-Մեսխական) լեռներով: Այդ մասին առաջինը հիշատակում է Ստրաբոնը (Ք.ա. 64/63 - Ք. հ. 24 թթ.)[488]: Նրա կողմից Անտիտավրոսի նկարագրության մեջ առկա տեղեկությունը կամրջում է նրա և Պտղոմեոսի տվյալները. «Յեփրատից այն կողմ, Փոքր Հայքի մոտ, իբր շարունակություն Անտիտավրոսի, դեպի հյուսիս ձգվում է մի մեծ և բազմաճյուղ լեռնաշղթա: Սրանցից մին կոչվում է Պարիադրես, մյուսը Մոսքիկյան և մյուսն էլ ուրիշ անուններով: Սրանք բռնում են ամբողջ Հայաստանը մինչև Վրաստան և Աղվանք»[489]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Պարիադրեսյան (Պոնտական) լեռներից հետո Մոսքիկյան լեռները և

ճշգրտելու համար օգտվել ենք նաև հունարեն բնագրի՝ անգլերեն համեմատական թարգմանությունից՝ **Ptolemaeus,** Geography, translated by J. Kiesling from the Greek texts of K. Nobbe (1843-1845) and K. Muller (1883), the ToposText classics, ինչպես և գերմաներեն հրատարակությունից՝ **Ptolemaios** Handbuch der Geographie (Griechisch-Deutsch), Vol. 2, bear. von Al. Stückelberger, G. Grasshoff, F. Mittenhuber, Schwabe Verlag, 2006: Հոդվածում ներկայացնելու ենք համեմատական ճշտումները (այսուհետ՝ **Claudius Ptolemy**)՝ նկատի ունենալով հին հունարենի և լատիներենի տառադարձման սկզբունքները, որոնք հստակեցնելու համար շնորհակալություն ենք հայտնում Ֆորդհեմի համալսարանի (ԱՄՆ) ծիսագիտության դոկտոր Տ. Աբրահամ քհն. Մալխասյանին:

[488] Տե՛ս **Ստրաբոն,** էջ 41-45:

[489] Նույն տեղում: Հրատարակության մեջ «է» օժանդակ բայը նշված է «ե» գրելաձևով, և հաշվի առնելով ուղղագրական վերափոխումների ժամանակահատվածի այդ դրսևորումը՝ մեջբերման մեջ փոխել ենք ձևակերպումը «է»-ով:

դրանցից արևելք ծավալվող լեռնաշղթաները Ստրաբոնի կողմից դիտարկվել են որպես սահմանաբաժան Մեծ Հայքի և հարևան պետությունների միջև:

Ստրաբոնը Մոսքական լեռներին և Մոսքիկեին անդրադառնում է ևս մի քանի առիթներով: Այսպես՝ կովկասյան տարածաշրջանի մասին գրելիս նա նշում է, որ հենիոխներից հետո կոլխերի երկիրն է՝ Կողքիսը, որը տարածվում է, իր բնորոշմամբ, Կովկասյան կամ Մոսքական լեռների ստորոտներին[490]: Ստրաբոնը նույն օրինակով Սև ծովի արևելյան ավազանում հաջորդաբար հիշատակում է մի շարք ցեղեր, որոնց շարքում հենիոխներից և կերկետներից հետո՝ կոլխերի կողքին, թվում է մոսխերին[491]: Իսկ հաջորդ հիշատակությամբ նա ցույց է տալիս, որ Կովկասյան լեռների ճյուղավորումները (լեռնաբազուկները)՝ Մոսքական, Սկյուդիսես (Արևելապոնտական) և Պարիադրեսյան լեռնաշղթաներով, «Հայաստանի լեռներով», ձգվել են մինչև Մեծ Հայքի հարավային սահմանը հանդիսացող Տավրոսի լեռները՝ կազմելով, ընդհանուր առմամբ, լեռնագրական մեկ միավոր[492]:

Նկատի ունենալով այն, որ Ստրաբոնը Մոսքական և Կովկասյան լեռները համարել է լեռնագրական մեկ համակարգի ճյուղավորումներ, նրա այս հիշատակությունները պետք է մեկնաբանել հետևյալ կերպ. Մոսքիկեն ծավալվում էր ժամանակակից Աբխազիայի ու Վրաստանի մերձսևծովյան մի հատվածում բնակվող հենիոխներից մինչև հյուսիսում՝ Կովկասյան, հարավում՝ Մոսքական լեռների ստորոտներ: Անտիկ

---

[490] Տե՛ս **Strabo,** Vol. 5, Book XI, Chapter 2, p. 191:
[491] Տե՛ս նույն տեղում, էջ 207:
[492] Տե՛ս նույն տեղում, էջ 209: Հմմտ. **Ստրաբոն,** էջ 26-27:

աշխարհագրական մտքի ամերիկացի հետազոտող Վ. Սմիթը Ստրաբոնի այս հիշատակությունները մեկնաբանում է այնպես, որ հենիոխները, մոսխերը, կոլխերը, զիգերը և կերկետները, ամենայն հավանականությամբ, բնակվել են հենց Կողքիսի տարածքում՝ զբաղեցնելով նրա մեծ մասը և ձգվելով մինչև Դիոսկուրիա[493] (այժմ՝ Սուխում), սակայն չի տեղորոշում նրանցից յուրաքանչյուրին:

Ստրաբոնի հաջորդ հիշատակությունն առավել հետաքրքրական է: Նա ասում է, որ Փասիս (այժմ՝ Ռիոն) գետի ակունքները գտնվում են Հայաստանում[494], մինչդեռ այն սկիզբ է առնում Կովկասյան լեռներից: Թեև հույն հեղինակը չի նշում Հայաստանում գտնվող աշխարհագրական կոնկրետ օբյեկտը, սակայն մեր կարծիքով նա նկատի ունի Մեծ Հայքի համար սահմանային հանդիսացող Մոսքիկյան լեռներից սկիզբ առնող ներկայիս Խամիս-Ծխալի խոշոր վտակը, որն ապահովում է գետի հոսքի մի զգալի հատվածը: Որևէ այլ տարբերակ պարզապես հնարավոր չէ:

Հաջորդ երկու հիշատակությունները ոչ թե լեռնաշղթայի, այլ երկրամասի մասին են: Նախ Ստրաբոնը Կուր գետի վերաբերյալ հիշատակությունից հետո նշում է, որ նրանից վեր (տվյալ դեպքում՝ հյուսիս)՝ Մոսքական երկրում, գտնվում է Լեուկոթեայի (Լևկոֆեայի) տաճարը, որը հիմնադրել է դիցաբանական կերպար Փռիքսոսը (Ֆրիքսոսը), բայց իր ժամանակներում թալանվել է նախ Փառնակեսի (ըստ երևույթին, Փառնակես II Պոնտացու (Ք.ա. 63-47 թթ.) մասին է խոսքը), ա-

---

[493] Տե՛ս “Dictionary of Greek and Roman Geography,” edited by W. Smith, Vol. I, Boston, Little Brown and Company, 1870, p. 642:
[494] Տե՛ս **Strabo,** p. 213:

պա մի փոքր անց՝ Միհրդատ Պերգամոնցու (խոսքը, ամենայն հավանականությամբ, Միհրդատ I Բոսպորցու մասին է, որը Հուլիոս Կեսարի կողմից Ք.ա. 47 թ. ստացել է Պոնտոսի, Գալաթիայի մի մասի, Բոսպորի թագավորության նկատմամբ իշխանությունը) կողմից, իսկ երկիրը ամայացել է, կորցրել նախկին հարստությունը[495]:

Տաճարի տեղորոշման հարցում կան տարբեր կարծիքներ: Երկար ժամանակ ուսումնասիրողներն այն նույնացրել են Կողքիսի (ներկայումս՝ Վրաստանի Հանրապետության Իմերեթ տարածաշրջանի) Վանի հնավայրի հետ, քանի որ այդտեղ նույն ժամանակաշրջանի մոնումենտալ շինություններ են հայտնաբերվել, և անտիկ քաղաքը կործանվել է հենց այն նույն ժամանակ, երբ տեղի են ունեցել վերը նշված ավերիչ արշավանքները[496]: Այդուհանդերձ, վրացի ուսումնասիրողների մի մասը, մասնավորապես՝ Օ. Լորդկիպանիձեն պնդում է, որ Վանին չի կարող համապատասխանել այդ տաճարին, քանի որ Ստրաբոնի հիշատակությունից հնարավոր է եզրակացնել, որ գործ ունենք Մեծ Հայքի, Կողքիսի և Վիրքի ընդհանուր սահմանագլխին գտնվող վայրի հետ, իսկ Վանին այդ հատման կետից ավելի հյուսիս է[497]: Այս մեկնաբանությամբ վրացի հեղինակը հաստատում է մեր այն կարծիքը, որ տաճարը չէր գտնվում Վիրքի կազմում, սակայն միաժամանակ պնդում է,

---

[495] Տե՛ս նույն տեղում:

[496] Տե՛ս **Braund D.,** Georgia in Antiquity: A History of Colchis and Transcaucasian Iberia 550 BC - AD 562, New York: Clarendon Press – Oxford University Press, 1994, p. 147, note 114:

[497] Տե՛ս **Lordkipanidze O.,** Vani: An Ancient City of Colchis, “Greek, Roman, and Byzantine Studies”, 1991, № 1 (32), pp. 151-195: Տե՛ս նաև **Braund D.,** նշվ. աշխ., էջ 148-149, 169-170, 174:

որ Մոսքիկեում հիշատակվող վայրը պետք է փնտրել ավելի հարավ: Սա մի կողմից փորձ է Կողքիսի սահմաններն ավելի հարավ ներկայացնելու, բայց միաժամանակ հարց է առաջացնում Մոսքիկեի տարածքային ընդգրկման շուրջ:

Շարունակելով խոսել Կողքիսի մասին Պոնտոսում հռոմեական դրածո Պյութոդորիդա Պոնտացի թագուհու (Ք.ա. 8-Ք. հ. 38 թթ.) օրոք՝ Ստրաբոնը նշում է, որ այդ ժամանակ Մոսքական երկիրը, որտեղ գտնվում էր վերը նշված տաճարը, բաժանվում է երեք մասի՝ կողքիսցիների, իբերների և հայերի միջև[498]: Հատկանշական է, որ իր մահվանից (24 թ.) առաջ նա ցույց է տալիս, որ Մոսքիկեի մի մասը հայերին է պատկանում[499]:

Նշյալ սահմանազատմանը I դարում անդրադարձած հաջորդ հեղինակը Պլինիոս Ավագն (23/24-79 թթ.) է: Նա հիշատակում է Մոսքական լեռները և Մոսքիկե երկրամասը նաև «Մոսքի» («Մոսքեր») ձևով: Պլինիոսը կրկնում է Ստրաբոնի այն տվյալը, որ Փասիս գետն սկիզբ է առնում Մոսքիկեից[500]: Նա նաև գետը համարում է ամենանշանավորը Պոնտոսում[501], հետևաբար մենք գործ ունենք այն ժամանակաշրջանի հետ, երբ Կողքիսը հռոմեահպատակ Պոնտոսի վարչական սահմաններում էր: Հատկանշական է, որ Պլինիոսը Տրապիզոնից արևելք և Իբերիայից արևմուտք՝ Սև ծովի ափին, հիշատակում

---

498 Տե՛ս **Strabo,** p. 215: Հմմտ. **Ստրաբոն,** էջ 28-29:

499 Այս մասին յուրովի մեկնաբանություն տե՛ս **Մովսիսյան Ա.,** Հայ էթնոսի տարածման աշխարհագրությունը մեր թվականության սկզբին (ըստ Ստրաբոնի վկայությունների), «Պատմություն և մշակույթ», 2020, թիվ 1, էջ 38:

500 Տե՛ս **Pliny the Elder,** Vol. II, VI, 4, p. 10:

501 Տե՛ս նույն տեղում:

է հենիոխներին[502], որոնք, ըստ անտիկ հեղինակի երկի հրատարակիչների, թեպետ նվաճվել էին Հռոմի կողմից, չէին հնազանդվում հռոմեական օրենքներին[503]: Այս ցեղի հիշատակությունը շատ կարևոր է, հետևաբար նրանց տեղորոշման խնդրին կվերադառնանք Մոսքիկեի վերաբերյալ տեղեկություններն ի մի բերելուց հետո:

Պլինիոսի երկի հրատարակիչները՝ Ջ. Սթոքը և Հ. Ռայլին, մեկ այլ ծանոթագրության մեջ անդրադառնում են Մոսքական լեռներին՝ նշելով, որ դրանք Մեծ Հայքի հյուսիսարևմտյան և արևմտյան սահմանագիծն են կազմել[504]: Քանի որ նրանք արևմտյան սահմանի դեպքում դեպի հարավ հաջորդը նշում են Անտիտավրոսի լեռները[505], հետևաբար պարզ է դառնում, որ նրանք Մոսքական լեռների ներքո նկատի են ունեցել ոչ միայն այդ, այլև Սկյուդիսես և Պարիադրես լեռնաշղթաները[506]: Սրանում համոզվում ենք, երբ ուշադրություն ենք դարձնում Պլինիոսի մեկ այլ մեկնաբանության վրա: Նա Տավրոսյան լեռների նկարագրության մեջ Պարիադրեսյան և Մոսքական լեռները հաջորդաբար նշում է որպես Կերաունյան լեռնագրական ընդհանուր միավորի առանձին լեռնաշղթաներ[507]: Հրատարակիչները, հիմք ընդունելով անտիկ պատմական աշխարհագրության բառարանագիր Վ. Սմիթի կարծիքը, նշում են, որ Պլինիոսը, Կերաունյան լեռներ ասելով, նկատի է ունե-

---

502 Տե՛ս նույն տեղում:

503 Տե՛ս նույն տեղում, ծանոթ. 90:

504 Տե՛ս նույն տեղում, էջ 17, ծանոթ. 62:

505 Տե՛ս նույն տեղում:

506 Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Մալխասյան Մ.,** Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմանները՝ ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության», էջ 41-48:

507 Տե՛ս **Pliny the Elder,** Vol. I, V, 27, p. 454:

ցել Կովկասյան լեռները՝ ճիշտ այնպես, ինչպես նրա սկզբնաղբյուրներից հռոմեացի աշխարհագետ Պոմպոնիոս Մելան (մոտ 15-45 թթ.)[508], մինչդեռ Ստրաբոնը այդպես է անվանում Կովկասյան լեռնաշղթայի միայն արևելյան հատվածը[509]: Թեպետ Պլինիոսը սխալվում է՝ Կերաունյան լեռները Տավրոսյան համակարգի մասը համարելով, սակայն նա, փաստորեն, կրկնում է Ստրաբոնից եկող այն միտքը, որ Կովկասյան լեռներից ճյուղավորվող Մոսքական, Պարիադրեսյան և այլ լեռնաշղթաները տարածվում են դեպի հարավ:

Առավել հետաքրքրական է Պլինիոսի տեղորոշիչ հիշատակությունը Մոսքի երկրի մասին: Նա նշում է, որ Պոնտոսի արևելյան հատվածում գտնվող արմենոխալյուբներից հետո՝ մինչև Կյուրոսի (Կուրի) վտակ Իբերոս գետը, ծավալվում էր Մոսքի երկիրը[510]: Տվյալ դեպքում Իբերոս գետը երկրամասի արևելյան սահմանն է: Գետի անվանումն իսկ հուշում է, որ գործ ունենք Իբերիայի՝ Վիրքի, մասնավորապես՝ նրա արևմտյան եզրագծի հետ նույնականացվող բնական սահմանի հետ:

Գետի տեղորոշման համարձակ փորձ է Ռ. Թալբերտի պատմաաշխարհագրական աշխատության մեջ Փարվանա (հրատարակության մեջ նշված է վրացական ձևով՝ Փարավանի) գետի հետ համապատասխանեցումը[511], սակայն սա

---

508 Պոմպոնիոս Մելայի աշխատության մասին տե՛ս **Romer F.,** Pomponius Mela's Description of the World, An Arbor: The University of Michigan Press, 1998:

509 Տե՛ս **Pliny the Elder,** Vol. I, pp. 454-455, note 4:

510 Տե՛ս **Pliny the Elder,** Vol. II, VI, 11, p. 21:

511 Տե՛ս "Map-by-Map Directory to Accompny Barrington Atlas of the Greek and Roman World", edited by R. Talbert, Princeton University Press, 2000, p. 1260:

ակնհայտորեն Մեծ Հայքի և Կողքիսի կամ Վիրքի միջև սահմանը դեպի հարավ իջեցնելու փորձ է, քանի որ Փարվանա գետը Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանագիծ հանդիսացող Մոսքական լեռներից հարավ է: Թեև չենք կարող հստակ տեղորոշել Իբերոս գետը, սակայն ներկայացված հիշատակությունից ակնհայտ է դառնում, որ Մոսքի երկիրը, ըստ Պլինիոսի, Վիրքի կազմում չէ:

Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանագիծը Մոսքական լեռների երկայնքով ներկայացնող վերջին հեղինակը Պտղոմեոսն է. «[Մեծ Հայքը սահմանակից է – Մ. Մ.] արևմուտքում Եփրատի [երկայնքով – Մ. Մ.] նշված հատվածով Կապադովկիային և Կապադովկիական Պոնտոսի մի մասին՝ մինչև Կողքիս՝ Մոսքական լեռների գծով»[512]: Այսպիսով՝ Մոսքական լեռների երկայնքով ձգվող սահմանը կրկնվում է և՛ Ստրաբոնի, և՛ Պլինիոս Ավագի, և՛ Պտղոմեոսի հիշատակություններում:

Մեծ Հայքի «պտղոմեոյան» սահմանների վերակազմության ուղղությամբ մեծ է Ս. Երեմյանի ներդրումը: Նա Պտղոմեոսի ներկայացրած տվյալների հիման վրա Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանը վերակազմելիս նշում է, որ սահմանագիծն անցնում էր Եփրատից հյուսիս-արևելք տարածվող Մոսքական լեռներով՝ մինչև Կողքիս[513]: Նա գտնում է, որ Պտղոմեոսի «Ասիայի երրորդ քարտեզում» Մեծ Հայքը ներկայացված է ըստ մինչև 37 թվականն ունեցած սահմանների[514]: Նրա կարծիքով Պտղոմեոսի մոտ Մեծ Հայքի հյուսիսում հիշատակվող Գոսարենե (Տոսարենե) նահանգը Գողերձական կու-

---

[512] **Claudius Ptolemy,** § 5.13.2.
[513] Տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 839:
[514] Տե՛ս նույն տեղում, էջ 721 (ծանոթ. 51):

սակալությունն է, որը, ըստ նրա, 37 թ. հռոմեա-պարթևական պայմանագրով տրվել է Վիրքի թագավորությանը, ուստի կուսակալության հիշատակումը Մեծ Հայքի կազմում նշանակում է, որ Պտղոմեոսը ներկայացնում է մինչև 37 թվականը գոյություն ունեցած պետական սահմանները[515]: Նրա այս ձևակերպումը հակասություն է ստեղծում իր իսկ կողմից արված մեկ այլ դիտարկման հետ: Ս. Երեմյանը նաև նշում է, որ Եփրատ գետը բաժանում էր Մեծ Հայքը Կապադովկիայի կազմում գտնվող Փոքր Հայքից, քանի որ Պտղոմեոսը որպես պրովինցիա-վարչամիավոր հիշատակում է ոչ թե Փոքր Հայքը, այլ՝ Կապադովկիան[516]: Իսկ Ս. Երեմյանի նշած ժամանակաշրջանում Փոքր Հայքն ինչպե՞ս կարող էր համարվել Կապադովկիայի մաս:

Փոքր Հայքի խնդիրը կարող է բացատրվել հետևյալ կերպ. Հռոմի Վեսպասիանոս կայսեր (69-79 թթ.) օրոք՝ 72 թ., Փոքր Հայքը կորցնում է թագավորության կարգավիճակը և վերածվում Հռոմեական կայսրության սովորական երկրամասի՝ ընդգրկվելով Կապադովկիա պրովինցիայի կազմում[517], հետևա-

---

[515] Տե՛ս նույն տեղում, էջ 725:

[516] Տե՛ս նույն տեղում, էջ 839:

[517] Տե՛ս **Երեմյան Ս.,** Տրայանոսի արշավանքը և Հայաստանը, ՀԺՊ, հ. I, էջ 768-769: **Բաղալյան Գ.,** Հայկական լեռնաշխարհը, Հայոց պատմություն. դասագիրք բուհերի համար, խմբ.՝ Հ. Սիմոնյանի, Երևան, 2012, էջ 13: Ուշագրավ է, որ Փոքր Հայքի ուսումնասիրությամբ հիմնովին զբաղված Ն. Ադոնցը թագավորության լուծարումը չի թվագրել՝ բավարարվելով միայն Վեսպասիանոսի ժամանակաշրջանը նշելով (տե՛ս **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, թարգմ. 1908 թ. ռուսերեն հրատարակությունից՝ Ա. Խոնդկարյանի և Է. Խոնդկարյանի, խմբ.՝ Շ. Սմբատյանի, Երևան, 1987, էջ 81): Նույն կերպ են վարվել նաև Ա. Բոլտունովան և Գ. Սարգսյանը (տե՛ս

բար կարծում ենք, որ տրամաբանական է Պտղոմեոսի կողմից Փոքր Հայքի ուղղակի հիշատակության բացակայությունը Մեծ Հայքի արևմտյան սահմանին, և դժվար է համաձայնել 37 թ. դրությամբ սահմանը թվագրելու մոտեցմանը: Մի շարք հանգամանքներ խոսում են այն տեսակետի օգտին, որ երկում ներկայացված վարչաքաղաքական կացությունը մոտավորապես մեկ դար անց եղած իրողություններն է արտացոլում:

Նախ և առաջ նույն Ս. Երեմյանը Պտղոմեոսի՝ Ասիայի երրորդ քարտեզի բնույթի մասին խոսելիս նշում է, որ Պտղոմեոսն օգտագործել է Պլինիոս Ավագի կողմից ներկայացված սահմանաբաժանումը. «… Ցույց է տալիս Մեծ Հայքը նույն սահմաններում, չնայած, որ նա իր ձեռքի տակ ունեցել է նաև նախքան 37 թվականի համաձայնագիրը Մեծ Հայքի թագավորության քաղաքական սահմաններին վերաբերող նյութեր»[518]: Մեջբերված հատվածում հանդիպող «նաև» բառի առկայությունը և Պլինիոսին հղում կատարելը ցույց են տալիս, որ մեծանուն պատմաբանը Պտղոմեոսի երկում Մեծ Հայքի ոչ բոլոր սահմանների նկարագրությունն է համարում մինչև 37 թվականը եղած դրության արտացոլումը: Նրա այս և Գոսարենե նահանգի առնչությամբ ունեցած տեսակետների համադրությամբ կարելի է եզրակացնել, որ, ըստ նրա, Մեծ Հայքի՝ կոնկրետ հյուսիսարևմտյան սահմանն է տեղորոշված մինչ նշված թվականը:

Ժամանակագրական առումով 37 թվականից հետո Մեծ Հայքի սահմանները ներկայացրած ամենամոտ հեղինակը

Болтунова А., Саркисян Г., Армения Малая, в “Большая советская энциклопедия”, т. 2, М., 1970, с. 212):

[518] ՀԺՊ, հ. I, էջ 838-839:

Պլինիոս Ավագն է: Թեպետ Ս. Երեմյանը կարծում է, որ Պտղոմեոսի «Աշխարհագրության» աղբյուրագիտական հիմքը կառուցվում է Պլինիոսի «Բնական պատմության» վրա, սակայն թեկուզև միայն վարչատարածքային բաժանման համակարգերի տարբերությունը հուշում է, որ գործ ունենք տարբեր ժամանակահատվածների հետ:

Արշակունյաց արքայատոհմի հաստատումից կարճ ժամանակ անց Մեծ Հայքի թագավորության վարչատարածքային բաժանման սկզբունքը փոփոխության է ենթարկվել[519]: «Ստրատեգիա» կոչվող «պլինիոսյան» 120 պրեֆեկտուրաների[520] խոշորացմամբ ի հայտ են եկել «պտղոմեոսյան» 21 նոր վարչամիավորները, այդ թվում՝ 20 աշխարհները (նահանգները) և մեկ տարածք «Զեռին իշխանության տունն թագավորի Հայոց» (Հայոց թագավորի ձեռական իշխանություն, Հայկական Ատրպատական, Ատրպատիճք)[521], այսինքն՝ արքայական ժառանգական տիրույթը: Այս նոր համակարգն առաջին անգամ նկարագրված է հենց Պտղոմեոսի երկում, իսկ Պլինիոսին այն անծանոթ է:

Թեև Պլինիոսն իր երկի շարադրումն ավարտել է 77 թ., սակայն իր իսկ հաղորդած տեղեկություններով Մեծ Հայքի թագավորության տարածքն ուսումնասիրել և քարտեզագրել է Հռոմի Կլավդիոս կայսեր (41-54 թթ.) հրամանով[522]: Բացի այդ՝ նա նշում է, որ ձեռքի տակ է ունեցել Հայաստանի ուղղությամբ

---

519 Տե՛ս նույն տեղում, էջ 839-840:

520 Տե՛ս **Pliny the Elder,** Vol. II, VI, 10, p. 19-20:

521 Տե՛ս **Փաւստոսի Բիւզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, բնագիրը՝ Ք. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 194, 214: **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, քնն. բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983, էջ 468:

522 Տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 837:

արշավանքի ժամանակ Կորբուլոնի կողմից կազմված քարտեզ[523]: Դասականության անգլիացի ուսումնասիրող Ջ. Սենդիսն այս առիթով գրում է. «Նա [իմա՝ Պլինիոսը – Մ. Մ.] նշում է Հայաստանի և Կասպից ծովի մերձակայքի քարտեզը, որ Հռոմ է ուղարկվել Կորբուլոնի անձնակազմի կողմից մ.թ. 58 թ.»[524]: Այստեղից պարզ է, որ Պլինիոսը ներկայացնում է Մեծ Հայքի թագավորության սահմանները և վարչատարածքային բաժանումը մինչև Արշակունյաց հարստության առաջին արքաների կողմից կատարված վարչաքաղաքական վերափոխումները, իսկ Պտղոմեոսը, դրանց արդեն ծանոթ լինելով, չէր կարող մի դեպքում ներկայացնել մինչև 37 թվականը եղած իրողությունները, մեկ այլ դեպքում էլ՝ Արշակունյաց Հայաստանին բնորոշ երևույթները:

Նշյալ թվականի առնչությամբ Ս. Երեմյանի դիտարկման երկիմաստությունը հստակեցնելու համար պարզապես պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Կապադովկիան Հռոմի պրովինցիայի է վերածվել դեռևս 17 թ., իսկ Հռոմից կախյալ Պոդեմոնական Պոնտոսի թագավորությունը լուծարվել է 64 թ., մինչդեռ Փոքր Հայքը I դարում թագավորություն է եղել մինչև 72 թվականը[525]: Այս տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ Պտղոմեոսը, այս բոլոր տարածքները ներկայացնելով Կապադովկիայի ներքո, վերը նշված թվականներից հետո՝ Արշակունյաց արքայատոհմի գահակալու-

---

523 Տե՛ս **Pliny the Elder,** Vol. II, VI, 15, p. 26:

524 **Sandys J.,** Pliny, the Elder, in “Encyclopædia Britannica”, Vol. 21, 11th edition, Cambridge University Press, 1911, p. 842:

525 Տե՛ս **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը (I-III դդ.), քարտեզ, մասշտաբ՝ 1:3 400 000, Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, էջ 837:

թյան շրջանում, առկա վարչաքաղաքական իրավիճակն է ներկայացնում: Ինչ վերաբերում է վրացագիտությունից հայագիտության մեջ ներթափանցած խնդրին՝ 37 թ. Վիրքին փոխանցված տարածքների տեղորոշմանը, ապա սա չի հաստատվում որևէ սկզբնաղբյուրի տվյալներով:

Ս. Երեմյանը Պտղոմեոսի հիշատակած Գոսարենեն նույնացնում է Ստրաբոնի ներկայացրած Մոսխիկեին՝ դրանք, ինչպես արդեն նշել ենք, հավաքականորեն անվանելով Գոդերձական կուսակալություն, որը, նրա կարծիքով, 37 թ. անցել է Վիրք-Իբերիային[526]: Նախ առաջինը՝ սկզբնաղբյուրներում նման կուսակալություն չի հիշատակվում, իսկ երկրորդը՝ Ստրաբոնը Մոսքիկեն նկարագրում է Կողքիսին և ոչ թե Վիրքին վերաբերող հատվածում, թեպետ նա նաև երեք էթնիկ գոտիներ է նշում: Բացի այդ՝ Ս. Երեմյանը կարծում է, որ ենթադրյալ կուսակալությունը՝ որպես առանձին գավառ, գտնվել է Պարիադրես լեռների ստորոտին և Գուգարքի ու Խորձյանի հետ Ք.ա. III դարավերջին անցել Վիրքին, այնուհետև Արտաշես I-ի օրոք (Ք.ա. 189 - մոտ 160 թթ.) վերստին ներառվել է Մեծ Հայքի կազմում[527]: Այդուհանդերձ, Մոսքիկեն ոչ թե այդ լեռների ստորոտին է, այլ դրանցից հյուսիս-արևելք՝ նույնանուն լեռների շրջանում է, իսկ իր նշած ստորոտի հատվածը հենց Խորձյանն է: Համադրելով սկզբնաղբյուրների տվյալները՝ կարծում ենք, որ Պտղոմեոսի հիշատակած Գոսարենեն ընդգրկել է ոչ միայն Գուգարք նահանգի տարածքները, այլև ծավալվել է հյուսիս՝ ներառելով նաև Մոսքիկեի այն հատվածը, որը զբաղեցրել է Մոսքական լեռներից հարավ և հարավ-

---

[526] Տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 720, ծանոթ. 47:

[527] Տե՛ս **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 59:

արևելք գտնվող տարածքները: Բացի այդ՝ արևմտյան ուսումնասիրողները 37 թ. հռոմեա-պարթևական պայմանագրով Մեծ Հայքի տարածքային փոփոխություններ չեն առանձնացնում և այդ հարցը առկախված են համարում[528]: Նման պարագայում որտեղի՞ց է գալիս 37 թ. վարկածը:

Ս. Երեմյանի տեսակետի հիմքում խորհրդային վրացագիտությունից ներմուծված կոնցեպտուալ մոտեցումներն են: Պատահական չէ, որ 37 թ. պայմանագրով տարածքային ենթադրյալ փոփոխությունների առիթով նա նախ հղում է վրացի հեղինակ Գ. Մամուլիային[529], այնուհետև՝ նշում Ն. Բերձենիշվիլու այն միտքը, որ մինչև նշված թվականը Կուրի ափին գտնվող Դվիրի գյուղի մոտ է իբրև թե եղել Մեծ Հայքի և Վիրքի սահմանը[530]: Ս. Երեմյանը հավաստի չի համարում անտիկ պատմիչ Տակիտոսի այն տեղեկությունը, որ Մեծ Հայքում պարթևա-հայ-հռոմեական պատերազմում հռոմեական բանակի հաջողությունից հետո՝ մոտ 60 թ., Մեծ Հայքի՝ Վիրքին սահմանակից շրջանների մի մասը կարճ ժամանակով տրվել է վրաց թագավոր Փարսմանին, այլ հղելով Գ. Մելիքիշվիլուն[531]՝ մեջբերում է. «… Տարածքային այս անջատումը Հայաստանից պիտի տեղի ունենար արդեն 37 թ. (թերևս նույնիսկ մ.թ. I դարի սկզբներին), երբ վրացական արքունիքը ակնկալություն ուներ հայկական գահին: Այս ժամանակաշրջանից

---

528 Տե՛ս **Ziegler K.,** Die Beziehungen zwischen Rom und dem Partherreich, Wiesbaden, 1964, pp. 48-64 (n. 62):

529 Տե՛ս **Мамулия Г.,** Предания о Сумбате Бибритиане, как источник Леонтия Мровели, “Вопросы древней истории (Кавказско-ближневосточный сборник)”, III, Тбилиси, 1970, с. 147-163:

530 Տե՛ս ՀԺՊ, h. I, էջ 720:

531 Տե՛ս **Меликишвили Г.,** К истории Древней Грузии, Тбилиси, 1959, с. 353-354:

պետք է Իբերիան՝ վրաց թագավորությունը, ելք ունենար Պոնտական ծովի ափին՝ Ճորոխի գետաբերանի շրջանում»[532]: Այն դեպքում, երբ նշված իրադարձությունների վերաբերյալ միակ պատմական սկզբնաղբյուրը Կոռնելիուս Տակիտոսի երկն է, նրա տեղեկությունների նկատմամբ նման անվստահությունը տարօրինակ է: Բացի այդ՝ անտիկ հեղինակներ Ստրաբոնը և Պտղոմեոսը Մոսքիկեում հստակորեն չեն նշում ինքնուրույն էթնոնիմ՝ ցեղանուն, ավելին՝ Ստրաբոնը նշում է էթնիկ երեք գոտիները, որտեղ երկրամասի անվանակիր էթնոս չկա: Սակայն Ս. Երեմյանը Տակիտոսի տեղեկությունները մեկնաբանելիս նշում է հետևյալը. «Մեսխերը այն քարթվելական ցեղն էր, որ 37 թվականի պայմանագրով Իբերիա-Վիրքին անցած Գոդերձական երկրի հիմնական ազգաբնակչությունն էր»[533]: Տակիտոսի նշյալ տեղեկությունը նա մեջբերում է հետևյալ կերպ. «Հռադամիզդին սպանելուց հետո առաջին անգամ մեր կողմը գրավված մոսխերը հարձակվեցին Հայաստանի հեռավոր վայրերի վրա: Այս ցեղն ուրիշներից ավելի հավատարիմ է հռոմեացիներին»[534]: Նշված հատվածը Ս. Երեմյանից առաջ՝ 1941 թ., գրեթե նույն կերպ է հրատարակվել Տակիտոսի երկի՝ Պ. Սոտնիկյանի կողմից կատարված հայերեն թարգմանության մեջ, որը նույնությամբ տեղ է գտել «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» 2011 թ. հրատարակության մեջ[535]:

---

[532] ՀԺՊ, հ. I, էջ 720, ծանոթ. 48:

[533] Նույն տեղում, էջ 733:

[534] Նույն տեղում:

[535] Տե՛ս ՀԺՊՔ, հ. 2, էջ 424: Հմմտ. **Tacitus,** The Annals: The Reigns of Tiberius, Claudius, and Nero, translated by J. Yardley, with an Introduction and Notes by A. Barrett, in the “Oxford World’s Classics” Series, New York: Oxford University Press, 2008, p. 289:

«Տարեգրության» (XIII, 37) բնագրային ձևակերպման հետքերով շարժվելով՝ մենք հանդիպել ենք մի ուշագրավ նյութի. Պ. Սոտնիկյանից և Ս. Երեմյանից տարիներ առաջ երկի այդ հատվածը հայերեն առաջինը թարգմանել է ականավոր պատմաբան Հ. Մանանդյանը: Նրա թարգմանության մեջ ստալինյան շրջանում վերափոխված «մոսքեր-մեսխեր» ձևակերպումը բացակայում է: Նա նշում է, որ 58 թ. Կարինի կողմից արևելք շարժվող Կորբուլոնը կարգադրում է Մեծ Հայք ներխուժել Կոմմագենեի Անտիոքոս թագավորին, Վիրքի Փարասման արքային, հենիոխներին և, հավանորեն, Փոքր Հայքի ու Ծոփքի նոր թագավորներին[536], իսկ Հռադամիզդի սպանությունից հետո Տակիտոսից մեջբերում է նույն հատվածը հետևյալ կերպ. «Եվ այդ ժամանակ առաջին անգամ մեր կողմը գրավված ինսոքները (insochi) – այս ցեղն ուրիշներից ավելի էր դաշնակից հռոմայեցիներին – ասպատակեցին Հայաստանի հեռավոր անկոխ վայրերը»[537]: Նա ցեղանվան այս և ևս մեկ հիշատակությունը ծանոթագրում է. «Տակիտոսի բնագիրն ունի Insochi (ինսոքներ) անճարված ընթերցվածը, որը սովորաբար կարդում են Moschi (մոսքեր): Սակայն M. Carry-ը Classical Review հանդեսում (XXV, 1911, էջ 107) մատնանիշ է արել, որ նույն ժողովրդի անունը հանդիպում է նաև Տակիտոսի այլ հատվածում (II, 68), և վերոհիշյալ Insochi ընթերցվածը պետք է, հավանորեն, կարդալ Heniochi. տե՛ս Cambridge Ancient History, Vol. X, էջ 880»[538]: Հետևելով մեծանուն պատմաբանի ծանոթագրությանը՝ մենք ընթերցել ենք 1911 թ. գրախոսությունը[539], որտեղ,

---

[536] Տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 328-329:

[537] Նույն տեղում, էջ 330:

[538] Նույն տեղում, էջ 329:

[539] Տե՛ս **Caspari M.,** Note on Tacitus, *Annals* XIII.37.4, “The Classical Review”, Vol. 25, Issue 4, June 1911, p. 107-108:

իսկապես, նշված է սկզբնաղբյուրի տարբնթերցման ճշգրտման այն տարբերակը, որն ընդունելի է համարել Հ. Մանանդյանը: Նույնը տեղ է գտել անտիկ ժամանակաշրջանի պատմության քեմբրիջյան հրատարակության նախորդ խմբագրության մեջ[540]: Հատկանշական է, որ Բ. Հարությունյանը Պլինիոսի տվյալներով Մեծ Հայքի քարտեզի վերակազմության մեջ ևս նշում է հենիոխներին, այն էլ՝ Պարիադրեսից հյուսիս՝ մինչև Սև ծով[541]: Այս տեղորոշումը տրամաբանական է, եթե նկատի ենք ունենում Տակիտոսի կողմից հիշատակված նրանց հարձակումները Մեծ Հայքի վրա:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ բացարձակապես անհիմն ենք համարում Մոսքիկեի դուրսբերումը Մեծ Հայքի կազմից 37 թվականով թվագրելը: Այստեղ կա ևս մեկ կարևոր հանգամանք. Գ. Մելիքիշվիլու և Ս. Երեմյանի ենթադրությամբ իբրև թե Վիրքին տրված հայկական տարածքում Պտղոմեոսը հիշատակում է Ասկուրա (Աձղուր) բնակավայրը[542]: Սա միանշանակ փակում է խնդրի շուրջ քննարկումը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, Պտղոմեոսը նկարագրում է Մեծ Հայքը Արշակունյաց ժամանակաշրջանի սկզբնահատվածում: Հատկանշական է, որ Բ. Հարությունյանը «Հայաստանի պատմության ատլասում» այդ տարածքային գոտին գծա-

---

[540] Տե՛ս “The Cambridge Ancient History”, Vol. X: The Augustan Empire 44 B.C. – A.D. 70, edited by S. Cook, F. Adcock, M. Charlesworth, Cambridge: Cambridge University Press, 1934, p. 761: Բացատրությունը տե՛ս **Anderson J.,** Two Points of Armenian Topography, in “The Cambridge Ancient History”, Vol. X, Note 5, p. 880:

[541] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Հայաստանն ըստ Պլինիոս Ավագի «Բնապատմության». քարտեզ, մասշտաբ՝ 1:7 200 000, Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, էջ 26:

[542] Տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.13.10:

նշում է և անվանում «Նախկինում Մեծ Հայքին պատկանած տարածքներ»[543], իսկ «Հայաստանի ազգային ատլասում» այդ տարածքը պատկերում է Մեծ Հայքի սահմաններում՝ Աձղուր բնակավայրի տեղորոշմամբ[544]: Հյուսիսարևմտյան սահմանագիծը նույն կերպ են ներկայացնում նաև արևմտյան բազմաթիվ հետազոտողներ[545]:

Պտղոմեոսի երկում Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանի առնչությամբ տեղեկության ենք հանդիպում նաև Կապադովկիայի մասին հատվածում, որտեղ նշվում է, թե սահմանագիծը Մոսքիկոս լեռների երկայնքով ձգվում էր դեպի 73°00' 44°30' եզրակետը, որտեղից շարժվում է դեպի Ճորոխի գետաբերանը[546]: Նշված կոորդինատները վերահաշվարկելով Պտղոմեոսի աշխարհագրական երկի ռուս հետազոտող Դ. Շչեգլովի մաթեմատիկական մոդելավորման ժամանակակից մեթոդներով, դիտարկելով Հայաստանի հարևանությամբ գտնվող մի քանի քաղաքների աշխարհագրական երկայնությունների վերահաշվարկները[547]՝ մենք գտնում ենք, որ հյուսի-

---

543 **Հարությունյան Բ.,** Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» (II դար). քարտեզ, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, էջ 34:

544 Տե՛ս **Հարությունյան Բ.,** Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության». քարտեզ, Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, էջ 26:

545 Տե՛ս **Bauer S.,** The History of the Ancient World: from the Earliest Accounts to the Fall of Rome, New York- London, W. W. Norton & Company Inc., 2007, p. 719, 752; **Scarre Ch.,** The Penguin Historical Atlas of Ancient Rome, London: The Penguin Group, Swanson Publishing Limited, 1995, p. 61; **Galichian R.,** A Glance into The History of Armenia: through Cartographic Records, London: Bennet and Bloom, 2015, p. 21:

546 Տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.6.1:

547 Տե՛ս **Shcheglov D.,** The Error in Longitude in Ptolemy's *Geography* Revisited, "The Cartographic Journal". Published by The British Cartographic Society, March 2014, DOI: 10.1179/1743277414Y.0000000098, pp. 10-12:

սարևմտյան սահմանը Մոսքական լեռների երկայնքով արևմուտքում հասել է մինչև մոտավորապես 41,71°, այսինքն՝ ներկայիս Բաթում քաղաքից (41,781°) մի քանի (8-10) կիլոմետր հեռավորության վրա՝ Ճորոխի ստորին հոսանքի շրջանը: Բանն այն է, որ, օրինակ, Փասիս (Ռիոն) գետի գետաբերանի երկայնությունը Պտղոմեոսի մոտ 72,5° է, իսկ իրականում՝ 41,636°, այսինքն՝ շեղումը 1,7413 անգամ է[548]: Նրանից զգալիորեն հարավ-արևմուտք գտնվող Մծբինի (ռուս հեղինակի աշխատանքում՝ Նիսիբիս) երկայնությունը Պտղոմեոսի մոտ 75,17° է, իսկ իրականում՝ 41,217°, այսինքն՝ շեղումը 1,8238 անգամ է[549]: Արևելք-արևմուտք աշխարհագրական հարաբերակցության տեսանկյունից նրանց միջև գտնվող Տրապիզոնի դեպքում շեղումը 1,7806 անգամ է[550]: Բերված օրինակներից ակնհայտ է, որ արևմուտքից արևելք ուղղությամբ շեղումը նվազում է: Օգտագործելով մոդելավորման ներկայացված մոտեցումները և Պտղոմեոսի կոորդինատների տվյալները՝ ստացել ենք 1,75 շեղման գործակիցը:

Նույն մոտեցումը կիրառելով Ասկուրայի պարագայում՝ վերահաշվարկել ենք Պտղոմեոսի հիշատակած 74°00' 44°10' կոորդինատները[551]: Այստեղ շեղումը ներկայիս Ախալցխայի շրջանի Ածղուր գյուղի տեղադրությունից (43°09') 1,715 անգամ է, ինչը հաստատում է Բ. Հարությունյանի կողմից կատարված տեղորոշման ճշգրտությունը:

---

[548] Տե՛ս նույն տեղում, էջ 10:
[549] Տե՛ս նույն տեղում, էջ 12:
[550] Տե՛ս նույն տեղում, էջ 10:
[551] Տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.13.10:

Պտղոմեոսի երկում Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանի վերաբերյալ տեղեկություն ենք հանդիպում նաև Կողքիսի մասին հատվածում: Այստեղ Կապադովկիական Պոնտոսի հետ սահմանը, ելնելով Կապադովկիա պրովինցիայի հյուսիսարևմտյան սահմանագծի և տարածքների վերաբերյալ նկարագրությունից, անցնում էր Ապսարոսի (Ճորոխի) գետաբերանից մինչև Մոսքիկյան լեռներ՝ մինչև 73° 44°30' տեղադրությամբ եզրակետը, այնուհետև՝ Սկոդիսես լեռներով մինչև Եփրատի հուն այն հատվածից, որտեղից դեպի արևմուտք ճյուղավորվում է Անտիտավրոսի լեռնաշղթան[552]: Այստեղ, փաստորեն, կրկնվում է Կապադովկիային վերաբերող հատվածում տրված նկարագրությունը:

Այսպիսով՝ Մեծ Հայքի՝ Ստրաբոնի, Պլինիոսի և Պտղոմեոսի երկերում հիշատակվող հյուսիսարևմտյան սահմանները նույնությամբ կրկնում են միմյանց:

Այսպիսով՝ Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում Մոսխիկեի՝ առնվազն կենտրոնական և հարավային հատվածները, որոնք հյուսիսում և հյուսիս-արևմուտքում եզերվում էին Մոսքական (Մոսքիկյան) լեռներով, ներառված էին Մեծ Հայքի պետական սահմաններում: Դա հաստատվում է ոչ միայն նրանով, որ Պտղոմեոսի և անտիկ մյուս հեղինակների տվյալներով պետական սահմանագիծը եզերվում էր Մոսքիկյան լեռներով, այլև նրա ներկայացրած աշխարհագրական կոորդինատների վերահաշվարկներով: Բացի այդ՝ պարզվեց, որ հայագիտության մեջ գերիշխող այն տեսակետը, թե 37 թվականից հետո նշված տարածքները երբևէ չեն եղել Մեծ Հայքի

[552] Տե՛ս **Claudius Ptolemy,** § 5.10.3:

կազմում և եղել են Վիրքի մասը, ներթափանցել է խորհրդային վրացագիտությունից և չի համապատասխանում նրանում հղված անտիկ հեղինակներ Ստրաբոնի ու Տակիտոսի երկերում եղած հիշատակություններին: II դարի առաջին կեսին գրված երկում շատ հստակորեն նշված է, որ քննարկվող տարածքներում գտնված Ասկուրա բնակավայրը եղել է Մեծ Հայքի Կոտարզենե նահանգի կազմում, հետևաբար սա ևս մեկ անգամ ուղղակիորեն հաստատում է այն փաստը, որ Պտղոմեոսի ժամանակաշրջանում Մոսքիկեի կենտրոնական և հարավային շրջանները եղել են Մեծ Հայքի կազմում:

ПРОБЛЕМА СЕВЕРО-ЗАПАДНОЙ ГРАНИЧНОЙ ЛИНИИ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ВДОЛЬ МОСХИКСКИХ ГОР (ПО “ГЕОГРАФИИ” КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ)

Целью данной статьи является исследование проходящей по Мосхикским горам части северо-западной границы Царства Великой Армении, представленной в “Географии” Клавдия Птолемея (том II, книга V, глава XIII). Это исследование важно для уточнения государственной границы царства в первой половине II в., а также для выяснения историко-географических взаимодействий между Великой Арменией, Колхидой и Иберией.

Для достижения указанной цели мы поставили задачу выяснить птолемейевские особенности представления граничной линии по Мосхикским горам, сопоставить их с данными Страбона и Плиния Старшего, проанализировать наблюдения граничной линии в предыдущих исследованиях и достичь собственных заключений.

Руководствуясь методами исторического сравнения и анализа, мы не только сравнили данные с другими первоисточниками (с «Географией» Страбона и «Натуральной историей» Плиния Старшего), но еще и пересчитали данные географических координатов западного предела Мосхикских гор и населененного пункта Аскура в области Котарзене, представленные Птолемеем.

В заключении, мы пришли к тому выводу, что в представленной Птолемеем картографической системе северо-западная граничная линия

Великой Армении действительно проходила по Мосхикским горам, таким образом влючая в состав царства территории находящиеся южнее этих гор. Этот район входил в состав области Котарзене, на севере которого Птолемей отмечает город Аскура. Таким образом, доминирующая в арменологии точка зрения, что эти территории не входили в состав Великой Армении после 37 г., не соответствует действительности и должна быть кардинально пересмотрена.

THE PROBLEM OF THE NORTH-WESTERN BORDERLINE OF GREATER ARMENIA ALONG MOSCHIKIAN MOUNTAINS (ACCORDING TO CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY")

The purpose of this article is to investigate the part of the north-western borderline of Greater Armenia along the Moschikian Mountains, presented in Claudius Ptolemy's "Geography" (volume II, book V, chapter XIII). This investigation is important not only for clarifying the state borders of the kingdom in the first half of the 2nd century, but also for displaying some points of the historical-geographic relations between Greater Armenia, Colchida, and Iberia.

For the mentioned purpose of the investigation, we have put forward the following objectives: clarification of the Ptolemaic respresentation characteristics of the borderline along the Moschikian Mountains; their comparison with the data presented by Strabo and Pliny the Elder; the analysis of the observation of the borderline in the prior investigations; in the end, reaching our own final conclusions.

Using the method of historical-comparative analysis, we have compared Ptolemy's data with other primary sources such as Strabo's "Geography" and Pliny the Elder's "Natural History." In addition, we have recalculated the geographic coordinates of the western limit of the Moschikian Mountains and Askoura, a settlement in Kotarzene province presented by Ptolemy.

In conclusion, we have come to a point that the north-western borderline of Greater Armenia did really cross along the Moschikian Mountains in Ptolemy's cartographic system. Thus, the kingdom included territories south to the mentioned mountains. The region was a part of Kotarzene province, and the city of Askoura was allocated in its northern part. Therefore, the dominant viewpoint in the Armenian studies that the mentioned territories were excluded from the borders of Greater Armenia after 37 AD, do not match the reality and must be radically revised.

ՄԱՍ Բ

ԱՆՏԻԿ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՀԵԿԱՏԵՈՍ ՄԻԼԵԹԱՑԻ

Հեկատեոս Միլեթացին (Ք.ա. մոտ 550-476 թթ.) հույն ավագ լոգոգրաֆներից ամենանշանավորը դարձավ: Նա հեղինակել է «Ծագումնաբանություն» և «Երկրի նկարագրություն» աշխատությունները, որոնք մեզ չեն հասել: Հեկատեոս Միլեթացու գործերից միայն պատառիկներ են պահպանվել, այն էլ՝ մեջբերումների և վկայակոչումների ձևով, հետագա հեղինակների գործերում[553]:

Ստեփանոս Բյուզանդացու[554] «Էթնիկա» աշխատության էջերում պահպանվել է Հեկատեոս Միլեթացու՝ հայերին վերաբերող մեզ հասած միակ տեղեկությունը: Այն կապվում է Պոնտոսում բնակվող խալիբների (խալյուբների) ցեղի հետ: Խալիբների մասին մի շարք հեղինակների տեղեկությունները ներկայացնելուց հետո Ստեփանոս Բյուզանդացին վկայում է,

---

553 Հեկատեոս Միլեթացու կյանքի և գործունեության մասին տե՛ս **Diels H.,** Herodotos und Hekataios, "*Hermes",* 22, 1887, pp. 411-444; **Pearson L.,** I., C., *Early Ionian Historians*, Oxford, 1939; **Nenci G.,** *Hecataei Milesii Fragmenta*, Biblioteca di Studi Superiori 22, Florence, 1954; **Felix Jacoby,** *Griechische Historiker*, Stuttgart, 1956, pp. 185-237 և այլն:

554 Ստեփանոս Բյուզանդացին (հայտնի է նաև որպես Ստեփանոս Ալեքսանդրացի) VI դարի մատենագիր է: Նրա հեղինակած «Էթնիկա» աշխատությունն էթնոաշխարհագրական բառարան է, որը գրված է անցյալի հեղինակներից քաղված հարուստ նյութերի հիմամբ: Աշխատանքն առավել արժևորվում է այն պատճառով, որ այդ հեղինակների զգալի մասի գործերը չեն պահպանվել (ինչպես այս պարագայում):

որ ըստ Հեկատեոս Միլեթացու՝ հայերը բնակվել են նրանցից հարավ: Այսինքն՝ ըստ Հեկատեոս Միլեթացու վկայության՝ Ք.ա. VI-V դարերում հայերը բնակվել են Պոնտական լեռներից հարավ ընկած տարածքում:

Հեկատեոսը (որ նրանց կոչում է) ոչ թե խալիբներ, այլ՝ խալիբոյներ, (գրում է). «Խալիբոյներից հարավ բնակվում են հայերը»[555]*:*

[555] **Müller Ch.,** Fragmenta historicum Graecorum, t. I, Paris, M DCCC XLI (1841), p. 13, fragm. 195 (էլեկտրոնային տարբերակը՝ Digital fragmenta historicorum graecorum, http://www.dfhg-project.org); Stephani Byzantii, Ethnica (Recensuit germanice vertit adnotationibus indicibusque instruxit M. Billerbeck), Vol. V, Berlin, 2016, էջ 86-89:

ՀԵՐՈԴՈՏՈՍ

Համաշխարհային պատմագրության հոր պատվատիտղոսին արժանացած Հերոդոտոս Հալիկառնասցու տեղեկություններն անգերագնահատելի սկզբնաղբյուրներ են իր ժամանակաշրջանի աշխարհի մասին: Հերոդոտոսը Ք.ա. 455-445 թթ. ճանապարհորդել է բազմաթիվ երկրներում՝ Հունաստանում, Էգեյան ծովի կղզիներում, Փոքր Ասիայի պետություններում, Պարսկաստանում, Բաբելոնում, Պաղեստինում, Փյունիկիայում, Եգիպտոսում, Լիբիայում և այլ վայրերում, որոնցից հավաքած պատմական, ազգագրական, աշխարհագրական ու այլ նյութերը տեղ են գտել նրա կոթողային «Պատմություն» աշխատության էջերում[556]:

Հերոդոտոսի երկում խիստ կարևոր տեղեկություններ են պահպանվել նաև Հայաստանի և հայերի մասին: Իր ընթերցողներին Հերոդոտոսը տեղեկացնում է, որ Հայաստանը գտնվում է «Ասորեստանից վերև», և այդ երկրից են սկիզբ առ-

---

556 Հերոդոտոսի կյանքի և գործունեության մասին կա մեծածավալ գրականություն: Տե՛ս, օրինակ, **Лурье С. Я.,** Геродот, М.-Л., 1947; **Доватур А. И.,** Повествовательный и научный стиль Геродота, Л., 1957; **Дитмар А. Б.,** От Скифии до Элефантины. Жизнь и путешествия Геродота, М., 1961; **Hart J.,** Herodotus and Greek History, London, 1982; Herodotus and his World (ed. by P. Derow and R. Parker), Oxford, 2003; **Evans J. A. S.,** Herodotus, Boston, 1982; Суриков И. Е., Геродот, М., 2009 և այլն: Հայերեն ամփոփ կերպով՝ **Սարգսյան Գ. Խ.,** Պատմահայր Հերոդոտոսը, Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1986 գրքում, էջ 553-578:

նում Հալիս, Մեծ (Վերին) Զաբ և Եփրատ գետերը, ընդ որում՝ վերջինս կազմում էր Կիլիկիայի և Հայաստանի սահմանը: Տեղեկանում ենք, որ Ք.ա. V դարի կեսերին Հայաստանը գտնվում էր Աքեմենյան XIII սատրապության կազմում, ունենք վկայություններ Հայաստանից գանձվող հարկերի, երկրի տնտեսության ու առևտրի, սահմանների ու ճանապարհների, նաև զինված ուժերի մասին:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Աքեմենյան տերության «արքայական ճանապարհի» նկարագրությունը, որը տասնհինգ կայաններով հիսունվեց ու կես փարսախ (300-350 կմ) անցնում էր Հայաստանի տարածքով: Չափազանց ուշագրավ է Միլեթի տիրան Արիստագորասի՝ պղնձե տախտակի վրա արված քարտեզի նկարագրությունը և բացատրությունը, ինչն աշխարհի հնագույն քարտեզներից մեկն է: Հերոդոտոսի վկայությունը Հայաստանից Եփրատ գետով մինչև Բաբելոն կատարվող նավարկության մասին թույլ է տալիս եզրակացնել, որ այդ ժամանակ Հայաստանի հարավարևտյան սահմանում էին գտնվում Հայկական Տավրոսի հարավային լանջերը, ներառյալ՝ ապագա Կոմմագենեի տարածքը:

Հերոդոտոսի «Պատմության» լավագույն հրատարակություններից են՝ Геродот, История (пер. Г. А. Стратановского), Ленинград, 1972 (վերահրատ.՝ Москва, 1999); Herodotus: The Histories (tr. by Walter Blanco), New York, 2013; Herodotus, The Histories (tr. by Tom Holland), New York, 2013: Հայերեն թարգմանությունը՝ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1986:

Գիրք, I, 72

Մեդական և Լյուդիական թագավորությունների մեջ սահմանն էր Հալիս գետը[557], որը հոսում էր Արմենների լեռներից Կիլիկիայի միջոցով:

Գիրք, I, 180

Ահա այսպես կառուցվեց Բաբելոնի պարիսպը, իսկ քաղաքը բաժանված է երկու մասի, քանզի նրա միջով անցնում է մի գետ, որի անունն է Եփրատ: Այն հոսում է Արմենիայից, մեծ է, խոր ու արագահոս և թափվում Էրիթրեական ծովը[558]:

Գիրք, I, 194

Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից (Բաբելոնից) հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման: Նրանք ոչ նավի ետնամասում են լայնացնում, ոչ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում

---

[557] Մարաստանի (Մեդիա) և Լյուդիական տերությունների միջև Հալիս գետն իբրև սահման հաստատվել էր Ք.ա. 585 թ. տեղի ունեցած արեգակի հայտնի խավարումից հետո:

[558] Այս անվան տակ անտիկ հեղինակները հասկանում էին թե՛ Պարսից ծոցը, թե՛ Կարմիր ծովը:

այն և թողնում հոսանքն ի վար: Նրանք մեծ մասամբ փոխադրում են գինի կարմիր կարասներով: Նավերը վարում են երկու լայնաբերան թիակներով կանգնած երկու մարդ. նրանցից մեկը թիակը քաշում է դեպի իրեն, մյուսը՝ հրում իրենից: Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ[559] տարողություն: Յուրաքանչյուր նավի մեջ կա մեկ կենդանի գրաստ, իսկ խոշորների մեջ՝ մի քանիսը: Նավելով Բաբելոն հասնելուց և բեռը վաճառելուց հետո նրանք վաճառքի են հանում նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշիները բարձում են գրաստների վրա և վերադառնում արմենների մոտ: Քանզի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել՝ գետի արագության պատճառով: Այդ է պատճառը, որ նրանք նավերը պատրաստում են ոչ թե փայտից, այլ կաշվից: Նրանք, գրաստները քշելով, ետ են դառնում արմենների մոտ, նույն ձևով պատրաստում են ուրիշ նավեր:

Գիրք, III, 93

Պակտյուիկեից[560], Արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյան (Պոնտոս)[561] ստացվում էր 400 տաղանդ[562]. սա 13-րդ նահանգն էր:

---

559 Մեկ հունական (ատտիկյան) տաղանդը կշռում էր 26,2 կգ:

560 Ուսումնասիրողները հակված են նույնացնելու Կապադովկիայի հետ՝ նկատի ունենալով վերջինիս հնագույն՝ *Կատ-պատուկա* անվանաձևը:

561 Սև ծովի հնագույն անվանումներից է:

562 Պարսկական տաղանդը ներկայիս չափերով հավասար էր 32 կգ 640 գ արծաթի: Այսինքն՝ այս հարկը հավասար էր 13 տոննա 56 կգ արծաթի:

Գիրք, V, 49

«Լյուդիացիներից հետո դեպի արևելք,– շարունակում է Արիստագորասն իր պատմելը,– բնակվում են փռյուգները, որոնք ինձ հայտնի բոլոր մարդկանցից առավել հարուստ են իրենց հոտերով և բարեբեր հողերով: Նրանց հաջորդում են կապադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սյուրիացիներ: Սրանց սահմանակից են կիլիկեցիները, որոնք տարածվում են մինչև այն ծովը, որտեղ գտնվում է Կիպրոս կղզին: Սրանք արքային տալիս են տարեկան հինգ հարյուր տաղանդ հարկ: Այստեղ կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր ունեն: Արմեններից հետո, ահա այստեղ, բնակվում են մատիենները[563]: Հաջորդը, ահա, Կիսսիա երկիրն է, որտեղ Քոասպես գետի վրա գտնվում է ահա Սուզա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան, և որտեղ գտնվում են նրա գանձերը: Եթե նվաճեք այդ քաղաքը, ապա դուք հարստությամբ կարող եք համարձակորեն մրցել Զևսի հետ:

Գիրք, V, 52

Կապադովկիա մտնելով՝ ճանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը՝ քսանութ կայան՝ հարյուր չորս փարսախ[564]: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրունք և կողանցել երկու պահակային ամրություն: Դրանք անցնելուց

---

563 Մատիենե երկիրը գտնվել է Ուրմիո լճի ավազանի հարավում: Հերոդոտոսը Հայաստանը Կիլիկիայի և Մատիենեի միջև է ներկայացվում նաև «արքայական ճանապարհի» նկարագրության ընթացքում (տե՛ս հաջորդ քաղվածքը):

564 Մեկ փարսախը, ներկայիս չափերով արտահայտած, մոտ 5,5 կմ է:

հետո Կիլիկիայի միջով ճանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարսախ: Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի գետն է՝ անունը Եփրատ: Արմենիայում հիսունվեց ու կես փարսախ տարածության վրա կա տասնհինգ կայան՝ իջևանատներով, այնտեղ կա նաև պահակային ամրություն: Արմենիայից ճանապարհը մտնում է Մատիենե, որտեղ կա երեսունչորս կայան՝ հարյուր երեսունյոթ փարսախ տարածության վրա: Այս երկրի միջով հոսում են չորս նավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է: Երկրորդը և երրորդը համանուն են՝ Զաբատ[565], բայց նույն գետերը չեն և նույն վայրից չեն բխում, քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատիենեից:

[565] Խոսքը Մեծ և Փոքր (Վերին և Ներքին) Զաբերի մասին է:

ԿՏԵՍԻԱՍ ԿՆԻԴԱՑԻ

Հունաստանի դասական ժամանակաշրջանի պատմագրության կարկառուն ներկայացուցիչներից է Կտեսիաս Կնիդացին: Ճակատագրի բերումով նա ստացել է բացառիկ հնարավորություն՝ դառնալով ինչպես Հունաստանի դասական, այնպես էլ Աքեմենյան Պարսկաստանի ավանդույթների կրողը: Ք.ա. 415-398 թթ. նա անցկացրել է Պարսկաստանում՝ դառնալով Աքեմենյան արքաներ Դարեհ Բ-ի (Ք.ա. 423-405 թթ.) և Արտաքսերքսես Բ-ի (Ք.ա. 405-359 թթ.) արքունի բժիշկը: Տասնյոթ տարի անց հայրենիք վերադառնալուց հետո Կտեսիաս Կնիդացին հեղինակել է մի քանի գործեր, որոնցում օգտագործել է պարսկական դիվաններում եղած վավերագրերը, նաև տեղի ժողովրդական զրույցները, անդրադարձել է նաև մյուս հույն հեղինակների երկերին՝ հաճախ հակադրվելով դրանց, ճշգրտումներ կամ լրացումներ կատարելով[566]:

---

[566] Կտեսիաս Կնիդացու կյանքի, գործունեության և երկերի մասին հանգամանորեն տե՛ս **Marquart J.,** Die Assyriaka des Ktesias, “Philologus: Zeitschrift für das classische Altertum”, Sechster Supplementband, Göttingen, 1891-1893, էջ 501-658; **Goossens G.,** L’histoire d’Assyrie de Ctesias. «L’antiquité classique», t. IX, 1940, էջ 25-45; **König F. W.,** Die Persika des Ktesias von Knidos, “Archiv für Orientforschung”, Beiheft 18, Graz, 1972; **Пьянков И. В.,** Ктесий как историк, «Античная древность и средние века», № 11, Свердловск, 1975, էջ 52-57; **Eck B.,** Sur la vie de Ctésias, “*Revue des études grecques”, tome* 103, Paris, 1990, էջ 409-434; **Lenfant D.,** Greek Historians of Persia // Companion to Greek and Roman Historiography, Blackwell Publishing, 2007, էջ 183-191; **Abe T.,** Ctesias’ Persica:

Կտեսիաս Կնիդացին հեղինակել է «Պարսկականք» («Pepsika»), «Հնդկականք» («Indika»), բժշկագիտական և այլ երկեր: Հայաստանի պատմության համար կարևոր տեղեկություններ է պարունակել «Պարսկականքը» (բաղկացած 23 գրքից), որը չի պահպավել: Առաջին վեց գրքերի մասին (որոնք ներկայացնում են Ասորեստանի և Մարաստանի պատմությունը) պատկերացում ենք կազմում Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան» աշխատության շնորհիվ, որի երկրորդ գիրքը շարադրված է ըստ Կտեսիաս Կնիդացու երկի: Հենց այստեղ էլ պահպանվել է Հայաստանի մասին պատմաաշխարհագրական բնույթի երեք կարևոր հաղորդում:

Առաջինը Ասորեստանի արքա Նինոսի և Հայաստանի (բնագրում՝ Արմենիա) թագավոր Բարզանեսի պատերազմի մասին վկայությունն է: Նինոսն անտիկ պատմագրության մեջ Ասորեստանի հավաքական կերպարն է, պետության հիմնադիրն ու մայրաքաղաք Նինվեի անվանադիրը: Ասորեստանն այստեղ հակամարտում է Հայկական լեռնաշխարհի մեծ պետության դեմ, որն Արմենիա-Հայաստանն է և համապատասխանում է սեպագիր սկզբնաղբյուրների ու Աստվածաշնչի Ուրարտու-Արարատ-Բիայնիլի թագավորությանը: Սա նշանակում է, որ Ուրարտու-Հայաստան նույնականությունը փաստվում է նաև Աքեմենյան Պարսկաստանի և դասական հունական պատմագրության տվյալների համադրությամբ: Ավելացնենք, որ Աքեմենյան Պարսկաստանի սեպագիր դպրությունն ուղիղ ժառանգորդն է Հին Արևելքի ավելի վաղ գոյություն ունեցած դպրության կենտրոնների, այդ թվում՝ Բա-

---

Persian Decadence in Greek Historiography // Memory of the Past and Its Utility: Nation, State, Society and Identity, Rome, 2014, էջ 35-53 և այլն:

բելոնի, Ասորեստանի և Ուրարտուի սեպագրական ավանդույթների:

Երկրորդը Եփրատի և Տիգրիսի ակունքների մասին տեղեկությունն է: Իսկ երրորդը Հայաստանի լեռներից հսկա ժայռաբեկորի տեղափոխումն է Բաբելոն, որն արվել է Սեմիրամիսի հրամանով: Այս տեղեկությունը զուգահեռվում է Հայաստանից Բաբելոն գետային առևտրի մասին Հերոդոտոսի վերոբերյալ վկայության, ինչպես նաև դեռևս Ք.ա. III հազարամյակում վկայված Արատտա-Շումեր գետային նավարկության հետ:

Կտեսիաս Կնիդացու աշխատանքներից պահպանված հատվածներն ունեցել են բազմաթիվ հրատարակություններ (տե՛ս, օրինակ, Ctesiae Cnidi Operum reliquae // Fragmenta collegit, textum e codd. recognovit, prolegomenis et perpetua annotatione instruxit indicesque adiecit J. Ch. F. Baehr, Francofurti ad Moenum, 1824; R. Henry, *Ctésias. La Perse, l'Inde: Les sommaires de Photius,* Brussels, 1947; J. Auberger, *Ctésias. Histoires de l'Orient,* Paris, 1991; Ctésias de Cnide. La Perse - L'Inde - Autres fragments, Texte établi, traduit et commenté par D. Lenfant, Paris, 2004; A. Nichols, The Complete Fragments of Ctesias of Cnidus, Translation and commentary with an introduction (PhD Dissertation), University of Florida, 2008; L. Llewellyn-Jones, J. Robson, Ctesias' History of Persia. Tales of the Orient. Routledge, 2010; J. P. Stronk, Ctesias' Persian History. Part I: Introduction, Text, and Translation, Düsseldorf, 2010 և այլն):

Դիոդորոս Սիկիլիացու երկում պահպանված Կտեսիաս Կնիդացու ստորև մեջբերվող հատվածները տրվում են Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարվել է Diodori, Bibliotheca Historica, Vol. I-V, Lipsiae, 1866-1868, հրա-

տարակությունից (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան (հատվածներ) // «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Երևան, 1985):

Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք II, գլուխ I, 8-9

Այնուհետև Նինոսը, մեծ զորքով ներխուժելով Արմենիա, մի շարք քաղաքներ ավերելուց հետո կոտորեց տեղի բնակիչներին, ուստի և նրանց թագավոր Բարզանեսը, տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ նրա դեմ կռվել, առատ նվերներով դիմավորեց նրան և ասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները:

Իսկ Նինոսը նրան վերաբերվեց մեծահոգաբար և համաձայնվեց, որ նա տիրի Արմենիային և մնալով որպես իր բարեկամը՝ զորք ուղարկի և միջոցներ՝ իր բանակի համար: Եվ նա, առավել ևս հզորանալով, արշավեց Մեդիայի վրա»:

Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք II, գլուխ XI, 1

Նեղոսից և Գանգեսից հետո Եփրատը և Տիգրիսը, կարելի է ասել, առավել նշանակալից գետերն են Ասիայում, որոնց ակունքները Հայաստանի լեռներում են և գտնվում են իրարից երկու հազար հինգ հարյուր ասպարեզ հեռավորության վրա:

Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք II, գլուխ XI, 4

«Սեմիրամիսը Հայաստանի լեռներից[567] *մի քար կտրեց, երկարությունը՝ 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ 25*[568]*: Նա զորքերի և եզների բազմաթիվ լծերով այդ քարն իջեցրեց դեպի գետը և այնտեղ բարձրացրեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա՝ այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այն իր ձևի պատճառով անվանում են կոթող և համարում, այսպես կոչված, յոթ հրաշալիքներից մեկը»*:

---

[567] Ս. Մ. Կրկյաշարյանը «Հայաստանի լեռների» փոխարեն թարգմանում է «Հայկական լեռներ», ինչը ճիշտ չէ:

[568] Մեկ ոտնաչափը ծամանակակից չափերով 30.5 սմ է: Այսինքն՝ նկարագրվող քայռաբեկորն ունեցել է մոտ 40 մ բարձրություն (ներկայիս 12-հարկանի շենքի բարձրության):

ՔՍԵՆՈՓՈՆ

Դասական Հունաստանի պատմագրության մյուս ականավոր ներկայացուցիչը, որը կարևոր պատմաաշխարհագրական տեղեկություններ է հաղորդում Հայաստանի մասին գրող, զորավար, քաղաքական գործիչ և պատմագիր Քսենոփոն Աթենացին է (Ք.ա. մոտ 430-354 թթ.)[569]: Լինելով Սոկրատեսի դպրոցի ներկայացուցիչ՝ նա հեղինակել է մի շարք աշխատություններ, որոնցից երկուսը («Կյուրոպեդիա» և «Անաբասիս») Հայաստանի պատմության մեծարժեք սկզբնաղբյուրներ են: Դրանց արժեքը մեծանում է հատկապես այն պատճառով, որ Քսենոփոնն անձամբ է եղել Հայաստանում Ք.ա. 401 թվականին:

Քսենոփոնի «Կյուրոպեդիան» պատմում է Աքեմենյան աշխարհակալության հիմնադիր Կյուրոս Մեծի մասին: Թեպետ այն բարոյախոսական-քաղաքական վեպ է, սակայն գրված է պատմական հենքի վրա և կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի Ք.ա. VI դարի պատմության վերաբերյալ: Պատմաաշխար-

---

[569] Քսենոփոնի կյանքի և գործունեության մասին կա մեծածավալ գրականություն: Տե՛ս, օրինակ, **Dillery J.,** Xenophon and the History of His Times, London - New York, 1995; **Anderson J. K.,** Xenophon, London, 2001; The Long March: Xenophon and the Ten Thousand (ed. by R. L. Fox), New Heaven – Connecticut – London, 2004; **Waterfield R.,** Xenophon's Retreat: Greece, Persia and the End of the Golden Age, Cambridge, 2006; **Gray V. J.,** Xenophon on Government, Cambridge, 2007; հայերեն՝ **Ս. Մ. Կրկյաշարյան**, Քսենոփոն. Կյանքը և գործը (Կյուրոպեդիա, Երևան, 2000, էջ 394-409):

հագրական տեսանկյունից այն քիչ բան է հաղորդում Հայաստանի մասին, ըստ էության, երկու կարևոր փաստ Հայաստանի հարավարևելյան և հյուսիսարևմտյան հարևանների մասին: Դրանց համաձայն՝ Ք.ա. VI դարի կեսերին Հայաստանը սահմանակից է Մարաստանին և Պոնտական լեռներում բնակվող խալդայներին:

Շատ ավելի հանգամանալի են Քսենոփոնի «Անաբասիսի» պատմաաշխարհագրական վկայությունները, քանի որ դրանք գրված են դեպքերի ականատեսի կողմից: Քսենոփոնը ղեկավարում էր 10 հազարանոց հունական բանակը, որն օգնության էր գալիս Աքեմենյան Արտաքսերքսես Բ արքայի դեմ ապստամբած եղբորը՝ Կյուրոս Կրտսերին: Վերջինիս սպանությունից և ապստամբության ճնշումից հետո հունական բանակը որոշեց Միջագետքից Հայաստանի տարածքով բարձրանալ Սև ծովի ափ և այնտեղից նավերով վերադառնալ հայրենիք: Այդ ողջ ճանապարհի նկարագրությունը ներկայացվում է «Անաբասիսում»: Բացի աշխարհագրական մանրամասներից՝ տեղեկանում ենք, որ Ք.ա. V-IV դարերի սահմանագծին Հայաստանն ընդգրկված էր Աքեմենյան 13-րդ սատրապության մեջ, որի սատրապն էր Օրոնտաս-Երվանդ Բ-ն: Հայաստանն ուներ իր ներքին բաժանումը՝ մեծ մասի և արևմտյան փոքր մասի, որը հանդես է գալիս իբրև հյուպարքոսություն (հյուպարքոսը Տիրիբազն էր): Այս բաժանումն էլ, թերևս, հետագայում իր արտահայտությունը կգտնի Մեծ Հայքի և Փոքր Հայքի տեսքով:

Հայաստանի հարավային սահմանը, ըստ Քսենոփոնի, կազմում էր Կորդվաց աշխարհը (բնագրում՝ *կարդուխների երկիր*), իսկ հյուսիսում՝ խալյուբների երկիրը Պոնտական լեռ-

ներում, ինչ մասին տեղեկացնում են Հեկատեոս Միլեթացին և այլ հեղինակներ:

Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» և «Անաբասիսի» լավագույն հրատարակություններից են՝ Xenophon, Cyropaedia, Volume I: Books 1-4 (tr. by Walter Miller). LCL, 51, Cambridge, 1914; Xenophon, Cyropaedia, Volume II: Books 5-8, (tr. by Walter Miller). LCL, 52. Cambridge, 1914; Xenophon, Anabasis, (tr. by Carleton L. Brownson), LCL, 90, Cambridge, 1998; Ксенофонт, Киропедия (пер. В. Г. Боруховича и Э. Д. Фролова), Москва, 1976; Ксенофонт, Анабасис, Перевод, вступительная статья и примечания М. И. Максимовой, Москва, 2003: Ստորև մեջբերվող հատվածները տրվում են ըստ Ս. Մ. Կրկյաշարյանի հայերեն թարգմանության (Անաբասիս, Երևան, 1970 և Կյուրոպեդիա, Երևան, 2000):

«Կյուրոպեդիա», գիրք երկրորդ, գլուխ I, 6

«Ուրեմն դու,– ասաց Կյուրոսը,– ասում ես, թե թշնամիների հեծյալները մոտ վեց բյուր են, պելտաստները և աղեղնավորները՝ ավելի քան քսան բյուր: Ապա ասա, խնդրեմ, ինչքա՞ն է քո զորքի թիվը»:

«Մեդացի հեծյալները,– պատասխանեց Կյուաքսարեսը,– ավելի քան մեկ բյուր են, պելտաստները և աղեղնավորները մեր իսկ երկրից կլինեն մոտ վեց բյուր, իսկ մեր սահմանակից արմենիներից, ասաց, կգան չորս հազար հեծյալ և երկու բյուր հետևակ»:

«Կյուրոպեդիա», Գիրք երրորդ, գլուխ I

Կյուրոսը չհապաղեց և ասաց (հայոց թագավորին). «Քանի որ քո դեմ պատերազմում են քո հարևան խալդայները[570], ինձ ուղարկիր զորքի կեսը...»:

«Անաբասիս», Գիրք III, գլուխ V

... Զորավարները[571] որոշեցին, որ պետք է իջնել լեռների միջով դեպի կարդուխների երկիրը[572], քանզի ասել էին, թե նրանց երկրով անցնելուց հետո կհասնեն Արմենիա, որին իշխում էր Օրոնտասը[573], և որը մեծ էր ու հարուստ:

«Անաբասիս», Գիրք IV, գլուխ III

Այդ օրը հելլենները դարձյալ մնացին գյուղերում, որոնք գտնվում էին Կենտրիտես գետի[574] հարթավայրից վերև: Գետի

---

570 Ժողովուրդ Պոնտական լեռներում: Ընդունված կարծիքի համաձայն՝ նրանց հիշողությունը պահպանվել է Խաղտիքի կամ Խաղտյաց աշխարհի անվան մեջ:

571 Խոսքը Քսենոփոնի ղեկավարած տասհազարանոց նահանջող բանակի զորավարների մասին է:

572 Կարդուխների երկիրը Կորդվաց աշխարհն է (Կորդուք, Կորճայք), որն այդ շրջանում լիովին անկախ էր:

573 Խոսքը Հայաստանի սատրապ Օրոնտաս-Երվանդ Բ-ի մասին է (Ք.ա. V դարի վերջ-360 թ.), որը Կոմմագենեի Նեմրութի սրբավայրի արձանագրություններում ներկայանում է Արոանդես անվամբ: Նա աքեմենյան արքունիքում մեծ հեղինակություն վայելող Արտասուրա-Արտաշիրի որդին էր, ամուսնացել էր պարսից տիրակալ Արտաքսերքսես Բ Մնեմոնի դուստր Հռոդոգունեի հետ:

574 Արևելյան Տիգրիսն է, միջնադարյան հայկական սկզբնաղբյուրների Ջերմ գետը (նոր ժամանակներում՝ Բոհտան-սու):

լայնքը համարյա երկու պլեթրոն է[575]. այն սահման է Արմենիայի և կարդուխների երկրի միջև: Հելլեններն այստեղ ուրախացած շունչ քաշեցին՝ դաշտ տեսնելով: Գետը վեց կամ յոթ ասպարեզ հեռու էր կարդուխների լեռներից:

«Անաբասիս», Գիրք IV, գլուխ IV

Գետն անցնելուց հետո հելլենները կեսօրվա շուրջ դասավորվեցին ու ճանապարհ ընկան Արմենիայի միջով և ամբողջ ժամանակ դաշտավայրով ու հողաբլուրներով գնալով՝ անցան ոչ պակաս քան հինգ փարսախ: Քանզի կարդուխների դեմ կռիվների պատճառով գետի մոտ գյուղեր չկային: (2) Այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր և ուներ ապարանք սատրապի համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ: Այստեղ նաև պարենն առատ էր: (3) Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարսախ, մինչև անցան Տիգրիս գետի ակունքը: Այնուհետև գնացին երեք կայան՝ տասնհինգ փարսախ, մինչև Տելեբոաս գետը[576]: Այն գեղեցիկ էր, բայց ոչ մեծ, իսկ գետի մոտակայքում կային շատ գյուղեր: (4) Այս վայրը կոչվում է Արևմտյան Արմենիա: Նրա հյուպարքոսն էր Տիրիբազոսը…

«Անաբասիս», Գիրք IV, գլուխ V

Այստեղից առաջ անցան երեք կայան ամայի տարածություններով՝ տասնհինգ փարսախ, մինչև Եփրատ գետը, և այն

---

[575] Մեկ պլեթոնը ներկայիս չափերով մոտ 30 մետր է:

[576] Հայկական միջնադարյան աղբյուրների Մեղրագետն է:

անցան՝ թրջվելով մինչև պորտը: Պատմում էին, թե ակունքները հեռու չէին:

Խեյրիսոփոսն ու Քսենոփոնը փոխադարձաբար իրար ողջունելուց հետո սկսեցին միասին հարցուփորձել գեղջավագին պարսկերեն խոսող թարգմանի միջոցով, թե այդ ի՞նչ երկիր է: Նա ասաց, թե Արմենիան է: Եվ դարձյալ հարցրին, թե ձիերը ո՞ւմ համար են բուծվում: Նա ասաց, թե՝ արքայի համար իբրև տուրք: Ասաց նաև, որ հարևան երկիրը խալյուբների երկիրն է և ցույց տվեց, թե որն է այնտեղ տանող ճանապարհը:

«Անաբասիս», Գիրք IV, գլուխ VI

Այնուհետև առաջ գնացին յոթ կայան՝ օրական հինգ փարսախ, Փասիս գետի մոտ[577], որի լայնքը մոտ մեկ պլեթրոն էր:

Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարսախ, և լեռնանցքով դեպի դաշտ իջնելիս նրանց դեմ ելան խալյուբները, տաոխները և փասիանները[578]:

«Անաբասիս», Գիրք IV, գլուխ VII

Այստեղից նրանք խալյուբների երկրի միջով գնացին յոթ կայան՝ հիսուն փարսախ…

Նրանց մոտից հելլեննները հասան Հարպասոս գետը[579], որի լայնքը չորս պլեթրոն էր: Այս տեղից առաջ ընթացան

---

577 Քսենոփոնը Փասիս է անվանում Արաքս գետի վերին հոսանքը, ինչը կապվում է Բասեն գավառի անվան հետ:

578 Տաոխները Տայքի բնակիչներն էին, փասիանները՝ Բասեն գավառի:

սկյութենների[580] երկրի միջով չորս կայան՝ քսան փարսախ՝ հարթավայր տեղերով դեպի գյուղերը, որոնցում մնացին երեք օր և պարենավորվեցին:

---

[579] Ենթադրվում է, որ խոսքը վերաբերում է Ճորոխ գետին միջին հոսանքի շրջանում: Գետի լայնքի նշումը (չորս պլեթրոն շուրջ 120 մետր) ակնհայտորեն չափազանցված է:

[580] Տրապիզոնից հարավ գտնվող լեռերում բնակվում էին սկյութական ցեղեր, որոնք Ք.ա. VII դարում Կովկասից դեպի Փոքր Ասիա ներխուժած հին սկյութների ժառանգներն էին:

ԷՐԱՏՈՍԹԵՆԵՍ

Էրատոսթենես Կիրենացի (276-194) (Ἐρατοσθένης ὁ Κυρηναῖος) – հույն նշանավոր աշխարհագրագետ, բանաստեղծ և քերական, գիտական աշխարհագրության հիմնադիր, Ալեքսանդրիայի գրադարանի ղեկավարներից մեկը: Գրել է երեք գրքերից բաղկացած «Աշխարհագրություն», որը մեզ չի հասել, սակայն դրա բովանդակությունը մեզ է հասել Ստրաբոնի աշխատությունների շնորհիվ: Նրա աշխատությունից պահպանված բոլոր հատվածները հավաքվել և 1822 թ. «Էրատոսթենիկա» վերնագրով տպագրվել է գերմանացի գիտնական Բեռնհարդի կողմից, տե՛ս Bernhardy Gottfried, Eratosthenica, Berlin, 1822, Eratosthenes' Geography /fragments collected and translated, with commentary and additional material, by Duane W. Roller/, Princeton and Oxford: Princeton University Press, New Jersey, 2010, p. 320: Ստորև տրված մեջբերումը Ստրաբոնի «Աշխարհագրություն» երկի այն հատվածներից է, որոնց մեջ առկա են Էրատոսթենեսից վերցված տեղեկություններ:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, XI 14

Երկրում շատ գետեր կան. նշանավորագույն են Փասիսը և Լյուկոսը, որոնք թափվում են Պոնտական ծովը. Էրատոսթե-

նեսը Լյուկոսի փոխարեն ոչ ճիշտ կերպով դնում է Թերմոդոնը, իսկ Կուրը և Արաքսը թափվում են Կասպից (ծով), Եփրատը և Տիգրիսը՝ Կարմիր ծով:

... Իրար մոտենալով [Տիգրիսը և Եփրատը] և ձևավորելով Միջագետքը՝ մեկը Սելևկիայով թափվում է Պարսից ծոցը, իսկ մյուսը՝ Բաբելոնով, ինչպես ասվել է Էրատոսթենեսի և Հիպարքոսի մասին խոսելիս:

ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ

Դիոդորոս Սիկիլիացին (Սիցիլիացին, Ք.ա. մոտ 90-23 թթ.) անտիկ պատմագրության ամենանշանավոր դեմքերից է: Նրա կոթողային «Պատմական գրադարան» աշխատությունը ներկայացրել է համաշխարհային պատմությունը՝ արարչագործությունից մինչև հեղինակի ապրած ժամանակը: Այն գրվել է աղբյուրագիտական լայն հենքի վրա, բաղկացած է եղել 40 գրքերից, որոնցից մեզ են հասել միայն I-V և XI-XXV-ը, իսկ մյուսներից՝ միայն առանձին դրվագներ: Դրանով հանդերձ՝ Դիոդորոս Սիկիլիացուց պահպանված գրքերն ու հատվածներն անգնահատելի սկզբնաղբյուրներ են Հին աշխարհի պատմության համար: «Պատմական գրադարանի» կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ դրա շնորհիվ պահպանվել են բազմաթիվ մեզ չհասած աղբյուրներ՝ համառոտմամբ կամ բովանդակության ճշգրիտ վերաշարադրմամբ[581]:

---

[581] Դիոդորոս Սիկիլիացու կյանքի ու գործի մասին մանրամասն տե՛ս **Строгецкий В. М.,** Диодор Сицилийский и его «Историческая библиотека» в оценке историографии, «Вестник древней истории», 1983, № 4, с. 176-186; **Строгецкий В. М.,** Возникновение и развитие исторической мысли в Древней Греции (на материале изучения «Исторической библиотеки» Диодора Сицилийского), Горький, 1985; **Sacks K. S.,** Diodorus Siculus and the First Century, Princeton, 1990; **Трофимов М. П.,** Историческая концепция Диодора Сицилийского; Нижний Новгород, 2009; **Muntz Ch. E.,** Diodorus Siculus and the World of the Late Roman Republic, New York, 2017; հայերեն՝ **Ս. Մ. Կրկյաշարյան,** Դիոդորոս Սիկիլիացի (Կյանքն ու գործը), տե՛ս Դիոդորոս Սիկի-

Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարանի» էջերում արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Հայաստանի պատմության, նաև պատմական աշխարհագրությանը վերաբերող հարցերի վերաբերյալ: Աշխատության II գրքում պահպանված պատմաաշխարհագրական տեղեկությունները, որոնք վերցված են Կտեսիաս Կնիդացուց, ներկայացրել ենք այդ հեղինակի բաժնում (տե՛ս վերը): Դրանցից բացի՝ Հայաստանին վերաբերող կարևոր պատմաաշխարհագրական տեղեկություններ են պահպանվել «Պատմական գրադարանի» XIV և XXVIII գրքերում: XIV գրքում ներկայացվում է Ք.ա. 401 թ. Քսենոփոնի ղեկավարած հունական տասհազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով, ընդ որում՝ այն ունի զգալի տարբերություններ Քսենոփոնի «Անաբասիսի» համեմատությամբ: Ենթադրվում է, որ Դիոդորոս Սիկիլիացին օգտվել է արշավանքի մասնակից Սոփայնետոս Ստյումփալացու մեզ չհասած երկից: Իսկ XXVIII գրքում ներկայացվում է Ալեքսանդր Մակեդոնացու «ժառանգորդների» պատերազմների ժամանակ առկա քարտեզը (սատրապական բաժանումը), որը կրում էր Աքեմենյան տերության վերջին շրջանի հիշողության հետքերը: Հայաստանը ներկայացվում է մի կողմից Մարաստանի, մյուս կողմից՝ փոքրասիական երկրամասեր Լյուկաոնիայի և Կապադովկիայի միջև գտնվող երկիր:

Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարանի» լավագույն հրատարակություններից են «LCL» մատենաշարի 12 հատորները, որոնցում բերվում են հունարեն բնագրերն ու

լիացի, Պատմական գրադարան (հատվածներ) // «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Երևան, 1985, էջ 5-11:

դրանց զուգադիր անգլերեն թարգմանությունները (Diodorus Siculus, Library of History, Vol.I: Books 1-2.34, tr. by C. H. Oldfather, LCL, 279, Cambridge, 1933; Vol.II: Books 2.35-4.58, tr. by C. H. Oldfather, LCL, 303, Cambridge, 1935; Vol.III: Books 4.59-8, tr. by C. H. Oldfather. LCL, 340, Cambridge, 1939; Vol. IV: Books 9-12.40, tr. by C. H. Oldfather, LCL, 375, Cambridge, 1946; Vol. V: Books 12.41-13, tr. by C. H. Oldfather, LCL, 384, Cambridge, 1950; Vol. VI: Books 14-15.19, tr. by C. H. Oldfather, LCL, 399, Cambridge, 1954; Vol. VII: Books 15.20-16.65, tr. by Charles L. Sherman, LCL, 389, Cambridge, 1952; Vol.VIII: Books 16.66-17, tr. by C. Bradford Welles, LCL, 422, Cambridge, 1963; Vol. IX: Books 18-19.65, tr. by Russel M. Geer, LCL, 377, Cambridge, 1947; Vol. X: Books 19.66-20, tr. by Russel M. Geer, LCL, 390, Cambridge, 1954; Vol. XI: Fragments of Books 21-32, tr. by Francis R. Walton, LCL, 409, Cambridge, 1957; Vol. XII: Fragments of Books 33-40, tr. by Francis R. Walton, LCL, 423 Cambridge, 1967: Ռուսերեն ամբողջական հրատարակությունը՝ Диодор Сицилийский, Историческая библиотека, ч.1-6 (пер. И. А. Алексеева), СПб., 1774-1775:

Դիոդորոսից ստորև բերվող հատվածները տրվում են Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարվել է «Loeb Classical Library» մատենաշարի հրատարակությունից (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան (հատվածներ) // «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Երևան, 1985):

Գիրք XIV, գլուխ XXVII

Հելլենները յոթ օրվա ընթացքում անցան կարդուխների լեռները[582]՝ բազում չարիքների ենթարկվելով տեղաբնակների կողմից, որոնք ռազմասեր էին և վայրերին քաջածանոթ: Սրանք (պարսից) արքային թշնամի էին ու ազատ և զբաղվում էին ռազմական արվեստով. նրանք առանձնապես վարժ էին պարսատիկներով խոշորագույն քարեր արձակելու և հույժ խոշոր նետեր օգտագործելու մեջ, որոնցով էլ նրանք, հարմար դիրքերից հելլեններին հարվածներ հասցնելով, շատերին սպանեցին և ոչ քչերին էլ լուրջ վնասներ պատճառեցին: Նրանց նետերը երկու կանգունից ավելի երկար էին ու ծակում էին թե՛ վահանները, թե՛ լանջապանները, և ոչ մի զրահ չէր դիմանում դրանց հարվածին: Կարդուխները այնպիսի խոշոր նետեր էին օգտագործում, որ հելլենները նրանց արձակած նետերին կաշվե բռնակ ամրացնելով, դրանք իբրև տեգ էին օգտագործում: Արդ, մեծ դժվարությամբ ճեղքել-անցնելով հիշյալ երկիրը, նրանք հասան Կենտրիտես[583] գետը և այն անցնելով՝ մտան Արմենիա: Այս երկրի սատրապն էր Տիրիբազոսը[584], որի հետ դաշինք կնքեցին և երկրի միջով անցան իբրև բարեկամներ:

---

582 Այսինքն՝ Կորդվաց աշխարհի լեռները:

583 Արևելյան Տիգրիսն է՝ հայկական աղբյուրների Ջերմ գետը (նոր ժամանակներում՝ Բոհտան-սու):

584 Քսենոփոնի «Անաբասիսում» Տիրիբազոսը ներկայանում է իբրև միայն Արևմտյան Արմենիայի հյուպարքոս, որը ենթակա էր ողջ Արմենիայի սատրապ Օրոնտաս-Երվանդին (գիրք III, գլ. V, 17, տե՛ս վերը): Դատելով այլ փաստերից՝ Քսենոփոնի տեղեկությունն ավելի ճշգրիտ է:

Գիրք XIV, գլուխ XXIX

Այս գյուղերում ութ օր մնալուց հետո հելլենները ուղևորվեցին դեպի Փասիս գետը[585]: Այստեղ չորս օր մնալուց հետո իրենց ճանապարհը շարունակեցին խաոյների և փասիաններիի[586] երկրի միջով: Երբ տեղաբնիկները հարձակվեցին հելլենների վրա, սրանք, կռվում հաղթելով, նրանցից շատերին սպանեցին և, գրավելով տեղաբնիկների տները, որոնք լեցուն էին բարիքներով, այնտեղ մնացին տասնհինգ օր: Այստեղից դուրս գալով՝ յոթ օրվա ընթացքում անցան խալդայներ[587] կոչված ցեղերի երկրով և հասան Հարպագոս[588] գետը, որի լայնությունը 4 պլեթրոն էր: Այստեղից էլ սկյութների երկրի[589] միջով առաջանալիս նրանց ճանապարհն անցնում էր դաշտով, որտեղ նրանք երեք օր հանգստացան ամեն տեսակ բարիքների առատության մեջ:

---

585 Փասիս է կոչվում Արաքս գետի վերին հոսանքը, որը կապվում է Բասեն գավառի անվան հետ: Նույն կերպ է նաև Քսենոփոնի մոտ (Անաբասիս, գիրք IV, գլուխ VI, 4, տե՛ս վերը):

586 Փասիանները Բասենի բնակիչներն են, խաոյների ինքնությունը պարզ չէ: Կարծիքը, որ այդ անվան մեջ պետք է տեսնել հայ-խայ ինքնանվանումը, համոզիչ չէ (նման պարագայում այդպես պետք է կոչվեր Հայաստանի ողջ բնակչությունը):

587 Քսենոփոնի մոտ այս դրվագում հույները մտնում են խալյուբների երկիր, որը Պոնտական լեռներում է տեղադրվում: Խալդայները հանդես են գալիս Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատության մեջ, նրանց բնակավայրը ևս Պոնտական լեռների շրջանում է և համապատասխանում է հայկական աղբյուրների Խաղտիքին (տե՛ս վերը):

588 Քսենոփոնի մոտ՝ Հարպասոս (Անաբասիս, գիրք IV, գլ. VII, 18, տե՛ս վերը): Ենթադրվում է, որ Ճորոխ գետի միջին հոսանքի շրջանն է: Գետի լայնքի չափը՝ չորս պլեթրոն (շուրջ 120 մետր), ակնհայտ չափազանցված է:

589 Խոսքը Տրապիզոնից հարավ գտնվող լեռերում բնակվող սկյութական ցեղերի մասին է, որոնք Ք.ա. VII դարում Կովկասից դեպի Փոքր Ասիա ներխուժած հին սկյութների ժառանգներն էին:

Գիրք XVIII, գլուխ V

Դեպի հյուսիս նայող սատրապություններից առաջինը գտնվում է Տանաիս գետի[590] երկայնքով, հետո՝ Սոգդիանեն և Բակտրիանե, սրանց հաջորդում են Արիան, Պարթյուեան և Հյուրկանիան, որով շրջափակված է Հյուրկանյան ծովն ինքն իր մեջ: Այնուհետև՝ Մեդիան, որն ընդգրկում է տարբեր անուններով շատ երկրներ, և որը բոլոր սատրապություններից խոշորագույնն է: Այնուհետև՝ Արմենիան, Լյուկաոնիան և Կապադովկիան, որոնք բոլորն էլ ունեն դաժան կլիմա. սրանց ուղղակի սահմանակից են և՛ Մեծ Փռյուգիային, և՛ Հելլեսպոնտոսյան Փռյուգիային, ծայրամասայիններն են Լյուդիան և Կարիան՝ Փռյուգիայից վերև, և սրան զուգահեռ՝ Պիսիդիան, իսկ սրանից հետո՝ Լյուկիան:

---

590 Հույն հեղինակները սովորաբար այս անվամբ կոչում են Դոն գետը, սակայն այս դեպքում այն շփոթությամբ կիրառվել է միջինասիական մեծ գետերից որևէ մեկի (Սիրդարիայի կամ Ամուդարիայի) հետ:

ՍԱԼՅՈՒՍՏԻՈՍ

Գայոս Սալյուստիոս Կրիսպոսը (Ք.ա. մոտ 87-35 թթ.) հռոմեական պատմագրության ակնառու ներկայացուցիչներից է: Նա անտիկ պատմագրության բարեփոխիչներից մեկն է, որը մեծ ազդեցություն է թողել հետագա պատմագիրների վրա[591]:

Սալյուստիոսի գլխավոր աշխատությունը «Պատմություններն» է, որից պահպանվել են ոչ մեծ հատվածներ: «Պատմությունների» IV գիրքն ունեցել է մի բաժին՝«Հայկական պատերազմի մասին» վերտառությամբ, որում ներկայացվել է Ք.ա. 69-66 թթ. հռոմեահայկական պատերազմը: Դժբախտաբար, դրանից ևս մեզ հասել են միայն պատառիկներ, որոնցում առկա է պատմաաշխարհագրական բնույթի երկու հաղորդում: Առաջինը մեկ անգամ ևս փաստում է, որ Կապադովկիայի և Մեծ Հայքի սահմանը եղել է Եփրատ գետը, իսկ երկրորդը՝ Եփրատի և Տիգրիսի ակունքների՝ Հայաստանում գտնվելու փաստը:

Սալյուստիոսի «Պատմությունների» պահպանված հատվածների լավագույն հրատարակություններից են՝ Саллюстий, Фрагменты «Историй» (пер. В. С. Соколова), «Вестник древней

---

[591] Սալյուստիոսի կյանքի ու գործի մասին տե՛ս **Syme R.,** Sallust, Berkeley and Los Angeles, 1964; **Earl D. C.,** The political thought of Sallust, Amsterdam, 1966; **Короленков А. В., Никишин В. О.,** Саллюстий в контексте античной историографии, «Вестник древней истории», 2016, N 4, с. 1038-1048 և այլն:

истории», 1950, № 1, с. 293-304; Гай Саллюстий Крисп, Сочинения (пер. В. О. Горенштейна), М., 1981; Sallust, Fragments of the Histories. Letters to Caesar (tr. by John T. Ramsey), LCL, 522, Cambridge, 2015:

Գիրք IV, «Հայկական պատերազմի մասին»

(ա)

Բոլոր հնարավոր մեծ անցումներով նա (Լուկուլլոսը) Արիոբարզանեսի[592] *թագավորության տարածքով ուղևորվեց դեպի Եփրատ գետն այն վայրում, որտեղ Կապադովկիան գետով առանձնանում էր Հայաստանից…*

Գիրք IV, «Հայկական պատերազմի մասին»

(բ)

Այնուհետ Սալյուստիոսը՝ այդ հուսալի հեղինակը, պնդում է, որ Հայաստանում ցույց են տալիս ակունքներն ինչպես Տիգրիսի, այնպես էլ Եփրատի, որոնք, տարբեր ճանապարհներով հոսելով, մեկմեկուց ավելի են հեռանում՝ մեջտեղում թողնելով բազմամղոն լայնքով տարածություն, իսկ նրանց ընդգրկած տարածքը կոչվում է Միջագետք[593]*:*

---

[592] Նկատի ունի Կապադովկիայի արքա Արիոբարզանես Ա Հռոմեասերին, որն ընդհատումներով իշխել է Ք.ա. 95-63/2 թվականներին:
[593] Ըստ Is., Origg., III. 21, 10:

ՍՏՐԱԲՈՆ

Անտիկ պատմագրության և աշխարհագրության ամենաականառու ներկայացուցիչներից է հույն մատենագիր Ստրաբոնը (Ք.ա. 63 - մոտ Ք. ծ. 23 թթ.): Նա ծնունդով Պոնտոսի Ամասիա քաղաքից է, կրթությունը ստացել է Նյուսայում և Հռոմում: Շատ է ճանապարհորդել (այդ թվում՝ եղել է Հայաստանում), ինչի շնորհիվ նրա հաղորդած պատմաաշխարհագրական վկայությունները դարձել են առավել վստահելու ու հարուստ:

Ստրաբոնի հեղինակած «Պատմական հիշատակարաններ» երկը (բաղկացած 43 գրքից), դժբախտաբար, մեզ չի հասել: Պահպանվել է նրա կոթողային «Աշխարհագրություն» աշխատությունը (բաղկացած է 17 գրքից), որն իր ժամանակաշրջանի յուրօրինակ աշխարհագրական հանրագիտարան է: Դրանում Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի երկրների ֆիզիկական աշխարհագրությանը զուգահեռ հաճախ ներկայացվում են նաև կարևոր փաստեր դրանց պատմության, հասարակության, ժողովրդի կենցաղի ու հավատալիքների, բնաշխարհի ու այլ հարցերի մասին, ինչն ավելի է մեծացնում նրա երկի աղբյուրագիտական արժեքը[594]:

---

[594] Ստրաբոնի կյանքի ու գործի մասին կա մեծածավալ գրականություն, տե՛ս, օրինակ, **Арский Ф. Н., Страбон,** М., 1974; **Diller A.,** The Textual Tradition of Strabo's Geography, Amsterdam, 1975; **Грацианская Л. И.,** «География»

Ստրաբոնի «Աշխարհագրությունը» բացառիկ կարևորության սկզբնաղբյուր է հայագիտության համար: Հեղինակի տեղեկությունները Հայաստանի աշխարհագրության, պատմության, մշակույթի ու այլ հարցերի ուսումնասիրության համար հաճախ եզակի են և այլ աղբյուրներում չեն հանդիպում: Ստրաբոնն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է ինչպես Մեծ Հայքի սահմանները բոլոր ուղղություններով, այնպես էլ հայկական փոքր թագավորությունները (Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե, Կորդուք): Չափազանց կարևոր են նրա տեղեկությունները Հայաստանի քաղաքների, գետերի, լեռների, ճանապարհների, անցյալի և իր ապրած ժամանակի պատմաքաղաքական զանազան իրադարձությունների մասին: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ստրաբոնը ներկայացնում է տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած պատմաաշխարհագրական փոփոխություններն ու վերաձևումները: Ուշագրավ են հեղինակի վկայությունները մեր թվարկության սահմանագծին Հայաստանից դուրս (Միջագետքում, Ադիաբենեում, Կողքիսում, Վրկանաց աշխարհում) զգալի թվով հայ բնակչության առկայության մասին:

Ստրաբոնի «Աշխարհագրության» լավագույն հրատարակություններից են՝ Strabo, Geography, Vol. I: Books 1-2, (tr. by H. L. Jones), LCL, 49. Cambridge, 1917; Vol. II: Books 3-5 (tr. by H. L. Jones), LCL, 50, Cambridge, 1923; Vol. III: Books 6-7 (tr. by

---

Страбона. Проблемы источниковедения // Древнейшие государства на территории СССР, М., 1988, с. 6-175; **Engels J.,** Augusteische Oikumenegeographie und Universalhistorie im Werk Strabons von Amaseia, Stuttgart, 1999; **Dueck D.,** Strabo of Amasia. A Greek Man of Letters in Augustan Rome, London - New York, 2000; Strabo's Cultural Geography. The Making of a Kolossourgia (eds. Dueck D., Lindsay H., Pothecary S.), Cambridge, 2005 և այլն:

H. L. Jones), LCL, 182, Cambridge, 1924; Vol. IV: Books 8-9 (tr. by H. L. Jones), LCL, 196, Cambridge, 1927; Vol. V: Books 10-12 (tr. by H. L. Jones), LCL, 211, Cambridge, 1928; Vol. VI: Books 13-14 (tr. by H. L. Jones), LCL, 223, Cambridge, 1929; Vol. VII: Books 15-16 (tr. by H. L. Jones), LCL, 241, Cambridge, 1930; Vol. VIII: Book 17. General Index (tr. by H. L. Jones), LCL, 267, Cambridge, 1932; Страбон, География (пер. с др.-греч. Г. А. Стратановского), М., 1994: Ստրաբոնի՝ Հայաստանին և հայերին վերաբերող հատվածները տե՛ս Ստրաբոն (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան), Յերևան, 1940, առանձին հատվածներ՝ Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, տեղ են գտել «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» առաջին հատորում (Եր., 2007): Հայերեն թարգմանությունները կատարված են Strabonis Geographica, recognovit A. Meineke, Vol. I-III, Lipsiae, 1925 հրատարակությունից:

Գիրք I, գլուխ 2

Հայերի, ասորիների և արաբների մեծ ցեղակցությունը երևում է լեզվի, կենցաղի և մարմնի նկարագրությունից, անշուշտ, որովհետև իրար հարևան են: Հայտնապես, Միջագետքում, որ այս երեք ժողովուրդներից է բաղկացած[595], նմանությունը ավելի շատ է երևում նրանց մեջ: … Այդ ժողովուրդների անվանակոչությունը ենթադրել է տալիս նաև իրար հետ մեծ նմանություն: Այն ժողովուրդները, որ մենք «ասորի» ենք կո-

[595] Այն, որ հայերը զգալի թիվ էին կազմում նաև բուն Հայաստանից հարավ՝ Միջագետքի հյուսիսում և մերձակա տարածքներում, Ստրաբոնը վկայում է նաև Ադիաբենե երկրի առնչությամբ (գիրք XVI, 1, 19, տե՛ս ստորև):

չում, իրենք՝ ասորիները, կոչում են «արամեացի»: Սրան նման է արմենների (հայերի), արաբների և երեմբների անունը: «Երեմբ» էին կոչում հույներն արաբներին, ինչպես որ բառի ստուգաբանությունից էլ իմացվում է[596]:

Գիրք II, գլուխ 5

Մասամբ Վրկանաց ծովի[597] և սրա ու Պոնտոսի միջև գտնված ամբողջ պարանոցի հարավում գտնվում է Հայաստանի մեծ մասը և Կողքիսն ու Կապադովկիան ամբողջապես մինչև Եվքսինյան Պոնտոս[598] և տիբարանյան ցեղեր[599]…

Տավրոսից այս կողմ կարգով գալիս են լեռնաբնակ պարոպամիսացիներն ու պարթևները, և Մարաստանի, Հայաստանի ու Կիլիկիայի ժողովուրդները, և կատառնացիներն ու պիսիդիացիները: …Ծովի մոտ կարգով բնակվում են պարսիկները, շոշեցիները և բաբելացիներն ու սրանց շուրջը բնակվող մանր ցեղերը՝ մինչև Պարսից ծովը, լեռների մոտ կամ լեռներում՝ պարթևները, մարերը և հայերն ու սրանց հարևան ժողո-

---

596 Նման անվանում ունեցող այս երեք ժողովուրդների ազգակցության մասին Ստրաբոնը խոսում է նաև այլ տեղում՝ նշելով. «Այս երեք մոտիկ հարևան ցեղակից ազգերը, որոնք դրա համար էլ կոչվել են նման անուններով՝ «արմեն», «արամեացի» և «արաբ», ինչպես որ հասկանալի է, թե մի ցեղ կլիմայի տարբերության պատճառով հետզհետե ավելի փոփոխվելով՝ երեքի է բաժանվել, նույնպես և գործածվել են մեկի փոխարեն զանազան անուններ» (գիրք XVI, 4, 27):

597 Կասպից ծովի հին անվանումներից մեկը:

598 Սև ծովի հին անվանումներից մեկը:

599 Տիբարանյան ցեղեր, տիբարանցիներ, տիբարենացիներ – պոնտական ժողովուրդ, որը բնակվում է Տիբարանիա երկրում՝ Սև ծովի և Կողքիսի մոտ՝ խալյուբներից արևմուտք:

վուրդները, և Միջագետքը: Միջագետքից հետո՝ Եփրատից այս կողմ, գալիս է ամբողջ երջանիկ Արաբիան…

Գիրք XI, գլուխ 1

[Եվրոպայի և Ասիայի սահմանը դնելով Տանայիս գետը՝ սկսում է Ասիան նկարագրել այդտեղից]: Այստեղ գրեթե մի թերակղզի է, որովհետև արևմուտքից շրջապատված է Տանայիս գետով և Մայոտիսով՝ մինչև Կիմմերյան Բոսֆոր, և Եվքսինյան ծովափով, որը վերջանում է Կողքիսում, հյուսիսից՝ Օվկիանոսից մինչև Կասպից ծովի բերանը, իսկ արևելքից այս նույն ծովով մինչև Աղվանից և Հայաստանի սահմանագիծը, կամ որ նույնն է՝ ուր Կուր և Արաքս գետերն են թափվում՝ հոսելով մեկը Հայաստանից, իսկ Կուրը՝ Վրաստանից և Աղվանքից, իսկ հյուսիսից՝ Կուրի գետաբերանից մինչև Կողքիս գնացող գծով, իբր 3000 ստադիոն[600] ծովից ծով, Աղվանքի ու Վրաստանի վրայով, այնպես որ ձևացնում է հիշյալ թերակղզու պարանոցը:

Հյուսիսային Ասիայի երկրորդ մասն է կազմում Վրկանաց ծովի, կամ, ինչպես կոչում ենք նաև, Կասպից ծովի վերևը՝ մինչև Սկյութիա, հնդիկների մոտ: Երրորդ մասն են կազմում հիշյալ պարանոցի հարակից տեղերը և նրա շարունակությունը և Կասպից դռներից հետ՝ Տավրոսից այս կողմ և Եվրոպային շատ մոտիկ, այն է՝ Մարաստան, Հայաստան, Կապադովկիա և նրանց միջև եղած երկրները:

---

[600] Հունական չափի միավոր, որը հավասար է 177 մետրի:

Գիրք XI, գլուխ 2

Կովկասյան լեռնաշղթան, գտնվելով Պոնտական և Կասպից ծովերից վերև, պարսպի պես պաշտպանում և այդ երկու ծովերը բաժանող պարանոցը: Հարավից սահմանագծում է Աղվանքը և Վրաստանը, հյուսիսից սարմատների[601] դաշտավայրերը: Անտառները ծածկված են ամեն տեսակ ծառերով, որոնք տալիս են նավաշինական և այլ տեսակի փայտ: Էրատոսթենեսը ասում է, թե բնիկները Կովկաս լեռը կոչում են Կասպյան, որ հավանաբար ծագում է Կասպյան ժողովուրդի անունից: Մի քանի բազուկներ լեռնաշղթայից գնում են դեպի հարավ, որոնք շրջապատում են Վրաստանը, որ նրանց միջև է գտնվում և միանում են Հայկական և Մոսքիկյան[602] կոչված լեռներին, ինչպես և Սկիվդիսեսին և Պարիադրեսին: Այս բոլոր լեռները մասն են Տավրոսի, որ ձևացնում է Հայաստանի հարավային կողմը, և բաժանվելով այնտեղից՝ դեպի հյուսիս են ձգվում և հասնում մինչև Կովկաս և մինչև Եվքսինյան ծովեզրը, որ ձգված է Կողքիսից Թեմիսկիվրա:

Կողքիսի մնացյալ մասը առավելապես ծովի վրա է. այս երկիրը ոռոգում է Փասիսը, մեծ գետ, որ սկսում է Հայաստանից, իր մեջ է ընդունում Գլավկոս և Հիպպոս վտակները, որոնք բխում են հարևան լեռներից:

Մոսքիկեն, ուր կա նշանավոր մի տաճար, երեք մաս ունի. առաջինը զբաղեցնում են կողքիսցիները, երկրորդը՝ վրացիները, իսկ երրորդը՝ հայերը:

---

601 Սկյութական ցեղ, որը թափառում էր Կովկասից վերև՝ մինչև Միջին Ռուսաստան:

602 Մոսքիկյան լեռները գտնվում են Պոնտոսի և Հայաստանի միջև:

Գիրք XI, գլուխ 3

Վրաստանի մի քանի գավառները շրջապատված են Կովկասյան լեռներով: Ինչպես ասացինք, մի քանի բարեբեր բազուկներ ձգվում են դեպի հարավ, շրջափակում են ամբողջ Վրաստանը և միանում Հայաստանի և Կողքիսի լեռներին: Մեջտեղում կա մի դաշտավայր՝ ոռոգված գետերով, որոնց մեծագույնն է Կուրը, որ սկիզբ է առնում Հայաստանից, մտնում է անմիջապես հիշյալ դաշտավայրը, ընդունում է իր մեջ Արագոսը[603], որ բխում է Կովկասից, ինչպես և ուրիշ ջրեր, և մի նեղ հովտի միջով մտնում է Աղվանք: Այս երկրի և Հայաստանի մեջտեղով հոսելով՝ անցնում է բազմաթիվ հույժ մարգաշատ դաշտավայրերով, ընդունում է իր մեջ նաև ուրիշ շատ գետեր, ինչպիսիք են Ալազոնիոսը, Սանդոբանեսը, Ռոյտակեսը և Քանեսը, բոլորն էլ՝ նավարկելի, և թափվում են Կասպից ծով: Առաջ այս գետը կոչվում էր Կորոս:

Հայաստանից Վրաստան կարելի է մտնել Կուրի և Արգոսի կիրճով: Նախքան իրար հետ խառնվելը, այս գետերը անցնում են ժայռերի վրա հաստատված ամուր քաղաքներով, որոնք իրարից մոտ 16 ստադիոն հեռու են, Կուրի վրա՝ Արմոզիկե քաղաքը, իսկ մյուսի [=Արագոսի] վրա՝ Սևսամորան: Այս անցքը օգտագործեց նաև Պոմպեոսը Հայաստանից Վրաստան արշավելու ժամանակ, որից հետո Կանիդիոսը[604]:

---

[603] Արագոս – գետ Վրաստանում, բխում է Կովկասյան լեռներից, թափվում է Կուր գետը:

[604] Զորավար, որը Պոմպեոսից հետո արշավեց մինչև Կովկաս:

Գիրք XI, գլուխ 4

Աղվանքը գտնվում է Վրաստանի և Կասպից ծովի միջև. արևելքից հասնում է ծովին, իսկ արևմուտքից սահմանակից է Վրաստանին: Մնացյալ կողմերից հյուսիսը պաշտպանված է Կովկասյան լեռներով (սա բռնում է Աղվանից դաշտավայրի վերևը, իսկ ծովին մոտիկ մասը ավելի կոչվում է Վերավնիա), իսկ հարավային սահմանի ամբողջ երկարությամբ տարածվում է Հայաստանը, որ հարուստ է դաշտերով ու լեռներով, ինչպես Կամբյուսենե[605], որ գտնվում է այնտեղ, ուր Վրաստանը, Աղվանքը և Հայաստանը սահմանակցում են:

… Իսկ Արաքսը, կատաղաբար հոսելով Հայաստանից, թափվում է Կուրի մոտ, նա քշում է տիղմը և ճանապարհ բաց անում, որը Կուրը նորից լցնում է:

Ասում են, թե Յասոնը Թեսալացի Արմենոսի հետ դեպի Կողքիս նավարկության ժամանակ առաջացել է մինչև Կասպից ծով, և անցել Վրաստանը, Աղվանքը և Հայաստանի ու Մարաստանի շատ մասը, ինչպես վկայում են Յասոնականքը և բազմաթիվ հիշատակարաններ: Ասում են նաև, թե Արմենոսը Արմենիոն քաղաքից էր, որ գտնվում է Բոյբեիս[606] լճի մոտ՝ Ֆերեսի և Լարիսայի միջև, թե իր հետ եղողներն էլ բնակեցրին Ակիլիսենեն [=Եկեղիք] և Սիսպիրիտիսը [=Սպեր]՝ մինչև Կալաքանե և Ադիաբենե. սա է, որ իր անունը թողել է Հայաստանին:

---

605 Հին Հայաստանի գավառներից, Խորձյանի հետ Հայաստանի ամենահյուսիսային ձյունառատ գավառներից է:

606 Կոչվում է նաև Բիռ:

Գիրք XI, գլուխ 5

Կովկասի գագաթները ձմեռն անանցանելի են. ամռանը բարձրանում են՝ հագած եզն անաղաղ կաշվից կոշիկներ, տակը՝ սուր գամերով, թմբուկի կաշվի պես լայն, ձյունի և սառույցի պատճառով. իջնելու ժամանակ նստում են կաշվի վրա՝ իրենց բեռներով և ցած են սահում, ինչպես անում են Ատրոպատյան Մարաստանում և Մասիոս լեռան վրա՝ Հայաստանում: Նույն տեղում կրունկների տակ դնում են նաև փայտե անվակներ՝ տակը սուր գամերով:

[Խոսում է Ազովի և Կասպից ծովի միջև ապրող թափառաշրջիկ ժողովուրդների մասին. հիշում է, հատկապես, սիրակներին և առրսներին. վերջինների մասին ասում է.] Տիրեցին Կասպից ծովափի գրեթե մեծագույն մասին, որով ձեռք բերեցին հնդկական և բաբելական ապրանքների առևտուրը, որ կատարվում էր ուղտերով՝ Հայաստանի և Մարաստանի միջով. սրանով հարստանալով՝ ոսկեհուռն զգեստներ էին կրում:

Գիրք XI, գլուխ 7

Վրկանաց աշխարհից սկսած՝ Կասպից ծովը ընդարձակվում է, մինչև հասնում է Մարաստանի և Հայաստանի լեռները: Սրանք ներքևում ունեն մահիկաձև կերպարանք և վերջավորվում են ծովի մոտ՝ ձևացնելով ծոցի խորքը: Լեռների երկարությամբ՝ ծովից սկսած մինչև բարձրունքը, բնակվում են քիչ քանակությամբ աղվաններ և հայեր, և ավելի շատ գեղեր, կադուսիններ, ամարդներ, կյուրտիներ, անարիակները և ու-

րիշ զանազան ցեղեր, որոնք ավելի ավազակ ու պատերազմիկ են, քան երկրագործ. հողերի կոշտությունն է արել այսպես:

Գիրք XI, գլուխ 8

Սակայն սակերը կատարեցին զանազան արշավանքներ կիմմերների և տրերների նման թե՛ հեռավոր և թե՛ մերձավոր երկրների վրա. գրավեցին Բակտրիան և նվաճեցին Հայաստանի ամենալավ գավառը, որը և պահելով իր վրա նրանց մականունը՝ կոչվեց Սակասեն [=Շակաշեն]…

Գիրք XI, գլուխ 12

Տավրոսի լեռնաշղթան ձևավորում է Կիլիկիո հովիտները, հետո նրանից ճուղավորվում են Ամանոսը և Անտիտավրոսը, որտեղ կառուցված է Կոմանան, Վերին կոչված Կապադովկիայում: Անտիտավրոսը վերջանում է Կատառնիայում, իսկ Ամանոս լեռնաշղթան առաջանում է մինչև Եփրատ և Մելիտինե, որով Կոմմագենեն կցվում է Կապադովկիային: Եփրատի մյուս կողմի լեռները շարունակում են Ամանոսը և առաջ տանում, բացի այն տեղից, ուր բաժանվում են երկուսի, որպեսզի գետը հոսի նրանց միջով, բայց շատ են աճում բարձրությամբ, լայնությամբ և բազմաթիվ ճյուղերով: Սրանցից ամենահարավայինը պահում է Տավրոս անունը, որը բաժանում է Հայաստանը Միջագետքից:

Այստեղ հոսում են երկու մեծ գետ, որոնք շրջապատում են Միջագետքը, մոտենում են իրար Բաբելոնի մոտ, հետո թափվում Պարսց ծովը. սրանք են Եփրատն ու Տիգրիսը:

Այս երկուսից մեծագույնն է Եփրատը, որ անցնում երկրի մեծ մասով՝ ոլորապտույտ հոսանքով սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային մասում, հոսելով դեպի արևմուտք՝ Մեծ կոչված Հայաստանի միջով, մինչև Փոքր Հայք, աջում ունենալով այս երկիրը, իսկ ձախում՝ Եկեղիքը: Այստեղից դառնում է դեպի հարավ և այս պտույտի ժամանակ հասնում է Կապադովկիայի սահմանները՝ աջում թողնելով Կապադովկիայի և Կոմմագենեի սահմանները, ձախում՝ Մեծ Հայքի Եկեղիքը, Ծոփքը, առաջանում է դեպի Ասորիք և նոր պտույտով հասնում է Բաբելոն և Պարսից ծոց: Իսկ Տիգրիսը, նույն լեռաշղթայի [=Տավրոսի] հարավային կողմերից իջնելով Սելևկիա, հասնում է Եփրատի մոտ և կազմում նրա հետ Միջագետքը, որտեղից ինքն էլ գնում թափվում է նույն ծոցի մեջ: Եփրատի և Տիգրիսի ակունքները իրարից հեռու են շուրջ 2500 ստադիոն:*

Տավրոսից դեպի հյուսիս մեկնում են բազմաթիվ ճյուղեր, որոնցից մեկն է Անտիտավրոս կոչվածը: Այսպես է կոչված նրա համար, որ իր և բուն Տավրոսի միջև գտնած հովտում անջատվում է Ծոփքը: Եփրատից այն կողմ՝ Փոքր Հայքի մոտ, իբր շարունակություն Անտիտավրոսի, դեպի հյուսիս ձգվում է մի մեծ և բազմաճյուղ լեռնաշղթա: Դրանցից մեկը կոչվում է Պարիադրես, մյուսը՝ Մոսքիկյան և մյուսն էլ՝ ուրիշ անուններով: Սրանք բռնում են ամբողջ Հայաստանը մինչև Վրաստան և Աղվանք: Հետո բարձրանում է մի ուրիշ լեռնաշղթա, որ գնում է դեպի արևելք, անցնում Կասպից ծովի վերևով՝ մինչև Մարաստան, թե՛ Ատրոպատի Մարաստանը և թե՛ Մեծ Մարաստանը: Լեռնաշղթայի ամբողջ այս մասը, ինչպես և մինչև

Կասպից դռները, և այնտեղից դեպի արևելք մինչև Արիա[607] հասնող մասը կոչվում է Պարաքոթրաս[608]: Այսպես են կոչվում Տավրոսի հյուսիսային լեռները. իսկ հարավայինը՝ Եփրատից այն կողմ, Կապադովկիայից և Կոմմագենից արևելք է տարածվում, սկզբնական մասում կոչվում է Տավրոս, որը բաժանում է Ծոփքը և մնացյալ Հայաստանը Միջագետքից, ոմանք էլ կոչում են Գորդյան լեռներ: Սրանց մեջ է նաև Մասիոս լեռը, որ գտնվում է Մծբինի և Տիգրանակերտի վերևում: Այստեղից ավելի բարձրանալով՝ կոչվում են Նպատ, այստեղ՝ լեռան հարավային կողմերում, գտնվում են Տիգրիսի ակունքները:

Նպատից հետո է ավելի ու ավելի տարածվելով՝ բարձրանում է Զագրոսի լեռնագագաթը, որ կազմում է Մարաստանի և Բաբելոնի սահմանը: Զագրոսից հետո հաջորդում են Ելյումայի[609] և Պարայտակենի[610] լեռները՝ Բաբելոնից վերև, և Կոսսայան[611] լեռները՝ Մարաստանից վերև: Սրանց միջև են գտնվում Մարաստանը և Հայաստանը, որոնք պարունակում են շատ լեռներ, շատ լեռնադաշտեր, ինչպես և դաշտավայրեր և մեծ հովիտներ, որոնց մեջ բնակվում են բազմաթիվ լեռնա-

---

607 Արիա (Ἀρία) – գավառ Պարսկաստանում (Իրանում՝ արդի Խորասանում), որից Արիներ, Արիացիք, Արիաններ (նույն գավառի ժողովուրդը), Արիանես:

608 Պարիադրես կամ Պարաքոթրաս – հայկական աղբյուրների Խաղտյաց կամ Պարխարյան լեռնաշղթան է: Պարխարյան լեռնաշղթան ձգվում է Սև ծովի հարավային եզերքով դեպի արևելք (երկուսից առաջինը միևնույն բառի կապադովկիական ձևն է, երկրորդը՝ մարական, նշ.՝ «բազմափայլ, շատ փայլ ունեցող», տե՛ս **Ղարագյոզյան Ա.,** Անտիկ աղբյուրների Պարիադրես լեռը, ՊԲՀ, 1999, № 2-3, էջ 288-294:

609 Ելամի լեռներ;

610 Պարայտակեն կամ Պարետական, մարական մի ժողովուրդ, որից Պարայատակենի լեռները:

611 Կոսսայան լեռներ Հայաստանի և Մարաստանի միջև:

կան և ավազակ մանր ցեղեր: Ահա թե ինչու մենք Տավրոսից այս կողմ եղած մասում դրեցինք թե՛ Մարաստանը, ուր Կասպյան դռներն են, և թե՛ Հայաստանը:

Որովհետև այս ժողովուրդները գտնվում են Տավրոսից այս կողմ, ուստի, ըստ մեզ, պատկանում են Հյուսիսային Ասիային: Էրատոսթենեսը, բաժանելով Ասիան հարավային և հյուսիսային մասերի, և, ինչպես ինքն է կոչում, հարավային և հյուսիսային սֆրագիդի[612], երկու կլիմաների սահմանն է դնում Կասպյան դռները: Ըստ այսմ, ինչը Կասպյան դռներից հարավ է, հարավային է կոչում, ինչպես են Մարաստանն ու Հայաստանը, և ինչը հյուսիս է, հյուսիսային է կոչում, որովհետև այսպես, թե այնպես դասավորելով իրերը՝ իրար համաձայն կգան: Հավանաբար Էրատոսթենեսը չէր կշռել այն հանգամանքը, որ թե՛ Հայաստանի և թե՛ Մարաստանի ոչ մի մասը Տավրոսից դուրս և նրա հարավային կողմում չի գտնվում:

Գիրք XI, գլուխ 13

Մարաստանը բաժանվում է երկու մասի, մեկը կոչվում է Մեծ Մարաստան, որի մայրաքաղաքն է Եկբատանը, մեծ քաղաք, որտեղ Մարաց թագավորների պալատն էր: Այժմ էլ պարթևները շարունակում են գործածել իբրև մայրաքաղաք: Թագավորները այնտեղ են անցկացնում ամառը, որովհետև Մարաստանը ցուրտ է, իսկ նրանց ձմեռանոցը գտնվում է Սելևկիայում, որ Տիգրիսի վրա է, Բաբելոնին մոտիկ: Մյուսն է Ատրոպատյան Մարաստանը, որ իր անունը ստացել է առաջ-

[612] Սֆրագիդ – աշխարհագրական բաժանմունք:

նորդ Ատրոպատեսից. սա է որ չթողեց, որպեսզի այս երկիրը, որ Մեծ Մարաստանի մասն էր, ընկնի մակեդոնացիների իշխանության տակ:

Իրեն թագավոր հայտարարելով՝ երկիրն անկախ դարձրեց, և իր հաջորդությունը շարունակում է մինչև այժմ իր ժառանգորդների՝ Հայոց, Ասորոց ու Պարթևաց թագուհիների հետ կնքած խնամիությամբ: Երկիրը գտնվում է արևելքից Հայաստանի մոտ, արևմուտքից՝ Մեծ Մարաստանի, իսկ հյուսիսից՝ այս երկու երկրների մոտ, հարավից գտնվում է Վրկանաց ծովի խորքի շուրջը գտնված երկրների և Մատիանեի մոտ: Զինվորական ուժը փոքր չէ, և ինչպես ասում է Ապոլլոնիդեսը[613], կարող է հանել 10.000 ձիավոր և 40.000 հետևակ: Ունի մի լիճ, որ կոչվում է Սպավտան [իմա՝ Կապուտան], որի մեջ կազմվում են աղի խավեր. սրանք քոր ածող և կսկծեցնող են: …Ատրոպատենն ունի երկու զորավոր հարևան, սրանք են հայերը և պարթևները, որոնք շատ անգամ խլել են նրա հողերը: Այնուամենայնիվ, նա դիմադրում է նրանց և հետ առնում գրաված հողերը, ինչպես խլեց Սիմբակեն՝ հռոմեացիներին հպատակած հայերից, և դիմելով Կեսարի բարեկամությանը՝ պարթևների հետ էլ միաժամանակ հաշտ ապրեցին:

Ատրոպատենի թագավորների ամառային պալատը գտնվում է Գազակա [=Գանձակ] քաղաքում, որ շինված է դաշտավայրի մեջ, իսկ ձմեռայինը՝ Վերա ամուր բերդաքաղաքում, որ Անտոնիոսը պաշարեց պարթևական արշավանքի ժամանակ: Այս քաղաքը 2400 ստադիոն հեռու է Արաքս գետից, բաժանում է Հայաստանը Ատրոպատենից, ինչպես ա-

---

[613] Հույն մատենագիր Ստրաբոնի աղբյուրներից մեկը:

սում է Դելլիոսը՝ Անտոնիոսի բարեկամը, որ նկարագրեց նրա արշավանքը պարթևների դեմ, ուր ներկա էր նաև ինքը և մասնակցեց իբր զորավար:

[Խոսելով Մեծ Մարաստանի մասին, նշում է, որ] …արևմուտքից սահմանակից է Ատրոպատենին և Հայաստանի մի մասին:

Գիրք XI, գլուխ 14

Հայաստանի հարավը պաշտպանում է Տավրոսը, որն այն բաժանում է Եփրատի և Տիգրիսի միջև գտնված ամբողջ երկրից, որը կոչում են Միջագետք. արևելքում այն սահմանակից է Մեծ Մեդիային և Ատրոպատենեին, հյուսիսից Կասպից ծովի վերևի Պարաքոաթրա[614] լեռներն են, և՛ Աղվանները, և՛ Իբերները և այս ազգերին ներփակող Կովկասը, որը, հասնելով Հայաստանին, միանում է Մոսքիկյան[615] և Կոլխիսի (Կողքիս, Կոլխիդա) լեռներին, մինչև տիբարեններ կոչվածների երկիրը. արևմուտքից այս (տիբարենների) ազգն է, և՛ Պարիադրեսը, և՛ Սկյուդիսեսը[616] մինչև Փոքր Հայք, և՛ Եփրատի հունը, որ Հայաստանը բաժանում է Կապադովկիայից և Կոմմագենից:

Եփրատը, սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային կողմից, նախ հոսում է Հայաստանի միջով դեպի արևմուտք, հետո

---

[614] Պարաքոաթրա (նաև Պարիադրես) հայկական աղբյուրների Խաղտյաց կամ Պարխարյան լեռնաշղթան է, որը ձգվում է Սև ծովի հարավային եզերքով դեպի արևելք:

[615] Լեռներ Պոնտոսի և Հայաստանի միջև, այժմ՝ Կարչխալի և Աճարայի լեռներ:

[616] Սկյուդիսես – Պոնտական լեռների բազուկներից մեկը, որ վերջինս կապում է Անտիտավրոսի հետ:

շրջվում է դեպի հարավ և կտրում Տավրոսը Հայաստանի և Կապադովկիայի ու Կոմմագենեի միջև, (այնուհետև) դուրս գալով այնտեղից և հասնելով Սիրիա՝ շրջվում է դեպի ձմեռային արևելք[617]՝ մինչև Բաբելոն և ձևավորում է Միջագետքը Տիգրիսի հետ: Այս երկուսը վերջանում են Պարսից ծոցում: Ամբողջ շրջապատը լեռնային է ու քարքարոտ, բացի Մեդիայի կողմը գտնվող փոքր մասից: Դարձյալ հիշյալ Տավրոսից անդին, որը սկսվում է Կոմմագենեն և Մելիտենեն եզերող Եփրատի հակառակ ափին, հարավում կա Մասիոս լեռը[618], որը գտնվում է Միջագետքի Միգդոնիայից վերև, որում և Մծբինն է: Հյուսիսային կողմում ընկած է Սոփենեն[619], Մասիոս լեռան և Անտիտավրոսի միջև: Այս (լեռը), սկիզբ առնելով Եփրատից ու Տավրոսից, վերջանում է Հայաստանի արևելյան կողմերում՝ մեջտեղում ընդգրկելով Սոփենեն, իսկ մյուս կողմից ունենալով Ակիլիսենեն[620], որը գտնվում է Տավրոսի և Եփրատ գետի միջև, մինչև սրա դեպի հարավ թեքվելը. Սոփենեի արքայանիստը Կարկաթիոկերտն է[621]. Մասիոսից վերև՝ շատ արևելք, Գորդյուենեի[622] երկարությամբ, գտնվում է Նիփատեսը[623], հե-

---

617 Այսինքն՝ հարավ:

618 Մասիոս (Իզալա, Տուր-Աբդին) – Մեծ Հայքը Միջագետքից եզերող լեռնապար:

619 Հունական աղբյուրներում Ծոփքը կոչվում էր Սոփենե:

620 Ակիլիսենե – Հայոց Եկեղյաց կամ Անահտական գավառն է:

621 Կարկաթիոկերտ (այլ ձեռագրերում՝ Կարկասիոկերտ) – Ծոփքի մայրաքաղաքը, տեղադրվում է Անգեղ տուն գավառում՝ միջնադարյան Անգղ բնակավայրի տեղում (այժմ՝ Էգիլ):

622 Գորդյուենե – Կորդվաց աշխարհն է:

623 Նիփատես (Նպատ) – Զագրոս (Կոհ ի Նիհորական) լեռնային սիստեմի հյուսիսային հատվածն է, որը Հայաստանի մասում անտիկ հեղինակները կոչում էին Նպատ՝ հատվածի գագաթներից մեկի՝ Նպատի (2332 մ) անունից:

տո Աբոսը[624], որից հոսում են և՛ Եփրատը, և՛ Արաքսը. մեկը՝ դեպի արևմուտք, մյուսը՝ դեպի արևելք. այնուհետև Նիբարոսը[625] ձգվում է մինչև Մեդիա:

Արդեն ասել ենք, թե Եփրատն ինչ ուղղությամբ է հոսում: Իսկ Արաքսը, հոսելով դեպի արևելք՝ մինչև Ատրոպատենե, թեքվում է դեպի արևմուտք և հյուսիս ու հոսում է նախ Ազարայի[626], ապա Արտաշատի՝ Հայաստանի քաղաքների մոտով: Այնուհետև Արաքսի դաշտի միջով դուրս է գալիս Կասպից ծով:

Բուն Հայաստանում կան շատ լեռներ և լեռնադաշտեր, որտեղ որթատունկը հեշտությամբ չի աճում, (կան նաև) շատ հովիտներ, մի մասը՝ միջակ, մյուսները՝ խիստ բերրի, ինչպես Արաքսի դաշտը, որով Արաքս գետն է հոսում մինչև Աղվանքի եզրերը և թափվում է Կասպից ծով. այնուհետև՝ Շակաշենը[627], որը և սահմանակից է Աղվանքին և Կուր գետին, հետո Գոգարենեն[628]: Այս ամբողջ երկիրը լի է բերքով և ընտանի ու մշտադալար ծառերով, ունի նաև ձիթենի: Փավենեն[629] ևս Հա-

---

624 Աբոս – Սրմանց կամ Բյուրակն հրաբխային զանգվածն է (այժմ՝ Բինգյոլ):

625 Տավրոսի բազուկներից մեկն է, որը Ասորեստանի հյուսիսային սահմաններից ձգվում է մինչև Մարաստան (այժմ՝ Զյուդի-դաղ):

626 Շակաշեն (Սակասենե) – Կուր գետի աջափնյա տարածքում գտնվող հայկական գավառ (ներկայիս Գյանջայի շրջանը):

627 Գոգարենե – հայկական Գուգարքն է՝ Մեծ Հայքի աշխարհներից մեկը:

628 Փավենե (Փավնիտիս) – գավառ, որը Արտաշես II-ի՝ դեպի Մարաստան կատարած արշավանքից հետո միացվեց Հայաստանին: Տեղադրությունը պարզ չէ, գուցե նույնանում է Փայտակարանի հետ:

629 Կոմիսենե – հին Հայաստանի ծայր Հյուսիսային գավառներից մեկը՝ Կամբյուսենե (Կամբեջան) երկրի հայկական մասը, որը Կուր գետով բաժանվում էր Իբերիայից ու Աղվանքից:

յաստանի գավառներից է և Կոմիսենեն[630] ու Օրքիստենեն, որ տալիս է մեծաքանակ հեծելազոր: Խորզենեն[631] և Կամբյուսենեն ամենահյուսիսայիններն են և առավել ձյունառատ, որոնք սահմանակցում են Կովկասյան լեռներին և Իբերիային ու Կոլխիսին…

Պատմում են, թե Հայաստանը, նախապես փոքր լինելով, աճել է Արտաքսիասի և Զարիադրիսի[632] միջոցով, որոնք նախկինում եղել են Անտիոքոս Մեծի[633] ստատեգոսները, իսկ հետագայում՝ նրա պարտությունից հետո, թագավորել է սա՝ Սոփենեի, Ակիսենեի և Օդոմանտիսի ու մի քանի այլ գավառների վրա, նա էլ՝ Արտաշատի շրջակայքում: Երկուսն էլ աճեցին՝ շրջակա ազգերից հողեր գրավելով. մարերից՝ Կասպիանեն[634], Փավնիտիսը և Բասորոպեդան[635], իբերներից՝ Պարիադրես լեռան ստորոտները[636], և Խորզենեն ու Գոգարենեն, որը գտնվում է Կուրի մյուս կողմում[637], խալյուբներից և մոսյունոյկ-

---

630 Խորզենե – հայկական գավառ Կուր գետի ակունքների շուրջն ընկած տարածքում (հետագայում՝ Կղարջք գավառը):

631 Հույն մատենագիր Ստրաբոնի աղբյուրներից մեկը:

632 Խոսքը Արտաշեսյան հարստության հիմնադիր, Մեծ Հայքի թագավոր Արտաշես Ի-ի և Ծոփքի թագավոր Զարեհի մասին է:

633 Անտիոքոս Մեծ – Սելևկյան տերության թագավոր Անտիոքոս III Մեծն է:

634 Կասպիանե – Կուրի և Արաքսի գետախառնուրդի շրջանն է և նրանից արևելք՝ մինչև Կասպից ծովն ընկած տարածքը: Մովսես Խորենացին (գիրք Բ, գլ. 53) այն անվանում է Կասբից երկիր:

635 Բասորոպեդա – համընկնում է Վասպուրականի Պարսպատունիք գավառին:

636 Պարիադրես (Պարխար) լեռների ստորոտը համապատասխանում է հայոց Գողերձական գավառին:

637 Այս երեք գավառներն էլ (Գուգարք, Խորզենե, Գողերձական) հենց սկզբից ընդգրկված են եղել Երվանդունիների պետության կազմի մեջ և միայն Ք.ա. III դարի վերջերին են անցել Վրաստանին: Հետևաբար, Ստրաբոնը շփոթում

ներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն[638], որոնք Փոքր Հայքին սահմանակից են և կամ նրա մասն են կազմում, կատաոններից[639]՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի շրջանը, ասորիներից՝ Տամոնիտիսը[640], ուստի և բոլորը միալեզու են:

Հայաստանի քաղաքներն են Արտաքսատան (որը կոչում են և Արտաքսիասատա, որը Հաննիբալը[641] կառուցել է Արտաքսիաս թագավորի համար) և Արքսատան[642], երկուսն էլ՝ Արաքսի վրա, Արքսատան՝ Ատրոպատիայի սահմանների մոտ, իսկ Արտաքսատան՝ Արաքսի դաշտի մոտ. այն լավ համաբնակեցված է և երկրի արքայանիստն է. գտնվում է (գետա)թևի կազմած թերակղզու վրա, նրա պարիսպը շուրջանակի պատում է գետը՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը շրջափակված է փոսով և պատնեշով: Քաղաքից ոչ շատ հեռու գտնվում էին Տիգրանի և Արտավազդի գանձատները, Բա-

---

է, երբ գրում է, թե Արտաշեսը նվաճեց դրանք. այս գործողությունը պետք է դիտել որպես վերամիավորում:

638 Կարենիտիս – Կարնո աշխարհն է՝ Բարձր Հայքի իններորդ գավառը, այժմյան Էրզրումի սանջակը:

639 Դերքսենե սա Բարձր Հայքի վեցերորդ գավառ Դերջանն է, այժմյան Թերջանը՝ Եփրատ գետի հովտում:

640 Կատաոններ – ցեղային միություն, որն ապրում էր Եփրատից արևելք՝ անտիկ հեղինակների Կատաոնիայում:

641 Հաննիբալ Բարկա (247–188) – Հին աշխարհի ականավոր զորավար, Կարթագենի պետական գործիչ, Հռոմի ոխերիմ հակառակորդ: Պարտություն կրելով հռոմեացիներից՝ Ք.ա. 195 թ. ապաստանեց Անտիոքոս III Մեծի մոտ, սակայն վերջինիս՝ հռոմեացիներից կրած պարտունից հետո (Մագնեսիա, 190 թ.) անցավ Բյութանիա, ուր և Ք.ա. 183 թ. ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին: Ուսումնասիրողների թերահավատությունը Հաննիբալի Հայաստանում լինելու մասին վերջերս կարծես սկսում է փարատվել:

642 Արքսատա – քաղաք Արաքսի ափին, Նախճավանի կողմերը: Հետազոտողները գտնում են, որ այն հայերեն պետք է հնչեր Արշատ:

բյուրսա և Օլանե անառիկ ամրոցները[643]: Ուրիշ ամրոցներ ևս կային Եփրատի վրա: Արտագեյրան[644] ապստամբեց բերդապետ Ադդոնի գլխավորությամբ[645]. Կեսարի[646] զորավարները, երկար ժամանակ պաշարելով, գրավեցին այն և պարիսպները քանդեցին:

Երկրում շատ գետեր կան. նշանավորագույն են Փասիսը[647] և Լյուկոսը[648], որոնք թափվում են Պոնտական ծովը. Էրատոսթենեսը Լյուկոսի փոխարեն ոչ ճիշտ կերպով դնում է Թերմոդոնը, իսկ Կուրը և Արաքսը թափվում են Կասպից (ծով), Եփրատը և Տիգրիսը՝ Կարմիր ծով:

Հայաստանում կան նաև մեծ լճեր, մեկը Մանտիանեն է, Կապույտ թարգմանվող[649], որը, ինչպես ասում են, Մայոտիսից[650] հետո մեծագույնն է աղի լճերի մեջ և տարածվում է մինչև Ատրոպատիա, ունի նաև աղահանքեր, մյուսը՝ Արսենեն, որը կոչում են նաև Թոպիտիս[651]. այն պարունակում է բո-

---

643 Բաբյուրսա և Օլանե – ամրոցներ, որտեղ պահվում էին Հայաստանի պետական գանձերը. տեղադրությունները անորոշ են:

644 Արտագեյրա (Արտագերս) – անառիկ ամրոց պատմական Հայաստանի Արշարունյաց գավառում (այժմ՝ Քերս գյուղը):

645 Ստրաբոնը նկատի ունի Արտագերս ամրոցի վերակացու Ադդոն (ըստ երևույթին՝ Ատոմ) զորավարին, որը Ք. հ. 2 թվականի սեպտեմբերի 9-ին դաշույնով ծանր վիրավորեց Արտագերսը պաշարած հռոմեական զորքերի հրամանատար, Օգոստոս կայսեր որդեգիր Գայոս Կեսարին:

646 Խոսքը Օգոստոս կայսեր թոռան և որդեգիր Գայոս Կեսարի մասին է:

647 Փասիս – գետ Կողքիսում (այժմ՝ Ռիոն):

648 Լյուկոս (Գայլ գետ) – Իրիսի վտակներից մեկը (այժմ՝ Գելգիտ-չայ):

649 Խոսքը Հայկական լեռնաշխարհի և Իրանական սարահարթի միջև տարածվող Կապուտան (Ուրմիա) լճի մասին է, գտնվում է 1275 մ բարձրության վրա:

650 Մայոտիս – Ազովի ծովն է:

651 Արսենե (Թոպիտիս) – Վանա (Բզնունյաց կամ Ռշտունյաց) լիճն է, գտնվում է 1720 մ բարձրության վրա:

րակ և զգեստները լվանում է ու մաքրում, այդ պատճառով էլ ջուրը խմելու չէ[652]: Տիգրիսը, իջնելով Նիփատես լեռից, անցնում է դրա միջով, անխառն պահելով իր հոսանքը, ուժգնության պատճառով, որից էլ գետի անունը. մարերեն Տիգրիս կոչում են նետաձգությունը: Սա բազմատեսակ ձկներ ունի, մինչդեռ լճայինները միայն մեկ տեսակ են[653]: Լճի խորշի մոտ գետն ընկնում է վիհի մեջ[654] և երկար տարածություն գետնի տակով տարվելուց հետո դուրս է գալիս Քալինտիսի մոտ. այնտեղից էլ (հոսելով) դեպի Օպիս[655] և Սեմիրամիսի[656] կոչված պատնեշը, այն իջնում է դեպի Գորդվացիները՝ աջում թողնելով ամբողջ Միջագետքը, մինչդեռ Եփրատը (հոսում) է՝ այս նույն երկիրն իր ձախ կողմում ունենալով: Իրար մոտենալով և ձևացնելով Միջագետքը՝ մեկը Սելևկիայով թափվում է Պարսից ծոցը, իսկ մյուսը՝ Բաբելոնով, ինչպես ասվել է Էրատոսթենեսի և Հիպպարքոսի[657] մասին խոսելիս:

Ոսկու հանքեր կան Սյուսպիրիտիսի[658] մեջ, Կաբալայում[659], որտեղ Ալեքսանդրը ուղարկեց Մենոնին զինվորներով.

---

652 Վանա լճի ջրերը պարունակում են մեծ քանակությամբ կալիումի և նատրիումի կարբոնատ, քլորիդներ և սուլֆատներ, աղիությունը 19,1 տոկոս է:

653 Ստրաբոնը նկատի ունի տառեխ ձուկը:

654 Ստրաբոնը շփոթում է, քանզի Վանա լճի ջրերը ելք չունեն, իսկ Տիգրիսն էլ հոսում է այլ հունով՝ լճից շատ հեռու:

655 Քալինտիս և Օպիս – բնակավայրեր Հյուսիսային Միջագետքում:

656 Սեմիրամիս – հայկական Շամիրամն է:

657 Հիպպարքոս – հույն նշանավոր մատենագիր, աստղագետ, մաթեմատիկոս և աշխարհագիր (Ք.ա. II դ.), որի գործերը մեզ չեն հասել:

658 Սյուսպիրիտիս (Սյուսպիրիտիս) – Բարձր Հայքի յոթերորդ գավառն է՝ հայկական աղբյուրների Սպերը, ընդգրկում է Ճորոխ գետի վերին հոսանքը (այժմ՝ Իսպիր): Կա նաև տեսակետ, որ այն համապատասխանում է ասուրական արձանագրությունների Շուբրիա երկրին, որը տեղադրվում է Աղձնիքում:

659 Քաղաք Սպեր գավառում:

սա խեղդամահ արվեց տեղաբնակների կողմից: Կան նաև այլ հանքեր, հատկապես սանդիկս կոչվածը, որը կոչում են նաև «Հայկական գույն» և նման է կալքեի…

Երկրի մեծությունը Թեոփանեսը հաշվում է լայնքը՝ հարյուր սքոյնոս[660], երկարությունը՝ կրկնակի՝ մեկ սքոյնոսը դնելով քառասուն ասպարեզի (հավասար): Սա չափազանցությամբ է ասված: Ճշմարտության առավել մոտ է երկարությունը՝ նրա ասած լայնքը, իսկ լայնքը՝ դրա կեսը կամ փոքր-ինչ ավելի: Այսպիսին են Հայաստանի բնությունը և զորությունը:

Ահա մի հին ավանդություն այս ազգի մասին: Արմենոսը՝ Թեսալիայի Արմենիոն քաղաքից, որ գտնվում է Ֆերեսի և Լարիսայի միջև, Բոյբեյի վրա, ինչպես ասացինք, Յասոնի հետ արշավեց Հայաստան: Սրա անունով է կոչվում Արմենիա, ինչպես ասում են Կյուրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին, երկուսն էլ՝ Ալեքսանդրի զինակիցներ: Նաև թե Արմենոսի հետ եղողները բնակվեցին Եկեղիքում, որ նախապես Ծոփքի իշխանության տակ էր, մյուսները Սյուսպիրիտիսում՝ մինչև Կալաքեն և Ադիաբեն, Հայաստանի սահմաններից դուրս…

Հին զրույցն այս է, իսկ առավել նորը, սկսած պարսիկներից ի վեր մինչև մեր ժամանակը, պետք է գլխավոր գծերով պատմել: Արմենիային տիրել են պարսիկները և մակեդոնացիները, այնուհետև նրանք, ովքեր նվաճել էին Ասորիքը և Մեդիան[661]: Վերջին իշխողն էր յոթ պարսիկներից մեկի՝ Հյուդար-

---

[660] Հունական չափի միավոր, որը հավասար է 40 ստադիոնի, այսինքն՝ 7080 մետրի:

[661] Ստրաբոնի՝ սույն հատվածի նորագույն մեկնաբանությունները ցույց են տալիս, որ մակեդոնացիների անվան տակ պետք է հասկանալ ոչ թե Ալեքսանդր Մակեդոնացուն, այլ Սելևկյաններին, քանզի Հայաստանը երբեք էլ չենթարկվեց Ալեքսանդրի իշխանությանը:

նեսի[662] շառավիղ Օրոնտեսը[663]: Այնուհետև (երկիրը) բաժանվեց երկու մասի՝ հռոմեացիների դեմ պատերազմած Անտիոքոս Մեծի ստրատեգոսների՝ Արտաքսիասի և Զարիադրիսի[664] կողմից: Եվ իշխում էին սրանք թագավորի հանձնարարությամբ, իսկ նրա պարտությունից հետո[665] հարելով հռոմեացիներին՝ իշխեցին իրենք ինքնուրույն և թագավոր հայտարարվեցին: Արտաքսիասի շառավիղն էր Տիգրանը, որն ուներ, այսպես կոչված, բուն Հայաստանը. այն հարակից էր Մեդիային, Աղվաններին և Իբերներին, մինչև Կոլխիս ու Եվքսինյան Կապադովկիա, իսկ Զարիադիրիսի (շառավիղն էր) Արտանես Սոփենացին, որն ուներ հարավային և, առավելապես, արևմտյան մասերը: Տիգրանը հաղթեց նրան, և ինքը դարձավ այդ բոլոր երկրների տերը[666]: (Տիգրանը) փոփոխական բախտ է ունեցել, քանզի նա սկզբում պատանդ է եղել պարթևների մոտ, այնուհետև (պարթևները), որպես վարձ ստանալով 70 հովիտ Հայաստանից, նրան վերադարձնում են (գահը): Նա, հզորա-

---

662 Հյուդարնեսը (Վիդարնա) այն յոթ երևելի պարսիկներից մեկն էր, որ Ք.ա. 522 թ. սեպտեմբերի 29-ին օգնեցին Դարեհ Վշտասպյանին սպանելու ինքնակոչ Գաումատային (Բարդիյա), որից հետո Դարեհը հռչակվեց Պարսկաստանի թագավոր (522-486): Ըստ Ստաբոնի՝ Դարեհի զինակից այս Հյուդարնեսից էլ սերվում էին Երվանդունիները:

663 Օրոնտես (Երվանդ IV Վերջին) – Երվանդունիների հարստության վերջին ներկայացուցիչը, Հայաստանի թագավոր:

664 Արտաշեսը և Զարեհը մինչ թագավոր հռչակվելը (Ք.ա. 189 թ.) Սելևկյան ստրատեգոսներ էին. առաջինը՝ Մեծ Հայքում, իսկ մյուսը՝ Ծոփքում: Ստրատեգոսն օժտված էր քաղաքացիական, վարչական և ռազմական իրավարարություններով և տվյալ երկրամասի կառավարիչն էր:

665 Խոսքը Անտոնիոս III Մեծի՝ Ք.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում հռոմեացիներից կրած պարտության մասին է:

666 Տիգրան II-ը Ծոփք ներխուժեց Ք.ա. 94 թ. և առանց դժվարության գրավեց այն. Ծոփքի թագավոր Արտանես Զարեհյանը սպանվեց, իսկ երկիրն էլ միացվեց Մեծ Հայքին:

նալով, թե՛ այդ վայրերը ետ վերցրեց և թե՛ նվաճեց նրանց երկիրը՝ Նինվեի ու Արբելայի շուրջը: Նա հպատակեցրեց նաև Ատրոպատենեն և Գորդյուենեն և սրանց հետ նաև մնացյալ Միջագետքը. բացի այդ, անցնելով Եփրատը, նա ուժով նվաճեց Ասորիքը և Փյունիկեն: Նա այդքան հզորանալով՝ Օլիբերիայի մոտ[667], նրա և Եփրատի վրա գտնվող Զևգմայի մոտ կառուցեց քաղաք, որն անվանեց Տիգրանակերտ և իր ավերած 12 հելլենական քաղաքների մարդկանց այնտեղ հավաքելով (բնակեցրեց):

Գիրք XII, գլուխ 1

[Կապադովկիան սահմանագծված է՝] ...հարավից Կիլիկյան կոչված Տավրոսով, արևելքից Հայաստանով ու Կողքիսով և սրանց միջև գտնված այլալեզու ժողովուրդներով...

Հները կատառնացիներին[668] առանձնացնում էին համալեզու կապադովկացիներից՝ զանազանելով կապադովկացիներից՝ իբրև այլացեղներից. և ազգերի հաշվարկության մեջ կապադովկացիների հետ դնում էին կատառնացիներին և Եփրատից այն կողմ գտնված ազգերին, այնպես որ Կատառնիայի տակ էին դնում նաև Մելիտենեն[669], որ գտնվում է սրա և Եփ-

---

667 Օլիբերիա – ըստ երևույթին, ամրոց Տիգրիսի վերին հոսանքի ձախակողմյան վտակներից մեկի՝ Նիկեփորիոնի (ներկայից Ֆարկին-սու) ափին: Հենց այստեղ էլ 80-ական թվականների վերջերին Տիգրան II-ը հիմնադրեց իր տերության նոր մայրաքաղաքը:

668 Կատառնիա – երկիր Փոքր Ասիայում, հարևան Կապադովիային, որին միացավ հետո և կազմեց նրա մի նահանգը: Կատառնացիքին կամ կատառներին էին պատկանում նախապես հին Հայաստանի Եկեղիք և Անտիտավրոսի գավառները:

669 Մելիտինե – քաղաք Փոքր Հայքում, այժմ կոչվում է Մալաթիա:

բատի միջև՝ սահմանակից Կոմմագենին, և կազմում է Կապադովկիայի տասներորդ մասը, ըստ արդի բաժանման, որով երկիրը բաժանված է 10 ստրատեգիաների:

Գիրք XII, գլուխ 2

Մելիտինեն շատ նման է Կոմմագենեին. ամբողջությամբ ծածկված է ընտանի ծառերով, միակը ամբողջ Կապադովկիայի մեջ, որ բերում է նաև ձեթ և մոնարիտ կոչված գինին. գտնվում է Ծոփքի դիմաց՝ մեջտեղն ունենալով Եփրատ գետը, և նրան ու Կոմմագենեին սահմանակից է: Կա նշանավոր մի բերդ, որ պատկանում է Կապադովկիային և գտնվում է Եփրատի մյուս կողմում՝ Տոմիսա անունով. ծոփացիք գնել էին այն՝ 100 տաղանդով. իսկ հետո Լուկուլլոսը նվիրեց Կապադովկիային՝ իբր վարձ այն օգնության, որ ցույց տվեցին նրան Միհրդատին դեմ պատերազմում:

Մաժակը Պոնտոսից մոտ 800 ստադիոն հեռու է դեպի հարավ, իսկ Եփրատից՝ դրա կրկնակիից քիչ պակաս…

Տիգրանը՝ թագավորը Հայոց, շատ նեղեց Մաժակը դեպի Կապադովկիա կատարած իր բազմաթիվ արշավանքների ժամանակ. բոլորը տեղահանվելով՝ փոխադրվեցին Միջագետք, և Տիգրանակերտը մեծ մասամբ նրանցով շենացավ, ապա, Տիգրանակերտի առումից հետո, ովքեր որ կարող էին, հետ վերադարձան:

Երկրի տարածությունն է՝ ըստ լայնության՝ Պոնտոսից մինչև Տավրոս շուրջ 1800 ստադիոն, իսկ ըստ երկարության՝

Լիկաոնիայից[670] և Փռյուգիայից[671] մինչև Եփրատ, դեպի արևելք և Հայաստան՝ շուրջ 3000:

Գիրք XII, գլուխ 3

Պոնտոսի վրա թագավորեց Միհրդատ Եվպատորը: Երկրի սահմաններն էին Ալիսից[672] այն կողմ մինչև Տիբարանացիք և Հայաստան, Ալիսից այս կողմ մինչև Ամաստրիս[673] և նույն իսկ Պափլագոնիա[674]: Միհրդատ գրավեց մինչև Հերակլեա՝ արևմտյան ծովափը, Հերակլիտոս Պլատոնականի հայրենիքը, իսկ արևելքից՝ մինչև Կողքիս և Փոքր Հայք, որ միացրեց Պոնտոսին: Պոմպեոսը վերջ տվեց Միհրդատի պետությանը և երկիրն իր այն սահմանների մեջ գրավեց: Հայաստանի և Կողքիսի մոտ եղած մասը բաժանեց այն իշխաններին, որ օգնել էին իրեն պատերազմի մեջ, իսկ մնացյալը բաժանեց 11 պոլիտեայի և միացրեց Բյութանիային, այնպես որ բոլորից ձևացրեց մեկ եպարխիա…

---

670 Լիկյոնիա, Լյուկյոնիա – երկիր Փոքր Ասիայում, հարևան Փռյուգիայի, մայրաքաղաքն էր Իկոնիոն, որ այժմ կոչվում է Կոնիա:

671 Պետություն Փոքր Ասիայի արևմտյան հատվածում՝ Բյութանիայից հարավ, նրա գլխավոր քաղաքներից էր Իկոնիոն (այժմ՝Կոնիա), վանելով հաթերին՝ փռյուգացիները գրավեցին նրանց երկիրը, սակայն Փռյուգիայի հզորությունը երկար չտևեց: Արևելքից եկած քոչվոր կիմմերական ցեղերը ասպատակեցին նրանց երկիրը: Որոշ ժամանակ անց Փռյուգիան ընկավ հարևան Լիդիայի գերիշխանության տակ:

672 Գետ Փոքր Հայքում, հոսում է Սեբաստիայով, թափվում է Սև ծով (այժմ՝ Կզըլ-իրմաք, հնում՝ Ալիս Ալյուս կամ Հալիս):

673Քաղաք Պափլագոնիայում:

674 Երկիր Փոքր Ասիայի հյուսիսային կողմում՝ Սև ծովի հարավային եզերքում՝ Բյութանիայի և Պոնտոսի միջև, մայրաքաղաքը Սինոպն է:

Երկրի [Գազելոնիտիս] այս մասը պատկանում է Ամիսոսին[675], մյուս մասը Պոմպեոսը տվեց Դեիոտարոսին[676], ինչպես և Փառնակիան և Տրապիզոնը՝ մինչև Կողքիս[677] և Փոքր Հայք. այս բոլորը կազմեց մի թագավորություն՝ ունենալով նաև իբր հայրենի ժառանգություն՝ Գաղատացոց չորրորդապետությունը…

Իրիս գետը սկիզբ է առնում Պոնտոսից, հոսում է Պոնտական Կոմանա քաղաքի միջով… իր մեջ է թափվում Լիկոսը [= Գայլ գետը], որ սկսվում է Հայաստանից և ձևացնում Իրիսը:

Տրապիզոնից և Փառնակիայից վերև բնակվում են Տիբարենները[678], Խաղտիք և Սաննիք (որոնք նախապես Մակրոն էին կոչվում) և Փոքր Հայք. Ապահիներն էլ, որ նախկին Կերկիտներն են, մոտիկ են այս երկրներին: Նրանց միջով անցնում է Սկիվդիսե ժայռոտ լեռնաշղթան, որ միանում է Մոսքիկյան լեռներին՝ Կողքիսի վերևում, որոնց գլխավոր գագաթները բռնում են Հեպտակոմետները. նաև Պարիատրես լեռը, որ Սիդենի և Թեմիսկյուրայի դաշտերից ձգվում է մինչև Փոքր Հայք և

---

675 Քաղաք Պոնտոսում, Սև ծովի ափին, այժմ կոչվում է Սամսոն:

676 Գալաթիայի իշխան, Պոմպեոսը նրան նշանակեց թագավոր՝ հանձնելով Փառնակիան, Տրապիզոնը և այլ տարածքներ՝ մինչև Կողքիս և Փոքր Հայք:

677 Երկիր Սև ծովի արևելյան կողմում, որից՝կողքիսացիք, արդի Մինգրելիան:

678 Տիբարեններ – հնագույն ցեղեր, որոնք հիշատակվում են մ.թ.ա. VI-I դարերում անտիկ հեղինակների երկերում: Տիբարանի, Տիբարանացիք, Տիբարենացիք, Տիբարանյան ցեղ, պոնտական ժողովուրդ, որը բնակվում է Տիբարանիա երկրում՝ Սև ծովի հարավարևելյան առափնյա շրջաններում՝ Կողքիսի մոտ, Խալիբներից արևմուտք: Ըստ Հերոդոտոսի (մ.թ.ա. V դար)՝ Տիբարենները դրացի մոքսերի, մակրոնների, մոսինկների ու այլ ցեղերի հետ կազմել են Աքեմենյան տերության 19-րդ սատրապությունը: Քսենոփոնի վկայությամբ մ.թ.ա. V դարի վերջին տիբերեններն արդեն կազմում էին առանձին ցեղային միություն: Ք.ա. III-II դարերում տիբերենների ենթարկվել են Փոքր Հայքի, այնուհետև՝ Պոնտոսի թագավորությանը:

ձևացնում է Պոնտոսի արևելյան կողմը: Այս բոլոր Թեմիսկյուրայի դաշտերից ձգվում է մինչև Փոքր Հայք և ձևացնում է Պոնտոսի արևելյան կողմը:

Փառնակիայի[679] ու Տրապիզոնի գավառներից վերև մինչև Փոքր Հայք գտնվում են Տիբարենացիք և Խաղտիք: Փոքր Հայքը բավական բերրի երկիր է: Ծոփաց նման սա էլ ունեցել է միշտ իր բնիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայոց բարեկամ[680] էին և մերթ ինքնագլուխ[681]: Իրենց հնազանդ էին Խաղտիք և Տիբարենները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա: Երբ Միհրդատ Եվպատորը զորացավ, տիրեց Կողքիսին և այս բոլոր երկրներին, որոնց իշխանությունը Սիսիդոսի որդի Անտիպատրոսը հանձնեց նրան[682]: Միհրդատը հոգ տարավ այս երկրների մասին և շինեց նրանց մեջ 75 ամրոց՝ պահելու համար իր գանձերի մեծագույն մասը: Սրանցից ամենից ավելի արժանի են հիշատակության՝ Հյուդարան, Բասգոյդարիզան և Սինորիան[683], որ գտնվում է Մեծ Հայքի սահմանում, որի համար էլ Թեոփանեսը այն կոչում է Սինորիա[684]: Պարիադրոսի ամբողջ այս լեռնոտ շրջանը հարմարավետ էր՝ լինելով ջրառատ, անտառաշատ և

---

679 Փառնակիա (Կերասունտ) – քաղաք Պոնտոսում (այժմ՝ Գիրեսուն նավահանգիստը Թուրքիայում):

680Նկատի ունի Մեծ Հայքը:

681 Փոքր Հայքը Ք.ա. III-II դարերում (մինչև Պոնտոսին միացվելը) առանձին հայկական թագավորություն էր՝ Եփրատի և Անտիտավրոսի միջև ընկած տարածքում:

682 Անտիպատրոս – Փոքր Հայքի թագավոր, որը Ք.ա. 112 թ. Փոքր Հայքը հանձնեց Միհրդատ Եվպատորին:

683 Ամրոցներ Փոքր Հայքում, որոնցից միայն Սինորիայի տեղադրություն է որոշակի: Այն գտնվել է Գաղտառիճից Սատաղ տանող ճանապարհի վրա՝ Աշկալայից մոտ 15 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ Եփրատ գետի մոտ:

684 Սինորիա նշանակում է «սահմանային»:

անդունդներով սեպացած ու վիհերով բաժանված ամեն կողմից, ուստի այստեղ կառուցեց մեծագույն մասն իր գանձատների, և վերջում էլ Միհրդատը Պոմպեոսի արշավանքի ժամանակ[685] ապաստանեց այնտեղ՝ Պոնտական թագավորության այս ծայրամասում, և Եկեղիքում՝ Դաստեյրայի[686] մոտ գրավելով մի ջրաշատ լեռ (սրան մոտիկ է Եփրատը, որ բաժանում է Եկեղիքը Փոքր Հայքից), մնաց այնտեղ, մինչև որ պաշարվելով ստիպվեց փախչել լեռներով Կողքիս և այնտեղից էլ՝ Վոսփոր: Պոմպեոսը նույն տեղի մոտ՝ Փոքր Հայքում, շինեց Նիկոպոլիս[687] քաղաքը, որ այժմ էլ կա և լավ բնակեցված է:

Փոքր Հայքի վրա հռոմեացիների կամքով երբեմն սրա, երբեմն նրա իշխելուց հետո վերջին իշխողն եղավ Արքեղայոսը[688]…

Պոմպեոսը Կապադովկիայի շատ եպարխիաներ միացրեց այս երկրին և քաղաք անվանեց թե՛ այս Զելան[689] և թե՛ Մեգալոպոլիսը[690], որին կցեց Կուլուպենե[691] և Կամիսենե[692] եպարխիաները, որոնք սահմանակից են Փոքր Հայքի և Լավիանսե-

---

685 Պոմպեոսը Միհրդատի դեմ արշավանքը սկսեց Ք.ա. 66 թ. գարնանը:

686 Դաստեյրա – ամրոց Փոքր Հայքում, միջնադարյան հայկական Դաստարակ գյուղն է (այժմ՝ Դաստալի գյուղը Զիմարայի մոտ):

687 Նիկոպոլիս – այս քաղաքը հիմնադրել է Գնեոս Պոմպեոսը՝ ի նշանավորումն Միհրդատ Եվպատորի դեմ տարած հաղթանակի, Գայլ (Լյուկոս) գետի ափին, այժմյան Բյուրգ կամ Պյուրկ գյուղի մոտ:

688 Արքելայոս – Փոքր Հայքի վերջին թագավորը:

689 Այժմ կոչվում է Զիլե:

690 Պոնտոսի քաղաքներից, սահմանակից Փոքր Հայքին:

691 Կուլուպենե – եպարխիա, սահմանակից Փոքր Հայքին, որը Պոմպեոսը կցեց Մեգալուպոլիսին:

692 Կամիսենե – Կապադովկիայի գավառներից, սահմանակից Փոքր Հայքին, որը Պոմպեոսը կցեց Մեգալուպոլիսին: Ըստ Ստրաբոնի՝ Կամիսենեն կոչվում է նաև Պոնտական Կապադովկիա:

նի[693], և որոնց մեջ կան աղահանքեր և Կամիսայի[694] հին բերդը՝ այժմ ավերակ:

Գիրք XIV, գլուխ 2

…Լյուկայոնիայի Կորոպասսոսից մինչև Գարսաուրա, որ Կապադովկիայի սահմանին շինված մի փոքրիկ քաղաք է, 120 ստադիոն. այդտեղից մինչև Մաժակ՝ Կապադովկիայի մայրաքաղաքը՝ Սոանդոսի և Սաղակոբայի վրայով, 680 ստադիոն. այնտեղից Եփրատի վրայով մինչև Ծոփաց Տոմիսա կոչված վայրը՝ Հերփե փոքր քաղաքի միջով, 1440 ստադիոն: Այստեղից ուղղակի մինչև Հնդկաստան, ուր ավարտվում է ճանապարհը, միևնույնն է թե՛ ըստ Արտեմիդորոսի և թե՛ ըստ Էրատոսթենեսի: Պոլիբիոսն էլ ասում է, թե այս մասին ավելի վստահելի է նա՝ Էրատոսթենեսը: Ճանապարհը սկսվում է Կոմագենեի Սամոսատից, որ գտնվում է Եփրատի անցքի և Զևգմայի մոտ. իսկ մինչև Սամոսատ՝ Կապադովկիայի սահմանից, Տոմիսայի մոտ, Տավրոսի վրայով, Էրատոսթենեսը դնում է 450 ստադիոն:

Գիրք XIV, գլուխ 5

[Խոսելով Սելևկյանների ներքին կռիվների մասին] Այս բոլորի հետևանքն եղավ այն, որ երկիրը մատնեցին պարթևներին, որոնք արդեն գրավել էին Եփրատի մյուս կողմը, ի վերջո՝ հայերին, որոնք Տավրոսից դուրս էլ գրավեցին մինչև Փյունի-

---

[693] Լավիանեսենե – Կապադովկիայի գավառներից, սահմանակից է Փոքր Հայքին:

[694] Կամիսա – Պոնտոսի հին բերդերից:

կիա և Սելևկյան թագավորների զորությունը խորտակեցին, նրանց սերունդն ամբողջ ջնջեցին և ծովը հանձնեցին կիլիկեացիներին: Սրանց զորացումը ստիպեց հռոմեացիներին պատերազմով ու զինու զորությամբ հարվածել նրանց, որոնց զարգացման առաջքը չէին առել:

[Դատապարտելով և Եֆորոսի[695] մի սխալը, որով նա խալիբներին[696] համարում է Փոքր Ասիայի թերակղզու ներսում բնակվող մի ժողովուրդ, մինչդեռ նրանք Սինոպից[697] և Ամիսոսից էլ ավելի արևելք են]: Ովքեր այս թերակղզու պարանոցը համարում են իբր Իսոսից Եվքսին[698] գնացող մի գիծ, ենթադրում են այդ գիծը իբր մի միջօրեական, որ ոմանք հասցնում են մինչև Սինոպ, և ոմանք էլ մինչև Ամիսոս, բայց ոչ ոք չի հասցնում մինչև Խալիբները, որ բոլորովին ծուռ պիտի լիներ: Որովհետև խալիբների միջօրեականը գրավորապես անցնում է Փոքր Հայքից և Եփրատից, այս կողմ թողնելով ամբողջ Կապադովկիան, Կոմմագենեն, Ամանոսը[699] և Իսոսի[700] ծոցը:

Գիրք XV, գլուխ 1

Եփրատից այն կողմ գտնվում են Հայաստանի մեծ մասը[701], ամբողջ Միջագետքը, նրա հետևից Մարաստանը մինչև

---

695 Հույն մատենագիր:

696 Խալիբներ – Պոնտոսի արևելյան կողմում բնակվող մի ժողովուրդ, որոնք նշանավոր էին երկաթագործության մեջ, և իրենք էլ հնարել էին պողպատը:

697 Սինոպ – Պափլագոնիայի մայրաքաղաքը, գտնվում է Սև ծովի ափին:

698 Եվքսին կամ Եվքսինյան ծով, Սև կամ Պոնտական ծով:

699 Ամանոս – լեռնաշղթա Կիլիկիայի արևելյան կողմում (այժմ՝ Ալմադաղ):

700 Իսսոս – քաղաք Կիլիկիայում, համանուն ծոցի խորքում, ուր 333 թ. Ալեքսանդր Մակեդոնացին հաղթեց Դարեհին, այժմ կոչվում է Իվզլեր:

701 Անտիկ հեղինակները երբեմն այսպես են կոչում Մեծ Հայքը:

Պարսկաստան և Կարմանիա: Հայտնի է, որ այս երկրներից յուրաքանչյուրը մեծ մասամբ այգեշատ և գինեվետ է:

Գիրք XVI, գլուխ 1

Բաբելացոց երկիրը շրջապատված է արևելքից Շոշով, Ելամով[702] և Պարետակենով[703], հարավից՝ Պարսից ծոցով և Քաղդեստանով[704], մինչև Մեսենական Արաբները, արևմուտքից՝ վրանաբնակ Արաբներով, մինչև Ադիաբեն[705] և Գորդյայք[706], հյուսիսից Հայաստանով և Մարաստանով մինչև Զագրոս և շրջակա երկրները:

Տիգրիսը, Հայաստանի ամենահարավային մասերից առնելով իր սկիզբը և մոտիկ լինելով Բաբելոնին, ստանում է հարավային կողմերից ոչ մեծ քանակությամբ ձյունաջուր և նվազ ենթակա է հեղեղման: Իսկ Եփրատը ստանում է իր ջրերը երկու կողմերից և ոչ միայն մի լեռնաշղթայից, այլև շատերից, ինչպես ցույց տվեցինք Հայաստանի նկարագրության մեջ: Ավելացնենք նաև գետի երկարությունը թե Մեծ Հայքով և թե Փոքր Հայքից անցնելիս, ինչպես և Փոքր Հայքից և Կապադով-

---

702 Ելամ – երկիր Ասորեստանից և Քաղդեայից հարավ՝ Պարսից ծոցի մոտ, մայրաքաղաքը՝ Շոշը, ելամցիները նվաճեցին Քաղդեաստանը, բայց հետո՝ Ասորեստանի տիրապետության տակ: Ի վերջո Դարեհը նվաճեց Ելամը և կազմեց նրանից Պարսից պետության մի առանձին սատրապություն:

703 Պարետակեն կամ Պարետական մարական մի ժողովուրդ, որից Պարայտակենի լեռներ:

704 Քաղդեստան – երկիր, որը հետո կազմեց Բաբելոնը:

705 Երկիր Հայաստանի և Ասորեստանի միջև:

706 Գորդիենե – հին Հայաստանի գավառներից, բաժանված է Միջագետքից Գորդիենի կամ Գորդյան լեռներով, կոչվում է նաև Գորդիացոց երկիր, Կորդուք, ժողովուրդը՝ գորդիացիք կամ գորդյայք:

կիայից՝ Տավրոսով անցնելիս մինչև Թափսակա հասնելը, Ստորին Ասորիքի և Միջագետքի սահմանը գծելը, այսպես նաև մնացյալ տարածությունը մինչև Բաբելոն և մինչև ծով թափվելը, որ միասին լինում է 36 000 ստադիոն:

Ահա այն ժողովուրդները, որոնք գտնվում են արևելքում՝ Բաբելոնից վերև. հյուսիսից, ինչպես ասացինք, Մարաստանն ու Հայաստանն է, իսկ արևմուտքում՝ Ադիաբենեի Միջագետքը:

Ադիաբենեն մեծ մասամբ դաշտավայր է և Բաբելոնի մաս է համարվում, թեև ունի սեփական իշխանը և կցվել է Հայաստանին: Մարերը, հայերը և երրորդը՝ բաբելացիները, այս կողմերի ազգերից մեծագույնները, սկզբից հարաբերության մեջ էին իրար հետ, պատեհ առթիվ հարձակվում էին իրար վրա, հետո բանակցում և նորից հաշտվում: Այս վիճակը տևեց մինչև պարթևաց տիրապետությունը: Այժմ պարթևները տիրում են մարերին և բաբելացիներին, իսկ հայերին՝ ոչ մի անգամ: Նրանք քանիցս արշավանքներ գործեցին, սակայն չկարողացան հաղթություն ձեռք բերել, ընդհակառակը, Տիգրանը հզորապես տիրապետեց, ինչպես խոսվեց Հայոց բաժնում:

Միջագետքը կոչված է իր անվան համաձայն: Արդեն ասել ենք, որ այն գտնվում է Եփրատի և Տիգրիսի միջև, և Տիգրիսը թրջում է նրա միայն արևելյան կողմը, իսկ Եփրատը՝ արևմտյան և հյուսիսային կողմերը: Հյուսիսից Տավրոսն է, որ Հայաստանը բաժանում է Միջագետքից: Երկու գետերի՝ իրարից ունեցած մեծագույն հեռավորությունը լեռների մոտ է: Այս հեռավորությունն է, ինչպես ասում է Էրատոսթենեսը, Թափսկայից՝ ուր էր հնապես Եփրատի անցքը, մինչև Տիգրիսի անցքը, որն անցավ Ալեքսանդրը՝ 2400 ստադիոն, իսկ փոքրա-

գույն հեռավորությունը գրեթե Սելևկիայի և Բաբելոնի գծով՝ 200 ստադիոնից քիչ ավելի: Տիգրիսը հոսում է Թոպիտիս (Տոպիտիս) կոչված լճի լայնքի մեջտեղով: Անցնելով մյուս ափը՝ սուզվում է գետնի տակ՝ մեծ աղմուկով և փչյունով, երկար ժամանակ մնալով ծածուկ՝ դուրս է գալիս նորից ոչ շատ հեռու Գորդիեից, բայց այնպես արագ անցնում է լճով, ինչպես ասում է Էրատոսթենեսը, որ լճի ջուրը, լինելով աղի և առանց ձկների, դառնում է այն մասում քաղցր, հոսանուտ և լիովին ձկնավետ:

Տիգրիսի մոտ են Գորդիացոց երկրները, որոնք հները Կորդուք էին կոչում. նրանց քաղաքներն են Սարիսան, Սատալկան և Փինական, ամրագույն բերդը, որ ունի երեք ամրոց՝ յուրաքանչյուրը սեփական պարսպով պատած, այնպես որ երեք քաղաքի երևույթ է ստանում:

Գիրք XVI, գլուխ 2

Այնտեղ՝ Կոմմագենում է նաև այժմ Եփրատի անցքը. նրա դեմն է գտնվում Միջագետքի Սելևկիա բերդը, որ Պոմպեոսը հանձնեց Կոմմագենեին. այս բերդում է, որ Ասորիքից վռնդելուց և մի ժամանակ բանտարկելուց հետո Տիգրանը սպանեց Կլեոպատրա վերակոչված Սելենե թագուհուն:

ԱՐԻԱՆՈՍ

Անտիկ պատմաաշխարհագրական մտքի ակնառու ներկայացուցիչներից է Լուցիոս Փլավիոս Արիանոսը (մոտ 86-160 թթ.)։ Ծնունդով Բունիաթիայի Նիկոմեդիա քաղաքից հույն ազնվականը փիլիսոփայական ու ռազմական կրթություն է ստացել Հռոմում և զբաղեցրել բարձր պաշտոններ կայսրությունում, այդ թվում՝ եղել է Կապադովկիայի կուսակալը (131-137 թթ.), ինչի շնորհիվ ավելի մոտիկից է ծանոթ եղել Հայաստանին։ Հեղինակել է պատմական, աշխարհագրական, փիլիսոփայական, ռազմական և այլ բնույթի մի շարք երկեր[707]։

Արիանոսի աշխատանքներում պահպանվել են Հայաստանի և հայերի մասին ուշագրավ տեղեկություններ, որոնք վերաբերում են Ք.ա. IV-ից մինչև մեր թվարկության II դարն ընկած ժամանակահատվածին։ Հայաստանի վերաբերյալ պատմաաշխարհագրական տեղեկություններ են պահպանվել Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների պատմությանը նվիրված «Ալեքսանդրի արշավանքը» («Ալեքսանդրի Անաբասիս») և «Հնդկաստան» աշխատություններում։

---

[707] Արիանոսի կյանքի և գործերի մասին տե՛ս **Крюгер О. О.,** Арриан и его труд «Поход Александра», М., 1902; **Соболевский С. И.,** Флавий Арриан // История греческой литературы, т. 3, М., 1960, с. 189-194; **Wheeler E. L.,** Flavius Arrianus: a political and military biography, Duke Univercity Dissertation, 1977; **Stadter P. A.,** Arrian of Nicomedia, Chapel Hill, 1980 և այլն։

Հիմնական պատմաաշխարհագրական տեղեկությունները վերաբերում են Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների շրջանին, և դրանք բավականին հավաստի են, քանի որ Արրիանոսն օգտվել է Մակեդոնացու նամակներից ու այլ վավերագրերից, նրա զորավարների աշխատություններից։

Արրիանոսի «Ալեքսանդրի արշավանքը» («Ալեքսանդրի Անաբասիս») և «Հնդկաստան» աշխատությունների լավագույն հրատարակություններից են՝ Аррриан, Индика (пер. С. П. Кондратьева), «Вестник древней истории», 1940, N 2, с. 230-263; Arrian, Anabasis of Alexander, Vol. I: Books 1-4 (tr. by P. A. Brunt), LCL, 236, Cambridge, 1976; Vol. II: Books 5-7. Indica (tr. by P. A. Brunt, LCL, 269, Cambridge, 1983; Аррриан, Поход Александра (пер. М.Е. Сергеенко), М., 1993; Флавий Арриан, Индика (пер. М. Д. Бухарина), "Индия и античный мир:, М., 2002, с. 261-291; Arrian, Alexander the Great: The Anabasis and the Indica (tr. By M. Hammond), Oxford, 2013 և այլն։ Արիանոսի «Ալեքսանդրի արշավանքը» հայերեն թարգմանությամբ հրատարակվել է «Ալեքսանդր Մակեդոնացի» (թարգմ. ռուսերենից Ա. Ե. Սարգսյանի և Ռ. Բ. Մավիսակալյանի), Երևան, 1987 գրքում։

«Ալեքսանդրի արշավանքը», գիրք III, գլուխ 7

. . . Մազեյոսը[708], լսելով Ալեքսանդրի մոտենալու մասին, փախավ իր ամբողջ զորքով։ Մազեյոսի փախչելուն պես [Եփ-

[708] Դարեհ Գ-ի ժամանակ Բաբելոնիայի սատրապը, որն այդ պաշտոնը պահպանեց նաև Ալեքսանդր Մակեդոնացու տերության մեջ։

րատի վրա] կամուրջների շինարարությունն ավարտեցին, և Ալեքսանդրն անցավ դրանց վրայով։

Այնտեղից նա շարժվեց մայրցամաքի խորքը՝ դեպի, այսպես կոչված, Միջագետք. Եփրատը և Հայաստանի լեռները մնացին ձախ կողմում։

Թողնելով Տիգրիսի ափերը՝ Ալեքսանդրն անցավ Ասորեստանով. նրանից ձախ Գորդիենյան[709] լեռներն էին, աջից՝ Տիգրիսը։

«Ալեքսանդրի արշավանքը», գիրք III, գլուխ 16

Դարեհը ճակատամարտի դաշտից անմիջապես սլացավ դեպի Մարաստան՝ ճանապարհ ընտրելով Հայկական լեռները։

«Ալեքսանդրի արշավանքը», գիրք V, գլուխ 5

Այժմ ես կգրեմ միայն այն մասին, որն, իմ կարծիքով, բավարար չափով կբացատրի Ալեքսանդրի գործողությունները։ Տավրոս լեռը կիսում է Ասիան. այն սկիզբ է առնում Սամոս կղզու[710] դիմաց գտնվող Միկալե հրվանդանից, կտրում-անցնում Պամփիլիան և Կիլիկիան, այնտեղից հասնում մինչև Հայաստան, իսկ Հայաստանից էլ գնում դեպի Մարաստան՝ պարթևների ու խորասմների երկրների երկայնքով։

---

[709] Իմա՝ Կորդվաց աշխարհի։

[710] Էգեյան ծովի կղզիներից, որի հանդիպակաց ափին սկսվում է Փոքր Ասիա թերակղզին։

«Ալեքսանդրի արշավանքը», գիրք VII, գլուխ 16

Մեծամասնությունը հաստատում է, որ Հայաստանից հոսող Արաքսը նույն տեղն[711] է թափվում։

«Ալեքսանդրի արշավանքը», գիրք VII, գլուխ 21

Եփրատը, հոսելով Հայաստանի լեռներից, ձմռանը պարփակվում է իր ափերի մեջ, քանի որ քիչ ջուր ունի։ Իսկ գարնան սկզբին և, հատկապես, ամառային արևադարձի շրջանում այն դառնում է հորդառատ և դուրս գալիս ափերից՝ ողողելով Ասորեստանը։

Այդ ժամանակ Հայաստանի լեռներում ձյունը հալչում է, գետի ջուրը չափազանց շատանում է, հասնում ափերի մակարդակին, դուրս գալիս ափերից և երկիրը ջրի տակ կառնի, եթե ջուրը չշրջեն Պալակոպեով դեպի ճահիճներն ու լճերը, որոնք, սկսած Պալակոպեից, գնում են մինչև Արաբիայի սահմանը...

«Հնդկաստան», գլուխ 42

Եվ ահա նրանք նավարկեցին հետ՝ ձախ թևում ունենալով Սուզայի երկիրը, նրանք նավեցին լճի մոտով, որի մեջ լցվում էր Տիգրիսը,

որը հոսում էր Հայաստանից՝ Նինոսի երբեմնի մեծ ու հարուստ քաղաքի մոտով, ձևավորում է մարզ՝ իր և Եփրատի միջև տարածվող, որն էլ և այդ պատճառով կոչում են Միջագետք։

---

[711] Խոսքն այստեղ Կասպից ծովի մասին է։

ՊԼԻՆԻՈՍ ԱՎԱԳ

Հռոմեական ականավոր պատմագիր, գիտնական ու քաղաքական գործիչ Գայոս Պլինիոս Մեկունդոսը ծնվել է Ք. հ. 23 թվականին Հյուսիսային Իտալիայի Կոմ քաղաքում: Նա ստացել է իր ժամանակների համար բազմակողմանի ու փայլուն կրթություն, ճանապարհորդել է բազմաթիվ երկրներով: Երկար տարիներ վարել է պատասխանատու պաշտոններ (կայսերական պրոկուրատոր՝ Նարբոնյան Գալլիայում, Իսպանիայում և Հռոմեական Աֆրիկայում, հռոմեական հեծելազորի հրամանատար՝ Գերմանիայում և այլն): Պլինիոսը մահացել է 79 թ. օգոստոսի 24-ին Վեզուվի ժայթքման հետևանքով 56 տարեկան հասակում:

Պլինիոս Ավագն ունեցել է բեղմնավոր գրիչ. գրել է յոթ մեծածավալ ստեղծագործություններ («Գերմանական պատերազմներ»՝ 20 գրքով, «Պատմություն»՝ 31 գրքով, «Բնական պատմություն»՝ 37 գրքով և այլն), որոնցից մեզ է հասել միայն «Բնական պատմությունը»: «Բնական պատմությունը» Պլինիոսը գրել է Վեսպասիանոս կայսեր որդու՝ Տիտոսի հանձնարարությամբ և ավարտվել է այն 77 թվականին: Պլինիոս Ավագի սույն երկը անտիկ բնագիտական մտքի մի յուրահատուկ հանրագիտարան է, որտեղ արժեքավոր ու բացառիկ տեղեկություններ են պահպանված տիեզերագիտության, երկրագործության, աշխարհագրության, բուսական ու կենդանական աշ-

խարհների, հանքաբանության, բժշկության, տեղ-տեղ նաև հին աշխարհի երկրների քաղաքական, մշակութային պատմության ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ: Մեզ համար հատկապես կարևոր են Պլինիոսի տեղեկությունները Հայաստանի բնակլիմայական պայմանների, բնաշխարհի, հանքային հարստությունների, քաղաքների ու վարչական բաժանման մասին, որոնք շատ հաճախ եզակի են ու անփոխարինելի:

Պլինիոս Ավագից ստորև բերված հատվածները տրվում են Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարված է «Plinii Secundi C. Naturalis historiae, Vol.1-10, Cambridge, Mass. London, 1950-1962 (Loed Classical)» հրատարակությունից: Տպվել է նաև Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1. հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թ., կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, 2007, էջ 287-292:

ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵԿՈՒՆԴՈՍ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Գիրք V

XX. *Այստեղ է, որ ամենից ավելի հարմարն է Եփրատի մասին խոսել: Այն բխում է Մեծ Հայքի Կարենիտյան պրեֆեկտուրայում*[712]*: Այդ գետը ամենամոտից տեսնողներից Դոմի-*

[712] Կարենիտյան պրեֆեկտուրա – Կարնո գավառն է՝ Բարձր Հայքի 9-րդ գավառը, այժմյան Էրզրումի սանջակը:

տիոս Կորբուլոնը[713] նրա ակունքը տեղադրում է Աբա լեռան վրա, իսկ Լիկինիոս Մուկիանոսը՝ Կապոտեն լեռան[714] ստորոտին՝ Զիմարայից[715] 12.000 քայլ վերև: Այդ գետը նախ կոչվում է Պյուքսիրատ<ես>: Այն հոսում է Կապադովկիայից բաժանելով նախ Դերքսենեն[716], ապա Անահիտիսը[717], որոնք Հայաստանի շրջաններն են: Դասկուսան[718] Զիմարայից 75.000 քայլ հեռավորություն ունի: Այնտեղից մինչև Պաստոնա Եփրատը նավարկելի է 50.000 քայլ տարածության վրա. մինչև Կապադովկիայի Մելիտենե քաղաքը (գետի երկարությունն է) 24.000 քայլ, մինչև Հայաստանի Ելեգեա[719] քաղաքը՝ 10.000 քայլ, այս տարածության վրա այն ընդունում է Լյուկոս[720], Արսանիաս[721] և Արսանոս գետերը: Ելեգեայում գետն իր ճանապարհի վրա հանդիպում է Տավրոս լեռանը, որը նրան չի դիմադրում, չնայած

---

[713] Խոսքը հռոմեական նշանավոր զորավար, Կապադովկիայի կուսակալ, լեգատ և Արևելքում հռոմեական բանակների հրամանատար Դոմիտիոս Կորբուլոնի մասին է:

[714] Կապոտեն – Կապույտ (Ծաղկավետ) լեռնաշղթան է, որի հարավային լեռնաբազուկներում են գտնվում բուն Եփրատի (կամ Արևելյան Եփրատ, այժմ՝ Կարա-սու) ակունքները:

[715] Զիմարա – քաղաք Փոքր Հայքում:

[716] Դերքսենե – Դերջանն է՝ Բարձր Հայքի 6-րդ գավառը:

[717] Անահիտիս – Անահտական գավառն է (կամ Եկեղյաց)՝ Բարձր Հայքի 4-րդ գավառը, անտիկ հեղինակների Ակիլիսենեն, այժմյան Երզնկայի շրջանը:

[718] Դասկուսա – բնակավայր Փոքր Հայքում, այժմյան Արաբկիր-չայի գետաբերանից արևմուտք՝ Կողբենիք գյուղից հյուսիս:

[719] Հայաստանի Ելեգեա – Եղեգիսի ջերմուկներն են (այժմ՝ Իլիջան՝ Կարինից արևմուտք):

[720] Լյուկոս – չպետք է շփոթել Իրիս գետի (այժմ՝ Եշիլ-Ըրմակ) Լյուկոս վտակի (Գայլ գետ, Թերմոդոն) հետ: Այստեղ խոսքը այն Գայլ գետի մասին է, որը սկիզբ է առնում Եդի-Դերելար լեռնանցքից և Երզնկայի մոտ թափվում է Եփրատը:

[721] Արսանիաս – հայկական սկզբնաղբյուրների Արածանի գետն է (Արևելյան Եփրատ), այժմ՝ Մուրադ-չայ:

12.000 քայլ հաստություն ունեցող իր զանգվածին։ Գետը Օմիրաս է կոչվում, երբ լեռն է ներխուժում, այն հաղթահարելուց հետո արդեն կոչվում է Եփրատ, նրա հունը ժայռոտ է և հոսանքը սրընթաց, նույնիսկ այդ լեռն անցնելուց հետո[722]*։*

Գիրք VI

IX. *Մեծ Հայքը, որը սկսվում է Պարիադրես լեռներից*[723]*, ինչպես ասացինք, Կապադովկիայից բաժանված է Եփրատով և Եփրատից հետո Միջագետքից բաժանված է Տիգրիսով, որը նվազ հայտնի գետ չէ։ (Մեծ Հայքը) ծնունդ է տալիս թե՛ մեկին, թե՛ մյուսին և կազմում է սկիզբը Միջագետքի, որը տարածվում է երկու գետերի միջև. այդտեղ միջանկյալ տարածությունը բնակեցված է Արոեացի*[724] *արաբների կողմից։ Այսպիսով այն ձգում է իր սահմանը մինչև Ադիաբենե՝ նրանից բաժանված լինելով լայնակի մի լեռնաշղթայով*[725]*, իսկ ձախ կողմում լայնությամբ տարածվում է մինչև Կյուրոս գետը*[726]*՝ անցնելով Արաքս գետից այն կողմ, իսկ իր երկարությամբ տարածվում է մինչև Փոքր Հայքը, որից բաժանված է Եվքսինյան Պոնտոսի*

---

[722] Իր ակունքներից մինչև Տավրոսյան լեռները, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում Եփրատի երկարությունը կազմում է ավելի քան 600 կիլոմետր։

[723] Պարիադրես – խոսքը Պոնտական-Պարխարյան (Խաղտյաց) լեռների մասին է։

[724] Պլինիոսն այստեղ նկատի ունի Արուաստան երկիրը, այսինքն՝ անտիկ հեղինակների Միգդոնիան, որի կենտրոնն էր Մծբինը։

[725] Խոսքը անտիկ հեղինակների Նիփատես լեռնաշղթայի մասին է, որը գտնվում է Փոքր Խաբուր գետից դեպի արևելք։

[726] Այսինքն՝ Կուր (Քուռ) գետը։

մեջ թափվող Ապսարոս գետով[727] *և Ապսարոսին ծնունդ տվող Պարիադրես լեռներով։*

X. *Կյուրոս (գետը) ծնվում է Հենիոքիական լեռներում, որոնք այլոց կողմից կոչվել են Կորաքսյան*[728]*։ Արաքսը (ծնվում) է միևնույն լեռներում, ինչպես և Եփրատը՝ 6.000 քայլ միջանկյալ հեռավորությամբ և աճելով Մու[ր]սիս գետակով*[729]*՝ ինքը թափվում է, ըստ մի քանի աղբյուրների, Կյուրոսի մեջ, որը նրան տանում է Կասպից ծով։ Փոքր Հայքում հայտնի քաղաքներն են՝ Կեսարիան, Ազան, Նիկոպոլիսը*[730]*, Մեծ Հայքում՝ Ար<սա>մոսատը*[731]*՝ Եփրատին մոտ, Կարկաթիոկերտը՝ Տիգրիսի մոտ, Տիգրանակերտը՝ մի բլրի վրա, Արտաշատը՝ դաշտավայրում, Արաքսի մոտ։ Ալֆիդիոսի կարծիքով ամբողջ Հայաստանի տարածությունը 5.000.000 քայլ է, Կլավդիոս կայսրը նրա երկարությունը Դասկուսայից մինչև Կասպից ծովի ափը հաշվում է 1.300.000 քայլ, իսկ լայնությունը՝ (այդ թվի) կեսը, Տիգրանակերտից մինչև Իբերիա*[732]*։ Ստույգ է, որ այն բաժան-*

---

[727] Ապսարոս – Ճորոխի ստորին հոսանքը, որտեղից սկսվում է Պարխարյան լեռնաշղթան։

[728] Կորաքսյան – Պլինիոսը նկատի ունի Կարմիր Փորակ (այժմ՝ Ալահյուակբար) ջրբաժան լեռնաշղթան Կարսի և Արտահանի միջև։

[729] Մուրսիս – հայկական Մուրց գետն է, այժմ՝ Հասան Ղալա-սու։

[730] Այս երեք քաղաքներն էլ գտնվել են Գայլ գետի հովտում։ Ս. Երեմյանի կարծիքով Կեսարիան պիտի լինի Սատաղը (այժմ՝ Սադաղ), Ազան՝ այժմյան Ազիզ գյուղը, իսկ Նիկոպոլիսը՝ այժմյան Բյուրգ կամ Պյուրկ գյուղի մոտ (տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 838)։

[731] Ար<սա>մոսատա – հայկական Արշամաշատն է, տեղադրվում է Անթիաս դաշտավայրում, Արածանի գետի ափին՝ այժմյան Խարաբա-Նաջարան ավերակ գյուղի մոտ։

[732] Այսպիսով, ըստ Պլինիոսի, Մեծ Հայքը արևմուտքից դեպի արևելք ձգվում է 1.300 մղոն (այսինքն՝ 1.950 կմ), իսկ հարավից մինչև հյուսիս՝ 650 մղոն (այսինքն՝ 975 կմ)։ Ուսումնասիրողներն իրավացիորեն նշում են, որ այս թվերը

ված է ստրատեգիաներ[733] կոչված պրեֆեկտուրաների, որոնցից մի քանիսը թագավորություններ էին կազմում հնում: Նրանք թվով 120 են և բարբարոսական անուններ ունեն: Արևելքում Հայաստանը սահմանագծված է, սակայն ոչ անմիջապես Կերավնյան լեռներով[734] և Ադիաբենեով: Միջանկյալ տարածությունը բռնում են Սոփենները[735]: Սոփեններից այն կողմ մի լեռնաշղթա է գտնվում, իսկ լեռնաշղթայից այն կողմ Ադիաբենեն է: Հայաստանին ամենամոտ բարձունքների վրա ապրում են մենոբարդցիները, մոկսիանները[736]: Ադիաբենեին շրջապատում են Տիգրիսը և անմատչելի լեռները: Նրա (Ադիաբենեի) ձախ կողմում մեդացիների երկիրն է, իսկ դիմացը՝ Կասպից ծովը, որը, ինչպես իր տեղում կասենք, օվկիանոսից է առաջանում և ամբողջովին շրջապատված է Կովկասյան լեռնաշղթայով: Հիմա թվարկենք Հայաստանի սահմանամերձ շրջաններում ապրող ժողովուրդներին:

XI. *Ամբողջ դաշտավայրը, Կյուրոսից սկսած, բռնում է ալբանների ժողովուրդը, հետո՝ իբերները, որոնք նրանից բաժանված են Ալազան գետով, որն իջնում է Կովկասից և գնում է թափվելու Կյուրոսի մեջ: Ամենակարևոր քաղաքներն են Ալ-*

չափազանցված են. իրականում Մեծ Հայքի երկարությունը հավասար էր 870 կմ, իսկ լայնությունը՝ 550 կիլոմետրի (տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 838, ծան. 78):

[733] Ստրատեգիա – հին աշխարհի վարչատարածքային միավոր:

[734] Կերավնյան լեռները (Շանթային լերինք) Կովկասյան լեռնաշղթայի այն մասն են, որը հյուսիսից եզերում է Աղվանքը: «Աշխարհացույց»-ում այն կոչվում է «Կապ-կոհ լերինք»:

[735] Այսինքն՝ ծոփացիները:

[736] Ցեղեր, որոնք ապրում էին Արևելյան Տիգրիսի հովտում և սրան հարող լեռներում: Ուսումնասիրողների մի մասը ենթադրում է, որ մոկսիաների ցեղը ազգակից էր հայերին. նրանց անունից է ծագել Մեծ Հայքի Մոկք (Մոկս) նահանգի անունը:

բանիայում՝ Կաբալակ(ա)ն[737], Իբերիայում՝ Հարմաստիսը[738]՝ (գետի մոտ), Նեորիսը: (Այնտեղ են) Թասիայի և Թրիարեյի շրջանները[739] մինչև Պարիադրես լեռները: Նրանցից այն կողմ՝ Կողքիսի ամայի տարածությունները: Այդ տարածությունների այն մասում, որը նայում է Կերավնյան լեռներին, բնակվում են արմենոխալիբները[740]. մոսխերի երկիրը մինչև Իբերոս գետը, որը թափվում է Կյուրոսի մեջ. նրանցից ներքև սակասեննե-ը[741], այնուհետև՝ մակրոնները[742] մինչև Ապսարոս գետը. սրանք են դաշտավայրերի և զառիվայրերի բնակիչները: Հա-կառակ կողմից, Ալբանիայի սահմաններից սկսած, լեռների ամբողջ շարքի դիմաց գտնվում են սիլվերի վայրի ժողովուրդ-ները, նրանցից ներքև՝ լուբիենների ժողովուրդը, այնուհետև դիդուրները և սոդիացիները[743]:

---

[737] Կաբալակա – հայկական աղբյուրների Կապաղակ քաղաքն է, այժմ՝ Կա-բալա գյուղը Նիժ գյուղի մոտ:

[738] Հարմաստիս – խոսքը Արմազի-Մցխեթա քաղաքի մասին է:

[739] Խոսքը Թռեղք (Թրիալեթի) գավառի մասին է:

[740] Արմենոխալիբներ – բառացիորեն՝ հայախալիբներ, Հայաստանում բնակ-վող խալիբներ՝ ցեղեր, որոնք գտնվում էին մերձևանծովյան հարավարևելյան շրջանում. խալիբների այն մասը, որը ժամանակի ընթացքում ձուլվեց հայե-րի հետ:

[741] Սակասենե – հայկական Շակաշենն է՝ Ուտիքի 7-րդ գավառը Կուր գետի հովտի աջակողմյան մասում:

[742] Մակրոններ – ցեղեր, որոնք բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ Ճորոխի ավազանում:

[743] Սրանք կովկասյան լեռնաբնակ ցեղեր էին:

ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍ

Նշանավոր հույն աստղագետ, ֆիզիկոս, մաթեմատիկոս Կլավդիոս Պտղոմեոսը (83-168) հեղինակ է նաև ութ գրքերից բաղկացած «Աշխարհագրություն» վերտառությամբ մի հիանալի աշխատության: Այստեղ հեղինակը ներկայացրել է Իռլանդիայից մինչև Եգիպտոս (աշխարհագրական լայնության) և Ատլանտյան օվկիանոսից մինչև Հնդկաչին (աշխարհագրական երկարության) գտնվող երկրների կոորդինատները՝ աստիճաններով ու րոպեներով: «Աշխարհագրության» 5-րդ գիրքը բովանդակում է Մեծ Հայքի, Իբերիայի, Աղվանքի և Կողքիսի մանրամասն նկարագրությունը: Չնայած նկատվող անճշտություններին ու վրիպումներին՝ այս երկը պատմաաշխարհագրական արժեքավոր սկզբնաղբյուր է շատ երկրների, այդ թվում՝ և Մեծ Հայքի վերաբերյալ: Այստեղ կոորդինատներով տրվում են Մեծ Հայքի լեռներն ու լեռնաշղթաները, լճերն ու գետերը, նահանգներն (20 անուն) ու բնակավայրերը (84 անուն): Թեև Պտղոմեոսի նկարագրած Մեծ Հայքի սահմանների և վարչական բաժանումների վերաբերյալ տվյալներն արտացոլում են Ք. հ. II դարի երկրորդ կեսի տարածքային վիճակը, սակայն դա, ըստ էության, հիմնականում անփոփոխ է մնացել նաև III դարում, հանգամանք, որով էլ բացատրվում է Պտղոմեոսի «Աշխարհագրությունից» ստորև բերված հատվածի առկայությունը քրեստոմատիայի սույն հատորում:

Պտղոմեոսից բերված հատվածը տրվում է ըստ՝ Ptolemaeus, Geography, Books 2-6.11, translated or transliterated by Brady Kiesling from the Greek texts of Karl Nobbe (1843) and Karl Muller (1883), or adapted from Bill Thayer's on-line partial transcription of the 1932 translation by Edward Luther Stevenson (1860-1944): Համեմատության համար օգտագործվել է նաև «Claudii Ptolemaei Geographia, ed. Coralus Fridericus, Augustus Nobbe, Lipsiae, 1843-1845» հրատարակությունից Գ. Մուրադյանի թարգմանությամբ հատվածը:

ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՏՈՐ 2-ՐԴ
Գիրք 5-րդ
Գլուխ 13. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԴԻՐՔԸ
[Ասիայի III քարտեզ]

§ 5.13.1 *Մեծ Հայքը հյուսիսում սահմանակցում է Կոլխիսի (իմա՝ Կողքիսի – Մ. Մ.) մի մասին, Իբերիային (իմա՝ Վիրքին – Մ. Մ.) և Կյուրոս գետի երկայնքով ձգվող գծով՝ Ալբանիային (իմա՝ Աղվանքին – Մ. Մ.),*

§ 5.13.2 *արևմուտքում Եփրատի մատնանշված հատվածով Կապադովկիային և Կապադովկիական Պոնտոսի մի մասին՝ մինչև Կոլխիս՝ Մոսխական լեռների գծով,*

§ 5.13.3 *արևելքում Հյուրկանյան ծովի մի մասին՝ Կյուրոս գետի բերանից մինչև 79°45', 43°20' սահմանակետը, որի և Կյուրոսի գետաբերանի միջև 79°45', 43°20' Արաքսի գետաբերանն է և Կասպիոն լեռան երկայնքի գծով՝ Մեդիային (իմա՝*

Մարաստանին – Մ. Մ.), որի սահմանային կետերն են 79°00', 42°30' և 80°00', 30°40',

§ 5.13.4 *հարավում Տավրոսյան լեռների գծի երկայնքով, որ կապվում է Եփրատ գետին*[744] *71°30', 38°30' և Տիգրիս գետին՝ 75°30', 38°30' [կետերում], սահմանազատված է Միջագետքից, այնուհետև՝ Ասորեստանին՝ Նիֆատես (իմա՝ Նիփատես – Մ. Մ.) լեռան երկայնքով ուղիղ մինչև [վերը] նշված Կասպիոն լեռան եզրակետը՝ սահմանագիծ, որը Նիֆատես լեռամբ է շարունակվում:*

§ 5.13.5 *Հայաստանի անվանի լեռներն են Մոսխիկան (իմա՝ Մոսքիկեն – Մ. Մ.), որ տարածվում են Կապադովկիական Պոնտոսի երկայնքով, որը նրանցից վեր է, և Պարյուարդեսը՝ 75°00', 43°20' և 77°00', 42°00' եզրակետերով, և Օուդակեսպես լեռը՝ 80°30' և 40°00' միջնակետով, և Անտիտավրոսի այն մասը, որ Եփրատի այս կողմում է՝ 72°00' և 41°40' միջնակետով, և այսպես կոչված Աբոս լեռը՝ 77°00', 41°10' միջնակետով, և Գորդյ(ու)այա լեռները՝ 75°00', 39°40' միջնակետով:*

§ 5.13.6 *Այս երկրի միջով հոսող գետերն են Արաքսը, որ 79°45', 43°50' [կետում] թափվում է Հյուրկանյան ծովի մեջ և ակունքը 76°30', 42°30' [կետում] է, որտեղից մղվում է դեպի արևելք մինչև Կասպիոս լեռը և այնուհետև շրջվելով դեպի հյուսիս՝ մի մասը թափվում է Հյուրկանյան ծով, մյուսը միանում Կյուրոսին 78°30', 44°30' [կետում], և Եփրատ գետի այն հատվածը, որ արևելահայաց ոլորանի և 75°40', 42°40' [կետում] գետաբերանի միջև է:*

---

[744] Անգլերեն հրատարակության մեջ գրված է «լեռանը»:

§ 5.13.7 *Եվ կան այլ նշանավորներ՝ Եփրատ գետի մի բազկից, որ միանում է Եփրատին 71°30', 40°30' [կետում], և գետաբերանի հատվածում 77°00', 41°00' է, այնուհետև Տիգրիս գետի այն հատվածը, որ Հայաստանում է , սկիզբ է առնում Տիգրիսի հոսանքի հարավային կողմի վերին երեսից 74°40', 39°40' [կետում] և ձևավորում է Թոսպիտիս կոչվող լիճը:*

§ 5.13.8 *Կան այլ լճեր, որոնցից մեկը կոչվում է Լյուքնիտիս՝ միջնակետը 78°00', 43°15' և Արեեսա՝ միջնակետը 78°30', 40°45':*

§ 5.13.9 *Հայաստանի՝ Եփրատի, Կյուրոսի և Արաքս գետի միջև ընդգրկված հատվածում հետևյալ շրջաններն են. առաջինը՝ Մոսքիկա լեռների կողքին, Կոտարզենեն է՝ այսպես կոչված Բոքայիից այն կողմ, Կյուրոս գետի երկայնքով՝ Տոսարենե և Օտենե, Արաքս գետի երկայնքով՝ Կոլթենե, և դրանից ներքև՝ Սոդոուկենե. Պարիադրեսյան լեռներով՝ Սիրակենե և Սակապենե:*

§ 5.13.10 *Այս հատվածի քաղաքներն են՝*

Սալա 73°20' 44°20'

Ասկոուրա 74°00' 44°10'

Բարազա 75°20' 44°10'

Լալա 76°10' 44°00'

Սանտոուտա 77°20' 44°20'

Սատապարա 78°00' 44°20'

Տոզա (Օտա) 78°50' 43°20'

Օուրոութա (Օուաթոուրա) 73°00' 43°00'

Ազատա 73°45' 43°15'

§ 5.13.11 Զոլոուա 74°00' 43°10'

Սեդալա 74°40' 43°45'

Սոուրտա 74°30′ 43°40′

Տատինա (Տաստինա) 74°40′ 43°00′

Կոզալա (Կոզոլա) 75°20′ 43°30′

Կոտոմանա 75°15′ 43°40′

Բատիննա 76°10′ 43°40′

Դիզակա 76°50′ 43°10′

Պտոռուա 77°00′ 43°45′

Գլիսմա 78°20′ 43°40′

Չոլոռուատա 78°45′ 43°40′

Սակալբինա 79°10′ 43°15′

Արսարատա 79°30′ 43°15′

§ 5.13.12 Եփրատ գետի երկայնքով (տվյալ դեպքում նկատի ունի Երասխը – Մ. Մ.)՝

Բռեփոս 72°00′ 42°15′

Էլեգիա 73°20′ 42°45′

Քասիրա 74°00′ 42°40′

Քորսա 74°40′ 42°50′

Թալինա 75°20′ 42°45′

Արմառուրիա 76°40′ 42°45′

Արտաքսատա 78°00′ 42°40′

Նաքսոռուանա 78°50′ 42°45′

§ 5.13.13 *Սրանից ներքև հատվածում՝ մինչև Եփրատի սահանքը, ավելի հյուսիսային շրջանները հետևյալն են, սկսած արևմուտքից, Բասիլիսենե և Օբորդենե և Արսիա: Սրանցից ներքև Ակիլիսենեն և Աստաունիտիսն են, և գետի սահանքի մոտ՝ Սոփենեն:*

§ 5.13.14 Այս հատվածի քաղաքներն են՝

Աթռուա (Զաթռուա) 71°30′ 42°30′

Թինիսսա 73°10' 42°10'

Զորիգա 71°30' 42°00'

Սանա 73°30' 42°00'

Բրիզակա 74°50' 42°30'

Դարանիսսա 76°00' 42°20'

Զոգոկարա (Զոգորակա) 77°15' 42°20'

§ 5.13.15 Կոուբինա 78°30' 42°20'

Կոդանա 71°30' 41°40'

Կաչոուրա (Յաչոուրա) 72°00' 41°20'

Չոլուա 73°30' 41°00'

Սոգոկարա 74°00' 41°00'

Փառուսուա 74°15' 41°45'

Փանդալիա 74°50' 41°30'

Զարոուանա 75°40' 41°45'

§ 5.13.16 Կիտամոն 76°00' 41°30'

Անարիոն 76°50' 41°30'

Սիզոուա 77°00' 41°00'

Տերոուա 78°00' 41°50'

Զոուրզոուա (Զոուրզոուա) 78°30' 41°40'

Մատոուստանա 78°00' 41°40'

§ 5.13.17 Աստականա 78°00' 41°00'

Տարեյնա 72°20' 41°00'

Բալիսբիգա (Բաբլիստիտա) 73°40' 40°40'

Բաբիլա 74°20' 40°45'

Սազաուանա 75°15' 40°45'

Ազորա (Օզարա) 76°10' 40°50'

§ 5.13.18 *Մնացյալ ավելի հարավային հատվածում՝ Եփրատի և Տիգրիսի ակունքների միջև, Անզետենեն է, և նրանից ներքև՝ Թոսպիտիսը, այնուհետև՝ Կորինաիան:*

§ 5.13.19 *Այս հատվածում քաղաքներն են՝*

Էլեգերդա (Կլեգերդա) 72°15′ 40°15′

Մազարա 71°20′ 39°50′

Անզետա 72°00′ 39°30′

Սոեիտա 72°50′ 39°30′

Բելկանիա 73°30′ 39°20′

Սելտիա 74°00′ 40°00′

Թոսպիա 74°20′ 39°50′

Կոլքիս 75°30′ 39°00′

Սիաուանա 71°30′ 38°20′

Արսամոսատա 73°00′ 38°20′

Կորրա 74°30′ 38°40′

§ 5.13.20 *Տիգրիս գետի ակունքներից արևելք են Բագրանդաուենեն (Կագրանդաունե), և նրանից ներքև՝ Գորդյուենեն (Գորդյունե), որից արևելք Կոտայան է, և սրանից ներքև՝ Մարդոյին:*

§ 5.13.21 *Այս հատվածի քաղաքներն են՝*

Տասկա 75°30′ 40°10′

Փորա 76°00′ 40°10′

Մաիպա 76°10′ 40°40′

Բոուանա 76°45′ 40°00′

Քոլիմմա 77°45′ 40°40′

Տերեբիա 77°40′ 40°55′

Դաուդյ(ու)անա 77°40′ 40°20′

Կապոուտա 79°20′ 40°30′

Արտեմիտա 78°40' 40°20'

Թելբալանե (Թելբանե) 76°15' 39°50'

§ 5.13.22 *[Եվ սրանից ներքև Գորյունեսիան] կամ Գորդյուենեն է. 75°15' 39°20'*

Սիաի 75°45' 39°40'

Փերենդիս 74°40' 39°20'

Տիգրանոկերտա 76°45' 39°40'

Սարդեռուա 75°50' 39°10'

Կոլսա 78°00' 39°50'

Տիգրանոամա 79°45' 40°00'

Արտագիգարտա 75°20' 38°45'

Գլուխ 7
Փոքր Հայք

§ 5.7.1 *Փոքր Հայքի ամենահյուսիսային հատվածը կոչվում է Օրբալիսսենե, սրանից ներքև՝ Միտռուլանե, այնուհետև՝ Հաիրետիկե, և սրանից ներքև՝ Օրսենե, և ամենահարավում՝ Օրսենեից հետո, Օրբիսենեն է:*

§ 5.7.2 *Եփրատի վրայի քաղաքներն են՝*

Սինիբրա 71°00' 42°30'

Ազիրիս 71°00' 42°00'

Լադանա 71°00' 41°40'

Միսմարա 71°30' 41°25'

Զիմարա 71°30' 40°40'

Դասկոուսա 71°00' 40°25'

§ 5.7.3 *Ներքին մասում՝ լեռնային շրջանի երկայնքով՝*

Սատալա 69°30' 42°10'

Դոմանա 70°00′ 42°05′
Տապոուրա 70°30′ 42°10′
Նիկոպոլիս 69°00′ 41°40′
Քորսաբիա 69°40′ 41°45′
Քարաքս 70°30′ 41°45′
Դազոնա 68°40′ 41°20′
Սելեոբերրոիա 69°30′ 41°00′
Կալտիորիսսա 69°50′ 41°15′
§ 5.7.4 *Անալիբլա 70°20 41°10′*
Պիստինգարա 68°30′ 40°55′
Գոդասա 69°00′ 40°45′
Եուդոիքսատա 68°15′ 40°25′
Կարապե 71°20′ 41°00′
Մասորա 70°30′ 40°40′
Օրոմանդոս 69°40′ 40°30′
Իսպա 70°30′ 40°20′
Փոուփենա 69°00′ 40°15′
Առանե 69°45′ 40°10′
Փոուփատենա 68°30′ 39°50′
Մարդարա 69°05′ 39°45′
Օուարսապա 67°50′ 39°30′
Օրսա (Օրսարա) 68°30′ 39°30′
§ 5.7.5 *Մելիտենեում Եփրատ գետի վրա են.*
Դազոուսա 71°00′ 40°05′
Սինիս կոլոնիա 71°00′ 39°45′
Մելիտենե 71°00′ 39°30′
§ 5.7.6 *Դեպի ներքին հատված՝*
Զոպարիստոս 70°00 40°00′

Տիտարիսսոս 69°45′ 39°45′

Կիանիկա 69°20′ 39°30′

Փոուսիպարա 70°30′ 39°40′

Եուսիմարա 70°10′ 39°30′

Իասսոնս 69°00′ 39°30′

Կիակիս 69°30′ 39°15′

Լեուգաիսա 70°15′ 39°10′

Կարմալա 70°40′ 39°20′

Սեմիսոս 70°30′ 39°20′

Լադոիներիս 69°30′ 38°50′

§ 5.7.7 *Կատառնիա պրեֆեկտուրայում՝*

Կաբասսոս 67°15′ 38°35′

Տյուննա 66°50′ 38°30′

Տիրալլիս 67°00′ 38°20′

Կյուբիստրա 66°00′ 38°15′

Կլաուդիոպոլիս 65°40′ 37°50′

Դալիսանդոս 66°20′ 37°50′

Պադյուանդոս 67°00′ 38°00′

Կոմանա Կապադովկիական 68°00′ 38°00′

Մոպսոու Կրենե 67°20′ 37°30′

Տանադարիս 68°20′ 37°45′

Լեանդիս 68°40′ 37°40′

§ 5.7.8 *Մոուրիանե պրեֆեկտուրայում՝*

Սինդիտա 67°30′ 39°10′

Կոտաինա 68°15′ 39°10′

Զորոպասսոս 69°20′ 39°00′

Նյուսսա 68°20′ 38°40′

Արասաքսա 67°30′ 38°30′

Կարնալիս 68°45′ 38°30′

Գարնակե 68°30′ 38°10′

§ 5.7.9 *Լառուիանիանե պրեֆեկտուրայում Եփրատի երկայնքով.*

Կորնե 71°00′ 39°15′

Մետեիտա 71°00′ 39°00′

Կլաուդիաս 71°00′ 38°45′

§ 5.7.10 *Սրանցից ներս ընկած՝*

Կապարկելիս 70°10′ 39°00′

Զիզոատրա 70°00′ 38°45′

Պասարնե 70°30′ 38°30′

Կիզարա 69°20′ 38°30′

Սաբագենա 68°50′ 38°10′

Նոսալենե 69°50′ 38°20′

Լաուստասա 69°20′ 37°50′

§ 5.7.11 *Արաուենե պրեֆեկտուրայում Եփրատի գետի երկայնքով՝*

Իոուլիոպոլիս 71°00′ 38°25′

Բարզալո 71°00′ 38°10′

§ 5.7.12 *Սրանից ներս ընկած՝*

Սերաստերե 70°40′ 38°15′

Լակրիասսոս 70°15′ 38°10′

Էնտելեիա 70°00′ 37°45′

Ադատթա 69°30′ 37°30′

Հիշատակություններ այլ հատվածներում
Գլուխ 6

§ 5.6.1 *Կապադովկիան սահմանակցում է արևմուտքում Գալաթիային և Պամփյուլիայի մի մասին՝ Պոնտոսից մինչև 64°00′ 37°40′ եզրակետն ընկած գծի երկայնքով:*

Հարավում՝ Կիլիկիային՝ Տավրոսյան լեռների շարունակությամբ մինչև Ամանոսյան լեռները ձգվող գծի երկայնքով՝ դեպի 70°00′ 37°20′ եզրակետ,

Եվ Սիրիայի մի մասով՝ Ամանոսյան լեռների միջով, դեպի Եփրատ գետը, որի տեղադրությունը 71°20′ 38°00′ է:

Արևելքում՝ Մեծ Հայքի՝ Եփրատ գետի երկայնքով մատնանշված հատվածով դեպի այն կետը, որտեղ, գալով հյուսիսից, այն այնուհետև արտացոլվում է արևելքից, որի տեղադրությունն է 71°00′ 42°30′, այնուհետև՝ Մոսքիկոս լեռների գծի երկայնքով և դեպի 73°00′ 44°30′ կայանը, որտեղից շարժվում է դեպի մատնանշված առափնյա վերջնակետը:

Հյուսիսում այն սահմանակցում է Եվքսինյան Պոնտոսի մի մասին՝ Գալաթիայի Ամիսոս քաղաքից մինչև եզրակետը, որ տեղակայված է 72°20′ 44°45′ [կետում]:

§ 5.10.1 *Կոլքիսը հյուսիսում սահմանակցում է Սարմատիայի՝ մեր նշած մասին, արևմուտքում՝ Եվքսինյան Պոնտոսի՝ Կորաքս գետից մինչև Փասիսի միախառնումն ընկած հատվածը՝ հետևյալ նկարագրությամբ.*

§ 5.10.2 70°30′ 37°00′ [կետում] Կորաքսի ակունքից հետո՝

Դիոսկոուրիաս կամ Սեբաստոպոլիս 71°10′ 46°45′

Հիպպոս գետի բերան 71°00′ 46°30′

Նեապոլիս 71°30′ 45°45′

Կյուանեոս գետի բերան 71°30′ 46°15′

Սիգանեոն (Գիգանեոն) 71°30′ 46°10′

Սիապոլիս (Թիապոլիս) 72°00′ 45°30′

Քարիոուստոս (Քսարիստոս) գետի բերան 72°00′ 45°15′

Փասիս գետի բերանը 72°30′ 45°00′

Փասիս քաղաք 72°30′ 44°45′

§ 5.10.3 *Այն սահմանակցում է հարավում Կապադովկիական Պոնտոսին հետևյալ կերպ սկիզբ առնող սահմանագծով և Մեծ Հայքի հետևյալ մասին՝ միևնույն գծի երկայնքով՝ մինչև 74°00′ 34°40′ եզրակետը:*

§ 5.11.1 *Իբերիան հյուսիսում սահմանակցում է Սարմատիայի՝ մեր կողմից մատնանշված հատվածով, արևմուտքում՝ Կոլքիսին՝ նշված գծի երկայնքով, հարավում՝ Մեծ Հայքի մի մասով, որ ձգվում է Կոլքիսի վարչամիավորից մինչև 77°00′ 47°00′ կետը:*

Արևելքում՝ Ալբանիային՝ այս կետերը կապող գծի երկայնքով:

§ 5.11.2 *Հետևյալ քաղաքներն ու կոմաիներն են՝*

Լոուբիոն կոմաինե 75°40′ 46°50′

Ագիննա 75°00′ 46°30′

Օուասահդա 76°00′ 46°20′

Օուարիկա 75°20′ 46°00′

Սուորա 75°00′ 45°20′

§ 5.11.3 Արտանիսսա 75°40′ 46°00′

Մեստլետա 74°40′ 45°00′

Զալիսսա 76°00′ 44°40′

Արմակտիկա 75°00′ 44°30′

§ 5.12.1 *Ալբանիան հյուսիսում սահմանակցում է մատնանշված Սարմատիայի մի մասին, արևմուտքում՝ հաստատված գծով Իբերիային, հարավում՝ Մեծ Հայքի մի մասին՝ Իբերիայի հետ սահմանակետից մինչև Հյուրկանյան ծով՝ 79°40′ 44°30′ [կետում] Կյուրոս գետի գետաբերանի մոտ, արևելքում՝ Հյուրկանյան ծովի՝ Սոանա գետին մոտ կողմերի վրա հատվածին՝ հետևյալ նկարագրությամբ.*

§ 5.12.2 86°00′ 47°00′ [կետում] Սոանա գետի բերանից հետո՝

Տելաիբա քաղաք 85°00′ 46°40′

Գերրոս գետի բերան 84°30′ 46°30′

Գելդա քաղաք 83°00′ 46°30′

Կաիսիոս գետի բերան 82°30′ 46°00′

Ալբանա քաղաք 81°40′ . 45°50′

Ալբանոս գետի բերան 80°30′ 45°30′

Գանգարա (Գաիտարա) քաղաք 79°30′ 45°00′

որից հետո Կյուրոս գետի բերանն է 79°40′ 44°30′ [կետում]

§ 5.12.3 *Քաղաքները և կոմաները Ալբանիայում՝ Իբերիայի և գետի միջև, որ հոսում է Կովկասից ու թափվում Կյուրոս գետը, որ ամբողջ Իբերիայի և Ալբանիայի կողքով է հոսում՝ բաժանելով դրանք Հայաստանից.*

Տագադա 77°30′ 46°50′

Բակքիա 77°00′ 46°30′

Սանոուա 77°40′ 46°40′

Դեգլանե 77°20′ 45°45′

Նեգա 77°20′ 45°15′

§ 5.18.1 *Միջագետը հյուսիսում սահմանակցում է Մեծ Հայքի նշված հատվածին, արևմուտքում՝ Սիրիային Եփրատ*

գետի նշված հատվածով, արևելքում՝ Տիգրիսի այն հատվածին Ասորեստանի կողմից, որ Հայաստանից ձգվում է դեպի Հերակլեության Խորաններ 80°00′ 34°20′ [կետում]:

Հարավում Եփրատ գետի մնացած մասով Արաբական անապատի երկայնքով դեպի 76°15′ 33°20′ եզրակետը և Բաբելոնիայի երկայնքով՝ դեպի իր միախառնումը Տիգրիսին վերը նշված Խորաններին. այս հատվածի տեղադրությունը 80°00′ 34°20′ է:

§ 5.18.4 *Այս երկրի՝ դեպի Հայաստան ձգվող մասը զբաղեցված է Անթեմոուսիայով, որից ներքև Կալքիտիսն է, որից էլ ներքև՝ Գաուզանիտիսը, և դեպի Տիգրիս գետ՝ Ակաբենեն, Գաուզանիտիսից ներքև Տինգենեն է, և լայն ցրվածքով ձգվում է Եփրատ Անկոբարիտիսով:*

§ 6.1.1 *Ասորեստանը հյուսիսում սահմանակցում է Մեծ Հայքի՝ վերը նշված հատվածին Նիփատես լեռամբ, արևմուտքում՝ Միջագետքին՝ Տիգրիս գետի՝ նկարագրված հատվածի երկայնքով, հարավում՝ Սուսիանեին՝ Տիգրիսից մինչև 84°00′ 36°00′ եզրակետ գծով, արևելքում՝ Մեդիայի այն մասին, որ երկու եզրակետերը միավորող գծի երկայնքով է, որի վրա Քաբորաս լեռն է՝ 80°00′ 39°30′ և 83°00′ 38°00′ եզրակետերով:*

§ 6.1.2 *Երկրի՝ Հայաստանին հարակից հատվածը կոչվում է Առռապաքիտիս, որը մոտ է Սուսիանեին՝ Սիտտակենե, այս երկուսի միջև զբաղեցված է Գարամայցիներով, Առռապաքիտիսի և Գարամայցիների միջև հողը կոչվում է Ադիաբենե, որը Գարամայցիների և Սիտտակենեի միջև է, կոչվում է Ապոլլոնիատիս, դրանից վեր Սամբատաի էթնոսն է, Ադիաբենեից վերև՝ Կալակինեն, Գարամայցիներից վերև՝ Արբելիտիսի շրջանը:*

§ 6.2.1 *Մեդիան հյուսիսում սահմանակցում է Հյուրկանյան ծովի մի մասին, որը նկարագրված է այսպես. Արաքս գետի վրա Հայաստանի հետ եզրակետից հետո՝*

Սանինա 80°00′ 43°00′

Կամբյուսիս գետի բերան 81°00′ 42°45′

գետի ակունք 80°00′ 41°00′

Տազեինա 81°40′ 42°30′

Սաբայան Խորաններ 82°30′ 42°30′

Կյուրոս գետի բերանը 83°30′ 42°15′

գետի ակունքը 82°00′ 39°30′

§ 6.2.3 Արևմուտքում այն սահմանակից է Մեծ Հայքին և Ասորեստանին, արևելյան գծերի երկայնքով է [մատնանշվում]; հարավում՝ Պերսիսին՝ գծով, որ միավորում է Ասորեստանի և Սուսիանեի եզրակետը 94°00′ 34°30′ և 101°00′ 33°00′ կետի հետ:

Որ գծի վրա Պարաքոաթրոն լեռան արևմտյան մասն է, արևելքում՝ Հյուրկանիայով և Պարթևքով՝ հարավային գծի երկայնքով՝ միավորելով մատնանշված եզրակետերը, որից Հյուրկանիան Պարթևքից բաժանող կետը 94°00′ 39°00′ է:

§ 6.2.5 *Կասպիացիները բնակեցնում են Մեդիայի արևմտյան մասը՝ Հայաստանի հարևանությամբ, որից ներքև Մարտիանեն է՝ Ասորեստանի կողմի ամբողջ երկայնքով: Ծովափնյա հատվածները բնակեցված են նաև Կադուսիացիների և Լեգաիի և Դրիբյուկների կողմից, որոնցից հետո՝ դեպի ցամաքի խորքը, Ամարիակայի և Մարդոյի (Ամարդոի): Կարդուխիները և Մարոունդաիները զբաղեցնում են Կադուսիացիների երկրից մինչև Մարտիանե լիճն ընկած շրջանները, այնուհետև՝ Գելաիից ներս Մարգասիներն են, որոնցից հետո Տրոպատենեն սփռվում է մինչև Ամարիականներ:*

ԱՄՄԻԱՆՈՍ ՄԱՐԿԵԼԻԱՆՈՍ

Ամմիանոս Մարկելիանոսը IV դարի հույն հեղինակ է: Մասնակցել է Հուլիանոս կայսեր՝ Արևելք և Գալլիա ձեռնարկած արշավանքներին: Երկար տարիներ ապրել է Անտիոքում և Հռոմում: Գրել է լատիներեն 31 հատորից բաղկացած պատմական աշխատություն՝ «Գործունեություններ» («Res gestae») վերնագրով՝ նպատակ ունենալով այն դարձնել Տակիտոսի «Տարեգրություններ» և «Պատմություն» աշխատությունների շարունակությունը: Մեզ են հասել հեղինակի այդ աշխատության միայն 18 հատորները, որոնց մեջ նկարագրված են կայսրության պատերազմները Սասանյան Պարսկաստանի, գոթերի և այլոց դեմ: Հեղինակը նկարագրված իրադարձությունների մեծ մասի ականատես է:

Ամմիանոսի Մարկելիանոսի պատմությունն ընդգրկել է 96-378 թ. իրադարձությունները, սակայն մեզ հասել են միայն XIV-XXXI գրքերը, որոնք ներառում են 353-378 թթ. պատմական անցքերը: Առաջին 13 գրքերը, որոնք բովանդակում էին 96-352 թթ. պատմությունը, կորսված են:

Ամմիանոս Մարկելիանոսի աշխատության մեջ պահպանվել են Հայաստանի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ, որոնք ընդգրկում են Արշակ Բ-ի և Պապի գահակալության շրջանը:

Ամմիանոսին հաճախ բնութագրում են որպես «վերջին մեծ հռոմեական պատմիչ»[745]: Նրա աշխատության հրատարակություններից կարելի է առանձնացել Ammianus Marcellinus with an English translation by John C. Rolfe, in three volumes, London, William Heinemann Ltd.; Cambridge, Massachusetts, Harvard University Press, 1935-1940:

ԳԻՐՔ XIV

Այս գավառները, որոնց միջով հոսում է Օրոնտես[746] գետը, որն էլ, անցնելով Կասյան գառիթափ լեռնաշղթայի ստորոտով, թափվում է պարթևական ծով, հռոմեական տերությանը միացրել է Գնեոս Պոմպեոսը՝ Տիգրանի հանդեպ կրած հաղթանակից հետո այն առանձնացնելով հայկական թագավորությունից:

ԳԻՐՔ XVIII

Հարավից թեքություն ստանալով՝ Ամիդին ողողում է Տիգրիս գետը, որի ակունքը գտնվում է այստեղից ոչ շատ հեռու, մյուս կողմից, որտեղից նրա վրա ազդում է Եվրոսը[747], այն տա-

---

[745] Ամմիանոսի կյանքի և գործերի մասին տե՛ս **Соколов В. С.**, Аммиан Марцеллин как последний представитель античной историографии // Вестник древней истории, 1959, с. 43-62:

[746] Օրոնտեսը սիրիական Էլ-Ասի գետի հին անունն է, որը ենթադրաբար կոչվել է Օրոնտես I-ի անունով: Գետը սկիզբ է առնում Անտիլիբանանյան լեռներից Բեքաայի հովտում գտնվող Հելիոպոլիս քաղաքի մոտից, որը գտնվում է 30 կիլոմետր Բեյրութից դեպի արևելք: Հոսելով դեպի հյուսիս՝ այն թափվում է Միջերկրական ծովը:

[747] Եվրոս – արևելյան քամու հին հռոմեական անվանումը:

բաժվում է միջագետքի հարթավայրով, այնտեղից, որտեղից այն բաց է Աքվիլոնայի[748] համար, հոսում է Նիմֆոս գետը և բարձրանում է Տավրոսի գագաթը, որը բաժանում է Հայաստանը Տիգրիսի սահմաններից դուրս ապրող ցեղերից, Զեփյուռի[749] գովից այն ձուլվում է Հումատենայի՝ բերրի և գեղեցիկ մշակված տարածքի հետ, որտեղ կա Աբառնա անունով մի գյուղ, որն էլ հայտնի է իր տաք բուժիչ աղբյուրներով: Ամիդա քաղաքի հենց մեջտեղում՝ միջնաբերդի տակ, առատ աղբյուր է ճեղքվում: Դրա ջուրը պիտանի է խմելու համար, սակայն ամռան տապին երբեմն տհաճ հոտ է ունենում:

ԳԻՐՔ XX

Արշակին ազատ արձակելուն պես Կոստանդիոսը Կապադովկիայից շարժվեց Փոքր Հայքի Մելիտենե, Լակատենե և Սամոսատա քաղաքներով, անցնելով Եփրատը՝ հասավ Եդեսիա: Այնտեղ նա սպասում էր, որ բոլոր կողմերից իրեն մոտենան ռազմական ջոկատներ: Երկար ժամանակ կանգ առնելով՝ նա մեծ պաշարներ հավաքեց: Միայն աշնանային գիշերահավասարից հետո ճանապարհ ընկավ Ամիդայի ուղղությամբ:

ԳԻՐՔ XXVII

Իմանալով այդ մասին և ցանկանալով խելամիտ որոշմամբ հանդարտեցնել այստեղից բխող անախորժությունները՝

---

[748] Աքվիլոնա – հյուսիսարևելյան, երբեմն հյուսիսային քամու հին հռոմեական անվանումը:

[749] Զեփյուռ (Զեֆիր) – արևմտյան քամու հին հռոմեական անվանումը:

կայսրը համաձայնություն տվեց Իբերիայի երկու մասի բաժանումը Կիրուս գետի հունով՝ Սավրոմակին հատկացնելով հայերի և լազերի հետ սահմանակից շրջանները, իսկ Ասպակուրին՝ Ալբանիայի և պարսիկներին հարակից շրջանները:

ԳԻՐՔ XXXI

Գրեթե բոլոր ալանները բարձրահասակ են, գեղեցկադեմ, բաց շագանակագույն մազերով, անգամ ոչ կատաղի հայացքը ահեղ է, շատ շարժուն են իրենց զենքի թեթևության շնորհիվ, ամեն ինչով նման են հոներին, բայց իրենց բարքերով և ապրելակերպով ավելի մեղմ են, կողոպուտների և որսերի ժամանակ մի կողմից նրանք հասնում են մինչև Մեոտյան ծով[750] *և Կիմմերյան Բոսֆոր, մյուս կողմից՝ Հայաստան և Մեդիա:*

[750] Ազովի ծով:

Բովանդակություն

ԱՌԱՋԱԲԱՆ 3
ՄԱՍ Ա
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆ ԸՍՏ ՀԵՐՈԴՈՏՈՍԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ *(Ա. Մովսիսյան)* 7
ԿՏԵՍԻԱՍ ԿՆԻԴԱՑՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ *(Ա. Մովսիսյան)* 18
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ք.Ա. V-III ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ *(Ա. Մովսիսյան)* 32
ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՑԱՆԿԸ *(Ա. Մովսիսյան, Լ. Կարապետյան)* 55
ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳՈՒՀԻՆԵՐԸ *(Ա. Մովսիսյան)* 93
ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ *(Ա. Մովսիսյան, Լ. Կարապետյան)* 116
ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՑԱՆԿԸ *(Ա. Մովսիսյան)* 140
ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) *(Ա. Մովսիսյան)* 201
ՄԵԾ ՀԱՅՔԸ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ *(Մ. Մալխասյան)* 217

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ՝
ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ»
(Մ. Մալխասյան) 244
ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ՝ ՄՈՍՔԻԿՅԱՆ
ԼԵՌՆԵՐՈՎ ՁԳՎՈՂ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ԽՆԴԻՐԸ (ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ
«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ») *(Մ. Մալխասյան)*..... 261

ՄԱՍ Բ
**ԱՆՏԻԿ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ..... 289**
ՀԵԿԱՏԵՈՍ ՄԻԼԵԹԱՑԻ..... 291
ՀԵՐՈԴՈՏՈՍ 293
ԿՏԵՍԻԱՍ ԿՆԻԴԱՑԻ 299
ՔՍԵՆՈՓՈՆ..... 304
ԷՐԱՏՈՍԹԵՆԵՍ..... 311
ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ 313
ՍԱԼՅՈՒՍՏԻՈՍ..... 319
ՍՏՐԱԲՈՆ 321
ԱՐԻԱՆՈՍ..... 355
ՊԼԻՆԻՈՍ ԱՎԱԳ 359
ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍ..... 366
ԱՄՄԻԱՆՈՍ ՄԱՐԿԵԼԻԱՆՈՍ..... 382

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյան
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 17.11.2020:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 24.25:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am